Ռ. ՉԱԿՈՏՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՈՒԵԼՎԱԾՆԵՐԸ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

П. О. АКОПЯН

ЗАГАДКИ БИОГРАФИИ ХАЧАТУРА АБОВЯНА

ПЕРВОПРЕСТОЛЬНЫЙ СВ. ЭЧМИАДЗИН
1997

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

929:891.981 Հրաչյան

Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾՆԵՐԸ

Ա 84133

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
1997

ԹԱՓՇԻ ՀՈՎՄԱՆԱՄԱԲՈՒԹՅԱՄԲ

Տ.Տ. ՎԱՐԴԱՆ ԱՌԱՋԻՆԻ

ՆՈՒՅՆ ՈՍՄԱՆ ՕՇՄԱԺՈՒՆ

ՈՍԿԵՐՉԱՑ ՀԱՅՈՑ ԳՈՒՅՔԱԲԱԿՈՍ

1 ՈՍՄԱՆԱԲԵՆ



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ
Հարթաքանդակ Ա. Տեր-Մարուքյանի

ՄՈՒՏՔ

Այս գիրքը, որի գաղափարը հղացել է քառորդ դար առաջ, իսկ իրականացված մասերը՝ ամբողջական կամ համառոտ տարբերակներով, հաջորդաբար լույս են տեսել գրական-գիտական հանդեսներում, յուրօրինակ ներածություն է Աբովյանագիտական հետազոտությունների և քննության է առնում գլխավորապես այն հարցերը, որոնց շուրջ շա՛տ տարիներ տիրում է կատարյալ շփոթ: Մինչդեռ, առանց Խաչատուր Աբովյանի կյանքի ու ստեղծագործության և գրական ու անձնական փոխհարաբերությունների ցարդ ո՛չ բավարար լուսաբանված ու, որոշ իմաստով էլ, առեղծվածային դարձած հարցերի մասին հստակ պատկերացում ունենալու՝ սկսնակ հետազոտողին դժվար պիտի լինի անսայթաք հառաջանալ և շոշափելի արդյունքների հասնել:

Աբովյանի՝ Հայոց նոր գրականության մեծ հիմնադրի կենսագրության առեղծվածների լուսաբանմանն ու լուծմանը զուգընթաց, հեղինակը հանգամանորեն քննության է առել նաև հակառակ տեսակետները և վստահելի վավերագրերի օգնությամբ հիմնավորապես հերքել դրանք՝ աչքի առաջ ունենալով այն անկոծկելի ճշմարտությունը, որ վերջին ժամանակներս, ինքնաթմբկահարման մարմաջով տարված անտեղյակների քմահաճույքով և առավել անտարբեր վարիչների թողտվությամբ, գիտությունն սկսկել է աստիճանաբար իր տեղը զիջել գավառագիտության, իսկ լուրջ հետազոտությունը՝ գեղեցկացումներին ու թյուրիմացությանը, անգամ, բացահայտ սխալ ու անապացույց «տեսություններին»: Ցավալին այն է նաև, որ բանիմ անտեղյակներն առավել ախորժակով են «մարսում» անճշտություններն ու հորինվածքները, քան իրական-պատմական անժխտելի եղելությունները: Ինչո՞ւ զարմանալ, դյուրահավատությունն ու գայթակղությունը մարդկային թուլություններ են, իսկ մասնագիտական պատրաստություն չունեցողի համար նախընտրելին միշտ էլ գեղեցիկ ստերն են: Համբերությամբ ամեն ինչ բացատրելուց հետո էլ նրանք տատամսում են և զարմացած հարցնում. «Չէ՞ որ այդպես ավելի լավ կլիներ...»:

— Այո՛, շատ լավ կլիներ, բայց իրավունք չունենք պատմությունը կեղծել կամ գեղեցկացնել:

Աբովյանի կյանքի և ստեղծագործության առեղծվածները, հարկավ, ավելի շատ են, քան ներկայացված են սույն ժողովածուում, բայց դուրս մնացածներից ամենակարևորները, ինչպես օրինակ՝ «Վերք Հայաստանի» վեպի գրության թվականը, տարբերակներն ու առեղծագործական ազդակները, Աբովյանի նախնիներն ու ծնողները, Էջմիածնի վանական դպրոցում անցկացրած տարիները և այլն, արդեն հանգամանորեն քննված ու լուծված են մեր նախորդ աշխատություններում, իսկ մյուսներն իրենց արտացոլումը կգտնեն հրատարակության պատրաստվող մեր մյուս գրքերում՝ «Խաչատուր Աբովյան, կյանքը, գործը, ժամանակը, 1837-1843» մենագրության և Աբովյանի կյանքի ու գործունեության բազմահատոր տարեգրության մեջ:

Ընթերցողի դատին հանձնվող այս երկու տասնյակ մեծ ու փոքր հոդվածների (որոնց մեջ կա ներքին, սերտ կապ) բովանդակությունն են կազմում ինչպես գրողի կենսագրության առանցքային հարցերը (ծննդյան թվականը, մահվան առեղծվածը, դիմանկարը) և հասարակական-քաղաքական կողմնորոշումներին վերաբերող խնդիրները (Աբովյանը և Ռուսաստանը, Դորպատյան ուսումնառության նպատակն ու բովանդակությունը, «Ֆեոդորայի» առեղծվածը), այնպես էլ կորած կամ անտեսված ստեղծագործությունները («Կորուսեալ խնդութիւն», «Էջմիածին», «Հայրենեաց ծխոյն...»), որոնց ամբողջական բնագրերն առաջին անգամ են ներկայացվում ընթերցողներին, նաև ճակատագիրը հեղինակի մահվանից հետո լույս տեսած, սակայն առ այսօր անգտանելի դարձած գրքերի, որոնց ապարդյուն որոնումների մասին տրվում է լոկ նախնական հաշվետվություն:

Հեղինակը մտադիր է առաջիկայում լրացնել այս գիրքը նոր գլուխներով, իսկ եղածների մեջ էլ ավելացնել ինչ-ինչ նկատառումներով առայժմ դուրս մնացած որոշ նյութեր ու հարցեր, որոնք պահանջում են համակողմանի քննություն, համբերատար որոնումներ, հետևաբար և՝ ժամանակ: Այդ ամենի արդյունքը ընթերցողները կգտնեն գրքի նոր հրատարակության մեջ, որին մեծապես կօգնեն նաև իրենք՝ խելամիտ դիտողություններով ու գործնական առաջարկություններով:

Պ. Հ.

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆ ՈՒ ՀՈՒՄԱՆԻՍՏ ՄՏԱԾՈՂԸ

(ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

1

Խաչատուր Աբովյանն, իբրև անհատ ու ստեղծագործող, դրող ու մանկավարժ, լուսավորիչ և հանրային գործիչ, հայոց մշակութային կյանքի ու ազատագրական մաքառումների դարավոր պատմության անկրկնելի դեմքերից ու մեծագույն հրաշքներից է, ըստ էության՝ ամբողջության մեջ ւեակավին չբացահայտված հանելուկ:

Աչխարհ գալով XIX դարի սկզբներին (Աբովյանը ծնվել է 1809 թվականի հոկտեմբերի չուրջ 15-ին), հայկական լեռնաչխարհի փոքրիկ գյուղերից մեկում, պարսկա-թուրքական բռնակալական լծի տիրապետության պայմաններում, երբ հրով ու սրով խեղդում էին ազատ գոյատևման ու մտածողության ամեն փորձ, գիտակցական կյանքի առաջին տարիներից նա իր միտքը չարչարում է հայ հայրենիքը քաղաքական և հոգևոր ստրկության ճիրաններից ազատագրելու հարցերով:

«Բարբարոսների լծի տակ ճնշված իմ հայրենակիցների դժխեմ բախտը, վշտալի հիշողություններս երբեմն միայլած, բայց իմ օրերում հանգած իմ թանկագին հայրենիքի մեծության և փառքի մասին, ահա՛ թշվառիս, թախծալիիս և որբացյալիս հոգին ալեկոծող առաջին տպավորություններըը, առաջին ծանր զգացումները...», — խոստովանել է հետագայում նա (X, 257):

Ծանր զգացումները ո՛չ միայն չեն ցնդում, այլև անտարբալուծելի նստվածքներ ու խոր վերքեր են թողնում նրա զգայուն հոգու վրա: Ժամանակի թավալումների հետ՝ առնականացող խաչատուրն ևս սկսում է խորամուխ լինել աչխարհի հրաշքների և կյանքի անլուծելի հարցերի մեջ, մի որոչ չափով ըմբռնում պարսիկ ու թուրք հարստահարիչների՝ Հայաստանում գործած կամայականությունների՝ բռնությունների ու սպանությունների ահավոր հետևանքները, և ապրելով ծանր մտահոգության պահեր ու խորունկ տագնապներ՝ երազում է փրկության ուղիների մասին, հատու դառնում այդ առթիվ դեղջուկ

հայութեան ակնակալիքներին, ամէնքի չափ ու ամէնքից աւելի՝ անկեղծորէն ոգևորւում ու հիասթափւում, տառապում ու երազում:

Մանկական խաղերին դեռ հրաժեշտ չէր տվել նաչուռուրը, երբ վրա հասավ ճակատագրական պահը:

Տասը տարին էլ չլրացած նա կարվից հարազատ շրջաններից և, ծնողների կամքով, փոխադրվեց էջմիածնի վանք՝ կրթութիւն առնելու և հոգևորական դառնալու համար: Մի կերպ հարմարվելով նոր միջավայրին և մաքով ու հոգով հասունանալով՝ Աբովյանն այստեղ էլ մխրճվում է աշխարհիկ հոգսերի մեջ, հայրենիքի քաղաքական ու հոգևոր վերածնութեան գաղափարի մարմնավորման ուղիներ փնտրելով. «Ո՛չ մի. ոչ մի բան չկարողացավ հանդգնել իմ մեջ այդ հոգևական բոցը», — կարդում ենք նրա նամակներից մեկում (X, 258):

Տասը-տասնհինգ տարեկան հասակում Աբովյանը ձևակերպում է իր հավատո հանդանակը՝ հայ լուսավորչական կրոնի գավանաբանական բանաձևի նման սուրբ ու անդրժելի, և հանդիսավոր երդում տալիս՝ երբեք չչեղվել մեկընդմիշտ ընտրած ուղուց: Եվ նրա երդման ուղն ու ծուծը անձնազոհութեան գաղափարն էր.

***«Ապրել և մեռնել հայրենիքի համար»** (X, 257):*

Այդ նույն ոգով, հետագայում էլ, Աբովյանը հանդիսավորութեամբ հայտարարել է. «Ձի՛ք իմ այլ նպատակ, բայց եթէ՝ ի հայրենիս մեռանիլ, վասն հայրենեաց մեռանիլ...»: — «Ձի՛ք իմ այլ կնանք, քան՝ բարեբախտութիւն հայրենեաց...» (X, 144, 269):

Դպրոցն ու կրթությունն էլ կատարում են իրենց վճռական դերը՝ ավելի ու ավելի պարզ դարձնելով գալիք գործունեութեան ոլորտներն ու ճանապարհը: Նորապես հավատալով լուսավորութեան ամենահաղթ ուժին՝ Աբովյանն ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է հայրենի պատանեկութեան կրթութեան ու դաստիարակութեան հարցերին, քանի որ նրանք էին պարբերելու հայութեան ապագան, վերածնելու՝ հայրենիքի անցյալ փառքը, պարգացնելու՝ գիտությունն ու մշակույթը, բարվոքելու՝ անտեսական կյանքը, համախմբելու և դիմադրողական ոգի ներշնչելու բազմահազար անգրագետ ժողովրդին, որպեսզի ապրեին հավատով ու հույսով, խուճապի չենթարկվեին, կարողանային դիմագրավել բռնութեանն ու չարիքին, պաշտպաններին իրենց անձն ու իրավունքը: Նա մտորում է հիմնել իր մասնավոր դպրոցը և վերջինիս շրջանավարտներին դիտելով ազգային վերածնութեան իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներով՝ որպես Հայաստանի լուսավորութեան առաջամարտիկների, ուղարկել երկրի ամենահեռավոր ծայրամասեր՝ դյուղեր, քաղաքներ, «որ դնան, իրանց բարի սերմը մեր բարի ազգի բարի երեխեքանցը սրտումը ցանեն, նրանց էրված սիրտը

Հովսաննան, բերաններդ լիցու դնեն, արտևլուսմբ՝ վախճ, որ Հառնողը նրանց պլխին չառա, ինչպես մինչև հօր ավել են...»: — Ահա՛ այսպես է մեկնում Աբովյանը առաջնհինդամյա հատակում կազմած իր կլխավոր ծրագրի էությունը (IV, 45): «Լ՛ա ա իմ մուրտը... Երևիա էի, հ՛առաջ ցանկացա...». — առում է նա (նույն տեղում):

Շատ չուտով, սակայն, Աբովյանը համոզվում է, որ անիրագործելի պիտի մնան իր իդեալը, եթե հանգես չգա մի արտաքին և անչափահանդիր զորություն՝ փրկելու հայությանն ու Հայաստանը պարսկաթուրքական լծից և առնելու իր հզոր հովանավորության տակ:

Մի որոշ ժամանակ Աբովյանին զբաղեցնում է դեպի Արևելք ու Հայաստան իաչակրաց նոր արշավանք նախապատրաստելու ռոմանտիկ ծրագիրը. մինչև իսկ որոշում է այդ նպատակով մեկնել Արևմտյան Եվրոպա և իր մեծ նախորդի՝ Իսրայել Օրու նման, օգնություն ապերսել եվրոպական միապետներից: Հայց և նույն Օրու նման, ի վերջո, համոզվում և հայացքը դարձնում է դեպի Հյուսիս, դեպի Ռուսաստան, մանավանդ որ փրկության այդ ճանապարհին էր ապավինել նաև իր պաշտելի պապը՝ հռչակավոր պարոն Ապովը, որի մեծագործություններն անցել էին լեգենդների կարգը և փոխանցվում էին սերնդից սերունդ:

Մոսկվայում, Հին վավերագրերի պետական կենտրոնական պիտանում, այսօր էլ պահվում են ուշադրավ վավերագրեր հայ-ռուս տնտեսական ու քաղաքական փոխհարաբերությունների մասին, և նրանց մեջ՝ 1784 թ. մայիսի 31-ին Երևանի հայոց ազնվագրերը ռուս տերության բարձրաստիճան անձանց, կայսրուհուն հասցնելու հայության բաղձանքը՝ ռուսների օգնության չտատիտ փրկության առանալու մասին: Այդ վավերագրերի տակ դանում ենք, ի շարս այն ժամանակների նշանավոր անձանց, նաև Աբովյանի պապի տասրագրության 1. կնիք-մատանու դրոշմը:

Աբովյանի այդ տարիների տենդագին որոնումների ցոլքերը նշմարվում են նաև նույն 20-ական թթ. խմորվող ազգակա պատմավեպի մեջ, որի կենտրոնական հերոսը տարակուսված հարցնում էր.

Էն ի՞նչ ձեռք կըլի, որ մեր աշխարքին
Էլ ետ սիրտ տա ու կանգնացնի կրկին:
Ա՛խ, ես էն ձեռին կյանքս ղուրբան կանեմ,
Էն կոխած հողին երեսս կքսեմ.
Ապրի՛մ, իմ արինս նրան մատաղ կանեմ,
Մեռնի՛մ, հողիցն էլ ես նրան միշտ կօրհնեմ...
(«Վերք», 269)

Այդ ձեռքը ռուս ժողովրդի ձեռքն էր, ցանկալի հովանին՝ ռուսական հզոր տերությունը:

Աբովյանն ևս ընտրում է նույն վստահելի ճանապարհը՝ իր երիտասարդական իդեալների կատարումն ակնկալելով հենց Ռուսաստանից, ձգտելով այնտեղ ստանալու իր կրթությունը, բաղձալով ռուս զենքով ազատագրել Հայաստանը. «Հոգոց և թառաչ հանելով հայէի ի տարաճիգ, երկնամբարձ չղթայս Կովկասեան, և հոգի կենաց լմոց յուսայի միմիայն ի Հիւսիսային հողմոյ ստանալ, այն զի Հարաւն ինձ միմիայն բարբարոսութիւն և տգիտութիւն չնչէր» (VI, 298):

2

Աբովյանի լուսավորական ու հումանիստական աշխարհայեցողությունը ձևավորվել է նրա հոգևոր զարգացման հետ քայլ առ քայլ:

Նախնական կրթությունն Աբովյանն ստացել է Էջմիածնի վանական խցերում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Բայց ստացած գիտելիքները բավականաչափ աղքատիկ էին և բավարարություն չէին տալիս նրա հարցասեր մտքին: Ինչպես ժամանակակիցներն են վկայում՝ այդ դպրոցներից նա դուրս եկավ ուսման անհագ ծարավով, որին հայ իրականությունն անկարող էր հագուրդ տալ: Որովհետև Աբովյանի հայացքը դեպի Հյուսիս էր, ուստի ամենայն լրջությամբ սկսում է ուսանել ռուսաց հարուստ ու փարթամ լեզուն՝ ռուսերեն գրքերի միջոցով իմացությունները հարստացնելու, կյանքն ու աշխարհն ավելի լավ ճանաչելու, ռուս հեղինակների երկերի ընթերցմամբ՝ միտքն ու հոգին կրթելու համար: Այդ բանում նրան մեծապես օգնում էր ժամանակի հռչակավոր հայ բանաստեղծ Հարությունն Ալամդարյանը՝ Աբովյանի առաջին ուսուցիչներից ու դաստիարակներից մեկը, որ ռուս մշակույթի լուրջ գիտակ ու երկրպագու էր նաև, այն օրերի լավագույն ռուս-հայերեն բառարանի հեղինակը: Աբովյանի ծանոթությունը ռուսաց գրականության, հատկապես Վ. Ժուկովսկու ստեղծագործությունների հետ, որի նկատմամբ տածած ջերմ սերն ու հիացմունքը չի աղոտանում ողջ կյանքում (այդ Աբովյանն ինքն է խոստովանում բանաստեղծին ուղղած նամակներից մեկում), տեղի է ունենում 20-ական թվականների ճիշտ կեսերին:

Աներևակայելիորեն ծանր ու դժվարին, ահավոր ու սրտակեղեք, բայց և, միաժամանակ, կարճատև ոգևորության և հույսի չողերով առեցուն էին դրանից հետո Աբովյանի տեսածն ու ապրածը:

Կրթության թերին լրացնելու և իր նվիրական ցանկությունները իրականացնելու նպատակով՝ Աբովյանը որոշում է մեկնել Վենետիկի

սուրբ Ղազար կղզում ծաղկող հայկական ակադեմիա՝ մի քանի տարի այնտեղ կատարելագործվելու համար, բայց նրա ճանապարհը վիակում է անսպասելիորեն պայթած պատերազմի հեղեղը: Հետո, ուրիշներից գաղտնի, ոտքով, Աբովյանն ուղում է գնալ Մոսկվա՝ դեթ այնտեղ ուսանելու, բայց հազիվ Կովկասյան լեռներին հասած և հրաշքով մահվանից փրկված՝ կեստաբյա դեգերումներից հետո հետ է վերադառնում Հաղբատի վանք:

1826 թվականի հուլիսի 16-ի վաղ առավոտյան սկսվեց պարսից զորքերի ու խուժանի հարձակումը Անդրկովկասի ռուսական զորակայանների և, դեռ դարասկզբին, Ռուսաստանի հովանավորության տակ անցած հայկական բնակավայրերի՝ Շիրակի և Դուդարաց աշխարհի գյուղերի վրա: Սկսվեց հայության նոր, ահավոր կոտորածը և դաժան տեղահանությունը. ավերվում ու ամայանում էր Հայաստան աշխարհը, և, կարծես, հասել էր հայ ժողովրդի հոգեվարքի ու ոչնչացման ժամը: Աբովյանը զենք է առնում ձեռքը՝ հայրենիքի ազատության կռիվներին մասնակցելու համար, բայց արժանանում է հոգևորականության նզովքին: «Հաղբատու թվանք քցելս, հերետիկոս անվանելս», — այս բառերով է նա հետագայում արձանագրել իր կյանքի այդ ճակատագրական իրադարձությունը:

Ավելի քան մեկ տարի Աբովյանը մնաց պատերազմական իրադարձությունների թատերաբեմում, տարադիր հայության մեջ, ապաստինած Լոռվա սարերին ու քարայրներին, ամեն օր մահվան աչքերի առաջ: Հրա՛շք էր, որ նա ապրեց. հրա՛շք էր, որ պարսիկների վառած դժոխքից փրկվեց արևելահայությունը:

Ռուս քաջարի զորքերը և նրանց միացած հայ աշխարհազորայիններըը, ստանալով ողջ հայության նյութական ու բարոյական աջակցությունը, ի վերջո, կասեցրին պարսից առաջխաղացումը, ջարդեցին ու ցրեցին ուխտադրուժ թշնամու ռազմական ուժը, ծունկի բերին նաև անառիկությամբ համբավով հռչակված Երևանի բերդը, ազատագրեցին ու իրենց հովանու տակ առան Արևելյան Հայաստանը և նրա կիսավեր շեներում ու քաղաքներում մնացած մի բուռ հայությանը: Շատ չանցած, 1828 թ. սկզբներին, հայոց աշխարհիկ ու հոգևոր առաջնորդների նախաձեռնությամբ և ռուս տերության համաձայնությամբ ու օգնությամբ՝ տեղի ունեցավ պարսկական նահանգներում ապրող հայության վերաբնակեցումը Արարատյան դաշտի և Արևելյան Հայաստանի մյուս գավառների ավերակ քաղաքներում ու գյուղերում: Գրեթե աշխարհագրական հասկացություն դարձած Հայաստանն ստացավ նոր շունչ ու կյանք: Սկսվեց հայության վերածնունդը, նրանց ազգային համախմբումն ու ինքնա-

ճանաչումը: Ըստ էության՝ այդ օրերին էլ դրվեցին Հայոց նոր պետականության հիմքերը, որով և Հայ ժողովուրդը անանական ու ճշակութային ամուր թելերով կապվեց Ռուսաստանի հետ:

Մենք հատուկ դիտավորությամբ կանգ առանք ռուս-պարսկական վերջին պատերազմի անցուդարձերի վրա՝ տեղի ունեցած ավելի քան մեկ ու կես դար առաջ, որովհետև դրանք բախտորոշ նշանակություն ունեցան ո՛չ միայն Հայ ժողովրդի, այլև նրա հանճարեղ ու հեռատես զավակի՝ Խաչատուր Աբովյանի, արդեն ձևավորված ինքնատիպ բանաստեղծի, հումանիստ մտածողի, անօրինակ հայրենասերի և մեծ քաղաքացու, ապագա համազգային դաստիարակի ու հանրային գործչի համար: Եվ Աբովյանն ինքն է, պրավոր ու բանավոր, բազմիցս ասել ու խոստովանել. «Մեր հրեշտակ-փրկիչ ռուս ժողովրդի հաղթական դենքով վերակենդանացած իմ հայրենիքի ազատագրության օրերին ո՞ւմ հոգին կարող էր այնքան կենդանի խանդավառված լինել այդ երջանկության հրճվանքով, եթե ո՛չ իմը» (X, 258):

Այդ հրճվանքի հարազատ արտահայտությունները դարձան Աբովյանի նույն շրջանում գրած բանաստեղծությունները, որոնք ինքն անվանել կամ բնութագրել է որպես «մանկական թոթովանքներ», որովհետև մանկան բարբառի նման անկեղծ են ու անմիջական, բայց՝ անարատ սրտից ու զգացումներից: Մենք նկատի ունենք «Նոր ի՞նչ են այս ցոյցք մերս Հայաստանի...» և «Խնդամիտ զգացմունք երախտագէտ հայկազին յազատութիւն Հայրենեաց իւրոց» քերթվածները՝ հորինված 1827 և 1828 թվականներին:

Փոխ առնելով կլասիցիստական ներբողի ծաղկուն ոճը և խոսքն ուղղելով ռուս ժողովրդին՝ երիտասարդ բանաստեղծը ոդում էր.

Իբրև ծագեցաւ առաւօտդ կենաց մերոյս փրկութեան,
Հանգեա՛ն, լռեցա՛ն ի մերոց սրտից լալիք և կական...
Ընդ տես երևմանդ կնքեաց զիւր ողբերգ Մովսէս Խորենեան,
Զի յառաջ կացցեն, երգեսցեն մուզայք տանն Արարատեան...
Երթա՛ն, անցանի՛ն, հաչի՛ն, խորտակի՛ն ամբ և ժամանակք,
Այլ ո՛չ ի մերոց սրտից անցանին ձեր քաղցր յիշատակ... (I, 22)

որոնք պարզ, աշխարհաբար խոսքերով այս են ասում.

Երբ ծագեց մեր կենաց փրկութեան այդ առավոտը,
Հանգեցին ու վերացան մեր սրտերից լացն ու հեծեծանքը.
Ձեզ տեսնելուն պես դադարեցրեց իր ողբը Մովսես
Խորենացին,
Որպեսզի ասպարեզ ելնեն և երգեն Արարատյան տան
Մուսաները...

Կդան ու կանցնեն, կմաշվեն ու կխորտակվեն տարիներն ու ժամանակները,
Բայց մեր սրտերից երբեք չի՛ ջնջվի ձեր քաղցր հիշատակը:

Աբովյանի հետագա կյանքը ընթանում է դլխապտուցյա արագությամբ. 1829 թվականից սկսած՝ նրա անձնավորության ու նպատակների մասին բազմիցս դրել են Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի պարբերական ու դիտական հրատարակությունները: Այդ տարվա աշնանը Աբովյանը հանդիպեց Դորպատի համալսարանի պրոֆեսոր և Պետերբուրդի ակադեմիայի թղթակից-անդամ, նշանավոր բնախուզ-պիտանական Ցիվոլիուս Պարրոտին, որից հետո փոխվեց նրա ճակատագիրը: Առ ոչինչ համարելով անապաշտական հավատալիքների կաշկանդումները և հավատալով բանականության ու ճշմարտության ուժին ու հաղթանակին՝ նրանք միասին հաղթահարեցին Արարատ լեռան ալեհեր ու անելանելի կատարը և այդ աննախադեպ սխրանքով բաց արին հայրենասիրական լեռնագնացության պատմության ամենաուշագրավ էջը: Արարատի բարձունքներում էլ Աբովյանը երկրորդ անգամ կրկնեց իր սուրբ երդումը՝ դառնալ լուսավորության ու ճշմարտության առաքյալ և Պրիստոսի օրինակով՝ անձը նվիրաբերել Հայաստանի վերածնության սուրբ գործին:

Աբովյանին այնուհետև հատկացվեց պետական թոշակ, և նա չուրջ հինգ ու կես տարի, հատուկ ծրագրով, սովորեց Դորպատի համալսարանում՝ նախապատրաստվելով հայրենի ժողովրդի համար ուսուցչի ու դաստիարակի կոչման: Նրա ուսուցիչներն էին Կանտի աշակերտ, փիլիսոփա Եշկեն, Եվրոպայում հռչակված դյուզատանտես Շմալցը, էնցիկլոպեդիկ գիտելիքների տեր հետազոտողներ՝ մաթեմատիկոս Բարտելսը և Փիլիկոս Պարրոտը: Նրա ապագայով չհագրգռված էին ռուսական արևելագիտության նշանավոր գեմքեր Ֆրեննն ու Ադելունգը:

1836-ին, վերադարձի ճանապարհներին, ժամանակավորապես կանգ առնելով Մոսկվայում, Աբովյանը գործակցում է Բնախուզչների մոսկովյան ընկերությանը և հատուկ ծրագիր կազմում հայ և անդրկովկասյան ժողովուրդների անտեսական ու հոգևոր կյանքի բարելավման միջոցների մասին, որի մեջ երևում է հումանիստ մտածողն ու եռանդուն գործիչը: Հաջորդ տասնվեցուս տարիները նա տեսուչ և ուսուցիչ էր Թիֆլիսի և Երևանի գավառական ուսումնարաններում՝ միաժամանակ հիմնելով իր մանավոր գպրոցը, որի չլքանավարանները գեկավարելու էին Հայաստանի ժողովրդական գպրոցները և կյանքում արմատավորելու էին իր գաղափարները:

*Աբովյանի անխախտ համոզմամբ, այն ժամանակների պայմաններում, ազգային վերածնության գլխավոր խթանը լուսավորությունն ու արվեստներն էին՝ խարսխված մարդասիրական ու բարոյագիտական ազնիվ սկզբունքների վրա. «Օր ու գիշեր մտքիս մեջ չրջում, անցնում ձեն ազգի վերածնությանը վերաբերող տեսակ-տեսակ մտածություններ, որոնք բոլորն էլ, գուցե թե, մանկահասակ հոգու խաբուսիկ երազանքներ են», — խոստովանում է նա մի առիթով (X, 153), և մեծապես տառապում, որ, ինչպես հարկն է, չի կարողանում օգտակար լինել սեփական ազգին ու հայրենիքին. նրան չարունակ խանգարում էին հետադեմ ու կղերամիտ գործիչները, ցարական բյուրոկրատիան, լուսավորության բնագավառի իշխանավորները, Պետերբուրգի ակադեմիայի որոշ անդամներ: Հաճախ Աբովյանն իր սիրտը թեթևացնում էր ազնիվ բարեկամներից մեկին՝ հայտնի արևելագետ, ակադեմիկոս Ֆրեհնին ուղղված նամակներում. «Եթե այդ մասին բարձր խոսես, — գրում է նա 1847 թ. վերջերին, — հալածանքի կենթարկվես իբրև հերձվածող, իսկ եթե ձայն չհանես, չէ՞ որ անասելի խայտառակություն կլինի ականատես լինել, թե ինչպես տարեցտարի ոտնատակ են տալիս պետության և իրենց սեփական հայրենիքի (այսինքն՝ Ռուսական տերության և Անդրկովկասի ժողովուրդների — Պ. Հ.) շահերը» (X, 294):

Ցարական պաշտոնեության ու գոռնացած ավանդամոլության, ազգային հետադիմության ու խավարամոլության, Անդրկովկասի մոլեռանդ կրոնավորների դեմ մղած անհավասար պայքարում էլ, ի վերջո, զոհվեց Աբովյանը: 1848 թ. ապրիլի 2-ին, երբ պատրաստվում էր Երևանից փոխադրվել Թիֆլիս՝ այնտեղ գործող ժամանակի ամենահեղինակավոր հայկական դպրոցի ղեկավարությունն ստանձնելու, անհետացավ խորհրդավոր հանգամանքներում: Նրա մահվան առեղծվածը ծնունդ է տվել բազում լեգենդների՝ մեկը մյուսից գայթակղիչ, բայց և անապացույց: Իբր, ոմանք նրան տեսել են Արարատ բարձրանալիս, լեռան բարձունքներում հավերժական հանգիստ առնելու, ուրիշները՝ Շամիլի մերձավորների մեջ, երրորդները՝ Ֆրանսիական հեղափոխությանը մասնակցելու համար Փարիզ չտապելիս, և կամ՝ ինչպես մի ժամանակ հունգար հանճարեղ գրող Շանդոր Պյոտեֆիի մասին էին պատմում, Սիբիրյան աքսորավայրերում: Ժողովուրդը, ինչպես Ավետիք Իսահակյանն է նկատել, չէր կարողանում հաշտվել այդ ողբերգական կորստի հետ, որովհետև նրա հետ էր կապում իր լուսեղեն երազների իրականացումը: Մանավանդ որ Աբովյանի թողած գրական վիթխարի ժառանգությունը, նրանից սկիզբ առնող մշակութային ավանդները, նրա հայրենասիրական

պատգամները արգասավորվել էին հայ կյանքում և շարունակում էին ազդել ու ընթացք տալ հայրենի գրականությանը և ազգային ազատագրական պայքարին՝ ընդդեմ թուրքական բարբարոս լծի: Այդ առումով՝ Աբովյանի մահվան առեղծվածը վերածել ու դարձել էր մի իսկական առասպել, նորօրյա միֆ: Բայց առավել լրջամիտներն ու Աբովյանին մոտիկից ճանաչող հայ և օտար գրողներն ու գիտնականները հավանական էին համարում, որ չկարողանալով ելք գտնել ժամանակի ճահճացած իրականությունից, իդեալներն իրականացնելու ճանապարհին չստանալով բարոյական աջակցությունն այնքան սիրելի ազգակիցների, չունենալով նյութական ապահովություն, որ կարողանար հրատարակել ստեղծագործությունները, հալածվելով ու արհամարհվելով՝ վճռում է ինքնասպանությամբ վերջ տալ սեփական կյանքին՝ «մի խավար լոպեի մեջ» իրեն նետելով վարարած Զանգուն, հարկավ, չբացառելով այլազգիներից սպանված լինելու հնարավորությունը, հօգուտ որի գոյություն ունեն նաև զորավոր կռվաններ:

3

Մեր խոսքի սկզբում Աբովյանին կոչեցինք հայոց պատմության հրաշքներից ու խորհրդավոր հանելուկներից մեկը, և ո՛չ առանց հիմքի: Աբովյանը ծնվեց թեպետև հին քաղաքակրթություն ունեցող ու տակավին մարդկության պատմության արշալույսին դեղարվեստական մտածողության բարձունքները հասած ժողովրդի ծոցում, բայց նրա օրերում խզվել էր դարերի կապը, մոռացվել էին մշակութային հին ու հարուստ ավանդները, և բարբարոսությունն էր շնչում ամենուր: Աբովյանի հայրենիքը տրորված ու ծվատված էր թուրք ու պարսիկ բռնակալների մագիլների մեջ և չնչահեղձ էր դառնում հոգևոր ու քաղաքական ստրկության մեջ: Բայց Աբովյանը կարողացավ խորտակել ավանդական ու բարբարոսական ամեն կարգի արգելքներ և փոքրից ձգտելով կատարելության ու լույսի, համայվելով մարդասիրության, անձնազոհության և ազգափրկիչ իդեալներով, ավելի շուտ ինքնաշխատությամբ, քան դպրոցի միջոցով, այնպիսի մտավոր ու հոգեկան կատարելության հասավ, որ շա՛տ առաջ անցավ իր ժամանակակիցներից ու հավասարվեց դարաշրջանի ռուս և եվրոպական հումանիստ մտածողներին, մեծ լուսավորիչներին և ռոմանտիկ քերթության հսկաներին:

Արդեն անցյալ դարի 40-ական թվականներին նրա հետ չփվող օտարերկրացիները, որոնց հետ հաղորդակցվում էր իրենց լեզուներով (Աբովյանն ազատորեն տիրապետում էր մի տասնյակից ավելի հին ու

նոր, արևելյան ու եվրոպական լեզուների, չկարողանալով իրենց զարմանքն ու հիացմունքը թաքցնել, ասել ու պատմել են. «...զենմանական փիլիսոփայության և դիտության տեսություններն նրան այնքան բնական են, որ նույնիսկ եվրոպացին կարող է օգուտ քաղել նրա գործիքներից: Շիլլերին անգլիր դիտե, Լեսինգը, Լայբնիցի գործիքներով հանգամանորեն քննել է և իր ասիական երևակայությամբ նրանց նոր դեմքն է հայտնրտում... Տարօրինակ երևույթ մարդկային լուսավորության... Հայի բնությանն արձագանքում է այնպիսի տեսություններ, որոնք մեզ մեջ դեռ նոր են տարածվում» («Արևմուտք», 1859, № 6):

Աբովյանը ոչ միայն ինքը հասավ ժամանակի գիտության ու բնությունների զարգացումներին, այլև կանչ էնում իսկարից դեպի լույս առաջնորդելու և հոգևոր մթերքների մղելու իրեն ծնող ժողովրդին. հատկապես հայրենի երիտասարդության, որոնց վճռական էր կյանքում արմատավորելու նրա իդեալները և վերջիններս փոխանցելու հայ 60-ականներին ու հաջորդ սերունդներին՝ Նալբանդյանից ու Րաֆֆուց մինչև Թումանյան ու Վահան Տերյան, Ակրել Բակունց ու Հրանտ Մաթևոսյան:

Իր կյանքի վեհ նպատակին, իր հայրենիքի հոգևոր ու քաղաքական վերածննդին անմնացորդ նվիրված, բոլոր ազգերի ու ժողովուրդների ազատ և անկաշկանդ զարգացման ու երջանկության մասին մտածող այսօրինակ գրողներն ու գործիչները հավատում են ո՛չ միայն հայրենական, այլև համաշխարհային պատմության մեջ:

Աբովյանի մեջ սուր էր զարգացած քաղաքացիական պարտքի ու պատասխանատվության զգացումը: Նա չէ՛ր կարող անտարբեր անցնել, չէ՛ր կարող լսել, երբ չարջը տեսնում էր անարդարության ու ագքատության, ազգի իրավունքների ոտնահարում. «Ես ո՛չ կարեմ լռել, որ քարինք ազատական. ես ո՛չ գործեմ ծարիլ ի գլուխ, գլոյ գլորրոք գիծեցույցիչ՝ ամենայն հայրենասեր զգայ ասնջանօք», — գրչում էր նա (X, 295):

Աբովյանը պատասխանատու էր զգում ո՛չ միայն անհատական հայրենիքի, տերության, որի կազմի մեջ էր արևելահայությունը, այլև, առավելապես, ազգատ ու թշվառ բազմահազար հայության, ընդհանրապես, ստրկացող մարդկության ճակատագրի համար. «Մարդս մեկ անգամ է աշխարք գալիս, — խրատում էր նա, — էնպես պետք է անի, որ դուս գալիս էս գինուվը անունը հիշվի, ոնովի, էն գինուվը հոգին փրկավորվի, լսի փայ բլլի» («Վերք», 277):

Հետևաբար՝ մարդը պարտավոր է ընթանալ մարդկայնության չափով, չմոռանալ իր մեջ գործն ու կարևորը. «Իսանասրդին որ

խանարդու տուգը տեսնի ու գարդ չանի, արտասունքը տեսնի... ու ինքն էլ հետը չմզկտա, նա էլ ի՞նչ Աստված կունենա, ի՞նչ հոգի, ի՞նչ հավատ...» (IV, 27): Մեկ այլ առիթով էլ՝ մասնավորելով խոսքը ազգի վերաբերմամբ, նա սրտի խորին ցավով ասում էր. «Էսօր էլ, որ միտք եմ անում, թե ես հացս ուտելիս, տաք տեղը նստելիս՝ հազարավոր հայ ո՛չ հայ ունին, որ ուտեն, ո՛չ շոր ունին, որ տաքանան, սիրտս պատռում ա, օրս խավարում...» (IV, 45):

Երկրային այս կյանքից դուրս Աբովյանն այլ գրական չէր պատկերացնում, մարդկությանն ապնվորեն ծառայելուց, նրա երջանկության համար մարտնչելուց ավելի վեհ նպատակ նրա համար չկար: Հետևաբար՝ ձաղկելով ու դատապարտելով չրջապատի մարդկանց հասմոլական կրքերն ու անտարբերությունը, ազգադավ գործունեությունը՝ իր գրական-հրապարակախոսական երկերի, իր բանաստեղծությունների՝ հայոց քաղաքացիական քնարերգության այդ առաջին ու վառ օրինակների մեջ, աշխատում էր հանրությանը արամադրել հայրենապրիչիչ գործերի՝ վերացնելու համար կարիքն ու թշվառությունը և ազատ ապրելու իրավունք նվաճելու: Վերջապես՝ Աբովյանը դրա մեջ էր տեսնում նաև անմահության խորհուրդը. «Գանձ ու հարստություն, պատիվ ու նշան, իշխանություն ու մեծություն մինչև վերեզմանի ղրաղն են մեզ հետ ընկեր և ո՛չ բարեկամ... Բո՛ դործքը, քո՛ դործքը միայն քո անունը կպահեն. հայրենասիրությունը միայն քո հիշատակը կտանի, ազգասիրությունը՝ քո արածը կենդանի կպահի, քեզ սրբի տեղ պաշտիլ կտա», — պատգամում էր նա («Վերք», 310): Նույն այս հայեցակետից էլ Աբովյանը վառաբանում էր աշխարհաշեն ու ստեղծագործ աշխատանքը, պղնիվ վաստակը՝ ամբողջ հոգեյամբ նշավակելով հարստահարությունն ու բռնությունը: Նրա իդեալ հերոսների համոզումն ու հավատն հենց այդ էր. գալ ինքնաճանաչման, մտածել գալիքի մասին, ապրել արդար վաստակով. «Ես իմ կոպիտ գլխովը էնպես եմ կարծում. նհախ տեղը գտած մալը ուտիլը ու դարտակ քնիլը հարամ ա: Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի» («Վերք», 59):

4

Նաչատուր Աբովյանը նոր ժամանակների հայոց գրականության ու ազգային բանաստեղծության հիմնադիրն է, հայ ժողովրդի դարավոր տանջանքների ու տենչանքների արտահայտիչ, գրականության ու արվեստի նոր ձևի ու բարձր դաղափարայնության համար մարտնչող արվեստագետ, գրական կյանքը հեղաշրջող: Առաջին անդամ

Ա 8144/33

Աբովյանի ստեղծագործությունների մեջ լսելի դարձավ հասարակ հայ մարդու՝ բազմատանջ հայ գյուղացու ձայնն ու կարոտը՝ իր ու իր ազգի նվիրական բաղձանքների, անուրախ անցյալի, առօրյա հոգսերի և լուսավառ գալիքի մասին: Յանկացավ իմանալ գոյի ու հավերժի, հայոց անցյալի ու ապագայի խորհուրդը, ձգտեց ճանաչել ինքն իրեն ու գիտակցել իր դերը կյանքում, «թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ընչի՞ համար ենք էկել աշխարհ... երկրումը ի՞նչ պետք է անենք...» («Վերք», 74):

Առաջին անգամ Աբովյանի չնորհիվ բազմահազար հայության խոսակցական լեզուն՝ աշխարհաբարը, դարձավ բանաստեղծական հրաշակերտների՝ քնարական նուրբ զգացումների և փիլիսոփայական խորունկ դատողությունների լեզու: Աբովյանը բարձրացրեց աշխարհաբարին քաղաքացիություն տալու դրոշակը՝ մինչև վերջ մարտնչելով դրա համար, որովհետև այդ լեզուն էր միավորելու և ինքնաճանաչման բերելու ազգությանը: Լեզվի մաքրության ու զարգացման խնդիրը ողջ կյանքում մնաց նրա գլխավոր հոգսը:

Աբովյանի չուրթերից հայ մարդը լսեց ազնիվ աշխատանքի, բարեկամության ու խաղաղության գովքը, փորձեց ըմբռնել առաքինի ընթացքի ու իսկական երջանկության խորհուրդը: Դարձյալ՝ նրա ստեղծագործություններում չնչեց ու խոսեց Հայաստան աշխարհը իր հին ու նոր պատմության հերոսական դրվագներով՝ որպես ազգ ու դյուցազներգություն: Աբովյանը հավերժացրեց հայ և ռուս ժողովուրդների անխախտ բարեկամության ու եղբայրության գաղափարը իր բազմաթիվ ստեղծագործությունների մեջ, որոնք ձևռք են բերել հավատարմության ու եղբայրության դրական դաշնագրերի արժեք:

Առաջին մտահղացումները թղթին հանձնելուց անցել է ուղիղ 165 տարի, բայց նրա երկերը պահում են իրենց դեմքերի թարմությունը, չարունակում են վերստին հուզել ու ոգևորել:

Աբովյանի թողած գրական վիթխարի ժառանգությունը, դասական ու նոր հայերենով ու ժողովրդական թոթով լեզվով, ռուսերենով ու գերմաներենով գրած նրա ստեղծագործությունները՝ պատմական ու մանկավարժական վեպերը, քնարական խորհրդածությունները, գիտա-գեղարվեստական արձակը, երդիծական պատումները, առակներն ու երգերը, պատմվածքներն ու էսսեները, գիտական-ազգագրական ուսումնասիրություններն ու հոդվածները, օրագրերն ու նամակները այսօր էլ գրական ուսումնառության և բարոյական ազնվացման անսպառ աղբյուր են, արժանի՝ հիացմունքի ու երախտապարտության:

Աբովյանն եղավ վերափոխողը նաև հայոց գյուղական կյանքի, հիմնադիրը հայ մանկավարժական մտքի և աշխարհիկ դպրոցի: Նրա

*ուսումնական ծրագրերը և առաջադրած կրթական համակարգը նորութ-
յուն էին այն օրերի համար և, ինչպես ինքն էր հիշեցնում դպրոցա-
կան բարձր իշխանություններին, ընծայել էին նրան «նոր և ավելի
քան փայլուն հռչակ մինչև իսկ գիտական աշխարհում» (I, 145):
Աբովյանին ճանաչող ռուս և եվրոպացի գրողներն ու գիտնականները
վկայել են. «Մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել մի այսպիսի
ուսուցիչ» (ԺԱՄ, էջ 47): Իր տեսական աշխատությունների մեջ և
գրական գործունեության ընթացքում՝ հայրենի պատանեկությանը
գիտություններ ու լեզուներ սովորեցնելուց, նրանց միաքն ու հոգին
կրթելուց բացի, Աբովյանը մեծ տեղ էր հատկացնում դպրոցականների
ֆիզիկական, գեղագիտական ու աշխատանքային դաստիարակության
հարցերին՝ առաջին քայլերից նրանց վարժեցնելով դյուզատանտեսական
աշխատանքների ու զանազան արհեստների: Աբովյանին շատ էին
մտահոգում աների բարոյական կրթության խնդիրները, որովհետև,
ինչպես ասում էր նա, «գիտելիքներ ամեն տեղ կարելի է ձեռք բերել,
բայց ո՛չ ամեն տեղ կհաջողվի հարմարեցնել իրեն իր ազգակա-
կոչմանը, իբրև հասարակության օգտավետ անդամ, իբրև միայն իր
մերձավորների բարիքի համար ստեղծված մարդ» (X, 259):*

*Այս գիտակցությունն է նրան պահել այն դաժան տարիներին:
«Կյանքն ինձ թվում է բեռ, որը դժվարությամբ մարդ կառնի, եթե այն
չի ծառայեցվում բարու համար, — գրել է Աբովյանը մեկ այլ առիթով,
ապա և ավելացրել: — Մանուկները, որոնք հոգևոր ունենք են
առանում ինձ մոտ, գործել են իմ երկրավոր արքայությունը: Այս
փառքն ինձ համար շատ ավելի մեծ բան է, քան արտոնություններն
ու նշանները և աշխարհային բախտավորություններին առնչվող
փառքերը: Եթե ես էլ չվայելեմ նրանց պտուղները, դեթ ազգը, հանճին
նրանց, կունենա կատարյալ այրեր ո՛չ միայն գիտությամբ, այլև
առաքինի բարքով, ազնվախոհ մաքերով և այլն» (X, 233):*

*Աբովյանի, որպես մանկավարժի, ծառայությունները ու հռչակը
դուրս են գալիս հայկական չրջանակներից: Նա համամանդրկով-
կասյան, համառուսական երևույթ է: Երբ ուսանում էր Հեռավոր
Դորպատում, ազատ ժամերին հայերեն և ռուսերեն էր սովորեցնում իր
տարեց ու պատանի աշակերտներին: Իսկ երբ գործում էր Երևանում ու
Թիֆլիսում, հոր նման դաստիարակում էր ռուս, վրացի, ադրբեջանցի
պատանիներին, որպես իր երկրացիների: Ավելին, Աբովյանը տեսնում
էր, որ Կովկասի լեռնականների զավակները նույնպես կրթվելին իր
դպրոցում: Աբովյանի ձեռագրի պատառիկների վրա ուսում են առել
Անդրկովկասի բոլոր ժողովուրդների զավակները: Այս առումով՝ նա
ինտերնացիոնալ գործչի տիպար էր: Անձամբ պարապելով ռուսաց*

լեզուս, պատմությունն ու թվաբանությունն, նա աշխատում էր Կովկասի ժողովուրդներին հոգեպես մերձեցնել ռուս մեծ ազգի հետ, որպեսզի կարելի լիներ նրանց հոգուս վրայից քերել-հանել բարբարոսության ժանգը և անվստահության թուլունը: Հրապարակային ելույթներից մեկի ժամանակ, խոսքն ուղղելով Երևանի բազմազգ հասարակությանը, Աբովյանն ասել է. «Ռուս անունը պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես և նրա արյունը, որով մենք ազատվել ենք ընդմիշտ, նաև՝ այն հովանավորությունը, որի ներքո մենք բարգավաճում ենք՝ կատարելապես պաշտպանված լինելով մեր հայրենիքի, մեր հավատքի բոլոր թշնամիներից: Եկեք աշխատե՛նք, ըստ մեր կարողության ու հնարավորությունների, ձեռք բերել օգտավետ գիտելիքներ, կրթել մեր միտքն ու սիրտը, ձեռք բերել ռուս լեզվի գիտությունը և բարի քաղաքացիներ լինել: Սրանով, հենց միայն սրանով, քան թե մեկ այլ ճանապարհով՝ մենք կկարողանանք միանալ ռուս մեծ ազգի հետ, որի անունն իսկ ներշնչում է ամենքին, նույնիսկ օտարերկրացիներին, պատկառանք և անձնվիրություն» (I, *158*):

Աբովյանի ծառայությունները հայ հայրենիքին, գրականությանն ու գիտությանը այսքանով չեն սպառվում: Նա առաջին հայ ազգագրագետն ու բանագետ-բանահավաքն է, նշանավոր պատմաբան: Աբովյանը լուրջ ներդրումներ ունի ռուս արևելագիտության մեջ՝ Առաջավոր Ասիայի տակավին հանելուկային ժողովուրդների կյանքի ու կենցաղի ուսումնասիրության բնագավառում: Նրա պատմա-ազգագրական աշխատությունները և ճամփորդական նոթերը տպագրվել են Ռուսաստանի և Գերմանիայի գիտական հրատարակությունների և գրական հանդեսների մեջ՝ արժանանալով բարձր գնահատականի: Աբովյանը միջազգային հռչակ վայելող ճանապարհորդ էր, Հայաստանի պատմության ու բնության հուշարձանների խորունկ գիտակ, ռուս և եվրոպական տերությունների ձեռնարկած գիտական բազմաթիվ արշավախմբերի մասնակից ու անզուգական խորհրդատու, որոնք ուսումնասիրում էին Հայաստանը բնապատմական առումով: Աբովյանը նշանավոր թարգմանիչ էր, ռուս և արևմտյան ժողովուրդների քնարական և ուսումնական պոեզիայի լավագույն էջերի վերաստեղծողը հայ ժողովրդի համար:

Եվ այնուհանդերձ՝ նաչառուր Աբովյանը ողբերգական ճակատագրի տեր անձնավորություն էր: Բավականաչափ վաղ արժանանալով միջազգային ճանաչման՝ մայրենի լեզվով և հայրենի ժողովրդի համար գրած իր երկերից և ո՛չ մեկը նա չկարողացավ իր կենդանության օրերին հրատարակել: Ինքը բավարար միջոցներ չուներ, իսկ ազգը չէր օժանդակում: Նրա բանաստեղծություններն ու հոդվածները

թարգմանվում և մնջ էին բերվում ռուս և գերմանացի գրողների ու ճանապարհորդների գրքերում, սակայն Հայաստանում Աբովյանը, որպես գրող, քչերին էր ծանոթ, այն էլ՝ ձեռագիր արտագրությունների շնորհիվ: Օտարները գրում էին, «որ Աբովյանը իսկական հանճար է», «հազվագյուտ անձնավորություն», հայրենակիցները տարակուսում էին, մեղադրում, որ նա, Աբարատ բարձրանալով, աննկերևույթորեն ոտնահարել է ազգային արժանապատվությունը:

Աբովյանի գրական վաստքը և լայն ժողովրդականությունը, իբրև մեծ գրողի ու բանաստեղծի, տարածվեց նրա մահվանից հետո: Նրան սկսեցին որոնել և երկերից հոգևոր սնունդ քաղել այն ժամանակ, երբ վաղուց կորել էր անհայտ ու անչիրիմ՝ գաւնալով անտարբերության, մոռի կրքերի ու մոլեռանդության զոհ:

Մեծ են Աբովյանի ծառայությունները նաև Հայաստանի ու անդրկովկասյան ժողովուրդների անտեսական կյանքի բարվոքման բնագավառում: Շարունակ անհանգստանալով ու անհանգստացնելով պետական հաստատությունները՝ նա աշխատում էր կանոնավորել երկրամասի հողաշինարարության հարցերը, գիտական ապրոնոմիայի սկզբունքներով տեղաբաշխել գյուղատնտեսական կուլտուրաները ու ցանքերը, զարկ տալ արդյունաբերական տեսակետից չհասվետ բուսյերի՝ բամբակ, ծխախոտ և այլն մշակմանը, հող տանում բերքատվության բարձրացման համար՝ Ռուսաստանից ու արտասահմանից ներմուծել տալով լավորակ սերմեր, գյուղատնտեսական ծանր աշխատանքները թեթևացնելու համար առաջարկում էր օգտագործել գանազան մեքենաներ, խրախուսում էր երկրացիներին՝ Հայաստանի ամայի վայրերում մասսայական անտառատնկումներ կատարելու և նոր ջրանցքներ անցկացնելու, անձամբ զբաղվում բուսյերի բնահարմարեցման հարցերով: Իր գործունեության այս կողմերով Աբովյանը շատ է հիշեցնում վերածնության դարաշրջանի գրողներին ու գործիչներին:

5

Աբովյանը մեծ մարդասեր էր, հումանիզմի ու գեմոկրատիզմի ջահակիրը: Նրա սրտին մոտ էին ոչ միայն հայերի, այլև ողջ տառապող մարդկության վիշտն ու կարիքները: Նա մտահոգվել է ռուբրիկյան մայրցամաքի և ամերիկյան աշխարհամասերի բնիկների ճակատագրով, բողոքել է եվրոպական տերությունների գաղութային քաղաքականության դեմ, որը հողեպես մեռցնում և ֆիզիկապես ոչնչացնում էր բնության պարզ ու անաղարտ զավակներին. «Քանի տարու միջում, — կարդում ենք Աբովյանի անմահ վեպի մեջ, — լուսավորյալ, քրիս-

տոնյա, խաչապաշտ եվրոպացոց ոտը ողորմելի Ամերիկա էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինդ-վեց միլիոն ազգաբրիջը էսօր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած՝ վայրենի գազանների պես են իրանց սև օրը լալիս ու կոտորվում» («Վերք», 115):

Աբովյանի գաղափարներն ու պատգամները արդիական մեծ հնչեղություն ունեն և վերաբերում են նաև ժամանակակից գաղութթարարներին, այն էլ ո՛չ միայն աֆրիկյան և ամերիկյան մայրցամաքներում, որոնց թողտվությամբ խեղդում ու ոտնահարում են աշխարհի հնագույն ժողովուրդների ազատ ձայնն ու իրավունքները: Այս հայեցակետից՝ դեռ երիտասարդական տարիներին համեմատելով միմյանց հետ այդ ժողովուրդների ու հայերի, ապա և՝ հայերի ու անդրկովկասյան ժողովուրդների և ռուսների փոխհարաբերությունները, հարկավ, իր օրերում, Աբովյանը մաքուր խղճով խոստովանում է, որ եթե «Եվրոպացիք Ամերիկա ավերեցին, հողի հավասարեցին, ռուսք Հայաստան կանգնացրին ու ասիացվոց բիրտ, գազան ազգերին մարդասիրություն ու նոր հոգի տվին» (նույն տեղում, 289):

Մշտապես խորհելով պարսկական ու թուրքական դաժան լծի տակ ու ֆանատիզմի պայմաններում ապրող ասիական ժողովուրդների փրկության մասին, ազգագրական-բանահավաքչական նպատակներով Պարսկաստանում ու Թուրքիայում կատարած չրջադայությունների ընթացքում չփվելով տեղական ժողովուրդների հետ, Աբովյանը, գրեթե միշտ, լսում էր նրանց հույսի ու ակնկալիքի բաղձանքները՝ կապված Ռուսաստանի հետ, որը նաև իր կարծիքն էր. «Իմ անխախտ համոզումն է, — ասում էր նա, — որ միմիայն Ռուսաստանն է ի վիճակի Ասիայի ժողովուրդների համար նվաճելու նրանց սրտանց տենչացած այդ երջանկությունը» (VIII, 66):

Ազգերը բախտավոր ու երջանիկ կարող էին լինել, տնտեսական բարգավաճման ու մշակութային վերելքի հասնել միմիայն հոգևոր մերձեցման, փոխադարձ վստահության և սիրո ու խաղաղության պայմաններում:

«Աղբիւր ամենայն հիմնաւոր լուսաւորութեան է խաղաղութիւնն և ապահովութիւն արտաքին վիճակի ժողովրդեան... յորմէ աշխարհ մեր և ազգ դարուց ի դարս գտանի զուրկ»,— համոզված հայտարարում էր նա (VII, 322):

Հետևաբար, ինքն էլ, իր իդեալ հերոսն էլ չարունակ խաղաղության մասին են երազել, խաղաղություն տենչացել.

Ա՛խ, ե՞րբ կըլի, որ մարդն էս ճամփեցը
Հեռանա, կռիվ, էլ դավա չանի.

Ո՛չ իրան սպանի, ո՛չ ինքն սպանվի,
Ո՛չ աշխարհ քանդի, որ իրն էլ քանդվի...(II, 38)

Խաղաղության վտառաբանությամբ էլ ավարտվում է Աբովյանի կյանքի վիրքը՝ «Վերք Հայաստանի» պատմավեպը:

Սէր, խաղաղութիւն պահեն զամենայն
Զազգս և զազինս ի բարօրութեան...

Հայաստանի, նաև աշխարհի համար խաղաղության ու բարգավաճման վստահելի ուժն ու հովանին Ռուսաստանն էր, հետևաբար Աբովյանը պատգամում էր ժամանակակիցներին ու հետնորդներին՝ անխախտ պահել նրա հետ բարեկամությունը. «Օրհնեցի՛ք ռսի ոսը, ջան-ջանի տվի՛ք, իրար սիրեցի՛ք...» («Վերք», 115):

Աբովյանի ռուսական կողմնորոշման խնդիրն ու հարակից որոշ հարցեր՝ կապված գրական ստեղծագործության գաղափարական բովանդակության և աշխարհայացքի հետ, մենք լուսաբանեցինք բավականաչափ հանգամանորեն, կարծես, նրկա օրերի հեղաբեկումները բնավ կատարված չլինեին: Ամբողջ խնդիրն այն է, սակայն, որ ինչ-որ հրաշքով հինը վերանորոգվում է կրկին, և հնօրյա եղբահանգումները, հորդորներն ու խորհուրդները դառնում են նուչնքան կենդանի ու այժմեական, ինչքան այսօրվա կարգախոսները:

Ճիշտ է, Ռուսաստանն ինքն էլ այսօր կարիք ունի արմատական վերանորոգության: Եվ այնուհանդերձ, մեր պատմական դաշնակիցներից ու նրնկվա հավանններից՝ վերստին այդ ժողովուրդն է միակը, որի հետ սերտ դաշնակցած՝ հայ ժողովուրդը կարող է համախմբվել և վերանորոգվել, որի անկեղծ աջակցությունն առանալով՝ վերագտնել նրնկվա կորուստները հողի ու աշխատանքի բնագավառներում:

Ճիշտ է, հեղափոխական Ռուսաստանի վարիչները, որոնք շատ էլ ռուս ժողովրդի կամքի հետ հաշվի չէին նստում, ո՛չ վաղ անցյալում, Աբովյանի ժողովրդի անհագուրդ թշնամուն պարգևեցին Հայաստան աշխարհի շատ նահանգներ, որոնք երբեք նրան չեն պատկանել, ու նրանց մեջ նաև Անիի սրբացած ավերակները և Արցախի փառապանծ մելիքներին ծնած ու սնած հողերը: Բայց Անիի վերաշինման ժամը, վերամիավորված Հայաստանի հարության ավետիսը դեռ պիտի հնչի, և այդ ճանապարհին գործակից Ռուսաստանն է լինելու մեր դաշնակիցը: Պատմական փորձի թելադրանքով և անկեղծորեն դրան

հավատալով՝ այդ էին պատգամում նաև Խաչատուր Աբովյանն ու նրա գեղջուկ հերոսները՝ քանաքեռցի չինական Աղասին ու մյուսները:

Մի բան էլ չմոռանանք:

Քաղաքական կողմնորոշումը, հատկապես Աբովյանի համար, երբեք չի նշանակել ազգային իրավունքների ու արժանապատվության վաճառում և ոտնահարում: Այդպես մտածելը կլիներ ծանր վիրավորանք նրա պայծառ անվանն ու հիշատակին: Մեր որոշ հրապարակագիրներ ու, անգամ, գրողներ, նախքան բերանները բաց անելը և Աբովյանի հարցին անդրադառնալը՝ այս մասին պետք է լրջորեն խորհեին:

Հիմնավորելով հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման անհրաժեշտությունը, Աբովյանը չաղկապում էր այն ազգային լեզվի ու կրոնի անձեռնմխելիության, անհատի մարդկային արժանապատվությունը հարգելու դաղափարին, որպես նախազդուշացման խոսք՝ աշխարհով մեկ ազդարարելով. «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում...» («Վերք», 48):

Ազգայինի վերածնության ճանապարհով է ընթանում այսօր հայ ժողովուրդը՝ եղբայրության ու բարեկամության դաշնագրության հույսի ու լույսի ներքո՝ երախտագիտությամբ հիշելով և իր մեծ նախորդին՝ անմահ ու միշտ երանելի Խաչատուր Աբովյանին:

ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ

1

Հայ գրողների և մտածողների մեջ քչերը կան, որոնց վարքագրությունն առեղծվածային հարցերի առատությամբ կարողանար մրցել Աբովյանի կյանքի հետ: Թեպետ Աբովյանը թողել է գրական վիթխարի ժառանգություն, իսկ պետական դիվաններում և ժամանակի գրողների ու բնախույզ դիտնականների երկասիրությունների էջերում նրա մասին կան ամենաբազմազան տվյալներ, այնուամենայնիվ ցայժմ վերջնականապես ճշտված չեն նրա ապրած օրերի ու ստեղծագործության ժամանակագրության մի շարք կետական խնդիրներ, ծննդյան տարին, գլուխգործոցների գրության ճշգրիտ ժամանակը, ողբերգական վախճանի հանգամանքները, էլ չենք խոսում մտավոր զարգացման պարբերաշրջանները բնութագրող մի շարք կարևոր դեպքերի ու դիպվածների մասին, որոնք թվագրվում են մոտավոր ձևով միայն:

Առաջին էջերից ստիպված ենք քայլ առ քայլ հետևել և հնարավորության սահմաններում հանգամանորեն լուսաբանել Աբովյանի կյանքի ու գրական ժառանգության այդօրինակ խոլհրդավոր դրվագներից գեթ գլխավորները, քանի որ վերջիններս որոշիչ նշանակություն են ունեցել նրա գրական-քաղաքական հայացքների ձևավորման համար. առանց դրանք պարզելու՝ հազիվ թե հիմնավոր ու հաստատուն լինեն մեր եզրահանգումները:

Եթե ճշմարիտ է, որ ամեն մի սոցիալական անհատի բնավորության գծերի և աշխարհի ու մարդկանց մասին ունեցած նախնական հայացքների ձևավորման գործում վիթխարի նշանակություն ունեն ապրած պատմական ժամանակաշրջանը, հասարակական-քաղաքական միջավայրը, ընտանեկան շրջապատը, որոնք վերջին հաշվով աղբյուրն ու ակունքն են կյանքից ու աշխարհից քաղած նրա առաջին տպավորությունների, ինչպես նաև բնության ու հասարակության մասին ունեցած սկզբնական պատկերացումների, և կյանքի ու աշխարհի արմատական փոփոխությունների պահերին, երբեմն, ճակատագրական նշանակություն են ունենում նրա համար, որովհետև հիմա արդեն դյուրին չէ սովորույթները փոխել և ընկալել ու մտածել այլ կերպ, քան պահանջվում է, ապա որքա՞ն կարևոր է այդ ամենը ստեղծագործող մարդու՝ գրողի, արվեստագետի և մտավորականի

Համար, որոնց կյանքն ու գործը չարունակաբար հետևորդների պատաստանի առջև պիտի կանգնած լինեն, որոնցից ամենահանճարեղներն իրենց որոշակի դերն են խաղում ժողովրդի գրական-հասարակական-քաղաքական կյանքում, կաղապարում մարդկանց և ժամանակի մտքերը, կյանքի ու պայքարի ուղի հարթում հետնորդների համար:

Այս ամենի լույսի տակ երբ նայում ենք Աբովյանի կյանքի ու գործունեության ուղուն, պարզ նկատում ենք, որ նրա մտավոր ու հոգեկան ունակությունների ձևավորումը սերտորեն կապված է 19-րդ դարի առաջին կեսի հայ ժողովրդի հասարակական-քաղաքական-տնտեսական կյանքի և հոգևոր մշակույթի զարգացման վերելքների ու վայրէջքների հետ, պայմանավորված՝ նրանցով:

Հայ ժողովրդի պատմական բախտն այնպիսին չի եղել, որ նա հնարավորություն ունենար սպրել ու հառաջադիմել իր բնականոն զարգացման ներքին օրինաչափություններով: Հայերի պատմական զարդացումը դարեր շարունակ կասեցրել կամ խանգարել են արտաքին գործոնները՝ հայկական անկախ պետականության օրերին երկիր ներխուժող օտար ու բարբարոս նվաճողները (պարթևներ, հռոմայեցիներ, արաբներ, բյուզանդացիներ, սելջուկներ), իսկ այնուհետև՝ Հայաստանի հողն իրենց մրցակցությունների թատերաբեմ դարձրած թուրք ու պարսիկ ջարդարարները և, ի վերջո, Անդրկովկասը նվաճելու համար իրենց բանակներն արշավի հանած ցարերը: Իսկ թե այդ բոլոր արշավանքների հետևանքն ի՞նչ եղավ, թող պատմեն Հայաստանի աշխարհի ամայացած բնակավայրերն ու բեկված կոթողները... Խաղաղության պաղավնին հայ մանուկների օրորոցների վրա տևական ժամանակով չէ, որ թևածել է, այն էլ՝ գունատ ու սարսափահար: Ինչ թե շատ երջանիկ են եղել հայոց պատմության այն ժամանակները, երբ երկրում մեկ կամ երկու հենդամյակ խաղաղություն է տիրել, և հայ շինականը նորոգելով իր պապենական գութանը՝ մեկ-երկու տարի անխռով երգել է ավանդական հորովելը և կյանքի ու հույսի սերմեր ցանել... Այդօրինակ ամեն մի շրջան միշտ էլ աչքի է ընկել ժողովրդի կենսական ու հոգևոր ուժերի զարմանահրաշ բռնկմամբ: Ինչպես կայծակնահար մի ծառ, որ զգալով մոտալուտ վախճանը, տարին մի քանի անգամ է ծաղկում՝ ճգնելով անհետ չկորչել, այնպես էլ հայ ժողովուրդը, որը, կարծես, հասկանալով որ դեռ չի հասցրել ասել ու վերջացնել իր խոսքն աշխարհին և ենթագիտակցորեն ըմբռնելով գլխին կախված ահավոր վտանգի կործանարար հետևանքները, բնական օրենքի թելադրանքով՝ ամենակարճ ժամանակամիջոցում, լարելով իր թաքնված ուժերը, իրար հետևից հրապարակ է հանում բնությունից չոայլորեն օժտված նշանավոր անհատներ, վաղահաս

հանճարներ, չինարարական արվեստի հոյակապ կոթողներ, դպրականության, արվեստի և գիտության անձեռակերտ հուշարձաններ: Եթե ուրիշ ժողովուրդների մոտ, որոնց պատմական զարգացումն ընթացել է հիմնականում ներքին օրենքներով, արտաքին դործոնների ո՛չ վճռական ազդեցության տակ, նմանօրինակ հոգևոր մշակույթ ստեղծելու, գեղարվեստական մտածողության տարրեր ոճերի ու դպրոցների ձևավորման համար պահանջվել են դարեր, հայերի համար, ընդհակառակը, հաճախ բավական են եղել մեկ-երկու տասնամյակ կյանքի ու աշխատանքի խաղաղ տարիներ, որովհետև միշտ էլ այնուհետև սկսվել են ավելի ու ավելի մռայլ ու դաժան ժամանակներ, և թվացել է, թե վերջնականապես անհետանալու է հայը պատմության ասպարեզից...

19-րդ դարի առաջին 25 տարիներն այս առումով բավական հետաքրքիր ու յուրօրինակ են. եթե դարու առաջին տասնամյակն (ավելի ճիշտ՝ առաջին ութ տարիներն) Այրարատյան աշխարհում հատկանշվում է անընդմեջ պատերազմներով և բնակչության նորանոր տեղահանումներով, ապա հետագա տասնհինգ տարիները բերում էին քիչ թե շատ անդորր, որ այնքան անհրաժեշտ էր ժողովրդի կենսական ուժերը վերականգնելու և աշխարհին ասելիք խոսքը, սակայն առժամանակ ընդհատված գրույցը շարունակելու համար: Անտարակույս, նույնը չէին կարող լինել պատերազմների ու տեղահանումների մղձավանջում մեծացած և խաղաղ ժամանակներում աշխարհ եկած մանուկների մտավոր ու հոգևոկան զարգացումը, բնություն և հասարակություն քաղած նրանց սկզբնական տպավորությունները ու պատկերացումները, կարճ՝ նրանց բախտն ու ճակատագիրը: Աբովյանի վաղ մանկական հուշերում գարմանալիորեն ոչինչ չկա պատերազմական անցքերի ու հարազատների տեղահանության մասին, մինչդեռ այդպես չպիտի լիներ, եթե նա աշխարհ եկած լիներ 1804–1808 թվականների միջև:

Աբովյանի ծննդյան թվականի վերջնական որոշումն ունի ո՛չ պակաս կարևոր մի այլ նշանակություն էլ. առանց դրա միանգամայն անհնար է հստակ ու ճշգրիտ պատկերացում ունենալ գրողի ապրած ու մեծացած միջավայրի մասին, ընդհուպ մինչև 1829 թ., որոշակիորեն գծել, թե ե՞րբ, ո՞ր թվականից մինչև ո՞րը նա ապրել է հայրենի դյուղում, ե՞րբ կարող էր վանք բերվել, քանի՞ տարի կարող էր սովորած լինել Տիվլիսում՝ Պողոս վարդապետի ձեռքի տակ կամ Ներսիսյան դպրոցում և այլն: Ցայժմ ասվել են միայն անորոշ ու ընդհանուր խոսքեր, որ չեն կարող բավարարել. հարկավոր են ծննդյան որոշակի թվական և կյանքի ու գործունեության պարբերաշրջաններ՝ որոշակի հանգամանքներում և որոշակի տարիների մեջ:

2

Առաջինը Մ. Տեր-Ազարյանցն է, որը, թեպետև ենթադրաբար ու զգուշավոր, սակայն, այնուամենայնիվ, նշել է Աբովյանի ծննդյան որոշակի թվական. «Խաչատուր Ապովյանի ծննդյան տարին,— գրել է նա,— մեզ չէ հայտնի: Ճիշտ է, նրա 1846 թվի Մահապարտության ցուցակը ցույց է տալիս, որ այս թվումը նա էլել է 36 տարեկան, և երևում է, որ նա ծնվել է 1806 թվումը, սակայն չեմ կարող երաշխավոր լինել սրա ստուգության համար»[1]: Ուշադիր քննությունը չի կարող չնկատել, սակայն, որ տույն վկայության մեջ սպրդել է որոշակի սխալ կա՛մ իր՝ Տեր-Ազարյանցի, կա՛մ էլ ամսագրի սրբագրիչի անուշադրության հետևանքով, որովհետև 1846 թվականից հանելով 36 տարի կստանանք ո՛չ թե 1806 թվական, այլ՝ 1810: Բացի այդ, պահպանվել և մեզ է հասել Աբովյանի 1846 թ. Մահապարտության ցուցակի բնագիրը[2], ուր, հակառակ Տեր-Ազարյանցի հավաստիացման, նշված է, որ այդ տարի Աբովյանը եղել է 37 տարեկան, հետևաբար՝ պետք է ծնված լիներ 1809-ին: Այս սխալն, ինչ խոսք, առ այսօր ոչ ոք չի նկատել, և Տեր-Ազարյանցի հետնորդներից չատերը հավատացել են նրա նշած թվականին[3]:

1897-ից սկսած, երբ Ն. Տեր-Կարապետյանը հրատարակում է Աբովյանի համառոտ ինքնակենսագրությունը, գրողի կենսագրիչները լռելյայն ընդունում են «1804—1805» անորոշ թվականները, կամ էլ դրանցից մեկը կամ մյուսը, իսկ հետագա տարիներին՝ մեկը սկսում էր այս, մյուսն՝ այն թվականը, մինչև որ 40-ական թթ. սկզբներին պաշտոնական կարգով վերացվեց անորոշությունը:

Այսպիսով՝ շուրջ երկուսուկես տասնամյակ է, որ քաղաքացիություն է ստացել պաշտոնական մամուլում հրապարակված, իսկ ավելի ուշ (1948) մի գրականագետի «հիմնավորած» տեսակետ, որպես թե Խաչատուր Աբովյանը ծնվել է 1805 թվականին[4]: Այսպես են այժմ

---

[1] Մ. Տեր-Ազարյանց, *Մեկ քանի խոսք Ապովյանի վերա:* – «Կռունկ հայոց աշխարհին», *1861, № 7, էջ 532:*

[2] *Տե՛ս Հ I, գ. 786, թ. 44բ:*

[3] *Տե՛ս* «Армянские беллетристы», сборник под редакцией Юрия Весселовского и Минаса Берберьяна, т. I, М., 1893, с. 3 *(Աբովյանի կենսագրական ակնարկը):*

[4] *Տե՛ս «Սովետական Հայաստան», 1941, հունվարի 26, № 21, էջ 4, «Խ. Աբովյանի հոբելյանական կոմիտեում» լրատվությունը: Ծանուցվում էր*

(60-ական թթ. կեսեր) ուսուցանում դպրոցականներին, ապրում մամուլում ու եթերում, գրում օրացույցների ու հանդեսների մեջ, դրական-պատմական հետազոտություններում, մանրագիտական ու ընդհանուր հանրագիտարաններում՝ թե՛ մեզ մոտ և թե՛ արտասահմանում, թեպետ դժբախտություն ունեցող վավերագրերի խղճամիտ և անկանխակալ քննությունը լոկ որովհետև այլ եզրակացության է բերում: Սխալն, իհարկե, ճգնել են հիմնավորել առաջին հերթին Աբովյանի հաղորդած այլևայլ անուղղակի տվյալներով, որոնց բացարձակ մեծամասնությունը, սակայն, հետադարձ հաշիվներ անելիս՝ հանգում է 1809, իսկ հատուկենտ դեպքերում միայն՝ 1804–1805, 1806, 1807, 1808, 1810 և, անգամ, 1811 թվականներին: Գրողի ժամանակակիցների մեջ էս, զարմանալիորեն, չկա մեկը, որ վկայեր, թե Աբովյանը ծնվել է 1809 թվականից ավելի վաղ, մինչդեռ այդ կարևոր պարագան անտեսվել է: Ժամանակի դպրոցական իշխանությունների կազմած պաշտոնական ամփոփագրերում էս Աբովյանի տարիքի վերաբերյալ եղած տվյալների մեծամասնությունը հանգում է 1809 թվականին, մնացածները մատնանշում են՝ 1806, 1808 և 1810 թվականները:

Հաղիվ թե այսչափ բարդանար հարցը, եթե լիներին հնօրյա չափաբերական մատյաններ և մարդահամարի տեղեկանքներ: Ավելին, Այրարատյան աշխարհում, նրա մեջ և Քանաքեռում, պարսից տիրապետության օրոք սովորություն չի եղել չափաբերական մատյաններ պահել: Ծնունդ ու մահ չեն գրանցվել, և մարդկանց տարիքը հիշել են այս կամ այն դեպքի հետ կապելով, ինչպես օրինակ՝ պատերազմ, մահ-տարաժամ, թագադրություն, երկրաշարժ, իշխանավորի մահ և այլն: Բոլոր նշաններից երևում է, որ ծնողները Խաչատուրի ծնունդը կապել են դարասկզբի ռուս-պարսկական պատերազմի հետ, որի հաջորդ տարին աշխարհ է եկել մանուկը: Բայց դարասկզբին ռուս-պարսկական երկու պատերազմ է տեղի ունեցել՝ 1804 և 1808 թվականներին, ու երկու դեպքում էլ ռուսները լանակ են դրել Քանաքեռի մոտ: Հետագայում, երևի, վերհիշելով Խաչատուրի

մասնավորապես, որ «Հորնկյանական նիստում Կոմիտեն քննության առավ նաև Խ. Աբովյանի ծննդյան հավանական տարեթվի հարցը: Այդ տարեթիվ մանրամասն բացատրականով հանդես եկավ պրոֆ. Գ. Աբովը: Կոմիտեն հիմք ընդունելով Երևանի պետական մատենադարանի մի շարք դոկումենտների վկայությունները (!), Խաչատուր Աբովյանի ծննդյան հավանական տարեթիվը համարեց ոչ թե 1809 թիվը, ինչպես կարծում էին ոմանք, այլ 1805 թիվը...» և այլն: Նաև՝ Գ. Աբով, Խաչատուր Աբովյանի ծննդյան թվականը, տպագրված՝ «Գրական-բանասիրական հետազոտություններ», դ. III, Ե., 1948, էջ 207–216:

ծննդյան տարին՝ մերթ այն կասլում էին առաջինն, մերթ էլ երկրորդ պատերազմի հետ, ու այդ պատճառով էլ Խաչատուրն երբեմն դուրս էր գալիս 1805 թ. ծնված, երբեմն՝ 1809:

Կար չփոթության մեկ այլ աղբյուր էլ: Խնդիրն այն է, որ հետո, ցարիզմի տիրապետության տարիներին էլ, երկար ժամանակ, սովորություն չէր պաշտոնական ամփոփագրերում ու այլ կարգի վավերաթղթերում մարդկանց ծննդյան թվականը նշելը. երբ հարկ էր լինում մատնանշել որևէ մեկի տարիքը, ապա միշտ գրում էին՝ այսքան տարեկան, բայց ո՛չ՝ այսինչ թվականի ծնված: Ըստ որում, երբ ասում էին, որ մեկն, օրինակ, 21 տարեկան է, ապա նշանակում էր, որ նրա 21 տարին արդեն լրացած է: Մարդիկ ընտելացած չէին իրենց ծննդյան թվականներին, գիտեին միայն տարիքը և այդ պատճառով էլ, երբ հազարից մեկ հարկ էր լինում ասել ծննդյան թվականը, չփոթվում կամ սխալվում էին: Այսպես է պատահել նաև Աբովյանի հետ: Չնայած բազմաթիվ առիթների, որոնց կապակցությամբ նա հիշել է իր տարիքը, կյանքի մեջ միայն մեկ անգամ է, որ փորձել է որոշակի թվականով նշել իր ծննդյան տարին, այն էլ, դժբախտաբար, մոտավոր ձևով. «1804–5-ին ծնվել եմ Քանաքեռ գյուղում»,— գրել է նա[5], չասելով, սակայն, թե այդ թվականներից ո՞րն է ավելի ճշմարտանմանը: Ահա ինչու փոխանակ վերոհիշյալ թվականներից որևէ մեկիս կառչելու, մի կողմ պիտի թողնել արդեն քաղաքացիություն ստացած 1805 թվականը և լրջորեն քննել առկա այն բոլոր տվյալները, որոնք բանալի են տալիս ճշմարտությունը մեջտեղ հանելու:

Ստորև, ժամանակագրական հաջորդականությամբ, Աբովյանի երկերից, պաշտոնական վավերագրերից և ժամանակակիցների գրություններից նախ քաղենք բոլոր այն տվյալները, որոնք հիմք են ծառայելու նրա ծննդյան թվականը վերջնականապես որոշելու համար՝ յուրաքանչյուր անգամ նշանակելով աղբյուրը, գրության ժամանակը և ըստ այդմ՝ որ թվականին ծնված լինելը:

1. Տփղիսի զինվորական նահանգապետ Ս. Ստրեկալովի գևկուցագիրը Ի. Պասկևիչին՝ գրված 1830 թ. հունվարի 16-ին: Հիշվում է՝ «20-ти летний молодой человек» *(20 տարեկան երիտասարդ), ուստի՝* ***1809 թ. վերջերի ծնված*** *(ՎԱ, ֆ. 2, ց. 1, դ. 2132, թ. 1):*

2. Աբովյանի խնդրագիրը Նիկոլայ Առաջինին՝ գրված 1830 թ. փետրվար–մարտ ամիսներին: — «Հասակ իմ քսանամեայ գոլով», ուստի՝ ***1809 թ. վերջերի ծնված*** *(Ա № 512. Համմ. Ե X, 119):*

---

5 *Ե X, 192 [193]: Բնագիրը դնդմաններին է, տե՛ս Ա № 54ա:*

3. Ֆ. Պարրոտի կարծիքը Խ. Աբովյանի մասին՝ գրված 1830 թ. մարտի 3-ին. հիշված է՝ «20-jährige Jüngling» *(20-ամյա երիտասարդ), ուստի՝* ***1809 թ. վերջերի ծնված*** *(Ի I, ց. 2, գ. 4, թ. 4բ):*

4. Խ. Աբովյանի ցուցմունքները՝ տրված Դորպատի գավառային դատարանում, 1831 թ. օգոստոսի 18-ին: Տարիքի վերաբերյալ կա 3 վկայություն. ա) «22 Jahre alt» *(22 տարեկան): բ)* «Er jetzt 22 Jahre alt sein dürfte, vielleicht aber noch erst im zweiundzwanzigsten Jahre stehe» *(Նա պետք է, որ հիմա 22 տարեկան լինի, սակայն հնարավոր է, որ նոր է մտնում քսաներկուսի մեջ): գ) Դորպատ ուղևորվելու ժամանակ (1830, հունիս) ծնողներից իմացել է, որ* «damals 21 Jahr alt gewesen» *(...21 տարեկան էր), ուստի, այս բոլոր տվյալների համաձայն՝* ***1809 թ. ծնված*** *(Լ II, ց. 56, գ. 463, թ. 163ա և 164բ):*

5. Մ. Սալլանթյանցի նամակը Խ. Աբովյանին՝ գրված 1832 թ. փետրվարի 8-ին: «...ես ասա ի 46 ամաց հասակի ուսայ պետ պռուսացն լեզու, և դու ո՞չ զօրեսցես քսանամեայ ուսանիլ պատիւն»: Ըստ այմ՝ ***1811 թ. ծնված*** *(Ա № 328. հմմտ. Դ II, 116):*

6. F. Parrot, «Reise zum Ararat», *տպագրված՝ Բեռլին, 1834: 1829 թ. սեպտեմբերի 27-ին Աբովյանն համարված է՝* «obgleich erst 20 Jahr alt» *(թեև հազիվ 20 տարեկան), ուստի՝ ծնված* ***1809 թ. հոկտեմբեր ամսից ո՛չ առաջ*** *(տե՛ս հիշյալ գրքում, հ. I, էջ 163):*

7. Աբովյանի Դորպատյան օրագրերի՝ 1834 թ. սեպտեմբերի 5-ի գրառումը. Հայաստանի պատմագրության պահին (իմա՛ 1827, հոկտեմբեր—1828, փետրվար—Պ. Հ.) իրեն 27 տարեկան է համարում. «...ի յաւուն աւուրս ի 27 ամի կենաց իմոց, կրկին սկիզբն արարի ընել զդիւտաւորութիւն իմ... Ես նորոգեցի զինդիր իմ առ հոգևորականս մեր և առ այլ անձինս...»: Ըստ այմ՝ ***1800 կամ 1801 թ. ծնված****, որ անհեթեթություն է, որովհետև ծնողներն ամուսնացել են 1803 թ. միայն (Ե VI, 298): 27-ը թերևս, 21-ի պղտվածումն է, մնկ (1) թվանշանը անհաջող գծագրելու հետևանք: Այդ դեպքում՝ չուրջ 1828-ին Աբովյանը կլիներ 21 տարեկան կամ* ***1807 թ. ծնված:***

8. Աբովյանի «Յետ վտքը ինչ մխիթարելոյ իմ ի ցաւոց վասն մահուան հօր իմոյ» վերհուշը՝ գրված 1834 թ. նոյեմբերի 24-ին: Դորպատ հասնելու ժամանակ (իմա՛ 1830, սեպտեմբեր—Պ. Հ.).

> *«Եւ դեռ քսանամեայ սիրտ իմ պատառէր*
> *Փոխել զանկողին, առանց քեզ ննջել...»*

ուստի՝ ծնված ***1810 թ.*** *(Ե I, 98):*

9. Համառոտ ինքնակենսագրությունը՝ գրված 1835 թ. դեկտեմբերին կամ 1836 թ. հունվարին. «1804–5 wurde ich... geboren», *այսինքն՝* ***ծնվել եմ 1804 — 5-ին:*** *Միակ ուղղակի վկայությունն է, սակայն մոտավոր թվականով (Ե X, 192 [193]):*

10. Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության 1836/37 ուսումնական տարվա հաշվետվությունը՝ կազմված 1837 թ. սեպտեմբերին, Ե. Հասսենմյուլլերի ձեռքով: Աբովյանի տարիքը՝ «27 лет», *ուստի՝* ***1809 կամ 1810 թ. ծնված*** *(Լ II, ց. 95, պ. 942, թ. 200բ և ԼԱ, ֆ. 1268, ց. 1, պ. 33):*

11 . Նույնի 1838 թվականի հաշվետվությունը՝ կազմված 1839 թ. փետրվար-մարտին, Ն. Դեմենտևի ձեռքով: Աբովյանի տարիքը՝ «28 лет», *ուստի՝* ***1810 թ. ծնված*** *(ն. տ., պ. 943, թ. 32բ):*

12. Նույնի 1838/1839 ուս. տարվա հաշվետվությունը՝ կազմված 1840 թ. (փետրվա՞ր), Վասիլկովսկու ձեռքով: Աբովյանի տարիքը՝ «29 лет», *ուստի՝* ***1810 թ. ծնված*** *(ն. տ., պ. 948, թ. 47բ):*

13. «Խնդամիտ զգացմունք» բանաստեղծության պոլյա արտագրությունները՝ կատարված 1840–1841 թթ. միջև, չպահպանված ինքնագրից, ուր խորագրից հետո եղել է. «յամի 1826 ի վեչտասան հասակի իւրում», ուստի՝ ***1810 թ. ծնված*** *(Ա №№81 և 57, էջ 77):*

14. Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության 1839/40 ուս. տարվա հաշվետվությունը՝ կազմված 1840 թ. դեկտեմբերից ո՛չ ուշ: Աբովյանի տարիքը՝ «32 года», *ուստի՝* ***1808 թ. ծնված*** *(Լ II, ց. 95, պ. 955, թ. 27բ):*

15. Աբովյանի ծառայության ցուցակը՝ կազմված անծանոթ ձեռքով, 1841 թ. ապրիլին: Ասված է՝ «от роду имеет 35 лет», *ուստի՝* ***1805–1806-ի ծնված*** *(Լ II, ց. 82, պ. 86, թ. 2բ):*

16. «Բարեկամի մոտ» ակնարկը, որի չափածո սկիզբը գրված է 1841 թ. սեպտեմբերի 5-ին (տե՛ս Ե I, 109), իսկ արձակ մասը՝ Ն. Թ. Մողնոբայլին կամ ս. Գևորգի տոնին, այն է՝ սեպտեմբերի 27-ին: Ասված է. «Նա տասն ութ տարեկան, ես՝ երեսուն երկու», ուրեմն՝ ***1809 թ. ծնված*** *(Ե IV, 39):*

*17. Անդրկովկասյան պլրոցնների վերատեսչության 1841 թ. տարեկան հաշվետվությունը՝ կազմված 1842 թ. փետրվարից ո՛չ առաջ: Աբովյանի տարիքը՝ «33», ուրիմն՝ **1808 թ. ծնված** (Լ II, ց. 95, պ. 963, թ. 48բ):*

*18. Նամակ Ի. Ռոսկովշենկոյին (անթվակիր)՝ գրված, հավանաբար, 1842 թ. կեսերին: Դարպասյան ուսումնառության սկզբին (1830, սեպտեմբեր — Պ. Հ.) 23 տարեկան. «В 23-х летах моего возраста... я сперва начал приступать к приобретению их» (իմա՝ եվրոպական կրթության): Ուրիմն՝ **1807 թ. ծնված** (Ե X, 255 [258]):*

*19. Անդրկովկասյան պլրոցնների վերատեսչության 1842 թ. տարեկան հաշվետվությունը՝ կազմված 1843 թ. (փետրվա՞ր): Աբովյանի տարիքը՝ «34», ուստի՝ **1808 թ. ծնված** (Լ II, ց. 95, պ. 969, թ. 41բ):*

20. Աբովյանի ծառայության ցուցակը՝ կազմված իր ձեռքով, 1843 թ. հունիսի վերջին օրերը: Տարիքը նշել է՝ «от роду имеет 34 года», ուրիմն՝ 1809 թ. ծնված: (Վ. I, պ. 2, թ. 10բ. Համմ. Դ I, 96):

*21. Երևանի պատառական գլրոցի 1843 թ. տարեկան հաշվետվությունը՝ կազմված Աբովյանի ձեռքով, 1844 թ. հունվարի 14-ին: Տարիքը նշել է՝ «34-х лет», ուստի՝ **1809 թ. ծնված** (Հ I, պ. 69, թ. 9բ):*

*22. Անդրկովկասյան գլրոցնների վերատեսչության 1843 թ. հաշվետվությունը՝ կազմված 1844 թ. փետրվարի 17-ին: Աբովյանի տարիքը նշված է՝ «39 лет», որ վրիպակ է, պետք է լինի՝ 34, որովհետև սույնը տրատպրված է Աբովյանի նախորդ հաշվետվությանից (Վ.Ա., ֆ. 2, ց. 2, պ. 2757, թ. 34բ և Լ II, ց. 95, պ. 975, թ. 31բ): Ուստի՝ **դարձյալ 1809 թ. ծնված:***

*23. Աբովյանի ծառայության ցուցակը՝ ուղարկված գլրոցնների վերատեսչության գրասենյակից, 1844 թ. մարտի 11-ին: Տարիքը նշված է՝ «35 лет», ուստի՝ **1809 թ. ծնված:** Իսկական արժեք չունի, քաղված է Աբովյանի կազմած ցուցակից, տե՛ս վերևում, № 20 (Հ I, պ. 779, թ. 7բ: Համմ. Դ I, 143):*

*24. Երևանի պատառական գլրոցի 1844 թ. տարեկան հաշվետվությունը՝ կազմված Աբովյանի ձեռքով, 1845 թ. հունվարի 5-ից ո՛չ ուշ: Սեփական ձեռքով տարիքը նշել է՝ «35 лет», ուստի՝ **1809 թ. ծնված** (Հ I, պ. 73, թ. 71բ):*

25. Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության 1844 թ. հաշվետվությունը՝ կազմված 1845 թ. փետրվարին: Աբովյանի տարիքը նշված է՝ «35 лет», *ուստի՝* ***1809 թ. ծնված*** *(Լ II, ց. 95, գ. 981, թ. 29բ):*

26. Աբովյանի 1845 թ. ծառայության ցուցակը՝ կազմված իր ձեռքով, 1845 թ. հունիսի 30-ին: Տարիքը նշել է՝ «36 лет», *ուստի՝* ***1809 թ. ծնված*** *(Հ I, գ. 782, թ. 13բ):*

27. Երևանի գավառական դպրոցի 1845 թ. տարեկան հաշվետվությունը՝ կազմված Աբովյանի ձեռքով, 1846 թ. հունվարի 5-ին: Տարիքը նշել է՝ «36 лет», *ուստի՝* ***1809 թ. ծնված*** *(ն. տ., գ. 75, թ. 5բ):*

28. Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության 1845 թ. հաշվետվությունը՝ կազմված 1846 թ. փետրվարին: Աբովյանի տարիքը նշված է՝ «36 лет», *ուստի՝* ***1809 թ. ծնված*** *(Լ II, ց. 95, գ. 988, թ. 20բ):*

29. Աբովյանի 1846 թ. ծառայության ցուցակը՝ արտագրված ուսուցիչ Ս. Վեքիլովի ձեռքով, 1846 թ. մայիսի 25-ին: Տարիքը նշված է՝ «37 лет», *ուստի՝* ***1809 թ. ծնված*** *(Հ I, գ. 786, թ. 44բ):*

30. Երևանի գավառական դպրոցի 1846 թ. տարեկան հաշվետվությունը՝ կազմված Աբովյանի ձեռքով, 1847 թ. հունվարի 10-ին: Տարիքը նշել է՝ «37 лет», *ուստի՝* ***1809 թ. ծնված*** *(ն. տ., գ. 78, թ. 5բ):*

31. Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության 1846 թ. հաշվետվությունը՝ կազմված 1847 թ. փետրվարին: Աբովյանի տարիքը նշված է՝ «37 лет», *ուստի՝* ***1809 թ. ծնված*** *(ԼԱ, ֆ. 1268, ց. 2, գ. 541, թ. 33բ: Լ II, ց. 95, գ. 995, թ. 31բ):*

32. Աբովյանի 1847 թ. ծառայության ցուցակը՝ կազմված ուսուցիչ Բանդուրովսկու ձեռքով, 1847 թ. հունիսի 27-ին: Տարիքը նշված է՝ «38 лет», *ուստի՝* ***1809 թ. ծնված*** *(Հ I, գ. 789, թ. 55բ: «Նոր հոսանք», 1914, № 5, էջ 758–759):*

33. «Поездка к развалинам Ани» *երկի (1847, նոյեմբեր) ղուլդ տվյալները. ա)* «...как дитя 12-ти летнее, видел, как Абас-Мирза в 1821-м году...» *(երբ 12 տարեկան մանուկ էի, տեսել եմ, թե ինչպես Աբաս-Միրզան, 1821 թվականին...) — ըստ այսմ՝ 1821–12=****1809 թ. ծնված*** *(Ե VII, 128 [173]): բ) Վերհիշելով դորպատյան ուսումնառության սկիզբը, որ է՝ 1830 թ. սեպտեմբեր, նկատում է, որ Պարրոտը,*

թեպետ և լյութերական, իրեն՝ «полумонаху уже лет 24-х...» *ճշմարիտ ուղիով է առաջնորդել: Ըստ այդմ՝ 1830–24=1806 թ. ծնված (*ե VII, *137 [181]):*

34. Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության 1847 թ. հաշվետվությունը՝ կազմված 1848 թ. փետրվարին: Աբովյանի տարիքը նշված է՝ «38 лет», *ուստի՝ 1809 թ. ծնված (ԼԱ, ֆ. 1268, ց. 2, պ. 951, թ. 30բ: Լ* II, *ց. 95, պ. 1003, թ. 36բ):*

35. Աբովյանի անհետացումից հետո՝ 1848 թ. կազմված ծառայության ցուցակը. նշված է, որ անհետացման ժամանակ Աբովյանն եղել է «38 лет», *ուստի՝ 1809 թ. վերջերի ծնված: Այդ ցուցակից 1854 թ. օգոստոսի 31-ին հանված պատճենն ևս կրկնում է նույնը՝* «Тридцати восьми лет» *(38 տարեկան) կամ 1809 թ. վերջերի ծնված (ԳԱԹ, չցուցակագրված նյութեր Աբովյանի թողոններում):*

36. Աբովյանի կնոջը թոշակ տալու կապակցությամբ 1853 թ. ապրիլի 1-ին կազմված ծառայության ցուցակը. տարիքը նշված է՝ «Сорока трех лет»: *Անհայտ կորած անձինք օրենքով չէին համարվում մեռած, և անցած տարիները միքենայորեն ավելացնում էին նրանց տարիքին: Ըստ այմ՝ 1853–43=1809 թ. վերջերի կամ 1810 թ. սկզբների ծնված (*Լ II, *ց. 82, պ. 270, թ. 18: ՀԱ, ֆ. 19, ց. 1, պ. 1553, թ. 6բ: Դ* I, *193):*

Գոյություն ունեն նաև Աբովյանի մի քանի խիստ համառոտ ինքնակենսագրություններ ու այլ կարգի վկայություններ, որոնք նույնպես ավյալներ են ընձեռնում հետազոտ հաշիվներ կատարելու, ուրեմն և՝ ծննդյան թվականը որոշելու համար:

37. 1830 թ. աշնանը Դորպատում կազմված հարցաթերթիկը. ըստ այդմ՝ Աբովյանն 9 տարեկան հասակում տարվել է վանք, 6 տարի հետո մտել Տիլիսի դպրոցը, ուր սովորել է մեկուկես տարի, որից 3 տարի անց նրան հանդիպել է Պարրոտը: Որովհետև Պարրոտի հետ Աբովյանը հանդիպել է 1829 թ., հետևաբար այդ ժամանակ նա 19,5 տարեկան է եղել (9+6+1,5+3=19,5), ուրեմն՝ ծնված 1809 թ. վերջերին կամ 1810 թ. սկզբներին[6]*:*

---

[6] *Տե՛ս Ա № 125ա, թ. 66ա–67բ (Համմա.* «Պատմա-բանասիրական հանդես», *1960, № 2, էջ 104):*

*38. 1830 թ. փետրվար–մարտին դրված խնդրագիրը (սևագիր). ասում է, որ վանք է բերվել 10 տարեկան հասակում ու մնացել է 5 տարի, ապա՝ Տփղիսի դպրոցում ուսանել է ռուսերեն ու պարսկերեն և հետո՝ 5 տարի ուսման մեկնելու ապարդյուն ջանքեր գործադրել, մինչև որ Պարրոտի միջնորդությամբ տնօրինվել է իր բախտը[7]: Որովհետև Ներսիսյան դպրոցում անցկացրած տարիներն Աբովյանը սովորաբար հաշվում է 1,5–2, ուրեմն՝ 1830 թ. փետրվար–մարտին պետք է լիներ 21–22 տարեկան (10+5+1,5/2+5=21,5/22), հետևաբար՝ **ծնված 1808/1809 թվականներին,** մանավանդ որ նույն վավերագրում փոքր–ինչ վար, իրեն «քսանամեայ» է համարում:*

*39. 1834 թ. դեկտեմբերին արտասանած ճառը. այստեղ նախքան Դորպատ գնալը՝ էջմիածնի վանքում և Տփղիսի դպրոցում անցկացրած ժամանակամիջոցը հաշվվում է՝ «mehr als 15 Jahre» (տասնհինգ տարուց ավելի)[8]: Քանի որ նա դյուղից վանք է տարվել ինը կամ տասը տարեկան հասակում, ուրեմն 1830 թ. պետք է լիներ 25–ամյա երիտասարդ՝ **ծնված 1805–ին:***

*40. 1838 թ. դեկտեմբերի 15–ին էջմիածնի Սինոդին մատուցած խնդրագիրը. ըստ վերջինի՝ վանք է բերվել «ի տասնամեայ հասակէ», «զամս երկուս» ուսանել Տփղիսի դպրոցում, որից անմիջապես հետո՝ 1826–29 թթ., «յընթացս երից ամաց», ծառայել է Անտոն, Եփրեմ արքեպիսկոպոսների ձեռքի տակ և կաթողիկոսի մոտ, այնուհետև՝ մեկնել Դորպատ: Որոշակի չէ միայն էջմիածնում անցկացրած տարիների հաշիվը. «Ծառայեալ զքանի մի ամս իբրև դպիր»[9]: Եթե այդ ժամանակամիջոցը հաշվենք կլոր թվով 5 տարի, ինչպես վարվել է Աբովյանն ավելի վաղ՝ «յընթացս հինգ ամաց»[10], ապա դառնում է դարձյալ **1809 թվականի ծնված,** քանի որ էջմիածնի վանքը թողնելու պահին՝ 1829 թ. դեկտեմբերին, 20–ամյա երիտասարդ էր (10+5+2+3=20):*

41. «Поездка к развалинам Ани» *(1847, նոյեմբեր). Աբովյանը նշում է, որ վանք է տարվել «9 տարեկան» հասակում և «չորս տարի»*

---

7 *Ե* X, *119:*

8 *Ե* VIII, *299 [306]:*

9 *Ե* X, *212:*

10 *Ն. տ., էջ 119:*

այստեղ սովորելուց հետո, «1821թ.» փոխադրվել Տփղիս[11]*: Այս դիպքում նա դառնում է 1808 թ. ծնված, քանի որ 1821–9–4=1808: Բայց, որովհետև, իրականում Աբովյանը Տփղիս է տարվել 1823 թ., հետևաբար նա դառնում է ճիշտ և ճիշտ 1809 թ. վերջերի կամ 1810 թ. սկզբների ծնունդ:*

Այսպիսով՝ վերջին հինգ ցուցումները, բացառությամբ մեկի, որպես Աբովյանի ծննդյան տարի մատնանշում են 1809 թվականը (մեկ տարի առաջ կամ հետո):

Ամփոփենք՝ Աբովյանի ծննդյան թվականը մատնանշող առկա ուղղակի և անուղղակի 44 վկայություններից (23-ը գրված են իր սեփական ձեռքով, 18-ը առնված են պաշտոնական վավերագրերից և 3-ը՝ ժամանակակիցների խոսքերից) 26-ը անհերքելիորեն հաստատում են, որ Աբովյանը ծնվել է 1809 թվականին, մնացած 17-ից 1-ը մատնանշում է 1804–5 թվականը, 1-ը՝ 1805, 1-ը՝ 1805–6, 1-ը՝ 1806, 1-ը՝ 1807, 4-ը՝ 1808, 1-ը՝ 1808–9, 1-ը՝ 1809–10, 5-ը՝ 1810 և 1-ը՝ 1811: Վկայություններից մեկն էլ բացարձակապես սխալ է (1800–1801): Այս ամենը ընդհանուր հայտարարի բերելուց հետո նկատում ենք, որ Աբովյանի՝ 1805 թվականին ծնված լինելու օգտին են խոսում ծայրահեղ դեպքում հինգ տվյալ միայն՝ 1804–1807 թթ. մատնանշողները, այնինչ մնացած 38-ը հարկադրում են քմահաճ անուսյալներությունն չցուցաբերել 1809-ի նկատմամբ:

Արդ, այս թվականներից որի՞ն նախապատվություն պետք է տալ, ո՞րը պիտի վերջնականապես ընդունել որպես գրողի ծննդյան տարի: Դառնանք վերևում բերված վկայություններից ամենածանրակշիռներին՝ առաջին հերթին կանգ առնելով Աբովյանի տարիքը մատնանշող ամենավաղ տվյալների վրա, քանի որ հիշողությամբ վերարտադրված ու ավանդված այդօրինակ կռվաններից առավել զորավորները նրանք են, որոնք գրվել են ավելի վաղ և, հատկապես, ճիշտ տարիք կամ ծննդյան տարի մատնանշելու նպատակով, իհարկե, ո՛չ բոլոր վկայություններին լիակատար հավատ ընծայելով, որովհետև երբեմն, անգամ Աբովյանի ձեռքով գրված՝ նրանք անբավարար են հիշյալ նպատակի համար[12]*:*

---

11 Ե VII, *131 (175) և 133 (177):*

12 *«Խնդամիտ դպացմունք» բանաստեղծությունն, օրինակ, թեպետ Աբովյանի վկայությամբ հորինված է 1826 թվականին, «ի վեշտասան հասակի իւրում», որ նշանակում է, թե 1826 թվականին Աբովյանն իրեն տասնվեցամյա պատանի է համարել, հետևապես ծնված՝ 1809 թ. վերջերին կամ 1810 թ. սկզբներին, և իրականում էլ այդպես է, բայց այս վկայության վրա չենք հենվի, որովհետև մեր մատնավոր հետազոտությունները պարզել են,*

3

Իր լրջությամբ հատուկ նշանակություն է ստանում նախ և առաջ Ֆ. Պարրոտի վկայությունը՝ ամփոփված վերջինի «Reise zum Ararat» գրքում: Ճիշտ է, այդ ուղեգրությունը լույս է տեսել 1834 թվականին (Բեռլինում), սակայն նրա հիմնական մասերը պատրաստ էին 1829 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին, Արարատյան դիտարշավի օրերին՝ քաղված անմիջական և վստահելի աղբյուրներից: Գրքի այն էջերում, ուր Ֆ. Պարրոտը համառոտ կանսագրական տեղեկություններ է տալիս 1829 թ. սեպտեմբերի 27-ին Արարատի դագաթը բարձրացած առաջին մահկանացուների մասին, Աբովյանի վերաբերյալ գրում է. «Der Diacon, obgleich erst 20 Jahr alt und an ein ruhiges Klosterleben gewöhnt...» *(Դպիրը թեպետ հազիվ 20 տարեկան է և վանական հանգիստ կյանքին վարժված...)*[13]*: Իր հնութեամբ Աբովյանի տարիքը մատնանշող այս առաջին վկայությունից մի եզրակացության կարելի է հանգել, այն էլ՝ խիստ ծանրակշիռ. Ի. Աբովյանը անպայմանորեն ծնված պետք է լինի 1809 թվականի աշնանը, հոկտեմբեր ամսից ո՛չ առաջ, քանի որ, Պարրոտի վկայությամբ՝ սեպտեմբերի 27-ին նրա 20 տարին դեռ լրացած չէր (ինչպես հետո կտեսնենք, այս թվականն ամենից հավաստին է): Մենք ո՛չ մի հիմք և իրավունք չունենք չհավատալու Ֆ. Պարրոտին, քանի որ նա իր տվյալները քաղել է անձամբ Աբովյանից, իսկ վերջինս 1829 թվականին իր տարիքը պետք է որ ավելի լավ իմանար, քան նրանից հարյուր տարի հետո եկող գիտուններըը:*

Աբովյանի ծննդյան թվականը որոշելու երկրորդ, չափազանց հավաստի վավերագիր է Դորպատյան դատարանի (Լանդգերիխտ) 1831 թ. օգոստոսի 18-ի արձանագրությունը՝ առնված անմիջապես Աբովյանի խոսքերից, նրա ցուցմունքներին բառ առ բառ համապատասխան: Ահրիմն այնպիսին էր, որ Աբովյանն ամեն ինչում պետք է ճշմարտախոս լիներ, քանի որ մեղսեռում կար պրոֆ. Ֆ. Պարրոտի և իր պատվի հարցը: Ցարական աստիճանավոր ի. Շոպենը դրանից մի քանի ամիս առաջ «Тифлисские ведомости» *պարբերաթերթի էջերում հրապարակով ժխտել էր Ֆ. Պարրոտի՝ Արարատի դագաթ բարձրացած*

որ այդ ոտանավորը 1828 թ. ապրիլ–մայիսից առաջ չէ՛ր կարող գրված լինել (Ա № № 81 և 57: Նաև՝ Ե I, 21):

13 **F. Parrot,** Reise zum Ararat, հ. I, *Բեռլին, 1834, էջ 163 (հմմտ. ԺԱՄ, էջ 15):*

լինելը, ստախոս հռչակել Աբովյանին[14]*: Պարզոտի խնդրանքով*[15] *և այն ժամանակվա Ռուսիայի հանրային կրթության մինիստրի կարգադրությամբ* [16]*հարցաքննում են վերնելքի բոլոր մասնակիցներին՝ ի թիվս որոց և Աբովյանին, որպեսզի երևան հանեն իրողությունն ու կեղծիքը: Ամեն մի ո՛չ ճիշտ ցուցմունք կարող էր կասկածի տեղիք տալ, և Աբովյանից պահանջվում էր ամենայն ճշգրտություն, քանի որ նրա ասածները կարող էին ստուգվել: Եվ ահա՛ դատավորի այն հարցին, թե՝ քանի՞ տարեկան եք, Աբովյանն առանց տատանվելու պատասխանում է՝* ***քսաներկու***[17]*, ուրեմն՝* ***1809 թվականի ծնված****, քանի որ, ինչպես ասացինք, հարցաքննությունը տեղի էր ունենում 1831 թ. օգոստոսի 18-ին: Աբովյանը ճշտությամբ է պատասխանում նաև մնացած բոլոր հարցերին, որոնք վերաբերում էին վերնելքի մանրամասնություններին: Հարցաքննությունից անմիջապես հետո, վերադառնալով տուն, այնուամենայնիվ, նա չի կարողանում հանգիստ մնալ: Նրան տանջում է այն միտքը, որ ո՛չ բոլորովին ճիշտ են եղել իր ասածները տարիքի վերաբերյալ: Եվ, որ ուշագրավ է, նա փոքրով նորից դատարան է չտապում և լրացուցիչ պարզաբանումներ տալիս տարիքի վերաբերյալ. նախապես ասածին, որ հարկ ենք համարում մեջ բերել նախ՝ դատարանի արձանագրության բնագրի լեզվով՝ գերմաններեն, ապա՝ հայերեն թարգմանությամբ:*

«Paulo post erschien der gedachte Herr **Aboiow** wieder vor Gericht und unterlegte, in Beziehung auf seine früher gemachte Anzeige über sein Alter von 22 Jahren, nunmehr, ganz gehorsamst, dass er ganz genau und bestimmt nicht wisse, ob er schon das zweiundzwanzigste Lebensjahr vollendet habe. Vielmehr wisse er von seinen Eltern, als er von ihnen gekommen, dass **Comparent** damals 21 Jahr alt gewesen, als wodurch **Comparent** entnommen, dass er jetzt 22 Jahre alt sein dürfte, vielleicht aber noch erst im zweiundzwanzigsten Jahre stehe.

(Trat ab)»[18].

---

[14] *Տե՛ս* «Тифлисские ведомости», 1831, № 5 *(17. I), էջ 40 և* № *11 (11. II), էջ 83–85 (վերջինիս մեջ Աբովյանը հիշված է* «дьячка, подписавшего свидетельство» *անուղղակի ձևով): №* 21–23 *(III), էջ 170–182:* F. Parrot, Reise zum Ararat, I, *էջ 167:*

[15] *Լ. II, ց. 56, գ. 463, թ. 154–155բ:*

[16] *Ն. տ., թ. 159–161: ԷԱ, ֆ. 291, գ. 5022/341, թ. 1ա–բ:*

[17] *Լ. II, ց. 56, գ. 463, թ. 163ա:*

[18] *Ն. տ., թ. 164բ:*

«Շատ ժամանակ չանցած հիշյալ պարոն **Աբովը** կրկին ներկայացավ դատարան և իր 22 տարեկան լինելու վերաբերյալ նախկինում տված ցուցմունքին ամենայն հնազանդությամբ հավելագրեց, որ այժմ ինքը ճիշտ և որոշակի չդիտի, թե իր քսաներկու տարին իսկապե՞ս լրացել է: Ավելին. իր ծնողներից, երբ նրանցից բաժանվում էր (իմա՛ 1830, հունիս — Պ. Հ.) նա իմացել է, որ այն ժամանակ ինքը 21 տարեկան է եղել, այստեղից ելնելով էլ պետք է որ նա հիմա 22 տարեկան լինի, սակայն հնարավոր է, որ նոր է միայն մտնում քսաներկուսի մեջ: (Հետացավ)» (Թերևս՝ դեռ 22-ի մեջ է — Պ. Հ.)[19]:

Հազիվ թե լինի Աբովյանի ծննդյան թվականը որոշելու ուրիշ, ավելի ուժեղ կռվան, քան մեջբերած հատվածը, որովհետև նրա մեջ ամեն ինչ արված է ճշտությունը մեջտեղ հանելու համար, իսկ ճշմարիտն, ըստ այդմ, այն է, որ Աբովյանը ծնվել է 1809 թ. աշնանը: Աբովյանի ծնողները, որոնք առանց այլևայլության, ամենից լավ գիտեին իրենց որդու տարիքը, 1830 թ. կեսերին նրան 21 տարեկան են ասել, ուրեմն՝ ծնված 1809 թվականին: Մենք դարձյալ ո՛չ մի հիմք և իրավունք չունենք չհավատալու նրանց և ճշմարտությունը թողած՝ անհարկի մանրախնդրության և կասկածամտության հանդես բերել:

Աբովյանի ծննդյան թվականը որոշելու երրորդ, լուրջ կռվանը Անդրկովկասյան գպրոցների 1836/37 ուսումնական տարվա հաշվետվությունն է[20], որի վերջում կենսագրական համառոտ տվյալներ կան Աբովյանի մասին, որը նույն ուսումնական տարվա երկրորդ կեսից՝ 1837 թ. փետրվարի 12-ից, պաշտոնի էր անցել Տիղիսի գավառական գպրոցում, որպես ռուսաց լեզվի, պատմության ու թվաբանության ուսուցիչ: Գպրոցական գերատեսչության դործերում Աբովյանի տարիքի մասին եղած առաջին տվյալն էր այդ, հետևաբար քաղված՝ դարձյալ անձամբ Աբովյանից: Իբրև պաշտոնյա, Աբովյանը պարտավոր էր նախապես համապատասխան տեղեկություններ հաղորդել իր մասին, որոնք հետո մուծվում էին գպրոցական աստիճանավորների ընդհանուր ցուցակի մեջ և հաղորդվում հանրային կրթության մինիստրությանը: Այդօրինակ տեղեկությունները, որպես կանոն, ուղարկվում էին ուսումնական տարվա վերջերին: 1836/37

---

19 Դոյուբյուն ունի և նույն վավերագրի 1831 թ. օգոստոսի 20-ին կազմված ռուսերեն տարբերակը, ուր մեզ հետաքրքրող տողերը այսպես են. «Он узнал от родителей своих, когда оставил их, что ему было в то время 21 год, по чему полагает, что ему должен быть ныне 22 года, а может быть еще считается на 22 году» *(տե՛ս Լ. II, ց. 56, գ. 463, թ. 166բ):*

20 Լ. II, ց. 95, գ. 942: Գպրոցական (ուսումնական) տարին սկսվել է 1836 թ. սեպտեմբերին և ավարտվել հաջորդ, 1837 թվականի հունիսին:

ուսումնական տարվա վերաբերյալ տվյալները հավաքվել են 1837 թ. սեպտեմբերին: Ինչպես պարզվում է հաշվետվությունից՝ այդ ժամանակ Աբովյանը եղել է 27 տարեկան, ուրեմն՝ ծնված դարձյալ 1809 թ. վերջերից ո՛չ առաջ, թերևս 1810 թ. սկզբներին: Այս ևս պակաս է հաստատելու, որ Աբովյանի ծննդյան հավաստի թվականը 1809-ն է, այն էլ՝ տարվա վերջին ամիսներից մեկը:

Աբովյանի ծննդյան թվականը որոշելու չորրորդ կռվանը նրա անհետացումից անմիջապես հետո՝ 1848 թ. աշնանը կազմված ծառայության ցուցակն է, որի բնագիրը պահպանվել է ժառանգների մոտ և վերջերս միայն հանձնվել Գրականության և արվեստի թանգարանին: Ըստ այդ վավերագրի՝ անհետացման ժամանակ, այսինքն՝ 1848 թ. ապրիլի 2-ին, Աբովյանը եղել է 38 տարեկան, իսկ դա նշանակում է, որ նա ծնված է եղել 1809 թ. վերջին ամիսներին, կամ 1810 թ. սկզբներին, բայց ո՛չ երբեք դրանից առաջ: Նույնն է ասում նաև ծառայության ցուցակի 1854 թ. օգոստոսին կազմված լրացված օրինակը, ուր նմանապես Աբովյանի տարիքը անհետացման ժամանակ նշված է «Тридцати восьми лет» (երեսունութ տարեկան)[21]:

Մի ավյալ ևս, որ նմանապես շատ կարևոր է Աբովյանի ծննդյան թվականը որոշելու համար: Խոսքը վաղ մանկության տարիներին Աբովյանի հետ պատահած մի դեպքի մասին է, որ հղի է եղել ազնատարեր հետևանքներով և այդ պատճառով էլ նրա մտքում շատ ամուր է դրոշմվել:

«Երբ ութ տարեկան երեխա էի, — պատմում է նա, — մի անգամ ծնծեղի իմ փոքր եղբայրներից մեկին. հայրս իմացավ այդ, և մինչ ես կանգնած էի պատեպում, նա բոլորովին հանգիստ չարժվեց իմ կողմը, ու ես նրա ձեռքին քարեր տեսա: Նա ինձ իր մոտ կանչեց, սակայն սիրազորով մայրս, որ այլևս չէր համաձակվում նրան խնդրել, ձեռքերով և գլխով նշաններ էր անում, որոնք միայն տարատի էին արտահայտում և հարկադրում ինձ վախչել: Ես այդ արի անմիջապես. այն տարատիելի քարերը միանգամից թռան իմ հետևից, և նա, չնայած իր տարեց հասակին, ինձ վազուց բռնած կլիներ, եթե կրկին ու կրկին չկռանար ու ինձ վրա շպրտելու համար քարեր չվերցներ: Ամբողջ պիշերն ես դրսում մնացի և նրա երեսը չտեսա այնքան ժամանակ, մինչև որ ուրիշները նրան չհանգստացրին, և ինքը զուրս չեկավ ինձ փնտրելու՝ խնայելով իմ անչափահասությունը և վախենալով, որ կարող եմ ավազակների ձեռքն ընկնել: Ես երբեք չեմ մոռանա

---

21 Տե՛ս Աբովյանի թոռոննների չցուցակագրված նյութերը՝ ձեռք բերված Վիկտորիա Աբովյանից:

մանկական այն գրկախառնումը, երբ նա իմ վզովն ընկած, արտասուքների մեջ և սրտի բաբախյունով այս խոսքերն էր միայն կրկնում. «Ջավա՛կս, քո պատճառով որդեսպան սլիտի լինեի. խոստացի՛ր, որ այսուհետև իմ զայրույթը երբեք չես չարժի»[22]*:*

Իր և ուրիշների հաղորդածներից և ժամանակի պաշտոնական վավերագրերից հայտնի է, որ Ապովենց Ավետիքը Խաչատուրից բացի ունեցել է երկու որդի, անուննները Վիրապ և Կարապետ[23]*: Ըստ 1829–1830 թթ. և հետագա տասնամյակներին կազմված պաշտոնական վիճակագրության՝ Վիրապը ծնվել է 1815–1817 թթ. միջև, իսկ Կարապետը՝ 1818–1821 թվականների*[24]*: Եթե Աբովյանը ծնված լիներ, ինչպես ցայժմ ընդունված է եղել, 1804 կամ 1805, անգամ՝ 1806 թվականներին, ապա ութ տարեկան կլիներ միայն 1812 կամ, ամենաշատը, 1814 թվականներին: Հնարավո՞ր բան է, որ վերևում պատմված դեպքը 1812, 1813, անգամ՝ 1814 թթ. տեղի ունեցած լիներ, երբ նրա փոքր եղբայրներից և ո՛չ մեկը դեռևս ծնված չէր: Իսկ երբ, իսկապես, 1809 թ. վերջին ամիսներն ենք ընդունում որպես Աբովյանի ծննդյան տարի, ապա ութ տարեկան նա կարող էր լինել 1817 թ. վերջերին, կամ 1818 թ. սկզբներին միայն, երբ իր փոքր եղբայրներից Վիրապն ավելի քան երկու տարեկան էր: Երկու տարեկան երեխային ծեծելը հնարավոր բան է, մի ութնամյա մանուկ ճիշտ որ կարող էր այդպիսի բան անել, բայց չծնված երեխային գանահարելն անհասկանալի է մեզ համար:*

Կարելի էր վերհիշել և ուրիշ կռվաններ, բայց մենք ուզում ենք բավարարվել մեկով միայն, քանի որ առանց այն էլ ճշմարտությունն արդեն գտնված է: Այս աշխատության առաջին գրվագում զանազան առիթներով ասացինք, որ պարսից բռնությունից խուսափելու համար Այրարատյան աշխարհում (Երևան, Քանաքեռ) սովորություն էր աղջիկներին ամուսնացնել 8–10 տարեկան հասակում: Որպեսզի աղջիկն ի վիճակի լիներ մայր դառնալու՝ այնուհետև հարկավոր էր առնվազն 6–7 տարի, երբեմն էլ ավելի. այսպես էր պատահում բոլորի

---

22 *Ե X, 28 [66]:*

23 *Տե՛ս Ա № 312 (Հմմտ. Դ II, 198–199): Ե X, 57 [95]: Ա № 279 (Հմմտ. Դ I, 272): Աբովյանի կենսագրության սկիզբը, գրված որդու՝ Վարդան Աբովյանի ձեռքով (սևագիր, Գրականության և արվեստի թանգարանում, չգույցակագրված նյութերի մեջ) և այլն:*

24 *Ձև., ֆ. 93, ց. 1, գ. 54, թ. 54բ–55ա: Նաև՝ գգ. 81, 113 և 127: Այս վավերագրերի վրա մեր ուշադրությունն է հրավիրել Հայաստանյան պիվանների նյութերին քաջատեղյակ բանասեր Գրիգոր Հարությունյանը, որին և հայտնում ենք մեր սրտագին շնորհակալությունը:*

հետ: Գիտենք, օրինակ, որ Աբովյանի հորեղբոր ավագ որդին էլ ծնվել է ո՛չ վաղ, քան 1804 կամ 1805 թվականը, մինչդեռ Աբովյանի հորեղբայրն ամուսնացել էր 1798 թվականին[25]: Խաչատուր Աբովյանն ու իր մայրը չէին կարող բացառություն կազմել բոլորի մեջև: Բանի որ, ինչպես իր տեղում ասել ենք, Աբովյանի ծնողներն ամուսնացել էին 1803 թ. սկզբներին, ուստի Խաչատուրը, եթե նա իսկապես ծնողների ավագ զավակն էր, ծնված պետք է լիներ դրանից 6–7 տարի հետո՝ ո՛չ առաջ, քան 1809 թ. վերջերը, իսկ այդ թվականն էլ, ինչպես տեսանք, մատնանշում են վերևում վկայակոչված նոր և անառարկելի վավերագրերը:

4

Այժմ, երբ պարզ դարձավ Աբովյանի ծննդյան թվականը, որ է՝ 1809, փորձենք որոշել նաև ծննդյան ամիսն ու մոտավոր օրը: Վերևում, ինչպես տեսանք, պրոֆ. Յ. Պարրոտը, 1829 թ. սեպտեմբերի վերջերին (27), Աբովյանին դիտե որպես մի երիտասարդի, որ «հազիվ 20 տարեկան» է[26], այսինքն՝ ծնվել է 1809 թ. սեպտեմբերից ո՛չ շատ ուշ, բայց ո՛չ սեպտեմբեր ամսին: Նույն Պարրոտը նույն 1829 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին, մինչ Տիֆլիսում աշխատում էր Վրաստանի գլխավոր կառավարիչ գեներալ Պասկևիչի և նրա սատրապդրյալների միջոցով գլուխ բերել պետական միջոցներով Աբովյանին ուսման ուղարկելու գործը, Տիֆլիսի գինվորական նահանգապետ Ս. Սարեկալովին, նմանապես և Ի. Յ. Պասկևիչին հանձնած իր պաշտոնական խնդրագրերի մեջ, որոնք, դժբախտաբար, չեն պահպանվել և որոնք, առանց այլևայլության, գրվել են 1829 թ. նոյեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 28-ն ընկած ժամանակամիջոցում, հենց այդ խնդրագրերի մեջ, որոնց վրա հետո հենվում էին նույն Պասկևիչը և Սարեկալովը, Խաչատուր Աբովյանին համարել է «քսան տարեկան»: Պարրոտն Աբովյանին քսան տարեկան (20-jährige) է համարում նաև 1830 թ. մարտի 5-ին, Դորպատի համալսարանի ռեկտոր Գ. Լվերսին հանձնած զեկուցագրի մեջ, որ վերաբերում էր տեղի համալսարանում Աբովյանին տրվելիք կրթության ծավալին և նպատակներին[27]: Այս բոլորից բխում է մի եզրակացություն. Աբով-

---

25 Տե՛ս ՀԱ, ֆ. 93, պպ. 54 և 176: Մատ., կԴ № 5/38, էջ 167 և № 2/11, էջ 326:

26 F. Parrot, Reise zum Ararat, I, էջ 163:

27 Ն. ս., էջ 255: Է I, ց. 2, պ. 4, թ. 4բ և ց. 3, պ. 1276, թ. 205բ: ՎԱ, ֆ. 2, ց. 1, պ. 2132, թ. 1 և 3 (համմտ. Դ II, 208):

յանի ծննդյան ամիսը պետք է լինի 1809 թ. հոկտեմբերը, ծայրահեղ դեպքում՝ նոյեմբերի առաջին կեսը: Արդ, ո՞րն է այս երկու ամիսներից ավելի հավանականը: Անտարակույս հոկտեմբերը, և ահա՛ թե ինչու:

Հայերի մոտ ընդունված կարգ էր, որ նորածիններին մկրտելիս, երբ նրանց անուններ էին տալիս, ապա դրանք լինում էին կամ երեխայի մերձավոր ազգականների՝ պապի (եթե տղա էր), տատի (եթե աղջիկ էր) անունները, կամ էլ՝ համապատասխան եկեղեցական տոնի անունը: Օրինակ, Զատկին մկրտված երեխային սովորաբար կոչում էին Հարություն, Մննդյան տոնի (իմա՛ հունվարի 6) օրը մկրտվածներին՝ Ավետիք, Համբարձման տոնի օրվանը՝ Համբարձում, Սուրբ Խաչի կամ Գյուտ Խաչի տոներին մկրտվածներին՝ Խաչատուր և այլն:

Մեր հետազոտությունները պարզել են, որ Աբովյանի ինչպես հայրական, այնպես էլ մայրական պապերից ո՛չ մեկը Խաչատուր անունը չի կրել: Աբովյանի մայրական պապի անունը եղել է Հովհաննես, որ որդին էր քանաքեռցի ոմն Թադևոսի: Աբովյանի հայրական պապը արդեն բազմիցս հիշված Պարոն Ապովն է եղել՝ Քանաքեռի նշանավոր բարեգործը: Սրանից մի եզրակացություն կարելի է հանել. քանաքեռցի Ապովենց Ավետիքը որդուն մկրտելիս նրան կոչել է ո՛չ թե մանկան պապերից կամ էլ մերձավոր ազգականներից որևէ մեկի անունով, այլ նույն օրերը պատահած եկեղեցական տոնի անունով, ըստ գյուղական սովորության.

Հայկայ սուրբ բառիւ զիմ անուն եդին.
Տուր խաչի կոչեալ՝ զիս դրոշմեցին...

գրել է Աբովյանը[28]*:*

Սովորաբար, տարվա աշնան ամիսներին պատահող համապատասխան եկեղեցական տոները թե հնում և թե այժմ՝ Սուրբ Խաչի և Գյուտ Խաչի տոներն են: Տոմարական հաշիվներով 1809 թվականին Սուրբ Խաչի տոնը պատահել է սեպտեմբերի 12-ին, իսկ Գյուտ Խաչի տոնը՝ հոկտամբերի 24-ին[29]*: Որովհետև Ծ. Պարրոտը Աբովյանին ճանաչում է սեպտեմբերի 27-ից հետո ծնված, հետևաբար Աբովյանը չէր կարող սեպտեմբերի 12-ին նախորդած չաբաթվա ընթացքում ծնված լինել: Պարրոտի ասածներին միանգամայն համընկնում է երկրորդ տոնը՝ Գյուտ Խաչը, որ, ինչպես մատնանշեցինք, 1809 թվականին պատահել է հոկտեմբերի 24-ին: Քանի որ հայկական գյուղերում, անցած-գնացած ժամանակներում, նոր ծնված երեխաներին ծննդյան օրից մեկ չաբաթ կամ, ծայրահեղ դեպքում, տասն օր*

---

28 *Ե Ա, 143, տողեր 5343–5344:*

29 *Տարեգիրն եղել է Է:*

Հետո, սովորաբար, մկրտում էին, ապա Աբովյանը պետք է որ ծնված լիներ Հոկտեմբերի մոտավորապես 15-ին և մկրտված՝ նույն ամսի 24-ին, Գյուտ Խաչի տոնին[30]*, որի պատճառով էլ նրա ավազանի անունը դրել են Խաչատուր:*

Խաչատուր Աբովյանի ծննդյան թվականն, այսպիսով, ինչպես ցույց տվին մեր կատարած այս երկար հետախուզումները, 1809-ն է, ամիսը՝ Հոկտեմբերը, օրը՝ մոտավորապես 15-ը:

5

Արդարացի լինելու համար հիշենք, որ 1809 թվականը, որպես Աբովյանի ծննդյան տարի, առաջադրել են և ուրիշները, սակայն առանց բավարար հիմնավորման: Ա—Դօ-ն, օրինակ, տակավին 1914 թվականին, հիմք ընդունելով այն տարիների՝ Երևանի դիմնազիայի դիվանում պահվող Աբովյանի ծառայության ցուցակներից առանձնապես մեկը (1847), հրապարակորեն ազդարարել է, թե «Աբովյանը ծնվել է 1809 թվին»[31]*: Ավելի քան երկու տասնամյակ հետո Աբովյանին 1809 թ. ծնված են ենթադրում նաև գրականագետներ Ռ. Զարյանը*[32] *և Հ. Մուրադյանը*[33]*: Ռ. Զարյանը 1940 թ. հոկտեմբերի 14-ին ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալում հատուկ զեկուցում է կարդացել Աբովյանի ծննդյան թվականի մասին և դարձյալ ամենահավանականը համարել 1809-ը*[34]*:*

---

30 *Հայոց կանոնագրքի համաձայն՝ նորածին երեխան, ամենաուշը մեկ շաբաթից, պետք է մկրտվեր. «Զերեխայ մի՛ ոք իշխեսցէ պահել առանց կնքոյ քան զՁ աւր կամ զէ...» (Բասղի Դիր կանոնական:—Տպ. «Կանոնագիրք Հայոց», հ. Բ, ե., 1971, էջ 164, կանոն ՄԼԴ): Իրական կյանքում էլ այս ավանդական կարգը պահպանվում էր աննշան չեղումներով: Օրինակ՝ Աշտարակ գյուղում երեխայի «ծնած օրից մինչև կնունքը... սովորաբար ութ օր էր քաշում»: Կնքելուց հետո էլ դեռ երկար օր երեխան մնում էր մեռոնի մեջ և նոր «մեռնահան արվում» տատմոր ձեռքով (տե՛ս Պ. Պողոշյան, Կնունք:—Տպ. Երկերի ժողովածու յոթ հատորով, հ. VI, էջ 451): Ահքի առաջ ունենալով սրբությամբ պահպանվող այս կարգը՝ Աբովյանը ծնված սլիտի լիներ 1809 թ. հոկտեմբերի կեսերին, բայց որովհետև կլոր թվերն այս դեպքում էլ անխուսափելի են, ճշմարտությանն առավել մոտիկ լինելու համար կանգ առել 1809 թ. հոկտեմբերի 15-ի վրա:*

31 *Տե՛ս Ա—Դօ, Խ. Աբովյանի կյանքի վերջին հինգ տարիները («Նոր հոսանք», 1914, № 5, էջ 759: Արտատպությունը տե՛ս «Գործ», 1917, № 5—6, էջ 33):*

32 Ռ. Զարյան, *Աբովյանի կյանքը*, ե., 1939, էջ 8:

33 Հ. Մուրադյան, *Խաչատուր Աբովյան*, ե., 1939, էջ 8:

34 *Տե՛ս «Գրական թերթ», 1940, Հոկտեմբերի 20, № 29:*

1809 թվականն ունի ուրիշ կողմնակիցներ էլ, որոնցից ամենահետևողականը սփյուռքահայ բանասեր Ա. Աբեղյանն է: Բուենոս-Այրեսում, 1954-ին լույս տեսած «Ստեփանոս Նազարյանց և Դորպատ» աշխատության մեջ, որպես անհերքելի ապացույց, նա մատնացույց է անում Ներսիսյան դպրոցում միաժամանակ ուսում առած Աբովյանի և Նազարյանցի տարիքների տարբերությունը[35], մի կռվան, որի վրա ավելի վաղ ուշադրություն էր հրավիրել աբովյանագետ Հրայր Մուրադյանը[36]: Այս կռվանը ճիշտ որ մտածելու տեղիք է տալիս: Ջնայած որ, ըստ մի վավերագրի՝ Նազարյանցը ծնվել է 1812 թ. դեկտեմբերի 25-ին, իսկ բուն ծննդյան վկայականի համաձայն՝ 1814 թ. մայիսի 15-ին, այնուհանդերձ, եթե ընդունենք, որ Աբովյանն 1804 կամ 1805 թթ. ծնունդ է, ապա Նազարյանցից մեծ կլիներ 8 կամ 10 տարով, մի բան, որ բնավ հավատալի չէ, որովհետև Ներսիսյան դպրոցում, տարիքով այդչափ տարբեր երեխաներ, այն էլ, համարյա, միևնույն դասարանում, բնավ չեն սովորել. ամենատարեց աշակերտները 1808 թ. կամ ավելի ուշ ծնված երեխաներ էին: Իսկ եթե ընդունենք, որ Աբովյանը 1809 թ. ծնունդ է, ապա նման ակնհայտ տարբերություն նրա և Նազարյանցի տարիքների միջև չէր ծագի. երկուսից-չորս կամ հինգ տարվա տարբերությունն այդ ուսումնարանի միևնույն դասարանի աշակերտների միջև սովորական բան էր:

Արտաշես Աբեղյանն Աբովյանի ծննդյան թվականին անդրադարձել է նաև հատուկ հոդվածով[37], բայց չրջանառության մեջ է դրել նույն փաստերը, որոնք նրանից չատ առաջ քննարկել էին Ռ. Զարյանը և Հ. Մուրադյանը: Եվ այնուամենայնիվ, մի նոր կռվան նա մտանչում է՝ «Վերք Հայաստանի» վեպի Հառաջաբանից փոխ առած «Երեսուն տարվա փակ բերանս Աղասին բաց արեց» արտահայտությունը, որը, սակայն, առաջին հայացքից բնավ չի օգնում Աբովյանի՝ 1809 թվականին ծնված լինելու վարկածն հաստատելուն: Անառարկելի է, որ Աբովյանը «Վերքն» սկսել է գրել 1841 թ. փետրվարին, հետևաբար՝ եթե այդ ժամանակ նա իսկապես երեսուն տարեկան էր, ապա ծնված պետք է լիներ, ամենաուշը, 1810 թ. վերջերին կամ 1811 թ. սկզբներին (1841 փետրվարից հանելով երեսուն տարի, կստանանք 1810 թ. վերջերը կամ 1811-ի սկզբները): Բայց հապչտապ եզրակացություն

---

35 Ա. Աբեղյան, *Ստեփանոս Նազարյանց և Դորպատ*, Պ. Այրես, 1954, էջ 19:

36 Հ. Մուրադյան, նշված աշխատ., էջ 8:

37 Տե՛ս «Բազմավեպ», 1948, № 11–12, էջ 252–254 («Խ. Աբովյանի ծննդյան տարին»: Վերջինս մի զուտիան է բանասերի «Աբովյան և Դորպատ» անտիպ աշխատության):

չանենք: Աբովյանն այստեղ, ինչպես այլ դեպքերում, խոսում է կլորացրած թվերով, այնպես որ «30 տարին» կարող է նշանակել և՛ 30, և՛ 31, և՛ 32, իրողություն, որ այլ առիթով, առավել որոշակի, ընդգծել է Աբովյանն ինքը, այն էլ նույն Հառաջաբանում, մինչ համեմատությունն է անցկացնում իր և Կրեսոս թագավորի համբ ու խուլ որդու միջև: Կրեսոսի որդին քսան տարեկանում միայն սկսեց խոսել, երբ ականատես դարձավ հոր դաժան օրհասին, մինչդեռ ինքը, որ ո՛չ թե քսան տարեկան էր «վերքը» դրելու օրերին, այլ երեսունից էլ ավելի («Ո՛չ քսան, երեսուն տարուց ավելի ա...»), ամեն օր ականատես դառնալով հայ ժողովրդի տնտեսական ու հոգևոր կյանքի ահավոր անկմանն ու թշվառությանը, չի կարողանում սեփական լեզվի կապերը քանդել և ազգի փրկության ուղիների մասին հանուրին հասկանալի լեզվով խոսել ամենքի հետ: Նշանակում է՝ 1841 թ. փետրվարից հանելով երեսուն և ավելի տարիներ, ճիշտ և ճիշտ կստանանք Աբովյանի ծննդյան տարին՝ 1809-ը:

Այս նույն թվականի կողմնակից է նաև իրանահայ բանասեր Արամ Երեմյանը, որի հիմքը ընդամենը մի վավերագիր է՝ Խ. Աբովյանի 1847 թ. ծառայության ցուցակը, ըստ որի Աբովյանն այդ տարի 38 տարեկան էր, հետևաբար և՝ 1809 թ. ծնված[38]: Երեմյանը օգտվել է Ա–Դօ-ից՝ մոռանալով սկզբնաղբյուրը նշել: Հետևաբար նրա հոդվածը հայտնի փաստերին նոր բան չի ավելացնում[39]:

Այսպիսին էր հարցի պատմությունը մինչև 1940 թվականը ու, մասամբ, հետո էլ:

Ընտնից հետո, սակայն, երբ հրապարակ եկավ ծանոթ պրոֆեսորը և առանց հիմնավոր փաստարկների, իր համոզմամբ միայն «հնրքևով» Զարյանին՝ քաղաքացիությունն տվեց 1805 թվականին, Հ. Մուրադյանը փոխանակ հակադրվելու և պաշտպանելու իրենց, լռելյայն հաշտություն կայացրեց, իսկ Ռ. Զարյանը կարողացավ միայն դրկել. «Երբ է ծնվել Խաչատուր Աբովյանը՝ ճիշտ հայտնի չէ: Ինքը, Աբովյանն էլ չի իմացել իր ծննդյան ստույգ թիվը: Հիշողությամբ նա նշել է մի քանի տարբեր թվական: Ամենահաճախ ճանաչված է

---

38 *Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1939, № 32, էջ 367–369:*

39 *Հնդինակավոր պատմաբան և բանասեր Աշոտ Հովհաննիսյանը նույնպես, տակավին 1935-ի օգոստոսին, իր խմբագրած ու մեկնաբանած՝ Մ. Նալբանդյանի «Անտիպ նրկերի» Անվանական բառարանում (Ե.–Մ., 1935, էջ 715) Աբովյանի ծննդյան ամենահավանական տարին համարել է 1809-ը. «Աբովյան Խաչատուր (1809 ?–1848)»,–հարցական նշանով ցանկանալով ասել, թե ինքն այդ թվականի կողմնակից է:*

1804–1805-ը: Մեզ հավանական է թվում 1809-ը»[40]*: Ավելին, Հ. Մուրադյանը ընդունեց պրոֆեսորի «հիմնավորածը» և իր հին գրքույկի նոր, վերամշակված հրատարակությունների մեջ Աբովյանին հռչակեց 1805 թ. ծնված*[41]*:*

Այդ թվականի վրա է կանգ առել նաև Հայկական սկադեմիայի գրականության ինստիտուտը՝ վերջերս հրատարակված «Հայ նոր գրականության պատմության» մեջ, որի համապատասխան դլուխը գրել է նույն Հ. Մուրադյանը[42]*:*

Իսկ որո՞նք էին պրոֆեսորի (Գ. Աբով) հիմքերը, երբ նա Աբովյանին դարձնում էր 1805 թվականի ծնված: Դրանք չատ խախուտ էին, և մարդիկ, զարմանալիորեն, չնկատեցին: Միակը, որ նա խաղացրել է, Աբովյանի ընդհանուր ճևով էջմիածին գալու և այդտեղ ուսանելու տարիների վերաբերյալ ասած խոսքերն են, այսպես կոչված՝ հնգամյակները, որոնցից իրականում և ո՛չ մեկը 1805 թվականին չի հանգում[43]*:*

Նախ՝ գրչի մի չարժումով կեղծված են հայտարարվել պարզ, առանց ջնջումների գրված բոլոր այն ծառայության ցուցակները (Երևանի ու Տփղիսի պետարխիվներում պահվող), որոնց տվյալներով Աբովյանը դուրս է գալիս 1809 թվականի ծնված: Պրոֆեսորի խոսքերով՝ դրանք «չի կարելի համարել հավաստի աղբյուր», որովհետև «այս բոլոր փաստաթղթերը, որ իրար նկատմամբ հակասական են և, ըստ երևույթին, հետագայում են ուղղված ու հարմարեցված 1809 թվականին, ուստի հիմք ծառայել չեն կարող Աբովյանի ծննդյան թիվը 1809 համարելու համար», իսկ ապա՝ մի սևագիր ցուցակ խառնելով մաքրագիր 3 ցուցակի ու վերջինների մեջ էլ, չգիտես որտեղից, ջնջումներ նկատելով՝ այլեայլնում է. «Մենք գտնում ենք, որ այդ ուղղումները կատարված են հետագայում...»[44]*:*

Այնուհետև՝ պրոֆեսորը հռետորական հարց է տալիս. «Ինչպե՞ս կարող էր 9-ը թվին ծնված Աբովյանը 24 թվին—այսինքն 15 տարեկան

---

40 Ռ. Զարյան, *Աբովյան, Ե., 1954, էջ 7:*

41 Հ. Մուրադյան, *Խաչատուր Աբովյան, Ե., 1955, էջ 4:* Նույնի *Խաչատուր Աբովյան, Ե., 1963, էջ 4:*

42 *Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հ. I, Ե., 1962, էջ 363:*

43 *Տե՛ս վերևում, 38 և 40-րդ վկայությունները:*

44 *«Գրական-բանասիրական հետազոտություններ», դ. III, էջ 213: Համոզվելու համար, որ Աբովյանի ծառայության ցուցակների բնագրերում, նրա տարիքը մատնանշող վանդակներում, իսկապես ո՛չ մի ջնջում չկա, կատարած ընթերցողը կարող է տեսնել՝ Հ I, գգ. 779, թ. 7–8 (1844), 782, թ. 13–14 (1845), 786, թ. 44–45 (1846) և 789, թ. 55–56 (1847) և այլն:*

հաստատում Սանահնում ուսուցիչ լինել»[45]: Նախ՝ այստեղ պարմանալու ոչինչ չկա, և ապա՝ բուն վավերագիրը նման բան չի ասում. Աբովյանը Սանահնում ուսուցչություն է սրել 1827 թ. հոկտեմբերի 10-ից հետո մեկ տարի, իրողություն, որ բոլորովին չի՛ խանգարում նրա 1809 թվականին ծնված լինելուն:

Այնուհետև՝ կասկածելի է համարվել նաև Նիկոլայ I-ին ուղղված դիմումի մեջ (գրված՝ 1830 թ. փետրվար-մարտ ամիսներից ո՛չ առաջ) առկա այն հավաստումը, ըստ որի Աբովյանն իրեն այն ժամանակ 20 տարեկան է համարել: Պրոֆեսորը նկատել է, որ «Նամակի այդ սևագրության մեջ՝ հենց «քսանամեայ» բառից հետո, ջնջում է կատարված» և ենթադրել, թե Աբովյանը միտումնավոր կերպով իր «տարիքը կեղծել»[46]: Իսկ ի՞նչ բառ է ջնջված իրականում, պրոֆեսորը նեղություն չի տվել իրեն ասուպելու, այնինչ ջնջվածը միանգամայն այլ բան է, ո՛չ թե բառ, այլ արտահայտություն՝ «տակաւին չև է իմ ստացեալ...»,[47] որ ամենևին կապ չունի Աբովյանի տարիքի հետ:

Այնուհետև՝ պրոֆեսորը մի տեսակ հայտնություն է համարել «մեր (այսինքն՝ իր) կողմից Մատենադարանում հայտնաբերած գրքաց ցուցակը», ուր, որպես թե «Խաչատուր գպիր Բանաքեուցին», այսինքն՝ Աբովյանը, 1819 թվականին հիշվում է որպես գպիր և «եպիսկոպոսական օծման ժամանակ վկա է հագնում»: Կառչելով դրանից՝ նա լրջորեն գրում է. «Ինչպես հայտնի է, տաս տարեկան հաստատում գպիր չէին ձեռնադրում և վկա չէին հագնում, հետևապես, եթե Աբովյանը ծնված լիներ 1809 թվին և հենց նոր մեկած լիներ էջմիածին, չէր կարող ո՛չ գպրի պաշտոն ունենալ, ո՛չ էլ վկա հագնել»[48]: Բանասիրական երկու աննշանակի վրիպում կա այս հայտարարության մեջ: Նախ՝ ցուցակ չի՛ տրված աղբյուրը, որպեսզի իմանանք՝ ո՞րտեղից է քաղված տվյալը (պրոֆեսորն, առհասարակ, չի՛ սիրում վկայակոչումների տեղերը նշանակել, որ ասուպես՝ ճի՞շտ է, թե՞ սխալ): Հետո՝ վկայակոչված վավերագրի հումքությունը չի՛ բացահայտված, մինչդեռ այն բոլորովին ուրիշ բան է: Առանց մեծ դժվարության պարզեցինք, որ վավերագիրը պահվում է Կաթողիկոսական դիվանում[49]: Խորագրի մեջ պարզ տասած է, որ այնտեղ գրանցվել են «գպրաց պաշտօնէիցն և այլ արգիւնքն», ուրեմն՝ այն գպրաց ցուցակ չէ: Վավերագրի այն մասը, ուր հիշվում է Խաչատուր Բանաքեուցին (վերջին էջը), բայց ո՛չ «Խաչատուր գպիր Բանա-

---

45 Ն. տ., էջ 209:

46 «Գրական-բանասիրական հետազոտություններ», էջ 214:

47 Տե՛ս Ա № 512, էջ 2:

48 «Գրական-բանասիրական հետազոտություններ», էջ 210 և 216:

49 Մատ., ԿԴ № 35/336:

քեռցին», ինչպես ասում է պրոֆեսորը, դրված է «վաթսուն և ինն» (այսինքն՝ 1269+551=1820) թվականի սեպտեմբեր ամսին և ո՛չ 1819, հետևաբար այդ ժամանակ Աբովյանը ո՛չ թե նոր էր եկել Էջմիածին, այլ երկրորդ տարին է, որ այնտեղ էր և ո՛չ թե 10 տարեկան էր, այլ՝ 11: Անհիմն են նաև դատողությունները դպիր ձեռնադրելու կարգի մասին: Հանրահայտ է, որ դպիրները ձեռնադրված կամ օծված հոգևորականներ չէին, նրանք հոգևոր դպրոցի աշակերտներն էին և դպիր մականունը, որ համազոր է տիրացու բառին, նրանց տալիս էին իրենց մեծավոր եպիսկոպոսները: Դպիր կամ տիրացու հորջորջման մեջ մտնում էին հոգևոր կոչման նախնական չորս աստիճանները՝ դռնապան, ընթերցող, երդմնեցուցիչ և ջահընկալ[50]: Պրոֆեսորը մոռացել է, որ հայոց պատմությանը ծանոթ է ո՛չ միայն տասը տարեկան, այլև ինը տարեկան դպիր, հանճին հռչակավոր Մխիթար Սեբաստացու[51], ծանոթ է անգամ 15 տարեկան եպիսկոպոս, հանճին Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Աղվանից և Վրաց Գրիգորիս կաթողիկոսի[52], էլ ուր մնա անհավանական լիներ անդամ տասնմեկ տարեկան հասակում Աբովյանի դպրություն անելը: Բացի այդ, պրոֆեսորը պետք է տեղյակ լիներ, որ մինչև 1828 թ. հոկտեմբերը Աբովյանը ո՛չ մի հոգևոր աստիճան չի ունեցել և դպրի կամ կիսասարկավագության հիշված չորս աստիճանները (դռնապան, ընթերցող և այլն) ստացել է Եփրեմ արքեպիսկոպոսից, երբ ծառայության է մտնում վերջինիս մոտ[53]: Ի վերջո՝ օծված եպիսկոպոսն անհայտ անձնավորություն չի եղել. նա Գանձասարի նշանավոր Բաղդասար մետրապոլիտն էր, որ Էջմիածին էր ժամանել 1820 թ. սեպտեմբերի 18-ին և ձեռնադրվել նույն ամսի 26-ին[54]:

Այսպիսով՝ 1805 թվականի մոլի պաշտպանի բոլոր կռվաններն էլ անզոր են որևէ բան հիմնավորելու: Մարդ զարմանում է, թե ինչո՞ւ, փոխանակ Աբովյանի կենսագրության անխախտ ու անառարկելի նշանաճողերի վրա հենվելու, այդչափ հավատ է ընծայել խախուտ փաստարկների՝ չնկատելով, որ եթե Աբովյանը մեկ-երկու դեպքում կլոր թվերով ասել է, թե տասը տարեկան հասակում բերվել է վանք, հինգ տարի մնացել այդտեղ, հետո ուսանել Տփղիսում, ապա այլ

---

50 Ե VII, *321:*

51 *Տե՛ս «Մխիթար» (տոնագիրք), Վիեննա, 1949, էջ 325 («1684. Յիներորդ ամի հասակի իւրոյ ընկալաւ զչորս փոքր աստիճանս ի յԱնանիա եպիսկոպոսէն Սեբաստիոյ»):*

52 Փաւստոսի Բուզանդացոյ *Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 17:*

53 *Ա № 323 և Ե X, 212:*

54 *Մատ., ԿԴ № 36/339, էջ 22, № 30/168, էջ 17 և № 243/160:* Հ. Թոփճյան, *Յուցակ ժողովածուաց Դադյան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 23, թիվ 54:*

առիթներով էլ գարձյալ նուէյն Աբովյանը գրել է, որ էջմիածին է եկել ինը տարեկան հասակում, չորս տարի մնացել է այստեղ, հետո երկու տարի ուսանել է Տիլիսի գպրոցում և այլն: Ինչո՞ւ Աբովյանի ծննդյան թվականը որոշելիս կառչում է առաջին հիշատակից և անտեսում վերջին որոշակի տարիները, երբ առաջին ավյալներով նուէյն այդ տարիներին ո՛չ էջմիածնում է եղել, ո՛չ էլ մեկնել է Տիլիս... Թերևս դա էլ պրոֆեսորի դաղտնիքն էր, որ չբացած իր հետ տարավ:

Մեր ընդարձակ լուսաբանութեյունից նորից ու նորից երևաց, որ Աբովյանն իսկապես ծնվել է 1809 թ. վերջերին, էջմիածնի վանք է տարվել միայն 1819 թ. սկզբներին, 1822 թ. վերջերին կամ, ամենաուշը, 1823 թ. մարտին փոխադրվել է Հաղբատի վանք, իսկ երկու ամիս հետո, մայիսին, տարվել է Տիլիս և հանձնվել Պողոս վարդապետին, ապա՝ 1824 թ. դեկտեմբերի 1-ին մտել նորաբաց Ներսիսյան գպրոցը, որի երրորդ դասարանն ավարտել է 1826 թ. փետրվարի 24-ին: Այս է ճշմարտութեյունը, այս էլ հավաստում են վստահելի վավերագրերը:

ՎԵՐՍՏԻՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Մեր գրական-գիտական առօրյայում, իբրև բանասիրական առեղծվածները նորովի քննելու և լուծելու «ուշագրավ փորձեր», շատ հաճախ նյութ են դարձվում և անտեղյակ ընթերցողին կամ հանրությանը մատուցվում «դյուտեր» ու «կարծիքներ», որոնք միայն տարակուսանքի տեղիք են տալիս: Շատ դժվար է բացատրել, թե դրանց հեղինակների ու հովանավոր-հրատարակիչների բուն նպատակն ի՞նչ է. ճշմարտության հայտնաբերո՞ւմ, թե՞ սեփական անձի թմբկահարում, գիտական ուշագրավ հայտնագործությունների ժողովրդականացո՞ւմ, թե՞ էժան սենսացիա, հետևաբար և՝ անտեսումն ու արժեքազրկումն այն արդյունքների, որոնք ձեռք են բերվել ուսումնասիրողների մի քանի սերնդի համառ ու տքնաջան որոնումների շնորհիվ: Նման «դյուտերն» ու «վարկածներն», ինչ խոսք, ոչինչ նոր չպարունակելով հանդերձ՝ աչքի են ընկնում նաև հետազոտած նյութի ո՛չ բավարար իմացությամբ, միամիտ դուշակություններով, չմարսված փաստարկներով, հակատրամաբանական եզրակացություններով: Մասնավոր հետամտումներին ու աղքատիմացությանը զոհ են դառնում գիտության չահերն ու գիտական սկզբունքները՝ զրոյի արժեք չտալով վերջիններին:

*«Պատմա-բանասիրական Հանդեսի» 1979 թ. № 2-ում (էջ 231 — 240) տպագրվել է բանավիճային հոդված՝ «Խաչատուր Աբովյանի ծննդյան թվականը» խորագրով, որը հենց այդպիսի խորհրդածություններ տեղիք է տալիս: Հոդվածագիրը համաձայն չլինելով վաղուց առաջադրված և արդեն հավանության արժանացած թվականի հետ (1809 թ. հոկտեմբեր), առաջարկում է նորը (1810), այն էլ լոկ ընդհանուր ձևով, առանց դեթ մոտավոր ամսի վրա կանգ առնելու, ինչպես նաև՝ արհամարհելով առեղծվածը լուծելու համար վճռական նշանակություն ունեցող տվյալները և վկայակոչելով միմիայն իրեն ձեռնտուները, վերջապես՝ անտեսելով անձամբ Աբովյանի խոստովանությունները և նրա ձեռքով գրված **այն բոլոր վկայություններն ու սկզբնաղբյուրները**, որոնց հիման վրա արված հետազոտ հաշվիներով՝ հայ գրականության մեծ հիմնադրի ծննդյան ամենահավանական թվականը ստացվում է 1809-ը:*

Նոր «ուղղումներով» ո՛չ միայն չի կարգավորվում խնդիրը, այլև առնղծվում է ավելի մեծ չափի:

Գործի չահերը պահանջում էին, որ Աբովյանի տարիքի մասին եղած վկայությունները, որոնց հեղինակը կամ Աբովյանն ինքն է, կամ էլ դրանք արձանագրված են ուշատոնական վավերագրերում, նախ և առաջ, ըստ ամենայնի, վերլուծման ենթարկվեին, բացատրվեին հակասության պատճառները, ցույց տրվեին, թե ինչո՞ւ չի կարելի եղած մյուս բազմաթիվ տվյալները, որոնք վկայում են դրողի՝ 1800 — 1801, 1804 — 1805, 1806, 1807, 1809, 1811 և այլ թվականներին ծնված լինելու օգտին, ընդունել, ու հետո միայն նախապատվությունը տրվեր մնացածներից մեկին կամ մյուսին, այսինքն՝ առաջադրվեր այն վարկածը, որ հոդվածագրի նախընտրածն է, նրա հերյուրածը, բայց ո՛չ ճշմարտությունը: Հոդվածագիրը, սակայն, այդպիսի աշխատանք չի՛ կատարել, նման հարց նրա դիմում չի՛ ծագել. նա մի կանխակալ կարծիք ունի, և ըստ այդմ էլ առկա բազմաթիվ ու բազմազան տվյալներից մի քանիսից կառչելով՝ հարմարեցնում է իր ցանկացած թվականին:

Կուզենինք հարց տալ հոդվածագրին. իսկ ինչո՞ւ Աբովյանի ծննդյան թվականն անպայման 1810-ը պետք է լինի և այն էլ՝ առանց ամիս-ամսաթվի, երբ կլոր տարին բաղկացած է ամբողջ տասներկու ամիսներից, — և ո՛չ, ասենք, 1805 կամ 1808 թվականները, չէ՞ որ վերջիններն էլ պակաս հավանական չեն, ու դեռ ավելին՝ նույն ձևով կարելի էր հիմնավորել մեկը կամ մյուսը՝ դարձյալ վկայակոչելով անձամբ Աբովյանին և առանձին կոզմնակի ցուցմունք: Չէ՞ որ Աբովյանն իր կյանքում միայն մեկ անգամ է սեփական ձեռքով իր ծննդյան թվականը նշել, այն էլ՝ 1804 — 1805 («1804 — 5-ին ծնվել եմ Բանաքևռ գյուղում»)[1], չէ՞ որ 1834 — 35-ի ձմեռը, Պետերբուրգում արտասանած ճառի մեջ, Աբովյանը հայտարարում էր, որ Դորպատ գալու ժամանակ ինքը քսանհինգ տարեկան էր, հետևաբար՝ 1805 թվականի ծնված: Վերջապես՝ նրա 1841 թվականի ծառայության ցուցակում ասված է, որ այդ ժամանակ 35 տարեկան է, հետևաբար և՝ 1805 կամ 1806 թվականների ծնունդ:

Մեր «Խաչատուր Աբովյան» աշխատության մեջ, տարիներ առաջ, հանդամանորեն բացատրել ենք, թե ինչո՞ւ Աբովյանը չէր կարող 1801 — 7 թվականներից որևէ մեկում ծնված լինել. հիշեցնե՛նք հօդուտ դրա խոսող շատ սովորական մի դիպված. Աբովյանը մի առիթով հիշում է, որ 8 տարեկան հասակում ծեծել է իր եղբայրներից մեկին, բայց նրա երկու եղբայրներից ավագը ծնվել է 1815 թվականից հետո:

---

[1] Ե X, *192–193:*

Նշանակում է՝ 1815 – 8=1807, հետևաբար և, ամենակոպիտ հաշիվներով՝ Աբովյանը ծնված պետք է լիներ 1807-ից ո՛չ առաջ:

Նոր թվական առաջադրողը, կրկնում ենք, պարտավոր էր նախապես, ամենայն լրջամտքով ու անկանխակալությամբ, քննել ու հերքել հակառակն ապացուցող բոլոր տվյալները ու նոր միայն անցներ իր վարկածի հիմնավորմանը. անթույլատրելի բան է ընտրությամբ մի քանի վկայություն վերցնելը՝ առանց բացատրելու, թե ինչո՞ւ, երբ Աբովյանը 1810 թվականին ծնված լինելով հանդերձ՝ 1841 թվականից սկսած մինչև իր մահը, անճամբ, ամեն անգամ, երբ հարկ էր լինում տարիքի մասին վկայություններ տալու, միշտ էլ այնպիսի տվյալներ էր հաղորդում, որոնք հետադարձ հաշիվներ անելիս՝ դերազանցապես հանդում էին 1809, իսկ մեկ-երկու դեպքում էլ ավելի վաղ տարիների՝ 1807 – 8 թթ., բայց ո՛չ երբեք 1810-ին:

Գիտնականների միաձնական ջանքերով քաղաքացիություն ստացած 1809 թվականը մերժելուց առաջ պետք էր այս հակասությունները նույնպես բացատրել և ո՛չ թե դրանց հանդեպ աչք փակելով այնպես ձևացնել, իբր հակասություններ բնավ գոյություն չունեն, ամեն ինչ պարզ է հայելու պես, ուսումնասիրողների «անճարակությունից» է, որ նման չփոթ է առեղծվել, և ինքնասիրահարված «ամենագիտան» եկել է մարդկանց ճշմարտությունն ասելու:

Ավելի քան տասը տարի առաջ լույս տեսած մեր «Խաչատուր Աբովյան» աշխատության մեջ մեկ առ մեկ վկայակոչելով Աբովյանի ծննդյան թվականի որոշման հարցում նշանակություն ունեցող բոլոր ուղղակի և անուղղակի տվյալները՝ չորս տասնյակից ավելի, մենք կարևորություն էինք տվել (ու հիմա էլ տալիս ենք) նախ և առաջ Ծ. Պարրոտի վկայությանը, որն 1829 թ. սեպտեմբերի 27-ին, Արարատի գագաթի բարձրանալու ժամանակ իրեն ուղեկցած անձանց բնութագրելիս՝ Խաչատուր Աբովյանի մասին գրել է. «Դպիրը, թեև հազիվ քսան տարեկան էր և վանական հանդիսա կյանքին սովոր, բայց ոչ մի վայրկյան չէր խուսափում այն ճիգերից, որ պահանջում էր գործը, և ամբողջ ժամանակ ցուցաբերում էր խիզախություն, տոկունություն, ինչպես և բարձր ոգևորություն»[2]:

Հարցն այն է, որ Պարրոտն առանց հիմնավոր պատճառի այսպիսի տարիք չէր կարող վերագրել Աբովյանին: Նա պետք է նախապես հարցրած լիներ Աբովյանին, իսկ Աբովյանն էլ պատասխանած, որ 1829 թ. սեպտեմբերին ինքը հազիվ քսան տարեկան է: Այս նշանակում է,

---

[2] **F. Parrot**, Reise zum Ararat, T. I, Berlin, 1834, S. 163-164, *հայ թարգմ. ԺԱՄ, էջ 15:*

որ Աբովյանի քսան տարին լրացել էր նոր միայն կամ պիտի չատ շուտով լրանար: Մեջբերած խոսքերից այլ բովանդակություն անկա-րելի է մակաբերել: Դուրս հարկ չէիներ բացատրել **«Թեև հազիվ»** բառերի իմաստը, այն, թե հայն ի՞նչ նշանակություն է տալիս դրանց (գերմաններեն բնագրում, համապատասխան տեղում գտնում ենք՝ obgleich, erst): Բայց բանավեճ հարուցողը, ինչպես երևում է, չի ըմբռնել այդ, այլապես չէր պնդի, թե Պարրոտի մասնավորապես այդ վկայությունը խոսում է Աբովյանի՝ 1810 թվականի ծնունդ լինելու օգտին, մինչդեռ դպրոցական թվաբանությամբ 1829 թվականի սեպտեմբերից հանելով 20 տարի, կստանանք ո՛չ ավել, ո՛չ պակաս՝ 1809 թվականի աշուն: Հայերենում **«Թեև հազիվ»** արտահայտությունը նշանակում է նաև՝ **«չնայած ընդամենը»** կամ **«մոտավորապես»**, **«մի կերպ»**, բայց ներկա դեպքում բոլորից էլ հետևում է այն, որ Աբովյանի քսան տարին լրացել է նոր միայն ու կամ մի քանի օրով դեռ պակաս է, որ թվականի հարցում էական նշանակություն չունի (կարող են փոխվել օրը կամ ամիսը): Զարմանալի ոչինչ չկա: Երբ մարդ ասում է՝ «հազիվ տեսա նրան», «հազիվ տեղ հասա», «հազիվ երեք օր է, որ եկել եմ» ու նման արտահայտություններ, այդ չի նշանակում, թե չի՛ տեսել, տեղ չի՛ հասել, երեք օր չկա ժամանելը և այլն, այլ որ՝ այդ ամենը դժուար է բերվել դժվարությամբ: Տարիքի դեպքում ևս «Թեև հազիվ քսան»-ը նշանակում է՝ ընդհանրապես քսան տարեկան և ո՛չ ավելի, բայց եթե ճշգրիտ լինի ամեն բան, ապա՝ քսան տարեկանից մի քանի օրով պակաս, բայց ո՛չ, ասենք, տասնինը տարեկան, որովհետև սեպտեմբեր ամսից մինչև տարվա վերջը դեռ մնում էր երեք և ավելի ամիս ժամանակամիջոց: Գերմաներեն բնագրում նույնպես **հազիվ** բառի փոխարեն դրված է erst, որ թվական անուննների հետ գործածելիս՝ ունի ռուսերեն только, лишь իմաստները, այսինքն, դարձյալ՝ **հազիվ, միայն**: Այս բոլորից ելնելով էլ մենք ավելի բանական ու հավանական ենք գտել Աբովյանի ծնունդը դնել 1809 թվականի հոկտեմբերի կեսերին, որից այն կողմ այլևս անկարելի է տեղաշարժ կատարել: Պատճառները հիշատակված են մեր աշխատության մեջ (եկեղեցական համապատասխան տոնը), որ ավելորդ ենք համարում վերստին կրկնել: Այստեղից մի եզրակացություն. Ֆ. Պարրոտի վկայությունը չարունակում է մնալ որպես զորավոր կռվան և հաստատում, վստահելի է դարձնում Աբովյանի 1809 թվականին ծնված լինելը:

Մեր ընդդիմախոսը մտացածին բովանդակություն է վերագրում նաև Աբովյանի ծննդյան թվականը որոշելու գործում կարևոր նշանակություն ունեցող երկրորդ վավերագրին՝ Դորպատի գավառային

դատարանում Արարատի բարձրագույն դատարանը իսկապես բարձրացած լինելու առթիվ Աբովյանի տված ցուցմունքներին, ուր չոչափվել է Աբովյանի տարիքի հարցը նույնպես: Հարցաքննությունը տեղի է ունեցել 1831 թ. օգոստոսի 18-ին, և արձանագրության մեջ, նրանք անգամ, տարբեր առիթներով, հիշատակված է Աբովյանի տարիքը: Նախ՝ հարցաքննության օրը Աբովյանն իրեն համարել է քսաներկու տարեկան, այսինքն՝ 1831 — 22=1809 թ.: Այնուհետև հայտնել, որ 1830 թ. կեսերին, Դորպատ մեկնելու օրերին, ծնողներից իմացել է, որ ինքը 21 տարեկան է, այսինքն՝ 1830 — 21=1809 թ. կեսերի ծնունդ: Վերջապես՝ Աբովյանն ավելի ճշգրիտ լինելու համար բացատրել է, որ դուցե թե իր 22 տարին դեռ չի լրացել, և ինքը տակավին 22-ի մեջ է: Այս նշանակում է, որ եթե մեկի 22 տարին տարվա առաջին ութ ամիսներին դեռ չէր լրացել, նա այդ նույն տարվա հաջորդ չորս ամիսներից որևէ մեկի ծնունդ պիտի լիներ, իսկ դա էլ իր հերթին նշանակում է, որ Աբովյանն իր ծննդյան թվականը հաստատապես 1809 թվականն է համարել, բայց ամսվա հարցում կասկածներ է ունեցել: Դատարանի օրագրության գլխամասերն բնագրում քննության առարկա վկայությունն արձանագրված է այսպես՝ «aber noch erst im zweiundzwanzigsten Jahre stehe»: Իմ գրքում հիշյալ արտահայտությունը թարգմանված է անհաջող ու ո՛չ այնքան ճիշտ՝ «Նոր եմ միայն մանում քսաներկուսի մեջ», մինչդեռ ժամանակի դատարանական լեզվով դա նշանակում էր՝ «դեռ քսաներկուսի մեջ է»: Ուշագրավ է, որ հիշյալ արտահայտությունը հենց այդպես է հասկացել Աբովյանի ցուցմունքները ռուսերեն թարգմանող անձնավորությունը՝ դատարանի քարտուղարը, և փոխարենը հատ-հատ գրել. «А может быть еще считается на 22 года» (բայց կարող է պատահել, որ դեռ 22-ի մեջ է): Այսպես ուրեմն՝ Աբովյանը հաստատ գիտեր իր ծննդյան տարին, բայց այն ժամանակ դժվարանում էր մատնանշել ճիշտ ամիսը, որ կարող էր լինել դուցե և օգոստոսից հետո եկող ամիսներից որևէ մեկը, բայց ո՛չ՝ հաջորդ տարվա:

Ամեն կարգի թյուրիմացությունները կանխելու համար, ինչպես ասացինք, մեր գրքում կանգ ենք առել 1809 թ. հոկտեմբերի վրա, որովհետև այդ է բխում ինչպես ուրիշ, այնպես էլ վերոհիշյալ շատ կարևոր վկայություններից:

Հոդվածագիրը լուրջ կարևորություն է տալիս մի երկրորդական տվյալի, որին լրջամիտ բանասերը մի առանձին նշանակություն չպիտի տար: Խոսքը բանաստեղծությունների մեկի խորագրում Աբովյանի տարիքի մասին եղած ցուցումին է վերաբերում, որից կառչելով՝ վեճ հարուցող ընկերը պնդում է, թե Աբովյանը

*Հատուածապես 1810 թվականի ծնունդ է: Սկզբից ասենք, որ մեր ընդդիմախոսը կա՛մ դիտավորյալ նենգափոխում է վիպասերը, կա՛մ թյուրիմացության զոհ է: Իսկապես որ «Ինդամիտ զգայմունք...» բանաստեղծության հեղինակային ինքնագրի մեջ, վերնագրից հետո, կա գրության ժամանակի մասին ցուցում. «Ասացեալ յԵրևան ի 1826-ին, առ Կոման Երևանի», բայց միայն այսքանը, իսկ նույն բանաստեղծության՝ անծանոթ ձեռքով կատարված երկու արտագրությունների մեջ, որոնք 1840 կամ 41 թթ. իրողություններ են, այդ խոսքերից բացի, նաև մի այսպիսի արտահայտություն. «Ի վեշտասան հասակի իւրում»: Հոդվածագիրը թյուրիմացության մեջ է: Նա անտեսել է չատ կարևոր հանգամանք. չի՛ նկատել կամ չի՛ ցանկացել խոստովանել, որ երբ Աբովյանն ստուգել է այդ արտագրություններից մեկը (նրա Թողոննների այժմյան № 81 նյութը), սեփական ձեռքով չնչել է **«ի վեշտասան հասակի իւրում»** արտահայտությունը: Ավելացնենք նաև, որ պահպանվել են նույն ոտանավորի՝ իսկապես Աբովյանի ձեռքով արտագրված օրինակները, այն էլ ո՛չ թե մեկ, այլ երեք ինքնագիր՝ ստեղծված և՛ 1840 թ. առաջ, և՛ հետո, որոնցից և ոչ մեկի մեջ **«ի վեշտասան հասակի իւրում»** արտահայտությունը չկա: Մի պահ ընդունենք, թե ամեն ինչ հոդվածագրի նենգագրած ձևով է: Այդ դեպքում ինչի՞ մասին է պատմում ոտանավորը, և կարելի՞ է այն դարձնել ժամանակագրական հարցեր կամ առնչված լուծելու հիմք: Այս է, որ չի պատկերացնում հոդվածագիրը. նա պետք է դեթ իմանար, որ տվյալ բանաստեղծության մեջ վերարտադրված են Հայաստանի ազատագրումից (1827 թ. հոկտեմբեր) ավելի քան կես տարի հետո. 1828 թ. ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին, երկարատև թափառումներից հայրենիք վերադարձած Աբովյանի տպավորություններն արդեն Ռուսաստանի հովանու տակ անցած Այրարատյան աշխարհից ու Երևանից: Բանաստեղծության մեջ ակնարկ կա նաև Արարատի դագաթին կանգնեցված խաչի մասին, որի վրա արձանագրություն է եղել այն մասին, որ Երևանի կոմսի, այսինքն՝ Ի. Ֆ. Պասկևիչի հրամանատարությամբ այդ երկրամասն արդեն անցել է քրիստոնյա տերության հովանավորության տակ: Իսկ հիշյալ խաչն իրականում Ֆ. Պարրոտի և Ի. Աբովյանի ջանքերով՝ Արարատի բարձունքներում կանգնեցվել է 1829 թ. սեպտեմբերի 19-ին: Այսպիսով՝ բանաստեղծության մեջ հիշված դեպքերը տեղի են ունեցել 1826 թվականից առնվազն երկու-երեք տարի հետո: Եթե բանաստեղծությունը մինչև անգամ 1828 թ. գրված լիներ, իսկ խաչի մասին պատմող տողերը՝ հետագա հավելումներ, Աբովյանն այդ դեպքում ամենավաղը 1812*

թվականի ծնունդ պիտի լիներ, քանի որ ուսանավորն հորինել է 16 տարեկան հասակում:

Ուրեմն՝ սխալ են և՛ բանաստեղծության գրության թվականը, և՛ այն իբրև թե Աբովյանի 16 տարեկան հասակում հորինած լինելու լեգենդը: Բարեբախտաբար, Աբովյանն առաջինն ինքն է նկատել, որ «ի վեչտասան հասակի իւրում» խոսքերը չեն համապատասխանում իրականությանը, և սեփական ձեռքով ջնջելով դրանք՝ վերջ է դրել ամեն կարգի սխալի ու թյուրիմացության: Ինչպե՞ս կարելի է ուրիշների թույլ տված և հետագայում Աբովյանի նկատած և ուղղած ակնհայտ սխալից լուրջ հետևություններ անել:

Բանավեճ վարելիս, ընդհանրապես, պետք է փոքր-ինչ զգույշ լինել և չեղած բաներ չհորինել: «Խնդամիտ զգացմունք...» բանաստեղծության՝ **«Աբովյանի գեղեցիկ ձեռագրով»** արտագրված այդ ի՞նչ տարբերակ կա նրա արխիվի № 55 ծրարի մեջ, ուր, իբր թե, վերնագրից հետո կա «Ի վեչտասան հասակի իւրում» արտահայտությունը[3], որին ոչ ոք մինչև օրս ծանոթ չէ և որը «հայտնագործել է» մեր ընդդիմախոսը: Ջէ՞ որ այդ համարի տակ պահվում է «Ազատու խաղը» պոեմի ինքնագիրը, որը ներկա խնդրի հետ ընդհանրապես կապ չունի և 1841 թ. փետրվարի կեսերին գրված ստեղծագործություն է: Եվ կամ՝ այդ ի՞նչ հնարքով է Դորպատի գավառային դատարանում 1831 թ. օգոստոսի 18-ին Աբովյանի տված ցուցմունքների մեջ բանավիճողն հայտնագործել, թե Աբովյանն ասել է, որ ինքը այն ժամանակ **21 տարեկան էր** [4], երբ նման բան այնտեղ չկա, այլ միմիայն՝ «22 տարեկան», «22-ի մեջ» և այլն:

Բայց՝ առաջ անցնենք:

Բանավիճողը լուրջ արժեք է տալիս Աբովյանի առաջին կենսագրի հոդվածի մեջ առկա մի աղավաղված արտահայտության, ըստ որի՝ Աբովյանը պետք է ծնված լիներ 1806 թվականին, — մեղադրում է աբովյանագիտության երախտավոր Մ. Տեր-Ազարյանցին՝ Աբովյանի ծննդյան թվականի հարցում իբր չփոթ ստեղծելու համար, և ապա՝ քմահաճ ձևով ուղղելով այն, դուրս է բերում, թե, իբր, ըստ այդ տվյալի, Աբովյանը 1810 թվականի ծնունդ է:

Բայց ի՞նչ է ասել Մ. Տեր-Ազարյանցը կամ ինչպե՞ս են տպագրվել նրա խոսքերը «Նրա (այսինքն՝ Աբովյանի — Պ. Հ.) 1846 թվի ծառայության ցուցակը ցույց է տալիս, որ այս թվումը նա էլել է 36

---

3 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 234:

4 Նույն տեղում, էջ 235:

տարեկան, և երևում է, որ նա ծնվել է 1806 թվումը, սակայն չեմ կարող երաշխավոր լինել սրա ստուգության համար»[5]:

Այո՛, այնտեղ իսկապես աղավաղումներ կան, բայց հազիվ թե հեղինակի մեղքով: Այդ վրիպակների պատասխանատուն սրբագրիչներն են, որոնք, բանին անտեղյակ, չվստահել են 6, 5 և 9 թվանշանները, որ տպագրական առօրյայում շատ սովորական բան է: Բայց ինչո՞ւ քմահաճորեն չհենք վրիպակները, երբ հնարավորություն ունենք Մ. Տեր-Ազարյանցի ասածը ստուգել և ուղղել իր իսկ օգտագործած՝ 1846 թվականի ծառայության ցուցակով, որի բնագիրը պահպանվել ու հասել է մեզ, և որտեղ Աբովյանի տարիքը 1846-ին նշանակված է՝ 37: Աբովյանն իր տարիքի մասին նույնպիսի տվյալ է հաղորդում նաև Երևանի դավառական դպրոցի 1846 թ. հաշվետվության մեջ՝ 37 տարեկան, հետևաբար՝ նման մի ուղղում բնավ չի կարող կասկածի տեղիք տալ. 1846-ից հանելով 37 կստանանք 1809 թվական, ուստի ճիշտ կլիներ 1806-ը սրբագրել՝ 1809, իրեն տվյալ թվանշանը սխալ չարելու (չրջելու) հետևանք, իսկ 1846-ի փոխարեն հաղվածի բնագրում հնարավոր է միանգամայն, որ եղած լիներ՝ 1845: Բարեբախտաբար, պահպանվել է այդ տարվա ցուցակը նույնպես, և Աբովյանն իր ձեռքով իր տարիքը նշել է՝ 36 տարեկան, հետևապես՝ նորից 1809 թվականի ծնված: Վրիպակներն, ուրեմն, սպրդել են «1846 թվի» (պետք է լիներ՝ 1845 թվի) և «1806 թվումը» (պետք է լիներ՝ 1809 թվումը) արտահայտություններում[6]:

Բանավիճողի մնացած կռվանները քաղված են կամ Աբովյանի՝ ընդհանուր ձևով ասված խոսքերից, երբ նա կրթայրյան թվերով, ինչպես, սովորաբար, գործածում էին մարդիկ, նշել է, թե Խորպատում իր ուսումնառությունն սկսել է քսանամյա հասակում, — և կամ էլ պաշտոնական վավերագրերից, այսինքն՝ Աբովյանի ծառայության միայն այն ցուցակներից, որոնք կազմված են կամ այլոց ձեռքով և կամ էլ նրա անհետացումից հետո, Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության գրասենյակի աշխատակիցների ձեռքով, և վավերական արժեքով խիստ սակաւ են, որովհետև սխալներն ու չփոխիր նման դեպքերում կանխելը դառնում է անհնար: Եվ, այնու հանդերձ, այդ ցուցակների տվյալներով էլ Աբովյանն անվերապահ ձևով 1810 թվականին ծնված չի դառնում, եթե ընդունակ լիներնք դրվածը ճիշտ

---

5 *«Կռունկ Հայոց աշխարհին», 1861, № 7, էջ 532:*

6 *1845 և 1846 թ. ծառայության ցուցակների բնագրերը տե՛ս ՀԱ, ֆ. 1, ց. 1, գ. 75 և գ. 786:*

հասկանալու և վերծանելու: Տառակերը, թերևս, կառչեր մեկ-երկու ցուցակից, բայց ո՛չ բոլորից:

Բանն այն է, որ ըստ ընդունված կարգի, Աբովյանը սեփական ձեռքով, բազմաթիվ անգամներ, կազմել կամ պաշտոնակիցներին արտագրել է տվել իր այս կամ այն տարվա ծառայության ցուցակը և այլ կարգի վավերագրեր, որոնց մեջ հարկ է եղել տարիքի մասին տվյալներ հաղորդել. դրանց բոլորի մեջ, միաձայն ու միաբերան, նա գրել կամ գրել է տվել այնպիսի թվեր, որոնք հետադարձ հաշիվներով հանգում են միայն ու միայն 1809 թվականին:

Բերենք այդ վավերագրերն ըստ հերթականության.

1. Աբովյանի 1843 թ. ծառայության ցուցակը. նա սեփական ձեռքով գրել է, որ 34 տարեկան է, նշանակում է՝ 1809 թ. ծնված:

2. Աբովյանի 1845 թ. ծառայության ցուցակը, ըստ որի՝ 36 տարեկան, նշանակում է՝ դարձյալ 1809 թ. ծնված:

3. Աբովյանի 1846 թ. ծառայության ցուցակը, ըստ որի՝ 37 տարեկան, նշանակում է՝ նորից 1809 թ. ծնված:

4. Աբովյանի 1847 թ. ծառայության ցուցակը. ըստ որի՝ 38 տարեկան, նշանակում է՝ դարձյալ 1809 թ. ծնված:

Պահպանվել են Աբովյանի տեսչության շրջանում, դարձյալ սեփական ձեռքով կազմած՝ Երևանի գավառական դպրոցի տարեկան հաշվետվությունները, որոնց բոլորի մեջ, առանց բացառության, իր տարիքը նշել է վերստին նույն ձևով, որից բխում է միայն 1809 թվականը: Այսպես՝

1. 1843 թ. տարեկան հաշվետվության մեջ՝ 34 տարեկան, ուրեմն՝ 1809 թ. ծնված:

2. 1844 թ. տարեկան հաշվետվության մեջ՝ համապատասխանաբար 35 տարեկան կամ 1809 թ. ծնված:

3. 1845 թ. հաշվետվության մեջ՝ համապատասխանաբար 36 տարեկան կամ 1809 թ. ծնված:

4. 1846 թ. հաշվետվության մեջ՝ համապատասխանաբար 37 տարեկան կամ 1809 թ. ծնված:

Նույն բանը կրկնված է Անդրկովկասյան դպրոցների տարեկան հաշվետվությունների մեջ՝

1. 1844-ին՝ 35 տարեկան, նշանակում է՝ 1809 թ. ծնված:

2. 1845-ին՝ 36 տարեկան, նշանակում է՝ 1809 թ. ծնված:

3. 1846-ին՝ 37 տարեկան, նշանակում է՝ 1809 թ. ծնված:

4. 1847-ին՝ 38 տարեկան, նշանակում է՝ 1809 թ. ծնված:

Վերջապես՝ 1841 — 47 թթ. ընթացքում, գրական-հրապարակախոսական երկերում, Աբովյանը մի քանի անդամ անդրադարձել է իր

տարիքին և հաղորդել այնպիսի տվյալներ, որոնք դարձյալ հանդուրժելի են, ամենաուշը, 1809 թվականին: Բերենք միայն երկու օրինակ.

1. 1841 թ. սեպտեմբերի վերջերին գրած «Բարեկամի մոտ» ակնարկում Աբովյանը լավագույնս բնութագրելով իր երիտասարդ բարեկամ Դ. Մ.-ին (Դավիթ Մելիք-Յանին), ասում է. «Նա ասան ուր տարեկան, ես երեսուն երկու» (Հատոր IV, էջ 39): 1841-ից հանելով 32՝ ստանում ենք 1809 թվական:

2. «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ուսուցին աշխատության մեջ, վերհիշելով մանկության տարիներից մի դեպք, ասում է. «Как дитя 12-ти летнее, видел, как Абас-Мирза в 1821-м году перед алтарем Эчмиадзинским, при походах его против турок, вынув меч и положив его перед Патриархом, сказал...» (ընդ որում՝ այդ գրության բնագրում 1821 թվականի փոխարեն նախապես գրված է եղել 1820, և Աբովյանը սեփական ձեռքով ուղղել է՝ 1821)[7]: — 1821-ից հանելով 12՝ ստանում ենք 1809 թվական:

Նույն աշխատության մեջ կան այսպիսի ընդհանուր ցուցումներ. «[Էջմիածնում] ես ապրել եմ իմ 9 տարեկան հասակից սկսած...», «4 տարի ուսանելուց հետո, 1821 թ. ... Անտոն արքեպիսկոպոսի չնորհիվ տեղափոխվեցի Տփղիս»[8]: Այս վկայություններից էլ երևում է, որ 1821-ին Աբովյանն իրեն համարել է առնվազն 13 տարեկան, ուրեմն՝ 1808 թվականի ծնունդ, բայց որովհետև Պողոս վարդապետ Ղարադաղցու՝ Տփղիսի դպրոցը բացվել է 1822 թ. աշնանը միայն, հետևաբար՝ թվականը պետք է ուղղել՝ 1822, որ ճիշտ և ճիշտ համապատասխանում է 1809 թվականին: Նորից նշանակում է, որ նրա ծննդյան ճիշտ տարին երբեք չէր կարող 1810-ը լինել:

Այո՛, կան վավերագրեր էլ, որոնք խոսում են Աբովյանի՝ 1808 թվականին ծնված լինելու օգտին, և կամ էլ՝ ավելի վաղ տարիներին, բայց դրանց հիմքը մեծ մասամբ ուրիշների ձեռքով գրված պաշտոնական դրություններն են, որոնք բանասիրական կնճռուտ հարցեր լուծելու ժամանակ պետք է օգտագործվեն խիստ վերապահությամբ ու միշտ էլ, պարտադիր կարգով, առաջնությունը տալով անմիջական-ներին Աբովյանի արած վկայություններին: Ջգիտի մոռանալ մեկ ուրիշ հանգամանք ևս. մասնավորապես 30-ական թվականներին Աբովյանը մեծ մասամբ անորոշ ձևով է խոսել իր տարիքի մասին, կլորացրած թվեր օգտագործել, իսկ երբեմն էլ պարզապես հակասել ինքն իրեն. այդպես պատահում է ամենքի հետ, անգամ նրանց, ովքեր

---

[7] Ե VII, *128:*

[8] Նույն տեղում, էջ 131 և 133 (175 և 177):

պաշտոնապես վավերացված անձնագրեր ու ծննդականներ ունեն իրենց գրպաններում: Բայց երբ հարկադրված են եղել մի որևէ որոշակի թվականի իրենց որոշակի տարիքն ասել, օրինակ՝ Աբովյանն ելակետ է ունեցել 1809 թվականը, իսկ 1841-ից սկսած՝ հետևողականորեն, միայն այդ թվականը:

Բայց ինչո՞ւ, այնուամենայնիվ, մի քանի պաշտոնական վավերադրերի մեջ (Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության 1836 — 42 թթ. տարեկան հաշվետվություններում և ծառայության ցուցակներում) Աբովյանի տարիքը մերթ հիշվում է 1805 — 6, մերթ՝ 1808, մերթ էլ՝ 1810:

Այս խնդիրը պարզելու համար բնավ կարիք չկար Ռուսական կայսրության Свод законов կամ, ինչպես ժամանակակիցներն էին ասում, Կոճեղ օրինաց հաստափոր հատորները թերթել՝ իմանալու համար, թե հին Ռուսաստանում **պասպորտներ** տալու կամ ստանալու ի՞նչ կարգ գոյություն ուներ և կամ թե աստիճանավորների ծառայության ցուցակներն ովքե՞ր և ի՞նչ ձևով էին լրացնում: Ընդհակառակը, պետք էր Աբովյանի ժամանակների, մասնավորապես, նրա ուսումնառության տարիների մարդահամարների տվյալներն ու ծառայության ցուցակներն ուսումնասիրել՝ տեսնելու համար, թե ինչպե՞ս էին պաշտոնական փաստաթղթերում մարդկանց տարիքն արձանագրում, որից հետո պարզ կդառնար, թե ինչո՞ւ, երբ ձևակերպում էին Աբովյանի փաստաթղթերը, կարող էին երբեմն մեկ կամ ավել տարով նրան մեծացնել կամ փոքրացնել, և տարվա առաջին ամիսներին կազմված վավերագրերի մեջ կարող էր մարդ իր սովորական տարիքից ավելի փոքր հիշվել:

Ես իմ «Խաչատուր Աբովյան» աշխատության մեջ գրել եմ, որ անցյալում, երբ արձանագրում էին մարդկանց տարիքը ու կամ էլ նշում, թե, ասենք, այսինչ մարդը այդինչ թվականին տասը, տասնհինգ, երեսունմեկ, երեսուներկու, երեսունութ և այլն տարեկան է, այդ նշանակում էր, որ նրա, ասենք՝ 10, 15, 31, 32, 38 և այլն տարին լրացել էր, և նա թևակոխել էր հաջորդ՝ 11, 16, 32, 33, 39 տարու մեջ:

Ավելի առարկայական լինելու համար բերենք մի քանի օրինակ Դորպատ քաղաքի 1834 թվականի մարդահամարի տվյալներից, որոնց կազմողները շրջահայաց մարդիկ էին ու պետական պաշտոնյաներ՝ համալսարանի պրոֆեսորներ, ուսուցիչներ, դատարանի աշխատողներ և այլն, և գոյություն ունեցող կարգը հրաշալիորեն գիտեին: Մեր աշխատության մեջ մենք էլ դրանց հիման վրա ենք համապատասխան հետևություններ արել:

Ինչ խոսք, դրանց մեջ էլ վրիպակներ կարող են լինել, բայց, իսկապես, վրիպակները միայն, իսկ մեր ասածը վրիպակներին չի վերաբերում, այլ արժանագրման կարգին, որին հետևում էին Ռուսական կայսրության մեջ ամենուրեք, նաև՝ Դորպատում, ուր սովորել էր Աբովյանը և յուրացրել էր պաշտոնական կարգ ու կանոնը: Կարևորն այն է, որ այդ նյութերը մեզ հնարավորություն են տալիս հետազոտել ճիշտ հաշիվներ անելու, ինչից զուրկ են հայկական մարզի 1829 — 30 թթ. ու հետագա տարիների մարդահամարների նյութերը, որոնք չատ հաճախ հակասում են մեկը մյուսին, որովհետև նույն ժամանակաշրջանին վերաբերող ծննդյան մատյաններ ընդհանրապես չկան կամ չեն պահպանվել, որ անհրաժեշտություն զգում ստուգենք:

Բերենք օրինակներ.

1. Ուսանող Պաուլ Դալը՝ Աբովյանի մտերիմ ընկերը և ռուս բառարանագիր Վ. Դալի եղբայրը, ծնվել է 1813 թ. օգոստոսի 25-ին, բայց նա 1834 թ. փետրվարի 28-ին արձանագրված է 20 տարեկան:

2. Աբովյանի սիրելի բարեկամներից մեկ ուրիշը՝ Ռուդոլֆ Էշշոլցը, ծնվել է 1822 թ. մայիսի 1-ին, բայց 1834 թ. մարտի 20-ին արձանագրված է 11 տարեկան, այնինչ 12 տարուց միայն 41 օր էր պակաս[9]:

3. Աբովյանի ուսուցիչ Դիտրիխ Հայնրիխ Յուրգենսոնը ծնվել է 1804 թ. հուլիսի 15-ին, բայց 1834 թ. փետրվարին 29 տարեկան է համարել իրեն:

4. Աբովյանի մտերիմ ընկերը և բարեկամը՝ նկարիչ Աուգուստ Մատթիաս Հագենը, 1834 թ. փետրվարի 28-ին իր և իր երեխաների տարիքի մասին այս տվյալներն է արձանագրել.

Աուգուստ Հագեն, ծն. 12. II. 1794 — 40 տարեկան
Կարլ Հագեն, ծն. 1. V. 1823 — 10 տարեկան
Վիլհելմ Հագեն, ծն. 14. X. 1824 — 9 տարեկան
Ալեքսանդր Հագեն, ծն. 17. II. 1826 — 7 տարեկան
Ֆրիդրիխ Հագեն, ծն. 27. I. 1832 — 2 տարեկան
Յուլիե Հագեն, ծն. 15. X. 1824 — 9 տարեկան
Էմիլիե Հագեն, ծն. 27. III. 1828 — 5 տարեկան
Մարիե Հագեն, ծն. 15. II. 1834 — 14 օրական

5. Պրոֆեսոր Ֆ. Պարրոտի որդին՝ Մորիցը, ծնվել է 1831 թ. օգոստոսի 22-ին, բայց հայրը 1834 թ. փետրվարին արձանագրել է՝ 2 տարեկան:

---

[9] *Ֆ. Պարրոտն իր «Reise zum Ararat» գրքի մեջ ևս, որ տպագրվել է 1834 թ. վերջերին, Ռ. Էշշոլցին տալիս է նույն հասակը՝ 11 տարեկան (տե՛ս այդ գրքի՝ Աբովյանի հայ. թարգմանությունը, ե. VII, 287):*

6. Աբովյանի մտերիմ ընկերը, Դորպատի գավառային դատարանի քարտուղար Ֆրիդրիխ Ֆոն Շվեբսը, որ օրենքները չատ լավ գիտեր, ծնվել է 1801 թ. հունիսի 19-ին, բայց իր տարիքը սեփական ձեռքով 1834 թ. մարտի 7-ին գրել է՝ 32:

7. Ժամանակի մեկ այլ հայտնի անձնավորություն՝ հռչակավոր աստղաբաշխ Ֆրիդրիխ Ստրուվեն, ծնվել է 1793 թ. ապրիլի 4-ին, բայց իր տարիքը 1834 թ. փետրվարին նշել է՝ 40:

8. Աբովյանի սիրելի բարեկամ, պրոֆ. Է. Դ. Ֆրիդլենդերի որդին՝ Գեորգը, ծնվել է 1829 թ. օգոստոսի 18-ին, և նրա տարիքը 1834 թ. փետրվարին տնտեսագետ հայրն արձանագրել է ճշդրիտ ձևով՝ 4 և կես տարեկան, բայց ո՛չ հինգ:

9. Աբովյանի ուսուցիչն ու պատվարժան բարեկամը՝ մաթեմատիկոս Յոհան Բարտելսը, ծնվել է 1769 թ. օգոստոսի 12-ին, բայց 1834 թ. փետրվարին իրեն համարել է 64 տարեկան:

10 — 11. Աբովյանի մեկ այլ բարեկամը՝ անտիկ արվեստի հմուտ գիտակ Կարլ Մորգենշտեռնը, ծնվել է 1770 թ. օգոստոսի 28-ին, բայց 1834 թ. փետրվարին իր տարիքը նշել է՝ 63: Իսկ, օրինակ, պրոֆեսոր Կարլ Գյոբելը, որը ծնվել է 1794 թ. փետրվարի 21-ին, 1834 թ. փետրվարի 16-ին իրեն համարել է 40 տարեկան՝ հաշվի չառնելով, որ հինգ օր դեռ պակասում էր իր ծննդյան ճիշտ օրվանից[10]:

Այսպես անվերջ կարելի է բերել նոր ու նոր օրինակներ:

Մի քանի տվյալներ էլ բերենք հայկական նյութերից.

Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության նյութերից պարզվում է, օրինակ, որ Հայտնի բանահավաք Գեորգ Տեր-Աղեքսանդրյանը (նրա հայրը՝ քահանա Դավիթը, Աբովյանի տեսչության օրերին աշխատում էր Տփղիսի գավառական դպրոցում, որպես հայոց լեզվի ու կրոնի ուսուցիչ), ծնվել է 1840 թվականին, բայց հոր ծառայության ցուցակում, 1843 թ. կեսերին, հիշվում է 7 տարեկան: Իսկ ահա՛ դերմանացի բանաստեղծ և Աբովյանի բարեկամ Ֆրիդրիխ Բոդենշտեդն էլ, որ ծնվել է 1819 թ. ապրիլի 24-ին, 1845 թ. փետրվարի 7-ին տրված առեստատում հիշվում է 24 տարեկան, ուրեմն՝ չատ ավելի փոքր, քան իրականում էր[11]:

---

10 *Այս բոլոր տվյալները քաղել ենք Դորպատի համալսարանի պրոֆեսորների ու դասախոսների կենսագրական բառարանից, Էստոնիայի պետական պատմական արխիվի 1865-րդ ֆոնդից, ինչպես նաև համալսարանի դասախոսների անձնական գործերից (տե՛ս ֆոնդ 402, ցուցակ 3):*

11 *Վ.Ա., ֆ. 424, գ. 184 և 150:*

Բանասիրական քննությունը վազուց պարզել է, որ Միքայել Նալբանդյանը ծնվել է 1829 թվականի հոկտեմբեր ամսին, և դա հաստատվում է նրա ծննդյան վկայականով՝ հրատարակված մի քանի անգամ[12]:

Ելնելով այս իրողությունից, օրինակ, 1846 թ. փետրվար — մարտին, ամն ավրացու Սարպսին ուղղված նամակները գրելու օրերին, Նալբանդյանն իր տարիքը հաշվել է 16, բայց ո՛չ 17 տարեկան, ինչպես կպատահներ մեր ընդունված տրամաբանության: Իր ձեռքով, տառացի, նա գրել է. «... յամի 1846... չունէի դկատարեալ չափահասութիւն՝ դոլով ծնեալ ի 26 հոկտեմ. 1829 ամի, դատնէի ի 16-ամեայ իմում հասակի...»[13]:

Նշանակում է՝ տարիքները հաշվելու կարգը ընդհանուր էր ոչ Ռուսիայի համար, և ժամանակագրական հարցեր լուծելիս սխալներից ու վրիպակներից չէ, որ պիտի կասչենք:

Մեր ասածն, այսպիսով, համաստատած եղևույթ է եղել, պաշտոնապես սահմանված, նախորոշված կարգ, իսկ սխալների ու հակասությունների պատճառը պետք է փնտրել այլ բաներում՝ ինչպես արտագրողների անուշադրությունը: Հետևաբար, ինչքան էլ մանրախնդիր լինենք, երբ Աբովյանն իր ձեռքով գրում է, թե 1821-ին 12 տարեկան էր, նա երբեք չէր կարող 1809 թվականից հետո ծնված լինել:

Այստեղից մի երկրորդ, կարևոր եզրակացության պիտի հանգել. Աբովյանի անհետացումից հետո կազմված ծառայության ցուցակներում նրա տարիքի վերաբերյալ եղած ցուցումները, թե այն օրերին, այսինքն՝ 1848 թ. ապրիլին, 38 տարեկան էր, բնավ չի՛ հակասում 1809 թ. ծնված լինելուն և միանգամայն ներդաշնակում է գոյություն ունեցող կարգին, որովհետև ամենատպա գրագիրն անգամ 1809 թ. վերջին ամիսներին (այսինքն՝ աշնանը) ծնված մարդուն, բնականաբար, 1848 թ. ապրիլի 2-ին պետք է արձանագրեր 38 տարեկան, և այդպիսի մի կռվան ամենևին իրավունք չի տալիս անգամ մանրախնդիր հետազոտողին՝ 1810 թ. ծնունդ համարելու Խ. Աբովյանին:

Մի բան էլ հիշեցնենք կասկածամիտներին. ծառայության ցուցակները տարի առ տարի արտագրվելով մեկը մյուսից, նորը՝ հինից, պետական հիմնարկների գրագիրների ձեռքով՝ վերջիններս այս կամ այն աստիճանավորի տարիքի հարցում, շատ հաճախ, թույլ էին տալիս սխալներ ու հակասություններ, որովհետև մարդկանց ծննդյան ճիշտ

---

12 Տե՛ս Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, ե., 1949, էջ 311–312:

13 Նույն տեղում, էջ 23:

թվականն ու ամիսը նրանք չգիտեին, այլ սոսկ իրենց դիվանի հին վավերագրերում արձանագրված տարիքը, որից միշտ չէ, որ կարելի էր ճիշտ կողմնորոշվել: Ահա՛ թե ինչու այդպիսի ցուցակները չի կարելի հիմք դարձնել բանավեճեր վարելիս: Այլ բան է, սակայն, եթե ցուցակի տերը, ասենք, տվյալ դեպքում՝ Խ. Աբովյանը, պաշտոնատար անձ լինելով, իսկ նա գավառական դպրոցի տեսուչ էր, անձամբ ինքն էր կազմում իր ծառայության ցուցակը և սեփական ձեռքով նշանակում տարիքը: Ասացինք արդեն, որ նրա այդօրինակ ցուցակներից մի քանիսը պահպանվել ու հասել են մինչև մեր օրերը, և բոլորի մեջ էլ տարիքի խնդրում ամենևին հակասություն չկա, բոլորն էլ մատնանշում են այնպիսի թվեր, որոնք հետադարձ հաշիվներով հանդում են, ամենաուշը, 1809 թվականին, որը և համարել ենք Աբովյանի ծննդյան թվականներից ամենահավանականն ու հավաստին:

Մեր ընդդիմախոսը թյուրիմացության մեջ է, երբ կարծում ու հայտարարում է, թե, իբր, դարասկզբին Քանաքեռի եկեղեցում չափաբերական մատյաններ են եղել, որ, իբր թե, դադարել է ունեցել անգամ Աբովյանի ծննդյան վկայականը, որն ինչ-որ չարամիտներ հետագայում ոչնչացրել են: Բայց եթե այդպիսի բան լիներ, Աբովյանն ինչո՞ւ պիտի մտատանջվեր և իր տարիքի մասին հարցուփորձ աներ ծնողներին, կամ Դորպատի գավառային դատարանում լրացուցիչ բացատրություններ տար: Եթե մեջտեղում ծննդյան վկայական լիներ, մի՞թե նա գրել-կարդալ չգիտեր, որ այդ երևակայական փաստաթղթի հետ ծանոթանալով՝ մեկընդմիշտ իմանար բանի էությունը և, դոնե մեկ անգամ էլ, իր ծննդյան ճշդրիտ թվականը, ամիսը և ամսաթիվը հաղորդեր մեզ:

Եզրափակենք. բանասիրության մեջ 1809 թվականը առաջադրվել է շատ վաղուց և լուրջ մարդկանց կողմից: Նախ՝ Ա-Դօ-ի (1914 թ.), ապա՝ սովետահայ վաստակաշատ աբովյանագետներ Ռ. Զարյանի ու Հ. Մուրադյանի, որոնց տեսակետը պաշտպանել է նաև սիլյուեքահայ բանասեր Ա. Երեմյանը (բոլորն էլ 1939 թ.): Վերջապես՝ նույն տեսակետը հիմնավորել է նաև Արտաշես Աբեղյանն իր տարբեր աշխատություններում (1948): 1809 թվականը ընդունում են շատերը, այն արդեն մուտք է գործել դպրոցական դասագրքերի ու հանրագիտարանների մեջ:

Մեր «Խաչատուր Աբովյան» աշխատության մեջ մի վերջին անգամ քննության առնելով և հավանություն տալով այդ թվականին, մենք առաջնորդվել ենք ո՛չ թե նորարարության մարմաջով, այլ նպատակ ենք ունեցել, որքան կարելի է, չհեռանալ ճշմարտությունից և դպրոցական դասագրքերի ու տեղեկատու հրատարակությունների

(պրքերի) համար տալ հնարավոր թյուրիմացություններից զերծ ու որոշակի թվական, որն ելակետ ունենալով՝ կարելի լինի վստահելի ժամանակագրության տակ դնել Աբովյանի կյանքի անցքերը:

Իսկ դա 1809 թվականի հոկտեմբեր ամիսն է:

Ո՛չ ոք սխալներից ապահովագրված չէ, և կարող է պատահել, որ մենք էլ սխալված լինենք, բայց ո՛չ այս դեպքում և ուրիշ փաստերի սահմաններում: Շատ հնարավոր է, որ Աբովյանն իրականում ո՛չ թե 1809 թվականի հոկտեմբերին է ծնվել, ո՛չ թե փոքր էր, այլ ընդհակառակը, ավելի մեծ, քան որ հետագայում, 1841 թվականից սկսած մատնանշում էր սեփական ձեռքով գրված նրկերի և պաշտոնական գրություններում:

Դուցե, հատուկ դիտավորությամբ, նա փոքրացրե՞լ է իր տարիքը, որպեսզի հեշտ լիներ Դորպատ մտնելու համար պետական թոշակ ստանալը, դուցե նա իսկապե՞ս 1804 — 5 և կամ, որ պակաս հավանական չէր լինի կարծել, 1807 — 8 թվականների ծնունդ է: Առաքել Արարատյանն, օրինակ, որը Աբովյանի մանկության տարիների մտերիմ ընկերներից ու բարեկամներից էր և ծնվել է 1808 թ. սեպտեմբերի 3-ին, Աբովյանին ուղղած իր առաջին նամակներում իրեն նրանից փոքր է համարում. «Անդրանիկ լարեկամիդ կրասեր ծառայ» կամ «Ամենահնազարհ ծառայ և եղբայր կրասեր»[14]: Իսկ Ստեփանոս Նազարյանցը, որին նույնպես շատ լավ ծանոթ էին Աբովյանի կյանքի հանգամանքները և որը նրա հետ սովորել էր Ներսիսյան դպրոցում, վկայում է, որ նա «չափահաս աշակերտներից մինն էր»[15], այսինքն՝ հասակակիցներից էր: Արդյո՞ք Աբովյանը 1807 կամ 1808 թվականների ծնունդ չէր և իրեն դիտավորյալ չէր փոքրացնում... Այսօրինակ տատամսումներին ու կասկածներին վերջ չի լինի, եթե մի բան միևնույնիչ պարզ չըմբռնենք: Երբ մեջտեղում չկան քաղաքացիական կացության (ծնունդ, մահ, ամուսնություն) մասին պաշտոնական արձանագրություններ (կամ այդպիսիք առհասարակ գոյություն չեն ունեցել), մարդիկ, պարզ է, որ իրենց տարիքը պետք է իմանային ծնողներից կամ էլ մերձավորներից, իսկ վերջիններն էլ, իրենց հերթին, սովորաբար, ծնունդը, մահը կամ ամուսնությունը, իրենց զավակների կյանքի կարևոր անցքերը կապում էին որևէ նշանավոր իրադարձության հետ՝ դրեթե միշտ կլորացնելով թվերը և արժեք չտալով որոշակի ամիս-ամսաթվերին: Լինում էր և հակառակը. ամեն բան շատ հրաշալի ու ճշգրիտ էին

---

14 Տե՛ս Դ II, 72 և 76:

15 «Հյուսիսափայլ», 1858, № 2, էջ 144:

հիշում՝ թվով, ամսաթվով, մինչև իսկ օրվա պատկերով ու ժամերով, երբ դրանք զուգադիպում էին եկեղեցական նշանավոր տոներին:

Աբովյանն իր գիտակցական կյանքի առաջին շրջանում, ինչպես հուշում են առկա նյութերը, մի առանձին կարևորություն չի տվել կամ վերջնականապես չի պարզել, գոնե իր համար, ծննդյան թվականն ու ամսաթիվը, այդ պատճառով էլ մերթ մոտավոր ու անճիշտ տվյալներ է հաղորդել, մերթ էլ որոշակի թվականից խուսափել: Բայց հետագայում, հետամտելով ճշմարտությանը, մեկընդմիշտ պարզել է իր ծննդյան տարին և, արդեն հարկ եղած դեպքում, շատ որոշակիորեն հաղորդել է այնպիսի տվյալներ, որոնցից ելնելով՝ հետադարձ հաշիվներով ստացվում է 1809 թվականը կամ, ավելի ճիշտ, 1809 թ. հոկտեմբերը: Ամիսը մենք ենք որոշել, հիմք ունենալով Աբովյանի մկրտության անունը՝ Խաչատուր, որովհետև նա, իր իսկ վկայությամբ՝ անվանակոչվել է ըստ ազգային սովորույթի (Աբովյանի նախնիներից և ո՛չ մեկը Խաչատուր անունը չի կրել): Նրա ծնունդը զուգադիպել է Սուրբ Խաչի կամ Գյուտ Խաչի տոներին, որի պատճառով և մանկանը տվել են Խաչատուր անունը: Իսկ հիշյալ տոները հայերը կատարում էին աշնանը, սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին: Հակառակ պարագայում՝ մանկան անունը կարող էին դնել Աբով, ինչպես նրա անմիջական պապին էին կոչում, որը մեռել էր վաղուց և որի անունը թոռներից և ո՛չ մեկը դեռ չէր կրում, կամ մեկ այլ անուն, բայց ո՛չ երբեք Խաչատուր:

Մեր խոսքն ավարտելուց առաջ անդրադառնանք նաև մի տհաճ իրողության: Արդեն երկրորդ անգամ հոդվածագիրը, իբրև սեփական հայտնագործություն, ընթերցողներին է ներկայացնում ժամանակին Անդրկովկասի դպրոցների վերատեսչության դիվանում Աբովյանի անհետացման կապակցությամբ կազմված և 1850-ական թթ. վերջերին ոչնչացված գործի մասին վկայող վավերագրի դյուտը՝ հղելով ՀԽՍՀ ՊԿՊԱ-ի 422-րդ ֆոնդի 19532 գործը (տե՛ս էջ 239): Այդ թվերը շատ են կասկածելի: Նախ՝ հիշյալ վավերագիրը ծանոթ է շատ վաղուց և սովորական գործավարական ցուցակ է, ունի «Опись делам, принадлежащим уездным училищам разных дирекций с 1838 по 1858 год» *խորագիրը: Վերջինիս մեջ արձանագրված է 525 համարով մի գործի խորագիրը.* «О без вести пропавшем штатном смотрителе Эриванского училища Абовьяне и о назначении к исправлению должности смотрителя Туркестанова, и о постройке мебели для сего училища». *Այնուհետև՝ այդ տեղեկությունն ավելի քան 35 տարի առաջ հայտնագործել է ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լևոն Մելիքսեթ-Բեկը, որի նկատողությունները դեռ 1948 թ. լույս են տեսել ՀԽՍՀ*

Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրում» (Հասարակական գիտություններ, № 9, էջ 33): Այդ նույն վավերագրի լուսապատճենը, Հ. Մուրադյանի ջանքերով, ավելի քան 25 տարի առաջ, ստացվելով Վրացական ԽՍՀ պետարխիվից՝ այժմ պահվում է Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Վերջապես՝ Անդրկովկասյան դպրոցների վերաբացության դիվանից մնացած գործերը, որ պահվում են Թիֆլիսի և Երևանի արխիվներում, հաղիվ թե անցնեն 300-ից, մինչդեռ այս կատալոգամիտ «ամենագետը» նյութեր է քաղել 19532 գործից, որպիսին գոյություն չունի:

Վաղուց հրատարակված նյութերը Գրականության և արվեստի թանգարանի լուսապատճեններից նորից-նոր «հայտնագործելը», վավերագրերն հայթայթողի անունը թաքցնելը, նյութերից տարօրինակ հետևություններ անելը դատապարտելի են, որոնց օրինակները, ցավոք, դեռ հանդիպում են գիտահետազոտական առօրյայում:

Մեր ընդդիմախոսի մնացած սխալներին անդրադառնալը ավելորդ ժամավաճառություն ենք համարում, մանավանդ որ գիմացինը քաջություն պիտի ունենար սեփական սխալներն ու թյուրիմացությունները ընդունել և գրանցից համապատասխան հետևություններ անել, որն, ավա՛ղ, չի երևում նրա հոդվածներից[16]*:*

---

16 *Սույն հոդվածում, Արովյանի ծննդյան թվականի որոշման հարցում, մեզ համար կուլաններ ծառայած ուղղակի և անուղղակի վկայություններին անդրադառնալիս՝ համապատասխան աղբյուրներն էջատակերին չենք նշել, քանի որ այդ բոլորը մանրամասնորեն բերված են մեր «Խաչատուր Արովյան» աշխատության «Ծննդյան թվականը» գլխում: Հետաքրքրվողներն կարող են դիմել այդ գրքին (Պ. Հակոբյան, Խաչատուր Արովյան, կյանքը, գործը, ժամանակը (1809–1836), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1967, էջ 48–71):*

Ո՞Վ ԵՎ Ե՞ՐԲ Է ՎՐՁՆԵԼ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

1

Աբովյանի՝ առեղծվածներով հարուստ կյանքի խորհրդավոր հանելուկներից մեկն էլ վերաբերում է նրա դիմանկարին, որի շուրջ պատմվող լեգենդները պետք է դասվեն դրողի կյանքի՝ անվերջանալի որոնումների ու մտավոր հաղթանակների, հոգեկան տառապանքների ու անհասանելի տենչանքների, մաքառումների ու պարտությունների այնքա՞ն գրավիչ դրվագների շարքում ու նրանց հավասար:


Ո՞վ է Խաչատուր Աբովյանի դիմանկարի հեղինակը, ե՞րբ և որտե՞ղ է այն ստեղծվել, հարազա՞տ է, թե՞ կասկածելի. այս հարցերին ցարդ վերջնական պատասխան չի տրվել: Եվ դրա պատճառով՝ չատերը, նրանց մեջ նաև մի ստվար մաս մտավոր աշխատությամբ պարապողներից, վաղուց, կասկածանքով են նայում ամեն մի դպրոցականի մանկուց ծանոթ այդ դիմանկարին, այլևայլ առիթներով՝ մոտիկների կամ շրջապատի մարդկանց ականջին ամենագետի համոզվերությամբ փսփսում են, թե իբր պատկերահանված անձնավորությունը ուրիշ մարդ է, մինչև իսկ կին, դրողի թոռնուհիներից մեկը թերևս, բայց ո՛չ երբեք իրական Խաչատուր Աբովյանը:

Այս թերահավատությունն իր համար մշտական տեղ է ապահովել աբովյանագիտական ուսումնասիրությունների մեջ: Յավով պիտի արձանագրենք, որ Ե. Շահազիզի նման լուրջ բանասերն անգամ, տարիներ առաջ իրեն հարց տալով, թե «ի՞նչ տեսք ու պատկեր է ունեցել Խ. Աբովյանը», պատասխանում էր. «Ինչպես հայտնի է, գոյություն ունի Աբովյանի միայն մի տեսակ պատկերը, որի մասին, սակայն, կասկածներ կան, թե այդ նրա իսկական, նրանից քաշված պատկերը չէ, այլ մի ուրիշից քաշվածը, որ իբր թե շատ նման է եղել նրան»[1]:

Այս «գրական բամբասանքի» դեմ ծառացավ այն տարիներին դեռ Աբովյանին նվիրված հեղինակավոր գրականագետ, ներկայումս արվեստագիտության դոկտոր Ռուբեն Զարյանը և վկայակոչելով

---

[1] «Դ I, 354: Նույն խոսքերը՝ թեթև խմբագրված, տե՛ս Ե. Շահազիզ, Խաչատուր Աբովյանի կենսագրությունը, Ե., 1945, էջ 198:



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ
Գործ Լ. Մայդելի

անհետացումից հետո Աբովյանից մնացած գույքի ցուցակները (որոնց կանդրադառնանք ստորև), պարզ ու որոշ հայտարարից, որ մինակ պիմանկարում պահպանված անձնավորությունն իսկապես Խ. Աբովյանն է, և դրա վավերականության վերաբերմամբ կասկածելու ո՛չ մի հիմք չկա[2]*:*

Բայց, ինչպես տեսնում ենք, հետագա տարիները ո՛չ միայն մեկընդմիշտ չվարատեցին հին կասկածը, այլև ավելի խորացրին:

Հիմա արդեն պավառադիտուններըՙ ապատությունն տալով իրենց երևակայությանը, ասում են, որ Աբովյանի որևէ պիմանկար առհասարակ գոյություն չի ունեցել: Ո՛չ ոքի հայտնի չէ, թե նա ի՞նչ տեսք է ունեցել, իսկ տարածված նկարն, եթե կուզենք, երևակայության ծնունդն է մի անհայտ պեղանկարչի, որն իր ստեղծագործական որոնումների ժամանակ, մասամբ, նկատի է ունեցել Աբովյանի ժառանգներից ինչ-որ մեկի (անունը չեն տալիս ու չեն էլ կարող) դիմագծերը:

Ինչպե՞ս կարելի է անտարբեր մնալ, երբ այս չուկայիկ գրույցն ու պատավական բամբասանքը մոլորության մեջ են գցել չատերին, անգամ լուրջ մարդկանց, և ոմանք վերջիններից, տարբեր առիթներով, անճամբ կամ ընկերների միջոցով, դիմել են տաղերիս գրողին՝ հիշյալ խնդրի վերաբերյալ հրապարակային նոր պարզաբանում անելու:

Մենք ընդառաջում ենք այս ցանկություններին, թեպետև գավառադիտունների հետ լրջորեն «վեճի բռնվելն» ու նրանց թյուր «կարծիքները» հանդամանորեն հերքելը աշխարհիս ամենատհաճ պարտականություններից է:

2

Որ Խաչատուր Աբովյանն ունեցել է պիմանկար, այն էլ ստեղծված նրա կենդանության օրոք, անառարկելի ճշմարտություն է՝ հաստատված արժանահավատ վավերագրերով, որոնք, ինչպես հիշեցինք, առաջին անգամ վկայակոչվել են 1948 թվականին, Ռուբեն Զարյանի «Երկու հարցի պատասխան» հոդվածում:

Ծանոթանանք այդ հնագույն վկայություններին.

Աբովյանի խորհրդավոր անհետացումից հինգ և կես ամիս անց, երբ Երևանի գավառական դատարանը իրավական ճեպակերպում է տալիս և պաշտոնական վճիռ կայացնում նրա վախճանի մասին՝ հարցը թողնելով առկախ, մինչև որ կա՛մ Աբովյանն ինքը վերադին

---

[2] *«Գրական թերթ», 1948, № 32, էջ 4, Ռ. Զարյանի «Երկու հարցի պատասխան» հոդվածը:*

կհայտնվի, կամ էլ նրա մահվան հանգամանքները կպարզվեն, ահա՛ այդ որոշման դորությամբ և ընդունված կարգով. մի քանի օր անց, 1848 թ. օգոստոսի 25-ին, Երևանի գավառային խնամակալությունը հանձնարարում է նրա ունեցվածքի խնամակալներին՝ կնոջը (Էմիլյային) և ուսուցիչ Ստ. Վնքիլովին, հանգուցյալի հարազատների և Երևանի հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ ի հայտ բերել և ցուցակագրել Աբովյանից մնացած չարժական ու անշարժ գույքը և առկա ու սպասվելիք գումարները: Այդ ցուցակում էլ, ի շարս այլ իրերի ու ձեռագրերի, առաջին անգամ հիշատակություն ենք գտնում նրա դիմանկարի մասին. «Портрет Христофора Абовьяна, 1 հատ»[3]:

Հաջորդ՝ 1849 թ. հուլիսի 4-ին, երբ Աբովյանի կենդանի լինելու հույսն արդեն մարել էր, և Երևանի գավառային խնամակալության հանձնարարությամբ նրա հագուստներն ու անձնական իրերի ավելորդ մասը վաճառվում է հրապարակային աճուրդով, իսկ կարևորները պատշաճ արձանագրությամբ պահ են տրվում կնոջը՝ Էմիլյա Լոռոլին, համապատասխան ցուցակի 16 և 38-րդ կետերից տեղեկանում ենք, որ կնոջն հանձնված իրերի մեջ նորից անվթար պահպանվել կամ եղել են գրողի երկերի ձեռագրերը և, որ խիստ կարևոր է ներկա խնդրի համար, դիմանկարը՝ «Портрет Христофора Абовьяна»: Իսկ ցուցակի այն այսնակում, ուր հարկ էր ցույց տալ քանակը, նշված է դարձյալ՝ մեկ հատ[4]:

Աբովյանի հիշյալ դիմանկարը նրա այրու՝ տիկին Էմիլյայի մոտ մնաց 1849 թ. հուլիսի 4-ից մինչև 1866 թվականը (գուցե և՝ մինչև մահը, 1870. մարտ), իսկ հետո, չգիտես ի՞նչ իրավունքով, յուրացվեց մի անհայտ անձնավորության կողմից:

Վավերագրերով հաստատված է, որ Աբովյանի որդին՝ Վարպանը (1840–1896), որը 1861 թ. հունվարի 19-ից ուսանում էր Դորպատի համալսարանի տնտեսագիտական բաժնում, իսկ 1863 թ. հունվարից դասաավարությամբ էր պարապում Էստոնական Ճևլլին (Վիլյանդի) քաղաքի մասնավոր դիմնագիանեերից մնկում, երբ վերադարձավ Անդրկովկաս, մորն այլևս կենդանի չգտավ (Էմիլյայի հուղարկավորության նկարում Վարդանը չկա)[5]: Հայրական ժառանգությունը.

---

[3] *Ա № 695ա (90-րդ կետի տակ):*

[4] *Ա № 695բ:*

[5] *Հիշյալ լուսանկարը մեր միջոցով տիկին Վիկտորիա Աբովյանը (գրողի թոռը) հանձնել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին, ուր և պահվում է այժմ:*

այդ թվում նաև Աբովյանի երկասիրությունների ձեռագրերը, բնականաբար, մնացել էին քրոջ՝ Ադելաիդա-Զաքմանդուխտի (1843–1909) մոտ, որի տանը վերջին տարիներին ապրում էր տիկին Էմիլյան: Իսկ Ադելաիդան դեռ 1859-ին ամուսնացել էր Երևանում պաշտոնավարող Գրիգորի Յակովլևիչ Բուժևակու հետ (հարկային տեսուչ էր), երեխաներ ունեցել:

Երկար բաժանումից հետո (1870 °) մանկությ քրոջ հարկի տակ՝ Վարդանը հոր (Խաչատուր Աբովյանի) ձեռագրերը պահում է անմխիթար վիճակում. չաղը՝ ցրված ու կորած, իսկ գիմանկարը՝ ոտայգլխով անհետացած:

Նա անհապաղ տեր է կանգնում ծնողներից մնացած ազգատիկ ժառանգությանը, կարգի բերում հոր ձեռագրերը, յոթ վիսկանքի տակ պնում և ամեն ջանք գործադրում, որ ցրվածներն ևս, որքան կարելի է, հավաքի, չնայած շատ բան նորից մնում է ուրիշների ձեռքին կամ ընդմիշտ կորած: Հետևողական որոնումների շնորհիվ, ի վերջո, Վարդանին հաջողվում է նաև գտնել Աբովյանի նկարի հետքերը:

Ահա՛ թե ինչ է գրում այդ առթիվ տարիներ հետո անցյալի հետաքրքրասեր դործիչներից մեկը, երբեմնի դորպատական, բժիշկ Լևոն Տիգրանյանը (1842–1906):

«Երևանում 1881 թ. մոտ Խաչատուր Աբովյանի որդի Վարդանի մոտ, որ իմ հին ընկերս էր: Նրա մոտ տեսա նրա հոր յուղանկարի պատկերը: Ես շատ ուրախացա, որ գտա մեր հանճարեղ Աբովյանի պատկերը: Վարդանին հարցրի դրա լուսանկարի մասին: Նա ասաց, որ լուսանկար երբեք չի վերցվել: Վարդանն ինձ պատմեց, որ այդ պատկերը 15 տարի շրանակ կորած էր համարվում և պահվում էր մի պարոնի մոտ, որ սևեռականացրել էր: Զգիտեմ, Վարդանն ի՞նչ միջոցներով կրկին ձեռք բերեց»[6]:

Ո՞վ է եղել Աբովյանի գիմանկարը սևեռականացնող «պարոնը», չհաջողվեց պարզել: Մի բան, սակայն, հաստատ է, և այդ անձամբ լսել ենք գրողի թոռնուհուց՝ տիկին Վիկտորիա Աբովյանից. հոր կենդանագիրը Վարդանի ձեռքն է հասնում անմխիթար վիճակում՝ եզրերը մաշված ու պատռոտված. քրոջ (Ադելաիդայի) երեխաներն էին դրա հանցավորները, որոնք այդ ձևով էին «հանաքներ արել» իրենց հանճարեղ պապի հետ:

Ընտանեկան ավանդությունների համաձայն՝ Աբովյանի գիմանկարը վերականգնելու համար Վարդանը խնդրում է նկարիչ Գ. Բաշինջաղյանի աջակցությունը. (Թե՞ ինչ-որ մեկ ուրիշ արվեստագետ.

---

6 «Լումա», 1903, № 5, էջ 14:

տիկին Վիկտորիան լավ չի՛ հիշում): Վերջինս նկարի պատառոտված եզրերը կտրում, ուղղում է, անջատ մասերն իրար մոտ բերում, բաց մնացած տեղերը լրացնում սև գույնի ներկով և ապա՝ ամբողջը փակցնում ամուր ստվարաթղթի վրա:

Նկարն այնուհետև սրբագրություն է դառնում Աբովյանի որդու, Թոռների և մյուս ժառանգների համար, որոնք և 1938 թ. օգոստոսին, գրողից մնացած համարյա բոլոր ձեռագրերի ու նրա ժառանգության շուրջ եղած գրագրությունների մի մասի հետ միասին, պապի պատկերն ևս նվիրում են Հայաստանի գրական (այժմ՝ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի) թանգարանին, ուր և խնամքով պահվում է:

3

Երկու խոսք էլ Աբովյանի դիմանկարից հանված լուսանկարապատճենների մասին, որոնք անցյալում՝ հարյուրավոր օրինակներով, իսկ հիմա՝ հարյուր-հազարավոր, տարածված են հայության շրջանում և շարունակաբար վերատպվում են դասագրքերում, օրացույցներում, գրական-պատմական հետազոտությունների ու այլ կարգի աշխատությունների մեջ:

Այս չնորհակալ գործի նախաձեռնողը Լևոն Տիգրանյանն է: Վերևում մեջբերված վկայության շարունակության մեջ, խոսելով Վարդան Աբովյանի հետ 1881 թ. ունեցած հանդիպման գլխավոր արդյունքի մասին, Տիգրանյանն ավելացնում է. «Ես մեծ դժվարությամբ համոզեցի նրան տալ ինձ այդ պատկերը՝ Թիֆլիզում լուսանկարելու համար, որովհետև կարող էր կորչել, այրվել, և մեր գրականությունը զրկված կլիներ այդ պատկերից: Նա ինձ հավատաց, և ես լուսանկարել տվեցի Թիֆլիզում (1881 թ.), կարծեմ, Բարկանովի մոտ և յուղաներկ պատկերը վերադարձրի իրեն: Այժմ հաչատուր Աբովյանի լուսանկարը կարելի է տեսնել ամեն մի հայի սեղանի վրա, սակայն այդ յուղաներկ պատկերը պետք է այժմ պատկաներ էջմիածնի թանգարանին, որ անկորուստ մնար»[7]:

Դժբախտաբար, 1881 թ. պատվիրված լուսանկարից ո՛չ մի օրինակ չի պահպանվել (գոնե մեզ այդպիսին ծանոթ չէ): Եվ, հակառակ դրան, Տիգրանյանի խոսքերի վրա մազաչափ իսկ կասկածելու իրավունք չունենք: Անառարկելի իրողություն է, որ 80-ական թթ. պատրաստված հիշյալ լուսանկարներից մեկը ժամանակ անց ընկել է Վենետիկի Մխիթարյան վանք, Ղևոնդ Ալիշանի ձեռքը, որը տպագրել է այն իր

---

[7] Նույն տեղում:



ԼՅՈՒԴՎԻԳ ՖՈՆ ՄԱՅԴԵԼ
Ինքնանկար

«Այրարատ» հետազոտության մեջ, 1890 թվականին[8]: Որովհետև «Այրարատի» տպագրությունն սկսվել է 1890-ից էլ առաջ, հետևաբար նկարն Ալիշանին է ուղարկվել ո՛չ ուշ, քան 1889 թվականը: Անհավանական չէ, որ Ալիշանի համար նկար հայթայթողը նույն ինքը՝ Լևոն Տիգրանյանը լիներ:

Երկրորդ անգամ Աբովյանի լուսանկարների արտահանումները (հարկավ, վաճառելու համար) պատվիրվել են 1891 թվականին: Անձամբ մեզ ծանոթ է դրանց առաջին օրինակը, որը Ն. Թ. օգոստոսին Տիֆլիսում ներկայացվել է գրաքննության: Այժմ այն պահվում է տիկին Վիկտորիա Աբովյանի ժառանգների մոտ: Նկարի երկրորդ էջի վրա արված է հետևյալ մակագրությունը. «Дозволено цензурою. Тифлис, 7-го августа 1891 года. Младший цензор: Г...» *(ստորագրությունը չի՛ վերծանվում)*: Նշանակում է՝ այդ տարի, երկրորդ անգամ, Աբովյանի լուսանկարը հանվել է վաճառքի:

1896 թվականին հիշյալ լուսանկարներից մեկն ուղարկելով Մոսկվա, Իսահակ Ժամհարյանցին, Աբովյանի երկերի նոր հրատարակության սկզբում զետեղելու համար, գրողի որդին՝ Վարդանը, կից նամակում ավելացնում է, թե «հորս նկարը, որն ուղարկում եմ Ձեզ, բավական հաջող հանված է նրա իսկական դիմանկարից»[9]: Նույն օրերին գրած մեկ այլ նամակում էլ, որն արդեն ուղղված էր նույն ժողովածուի խմբագրողին (Ստ. Տեր-Սարգսյանցին) և որից մի կտոր վերջինս մեջ է բերել գրքին կցած իր ներածականում («Խմբագրից»), Վարդանը գրել է, թե այդ նկարը «բավական հաջող դուրս է բերել լուսանկարիչ Բարկանովը»[10]: Անտարակույս, Վարդանն իրավացի էր: Ով էլ բաղդատելու լինի հայտնի ու տարածված այդ լուսանկարը Աբովյանի միակ դիմանկարի հետ, արտաստվությունը պիտի գանի հաջող, մի տարբերությամբ միայն, որ լուսանկարիչը դիմանկարի պատռված եղրերից և վերականգնված մասերից խուսափելու համար, պատճենահանելիս, այն առել է ձվաձև չրջանակի մեջ՝ առավել փոքրացնելով նկարի ծավալը:

Էական ո՛չ մի տարբերություն չկա նաև Աբովյանի նկարից Բարկանովի պատրաստած լուսապատճենի հիման վրա արված մոս-

---

8 *Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 297:*

9 *Աբովյանին վերաբերող չգուցակագրված նյութեր Գրականության և արվեստի թանգարանում (նամակ Ի. Ժամհարյանցին, սևագիր):*

10 *«Խաչատուր Աբովյանի երկերը», հրատարակեց Իսահակ Ժամհարյանց, Մոսկվա, 1897, էջ է (Վ. Աբովյանի նամակը Ստ. Տեր-Սարգսյանցին ամբողջական ձևով անծանոթ է մեզ):*

կովյան տպագրության (1897) և Ալիշանի՝ ավելի վաղ հրատարակածի ու պահպանված գրաքննչական օրինակի միջև նույնպես:

Այս ամենը հիմք են տալիս եզրակացնելու, որ Բարկանովին երկու անգամ է պատվիրված եղել պատրաստելու Աբովյանի լուսանկարը, մեկը՝ 1881 թ., Լ. Տիգրանյանի միջոցով, և մյուսը՝ 1891-ին, Վարդան Աբովյանի ջանքերով: Ամենայն հավանականությամբ՝ Բարկանովը վերջին անգամ օգտագործել է հին սևանկար ապակին: Մեր ձեռքն, այսպիսով, հասել է երկրորդի՝ գրաքննությանը ներկայացված օրինակը սոսկ, մինչդեռ առաջինի պաշտոնապես թույլատրված օրինակը, որ լինելու էր Լ. Տիգրանյանի մոտ, պիտի կորած համարել: Հայաստանյան դիվաններում և Լ. Տիգրանյանի թողոններում 1881 թ. պատվիրած լուսանկարից որևէ օրինակ երևան չի եկել: Միակը, թերևս, Ալիշանի ձեռքին եղածն է, որի բնօրինակը, սակայն, մեզ մատչելի չէ:

Տպագրական եղանակով՝ Աբովյանի դիմանկարն առաջին անգամ, ըստ մեր ունեցած տվյալների, հրատարակվել է 1890 թվականին, հոչակավոր Ալիշանի՝ քանիցս հիշված «Այրարատ» աշխատության մեջ (էջ 297): Դրանից ուղիղ յոթ տարի հետո (1897) լուսանկարն երևում է Ռուսաստանում տպագրվող հայերեն գրքերի մեջ, նախ՝ Մոսկվայում, «Ինաչատուր Աբովյանի երկերը» ժողովածուի սկզբում, ըստ Բարկանովի վերևում հիշված լուսապատճենի (փորագրությունը պատրաստվել է Շերեր, Նաբհոլց և ընկ. վիմագրատանը), ապա Թիֆլիսում, Ե. Լալայանի հրատարակած «Ազգագրական հանդեսի» Բ գրքում ու նրա ջանքերով, դարձյալ ըստ Բարկանովի լուսանկարածի, միայն թե վերջինի փորագրությունը պատրաստված էր Վիեննայի Մխիթարյանների տպարանում, բավականաչափ վաղ[11]:

Աբովյանի նկարի այս երեք տպագիր տարբերակները (Վենետիկինը և Մոսկվայինը գրեթե նույնն են) այնուհետև չատերն են վերալուսանկարել և արտատպել[12]: Շարունակաբար լուսանկարից նոր

---

11 *Աբովյանի այս պատկերը, որպես նկարդիր, պետք է տեղ գտներ «Ազգագրական հանդեսի» առաջին գրքում (լույս է տեսել 1895-ին), բայց համապատասխան հոդվածը («Խ. Աբովյան որպես ազգագրագետ»), անշուշտ, նաև նկարը, ինչ-ինչ պատճառով՝ փոխանցվել են հանդեսի երկրորդ գրքին (էջ 316–320) ու մնացել կիսատ: Ուրեմն՝ Լալայանի հրատարակած օրինակը պատրաստվել է 1895 թ. էլ առաջ:*

12 *ԳԱԹ-ում պահվում է այդօրինակ մի լուսանկար՝ որոշ չափումներով արտանկարված Աբովյանի Երկերի մոսկովյան հրատարակությունից, Հեռավոր Արևելքի Ամուրյան երկրամասի Նիկոլսկ-Ուսուրիյսկի քաղաքում հիմնավորված հայազգի լուսանկարիչ Ս. Մ. Բուգադյանցի արվեստանոցում, ամենայն հավանականությամբ՝ ներկա դարի սկզբներին: Արդյոք սույնը չէ՞ ծնունդ տվողը հետագայում տարածված այն լեգենդի, թե իբր*

լուսանկար հանելով կամ տպագրվածներն արտանկարելով, ապա նաև անձնական ճաշակով չտկուսմներ (ռետուշ) անելով՝ լուսանկարիչները քայլ առ քայլ հեռանում էին բնագրից, աղոտացնում մեծ գրողի իրական դիմանկարը:

Հիմա Աբովյանի տարբեր ձևավորմամբ, բայց միշտ միևնույն դիրքով (այդ արդեն անկարելի էր փոխել) շատ լուսանկարներ կան, որոնց բոլորի մայր օրինակը միակ յուղանկարն է: Անվարժ աչքն անգամ չի կարող այդ չհաստատել:

4

Դառնանք այժմ բուն դիմանկարին: Նյութը, որի վրա հավերժացված են Խ. Աբովյանի արտաքին տեսքն ու դիմագծերը (գոտկատեղից վեր, աչխարհիկ տարազով, դեմքը փոքր-ինչ աջ թեքած, այտամորուսներով) սպիտակ և ամուր թուղթ է (երբեմնի Աղեքսանդրյան կոչված տեսակի), որ հետագայում, վերանորոգման ժամանակ, փակցվել է բարակ տախտակ հիշեցնող ամուր խավաքարտի վրա: Սկզբնական չափսերը հայտնի չեն, այժմյանը՝ 20,5×27,5 սմ. ամփոփված է մինչև չքեղության ու համապատասխան մեծության շրջանակի մեջ (ապակիով): Նախկին վերանորոգման հետքերն ու երբեմնի պատռվածքները երևում են հստակորեն: Նկարի վրա (կամ հակառակ էջում) այն երփնագրած արվեստագետի ստորագրությունը կամ այլ կարգի մակագրություններ չկան:

Որ պատկերված անձնավորությունն իսկապես Խաչատուր Աբովյանն է, հաստատվում է որդու վկայություններով, իսկ որդին՝ Վարդանն, իր հորը շատ լավ պիտի հիշեր ու ճանաչեր (երբ Խաչատուր Աբովյանն անհայտ կորավ, Վարդանը ութ տարեկան էր), չենք ասում՝ գոնե ավելի լավ, քան մեր օրերի դավառագիտուններն ու նրանց հոգևոր հայրերը, որոնք կասկածանք են սերմանում իրական դիմանկարի վերաբերմամբ:

Հիշենք որդու վկայություններից երկուսը, որ, ինչքան պիտենք, տակավին անծանոթ են հետազոտողներին:

1896 թ. հունվարի 4-ին բանակցություններ վարելով Մ. Բարխուդարյանի հետ՝ հոր երկերի մոսկովյան հրատարակության իրականացման և, առաջիկայում, տպագրվելիք ժողովածուի սկզբում անպայման հեղինակի (Խ. Աբովյանի) նկարը գետեղելու շուրջ, Վ. Աբովյանն, ի

գոյություն է ունեցել Աբովյանի գերեզմանի լուսանկարը (գերեզմա՞ն, թե՞ գերեզմանաքար, որ որպես թե ցույց են տվել Օխտակ քաղաքում): Այն հետո ... այրվել է դժբախտ պատահարից, իսկ գերեզմանը ... կորել:

դեպ, գրում էր. «Այդ պատկերը մի լուսանկար է նորա իսկական յուղաներկ դիմանկարից՝ ստեղծված դեռ երիտասարդ հասակումը, և հենց այդ է պատճառը, որ նկարի մեջ այդպես չահել է երևում»[13]:

Դրանից չատ չանցած՝ հոր երկերի հրատարակիչ, մոսկովաբնակ Իսահակ Ժամհարյանցին (†15.XII.1902) հաղորդելով իր վերջնական պայմանները, Վ. Աբովյանը վերստին կրկնում էր. «Նոր հրատարակության ժամանակ խնդրում եմ գետեղել հորս նկարը, որն ուղարկում եմ Ձեզ և որը բավական հաջող հանված է նրա իսկական դիմանկարից՝ նկարված յուղաներկերով, երբ նա եղել է ընդամենը քսան կամ քսանմեկ տարեկան»[14]:

Ժամհարյանցն ընդունում է Վարդան Աբովյանի առաջարկած այս և մյուս պայմանները (բացառությամբ «Վերքի» դլխավոր դերվաղներին վերաբերող առանձին տեսարաններ գրքի համապատասխան մասերում գետեղելու ցանկության): «Խաչատուր Աբովյանի երկերի» մոսկովյան հրատարակության սկզբում իսկապես որ կա Աբովյանի «լուսատիպ կենդանագիրը», որ պատրաստված է, ինչպես վերևում ասացինք, Բարկանովի ծանոթ լուսանկարի հիման վրա, Շերերի, Նաբհոլցի և ընկերության գործատանը:

Վերևի քաղվածքներն անուղղակիորեն բանալի են տալիս պարզելու նաև, թե ե՞րբ և որտե՞ղ է ստեղծվել Աբովյանի մյուս դիմանկարը: Որդու ասելով՝ հայրն այն ժամանակ եղել է **«երիտասարդ»**, **«ընդամենը քսան կամ քսանմեկ տարեկան»**, խոսքեր, որոնք հազիվ թե պատահականորեն ասված լինեին և, անտարակույս, հենված են ընտանեկան ավանդություններին վրա:

Աբովյանն առաջին անգամ իր վանական տարազը փոխել և աշխարհական, այսինքն՝ եվրոպական զգեստները է հագել Դորպատում, 1830 թ. սեպտեմբերի չուրջ 10-ից սկսած[15]: Նմանապես, նրա քսան կամ քսանմեկ տարին լրացել էր 1830 թ. աշնանը (կամ, ամենաուշը, 1831 թ. գարնանը), երբ նա այլևս էջմիածնի վանքում չէր ապրում, երկրորդ տարին է ինչ ուսանում էր Դորպատում՝ նախապատրաստվելու համար ուսուցչի և դաստիարակի կոչման ի պետս հայ ժողովրդի[16]:

---

13 ԳԱԹ, Մ. Բարխուդարյանի հավաքածու, № 3:

14 Նույն տեղում, Խ. Աբովյանին վերաբերող չցուցակագրված նյութեր: Նամակը ռուսերեն է, սևագիր, բերում ենք բառացի թարգմանությամբ:

15 Տե՛ս Ե X, 131:

16 Մենք ելնում ենք Աբովյանի՝ 1809 թ. վերջերին ծնված լինելու իրողությունից, որին հանգել ենք սկզբնաղբյուրների հանդամանալից

Աբովյանի դիմանկարի վավերականության և Դորպատում ստեղծված լինելու օգտին են խոսում 1906 թ. Տիղիսում, ռուսերեն լեզվով լույս տեսած «Хачатур Абовян. По поводу столетия со дня его рождения» գրքույկի հեղինակները՝ «Арм. и Аб.»-ը (Аб.-ը, երևի, գրողի թոռներից մեկն է՝ Կոստանդինը կամ Լևոնը): Նրանք գրում են. «Եթե մենք այժմ ունենք Աբովյանի նկարը, ապա դրա համար պարտական ենք նույն Տիգրանյանին, որը Վարդան Աբովյանի մոտ գտնելով այն՝ հանված տակավին ուսանողության տարիներին, բնօրինակից լուսանկարել է տվել» (էջ 19):

Պրոֆ. Ֆ. Պարրոտի հետ Արարատի գագաթ բարձրացած լինելը Աբովյանին դարձրել էր համընդհանուր հետաքրքրության առարկա: Շատերն էին ձգտում նրա հետ ծանոթություն հաստատելու: Նման պարագայում, դորպատյան նկարիչների հետաքրքրությունն Աբովյանի անձով՝ միանգամայն հասկանալի է: Այն տարիներին Ռուսիայում և Եվրոպայում դեռ լուսանկարչություն չկար. մարդկանց պատկերները հանում էին կամ տավերանկարի ձևով, կամ երևնագրությամբ (յուղաներկ, ջրաներկ, մատիտանկար, դրչանկար և այլն), կամ վիմագրական եղանակով (դրավյուրա), կամ էլ քանդակագործ ձևքով: Բոլոր ձևերն էլ շատ տարածված էին Միջնադարի երկրամասում և, մասնավորապես, Դորպատում: Շատ հնարավոր ու հավանական է, որ Պարրոտի հորդորով կամ հանձնարարությամբ է ստեղծվել Աբովյանի յուղաներկ դիմանկարը, թեպետ այդ հաստատող ուղղակի տվյալ առայժմ չկա մեր ձեռքին:

Աբովյանի դիմանկարի հավաստիության օգտին խոսող մի ուրիշ վկայություն ևս ունենք՝ հրապարակ հանված ավելի քան յոթանասուն տարի առաջ, բայց մոռացված ու անտեսված: 1912 թ. դեկտեմբերի 21-ին Տիղիսում, Տ. Նազարյանի գրական-գեղարվեստական ասպնջում, տեղի է ունենում Աբովյանի հիշատակին նվիրված երեկույթ, որի ժամանակ ի ցույց են դրվում Աբովյանի որոշ ձեռագրեր (մասնավորապես «Վերք Հայաստանի» վեպի մաքրագիր ինքնագիրը՝ գրաբննիչ Հ. Ղայթմազյանցի թուլլտվությամբ), նամականեր (Եվրեմ կաթողիկոսի

քննության ճանապարհով, տե՛ս մեր «Խաչատուր Աբովյան: Կյանքը, գործը, ժամանակը: «Մենդյան թվականը» գլուխը, էջ 48–71, նաև՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 199–209, մեր «Նորից Խաչատուր Աբովյանի ծննդյան թվականի մասին» հոդվածը: Ավանդական 1804–1805 թթ. դեպքում Աբովյանը քսան կամ քսանմեկ տարեկան պիտի լիներ 1825 թ., երբ իրականում Ներսիսյան դպրոցի աշակերտ էր և Անտոն եպիսկոպոսի փոքրավորը, այնինչ դիմանկարի Աբովյանը և էջմիածնական դպիրը անհամատեղելի են և՛ տարազով, և՛ հոգեբանությամբ:

կոնդակը, Պարրոտի ավետաբեր նամակը՝ Դորպատ ուղևորվելու առթիվ), զանազան նկարներ և, այս վերջինների շարքում, Աբովյանի «յուղաներկ պատկերը»:

Ինչպես ծանուցում էր «Մշակի» թղթակիցը, երեկոյին ներկա են լինում նաև Աբովյանի թոռնուհիները (Վիկտորիան ու Շուշանիկը) և թոռներից մեկը (Թերևս, Կոստանդինը):

Երբ Շիրվանզադեն և ուրիշ ելույթ ունեցողներ քննադատում են Անդրեաս Տեր-Մարուքյանի ստեղծած՝ Աբովյանի արձանի մանրակերտը՝ պատճառաբանելով թե այն բնավ նման չէ Աբովյանին, դեմքը խիստ մանկական է, ընդհանուր կերտվածքին աններդաշնակ, մարմնի մասերն անհամաչափ են և այլն, հոդվածագրի վկայությամբ՝ «Աբովյանի թոռների կողմից բացատրություն է տրվում, որ իրենց պապի պատկերը նկարված է Դորպատում (ուրեմն՝ 1830–35 թթ. միջև—Պ. Հ.), իսկական դեմքից (այսինքն՝ բուն իսկ Աբովյանից — Պ. Հ.)»[17]*:*

Նշանակում է՝ նրա թոռները պապի դիմանկարի հավաստիության վերաբերմամբ ամենևին չէին կասկածում:

Նախորդ էջերում մեր մեջ բերած երեք-չորս վավերագրերն ու այս վկայություններն այնպիսի զորավոր կռվաններ են, որ գիտական ու բարոյական ո՛չ մի հիմք չկա, դեթ այսուհետև, վեճի առարկա դարձնել Աբովյանի միակ դիմանկարի և այն երևինագրելու ժամանակի խնդիրը, և այդ առթիվ զանազան անճանց արտահայտած դրավոր ու բանավոր տարակուսանքները, իբրև անիրազեկության արդյունք, պետք է առհիշտ օրակարգից հանել:

Արվեստագիտության դոկտոր Ռ. Զարյանն իր՝ արդեն հիշված հոդվածում (1948 թ.) ենթադրել է, որ Աբովյանի դիմանկարի հեղինակը Ստեփանոս Ներսիսյանն է, և այն երևինագրված է «ամենայն հավանականությամբ՝ 1836-ին»[18]*: Հօգուտ իր այս վարկածի՝ գիտնականը ջանացել է մատնանշել կռվաններ, որոնց ելման կետը, սակայն, առաջին հերթին Ստեփանոս Ներսիսյանի կյանքի պետերբուրգյան դրվագն է: Բայց արի տե՛ս, որ մեկ ուրիշը՝ կերպարվեստի պատմաբան Մ. Սարգսյանն էլ, նույն տարվա համարյա նույն օրերին (1948 թ., սեպտեմբեր), ջանացել է հավաստացնել, թե Աբովյանի «պորտրեն կարող է նկարված լինել 1840-ական թվականների հայ նկարիչներից մեկի, ամենայն հավանականությամբ, Ստեփան*

---

17 Ն. Ն., *Խաչատուր Աբովյանի հիշատակին: — «Մշակ» (լրագիր), 1912, դեկտեմբերի 28, № 290: Նույն լրատվությունից տեղեկանում ենք, որ դրող Աթրպետի ասելով՝ «Աբովյանի որդին՝ Վարդանը, շատ նման է նրա հորը, նույնպես և փոքր թոռը (իմա՛ Աշոտ Աբովյանը—Պ. Հ.)»: Ուրիշները, սակայն, ժխտում են հայր և որդի Աբովյանների դիմագծերի ընդհանրությունը:*

18 *«Գրական թերթ», 1948, № 32, էջ 4:*

Ներսիսյանի կողմից», թե դիմանկարում պատկերված է «բավական հասուն և բարեկիրթ դեմքով (մոտ 30–40 տարեկան) համարձակ և խիզախ հայացքով Աբովյանը»[19]*: Հարկավ, Սարգսյանն էլ մեջառել է բերել իր պատճառաբանությունները: Բայց ցավով պիտի արձանագրենք, որ խնդրի լուծման այդ երկու փորձն էլ հակասում են Աբովյանի որդու անմիջական ցուցմունքներին (որոնց, ինչպես երևում է, ծանոթ չեն եղել հարդարժան դիտնականները): Ջենք կարող չասել նաև, որ Մ. Սարգսյանի վարկածը միանգամայն անհող է, և ահա՛ թե ինչու. 1834-ին ուղևորվելով Տիղիսից Պետերբուրգ՝ նկարիչ Սահեանոս Ներսիսյանը Անդրկովկաս վերադարձավ 1846 թ. աշնանը միայն*[20]*, երբ Աբովյանը պաշտոնավարում էր Երևանում: Հաջորդ տարվանից միայն նրանք կարող էին միմյանց հետ հանդիպումներ ունենալ: Եթե Ներսիսյանը նկարած լիներ Խ. Աբովյանին, ապա դրա առիթը կարող էր ներկայանալ կամ 1847 թ. հունվար–փետրվարին, կամ նույն տարվա հուլիս—օգոստոսին, կամ էլ հաջորդ, 1848 թ. հունվարին*[21]*: Հիշված ժամանակահատվածներում Աբովյանն, իսկապես, Երևանից ուղևորվել է Տիղիս, բոլորը միասին, մոտավոր հաշվով՝ երկուս ու կես ամիս մնացել այնտեղ, թերևս նաև, ի թիվս երբեմնի ծանոթների, հանդիպել նկարիչ Ստ. Ներսիսյանին: Մի պահ ընդունենք, որ նման հանդիպում տեղի է ունեցել, և Ներսիսյանն էլ նկարել է Աբովյանին: Այդ դեպքում Աբովյանի դիմանկարը 1847 կամ 1848 թթ. ստեղծագործություն պիտի լիներ:*

Բայց այս ամենի դեմ արդարացիորեն բողոքում է հենց առկա դիմանկարը: Դեռևս Դորպատում, 1832 թ. ամռանը, Աբովյանի գլխին սպիտակ մազեր կային: Նա խոստովանում է, որ տիկին Շարլոտա Գրասը նկատելով այդ՝ ցավով ասել է. «Դուք տակաւին կայք ի գարնան հասակի ձերոյ. պարտ է ձեզ տակաւին ածել, ծաղկել, այլ ո՛չ ալեւորիլ...»[22]*: Պատկերացրե՛ք, թե ինչպիսին կլինեին Աբովյանի մազերը 1847 կամ 1848 թթ. ... Ավելի լավ է թողնենք այս տխուր իրողությունը, քանի որ դիմանկարի Աբովյանը չատ երիտասարդ է, մազերը՝ խարտյաշ, և դեմատներին էլ դեռ անընտել, — բոլոր դեպքերում՝ 1832 թ. կեսերից առաջ նկարված:*

---

19 Մ. Սարգսյան, *Խաչատուր Աբովյանի կերպարը հայ արվեստի մեջ («Սովետական գրականություն և արվեստ», 1948, № 9, էջ 156–157):*

20 *Մկրտիչ Էմինի՝ 1846 թ. սեպտեմբերի 16-ին (Մոսկվայից) Գ. Ախվերդյանին ուղղված նամակից պարզվում է, որ նա Ստ. Ներսիսյանի միջոցով ուղարկել է Լարիոսը (ֆրանսերեն բառարան), տե՛ս ԳԱԹ, Մ. Էմինի թղթոններ, II բաժին, № 30:*

21 *ՀԱ, ֆ. 1, ց. 1, դ. 789, թ. 3 և 44, գ. 2222, թ. 28, դ. 793, թ. 4: Ե X, 276, 281 և 300:*

22 *Ե VI, 235:*

Ռ. Զարյանի կարծիքն, իհարկե, կարող էր հավանական լինել, եթե մեջառեղում չլիներին Աբովյանի որդու խոսքերը՝ դիմանկարի ստեղծման ժամանակ Հոր տարիքի մասին: 1836 թ. Աբովյանը 27-ամյա երիտասարդ էր և ո՛չ՝ քսան կամ քսանմեկ: Ավելի վաղ էլ, դեռևս Հայաստանում, Ներսիսյանը դարձյալ չէր կարող նկարած լինել Աբովյանին, քանի որ նրանք կարող էին հանդիպած լինել ամենավաղը 1829-ի աշնանը, երբ նկարիչը հազիվ տասնչորս տարեկան էր, իսկ Աբովյանն էլ՝ վանական (դպիր):

Այսպիսով, քանի որ դիմանկարում պատկերվածը 1830 թվականի աշնան կամ, ամենաուշը, հաջորդ տարվա սկզբների Աբովյանն է՝ եվրոպական տարազով, դեռ չատ երիտասարդ ու խարտյաշ մազերով- ինքնին բացառվում է այն ստեղծող նկարչի հայկական ծագումը, որովհետև այդ չըջանում Աբովյանն ապրում էր Դորպատում, իսկ Դորպատում Աբովյանից բացի ուրիշ հայ առհասարակ չկար, ո՞ւր թե նկարիչ: Ինչ վերաբերում է բուն Հայաստանին, ինչպես նաև՝ Տիղիսին, Նոր Նախիջևանին, Մոսկվային կամ Պետերբուրգին, ապա հիշյալ կենտրոններում էլ համապատասխան ոճով և արանգներով երփնագրող որևէ հայ նկարիչ, անցյալ դարի 20–30 թթ., ծանոթ չէ: Հանրաճանաչները Մկրտում, Հակոբ և Աղաթոն Հովնաթանյաններն էին, նրանց ոճն էլ միանգամայն ուրիշ էր:

Հակառակ դրան, նույն տարիներին Լիփլանդիայում և, մասնավորապես, Դորպատում ապրել և ստեղծագործել են բազմաթիվ նկարիչներ, որոնցից մի քանիսի հետ, այլևայլ առիթներով, չփվել է նաև Աբովյանը: Այդ նկարիչները, միաժամանակ, կապված էին Դորպատի համալսարանին կամ աշխատում էին վերջինիս կից նկարչական դպրոցում, պծանկարել են շատ պատախոսների դիմանկարներ: Հարկ է հիշել նրանցից հատկապես Հորսին, որոնց ստեղծագործական կյանքի համապատասխան ժամանակահատվածը համընկնում է Աբովյանի այնտեղ դտնվելու տարիներին: Կարլ Առւդուստ Զննֆ (1770–1838), Առւդուստ Մատթիաս Հազեն (1794–1878), Գեորգ Ֆրիդրիխ Շլատեր (1804–1870) և Ֆրիդրիխ Լուդվիգ ֆոն Մայդել (1795–1846): Թերևս նաև՝ Էրնստ Հերման Շլիխտինգ (1812–1890), եթե միայն սա և Աբովյանի դորպատյան ալբոմում հուշաթերթիկ թողած Հ. Շլիխտինգը միևնույն անձնավորությունն են, բայց այդ դեպքում Շլիխտինգի հետ Աբովյանի հանդիպումները՝ լինելով մտերմական, կարճատև են եղել, 1834 թ. առաջին ամիսներին[23], այնինչ դիմանկարը ստեղծվել է նրանց ծանոթությունից առնվազն երեք տարի առաջ:

---

23 *Ա № 488ա, թ. 14: Էստոնիայում ու Դորպատում նույն չրջանում գործող նկարիչներից հայտնի են նաև՝ Առւդուստ Ֆելիքս Կլարա (1790–1850), Վոլդեմար Ֆրիդրիխ Կրյուգեր (1808–1894) և Ֆրիդրիխ Սիգիզմունդ Շտերն (1812–1889), բայց սրանց ստեղծագործությունների բնույթն ու երփնադրման ոճը հարազատության եզրեր չունեն Աբովյանի դիմանկարի հետ:*

Վերոհիշյալներից՝ կարլ Զենֆը, ճիշտ է, ունի դիմանկարների շարք, բայց միայն պղնձի վրա փորագրված: Յուղաներկերով աշխատանքներ նրա ստեղծագործությունների ցանկում գրեթե չեն հանդիպում, կամ վաղ տարիների ու այլ ոճի գործեր են: Պատահական չէր, որ նրան նվիրված աշխատություններից մեկը խորագրված է «Karl August Senff; Ein baltischer Kupferstecher» (*Հեղինակ՝ Վ. Նոյման, Ռևֆել, 1895*):

Ա. Հագենը գործածում էր յուղաներկ, և դա անառարկելի է, բայց դիմանկարներ, ընդհանրապես, չէր նկարում: Ավելին, մի անգամ, երբ Աբովյանը նրան դիմում է հարազատ որդու դիմանկարը ստեղծելու առաջարկով, Հագենը հրաժարվում է՝ իրեն թույլ համարելով դեղանկարչության հիշյալ մարզում[24]: Հագենի ստեղծագործական տարբերքը և նախընտրած ժանրը բնանկարն էր, Լիֆլանդիայի բնության գողտրիկ անկյուններն ու պատմական վայրերը թղթի վրա կամ փորագրություն՝ մեծ հավերժացնելը: Ի դեպ, նա է պրոֆ. Պարրոտի ճեպանկարների հիման ստեղծել Էջմիածնի ու Արարատի դունավոր նկարները, որոնք կցված են «Reise zum Ararat» գրքին (*Բեռլին, 1834*) կամ էլ տարածված՝ առանձին օրինակներով (*Թիվ 4*)[25], որոնցից մեկն անցյալ դարի 40-ական թթ. կախված էր Էջմիածնի վեհարանում[26]:

Ծերիգրիխ Շլատտերի մասին էլ համարյա նույնը պիտի ասել, ինչ նախորդ երկուսի: Սա էլ գծանկարիչ է, Դորպատում աշխատում էր *1828*-ից, ստեղծել է Էստոնիայի տարբեր վայրերի ու Դորպատ քաղաքի բազմաթիվ տեսարաններ, համալսարանի պրոֆեսորների շատ դիմանկարներ, միայն թե փորագրության միջոցով կամ պատճենով (հատուկ պատրաստված դունավոր մատիտներով): Նրանից էլ յուղաներկերով երփնագրված դիմանկար ծանոթ չէ: Տարաուբի թանգարաններին և արվեստաբաններին անձամբ արած մեր հարցումին այլ պատասխան չտրվեց:

Մանրամասնությունները այս և հիշված մյուս բոլոր նկարիչների մասին տե՛ս W. Vaga, Kunst Tartus XIX sayandil, Tallin, 1971 *(Համապատասխան հատվածները)*:

24 *Ե* VI, *140*:

25 *Այդ նկարներն են՝ 1. Մեծ Մասիսը և սր. Հակոբի վանքը (մեզ ծանոթ է երկու տարբերակ, մեկը՝ անտիպ): — 2. Մեծ ու Փոքր Մասիսները և Էջմիածնի վանքը: — 3. Փոքր և Մեծ Մասիսները թուրքական* Syrbaghan *(Սիրբաքան, Արբահո՞ն — Պ. Հ.) դյուղից: — 4. Մեծ ու Փոքր Մասիսները Քանաքեռից:*

26 *Տե՛ս* M. Wagner, Reise nach dem Ararat und dem Hochland Armenien, Stuttgart und Tübingen, 1848, S. 105. «*Նույն սենյակում կախված է Արարատի տեսարան ըստ Պարրոտի*»:

Ուրիշ է ռոմանտիկ արվեստագետ Ֆրիդրիխ Ֆոն Մայդելը: Նա առանձնանում է բոլորից: Դորպատում (Մայդելն այստեղ հիմնավորվեց 1829-ին), Աբովյանի ուսումնառության տարիներին, նա հիմնել էր վիմագրատուն: Անձամբ նկարազարդել է հյուսիսային ավանդությունների և էստոնական առասպելների հրատարակությունները, Վ. Ա. Ժուկովսկու առանձին երկեր («Ունդինա», «Նալ և Դամայանտի»), բիբլիական «Երգ երգոցը» (Հին Կտակարանից), Պուշկինի «Գնչուները»: Հայտնի է, վերջապես, նրա սքանչելի ինքնանկարը՝ մոտավորապես 1829 թվականի գործ: Հատկապես այս վերջինը՝ մարդու դիմագծերը վերարտադրելու եղանակով, դույների ընտրությամբ, շրթունքների, քթի ու աչքերի դծագրման ինքնատիպությամբ, սերտ ազգակցություն ունի Աբովյանի դիմանկարի հետ: Երկուսի վրա էլ զգացվում են միևնույն ձեռքի հետքերը:

19-րդ դարի էստոն գեղարվեստի լավագույն գիտակներից մեկը՝ Տարտուի համալսարանի պրոֆեսոր Վոլդեմար Վագան, 1965 թ. հուլիսին, մեր խնդիրքով՝ բաղդատեց իրար հետ Աբովյանի դիմանկարն ու Մայդելի ինքնանկարը և հանգեց նույն եզրակացության: Աբովյանի դիմանկարի ցարդ անծանոթ հեղինակը Մայդելն է, այլապես անկարելի պիտի լինի բացատրել երկու դիմանկարների երիպնագրման ոճի անկոծկելի միասնությունը:

Խուսափելով կտրուկ եզրակացություններից, բայց և առաջնորդվելով անձնական տպավորություններով ու բանասերի բնազդով, նաև՝ հաշվի նստելով էստոն մասնագետների կարծիքի հետ, վերջնական դատավճիռ կայացնելու իրավունքը թողնում եմ ավելի հեղինակավոր արվեստագետների՝ ընդ որում մինչև այդ պահը Մայդելին համարելով դիմանկարի ամենահավանական ու միակ հեղինակ:

5

Դառնանք այժմ վերջին հարցին:

Արդյո՞ք հարազատորեն են վերարտադրված այս միակ նկարի մեջ Խաչատուր Աբովյանի դիմագծերը: Սույն, չափազանց կարևոր խնդրի հիմնավոր լուծումը, առկա հնարավորությունների սահմաններում, գրեթե անկարելի է: Գոնե այժմ բացառված է դրողի երկրորդ դիմանկարի գոյությունը: Թեպետև հնարավոր էր, որ Աբովյանի դորպատյան բարեկամներից որևէ մեկը, ասենք՝ Թեկուզ Ֆ. Պարրոտը, Պաուլ Դալը, տիկին Ֆրիդլենդերը, Թ. Գրասը կամ նրա մայրը՝ Շարլոտե Գրասը, ի հիշատակ նկարել կամ փորագրել տային նրա դիմանկարը և պահեին: Այո՛, միանգամայն հնարավոր էր, բայց նման վարկածի համար անկարող եղանք որևէ կռվան գտնել, թեպետ դրա համար չխնայեցինք և՛ անձ, և՛ ժամանակ: Աբովյանի դորպատյան ալբոմի հավելյալ թերթիկներից մեկի վրա կա Մայդելին վերագրվող դիմանկարի միջոցով անմահացած Աբովյանին միայն հեռավոր

կերպով հիշեցնող մի երիտասարդի պորտրեն (մատիտանկար), բայց պնդել, թե դա էս Աբովյանն է, դժվարանում ենք: Այդ ենթադրական Աբովյանի դեմքը անսովոր է ու սառը, խիտ մազերը հետ սանրած, դիմագծերը ոչ այնքան նման Աբովյանի ապագա թոռներին, որոնց մենք տեսել ենք. նկարված է 1835 թվականին: Ո՞վ իմանա, թերևս դա՞ է իսկական Աբովյանը[27]: Հարցի լուծման միակ ուղին, այսպիսով, մնում է գրողի երկերում և նրա ժամանակակիցների հուշերում ցրված մեկ-երկու վկայություններն համեմատաբար հավաքումը, որից հետո՝ ընդհանուր գծերով միայն հնարավոր կլինի ասել, թե ինչպիսին է եղել Խ. Աբովյանի արտաքինն ըստ իր խոսքերի և ժամանակակիցների վկայության, և այդ հուշ-պատկերը բաղդատելով միակ դիմանկարի հետ՝ դատավճիռ կայացնել:

Իր արտաքինի մասին Աբովյանը հազվադեպ է խոսել՝ այն էլ կյանքի վերջին շրջանում ու խիստ ժլատ, ընդհանուր ձևով: Ըստ այդմ՝ տատանմամբ հատակում Աբովյանն եղել է «կարմրաթուշիկ, լիքը և թարմ տեսքով» մի մանուկ («...по полному, румяному и свежему виду моему...»), ու այդ պատճառով էլ Եփրեմ կաթողիկոսը սովորություն ուներ նրան կոչելու իմ գառնուկ[28]: — «Իմ բավական մելամաղձ, ավելի վանող, քան գրավիչ դեմքը և կարճ հասակը...» («.. mein ziemlich schwermütiges, mehr zurückstossendes, als anziehendes Gesicht und kurze Gestalt...») — այսպես է Աբովյանն իրեն ներկայացնում 1840–1841 թթ. գրված մի ակնարկում՝ վերհիշելով 1836 թ. վերջերին (թե՞ 1837 թ. ընթացքում) Տիղիսում իր հետ պատահած մի տհաճ դիպված[29]:

Երկու վկայություն-ինքնախոստովանություններն վրա էլ Աբովյանի կենսագիրներն ուշադրություն չեն դարձրել, այնինչ, կարծես, պարտադիր է դարձել անպայմանորեն մեջ բերելու բարեկամուհիներից մեկի՝ Աբովյանի արտաքինի մասին ասած խոսքերը (1832 թ. ամառ), որոնք արձանագրված են դորպատյան օրագրերում. «Մինչ դլուխ ձեր, երևի ինձ, թե լի է բազում հանճարովք», — որ ասել է տիկին Գրասը և ավելացրել. «Հերք ձեր կարի հասա են և ամուր»[30]:

Ստացվում է, այսպիսով, որ Աբովյանը եղել է կարճահասակ, մեծ գլխով, հասա ու ամուր մազերով, մանկության օրերին՝ լիքը, թարմ դեմքով ու կարմիր թշերով, իսկ շուրջ 30-ամյա հասակում՝ դեմքը թախծոտ էր ու այդ պատճառով էլ՝ ավելի վանող, քան գրավիչ:

---

27 Ա № 488ա, թ. 23:

28 Ե VII, 132 [177]: Վկայությունն արված է 1847 թ. վերջերին:

29 Ե, հ. VIII, 151–152 [189]:

30 Ե, հ. VI, 235:

Արտաքինի մասին մի քանի խոսք էլ գտնում ենք «Թուրքի աղջիկը» նովելում. «ոսի սերթուկը հագիս, չալկեն գլխիս, երեսս անմիրուք...»[31]: Բայց այստեղ, ցավոք, դիմագծերի մասին, որոնք էական են, ոչինչ չի ասված:

Այս տվյալներից և ո՛չ մեկն, ըստ էության, չի հակասում միակ դիմանկարին, ընդհակառակը, ավելի վստահություն է ներշնչում նրա հարազատության վերաբերյալ:

Ժամանակակիցներից, անմիջականորեն, Պերճ Պռոշյանն ունի դիտողություն նրա արտաքինի մասին, որ խիստ ծանրակշիռ է. «Որքան հիշում եմ, Աբովյանը միջին հասակով, սպիտակադեմ, գեղեցիկ մի երիտասարդ էր, նմանվում էր յուր Վարդանին, բայց ոչ նրա պես հաստ և գեր (չատ էլ հաստ չէր), չատ դյուրաշարժ և ճարպիկ էր, սրախոս էր և քաղցրաբարո», — գրել է նա անցյալ դարու 90-ական թվականներին, իբրև պատասխան դրողի առաջին կենսագիրներից մեկի (Ն. Տեր-Կարապետյանի) հարցումի[32]:

Ժամանակակիցներից մեկ ուրիշն էլ՝ Նահապետ Աթանասյան (1839, 15.10 — 1919, 22.7), որի հուշերում շատ կասկածելի բաներ կան, սառը ջուր է մաղում բոլորի վրա ասելով. «Իմ տեսած Աբովյանը նման չէր այժմյան լուսանկարիչների լուսյա ընծայած նկարներին. լավ հիշում եմ, նա ո՛չ շատ բարձր, ո՛չ ցածր, ո՛չ գեր և ո՛չ ևս նիհար, այլ միջին հասակի, բարեձև կազմվածքով, կլոր գլխով, բայց չագանակագույն մազերով, ածիլված երեսով, խիզախ դեմքով, գեղեցիկ երիտասարդ էր, մոտ քառասունից-քառասուն և հինգ տարեկան»[33]: Աթանասյանն, ինչպես գրել է, Աբովյանին տեսել է իր տասնմեկ տարեկան հասակում, 1850 թվականին: Անհավատալի բան, որովհետև դրանից երկու տարի առաջ Աբովյանն արդեն անհետացել էր. այնպես որ այս վկայության հետ լրջորեն հաշվի նստելը և միակ դիմանկարի հարազատությունը մերժելը կլիներ անիմաստ:

Եվ հետո, լուսանկարիչների կողմից տարածված նկարներում Աբովյանի դիմագծերը շատ են աղավաղված, երբ համեմատում ենք դրանք Մայդելին վերագրվող դիմանկարի հետ, այնպես որ Աթանասյանն իրավունք ուներ վիճարկելու դրանց հարազատությունը:

---

31 *Ե, հ. IV, 26:*

32 *Ն. Տ. Կ., 1897, էջ 109: Այդ նամակի ամբողջական բնագիրը հնարավոր չեղավ ձեռք բերել, որ, մեր համոզմամբ, պահվում է Բաքվում, Ն. Տեր-Կարապետյանի ժառանգների մոտ: Մանոթ հատվածները ի մի բերված՝ տե՛ս «Լրաբեր», 1970, № 3, մեր «Նյութեր Պերճ Պռոշյանի կենսագրության համար» հրապարակումը (էջ 87):*

33 *Ա № 77, լրացուցիչ (անցյալում պահվել է Հովհ. Թումանյանի թողոններում):*

Գրող-բանահավաք Ս. Համալյանցը ևս գրի է առել մի քանի հուշ՝ որպես թե Աբովյանի ընկերներից ու աշակերտներից լսած: Աբովյանի դրպատյան հարևաններից մեկը՝ Օտտո Դումբերգը, իբր նրան ասել է, թե Աբովյանը «հասակով կարճ էր, բայց ամրակազմ ու գեղեցիկ. կռվկապիկը թխադեմ են, իսկ նա ավելի խարտյաշ էր»[34]: Աբովյանի մանավոր դպրոցի առաջին աշակերտներից մեկի՝ Գ. Աքիմյանցի վկայությունն էլ Համալյանցն այսպես է վերարտադրել. «Հասակով կարճ էր ու ամուր կազմվածքով, դեմքով չհիավուն, գլխի մազերը խարտյաշ, վիզը կարճ, շուտ բորբոքվող, ոգևորվող, բնել ու մորուքը մաքուր սափրած»[35]: Մի երկրորդ աշակերտ՝ Իվան Կուկուջանյանց, գրեթե նույնն է ասել. «Որքան հիշում եմ, նա կլոր երեսով, սիրուն, չհավուն օքմին էր. բակենբարդ ուներ, բեղեր չէր պահում, ուրախասիրտ, լայնալանջ, միջին հասակից ցած, չարժուն մարդ էր»[36]:

Տակավին 1908 թվականին Գյուտ քահանա Աղանյանցի «Հայրենիք» լրագրի թերթոններում հրատարակած իր հոդվածում Համալյանցն ունի նույնպիսի մի դրառում ևս. «Աշակերտների նկարագրելով՝ Աբովյանը կարճավիզ էր, գլխի մազը խարտյաշ, դեմքը չհիավուն, բեղ ու միրուք մաքուր ածված: Հասակը կարճ, մարմինն ամրակազմ: Հագուստը ֆորմենի էր... խոսելիս կամ պարապելիս աչքի էր ընկնում դյուրաբորբոք բնավորությունը: Խիստ զգայուն էր, ամենաթեթև առիթից բարկանում էր»: Համալյանցը պնդում էր, որ այս տվյալներն իրեն հաղորդել են Գ. Աքիմյանը, Ի. Խանղալամյանը և Դ. Դավրիչյանը[37]:

Համալյանցի դրառումների նկատմամբ մեր անվստահությունն ու տարակուսանքները որոշակի հիմքեր ունեն. մանավանդ որ պահպանվել են Աբովյանի ուրիշ աշակերտների վկայությունների նախնական դրառումները՝ կատարված հենց Համալյանցի ձեռքով (1911 թ. հունվարի 1-ին և 1913 թ. ապրիլի 19-ին), որոնցից պարզվում է, որ մասնավորապես Կուկուջանյանցն ասել է. «Որքան հիշում եմ՝ նա (Աբովյանը — Պ. Հ.) կլոր դեմքով մարդ էր, չեկ չէր, բակենբարդ ուներ, բեղեր չէր պահում. լայն կրծքով, միջին հասակից ցած, չարժուն մարդ էր»[38]:

Այսպիսով՝ ըստ ժամանակակիցների ու այս վերջին երևքի՝ Աբովյանը եղել է միջին կամ միջինից ցածր հասակով մարդ, ամուր,

---

34 *«ԺԱՄ», ե., 1941, էջ 97:*

35 *Նույն տեղում, էջ 109 (ձեռքի տակ ենք ունեցել հուշերի ձեռագրերը):*

36 *Նույն տեղում, էջ 123:*

37 *«Հայրենիք», ազգային-քաղաքական լրագիր, Թիֆլիս, 1908, № 10, էջ 2–3:*

38 *ԳԱԹ, Ս. Համալյանցի թղթոններ, բաժին V, № 6, էջ 14 (ընդգծումը մերն է — Պ. Հ.):*

բարեձև կազմվածքով, լայնալանջ, կլոր դլխով ու կլոր երեսով, կարճ վզով: Նորությունը դեմքի ու մազերի գույներն են՝ խարտյաշ կամ բաց չագանակագույն մազեր, որ գրեթե նույն բանն են, և սպիտակադեմ կամ չեկավուն, որ անհամատեղելի են:

Աբովյանի մազերը, իսկապես, ըստ դիմանկարի էլ խարտյաշ են, այնինչ դեմքը, իրականում, ավելի սպիտակավուն է, ինչպես վկայել են նաև Պռոշյանն ու Կուկուջանյանցը, քան չեկ, որպիսի վկայության իրական հաստատիրոջը Քամալյանցն սկզբներում չի՛ նշել ու խոսել է միայն ընդհանուր ձևով: Այս էլ ասենք, որ Աբովյանն ընդհանրապես հմայիչ անձնավորություն էր, առողջ, աչխուժ. այդպես են նրան բնութագրել առաջին հանդիպման ժամանակ հեռակա ծանոթները 1832 թ. հունիսին. «Ես ամենևին այլազդ նկարագրէի ինձ պարոն Ապովեանն՝ նիհար, տկար. այլ ա՛յս աչխուժութիւն, ա՛յս առողջութիւն... Զնոյն ասէ և Վիլհելմ Գրաս»[39]: Միակ դիմանկարն, այսպիսով, չի՛ հակասում նաև ժամանակակիցների՝ ընդհանուր ձևով ասածների հիման վրա մեր վերականգնած պատաքինին, ուստի և այդ դիմանկարի հարազատության վրա կասկածելը կլիներ դարձյալ ավելորդ մանրախնդրություն:

Վերջապես՝ չմոռանանք, որ դեղարվեստը կենդանագրություն չէ, և ամենայն մանրամասնությամբ հայտնի, մեզ փոքրուց ծանոթ մարդկանց դիմանկարներն երբեմն կարող են խորթ և անհարազատ թվալ, ինչպես տվյալ դեպքում Աբովյանի պատկերը նրա ինքնակոչ աշակերտ Նահապետ Աթանասյանին:

Արվեստագետ-նկարիչն, ընդհանրապես, ձեռնարկելով ստեղծել որևէ դիմանկար, ո՛չ թե ձգտում է բնորդի դեմքի ու գլեսաների լուսանկարչական վերարտադրության, այլ նրա բնավորության ամենաէական դծերի բացահայտման, որոնք ընդհանրապես թաքնված են լինում մարդ-էակի աչքերի ու դիմագծերի խորքում և որոնց երանգները սոսկական մահկանացուներն անկարող են որսալ: Նկարչի հիմնական խնդիրն, այսպիսով, այդ անորսալին ընկալելի դարձնելն է, դեմքի վերարտադրությամբ անհատի հոգին ցոլացնելը: Այս առումով՝ համաշխարհային և հայ դեղանկարչությունը, Թորոս Ռոսլինից մինչև Մարտիրոս Սարյան, շատ գլուխգործոցներ ունի, միաժամանակ և՝ անկյանք մարմնավորումներ:

Ցավն այն է, որ արվեստի դավառագիտուն մեկնաբանների համար կատարյալը միշտ էլ այդ անկյանք մարմնավորումներն են: Սարյանի անզուգական դիմանկարների առջև շատ տկարամիտներ երբեմն տրտնջում են, թե՝ նման չեն, դեմքի առանձին մասեր կազմնախոսական ձևերին հակասում են, անբնական են: Բայց արի տե՛ս, որ

---

39 ե VI, 200:

ինչից սրտնջում են և ինչը պախարակում, իրականում դիմանկարի ամենահաջողված մանրամասներից են լինում...

Այս հայեցակետից դննելով Աբովյանի դիմանկարը՝ դժվար չէ նկատել, որ նրա ստեղծագործողին չի հաջողվել գլուղի դեմքի վրա ցոլացնել այն բացառիկ խոր ներքինն ու անկոտրելի կամքը, այն ռոմանտիկ և հուզառատ հոգին, այն ալեկոծ ներաշխարհն ու ծովածավալ տառապանքները, որոնք բաժին էին ընկել և ուղեկցում էին մեծ քանաքեռցուն՝ վաղ մանկությունից, և որպիսին ներկայանում է մեզ Աբովյանն իր ստեղծագործություններով:

Բայց եկեք տեսնե՛նք, մի՞թե Շիլլերի ու Գյոթեի, Պուշկինի, Լերմոնտովի և ուրիշ չատերի դիմանկարները նմանապես համազոր են նրանց մարմնական ու հոգեկան ամբողջությանը, հարազատորեն են վերարտագրում թվածս անձանց խառնվածքն ու մտավոր հարստությունը:

Մայդելը նկարել է մի քանամյա, խոհուն երիտասարդի, որը նոր միայն հրաժեշտ տված լինելով իր հայրենիքին, իր երբեմնի վանական զգեստներին և կենսապայմաններին, տակավին չէր հարմարվել նոր միջավայրին, դեռ զգուշորեն էր հաղորդակցվում իր շրջապատի հետ, խուսափում էր իր երազանքների ու առօրյա հոգսերի մասին խոսել, դատել ու դատափետել... Իսկ երբ մարդ քաշվում ու թաքցնում է իր ներքինը, նրա հոգու ու մարմնի կեսական գծերը դառնում են դժվարընթեռնելի՝ ավելացրած դրան, որ Աբովյանի դիմանկարը ստեղծողը օտարերկրացի էր, հայի ազգային բնավորությանը, պատմությանը, ինչպես նաև իր բնորդի տառապանքներին ու տենչանքներին համարյա անտեղյակ:

Մայդելը վերարտադրել է Աբովյանի՝ առաջին հայացքից ընկալելի դիմագծերն ու արտաքինը, այն էլ իր անցած վարպետության դպրոցի կաղապարներով, իր մշակած սկզբունքներով ու, մի քիչ էլ, հյուսիսցու սառնությամբ: Ու թեպետ դիմանկարի մեջ կրակ չկա, բայց կա առարկայական ճշգրտություն, կա լրջություն, մասամբ և՝ խոհ: Լուրջ ու խոհուն էր Աբովյանը, ու այդպիսին է նաև դիմանկարում: Ուստի պետք է դուրգուրանքով պահենք այն և երախտագիտությամբ հիշենք դիմանկարն ստեղծող նկարչին՝ Ջրիդրիխ Լուդվիգ Ֆոն Մայդելին:

ԴՈՐՊԱՏՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

(ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ)

XIX դարի առաջին տասնամյակները հայ ժողովրդի հանրային, քաղաքական և հոգևոր կյանքի պատմության ամենաօրհասական պահերից են: Պարսկական ու թուրքական բռնակալների հարյուրամյակներ շարունակվող տիրապետության բերած անվերջանալի չարիքները, Մայր Հայրենիքի քառատումը թշնամական տերությունների միջև և ինքնուրույն պետականության կորուստը, ժողովրդի պարբերական ու բռնի դաղթեցումները, մայրենի լեզվի ու կրոնի նկատմամբ կիրառվող բռնությունները ու թուրքացման քաղաքականությունը նրկիրն ու ժողովրդին հասցրել էին անասելի քայքայման ու հոգևոր թշվառության: Նոսրացել էր բնակչությունը, քանդվել էին նրբեմնի ծաղկուն բնակավայրերը, փակվել կրթական հաստատությունները, լռել հոգևոր կենտրոնները... Վիթխարի անդունդ էր գոյացել հայոց հին քաղաքակրթության և արդիականության միջև: Ազգն այլևս չէր հասկանում դասական հայերենը, որով ավելի քան հազար չորս հարյուր տարի դրվում էին հայոց հոգևոր մշակույթի հուշարձանները: Համաժողովրդական հայերենին փոխարինելու էին եկել թուրքթաթարական բառերով այլանդակված տեղական բարբառները, որոնք հասկանալի էին միայն շատ նեղ շրջանների համար և այլևս անկարող էին համախմբել ազգի ուժերը, նախապատրաստել նրան հոգևոր սխրանքների, առաջնորդել հանուն վեհ իդեալների պայքարի: Արյունն ու թշնամու սուրը, ահն ու սարսափն իշխում էին ամենուր՝ խանճարուրի մեջ խեղդվելով ընդվզման ամենաանշան փորձն իսկ:

Հասել էր մի պահ, երբ, կարծես, ամեն ինչի վերջն էր, և հայության վերացումը՝ անտարակուսելի իրողություն:

Ազգերի ու ժողովուրդների հոգեվարքի պահերին, երբեմն, անհավատալի բաներ են տեղի ունենում: Եվ դրա աննախադեպ օրինակը ավելց մահվան պատապարտված Հայությունը. սկսվեց մի խոլական ու անդիջում պայքար մահվան դեմ, դրչով ու սրով, մի վերջին, օրհասական պայքար, որ թնդեռև հաղարավոր ծաղիկ կյանքեր տարավ, բայց և նվաճվեց մի բուռ Հայության գոյատևման իրավունքը:

Ռուսիայից եկող մոտալուտ ազատագրության հույսը վանեց վհատության մշուշը, իսկ հայրենանվեր հայորդիների միտանական

ջանքերը սկիզբ դրին ազգի հոգևոր վերածնութեանն ու զարթոնքին, որի տվյալ շրջափուլը անխզելիորեն կապված է Խաչատուր Աբովյանի նվիրական անվան հետ:

Շատ փոքրուց կրթվելով ու դաստիարակվելով վանական միջավայրում և սահմանված լինելով հոգևոր կոչման՝ Աբովյանը կարծում էր, թե նախախնամության կամքով է իրեն բաժին ընկել այդ մեծ առաքելությունը, և հանուն դրա էր տքնում ու խորհում, աղոթում ու աղերսում: Բայց ավելի լավ է լսենք իր իսկ խոստովանությունը.

«Ապրել և մեռնել հայրենիքի համար, *— ահա տակավին ամենավաղ պատանեկան տարիներից իմ ընտրած նպատակը: Դեռ ճնշված լինելով ինչպես բռնակալության, նույնպես և տգիտության բեռների ներքո, դեռ ո՛չ մի գաղափար չունենալով եվրոպական կրթության ազդեցության մասին, ո՛չ մի նեցուկ և, մինչև իսկ, ո՛չ մի միջոց՝ հասնելու իմ նախագծած նպատակին, ես հոգուս մեջ փայփայում էի միայն այդ մտածությունը, միայն այդ ցանկությամբ այրվում... Մեր սուրբ հայրերի գոհասեղանի առջև իմ տված առաջին երդումը, նրանց դերեզմանների վրա թափած դառն արցունքները, նրանց թանկագին աճյուններին նվիրած ի խորոց սրտի հառաչանքները եղել են այն բանի համար, որ նրանք լինեն իմ թաքուն պահապան հրեշտակները և բաց անեն իմ առջև հօգուտ իրենց որբ թողած մանուկների՝ դոհվելու ճանապարհը»*[1]*:*

«Ուղևորություն դեպի Անիի ավերակները» խորագրով ճամփորդական խորհրդածությունների մեջ էլ՝ վերստին բաց անելով սիրտը և վերհիշելով անցած ու գնացած օրերի իր հույսերն ու երազանքները՝ հետևյալ հույժ կարևոր լրացումն է անում. «Պետրոս Ամենացու գործունեության մասին չիմանալով տակավին ոչ մի խոսք՝ ես այն ժամանակները հույս ունեի դժբախտ իմ հայրենիքն ազատագրել բարբարոսների լծից, եթե ինձ բախտ վիճակվեր ընկնելու Եվրոպայի միապետների ոտքերը և աղերսել նրանց օգնությունը...»[2]*:*

Գիտելիքների լայն պաշարը, աշխարհըմբռնումն ու փորձը, որ Աբովյանը ձեռք էր բերել հայրենի ուսումնական հաստատություններում՝ Էջմիածնի վանական խցերում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, խիստ սահմանափակ ու աղքատիկ էին և անբավարար՝

---

[1] *Ե X, 254, 257–258: Այս տողերի բնագիրը ռուսերեն է, որը թեպետև ունի հայկական մտածողության տարրեր ու շատ է քնարական, բայց հեղինակի ոճի ու ոգու հայելին է, անկեղծ, անմիջական ու վարակող: Հայերեն ներկա թարգմանությունը վերանայված է:*

[2] *Ե VII, 133 (177):*

ժողովրդական ուսուցչի և ազգային դաստիարակի կոչման նախապատրաստվելու համար: Հենց ինքը հրաշալիորեն պիտակյում էր այդ, երբ տարիներ հետո գրում էր. «Առանց նախապես լուսավորվելու, — այսպես էր խոսում իմ մեջ ներքին ձայնը, — անհնար կլինի ինձ համար պիտանի դառնալու մի որևէ բանի»[3]:

Մինչև 1829 թ. ամառ՝ այս սուրբ նպատակին հասնելու համար Աբովյանի ձեռնարկած բոլոր փորձերը ձախողվում էին: Ահա՛ այդ պատճառով, ինչպես ինքն է գրում, և «այդ նպատակով, քանի՛-քանի՛ անգամ, թողել եմ իմ հայրական տունը՝ փախչելով, ինքս էլ չիմանալով, թե ուր: Հանցավորմամբ ընկերները, այս ապարդյուն որոնումների ժամանակ ինձ հանդիպած դժվարությունները, չքավորությունը և, մինչև իսկ, վտանգները, ո՛չ մի, ո՛չ մի բան չկարողացավ հանգցնել իմ մեջ այդ հոգեկան լույսը...»[4]:

Արևելյան Հայաստանի ազատագրումը և ռուսական հաղթական զորքերի առաջացումը մինչև ալեհեր Մասիսներ՝ լուրջ հույսեր են ներշնչում Աբովյանին՝ օրավուր ահագնացող բաղձանքին հասնելու համար: Դրանից չատ չանցած՝ նա հանդիպեց Դորպատի համալսարանի պրոֆեսոր Յոհան Յակոբ Շրիդրիխ Պարրոտին (1791–1841): Արարատյան հսկա լեռան երկնասլաց գագաթի հաղթահարումն ու վերելքը և Պարրոտի անչահախնդիր աջակցությունը հարթում են ամեն դժվարություն, և 1830 թ. սեպտեմբերի 3-ի երեկոյան ժամանելով Դորպատ՝ Աբովյանն ավելի քան հինգ տարի սովորում, կատարելագործվում, աքնում է այստեղ, վերածնվում հոգևորես՝ իր աշխարհատեսությամբ ու հայացքներով հավասարվելով ժամանակի ամենաառաջադեմ մտածողներին: Այս մասին չատ է խոսվել, և այդ էչ, որ պիտի կրկննանք, այլ քայլ առ քայլ հետևենք այն ծրագրի կատարմանը, որ պրոֆ. Պարրոտը կազմել էր հատկապես իր հայ աշակերտի կրթության ու դաստիարակության համար:

Բայց նախքան այդ մի փոքրիկ չեղում.

Աբովյանի ուսանողական գործը, որ առաջներում պահվում էր Տարտուում, էստոնական ԽՍՀ պետական պատմական դիվանում, իսկ 1964 թ. սեպտեմբերին Խորհրդային Էստոնիայի կառավարության կողմից նվիրաբերվելով Հայաստանին՝ ներկայումս հանձնված է Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին ու միացվել է Աբովյանի թողոններին, ցավոք, մեծ թերիներ ունի: Այդ գործում ամփոփված վավերագրերի ճնշող մեծամասնությունը

---

[3] *Ե X, 254 [258]:*

[4] *Նույն տեղում:*

վերաբերում է դրամական հարցերի: Դրանց օգնությամբ կարելի է անսխալ ստուգել, թե ո՞ր թվականի, ո՞ր ամսի, ո՞ր օրն են Աբովյանին բաց թողնվել համապատասխան եռամսյակի թոշակը, բայց անհնար է պարզել, թե նա ո՞ւմ մոտ, ե՞րբ և ի՞նչ առարկաներ է սովորել, ինչի՞ց քննություններ հանձնել և ի՞նչ գնահատականներ ստացել: Գործում բացակայում են նմանաբնույթ գրությունները, անգամ բնագրերն ու սևագրերը այն մի քանի փաստաթղթերի և Աբովյանի դիմումների, որոնց պատճենները, բարեբախտաբար, մնացել են նրա անձնական թղթերի մեջ (Երևանի թանգարանում):

Անտեսման արժանի չէ և այն իրողությունը, որ Աբովյանի ուսանողական գործի վրա դրոշմված է «Հատ. I», որ ենթադրել է տալիս, թե ժամանակին եղել է նաև մի երկրորդ գործ, որի մեջ հավաքված են եղել զուտ կրթական բնույթի նյութեր ու հրահանգներ: Այդ վավերագրերն այժմ անվերադարձ կորած պիտի համարել, և Աբովյանի ուսումնառության ընթացքի ու ծրագրերի մասին տեղեկություններ որոնելիս՝ հիմնականում պիտի հենվել գրողի օրագրերի, նամակների և օժանդակ այլ նյութերի վրա: Վերջին կարգի պատառիկների և հատվածական նյութերի ընձեռած տվյալների հիման վրա էլ գրված են հետագա էջերը:

Դորպատի համալսարանի պրոֆեսոր և դպրոցական հանձնաժողովի անդամ Ֆ. Պարրոտի մարդասիրությունը, հանրության և ազգերի հոգևոր կյանքի զարգացման օրենքների մասին պատկերացումները, հասարակական կյանքի վերափոխման վերաբերյալ նրա փայփայած իդեալները և, մասնավորապես, հայ ժողովրդի լուսավորության ուղղությամբ հանդես բերած հոգածումներն իրենց վառ դրսևորումն ու առարկայական կերպարանքն են ստացել Խաչատուր Աբովյանի ուսման վերաբերյալ կազմած ծրագրերում: Աբովյանն այդ առումով յուրօրինակ փորձաքար էր: Եթե նրա կրթության համար կազմված ծրագիրն ակնկալվող արդյունքները տար, Պարրոտը խորհուրդ էր տալիս Ռուսաստանի հանրային կրթության մինիստրության ղեկավարներին և Անդրկովկասի գլխավոր կառավարիչ Պասկևիչին՝ կրկնելու նույն փորձն ավելի լայն ծրագրով. «Ես չեմ համարձակվում բարձր իշխանությանն առաջարկելու ընդարձակ ու մեծ ծախքեր պահանջող մի ծրագիր, իմ մեջ միտք հղացավ սկզբում առաջարկել լոկ մի հասարակ փորձ», — ասված է նրա համապատասխան զեկուցագրում, որը գրված էր 1830 թ. մարտի 5-ին[5]:

---

5 Ս. Աբովյանի ուսանողական գործը, թ. 4բ:

Իսկ ո՞րն է այդ վերջի էությունը. «Երբ ես Հայկական մարզում էի,— վկայհիշում է Պարրոտն այդ նույն նոթերում,— հաճախ էի առիթ ունենում համոզվելու, որ լավագույնս օժտված և հույժ գործունյա հայ ժողովուրդը, պատշաճ ղեկավարության բացակայության պատճառով, դանվում է մտավոր զարգացման անչափ ցածր աստիճանի վրա: Մինչև անգամ քրիստոնեական կրոնի վերաբերմամբ, որ դավանում է հայ ժողովուրդը, ունի ծայրահեղորեն անբավարար տեղեկություններ և նմանապես նվազ հասու է այդ կրոնի վեհ սկզբունքներին, չնայած, որ հայ հոգևորականությունը վայելում է շատ մեծ հարգանք...

Ողջ Երևանի մարզն ու Նախիջևանը՝ հայերի այդ բնիկ հայրենիքը, չունեն ուսումնական և ո՛չ մի հաստատություն. բացառություն չի կազմում նաև էջմիածինը՝ կաթողիկոսների գահանիստը:

Հայերը..., — գրում է այնուհետև Պարրոտը, — հպարտանում են իրենց կրոնական դավանանքով, որը նրանց պատկերացումներով՝ ամենից ավելի ինքնատիպն է և պատմականորեն հիմնավորվածը...

Հայի կրոնական այս գիտակցությունն էլ... հենց այն կետն է, որից միայն սկսելով՝ կարելի է առաջ տանել այդ ազգի մտավոր զարգացումը: Չի կարելի, ասկայն, պահանջել, որ դա իրագործեր հայ հոգևորականությունը, որն ինքը, բացառությամբ մի քանի հատուկենտ արժանավոր այրերի, հազիվ թե դանվելիս լինի մտավոր զարգացման ավելի բարձր աստիճանի վրա, քան ժողովուրդը: Ամենից անհրաժեշտն ու նպատակահարմար միջոցը, ներկա դեպքում, հենց այդ ազգի մի֊ջից ժողովրդի համար ուսուցիչներ պատրաստելն է, ընդ որում, հնարավորության դեպքում, ընտրությունը պետք է ընկնի այն անձանց վրա, որոնք միաժամանակ պատրաստվում են հոգևոր կոչման»[6]*:*

Այս նկատումների մեջ հատուկ ուշադրության էին առնվում հայերի կրոնական ըմբռնումները, որոնք բխում էին Պարրոտի այն անխախտ համոզումից ու հավատից, թե «որևէ ազգի գոյության հիմնաքարերը» «լուսավորությունն ու կրթությունն են՝ միացած իսկական քրիստոնեական մտածողության հետ»[7]*:*

Հոգևոր կոչման համար սահմանված 20-ամյա Աբովյանը հարմար թեկնածու էր: Նա ո՛չ միայն այրվում էր իր հայրենակիցների լուսավորությանը նվիրվելու ցանկությամբ, այլ մի որոշ առումով էլ նախապատրաստված էր: Նա գիտեր հայոց հին ու նոր լեզուները, իր ազգի ու կրոնի պատմությունը, ինչպես նաև ինքնակրթությամբ, իսկ

---

6 Նույն տեղում:

7 Ն X, *239 [243]:*

ավելի առաջ՝ Թիֆլիսի դպրոցում, սովորել էր ռուսաց ճոխ ու հարուստ լեզուն ու, մասամբ էլ՝ լատիներեն: Բայց որպեսզի նա կարողանար հայրենակիցների կարիքները լի ու լի բավարարող ուսուցիչ դառնալ, հարկ էր, որ նաև ուսաներ պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, երկրաչափություն, գերմաներեն և կատարելագործվեր ռուսերենի մեջ: Այս վերջին գիտություններն ու լեզուներն էլ, ըստ Պարրոտի, Աբովյանը պետք է յուրացներ երկու տարվա ընթացքում ու հետևյալ հերթականությամբ. «Նա պետք է առաջին տարին ռուսերեն գրքերով սովորեր ռուսաց լեզուն, երկրորդ տարին արդեն՝ իր զորավոր հիշողության և ջանադրության շնորհիվ ի վիճակի կլիներ, հենց թեկուզ գործնականում, այն չափով յուրացնել գերմաներենը, որպեսզի ուսումնասիրեր նաև գերմաներեն աշխատություններ, առներ մասնավոր դասեր ու նաև, եթե նրան թույլատրվեր, հաճախեր հրապարակային այս կամ այն դասախոսությանը»[8]:

Ուրեմն՝ ապագա հայ ժողովրդական ուսուցչին, որը պետք է վերափոխեր մի ողջ ազգի հոգևոր ու տնտեսական կյանքը, հարկավոր էր հիմնավորապես իմանալ՝ իր մայրենի լեզուն, ազգի և եկեղեցու պատմությունը, գերմաներեն, ռուսերեն ու լատիներեն, պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն և երկրաչափություն:

Ֆ. Պարրոտի ծրագիրը քննության հանձնվեց Ռուսաստանի ժողովրդական լուսավորության մինիստր, իշխան Կ. Լիվենին, իսկ այնուհետև, որոշ խմբագրությամբ, ուղարկվեց Մինիստրների կոմիտեին ու արքունիք՝ օգոստափառ կայսեր հաճությունն ստանալու: Կայսրն իր հավանությունը տվեց 1830 թ. մարտի 23-ին:

Ծրագրի վերջին տարբերակով նկատի էր առնվում և այն պարագան, որ եթե անհրաժեշտություն կար Աբովյանին հիմնավորապես նախապատրաստելու ուսուցչի կոչման, ապա նա պետք է Դորպատում մնար ո՛չ թե երկու, այլ երեք տարի, որպեսզի այդ ընթացքում ո՛չ միայն հիմնավոր տեղեկություններ ձեռք բերեր գիտությունների ու լեզուների վերաբերյալ, այլև սովորեր դրանք ավանդելու ձևերը: Անշուշտ, սա կարևոր հանգամանք էր ու անհրաժեշտ լրացում, որ աչքաթող էր արել Պարրոտը կամ, միտումնավոր, լռել:

Առաջին դասերն Աբովյանի հետ պարապում են 1830 թ. սեպտեմբերի 10-ին: Առժամանակ նրա ուսուցիչը միայն Ֆ. Պարրոտն էր, որն հենց սկզբից, մեծագույն պատրաստակամությամբ ու անվճար՝ իր վրա էր առել այդ հոգնեցուցիչ բեռը: Նույն օրվանից էլ, հավանաբար, չլինելով հանդերձ ակադեմիական (համալսարանական)

---

8 Խ. Աբովյանի ուսանողական գործը, թ. 5:

ուսանող, Աբովյանը վոխում է իր տարազը և հագնում է ուսանողական համազգեստ:

Այս առաջին տարեկեսին կամ, ավելի ճիշտ, 4 ամիսներին, Աբովյանը սովորում է գերմաներեն, ռուսերեն ու մաթեմատիկա (վերջինիս տակ պետք է հասկանալ թվաբանություն): Անհետաքրքիր չեն այդ առթիվ Աբովյանի օրագրային գրառումները. «Սկիզբն դասառուԹեան իմոյ ի լեզու գերմանացւոց. կարելն և կարելն վասն իմ գտեարակ և խրատ, զի ես այնպէս վասն աշակերտաց իմոյ պարտ եմ առնել: Բարերարն իմ ինքնին գրէ զօրինակ վասն իմ ուղղադրութեան. յերկարումն այսր դասառուԹեան մինչև զամիսս քաղումս. յամենայն առաւօտու դասառուԹիւն իմ զղրուցադրուԹիւնս»[9]:

Գոթական գրերի՝ մանրանկարներ հիշեցնող ոլորագծերը թղթի վրա գրոշմելու դժվարին արվեստը Աբովյանը տիրապետում է մոտ երկու շաբաթում, հետո սկսում է գրել ու հեգել գերմաներեն առանձին բառեր, նախադասություններ և փոքրիկ պատմվածքներ ու հորդորներ: Պարբոտն Աբովյանի հետ առաջին օրերից սկսած պարապում է նաև ռուսերեն, բայց չուտով էլ ընդհատում, քանի որ Աբովյանի պիտելիքներն այդ առումով բավարար էին ու, թերևս, ավելի:

Հնգամսյա անխոնջ վարժություններից հետո, ի վերջո, Աբովյանը հաղթահարում է լեզվական ամենամեծ արդելքը՝ մայրենի լեզվի պես յուրացնում է գերմաներենը, և անսպասելի առաջ չարժվում՝ իր ուղղախոսությամբ ու առոգանությամբ զարմացնելով փորձված մանկավարժներին անգամ:

Բայց այդ հինգ ամիսներին աչքաթող չեն արվում նաև մյուս գիտությունները: Պարբոտի հավանությամբ՝ Աբովյանի հետ թվաբանություն է պարապում մասնավոր ուսուցիչ Յոհան Բլումենբերգը (1802–1848), որն իր դասերն սկսում է սեպտեմբերի վերջերից և, ինչպես երևում է, իրրև ձեռնարկ, օտագործում Կառուսբերգի «Demonstrative Rechenkunst» դասագիրքը[10]: Տնտեսագիտության ուսանող, ապա՝ Դորպատի համալսարանի պրոֆեսոր Յոհան Թեոդոր Գրասը (1806–1872) սովորեցնում է աշխարհագրություն: Այս վերջինն էլ իր դասաոլությունն սկսում է նոյեմբերից: Սկզբներում Գրասը տվյալ օրվա դասի ամբողջ նյութը թարգմանում էր ռուսերեն ու այդ ձևով հաղորդում, որ Աբովյանը դյուրությամբ ըմբռներ: Բայց այդպիսի հոգնություն սանն իր ուսուցչին միայն կարճ ժամանակ

---

9 Ն VI, *11:*

10 Պ. Հակոբյան, *Խաչատուր Աբովյան, կյանքը, գործը, ժամանակը (1809–1836), էջ 408–409:*

պատճառեց: Հետաքրքիր մի մանրուք ևս. Աբովյանի գրավոր աշխատանքներն ստուգելիս՝ Գրասը դիտավորյալ չէր ուղղում բոլոր սխալները, որպեսզի աշակերտը չհուսահատվեր[11]: Աբովյանի երկրորդ ուսուցիչը երբեմնի ուսանող, արևելագետ Գուիդո Վիլհելմ Վալտերն էր (1804–1831), որի օգնությամբ նա սովորում է պատմություն ու գերմաներեն՝ այդ նպատակով նրա քնակարանն այցելելով 1830 թ. դեկտեմբերից: Իբրև փոխհատուցում, Աբովյանը Վալտերին սովորեցնում է հայոց լեզու (հարկավ, գրաբար) և օգնում գերմաներեն թարգմանել վաղ միջնադարյան Հայաստանի հանճարեղ մատենագիր Մովսես Խորենացու Հայոց պատմությունը: Վերջապես՝ Աբովյանի ուսուցիչներից է եղել նաև Մարտին Ասմուսը (1784–1844), որը ծանոթ դեմք էր դորպատյան շրջաններում: Նա պահում էր մասնավոր օրիորդաց դպրոց և ժամանակին բախտ էր ունեցել աշակերտելու Պեստալոցցուն: Թե Աբովյանը նրա մոտ որոշակիորեն ի՞նչ էր սովորում, պարզված չէ:

1831 թ. առաջին տարեկեսին (իսկ Աբովյանի սովորելիք առարկաները, համալսարանական կարգի հետևությամբ, բաշխվում էին կիսամյակներով կամ սեմեստրներով) Աբովյանն ուսանում էր՝ հին աշխարհի պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն և «մաթեմատիկական արհեստներ» անունով ինչ-որ առարկա, որ, գուցե թե, Ասմուսի ավանդածն էր՝ հաշվի ինչ-որ եղանակ, եթե հիմք ընդունենք էստոն մեծ լեզվաբան Ֆերդինանդ Յոհան Վիդեմանի անուղղակի ցուցումները (տե՛ս նրա անտիսթ հիշատակարանը էստոնիայի գիտ. ակադեմիայի Ֆ. Կրեյցվալդի անվան գրական թանգարանում, Տարտուում):

Դորպատյան ուսումնառության երկրորդ տարին ևս չարունակվում էին նախկին առարկաները՝ պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, սկսվում նորերը՝ տիեզերագիտություն և լատիներեն: Աբովյանի թվաբանության ուսուցիչը 1831 թ. հուլիսից փոխվում է: Այժմ այդ պարտականությունն իր վրա է վերցնում նշանավոր անտեսագետ, պրոֆ. Էբերհարդ Դավիդ Ցրիդլենդերը (1799–1869): Տիեզերագիտությունը Ֆ. Պարրոտն ինքն էր ավանդում՝ զուգակցելով այն գիշերային դիտարկումների հետ, որոնց համար այցելում էին համալսարանի աստղադիտարանը: Պատմության ուսուցիչը մինչև սեպտեմբեր Վալտերն էր դարձյալ, ապա, ամիս ու կես, այն ընդհատվում է, որովհետև ուսուցիչը սեպտեմբերի 13-ին անսպասելի վախճանվում է՝ աշակերտին թողնելով ծանր սգի մեջ: Նոր դասատու

11 Ե VI, *13:*

են գտնում հոկտեմբերի վերջերին միայն: Ո՞վ էր նա. չհաջողվեց պարզել: Անծանոթ են նաև աշխարհագրության և լատիներենի ուսուցիչների անունները. գուցե այդպիսիք չեն էլ եղել, և Աբովյանը այդ առարկաները սովորել է ինքնուրույնաբար:

Ամենից հետաքրքրականն Աբովյանի համար տիեզերագիտության դասերն էին, որոնց ընթացքում նա ո՛չ միայն իր աշխարհայացքի ձևավորման համար անչափ կարևոր՝ հիշյալ գիտությունն էր յուրացնում, այլև հմտանում գերմաներենի մեջ: Կարդն այսպես էր. Պարրոտը դասախոսում էր գերմաներեն, իսկ Աբովյանը՝ տեղն ու տեղը լսածը համառոտում, թարգմանում հայերեն ու գրում տետրակում. այնուհետև ուսուցիչն ընդհատելով խոսքը՝ Աբովյանին տիպում էր գրածը բերանացի թարգմանել գերմաներեն: Եթե տեսնում էր, որ աշակերտն ինչ-որ բան ճիշտ չի ըմբռնել, բացատրում էր կրկին, իսկ Աբովյանը սրբագրում էր գրածը, և այսպես առաջ էին շարժվում: Կարճ ժամանակում, այս ճանապարհով, Աբովյանը ո՛չ միայն սովորում է տվյալ առարկան, այլև ստանում հայոց լեզվով տիեզերագիտության դասագիրք, որով հետագայում, Հայաստան վերադառնալուց հետո, պարապում էր իր աշակերտների հետ: Այդ ձեռնարկը պահպանվել է: Պարզվում է, որ Պարրոտի դասախոսությունները մատչելի լինելով հանդերձ՝ հագեցված էին բարձր գիտականությամբ և հենվում էին հայտնի աստղաբաշխներ Հերշելի, Օլբերսի, Ի. Նյուտոնի, Ա. Հալլեյի և այլոց հետազոտությունների վրա:

Առաջին երկու տարիներին սովորած առարկաներից ամենադժվարինը թվաբանությունն էր: Բլումենբերգից ստացած դասերը, ինչպես երևում է, ցանկալի արդյունք չէին տվել, ու գրա համար էլ Ֆ. Պարրոտը խնդրել էր պրոֆ. Ֆրիդլենդերի օգնությունը: Բայց դժվարությունները միանգամից չեն հաղթահարվում: Աբովյանը կրկին գերադույն ջանքեր է թափում, մինչև որ կարողանում է, ինչպես հարկն է, յուրացնել թվաբանությունը նույնպես: Այդ առթիվ միայն մի քաղվածք նրա օրագրերից. «Դասի ժամանակ պրոֆեսորի տված թվաբանական ինչ-որ օրինակներ ես դժվարացա բացատրել: «Բազում ու բյուր անգամ ես բացատրեցի այդ բանը ձեզ, — ասաց նա, — և հիմա ամեն բան անհետացել է ձեր հիշողությունից»: Նրա այս խոսքերից ես ինձ միանգամայն կորցրի: Լավ կլիներ, որ նա այդպես չասեր: Ահա՛ ինչու ես ուշադրություն եմ իմ աշակերտներին երբեք նման բան չասել, այլ կրկնել այնքան, մինչև որ բավարար չափով ըմբռնեն»[12]:

---

12 Նույն տեղում, էջ 128 (թարգմանությունը մերն է):

Աբովյանի ուսումը միայն առանձին առարկաներով չի սահմանափակվում: Պարրոտը հոդ է տանում, որ, դասերին զուգընթաց, Աբովյանը ձեռք բերի նաև մանկավարժական փորձ: Հետևաբար, 1831 թ. աշնանից մինչև հաջորդ տարվա կեսերը, Աբովյանը հաճախում է նաև Դորպատի ուսուցչական սեմինարիա, ո՛չ իբրև աշակերտ, այլ միայն որոշակի դասերի ու հատուկ նպատակով, որպեսզի լրացնի պատմությունից ուսանելիք գիտելիքների թերին, սովորի թվաբանություն ավանդելու եղանակները, վարժվի երգեցողության մեջ և տեսական ու գործնական գիտելիքներ ու հմտություն ձեռք բերի մանկավարժությունից՝ առաջնորդ ունենալով սեմինարիայի տեսուչ, էստոն հայտնի մանկավարժ Դիտրիխ Հայնրիխ Յուրգենսոնին (1804–1841):

Աբովյանի դասացուցակում առաջին մասնագիտական առարկաներն, իբրև հավելումն նախապես հաստատված ծրագրի, երևում են 1832 թ. կեսերից: Երբ այդ տարվա սկզբներին Ֆ. Պարրոտն Աբովյանին ծանոթացնում էր առաջիկայում նրա անցնելիք առարկաների ցանկի հետ, ցանկալի համարեց, որ նա սովորեր նաև վիրաբուժություն: Որովհետև վերջինս Աբովյանի սրտով չէր, նա խոժոռում է ու խնդրում՝ ավելի լուրջ գիտություններ սովորեցնել: Պարրոտը հայրաբար խրատում է նրան ու ասում. «Դուք չանացեք ուսանել այն ամենը, ինչ անհրաժեշտ են մի ուսուցչի ու մի այնպիսի ժողովրդի համար, ինչպիսին ձեր ազգն է: Ձեր երախտիքը անմոռաց ու հավիտենական կլինի ձեր ազգի սրտում, եթե տարածեք այն ամենն, ինչ անհրաժեշտ են նրա սկզբնական կրթության համար, և ձեր ժողովրդի համար պատրաստեք աղնիվ քաղաքացիներ: Մի ազգ լուսավորելն ավելի նախանձելի է և դարեդար՝ անմոռանալի, քան ամեն բան իմանալը»[13]*:*

1832 թ. ու հետո, 1833-ի սկզբներին թվաբանությունը դարձյալ առաջին տեղերից մեկն էր գրավում Աբովյանի ուսումնական ծրագրերում, ապա և՝ լատիներենը, որն ուսումնասիրում էր ինքնաշխատությամբ: Արդեն 1833-ի գարնանից ավելանում են նոր առարկաներ՝ երկրաչափություն և ֆիզիկա: Երկու դեպքում էլ Աբովյանի ուսուցիչը Պարրոտն էր: Ինչպես տիեզերագիտության դասերին, հիմա նույնպես երկրաչափության և ֆիզիկայի յուրացմանը զուգընթաց կազմվում են այդ առարկաների համար համապատասխան դասագրքեր, որոնցով հետագայում Աբովյանը պարապում էր իր

---

13 *Նույն տեղում, էջ 135:*

աշակերտների հետ[14]: Այդ դասապրքերից Աբովյանի թողոններում մնացել է միայն երկրաչափության ձեռնարկի ձեռագիրը:

1833 թ. ընթացքում Աբովյանը մի առարկա էլ սովորում էր պրոֆ. Յոհան Մարտին Քրիստիան Բարտելսի մոտ (1769–1836), որի դասասովությունից այնքան էլ գոհ չէր: Դատելով Բարտելսի մատնադիտությունից՝ պետք է ենթադրել, որ այդ առարկան հանրահաշիվն էր, բայց կարող էր բնագիտության հիմունքներն էլ լինել: Այդ նույն տարվա սեպտեմբերին լրանում է Աբովյանի ուսման եռամյա ժամկետը, չնայած որ և՛ Պարրոտը, և՛ Դորպատի Համալսարանի վարչությունը նրան դեռևս լիակատար պատրաստ չէին համարում իր ապագա կոչմանը: Աբովյանը մինչև հիմա չէր լսել համալսարանական և ո՛չ մի դասախոսություն, անգամ այն առարկաններից, որոնք հարկավոր էին նրա զարգացման և ապագա, անկաշկանդ գործունեության համար՝ հայկական իրականության մեջ: Հունիսի սկզբներից ձեռնարկելով անհրաժեշտ քայլեր, վերջապես հուլիսի 11-ին Դորպատի Համալսարանը Ռուսաստանի ժողովրդական լուսավորության մինիստրությունից և Մինիստրների կոմիտեից պաշտոնական թույլտվություն է ստանում մի տարով ևս երկարաձգելու Աբովյանի ուսման ժամկետը[15]: Այս ևս դառնում է ոգևորության նոր ազդակ, և Աբովյանը գերլարվածությամբ օգտագործում է հաջորդ մեկ ու կես տարին:

Բացի երկրաչափությունից և ֆիզիկայից, 1833 թ. երկրորդ և 1834 թ. առաջին տարեկեսերում Աբովյանը պրոֆեսոր Դոտոր Բենիամին Եշկի մոտ (1762–1842) ուսանում է տրամաբանություն և հոգեբանություն՝ այդ նպատակով, համարյա մեկ տարի, հաճախելով վերջինիս դասախոսություններին և մանակցելով գործնական պարապմունքներին: Դասընթացի վերջում Աբովյանի համար կազմակերպվում է հատուկ քննություն, որը նա հանձնում է փայլուն կերպով: Պահպանվել է այդ առթիվ պրոֆեսորի տված հատուկ վկայականը[16]: 1833 թ. հ. Աբովյանը սեփական ուժերով ու մեծ եռանդով չարունակում է պատմության ուսումնասիրությունը՝ զուգահեռաբար կազմելով

---

14 Ի միջի այլոց՝ երկրաչափություն ուսանելու ցանկություն Աբովյանի մոտ առաջանում է դեռ 1831-ի վերջերին, բայց Պարրոտը դա վաղաժամ է համարում: Իսկ երբ Աբովյանը հետաքրքրվում է, թե ո՞վ պիտի պարապի հիշյալ առարկան, Պարրոտը պատասխանում է. «Ես, զայդ ես եմ մտադրեալ ձեզ զհարկաւորագոյն և զպիտանագոյն յերկրաչափութենէդ ուսուցանել, այլք զայդ ո՛չ կարեն առնել» (1831 թ. նոյեմբերի 21-ի գրառումը): Ե VI, 49:

15 Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, էջ 482–488:

16 Ա № 535:

այդ առարկայի համար ևս հայերեն դասագիրք: Պահպանվել է դրա ձեռագիրը նույնպես, երկու տարբերակով՝ աշխարհաբար և գրաբար, որոնք վերծանվել ու հրատարակվել են մեր օրերում, Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակության V հատորի կազմում, սակայն մեկնաբանվելով ո՛չ ճիշտ ու անհրաժեշտ խորությամբ[17]: Նույն ժամանակամիջոցում դասախոսություններ է լսում մարդաբանության մասին, իսկ թե ո՞ւմ մոտ և ի՞նչ կարգով, պարզված չէ:

1834 թ. սկզբներից Աբովյանի դասացուցակում երևում են կրկին նոր առարկաներ՝ տնտեսագիտություն, տնային կառավարություն և երկրագործություն, որոնք ավանդում էր պրոֆ. Յոհան Ֆրիդրիխ Շմալցը (1781–1847): Ավելին, այդ տարվա գարնանից Աբովյանը փոխադրվում է Ալտկուստհոֆ և տեղի գյուղատնտեսական պլրոցում, պլրոֆեսորի ղեկավարությամբ, մի քանի ամիս համառում գործնական պարապմունքների մեջ, գյուղատնտեսության վերաբերյալ ստացած իր տեսական գիտելիքները առուգում ամենօրյա աշխատանքների ընթացքում:

Աբովյանին նախապատրաստելով հայության համար ուսուցչի ու դաստիարակի կոչման՝ Պարրոտը չէր սահմանափակվում միայն տեսական առարկաներով, համալսարանական դասախոսություններով ու լսարանային փորձերով: Նա պարտադիր էր համարում, որ իր սանը, ինչպես Հարկն է, լրջորեն սովորեր նաև հարկավոր արհեստներ՝ դրա համար դիմելով քաղաքի առաջնակարգ վարպետների օգնությանը: Աբովյանի օրագրերից ու այլ աղբյուրներից հայտնի է, որ նա աստիճանաբար սովորել է՝ ապակեգործություն, կազմարարություն, ասեղնագործություն, հացթուխություն, ճակնդեղից շաքար պատրաստելու եղանակը, վիմատպություն և այլն: Այս բոլորից բացի, նա առանձնահատուկ հետաքրքրություն է հանդես բերում դեպի եվրոպական նոր լեզուները և 1833–1834 թթ. ընթացքում, ռուս հայտնի բառարանագիր Վլադիմիր Դալի մոր՝ Յուլյա Դալի օգնությամբ սովորում է ֆրանսերեն և անգլերեն, ինչպես նաև վարժվում դաշնամուրի և երաժշտական այլ գործիքների վրա՝ նվագում, նվագակցում ու երգում:

Ուսման և հոգևոր կատարելագործման աքանչելի դպրոց էին նաև դորպատյան բարեկամների ընտանեկան շրջանները, ուր ցանկալի հյուր էր Աբովյանը և ուր հաճախ էր նա ազատ ժամերն անցկացնում: Այդօրինակ հյուրընկալ հարկերից էին պլրոֆեսորներ Էբերհարդ Դավիդ Ֆրիդլենդերի (1799–1869), Կարլ Մորգենշտերնի (1770–1852),

---

17 Ե V, 273–458:

Յոհան Թրիդրիխ Լեբերեխտ Շմալցի (1781–1847), նկարիչ Աուգուստ Մատթիաս Հագենի (1794–1878), մաթեմատիկայի ուսուցիչ Պաուլ Կոնրադ Սոկոլովսկու, Հոհանյան տաճարի պատուր Կարլ Հայնրիխ Կոնստանդին Գնհևեի (1769–1856), տիկին Յուլյա Դալի անները, որոնց դռները մշտապես բաց էին նրա առջև: Այս դեպքում ևս ընտրությունն անձամբ Յ. Պարրոտն էր կատարում և ինքն էլ իր տանին՝ Աբովյանին տանում էր հիշյալ աներն ու ծանոթացնում: Իսկ երբ պատահում էր, որ Աբովյանն արդեն անակնկալ ձևով նախապես ծանոթացած էր լինում ուրիշ որևէ մեկի հետ, Պարրոտը ժամանակ անց հարց ու փորձ անելով տեղեկանում էր, թե նա արդյոք զո՞հ է այդ նոր ընկերությունից, նորածանոթները որևէ ձևով չե՞ն չեղում նրան նախընտրած ճանապարհից:

Ահա՛ ինչու Աբովյանը ո՛չ միայն շատ-շատով դառնում է լավագույն բարեկամներ ու ընկերներ, այլև անցնում ընտանեկան դաստիարակության շատ կարևոր մի դպրոց, որից զրկված էր հայրենիքում, որովհետև ինը տարեկանից կտրվելով հարազատ միջավայրից՝ փոխադրվել էր վանք ու վարժվել աբեղայական խստիվ կենցաղի: Այս իրողությունը հաստատում է նաև Աբովյանն ինքը հետևյալ պերճախոս վկայությամբ. «Հենց առաջին օրվանից... Նա (Պարրոտը—Պ. Հ.) խոստովանություն ինձ՝ ո՛չ աքի հետ չփում չունենալ, առանց այդ մասին իրեն հայտնելու, և հետևանքն այն եղավ, որ ես աստիճանաբար դուռ ամենալավ և պատվարժան շրջաններ պարոնայք պրոֆեսորների տներում: Շատերի մոտ, իրականում, ես ինձ զգում էի այնպես, ինչպես իմ հարազատ ընտանիքում. նրանց օրինակը, նրանց նիստ ու կացը, նրանց մտածելակերպն ինձ համար եղել են լավագույն դպրոց: Նրանք աշխատել են ո՛չ միայն պատճառել ինձ ամեն տեսակի լավագույն վայելքներ, այլև հետաքրքրվել են իմ կյանքի ամենաչնչին պարագաներով՝ բնավ երբեք թույլ չտալով իրենց որևէ օտարոտի խոսք, որը նվաստացներ իմ կրոնը, իմ ազգությունը, իմ հոգևորականությանը, իմ ազգային սովորությունները: Եթե բարեբարո քաղաքում չէր լինում, ապա ուրիշներն էին այդ պարտականությունները հանձն առնում... Եվ որքան հաճախ զգացված՝ ես ականջ եմ դրել և արտասուս ուրախացել, երբ լսել եմ, թե նրանք ինչպես էին գովում իմ ժողովրդին, նրա ծագումը, նրա պատմությունը: Որքան հաճախ իմ թանկագին բարերարը երեսիս ասել է, թե նա ինձ հավիտենապես կմոռանա, եթե ես իսկական հայ չմնամ...»[18]:

---

18 Ե VIII, *300–301 [307–308]:*

1834 թ. մայիսին, համարյա ամբողջությամբ, իրականացված էր այն ծրագիրը, որ կազմված էր Աբովյանի քառամյա ուսման համար: Նա ավարտել էր ու սովորել գրեթե այն բոլոր գիտությունները ու արհեստները, որոնք անհրաժեշտ էին հայ ժողովրդի հոգևոր ու տնտեսական կյանքի ապագա վերափոխողին, որպիսին Աբովյանն էր: Նամակներից մեկում թվարկված է առարկաների այդ խումբը՝ համաշխարհային պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա (թվաբանություն), երկրաչափություն, բուսաբանություն, բնաբանություն (ֆիզիկա), տրամաբանություն, հոգեբանություն, մարդաբանություն, երկրագործություն, նրաժշտություն, երգ, գերմաներեն, լատիներեն, նաև՝ ֆրանսերեն ու անգլերեն: Անհարժեշտ էր, որ այս իրողությունը վավերացվեր համապատասխան վկայագրերով: Պարրոտի հետ նախապես խորհրդակցելուց հետո, 1834 թ. մայիսի 29-ին, Աբովյանը մի դիմում է մատուցում համալսարանի դպրոցական հանձնաժողովին և խնդրում մասնավոր ուսուցման իրավունքի համար քննել իրեն պատմությունից, աշխարհագրությունից, թվաբանությունից, երկրաչափությունից, բնագիտությունից ու ռուսաց լեզվից և տալ համապատասխան վկայական, ինչպես նաև որոշել իր գիտելիքների չափը գերմաներենից ու լատիներենից[19]:

Ռեկտոր Յոհան Քրիստիան Մոյերը (1786–1856) ընդառաջելով Աբովյանի ցանկությանը՝ հենց հաջորդ օրը հանձնարարում է պրոֆեսորներ Բարտելսին, Պարրոտին, Բլումին, Նոյեին և ռուսաց լեզվի դասախոս Տիխվինսկուն, քննել նրան հիշյալ գիտություններից և հանձնաժողովի կարծիքը գրավոր հաղորդել իրեն[20]: Աբովյանն այդ քննությունները հանձնում է հենց նույն օրը և բարեհաջող, միայն թե, չգիտես ինչ նկատառումով, համալսարանի վարչությունը որոշում է պատշաճ վկայականը տալ այն ժամանակ, երբ նա կվերադառնա Հայաստան[21]:

Աբովյանի կրթության համար կազմված ուսումնական ծրագրի այն մասը, որ իրականացվելու էր Դորպատի համալսարանի հոգաբարձության միջոցով և պրոֆ. Պարրոտի ղեկավարությամբ, 1834-ի կեսերին, ասացինք, ավարտվել էր ամբողջությամբ: Բայց Աբովյանը չէր հապաղում հայրենիք վերադառնալ և դրանից հետո, շուրջ տարի ու կես, դեռ սպասում էր Դորպատում:

---

19 Ե X, 150 [150–151]: Դիմումի սևագրությունը Ֆ. Պարրոտի ձեռագրով է (տե՛ս Ա № 506):

20 Ա № 568:

21 Ե X, 153:

Ի՞նչն էր պատճառը: Դեռ պակասում էր Աբովյանին ամենակարևորը՝ աշխարհաճանաչողությունը. նա դեռ չէր տեսել արտաքին աշխարհը, դեռ նրան անծանոթ էին եվրոպական ժողովուրդների՝ կյանքի, ուսման ու աշխատանքի կազմակերպման ձևերը: Ֆ. Պարրոտն իր հուշքը չէր կարում ու տենդագին ձևով հետամտում էր, որպեսզի մասնավոր օժանդակությամբ կամ կայսերական չնորհով Աբովյանին հնարավորություն տրվեր ճամփորդելու Արևմտյան Եվրոպայում, լինելու Գերմանիայում ու Իտալիայում և այցելելու հատկապես Վենետիկ՝ ծանոթանալու համար Մխիթարյան միաբանության գործունեությանը և նրանց կրթական փորձին: Այս նպատակով՝ Ֆ. Պարրոտը խնդրում է ռուս հայտնի բանաստեղծ Վ. Ժուկովսկու (1783–1852) աջակցությունը, դիմում նաև ուրիշների՝ չհասնելով, սակայն, որևէ արդյունքի[22]: Այդ և ուրիշ նպատակներով՝ 1834–1835 թթ. ձմեռը Աբովյանը մեկնում է Պետերբուրգ, բայց նորից ձեռնունայն հետ է դառնում, իսկ հետո, մի ամբողջ տարի, մնում Դորպատում՝ պատրաստվելով վերադարձի:

Աբովյանի բնավորությանը խորթ էր ձեռքերը ծալած նստելը: Այս ժամանակամիջոցը նա օգտագործում է նոր առարկաների ու արվեստների ուսումնասիրության համար և կատարելագործվում արդեն ակսածների մեջ: Նա շատ ժամանակ է հատկացնում երգին ու երաժշտությանը՝ տեսական ու գործնական առումով, ուսուցիչներ ունենալով դոկտոր Յոհան Ֆրիդրիխ Բրոկին (1803–1855), Էմիլ Առեգուստ Հայնրիխ Հյորշելմանին (1820–1854), ուսանող Յոզեֆ Ամադեուս Կոյլրաֆին (1806–1836) և հայտնի երաժիշտ Յոհան Բենիամին Գրոսին (1809–1848): Վերատին ուսումնասիրում ու խորանում է աստղագիտության մեջ՝ ուշադրություն դարձնելով հատկապես Կոպերնիկոսի արևակենտրոն տեսության վրա, դասախոսություններ է լսում քիմիայի հիմունքների վերաբերյալ՝ ուսուցիչ ունենալով համալսարանի քիմիական փորձարանի վարիչ Կարլ Կլաուսին:

Վերջին մեկ ու կես տարվա ընթացքում, պատմաբան Կարլ Լուդվիգ Բլումի (1796–1869) ղեկավարությամբ, Աբովյանն սկսում է պարապել նաև հետազոտական աշխատանքով՝ պատրաստելով մի ընդարձակ ուսումնասիրություն հայ ժողովրդի պատմության և ազգագրության վերաբերյալ: Այդ աշխատությունն արժանանում է հավանության, և որոշվում է հրատարակել Դորպատի համալսարանի Տարեգրքում: Տպագրությունը, սակայն, ձգձգվում է, Տարեգրքի

---

22 Պ. Հակոբյան, *Խ. Աբովյանը և Վ. Ժուկովսկին* («Литературная Армения», 1961, № 2, *էջ 86–87):*

Հրատարակությունը 1836-ից դադարում է առմիշտ, իսկ Աբովյանի աշխատության ձեռագիրը հետագայում անհետանում: Պահպանվել են միայն առանձին սևագիր հատվածներ, որոնք ցույց են տալիս, որ աշխատությունն, ամբողջությամբ վերցրած, պարունակել է փաստագրական հարուստ նյութեր և տեսական ու գիտական մեծ արժեք է ներկայացրել իբրև հայ ժողովրդի պատմության ու ազգագրության առաջին քննական հետազոտություն՝ արևելահայ իրականության մեջ[23]*:*

1836 թվականի հունվարի կեսերին Աբովյանը բռնեց վերադարձի ճանապարհը՝ իր գիտելիքները, փորձն ու համոզմունքը հայրենի ժողովրդի լուսավորությանը և հոգևոր ու տնտեսական կյանքի վերափոխմանը դործադրելու, հայրենակիցների շրջանում ապրելու և աշխատելու համար: Նրա ունեցած հաջողությունների, ապագա կոչման և ցույց տված առաջադիմության վերաբերյալ Դորպատի համալսարանի վարչությունը տալիս է մի համառոտ վկայական՝ ռուսերեն և գերմաներեն լեզուներով, որը, սակայն, բնավ էլ չի արտացոլում այն աշխատանքային լարված առօրյան, տարակուսանքներն ու տենդագին որոնումները, բնավ չի հիշում այն անվերջանալի դժվարությունները, որոնք հերոսաբար հաղթահարեց Աբովյանը՝ հանուն վեհ նպատակի և ի բարօրություն իր սիրելի ազգի: Այնուամենայնիվ, մեջ բերենք այդ վավերագիրը, որ բառացի հետևյալն է.

«Հայոց դպիր Խաչատուր Աբովյանին՝ Երևանի մոտ ընկած Քանաքեռ գյուղից, տրվում է սույն վկայականն այն մասին, որ նա, նորին մեծություն թագավոր կայսեր բարեհաճության և առատաձեռնության չնորհիվ բախտ է ունեցել տեղիս համալսարանում կրթվելու՝ որպես դաստիարակ իր համերկրացիների, և այս նպատակով՝ 1830 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև սույն օրն (այսինքն՝ 1836 թ. հունվարի 13-ը — Պ. Հ.) աչքի է ընկել իր անդուլ եռանդով, աշխատասիրությամբ ու բարոյական նկարագրով, որով և վաստակել է իր ուսուցիչների և իշխանության հարգանքը»[24]*:*

Ի՞նչ դեր խաղաց Խ. Աբովյանն այնուհետև հայ իրականության մեջ, ի՞նչ ձևով կենդանի իրականություն դարձրեց կրթության ու դաստիարակության հիմունքների վերաբերյալ Դորպատում ամբարած գիտելիքներն ու ձեռք բերած փորձը, կամ էլ՝ արդյոք քննություն բռնո՞ց հայ կյանքում պրոֆ. Ֆ. Պարրոտի առաջադրած և Դորպատի համալսարանի դպրոցական հանձնաժողովի հավանությանն արժանացած ծրագիրը:

---

23 *Ե X, 21–58, 329–341:* Պ. Հակոբյան, *Խաչատուր Աբովյան, էջ 628–633:*

24 *Խ. Աբովյանի ուսանողական գործը, թ. 48 (ԷԱ, ֆ. 402, ց. 4, գ. 615, թ. 8բ):*

Այս հարցերին հանդամանալից պատասխաններ տալը մեզ հեռուն կտաներ, և, դուցե թե, հարկ էլ չկա մանրամասնելու, քանի որ նշաւոր Աբովյանն իբրև պրող ու մտածող, իբրև հայ նոր գրականութեյան, գրական լեզվի ու մանկավարժութեյան հիմնադիր, իբրև հայութեյան քաղաքական կողմնորոշման և հոգևոր մշակույթի պատմութեյան մեջ նոր ուղի հարթող՝ հանրաճանաչ դեմք է ո՛չ միայն հայ իրականութեյան մեջ, այլև խորհրդային բազմազգ ժողովուրդների և ժամանակակից քաղաքակիրթ ազգերի շրջանում, ու բավականաչափ էլ լավ ուսումնասիրված: Ասենք միայն, որ դորպատյան համալսարանի և պորֆ. Պարրոտի հոգևոր սանի ճանապարհը վերադարձից հետո փշերով ծածկվեց: Հայ հետադեմ ուժերը և արեղայական դասը ամեն կերպ աշխատեցին խանգարել նրան՝ հենց սկզբից թույլ չտալով վանական միջավայրում ազգի հոգևոր կյանքի վերակառուցման հարցերով զբաղվելու, ժողովրդական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու: Մերժվեց նաև Աբովյանի ծրագիրը՝ լուսավորված հոգևորական-միաբաններ պատրաստելու վերաբերյալ: Աբովյանը հարկադրված եղավ ժամանակավորապես թողնել վանքը և կրթական ծրագրերը դեթ մասամբ իրականացնելու համար մտնել պետական ծառայութեյան (ստանձնել Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի պաշտոնը) և հանապազօրյա հացը վաստակելուն զուգընթաց հիմնել իր մասնավոր դպրոցը, որն ընդհատումներով գործեց շուրջ հինգ տարի (1838–1843 թ. հունվարի 1): Այստեղ էլ նա առաջնորդվում էր հենց այն ծրագրերով ու դասագրքերով, որ հայ մանուկների համար պատրաստել էին իր դորպատյան ուսուցիչները և, կամ էլ վերջիններիս ղեկավարութեյամբ՝ անձամբ ինքը: Օր-օրի փորձով համոզվում էր, թե որքան օգտակար կլինեին հայոց համար Ֆ. Պարրոտի ու մյուսների նախագծումները, եթե ինքը պատշաճ աջակցութեյուն ստանար: 1839 թ. Աբովյանը հրաժարվեց հոգևոր կոչումից, որից հետո բախտն առմիշտ կապեց նրան աշխարհիկ դպրոցի հետ:

Իր մասնավոր դպրոցում Աբովյանը ազատ էր դաստիարակութեյան եղանակների և ուսումնական ծրագրերի ընտրութեյան մեջ. դորպատյան բարեկամների կրթական հրահանգներն այստեղ դործադրվում էին հնարավոր ամբողջութեյամբ: Աբովյանն ինքն էլ տարիներ անց խոստովանել է. «Վերադարձնել անտի յաշխարհ մեր... սկսայ ըստ հոգւոյ երանելւոյն (իմա՛ Ֆ. Պարրոտի — Պ. Հ.) հաւաքել առ իս զմանկունս ազգի ի Տփղիս, առ ի կրթել և պատրաստել զնոսա ապագայ ուսուցիչ ժողովրդեան...»[25]: Ջպիտի անտեսել և մեկ այլ

---

25 *Ե I, 239:*

ուշագրավ իրողություն. Աբովյանն իր մանավոր աշակերտներին անվանում էր Ֆ. Պարրոտի հոգու ընճյուղներ[26]:

Աբովյանի ընդունակ աշակերտներից մի քանիսը՝ Գաբրիել Խատիսյանը, Գևորգ Աքիմյանը, Գևորգ Գեղամյանը, Մարկիան Ռոտինյանը և ուրիշներ, հետագայում չարունակելով իրենց կրթությունը Դորպատի համալսարանում կամ այլ հաստատությունների մեջ, յուրատեսակ կամուրջ դարձան Աբովյանի դաղափարները, դրական-մանկավարժական փորձն ու ավանդները հայ վաճսունականներին փոխանցելու գործում, իսկ նրանք էլ, որոնց բախտ վիճակվեց նվիրվելու մանկավարժական առօրյա դործունեության (իբրև ուսուցիչներ, տեսուչներ, հոգաբարձուներ ու մասնավոր դպրոցի դեկավարներ)՝ իրենց դասագրքերով ու դատողություններով մեծապես դարկ տվին հայոց դպրոցական կյանքին ու մտավոր զարգացմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

Ստորև հրատարակվող չորս վավերագիրը քաղված են Աբովյանի ուսանողական երկրորդ գործից, որ պահվում է Ս. Պետերբուրգում, նախկին ԽՍՀՄ Պետական կենտրոնական պատմական դիվանում (ЦГИАЛ), ֆ. 733, ց. 56, դ. 509, թթ. 11–13, 14, 29–30: Դրանցից առանձին քաղվածքներ օգտագործվել են մեր «Խաչատուր Աբովյան, կյանքը, գործը ժամանակը (1809–1836)» մենագրության մեջ (Ե., 1967), իսկ ամբողջությամբ լույս են տեսնում միայն հիմա: Վավերագրերից երկուսը Թագավոր-կայսերը և Մինիստրների կոմիտեին ներկայացնելու համար՝ Ռուսաստանի հանրային կրթության մինիստրներ կարլ Լիվենի և Սերգեյ Ուվարովի կազմած զեկուցագրերն են Խաչատուր Աբովյանին Դորպատում պետական թոշակով կրթելու մասին՝ մանրամասնորեն չարադրելով նաև ծրագիրը: Մյուս երկուսը այդ առթիվ արված բարձրագույն կարգադրություններն են: Խնամքով քաղված են նաև հիշյալ վավերագրերի վրա եղած պաշտոնական մակագրություննները: Դրանց օգնությամբ կարելի է վերականգնել Աբովյանի ուսման հարցի լուծման ընթացքը կայսերական Ռուսաստանի պետական հաստատություններում և գերատեսչություններում: Ճիշտ է, այդ ամենի մասին նույնպես Աբովյանի գործերում համապատասխան վավերագրեր կան՝ ժամանակին օգտագործված մեր

---

[26] Ե X, 239:

աշխատությունների մեջ, բայց նրանց դեպքում վավերագրերի ամբողջական հրատարակությունը չի մտնում մեր ծրագրի մեջ: Հատվածները կարող են բավարարել մեր ընթերցողների հետաքրքրասիրությունը մեր ժամանակակից պլուխներում ամբարված ու վերլուծված նյութերով:

I

ОБ АРМЯНИНЕ АБАЙОВЕ

Г. генерал-фельдмаршал граф Паскевич-Эриванский отнесся ко мне, что находящийся в Эчмиадзинском монастыре, происходящий из духовного звания, но не вступивший еще ни в сан священства, ни в сан монашества, двадцатилетний молодой человек Качатур Абайов сопровождал добровольно профессора Дерптского университета Паррота на гору Арарат. Сей последний заметив в нем чрезвычайную склонность к наукам, особенно прилежание, умственные способности и желание просветить себя, полагает, что ежели Правительство обратит внимание на сего молодого армянина и даст ему средства – образовать себя в каком-либо учебном заведении, то впоследствии будет иметь в нем человека, которого с пользою может употребить для просвещения его соотечественников и что, по мнению его – г. Паррота, достаточно будет для Абайова провести два года в Дерптском университете. Г. генерал-фельдмаршал, уведомляя меня о сем, просит сделать распоряжение об отправлении Абайова в Дерптский университет хотя бы на два года, полагая, что издержки за все время его там пребывания и проезд в оба пути будут простираться не свыше 800 руб. серебром, ибо необходимо на проезд его в Дерпт и обратно 400 и на содержание его там в течении двух лет также 400 рублей серебром.

Профессор Паррот по требованию моему сообщил мне ближайшие о сем армянине сведения.

Абайов, сын недостаточных родителей, имеет отличные способности; быв назначен в монашеское состояние, он отказывается по сие время от вступления в оное, поелику Эчмиадзинский монастырь, где он находится переводчиком и диаконом, не представляет ему никаких способов для удовлетворения стремления его к умственному образованию, и он остается в непрестанной

надежде воспользоваться каким-либо случаем к распространению своих познаний, дабы со временем, в качестве учителя, быть полезным своим единоземцам. Сие-то именно стремление побудило его сопутствовать г-ну Парроту на Арарат.

Абайов учился два года в Тифлисской армянской школе и частию там, частию же собственными своими неутомимыми занятиями в Эчмиадзине, приобрел основательные познания в языке, религии и истории своего народа, также выучился русскому и латинскому языкам.

К сему профессор Паррот присовокупил, что для образования Абайова в звание такого учителя, какой нужен для его соотечественников, надлежало бы ему обучиться еще: географии, истории, арифметике и геометрии и усовершенствоваться в русском языке; он надеется, что при надлежащем руководстве, к таким только предметам, кои нужны для будущего назначения Абайова и к чему г. Паррот изъявляет свою готовность, достаточно будет двухлетнего пребывания его в Дерптском университете, полагая, что в первом году надлежит его учить на русском языке и по русским книгам, а в течении второго года Абайов, имея отличную память и неутомимое прилежание, может посредством только упражнения в немецком языке, – успеть в оном столько, чтобы понимать хорошо немецких писателей и слушать ту или другую лекцию в Университете, а потом посвятить себя такому кругу действия, для которого он, смотря по его знаниям, назначен будет высшим начальством.

На содержание Абайова в Дерпте г. Паррот полагает достаточным назначить 200 руб. серебром в год, да на снабжение его учебными пособиями сто рублей единовременно.

Принимая во уважение засвидетельствование профессора Паррота о способностях Абайова, можно надеяться, что он будет хорошим учителем, но для сего нужно будет образовать его совершенно к учительской должности, к чему двух лет недостаточно, а потому, в случае соизволения Вашего императорского величества на желание г. Генерал-фельдмаршала, я полагаю, что сказанному молодому армянину должно будет оставаться в Дерптском университете по крайней мере три года, дабы дать ему возможность приобрести основательные сведения не только в вышесказанных науках и языках, но и в способе преподавания оных.

Таким образом, издержки на Абайова составили бы: на три года пребывания его в Дерпте, по 200 руб. в каждый, 600, на проезд его из Тифлиса в Дерпт и обратно 400, единовременно на снабжение его учебными пособиями 100, а всего 1100 рублей серебром.

Ежели **Вашему императорскому величеству** благоугодно будет изъявить **Высочайшее** соузволение на желание г. генерал-фельдмаршала графа Паскевича Эриванского, то издержки сии должны будут пасть на счет Государственного казначейства.

Князь К. А. Ливен

<18 марта 1830 г.>

<Նիկոլայ Առաջինի մակագրությունը>

«СОГЛАСЕН»

<23 марта 1830 г.>

Թարգմանություն

ՀԱՅԱԶԳԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Պարոն գեներալ-ֆելդմարշալ կոմս Պասկևիչ-Էրիվանսկին դիմել է ինձ, որ էջմիածնի վանքում գտնվող՝ հոգևոր դասից սերող, սակայն դեռևս ինչպես քահանայական, այնպես էլ աբեղայական աստիճան չունեցող քսանամյա երիտասարդ Կաչատուր Աբայովը Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտին հոժարակամորեն ուղեկցել է Արարատ լեռան գագաթը: Այս վերջինը նկատելով նրա մեջ դիտողության հանդեպ արտակարգ հակում, առանձնահատուկ ջանասիրություն, մտավոր կարողություններ և լուսավորվելու ցանկություն, կարծում է, որ եթե կառավարությունն ուշադրություն դարձնի այս հայ երիտասարդի վրա և նրան միջոցներ տա՝ որևէ ուսումնական հաստատության մեջ կրթվելու, ապա հետագայում, հանձին նրա, կունենա մի մարդ, որին կկարողանա արդյունավետությամբ օգտագործել նրա հայրենակիցների կրթության համար, ու նաև, պարոն Պարրոտի կարծիքով, Աբայովի համար բավական կլինի երկու տարի անցկացնել Դորպատի համալսարանում: Պարոն Գեներալ-ֆելդմարշալը ծանուցելով ինձ այս մասին, խնդրում է կարգադրություն անել, գոնե երկու տարով, Աբայովին Դորպատի համալսարան ուղարկելու վերաբերյալ՝ կարծելով, որ նրա այնտեղ մնալու ողջ

ժամանակամիջոցի ծախքերը և երկկողմանի ճանապարհածախսը 800 արծաթ ռուբլուց ավելի չեն լինի, քանի որ Դորպատ գնալու և վերադառնալու համար նրան անհրաժեշտ է 400, իսկ այնտեղ, երկու տարվա ապրուստի համար՝ ևս 400 ռուբ. արծաթով:

Պրոֆեսոր Պարրոտն իմ պահանջով, մոտ օրերս, այս հայի մասին հաղորդեց տեղեկություններ:

Աղքատ ծնողների զավակ Աբայովը ունի գերազանց ընդունակություններ: Սահմանված լինելով աբեղայական վիճակի՝ այժմ նա հրաժարվում է նման կոչում ընդունել, քանի որ էջմիածնի վանքը, ուր նա թարգմանիչ ու դպիր է, ոչ մի միջոց չի ընձեռում բավարարություն տալու նրա մտավոր կրթության ձգտումներին, և նա վայելում է մի անմարելի հույս՝ օգտվել այս կամ այն առիթից իր գիտելիքներն ընդարձակելու համար, որպեսզի ժամանակին, որպես ուսուցիչ, օգտակար լինի իր երկրակիցներին: Հենց այս ձգտումն էլ դրդել է նրան ուղևորելու պարոն Պարրոտին դեպի Արարատ:

Աբայովն երկու տարի սովորել է Տիֆլիսի հայոց դպրոցում և մասամբ այնտեղ, մասամբ էլ էջմիածնում, իր անխոնջ պարապմունքների չնորհիվ, ձեռք է բերել իր ժողովրդի լեզվի, կրոնի և պատմության մասին հիմնավոր գիտելիքներ, միաժամանակ սովորել է ռուսերեն և լատիներեն:

Պրոֆեսոր Պարրոտն ավելացնում է սրան, որ կրթելու համար Աբայովին այնպիսի ուսուցչի կոչման համար, որպիսին հարկավոր է նրա հայրենակիցներին, պատշաճ կլիներ նրան նաև սովորել աշխարհագրություն, պատմություն, թվաբանություն և երկրաչափություն, ինչպես նաև կատարելագործվել ռուսաց լեզվի մեջ. նա (Պարրոտը—Պ. Հ.) հուսով է, որ պատշաճ ղեկավարության դեպքում, միայն այնպիսի առարկաների վերաբերմամբ, որոնք անհրաժեշտ են Աբայովի գալիք կոչման համար, և որի համար պարոն Պարրոտն իր պատրաստակամությունն է հայտնում, բավական կլինի, որ նա երկու տարի մնա Դորպատի համալսարանում՝ կարծելով, որ առաջին տարին հարկ է նրան ուսուցանել ռուսաց լեզվով և ռուսերեն դրքերով, իսկ երկրորդ տարվա ընթացքում, ունենալով գերազանց հիշողություն և անդուլ ջանասիրություն, գերմաներենի մեջ անմիջական վարժությունների միջոցով միայն Աբայովն այնքան կհառաջադիմի, որ կկարողանա լավ հասկանալ գերմանացի դրողներին և լսել այս կամ այն դասախոսությունը համալսարանում, իսկ հետո նվիրվել գործունեության այնպիսի չրջանակի, որի համար, ելնելով նրա գիտելիքներից, կսահմանվի բարձրագույն իշխանության կողմից:

Դորպատում Աբայովի ապրուստի համար պարոն Պարրոտը կարծում է, որ տարեկան բավական կլինի 200 ռուբլի արծաթով, իսկ ուսումնական ձեռնարկներով նրան ապահովելու համար՝ ևս միանվագ հարյուր ռուբլի:

*Ընդունելով ի հարգանս պրոֆեսոր Պարրոտի վկայություններն Աբայովի ընդունակությունների մասին, կարելի է հուսալ, որ նա կլինի լավ ուսուցիչ, բայց դրա համար պետք կլինի նրան կատարելապես կրթել ուսուցչական պաշտոնի, որի համար երկու տարին անբավարար է, ուստի, պարոն Գեներալ-ֆելդմարշալի ցանկությունը **Ձերդ կայսերական մեծությանն** հաճությանն արժանանալու դեպքում, ես կարծում եմ, որ հիշյալ հայ երիտասարդը Դորպատի համալսարանում պետք է մնա ծայրահեղ դեպքում երեք տարի, որպեսզի նրան հնարավորություն տրվի հիմնավոր տեղեկություններ ձեռք բերել ոչ միայն վերոհիշյալ գիտությունների ու լեզուների, այլև դրանք ավանդելու եղանակների մասին:*

Այսպիսով՝ Աբայովի համար ծախքերը կկազմեն. Դորպատում երեք տարի մնալու համար, յուրաքանչյուր տարին 200-ական ռուբլուց՝ 600, Տփղիսից Դորպատ գալու և վերադառնալու համար՝ 400, միանվագ, նրան ուսումնական ձեռնարկներով ապահովելու համար՝ 100, այսինքն՝ 1100 ռուբլի արծաթով:

*Եթե **Ձերդ կայսերական մեծությանը** հաճո կլինի բարձրագույն համաձայնություն արտահայտել պարոն գեներալ-ֆելդմարշալ, կոմս Պասկևիչ-Էրիվանսկու ցանկության նկատմամբ, ապա սույն ծախքերը պետք է դրվեն Պետական գանձարանի հաշվին:*

Իշխան Կ. Ա. Լիվեն

<18 մարտի 1830 թ>

<Նիկոլայ Առաջինի մակագրությունը>

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ:

<23 մարտի 1830 թ>

II

Милостивый государь,
Князь Карл Андреевич!

Имею честь препроводить при сем к Вашей Светлости рассмотренную **Государем Императором** в С. Петербурге 23 сего марта всеподданнейшую докладную Вашу записку о образовании армянина Абайова к учительской должности в Дерптском университете, с означением на ней карандашом собственноручной **Его Величества** резолюции: «Согласен».

Имею честь быть с совершенным почтением
Вашей светлости
покорнейший слуга

Н. Муравьев

№ 602
С. Петербург
23 марта 1830 г.

Его Светлость князю К. А. Ливену

<Ստակագրություններ>

24 марта; 24-го марта 1830 г.; № 37; № 1560; № 92. Просить г. Министра финансов о предписании, кому следует, чтобы назначенные на проезд Абайова из Тифлиса в Дерпт 200 руб. были отпущены в распоряжение г. Генерал-фельдмаршала, а следующие на первый год содержания Абайова деньги, одновременно, на первое объзаведение, назначены были к отпуску в Дерптский университет, остальные же за тем, в течении двух лет, вносить ежегодно в смету расходов. Высочайшее соизволение объявить г-ну Генерал-фельдмаршалу и Дерптскому университету, уведомляя их и о высказанном распоряжении.

25 марта 1830.

Ողորմած տեր,
իշխան Կարլ Անդրեևիչ.

*Պատիվ ունեմ սույնին կից Ձերդ պայծառափայլությանն ուղարկելու սույն մարտի 23-ին Ս. Պետերբուրգում **թագավոր կայսեր** կողմից քննության առնված Ձեր զեկուցագիրը հայազգի Աբայովին Դորպատի համալսարանում ուսուցչի կոչման համար կրթելու մասին՝ նրա վրա մատիտով և **նորին մեծության** սեփական ձեռքով արված մակագրությամբ. «**Համաձայն եմ**»:*

Պատիվ ունեմ լինելու խորին հարգանքով,
Ձերդ պայծառափայլության
ամենախոնարհ ծառա
Ն. Մուրավյով

№ 602
Ս. Պետերբուրգ
23 մարտի 1830 թ.

Նորին պայծառափայլություն իշխան Կ. Ա. Լիվենին

<Մակագրություններ>

24 մարտի. 24-ն մարտի 1830 թ., № 37, № 1560, № 92: Խնդրել ֆինանսների պարոն մինիստրին կարգադրելու, ում հարկն է, որպեսզի Աբայովի՝ Տփղիսից Դորպատ դալստյան համար նշանակված 200 ռուբլին հանձնվի պարոն Գեներալ-ֆելդմարշալի տնօրինությանը, իսկ առաջին տարվա համար Աբայովին հասանելիք ապրուստի, միաժամանակ և առաջին անհրաժեշտության առարկաները ձեռք բերելու փողը կարգադրվի ուղարկել Դորպատի համալսարանին, մնացածներն էլ, այնուհետև, երկու տարվա ընթացքում, յուրաքանչյուր տարի մուծել ծախքերի նախահաշվի մեջ: Բարձրագույն կամքը հայտնել պարոն Գեներալ-ֆելդմարշալին և Դորպատի համալսարանին՝ տեղեկացնելով նրանց նաև վերոհիշյալ կարգադրությունների մասին:

25 մարտի 1830.

III

Министерство народного просвещения
Департамент, отдел I, стол 2
В С. Петербурге, 21-го июня 1833
№ 5503

О дозволении находящемуся в Дерптском университете для приготовления учительскому званию, армянину Качатуру Абайову, пробыть в оном еще один год, с назначением на содержание его 200 р. сер. из Государственного казначейства. –№ 1101

Попечитель Дерптского учебного округа, господин генерал-лейтенант барон Фон дер Пален согласно представлению ректора Дерптского университета ходатайствует о продолжении еще на один год пребывание в Дерпте, находящемуся с высочайшего соизволения при тамошнем университете в течении трех лет на казенном иждивении, для усовершенствования в науках бывшему армянскому диакону Качатуру Абайову, с отпуском назначенных ему ежегодно на содержание 200 р. серебром, по уважению, что он–Абайов, отличаясь прилежанием и примерным поведением, может по мнению университетского начальства быть в последствии времени употреблен с пользою к приготовлению соотечественников своих, поступающих в духовное звание, для достижения каковой цели необходимо к довершению его образования в университете продлить его пребывание при оном еще на один год.

Справка. Качатур Абайов сопровождал добровольно профессора Дерптского университета Паррота в ученом путешествии на гору Арарат, и по замечанным тогда в нем особенным умственным способностям при чрезвычайной склонности к наукам, – согласно ходатайству г. главноуправляющего тамошним краем, г. генерал-фельдмаршала графа Паскевича-Эриванского, по всеподданнейшему докладу бывшего г. министра народного просвещения князя Ливена, последовало в 23 день марта прошлого 1830 года Высочайшее Государь Императора повеление его–Абайова принять на три года в Дерптский университет, с назначением на содержание

его по 200 р. серебром в год и с выдачею единовременно на снабжение его учебными пособиями 100 р. серебром, и на проезд из Тифлиса в Дерпт и обратно 400 р. серебром из Государственного казначейства.

Вследствие сего он с сентября месяца 1830-го года находится в Дерпте.

Заключение. Признавая и со своей стороны представление г. Попечителя уважительным, я имею честь представить Комитету гг. министров об исходатайствовании **Высочайшего его императорского величества** повеления: Находящемуся в Дерптском университете для получения в течении трех лет высшего образования, необходимого для учительского звания армянину Качатуру Абайову продлить пребывание в Дерпте еще на один год, считая со дня истечения помянутых трех лет, с производством на содержание его по прежнему 200 р. серебром из Государственного казначейства:

Подписал: Управляющий министерством Сергей Уваров

Скрепил: Управляющий департаментом
Князь Ширинский-Шихматов

Верно: Помощник начальника стола М. Павлиновский
(подпись)

Թարգմանություն

Ժողովրդական լուսավորության մինիստրություն
Գերատեսչություն, բաժին I, սեղան 2
Ս. Պետերբուրգում, 21 Հունիսի 1833
№ 5503

Ուսուցչական կոչման պատրաստվելու համար Դորպատի համալսարանում գտնվող հայազգի Կաչատուր Աբայովին ևս մեկ տարի նույն տեղում մնալու թույլտվության մասին՝ պետական գանձարանից նրա ապրուստի համար 200 արծաթ ռուբլի նշանակելու միասին. — №1101

Դորպատի ուսումնական շրջանի հոգաբարձու, պարոն գեներալ-լեյտենանտ բարոն Ֆոն դեր Պալենը՝ համաձայն Դորպատի

համալսարանի ռեկտորի ներկայացման, միջնորդում է մի տարով էլ երկարաձգել բարձրագույն հաճուքյամբ, երեք տարի ժամանակով և պետական խնամակալությամբ, դիտողությունների մեջ կատարելագործվելու համար Դորպատի համալսարանում գտնվող, նախկին հայ դպիր Կաչատուր Աբայովի այնտեղ մնալը՝ բաց թողնելով տարեկան նրա ապրուստի համար նշանակված 200 ռուբլի արծաթով, ի հարգանս այն բանի, որ նա՝ Աբայովն, աչքի ընկնելով չանասիրությամբ և օրինակելի վարքով, համալսարանի ղեկավարության կարծիքով կարող է հետագա ժամանակներում արդյունավետությամբ օտագործվել հոգևոր կոչում ընդունող իր հայրենակիցների նախապատրաստման համար, իսկ այդպիսի նպատակի հասնելու համար անհրաժեշտ է ևս մեկ տարով երկարաձգել նրա այնտեղ մնալը՝ որպեսզի ավարտին հասցվի կրթությունը համալսարանում:

Տեղեկանք. Կաչատուր Աբայովն հոժարակամ ուղևորվել է Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտին, դիտական ուղևորության ժամանակ, դեպի Արարատ լեռ, և նկատելով այն ժամանակ նրա մեջ առանձնահատուկ մտավոր ունակություններ՝ դիտությունների նկատմամբ արտակարգ հակում ունենալու հետ միասին, համաձայն այն երկրամասի պարոն գլխավոր կառավարիչ, պարոն գեներալ-ֆելդմարշալ կոմս Պասկևիչ-Էրիվանսկու միջնորդության և ի հետևումն ժողովրդական լուսավորության նախկին պարոն մինիստր, իշխան Լիվենի բարձրագույնս մատուցված զեկուցագրի, անցյալ 1830 թ. մարտի 23-ի օրը հետևյալ **թագավոր կայսեր բարձրագույն** հրամանագիրը նրան՝ Աբայովին, երեք տարով ընդունել Դորպատի համալսարան, ապրուստի համար նշանակելով տարեկան 200 ռուբ. արծաթով, ուսումնական ձեռնարկներով ապահովելու համար՝ միանվագ տալով 100 ռուբ. արծաթով, իսկ Տփղիսից Դորպատ գալու և վերադառնալու համար՝ 400 ռուբ. արծաթով, պետական գանձարանից:

Ի հետևումն սրա՝ նա 1830 թվականի սեպտեմբեր ամսից գտնվում է Դորպատում:

Եզրակացություն. Իմ կողմից նույնպես հարկավոր համարելով պարոն Հոգարարձուի դիմումը, ես պատիվ ունեմ դիմել պարոնայք Մինիստրների կոմիտեին՝ միջնորդել խնդրելու **Նորին կայսերական մեծության բարձրագույն** հրամանագիրը՝ երեք տարվա ընթացքում ուսուցչի կոչման համար անհրաժեշտ բարձրագույն կրթություն ստանալու համար Դորպատի համալսարանում գտնվող հայազգի Կաչատուր Աբայովի՝ Դորպատում մնալը ևս մեկ տարով երկարաձգելու մասին՝ հաշվելով այն հիշյալ երեք տարին լրանալու օրից,

առաջվա նման նրա ապրուստի համար պետական գանձարանից բաց թողնելով 200 ռուբ. արծաթով:
Ստորագրեց՝ Մինիստրության կառավարիչ Սերգեյ Ուվարով

Վավերացրեց՝ Գերատեսչության կառավարիչ
Իշխան Շիրինսկի-Շիխմատով

Իսկականի հետ ճիշտ է. բաժնի վարչի տեղակալ՝ Մ. Պավլինովսկի
(ստորագրություն)

IV

Комитет Министров
Июля 11 дня 1833 года
№ 1510

Выписка из журналов Комитета Министров 24 июня и 11 июля 1833 года

Слушана записка Управляющего Министерством Народного просвещения от 21 июня за № 5503 (по Департаменту народного просвещения) об оставлении при Дерптском университете еще на год обучающегося в оном армянина Абайова.

Комитет полагал: представление сие утвердить.

Государь император положение Комитета высочайше утвердить соизволил.

Комитет в заседании 11-го июля определил: сообщить о том Управляющему Министерством народного просвещения и Министру финансов к исполнению выписками из журнала.

Управляющий делами Комитета *Барон М. Корф*

Его превосходительству г. Управляющему Министерством народного просвещения.

<Մակագրություններ>

12 июля; № 3809, 13 июля 1833; № 175. Г. Управляющий Министерством приказал предписать к исполнению попечителю Дерптского <учебного> округа. 13 июля 1833.

13 июля писано к Дерптскому попечителю №.....

Մինիստրների կոմիտե
Հուլիսի 11-ի օր, 1833 թվական
№ 1510

Քաղվածք Մինիստրների կոմիտեի 1833 թվականի հունիսի 24-ի և հուլիսի 11-ի օրագրություններից

Լսվեց ժողովրդական լուսավորության մինիստրության կառավարչի հունիսի 21-ի № 5503 գրությունը (ըստ ժողովրդական լուսավորության գերատեսչության) մեկ տարի ևս Դորպատի համալսարանում սովորող Հայազդի Ալայովին այնտեղ թողնելու մասին:

Կոմիտեն կարծում է՝ ներկայացնել սույնը հաստատման:

Թագավոր կայսրը կոմիտեի կարծիքը բարձրագույնս բարեհաճեց հաստատել:

Կոմիտեն հուլիսի 11-ի նիստում որոշեց. հաղորդել այդ մասին ժողովրդական լուսավորության մինիստրության կառավարչին և ֆինանսների մինիստրին՝ օրագրությունից արված քաղվածքներով, ի կատարումն:

Կոմիտեի դործերի կառավարիչ՝ Բարոն Մ. Կորֆ

Նորին գերազանցության՝ ժողովրդական լուսավորության մինիստրության պարոն կառավարչին

<Մակագրություններ>

12 հուլիսի. № 3809, 13 հուլիսի 1833: № 175: Մինիստրության պարոն կառավարիչը հրամայեց կատարման համար կարգադրություն անել Դորպատի ուսումնական շրջանին:

13 հուլիսի 1833: Հուլիսի 13-ին դրված է Դորպատի հոդաբարձուին, №....:

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ «ԿՈՐԱԾ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

(«ԿՈՐՈՒՍԵԱԼ ԽՆԴՈՒԹԻՒՆ»)

Աբովյանի Դորպատյան օրագրերում, 1832 թվականի ապրիլի 10-ի գրառումների մեջ, իսկ այդ օրը զուգադիպում էր Զատկի տոնակատարությանը, կա մի այսպիսի ինքնախոստովանություն. «Ի լինելն իմ առ պարոն Շվէբսի, համբուրէ զիս նոյնպէս չքնաղ օրիորդն՝ քոյր նորա: Այս համբոյր եհեղ ի հոգիս իմ զայն ցանկութիւն՝ յօրինել «Զկորուսեալ խնդութիւնն» (Ե VI, 179):

Դորպատում սովորույթ էր, որ այդ օրերին սրտամոտ բարեկամներն այցելում էին միմյանց տները, զատկական ներկած ձվեր փոխանակում, համբուրվում: Խոսքն ահա՛ այս մասին է: Բայց օրիորդի համբույրն անակնկալի է բերում Աբովյանին և տրամադրում դառնակսկիծ խորհրդածությունների, որոնք թղթին հանձնելուց հետո ստանում են «Կորուսեալ խնդութիւն» խորհրդապաշտական վերնագիրը:

Նախ՝ ո՞ւմ էր այցելել Աբովյանը:

Շվեբսները (ավելի ճիշտ՝ ֆոն Շվեբսները) լիֆլանդական ազնվական գերդաստաններից էին: «Պարոն Շվէբսն» ավարտել էր Դորպատի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ծառայում էր տեղի գավառական դատարանում որպես քարտուղար: Նրան կոչում էին Ֆրիդրիխ Գուստավ Անտոն. 1832-ին 30-ամյա երիտասարդ էր և ամուսնացած՝ դարձյալ հին, ազնվական ընտանիքից սերված աղջկա հետ (Մարթա Կատերինա Վիլհելմինե, ծնյալ կոմսուհի Օ'Ռուրկ): Իսկ Շվեբսի քույրը 20-ամյա օրիորդ էր, հմայիչ արտաքինով, սքանչելի ձայն ուներ և հրաշալի նվագում էր: Կես տարի էր արդեն, ինչ Աբովյանը ծանոթ էր նրա հետ և անհույս սիրահարվել էր: Այդ մասին են պատմում դորպատյան օրագրերի շատ էջեր և «Օրիօրդն ֆոն Շվէբս ի վերայ երգեհոնի» հուզիչ ոտանավորը (1832 թ. ապրիլի 4-ին հորինված):

Ընդէ՞ր յապաղես,
Հրեշտակ չնաշխարհիկ.
Ցիմ տխուր երես
Թևովք քո մեղմիկ

Բերել զեղեմայ չունչ կենդանարար,
Ծածել զիս ի կեանս, յանդրանկացն ճառ:

Թո՛ղ զիս դատեսցեն
Դահիճք դժոխոց,
Թո՛ղ զիս մատնեսցեն
Նոքա դառնախոց:
Այլ ուր և հնչեսցի այս անոյշ քո ձայն,
Անդ է իմ դրախտ, երկինք և կայան...
(Ե I, 73)

Օրիորդ Ֆոն Շվերսին կոչում էին Կարոլինեն Հենրիետան Աննետտե: Աբովյանը մեծ տառապանքներ կրելով՝ կարողացավ, ի վերջո, խաղաղեցնել հոգին և մի կերպ անթեղել սիրո կարոտն ու մրմունջը:

Չնայած մեկուկեսդարյա հեռավորության՝ բավականաչափ բան գիտենք Շվերսների մասին: Բայց ահա՛ «Կորուսեալ խնդութիւն» բանաստեղծությունը և՛ ընթերցող շրջանների, և՛ հետազոտողների համար մնում էր անծանոթ ու հանելուկային: Աբովյանի դորպատյան օրագրերի ծանոթագրողը 1955-ին գրել է. «Այսպիսի վերնագրով բանաստեղծություն մեզ հայտնի չէ» (Ե VI, 315): Վերջինս իրավացի էր այնքանով, որ և՛ Աբովյանի թղթոններին նկարագրության մեջ (Գրականության և արվեստի թանգարանում), և՛ Աբովյանի երկերի ակադեմիական լիակատար ժողովածուի համապատասխան հատորում «Կորուսեալ խնդութիւն» վերնագրով ոտանավոր չի հիշվում ո՛չ ավարտված, ոչ՛ էլ սևագիր գրվածքների շարքում: Աբովյանի պոեզիայի նախորդ հետազոտողները (Հ. Մուրադյան, Վ. Պարսիզումեան) այդ երկի ճակատագրով չեն զբաղվել, իսկ ահա՛ Ս. Բագյանը, որ վերջին տարիներս մի ամբողջ գիրք է նվիրել Աբովյանի բանաստեղծություններին, այդ երկի խորագիրն անգամ չի հիշում: Անճամբ մեզ այն հայտնի էր: «Կորուսեալ խնդութեան» մասին ժամանակին գրել ենք, այն վերլուծել, անգամ բացատրել, թե ինչո՞ւ նման մի մեծարժեք երկ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից, բայց զարմանալիորեն այդ էլ չեն կարգացել (տե՛ս մեր «Խաչատուր Աբովյան», էջ 533, 541–542, 775):

Այժմ հարկադրված ենք վերհիշեցնել մեր հին ասածներն այդ բանաստեղծության մասին, նաև հրատարակության հանձնել նրա ամբողջական, ճշտված ու լրացված բնագիրը, որովհետև ցարդ որևէ մեկն իրեն հոգնություն չտվեց նույնն անելու, թեպետ անցել է տասնյոթ տարի:

Ինչպես նկատել էինք՝ «Կորուսեալ խնդութիւնը» Աբովյանի ամենածավալուն և սրտառուչ քերթվածն է, որի մեջ յուրօրինակ մեկնաբանություն է տրված վաղնջական ժամանակներում արարչության կամքով մարդ-անհատի համար նախորոշված դրախտին ու երանություններին, որոնցից, սակայն, շատ շուտով զրկվում է առհավետ: Ահա այդ կորուստն է ողբում ու սգում բանաստեղծը, որովհետև ոչ միայն դրախտն այլևս չկա, անէացել է, այլև աշխարհը վերածվել է իսկական դժոխքի: Այստեղ արհամարհվում են բնական զգացումները, ոտնահարվում է բնական օրենքը:

Ո՞ր աստուածամարտ
Հոգի թշուառական
Եհատ զպատժապարտ
Վճիռ կորստեան...

Ելել զկենաց մեր երանութիւն,
Ելել պատանւոյն զիւր անմահ պսակ...

տարակուսած հարցնում է նա՝ առանց խելամիտ պատասխան ստանալու: Որովհետև՝

Մոլի դրեցաւ,
Որ սիրեացն անմեղ.
Անսիրտ դատեցաւ,
Որ զքո կարգ պահեաց...

Սերը, խորհրդածում է Աբովյանի քնարական հերոսը, բնական զգացում է, արարչի անպարփակելի սիրո մի նշույլը մարդու հոգում և կոչված է միմյանց հետ չաղկապելու ո՛չ միայն սիրահար սրտերը, այլև տարագիր մարդկությանը, կյանքը դարձնելու հաշտ ու բովանդակալից, բայց ահա՛, չգիտես ինչու, նույն մարդ արարածը զրկված է վայելքից ու ներդաշնակ կյանքից և զինված է իր նմանի դեմ: Բանաստեղծը տենչում է այնպիսի կյանքի, ուր բացառված լինեն անհավասարությունն ու չարիքը և ուր կարելի լինի

Տեսանել զմարդիկ միանձն միակամ,
Իբրև քոյր եղբայր կեալ հրեշտագոյն...

Բանաստեղծության խորագիրն ընտրելիս՝ Աբովյանն, անշուշտ, աչքի առաջ է ունեցել ուշ վերածնության ու վաղ կլասիցիզմի

դարաշրջանի անգլիական մեծ քերթող Ջոն Միլտոնի (1608–1678) հռչակավոր պոեմը («Կորուսյալ դրախտը»), միայն թե սեփական ստեղծագործությունը վերնագրել է նրանից տարբեր («Կորուսեալ խնդութիւն»), որովհետև աստվածային կամքի և մարդկության բարոյական իրավունքների ու բնական ձգտումների հակադրության խնդրին ինքը մոտենում էր այլ հայեցակետից: Աբովյանը բողոքում էր աշխարհում հաստատված դաժան կարգերի ու մարդուն մարդ սպահող հույզերն ու կարոտները, տենչանքներն ու տվայտանքները վայրենի ձևով բացասելու սկզբունքի դեմ, որը միանգամայն հակասում էր Նախասահմանության դրած կարգին: Միլտոնին զբաղեցնողը մեղքի ու մահվան խորհուրդն ու հետևանքներն էին: Նա ողբում էր մարդկության նախածնողների օրհասական բախտի համար, որոնք առմիշտ կորցրին առասպելական երանությունների աշխարհը և դատապարտվեցին ցավի ու մահվան: Աբովյանի տագնապների առարկան դրանից հետո երկրային կարճատև կյանքի ընթացքում մարդուն բաժին հասնող չնչին երջանկությունից զրկվելու պարագան է, գնթ հոգեպես երջանիկ լինելու անհնարինությունը, բնական զգացմունքները բռնի մեղսնելու և անբնական կարգ ու կանոնին սարկորեն հնազանդվելու կացությունը:

«Կորուսեալ խնդութեան» միայն սևագրությունն է հասել մեզ, այն էլ խիստ դժվարընթեռնելի: Վերջինս ամփոփված է դրպատյան տետրակներից մեկում (Ա № 108), անկանոն դասավորությամբ: Այդ պատճառով էլ բանաստեղծության առաջին վերծանողը, տեղավորելով այն Աբովյանի երկերի ակադեմիական լիակատար ժողովածուի I հատորում (1948, էջ 331–334), կարծել է, թե տվյալ ձեռագիրը պարունակում է երկու տարբեր ստեղծագործություն, հետևաբար մասնատելով ու տների մի մասն էլ հապավելով՝ տպագրել է «Ո՞ր հոգեոց այսօր տօնին բերկրութիւն...» և «Հի՞մ թօթափեցան ծաղիկք գարնայնի...» սկսվածքներով, որպես անթվակիր ու անվերնագիր ոտանավորներ՝ բնավ չենթադրելով, որ դրանով դեմ է գնում հեղինակի կամքին:

Մենք վերականգնել ենք բանաստեղծության ամբողջությունը, տողերն ու տները վերադասավորել ըստ հեղինակի ընտրած չափի ու կառուցվածքի, վերծանել ու լրացրել սևագրության մեջ մնացած մասերը՝ առանձին տներ, տողեր ու բառեր, ուղղել սխալ վերծանությունները ու վրիպակները և երկի դրությունից ավելի քան մեկ ու կես դար անց այն ամբողջությամբ ներկայացնում ենք բանասերների ու ընթերցողների դատին:

<ԿՈՐՈՒՍԵԱԼ ԽՆԴՈՒԹԻՆ>

Ո՞ր հոգւոց այսօր տօնեն բերկրութիւն,
Ո՞չ երկնաւորացս, ո՞չ երկրաւորացս.
Ո՞ւմ ցողեն երկինք զայս մեծ խնդութիւն,
Ո՞չ հոգեղինաց, ո՞չ մարմնաւորաց:
Անդ* վերինք հրճուին
Ընդ մարդկան արիութիւն,
Աստ ներքինք տօնին
Զվերնոց հաչտութիւն:

Տանի այսօր Հայրն ի ծոց իւր ի վեր
Զորդին կարօտեալ, զորդին սիրելի.
Ջուեն ընդ նմա հոգիք վչտամբեր,
Իջանեն առ մեզ հոգիք անճկալի:
Երկինք համբուրիւ
Աստ եղբայրական,
Գրկէ կարօտիւ
Զերկիր ստորնական:

Ահա, թէ այս համբոյր տուաւ նչանակ,
Հաղորդել միմեանց զհոգւոյ խնդութիւն,
Մեծարել նովաւ զնորայն յիշատակ,
Որ բեր դրախտին զանցեալ փափկութիւն:
Ո՞ր աստուածամարտ
Հոգի թշուառական
Եհատ զպատժապարտ
Վճիռ կորստեան:

Ալել զկենաց մեր երանութիւն,
Ալել պատանւոյն զիւր անմահ պսակ,
Զոր հիւսեն նմա մատունք փափկադոյն
Իւր աղաւնամիտ կուսին անառակ:
Յանմեղ նոցա սիրտ,
Յանել զչար որոմն.
Խզել զկապ սերտ
Զերմ նոցա սիրոյն:

---

* Բնագրում՝ Աստ, ուղղում եմ:—Պ. Հ.

Ընդէ՞ր այս դժոխք կացին անկործան,
Ընդէ՞ր ո՛չ եմուտ աստ իշխանն հոգւոց.
Ընդէ՞ր, ո՛վ արև դու արդարութեան,
Անփոյթ արարեր լոյս տալ թախծելոց:
Նոցա ծխամած
Որկորք դժոխային
Քոց չնորհաց
Հի՞մ կարօտէին:

Հայրենազօր չունէ արարչական,
Եւ անդ ի հոսել զհոգի կենդանեաց,
Փչեցէր ի մեզ զայս հուր կենսական.
Սիրել զքո ստեղծուածս անբաժան յանձանց:
Սիրել իբրև զքեզ,
Սիրելի իբրև զանձն
Եւ զընկերն նմանատես
Քոյդ աստուածութեան:

Անշուշտ, քո կամաց անյաւտակ սահման
Ո՛չ եղ ինչ խտիր, ո՛չ եղ ինչ բաժան.
Աստ ժիր պատանին, աստ քնքուշ կուսան,
Աստ մուսլու հեթանոս, աստ մեղմ քրիստոնեայն:
Քո որդիք նոքա,
Ի քէն սիրեցեալ,
Պարտ էին աստէն
Քոյր-եղբայրանալ:

Ո՞ եհեղ ի սիրտ աժխոյժ պատանւոյն
Զայս եռանդ հզօր անկաշկանդելի.
Ո՞ կաղմեաց զոսկերս մեր քաղցր սիրուհւոյն,
Այնքան փափկագին, այնքան նազելի:
Ո՞ գծեաց զմեզ
Նմանօրինակ,
Ո՞չ էիդ անառես
Սէր անբովանդակ:

Զէ՞ր այս քո սուրբ կամք, այն ինչ <քո> որպէս,
Առեալ զբարեաւ մխայն ի հայրենւոյդ ծոցոյ՝

Եկն պատգամաւ աւետեօք ճայնի,
Տալ խաղաղութիւն երկրի տրտմելոյ:
Միացուցանել
Զմեզ՝ տարագրեալքս,
Քեզ որդեգրել
Զցաւօք կորուսեալքս:

Ե՛ւ անդ ի չարժել զճեռս արարչական,
Ե՛ւ աստ ի չարժել զգուխ քո տիրական.
Մի՛ էին սուրբ կամք քո աստուածութեան՝
Ի ներդաշնակութիւն առնել զմեզ միայն:
Քեզ որդիս լուսոյ,
Զէակ քո համայն.
Հրեշտակաց հաղորդ
Քոյդ յարքայութեան:

Այլ զիա՞րդ կորեաւ այս դրախտ ցանկալի,
Հի՞մ այս սուրբ օրէնք կացին անկատար.
Հի՞մ թօթափեցան ծաղիկք գարնայնի,
Մինչ կարգ բնութեան անցին չարաչար:
Մոլի գրեցաւ,
Որ սիրեացն անմեղ.
Անսիրտ դատեցաւ,
Որ զքո կարգ պահեաց:

Եւ ի սիրտ անմեղ, ողջամիտ կուսին
Փակեցան որմովք իւր առաքինութիւն.
Մինչ քարայրք և որմք վանից և լերին
Խոստացան լինուլ զմեր ակնկալութիւն:
Քարացաւ զգայունն,
Զգաց անզգայն,
Եւ բորբոք սիրոյն
Շիջաւ հետ ցյետոյն:

Զէ՞ր հնար միով բանիւ արարչի
Քեզ դարձուցանել զմի մեզ մոլար,
Ո՛չ զոհել զանպարտ արիւն անմեղի,
Ո՛չ զոհել զանպարտ արիւն անմեղի,
Այլ քո օրհնեալ

Կամէիր զերկնից
Շառաւիղ սիրոյ
Ծագել ստորնից:

Ո՞ւր եդեմային այն երջանկութիւն,
Որ մեր նախահարք զմայլէին զքև.
Ո՞ւր արդ դրախտին այն անմեղութիւն,
Զոր վայելեցին ծնօղք մեր ակներև:
Ես կարօտամաշ
Կորստեամբ նորին,
Բե՛ր ինձ, երկնահաս,
Զայն վիճակ կրկին:

Արարածք համայն անշեղ, անմոլար
Պահեն անվթար զքո հրաման.
Այլ թշուառ մարդոյն թիւր են ճանապարհ,
Նա սահի ի քէն, որդն անպիտան:
Մեղսածին նորա
Զարանիւթ զանգուած,
Զոր համարեցաւ
Սիրել զքո ստեղծած:

Ո՛չ չուրջանակի սաւառնիք զմեօք,
Ձոյր մեր հրեշտակք, զաւակք երկնային.
Ներդաշնակութիւն ձեր հոգեմոք
Ընդէ՞ր ի հոգիս մեր ո՛չ հարկանին:
Հի՞մ թողուք զմեզ
Խորդալ ի միմեանց.
Ընդէ՞ր սառներես
Հայիք ի բարձանց:

Յարտասուս ծփան սիրտք սիրակարօտք,
Այլ ձեզ մեզ պթալ դեռ հրաժարիք.
Եւ ակունք աչաց մեր ցամաքեցան,
Այլ մեր վաւաշգման դեռ ո՛չ մասնակցիք:
Ա՛հա, ե՞րբ խնայէք,
Ե՞րբ պառնայք անմեղ,
Ե՞րբ դարձուցանէք
Եւ զմեզ առ ձեզ:

Այլ ո՛հ, զի՞նչ ասեմ, չե՞ն առ մեզ նոքա,
Ո՞չ զօր հանապազ զմեօք յածին.
Եւ հոգի նոցա զուարթուն հրանիւթեայ,
Զիա՞րդ քաղցրամոք հրեշտակային**:
Ո՞չ նոքօք չնչեմք,
Ո՞չ կեանք մեր բոլոր
Նոքիմբ վայելեմք
Անտրտում, անդորր:

Զեն մեռեալ երկրի դէմք արեգական,
Այնքա՛ն բարերար, այնքա՛ն կենսաբեր,
Որպէս մեղսամեռ, սոպռ հոգւոց մարդկան,
Քաղցր օրիորդին հրեշտակային պատկեր:
Այլ մեք զաչացուս
Խեթիւ նչմարեմք
Զայս խնամածուս
Ստեղծուածոց զդէմք:

Ո՛չ մնայ յերկրի ինձ աստ միւսանգամ
Առնուլ զճաշակ երկնային սիրոյն.
Տեսանել զմարդիկ միանձն, միակամ
Իբրև քոյր, եղբայր կեալ հրեշտագոյն:
Անդ, տա՛ր զիս աստի,
Ո՛վ ամենահայեաց,
Անդ հան զիս սրտի,
Զի մի՛ մաչեցայց:

Թո՛ղ նախանձոտ աչք ծանակեսցեն
Աստ զառօրեայ բախտ ներքին սիրելեաց.
Այլ անդ երկնայինք մեզ տարփողեսցեն
Զաննախանձ մեր սէր անլոյծ կապանաց:
Անդ այս մեր երազ,
Երկնից թագուհի,
Եկեսցեն ի լոյս
Անչիջանելի:

** Վերջին բառի համար ինքնագրում առաջարկված (ու մասամբ էլ խոտանված) են այլ տարբերակներ՝ անտխեղծ, անգին: — Պ. Հ.:

Անդ յուսամ միայն զքեզ գտանել,
Դու երկնավարօտ հոգւոյս պահապան.
Անդ թևակցեալ, իբրև զատարակս,
կցեսցեն ի համբոյր շրթունք մեր յաւիտեան:
Եւ դասք հրեշտակաց
Երգովք օրհնութեամբ
Անդ դրուատեսցեն
Զմեր սէր անվախճան:

Եւ ոսկերք բնութեան աստ, ի հրապի,
Բռնի ձմեռան ճնշէին ցաւօք,
Մինչ քո ջերմարձակ արև չողչողի,
Տարածէ զայս նինջ ի յերկինից վառօք:
Յառնուն արարածք
Իբր նորաստեղծեալ,
Զքեզ օրհնաբանել
Օր օրհնեալ եկեալ:

Եւ հրաբորբոք կայծք քոյին շրթանց
Համբուրիդ վառեալ զերես պատանւոյն
Անցին թափանցիկ ի սիրտս բազմաթափած,
Հանել ի սեղան ղիմ ջերմ գոհութիւն:
Քնել իմ միայնոյ,
Կուսին պաշտելի,
Ինձ իբրև եղբայր,
Իմ քոյր սիրելի:

Ո՛հ, պիարդ փութով անցանիս ի մէնջ,
Տեսիլ խնդալուն բոլոր աշխարհի.
Ընդ քեզ անցանին խանդանք բազմատանջ,
Մինչև այս զատիկ կրկին նորոգի:
Զէ՞ր պարտ այս զատիկ
Մնալ յարակայ
Ի սիրտս մարդկան
Անանց անապայ:

<10 ապրիլի 1832, Դորպատ>

Այժմ, երբ մատչելի է «Կորուսեալ խնդութիւն» քերթվածի ամբողջական բնագրի հնարավոր ճշգրիտ վերծանութիւնը, ծանոթանանք նաև հորինման ընթացքում բանաստեղծական տողերից յուրաքանչյուրի կրած փոփոխութիւններին կամ ներքին ալեբախումներին (երբեմն, առաջին բառի կեսին սանձված ու չծավալված), որքանով այդպիսիք մեզ ընձեռում է պահպանված միակ ինքնագիրը (Ա № 108, էջ 2–4): Երևան եկած տարբերութիւնները նշում ենք տողահամարներով:

Խորագիր չունի:

3 [Ո՛չ հրեշտակաց]
4 Ո՛չ [հրեշտակաց,] ո՛չ մարմնաւորաց
6 [Մեզ նոր աւետիս]
7 Աստ [մարդիկք] ծօնեն
9ա [Բացան]
բ [Աստ երկիր եբաց զծիծաղ ի չրթունս]
10 [Գրկէ] այսօր Հայրն ի ծոց իւր ի վեր
12ա Իջանեն առ մեզ [որդիք Անեղին]
բ Իջանեն առ մեզ հոգիք [զ. . . . լի]
16 Զերկիր [մեր համայն]:
28 Իւր [անմեղ] կուսին անապակ
36 Ան[հետ] արարէր լոյս տալ այս [մեռելոց: հոգւոցս]
37 Ծխամած նոցա
38 [Որթունք] դժոխային
39 [Զքոյդ] չնորհաց
40ա Լուսոյ հի՞մ [ցանկային]
բ Լուսոյ [ցանկային]
41 [Զեռք քո] հայրեն[ի], չունչ արարչական
42 Եւ անդ [սահմանել] զհոգի կենդանեաց
52 Աստ [մեզմ <քրիստոնեայն>] մուսլու հեթանոս
53 [Պարտ էին]: [Ինդդ արքայութեան]
54 [Երկնիցն սիրոյն քո՞]
55 [Նոքա քեզ հրեշտակ...]?
56 Արարիչն պաշտէին:
63 [Ո՛չ անհաս, անտես]
64ա [Կամք քո անպարփակ]
բ [Կամք] անբովանդակ:
66 Առեալ զբարեաւ մնայն ի [քո սուրբ] ծոցոյ

75 Մի էին [քո] կամք քո աստուածութեան
76 [Երկնաւորդ, Հայր.] առնօղ գմեզ միայն
80 [Ի] քոյդ արքայութեան:
84 Մեզ կարդ բնութեան [յանցան՞] չարաչար:
87 [Անպարտ] դատեցան,
88 Որ զքո կարդ [յարգեաց:]
91 Մինչ քարայրք և [ծագք]
92 Խոստացան [տալ մեզ գմերին՞ ընկերութիւն:]
93 [Անդ քո: անբ... անշունչ տապաց]
94–95 [Շինչաւ չկրմութիւն]
Եւ [սերմանք սիրոյն]
96ա [Եա չունչ]
բ [Շինչաւ ...]
գ Շինչաւ համայն
107 Ո՞ւր [մեր] դրախտին այն անմեղութիւն
110 [Սահմանիկ վերին]
116 Նա սահի ի քէն [խլիկն՞ մշտամատն]
118 [Զանգուա<ծ>:] Զարանիւթ զանգուած
125 <Նախնական տոզը եղծված է—Պ. Հ.> ... մեզ
127 [Զի՞նչ այս] աստնեղիս
130 Այլ [դուք] մեզ դժալ դեռ հրաժարիք
140 Զիա՞րդ քաղցրամօք, [1 անընթ.] հրեշտակային
145 [Ո՛չ երախտապարտ] արեգական
147 Որպէս [սոպրացեալ] մարդոյն [անկենդան]
148 [Դէմք] օրիորդին հրեշտակային պատկեր
156 [Հետ] իրեւ քոյր, եղբայր կեալ հրեշտակապոյն:
158 [Զի մի մաշեցայց]
164 Զաննախանձ սիրոյ մեր] անլոյծ կապանաց:
167 Եկեսցեն ի [յայս]
168 [Անանցանելի:]
171 [Եւ լանջ գրկացեալ իրեւ պատարակս
179 Մինչ քո չերմարժակ [շող] արև շողշողի
180 [Ծագէ] պայս նինջ [մեզմ] ի երկնից փառաք:
188 [Բեզ պէս տարածել] պիմ չերմ գոհութիւն:
190 Պաշտելի կուսիդ
191–2 [Զոր ես սիրեցի
Իրեւ քոյր [սիրելի] անդին]
192 [Դուն] քոյր սիրելի,
200 Անանց, [մշտակա:]

Այնուհետև՝ անավարտ տան սևագիր երեք տող, որոնք, դույտ և, այլ բանաստեղծությունների են վերաբերում (ասենք՝ «Ձինչ այս դառն հարուած անգութ օրհասին...», գրված 1832 թ. ապրիլի 6-ին).

[Աստ] Միայն [Քանի զգան] չարժին և քո նմանակիցք
Մանկաթարմ հոգւով գրկել զմիմեանս
Օրիօրդք, տղայք, պատանիք...

«Կորուսեալ խնդութիւն» քերթվածի բնագրի վրա մեր կատարելիք աշխատանքի առաջին փուլն այսքանով ավարտվում է: Բայց մնում են դեռ մի քանի դժվարընթեռնելի (նաև՝ չվերծանված) բառեր, հետևաբար և՝ վերջնականապես իրենց ճիշտ իմաստն ու հնչեղությունը չգտած տողեր, ինչպես նաև հեղինակի ու նրա քնարական հերոսի մտքում ու հոգում բռնկվող ու հանգող, առաջին հայացքից անորսալի հույզեր ու տրամադրություններ, որոնց մեկնաբանումը կապված է համակողմանի ուսումնասիրության և բնագրային տարբերությունների հաշվառման ընթացքում հավաքված նյութի նպատակադրված համակարգման հետ: Բայց դրանցով կզբաղվենք որոշ ընդմիջումից հետո, առավել հանգիստ պայմաններում, որոնք ներկա օրերում խռովել են մեր ժողովրդից ու հայրենիքից: Ավելին, մինչև սույն երկի՝ նման ուսումնասիրությանը ձեռնարկելը, դեռ հարկ կլինի մեկ անգամ էլ ներկա վերծանությունը համբերությամբ ու ուշադրությամբ համեմատել ոտանավորի մեզ հասած միակ ձեռագրի (սևագիր ինքնագրի) հետ և օտարել բուն քերթվածի և բնագրային բոլոր մեծ ու փոքր տարբերությունների մեջ, անուշադրության պատճառով, սպրդած վրիպակները (եթե, իհարկե, այդպիսիք նկատվեն):

«ՆԱԽԱՇԱՎՂԻ» ԿՈՐԱԾ ԷՋԵՐԻՑ

1

Նախքան բուն նյութին անցնելը՝ հիշեցման կարգով ասենք, որ Խ. Աբովյանը մեզ ժառանգություն է թողել «Նախաշավիղ կրթութեան» խորագրով երկու դասագիրք, ավելի ճիշտ՝ նույնանուն ուսումնական ձեռնարկի երկու տարբերակ, որոնք պաղափարական-մեթոդաբանական ընդհանրությունների հետ միասին, նյութի ընդգրկման առումով՝ բովանդակությամբ ու կառուցվածքով, արմատապես տարբերվում են միմյանցից: Առաջին տարբերակը, որի վրա Աբովյանն աշխատել է 1836–38 թթ., մեզ է հասել ձեռագրության է հանձնվել 1838 թ. վերջերին, 1839 թվականի հունվար-փետրվար ամիսներին դրքի առաջին 72 էջերն առանձին պրակներով արդեն տպագրված էին, իսկ չարտոնագրությունն առժամանակ մի կողմ է դրվել: Հարկավ, գոյություն է ունեցել նույն տարբերակի ամբողջական ձեռագիրը նույնպես, որի հիման վրա պատրաստվել է դրքի չարվածքը, և որն այդ և հաջորդ տարիներին քննության է հանձնվել Ս. Պետերբուրգի Գիտությունների ակադեմիային և Տիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդին, բայց երկուսն էլ հավանություն չեն տվել, որ այն, որպես դասագիրք, դործածվեր Անդրկովկասի դավառական դպրոցներում: Երկրամասի ուսումնարանական դործի անօրեններից՝ առաջին հերթին Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության, որի կարգադրությամբ 1838-ի աշնանն Աբովյանի դասագիրքը հանձնվել էր տպագրության և չարվում էր Արզանյանց եղբայրների տպարանում, վերատեսուչ Ե. Հասանովյանի անկումից հետո[1], որ տեղի ունեցավ հաջորդ տարվա հունվար-փետրվարին, այլևս չի հետաքրքրվում «Նախաշավղի» բախտով: Մանավանդ որ այդ ու հաջորդ տարիների քննարկումների ժամանակ դրքի մասին նպաստավոր կարծիք չեն հայտնում պաշտոնական ու անկոչ դրախոսները՝ Վրաստանի Հայոց հոգևոր կոնսիստորիայի աշխատակից Խ. Մարգանյանը, ակադեմիկոս Մ. Բրոսսեն, Տիֆլիսի գիմնազիայի

---

[1] *Ե. Հասանովյանը վատնել էր պետական դումարները, 50.000 արծաթ ռուբլուց ավելի, որոնցով Անդրկովկասի դավառական քաղաքներում դպրոցներ էին կառուցվելու (տանուլ էր տվել թղթախաղում): Այդ պատճառով էլ խիստ պատժի է ենթարկվում. աքսորվում է Սիբիր:*

ուսուցիչներ Առաքել Արարատյանը (Աբովյանի երբեմնի գաղափարակիցն ու մտերիմ ընկերը) և Դավիթ Արզանյանցը, երեքը՝ հայ, մեկն էլ՝ հայագետ: Սրանց էլ կուրորեն հավատ ընծայելով՝ վերատեսչի պաշտոնակատար, դիմնազիայի տեսուչ և մանկավարժական խորհրդի նախագահ Ի. Վ. Ռոսկովշենկոն, որը ժամանակակիցների բնութագրմամբ՝ «վատ, ամբարտավան մարդ» էր[2], պաշտոնապես վավերացնել է տալիս «Նախաշավղի», որպես ուսումնական ձեռնարկի, դործածությունը մերժելու որոշումը՝ հատուկ զեկուցագիր ներկայացնելով երկրամասի գլխավոր կառավարիչ դեներալ Գոլովինին: Եվ այնուհանդերձ՝ «Նախաշավղի» տպագիր տարբերակով, թեկուզ և ո՛չ լրիվ, Աբովյանը հայոց լեզու, այսինքն՝ գրաճանաչությունն ու կարդալ է սովորեցրել իր մասնավոր աշակերտներին, Տիղիսում ու Երևանում, իսկ առանձին օրինակներ էլ նվիրել սրան-նրան, ինչպես օրինակ՝ Պերճ Պռոշյանին ու նրա երկու դասընկերներին և Աշտարակի դպրոցի ուսուցիչ Շապուհ Պետրոսի Շահնազարյանին (1846 թվականի ամռանը):

1840 թվականին Աբովյանը պատրաստում է «Նախաշաւիղ կրթութեան» դասագրքի մի նոր տարբերակ կամ խմբագրություն՝ բաղկացած երկու մասից. Այբբենարան-ընթերցարանից (Ա.) և Դրաբարի ու աշխարհաբարի համեմատական քերականությունից (Բ.), երկուսն էլ, սակայն, չկարողանալով տպագրել: Առաջին մասն, ի դեպ, հրատարակվել է միայն 1862 թվականին, Տիղիսում, Հովսեփ Փոնդոյանցի և Համբարձում Էնֆիաճյանցի աշխատասիրությամբ (պահպանվել է նաև ձեռագիրը՝ մաքուր արտագրված, մասամբ Աբովյանի, մասամբ էլ անծանոթ ձեռագրով)[3]: Բ մասը՝ քերականությունը, որի նյութերը Աբովյանը պատրաստել էր ավելի վաղ, դեռ 1839-ին, մնալով անտիպ (ձեռագիրի) ժամանակի ընթացքում թերթաթափ է եղել, զրկվել վերջին էջերից, որոնք կորել են անվերադարձ: Դատելով «Ցանկ գրոց»-ից կամ բովանդակությունից՝ պակասում են «Նամակք» բաժնից ավելի քան քսան նյութ, դուցե և ավելի (եթե նկատի առնենք, որ, երբեմն

---

2 Moritz Wagner. Reise nach Kolchis und nach den deutschen Colonien jenseits des Kaukasus. Leipzig. 1850. S. 28.

3 Մինչև այժմ, թյուրիմացաբար, ձեռագիրը «Նախաշավղի» առաջին հրատարակության պատիվը վերագրվել է բացառապես Համբարձում Էնֆիաճյանցին, մինչդեռ, ինչպես «Վերքի» ու «Պարապ վախտի խաղալիքի», այնպես էլ այդ գրքի տպագրության ծախքերն ամբողջությամբ հոգացել և գիրքը խմբագրել է Հովսեփ Փոնդոյանցը: Առայժմ ուղղակի ավանդական սխալը՝ տվյալ խնդրին հանգամանորեն կանդրադառնանք այլ առիթով: «Նախաշավղի» այդ ձեռագիրը պահվում է ԱՆ№ 24:

միևնույն վերնագրի տակ, Աբովյանը վեպեզում էր նույն ընույթի մի քանի նամակ), «Ոտանավորք» բաժինը համարյա ամբողջությամբ (որոշ նյութեր, թերևս, կարելի լինի լրացնել հեղինակի թողոններում մնացած սևագրությունների օգնությամբ) և «Արժանիմաց ասութիւնք վասն թարգմանելոյ յաչխարհաբառն» բաժինը լրիվ[4]*:*

Հետագա չարադրանքի ընթացքում, դյուրության համար, «Նախաշավղի» դուդ խմբագրություններից առաջինն տարբերակը կկոչենք **Տպագիր «Նախաշավիղ»**, *երկրորդ տարբերակի առաջին մասը՝* **Ձեռագիր «Նախաշավիղ»**, *իսկ երկրորդ մասը՝ պարզապես* **Քերականություն:**

Մեզ չեն հասել և վաղուց անվերադարձ կորել կամ ոչնչացել են Տպագիրը «Նախաշավղի» և՛ ամբողջական ձեռագիրը, և՛ տպարանական փորձերն ու պատրաստի օրինակները, և՛ գրեթե բոլոր նախապատրաստական նյութերը[5]*: Բուն գրքից (այսինքն՝ 1838–1839 թթ. տպագրությունից) մինչև 1952 թվականը հայտնի էր ընդամենը* **մեկ օրինակ**, *այն էլ խիստ պակասավոր (սկսվում է 9-րդ և ավարտվում 72-րդ էջով): Անցյալ դարի 70-ական թթ. վերջերին (մի՞ 80-ական թթ. սկզբներին կամ փոքր-ինչ ուշ), առայժմ անհայտ հանգամանքներում, Տպագիրը «Նախաշավղի» այդ եզակի օրինակը ձեռք էր բերել Ղազարոս Աղայանը և օգտագործում էր իր մանկավարժական առօրյայում:*

Շուրջ 1910 թվականին, մի թերթիկի վրա, Ղ. Աղայանը սևագրել է հետևյալ ծանոթություն–առաջարկը (թերթիկը փակցված է գրքի կազմի վրա, ներսից). «Դուցե ուրիշների մոտ նույնպես գտնվին այս գրքից: Թո՛ղ ընտրեն դրանց միջից ավելի լավ պահ<պան>վածը: Իմ գրքից պակասում են՝ մեկ թուղթ սկզբից, ուր տպված է լինում գրքի հեղինակի ու տպարանի անունները, մի թուղթ էլ վերջից, որ կարող է եղած լինել հիշատակարանի պես մի բան: Արդ առաջարկում եմ՝ 1...»: Այստեղ ընդհատվում է այս խորհրդավոր ծանոթությունը՝ ընթերցողին թողնելով տարակուսանքի մեջ[6]*: Բարեբախտաբար, պահպանվել է դարձյալ Աղայանի՝ նույն ժամանակները գրված և միևնույն խնդրին վերաբերող մի երկրորդ նկատողություն ևս (դրա ինքնագիրը կորել է,*

---

4 *Ա № 25:*

5 *Տպագիր «Նախաշավղից» պահպանվել են աղոթքների բաժնի ոտանավորների սևագրությունները (որոնք թարգմանություններ են գնդմաններից): Դրանց ինքնագրերը տե՛ս Ա № 107 տետրում, արտագրությունները (անծանոթ ձեռագրով՝ № 57 տավար գավթարում:*

6 *Ա № 710:*

բայց մնացել են գրողի որդու՝ Մուշեղ Աղայանի արտագրած քնագիրը և նույնի մեքենագիր օրինակը, երկուսն էլ 1930-ական թվականների պատճեններ), որից տեղեկանում ենք, որ անվանի գրողի առաջարկությունը աստիճական էր. «Որպեսզի մեր անմահ հեղինակի <գրքի> այս մի հատիկ օրինակը չկորչի, — ծանուցում էր Աղայանը, — լավ կլինի, որ սա պահպանվի մեր ազգային հաստատություններից մեկում: Այս հանգամանքից օգտվելու նպատակով՝ ես առաջարկում եմ կարողավոր մարդկանց գնել այդ գիրքը մի հազար ռուբլով, իսկ այդ դումարը խառնել հեղինակի հուշարձանի օգտին հավաքվածին»[7]*:*

Աղայանի բաղձանքը, քանի նա դեռ ողջ էր ու հետո, շուրջ երկաք տասնամյակ, բաղձանք էլ մնաց, իսկ գրքի հետազոտությամբ ո՛չ ոք չզբաղվեց:

«Նախաշավղի» այդ միակ օրինակի բովանդակության ու վիճակի մասին խոսելիս՝ Աղայանն, իհարկե, ըստ ամենայնի խորամուխ չէր եղել հարցի մեջ, որովհետև անգամ սեփական օրինակի թռուցիկ ուսումնասիրությունից նա պիտի համոզվեր, որ թերթեր են կորել կամ նյութեր են եղել գրքի ինչպես սկզբում, այնպես էլ վերջում, որոնցից հենց թեկուզ կիսատ մնացած «Վեհանճնություն» պատմվածքը պետք է իր շարունակությունն ունենար և, ի դեպ, այն կարելի էր լրացնել մեկ այլ տարբերակի օգնությամբ, որ պահպանվել էր Ջեւադիր (կամ 1862 թ. տպագրված) «Նախաշավղի» կազմում: Իսկ ի՞նչ խորագրեր են ունեցել մյուս նյութերը, ի՞նչ բովանդակությամբ և քանի՞սը, պետք է այդ ևս մտահոգեր Ղ. Աղայանին, մանավանդ որ 1896 թ. «Արճագանքի» էջերում, Ազ. Երիցյանցի հրատարակած վավերագրություն, այդ նյութերից մի քանիսը հիշվում էին: Եվ այնուհանդերձ՝ Աղայանի հայտնաբերած օրինակով սկսվեց «Նախաշավղի» ուսումնասիրության նոր շրջափուլը. գրքի առաջին 15 էջերը (9–23) 1912 թվականին արտատպվեցին «Հորիզոն» օրաթերթում[8]*, Ա. Աբեղյանի առաջաբանով («Խաչատուր Աբովյանից մի էջ»), իսկ բուն գիրքը, որպեսզի պատահարների զոհ չդառնար, ի պահ տրվեց Հովհաննես Թումանյանին*[9]*: Արդեն խորհրդային իշխանության տարիներին*

---

[7] *Ա № 766, նաև՝ Ղ. Աբովյան, Նախաշավիղ, լուսատիպ նմանահանություն. Ե., 1940, էջ* LXIX–LXX*:*

[8] *«Հորիզոն», 1912, հունիսի 16, № 127, էջ 2–3:*

[9] *Տե՛ս Մ. Աղայանի «Նոր ուղղագրության պատմական ակտը» հոդվածի առաջին հատվածը, «Խորհրդային Հայաստան», 1922, ապրիլի 2, № 73, էջ 3: («Դեռ 19-րդ դարի սկզբին Խաչատուր Աբովյանը իր «Նախաշավիղ <կրթութեան> ի պէտս նորավարժից» այբբենարանում, որից մնացել է մի*

Տպագիր «Նախաշավղի» միակ օրինակը, Ազայանի որդու ջանքերով՝ հանձնվեց Հայաստանի կուլտուր-պատմական թանգարանի գրական բաժնին, ուր և միացվելով Աբովյանի թղթոններին՝ անվթար մնում է մինչև օրս:

Հետագա որոնումները՝ տպագիր «Նախաշավղի» նոր օրինակներ գտնելու հույսով, արդյունք չտվին (չնայած որ, ուշագիր լինելու դեպքում, ցանկալի օրինակը Հայաստանի գրապահոցներում էր, և մանրախնդիր մատենագետի աչքից չպիտի վրիպեր), ուստի, երբ 1938-ից սկսած փոխվեցին Աբովյանի անձի ու գրական ժառանգության գնահատման չափանիշները, և.Հայրենասեր գրողը, կարծես, երկրորդ անգամ հարություն առնելով՝ մեր կյանքն ամբողջությամբ լցրեց իր շնչով, երբ սկսեցին առանձին մեծ ու փոքր գրքերով և պարբերականներում, մեկը մյուսի հետևից, հրատարակվել ու վերատպվել նրա հայտնի, անտիպ ու անհայտ երկերը, եռանդուն բանասեր Ռ. Զարյանն իրեն նվիրեց «Նախաշավղի» գայթակղիչ առնդծվածի լուծմանը: Արդյունքն եղավ ուսումնասիրողներին հայտնի միակ օրինակի լուսաոտիպ նմանահանությունը, որը նմանօրինակ չորրորդ փորձն էր հայ դրատպության պատմության մեջ (դրան նախորդել էին Լազարյան (887 թ.), Էջմիածնի № 229 (989 թ.) և Վենետիկի Մխիթարյանների՝ Մլքե Թագուհու Ավետարանների նմանահանությունները, ըստ որում՝ վերջինի միայն մանրանկարները) և Զարյանի «Նյութեր «Նախաշավղի» պատմության համար» բանասիրական ընդարձակ ուսումնասիրությունը, որոնք չահեկան առաջաբանի ու մատենագիտական ցանկերի հետ միասին լույս տեսան 1940 թվականին, առանձին գրքով և 2000 օրինակ տպաքանակով:

Գրքի տիտղոսաթերթը հետևյալն է (արտագրում ենք տող առ տող, առանձին տողերն անջատելով իրարից թեք գծիկով). «Խաչատուր Աբովյան, /Նուխաշավիղ/ կրթությեան ի պետս նորատարժից /Լուսաոտիպ նմանահանություն/ Առաջաբանով և ծանոթություններով /Ռուբեն Զարյանի/ Հայկական ԽՍՀ պետական հրատարակչություն /Երևան/ 1940» (ամբողջը ԺԸ+[9–72]+CII կամ՝ 18+64+102=184 էջ):

Հատիկ օրինակ Գաղարոս Ազայանի մոտ և այժմ գտնվում է բանասեղծ Հովհաննես Թումանյանի մոտ, խորհուրդ էր տալիս ուսանողներին ամեն մի տառին իր հնչյունը տալ, դեն ձգել այր, բեն, գիմ «հիմար» անուններից և այլն: Վերջին խոսքերը բառացի փոխ են առնված Տպագիր «Նախաշավղից» (էջ 11). «Ինչպիսի, ի փառս Աստուծոյ, ի բաց թողուլ գիմարը անուանակոչութիւնն տառից՝ այր, բեն, գիմ, ըմ և այլն. գամենայն տառս պարտ է ըստ բնական հընչման արտասանել»):

Մի տասնամյակ անց՝ «Նախաշավղի» երկու տարբերակներն ամբողջությամբ հրատարակվեցին Խ. Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի V հատորում, Ասատուր Ասատրյանի աշխատասիրությամբ. նրա և Ա. Մանուկյանի հանգամանալից ծանոթագրություններով (վաճառքի է հանվել 1950 թ. աշնանը):

Թվում է, «Նախաշավղի» հրատարակությանն առնչվող գաղտնիքները պարզվեցին, և նոր բան ասելու հնարավորություններն սպառվեցին: Բայց տարին հազիվ բոլորած, 1951-ի վերջերին, Մատենադարանի տպագիրների բաժնում, միանգամայն անսպասելի և՛ աբովյանագետների, և՛ մատենագետների համար, պրոֆ. Գ. Սևակի պահանջած՝ 1862 թ. հրատարակված «Նախաշավղի» փոխարեն, նրան հանձնվեց Տպագիր «Նախաշավղի» անհայտ օրինակը, որը թյուրիմացաբար գրանցված էր որպես 1862 թ. հրատարակություն և որը մեծապես լրացնում էր Աղայանի օրինակի պակասները՝ սկզբի 8 էջերը (1–8) և վերջից ևս 24 էջ (73–96), բայց հրատարակությունն, ամբողջությամբ վերցրած, նորից մնում էր թերի: Վերստին բացակայում էին.

1. Գրքի անվանաթերթը կամ տիտղոսաթերթը, որը, սովորաբար, դրվելով գրքի սկզբում՝ չէր համարակալվում, իսկ անվանաթերթի հակառակ էջի վրա էլ, դարձյալ առանց համարակալման, ռուսերեն լեզվով, տպագրվում էր հատուկ նշում գրաքննության (կամ հայոց հոգևոր իշխանությունների) կողմից հիշյալ հրատարակությունը թույլատրելու մասին՝ գրաքննիչի ազգանունով և ամիս-ամսաթվով:

2. Գրքի ցանկը կամ բովանդակությունը, որին հատկացվում էին հաջորդ 3–4 էջերը (կամ ինչքան որ պահանջվեր):

3. Ենթադրելի է նաև ընծայական որևէ հարգարժան անձի, մտերիմ բարեկամի կամ պետական ու հանրային գործչի անունով, որին Աբովյանը, թերևս, ձոնել է իր «Նախաշավիղը», որ միանգամայն հնարավոր է:

Այսքան նյութեր գրքի սկզբից՝ համարակալված երբեմն հայկական թվանշաններով, երբեմն էլ առանց համարակալման, որոնց համար կպահանջվեր 2–4 թերթ կամ 4–8 էջ (բոլոր դեպքերում՝ զույգ թերթեր):

Գրքերն, ընդհանրապես, տիտղոսաթերթից բացի, ունենում են նաև շապիկ, որը տպագրվում է ավելի հասած և գունավոր թղթի վրա, հաճախ՝ ձևավորված: Մեզ չի՛ հասել Տպագիր «Նախաշավղի» շապիկը նույնպես:

Գրքի վերջից պակասում էին.

1. «Էջմիածին» խորագրով դրաբար քերթվածի չարունակությունը (սկսվելով դրքի 94-րդ էջից՝ այդ ոտանավորն ընդհատվում էր 96-րդ էջի վերջում, 89-րդ տողով):

2. «Ողբ Աղա Մահմադ խանի կողմից Տփղիսի ավերման մասին»

3. «Ճառ Տփղիսի Հայոց նոր հանգստարանի մասին»

Վերջին երկու երկերի խորագրերը հիշվում են «Նախաշավղի» քննության ու գրախոսման իրագրություններին վերաբերող պաշտոնական գրագրություններում, էլ չենք ասում, որ դրանց տարբերակները կամ հետագա մշակումները, որպես անկախ գործեր, պահպանվել են Աբովյանի թղթոններում և երկիցս տպագրվել[10]*:*

Հնարավոր է միանգամայն, որ դրքի վերջից պակասող տետրակում կամ տետրակներում լինեին ուրիշ նյութեր էլ, ածակ ու չափածո ուրիշ գրվածքներ, բայց թե ի՞նչ, դժվարանում ենք պատասխանել: Չի բացառվում նաև, ինչպես Ղ. Ալայանն էր ենթադրում, հիշատակարանի առկայությունը:

Եվ այնուհանդերձ՝ չնորհիվ նորահայտ օրինակի, Աբովյանի գրական ժառանգությունը հարստացավ մինչ այդ անծանոթ բազմաթիվ (ինքնուրույն ու թարգմանական) էջերով, որոնք Տպագիր «Նախաշավղի» կազմում լինելով հանդերձ՝ երբևէ չէին հիշատակվել նրան վերաբերող պաշտոնական վավերագրերում և անհայտ ու աննկատելի էին ուսումնասիրողներին: Հիշենք մի քանիսը՝ «Ջերմեռանդ հայցուած առ վերծանող գրծոյս» խորագրով առաջաբանը (էջ 1–7), «Բարեկամություն» բանաստեղծությունը (էջ 75–76), «Սեր, բարեկամություն» բալլադը (էջ 76–78), «Խաղ վասն երևխայից» և «Ի վերա գարնան» երգերը (էջ 82–84), «Ուղտն ու Մուկը», «Տանուտերն ու Մղդսին», «Կռվարար չները», «Վախլուկ չուներ» առակները (էջ 84–90), զանազան ոտանավորներ, առած-ասացվածքներ, մանկական հանդարտություններ և այլն:

---

[10] *«Ողբը» պահպանվել է երկու տարբերակով. մեկը՝ մարբակիր, բաղկացած երկու մասից՝ միմյանց հաջորդող սրճակ ու չափածո հատվածներով, գրաբար, խորագրված՝ «Վերջին հրաժարական քաջագոր արքային Հերակլ» (տե՛ս ե IV, 229–230), մյուսը՝ սևագիր, անխորագիր, անավարտ, չափածո (տե՛ս ե I, 183–184), մանրամասնությունները տե՛ս Պ. Հակոբյան. Անծանոթ նամակ Տփղիսի 1795 թ. ավերման մասին և Աբովյանի «Ջայն ազատակի» բանաստեղծությունը:— «Լրաբեր». 1969. № 7. էջ 69–80: Իսկ «Ճառի» միայն հետագա աշխարհաբար վերամշակումն է պահպանվել (տե՛ս ե IV, 40–46)՝ առաջին անգամ լույս տեսած միայն 1914-ին, «Տարազ» պարբերականում (№ 1. էջ 5–8):*

Երբվանի՞ց է Տպագիր «Նախաշավղի» այս երկրորդ օրինակը մուտք գործել Մատենադարան և ինչո՞ւ է վրիպել ուսումնասիրողների ուշադրությունից:

Բարեբախտաբար, այդ հարցերի պատասխաններն, ըստ ամենայնի, տալիս են Մատենադարանի օրինակի առաջին էջի վերին լուսանցքում եղած կնիքի դրոշմը և տարբեր ժամանակներում արված երկու մակագրություններ: Հաստատության կնիքի վրա կարդացվում է. «ՀՍԽՀ ԼԺԿ, Էջմիածնի գիտական ինստիտուտ, Մատենադարան, 1930–ՌՅԼԹ [=1379+551=1930]»: Առաջին մակագրությունը, որ, առանց այլևայլության, կատարված է գիրքը մինչև Մատենադարան հանձնելը, գրող-բանասեր և Աբովյանի անձի ու գործի խանդավառ ժողովրդականացնող Սարգիս Քամալյանցի ձեռքով, հին (նախաաբեղյանական) ուղղագրությամբ և մոտավոր ձևով ակնարկում է գրքի հեղինակը, խորագիրը և բովանդակությունը, հետևյալն է. «Ընթերցարան մայրենի լեզվի, գրաբարախառն և երևանի բարբառով (Հավանորեն՝ Խաչ. Աբովյանի կազմած)»: Մակագրություններից երկրորդն էլ կատարված է մինչև 1936 թվականը, Էջմիածնի գիտական ինստիտուտի մատենադարանապետ Սեններերիմ Տեր-Հակոբյանի ձեռքով: Նա էլ, չնայած սխալ, բայց հաստատուն ձևով որոշում է անանուն գրքի և՛ հեղինակը, և՛ խորագիրը. «Խ. Աբովյան, Նախաշավիղ, 1862, Թիֆլիզ», — և ապա ստորագրում. «Ս. Տեր-Հակոբյան»

Այսպիսով՝ Տպագիր «Նախաշավղի» երկրորդ օրինակի ժամանակավոր տերը, դեռ նախահեղափոխական տարիներին, եղել է Սարգիս Քամալյանցը: Այն Էջմիածնի գիտական ինստիտուտին նվիրվել կամ վաճառվել է 1930–1936 թթ. միջև, թերևս, 1934-ին, երբ Քամալյանցն ավարտելով «Նեմեց և Հայ ծերերի պատմածներն Աբովյանց անմահ Խաչատուրի մասին» հուշապատումը, վերջինիս ձեռագիրն ու այլ նյութեր Տիղիսից բերեց Երևան: Ճիշտ որոշելով հանդերձ գրքի հեղինակը՝ Ս. Տեր-Հակոբյանը, սխալմամբ, բուն գիրքը նույնացրել է «Նախաշավղի» 1862 թ. հրատարակության հետ, դրանով իսկ, իրենից անկախ, չեղել աբովյանագետների ուշադրությունը, որովհետև գրադարանի քարտարանում գիրքը որպես այդպիսին է նկարագրվել, մինչդեռ «Նախաշավղի» 1862 թ. հրատարակության օրինակները բնավ էլ հազվագյուտ չէին, և հեշտությամբ կարելի էր ստուգել, թե բանն ինչումն է, էլ չենք ասում, որ 1862-ից հետո նրա չափածո հատվածները վերահրատարակվել էին մեկ անգամ ևս («Խաչատուր Աբովյանի երկերը» հատորի մեջ, 1897-ին, Մոսկվայում):

2

Տպագիր «Նախաշավղի» ճակատագիրը հայ բանասերներին հուզել է անցյալ դարի 60-ական թթ. սկսած: Մանավանդ որ, պաշտոնապես լույս տեսած չլինելով հանդերձ՝ այն տարածվել ու ազդել է իրեն ժամանակակից ու հետագա դասագրքերի վրա, ինչպես նաև՝ Արղանյանց եղբայրների և նրանց քեռականության, թեպետ նրանք չանք չէին խնայում թաքցնելու այդ[11]: «Նախաշավղի» հետևությամբ են կազմել իրենց դասագրքերը Գ. Մուրատյանը[12] և Տփղիսի գիմնազիայի հայ աշակերտները[13] նույնպես:

«Նախաշավղի» մասին ուշագրավ դիտողություններ ունեն աբովյանագիտության երախտավոր Մ. Տեր-Ազարյանցը («Մեկ քանի խոսք Ապովյանցի վերա», 1861)[14], գրողներ Ղ. Աղայանը («Հարկավո՞ր է արդյոք Ը հնչյունի օժանդակությունը գրագիտություն ուսուցանելիս», 1882)[15], Պ. Պռոշյանը («Գյուղական վարժապետներ», 1886)[16], բանասերներ Ա. Երիցյանցը («Հնից և նորից», հոդված IV, 1896)[17], Ե. Շահազիզը («Խաչատուր Աբովյան», 1928)[18] և ուրիշներ: Այդ ամենն ի մի են հավաքված Ռ. Զարյանի՝ արդեն հիշված ծանոթություններում, որոնց վերամշակված տարբերակը՝ «Նախաշավիղը» և նրա պատմությունը» խորագրով, 1940-ին ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի գրականության և լեզվի ինստիտուտում

---

11 Մանրամասնությունները տե՛ս Պ. Հակոբյան, Խ. Աբովյանի «Աչքի լույս ջան, դարդ մի՛ անիլ...» բանաստեղծության պատմությունը:— «Լրաբեր», 1979, № 8, էջ 69–80, նաև սույն ժողովածուում:

12 Գ. Մուրատյանց, Հայերեն քերականություն նորավարժ ուսանողաց համար, Տիflիս, 1860:

13 Այբբենարան հայերեն լեզվի, աշխատասիրություն հայ աշակերտաց գիմնազիայի Թիֆլիզո (տետրակ Բ), Թիֆլիզ, 1861 (հեղինակներն են՝ Գ. Տեր-Ադեքսանդրյան, Ագ. Երիցյան, Մ. Քոչարյան, Գ. Ներսիսյան և Բագրատ Ջալալյան):

14 «Կռունկ հայոց աշխարհին», 1861, № 7, էջ 541:

15 «Վարժարան», ամսագիր, 1882, նոյեմբեր, № 4, էջ 37, նաև՝ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. IV, ե., 1963, էջ 138:

16 «Արձագանք», 1889, հունվարի 22, № 2, էջ 35–36, նաև՝ Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. III, ե., 1954, էջ 43–44:

17 «Արձագանք», 1896, սեպտեմբերի 1, № 102:

18 Տեղեկագիր ՀՍՍՀ պետության և արվեստի ինստիտուտի, № 3, 1928, էջ 138–141:

պաշտպանվել է որպես թեկնածուական դիսերտացիա[19]: Վերջապես, Մատենադարանում պահվող օրինակի խնդությունը պարզելու կապակցությամբ, 1952-ին, իրենց նկատառումներն են հայտնել Գ. Սևակը, Ա. Բաբայանը[20] և տողերիս գրողը[21]: Եվ այնուհանդերձ՝ «Նախաշավղի» ամբողջական բովանդակությանը, տպագրման հանգամանքներին, թվականին ու տպարաններին վերաբերող զանազան հարցեր ո՛չ միայն դեռ մնում են չլուծված, այլև, կարծես, ավելի են խճճվել:

Ինչ վերաբերում է գրքի սկզբում եղած և, սովորաբար, չհամարակալվող (կամ էլ հայկական թվանշաններով համարակալվող) էջերին՝ գրքի խորագրին, տիտղոսաթերթին, գրաքննական մակագրությանը, բովանդակության ցանկին, բոլորն էլ, ի վերջո, հաջող կամ նվազ հաջողությամբ՝ կարելի է վերականգնել:

Տարակուսա չունենք, որ գիրքը կոչվել է «Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից». մինչև 72-րդ էջը տպագրվել է Արզանյանցների տպարանում, որի անժխտելի ապացույցը չարվածքի համար օգտագործված տառատեսակներն են՝ սովորական և նոտր (վոքրատառ և մեծատառ), գրքի գրատպական հորինվածքն ու յուրահատկությունները: Վիճարկման ենթակա չէ նաև երկրորդ էջի հարցը. նրա վրա որևէ բան դեռ չէր կարող լինել, քանի որ գրքի լույս ընծայման առթիվ եղել է Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության 1838 թ. կարգադրությունը, բայց գրաքննական թույլտվության չի ներկայացվել, գոնե մինչև 1844 թ. Աբովյանը գրաքննությանը չի դիմել[22] և այլ ուղղությամբ է աշխատել (ջանում էր հոգևոր իշխանությունների հետ հարթել ծագած դժվարությունները):

---

19 Մեզ ծանոթ են Ռ. Զարյանի երկու էջից բաղկացած «Դիսերտացիոն թեզիսները»՝ տպագրված Արմֆանի տպարանում, 1940-ին, 150 օրինակ տպաքանակով:

20 Տե՛ս «Գրական թերթ», 1952, հունվարի 10, № 1, Գ. Սևակի «Խ. Աբովյանի «Նախաշավղի» մի նորահայտ օրինակ» և Ա. Բաբայանի «Նախաշավղի» պատմության չուրջը» հոդվածները:

21 «Սովետական գրականություն և արվեստ», 1952, № 7, էջ 164–171, Պ. Հակոբյանի «Նախաշավղի» տպագրման թվականը» հոդվածը:

22 Այդ է հուշում Ի. Ռոսկովշենկոյի 1842 թ. ապրիլի 6-ին գեներալ Գոլովինին մատուցած զեկուցագրի մեջ եղած ակնարկը. «Если книга эта будет одобрена цензурою, то Абовьян для любопытных может ее почитать». (Տե՛ս Մատ., երից. № 148/203, էջ 4 և Տիղիսի դիմնադիայի մանկավարժական խորհրդի 1843 թ. դեկտեմբերի 22-ի նիստի որոշման առթիվ եղած գրագրությունը):

Ինչպես հուշում են Արղանյանցների նույն 1838–1840 թթ. հրատարակած ուսումնական ձեռնարկների վրա եղած համապատասխան մակագրությունները, «Նախաշավղի» տպագրության թույլտվությունն իրավասու էին տալու կամ հայոց հոգևոր իշխանությունները (Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդը կամ էջմիածնի կաթողիկոսը), կամ Վրաստանի գլխավոր կառավարիչը: Սկզբներում Աբովյանը դիմել է առաջիններին, բայց (գոնե մինչև 1840 թ.) արդյունքի չի հասել: Դրանից հետո արդեն խնդրել է էջմիածնի Սինոդի դատախազ Թովմա Ղորղանյանի օժանդակությունը, բայց նորից ոչինչ չի ստացվել[23]: Ինչպես հաղորդում են որոշ նյութեր, Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի պատասխանը նույնպես, ըստ ավանդության, բացասական էր: Արքեպիսկոպոսն առհասարակ դեմ լինելով աշխարհաբար դրքերին՝ «Նախաշավղի» հրատարակությունը չի արտոնել[24]: Դասագրքի տպագրված մամուլներն այդպես էլ դրքք չդարձան, մնացել են հեղինակի մոտ՝ առանց սկզբի ու վերջի, սկսած 1839 թ. գարնանից: Եվ այդ առթիվ Աբովյանը նույն 1839 թ. հոկտեմբերի 9-ին գանգատվում էր ակադեմիկոս Քրլոսիան Ցրենին:

Հանելուկայինը «Նախաշավղի»73–96 էջերն են, վերջիններիս տպագրման տարին, տպարանը և դրանց համար հոգացող անձնավորության հարցը (եթե միայն տպագրությունը կատարվել է Աբովյանի ողբերգական վախճանից հետո):

Մատենագետ Ա. Բաբայանն այն համոզմանն էր, որ գրքի 1–72 էջերն իսկապես տպագրվել են Արղանյանց եղբայրների տպարանում, իսկ հաջորդ 73–96 էջերը՝ ավելի ուշ, 1844–45 թթ., Ներսիսյան դպրոցի տպարանում[25]:

---

23 Այդ են հուշում Աբովյանի՝ Թ. Ղորղանյանին ուղղված նամակի (1840, նոյեմբերի 1) հետևյալ խոսքերը. «Եթէ պոյ անօրէնութիւն ինչ արարեալ ի Զէնջ ի մասին գրքին իմոյ, խնդրեմ ծանուցանել ինձ, այնպի գիրքն պատրաստ է վաղուց» (Ե X, 235): Բանն այն է, որ Թ. Ղորղանյանը ժամանակ անց վախճանվում է և գաղտնիքն էլ հետը տանում:

24 Տե՛ս Ի. Մարգանյանի պատասխան նամակը Ի. Աբովյանին (Տփղիս, 1839 թ. նոյեմբերի 23), որ վերլուծում է վերջինիս հորինած «Ուսումնական մատյանին», որի մասին նամակագիրն աննպատակ կարծիք էր հայտնել (Դ II, 158–159). նաև Մ. Տեր-Ագոբյանցի վկայությունը՝ «Կռունկում» տպագրված և արդեն վկայակոչված հոդվածում (էջ 541):

25 Տե՛ս «Գրական թերթ», 1952, հունվարի 10, № 1, էջ 4 («Հաստատապես կարելի է ասել, որ «Նախաշավիղը» Արղանյանցների տպարանում տպագրվել է 1844 թվին: Ինչ վերաբերում է Ներսիսյան դպրոցի

Առաջներում մենք էլ գրել ենք, որ գրքի համար օգտագործված տառատեսակները բոլորն էլ միևնույն տպարանից են ծագում, և ամբողջ գիրքը չարվելով Արզանյանցների տպարանում՝ նրա տպագրությունն ավարտվել (կամ ընդհատվել) է 1836–39-ին. մանավանդ որ Աբովյանն ինքն էլ 1847-ի վերջերին անուղղակի վկայություն էր տալիս հօգուտ դրա: Նա գրել է, որ «Նախաշավիղը» տպագրված լինելով «Տասը տարի» առաջ, Տիղիսի գիմնազիայի խորհրդի որոշ հայատյաց անդամների և հայ գրախոսների չարամտության պատճառով՝ գործածման թույլտվություն չի ստանում[26]*:*

Ուզում ենք այժմ մի լրացում անել. տարիների ընթացքում, ծանոթանալով և քննելով անցյալ դարի առաջին կեսին և, հատկապես, 30–40-ական թթ. Տիղիսում և Անդրկովկասում գործող տպարաններում չրջանառության մեջ եղած տառատեսակները, համոզվել ենք, որ «Նախաշավղի» 1–72 էջերի տպագրվելն Արզանյանցների տպարանում բնավ կասկած չի հարուցում: Այդ տպարանից են նաև 73–96 էջերում օգտագործված նոտր գրերն ու մեծատառերն անխտիր, բայց ահա՛ նույն էջերի սովորական տառատեսակները (10-ը կետաչափի պարզ ու հասարակ) ակնհայտ տարբերություններ ունեն և՛ 1–72 էջերի միևնույն չափսի տառերից, և՛ Ներսիսյան դպրոցի, և՛, մինչ այդ, նույն Արզանյանցների, և՛ Անդրկովկասի գլխավոր կառավարչության, և՛ ավելի ուշ գործող՝ Գ. Պատկանյանի, անգամ էջմիածնի և Շուշիի տպարաններում գործածված տառերից: Կարճ՝ Աբովյանի կենդանության տարիներին նման տառերով մեկ այլ գիրք չի չարվել Տիղիսում և Անդրկովկասի այլ վայրերում գործող հայկական տպարաններում: Հետևաբար՝ «Նախաշավղի» 73–96 էջերը կա՛մ Աբովյանն ինքն է հատուկ պատվերով տպագրել տվել թերևս այլ քաղաքների (Մոսկվա, Նոր Նախիջևան, Պետերբուրգ) հրատարակիչներին, կա՛մ Աբովյանի ցանկությամբ՝ այդ տառերն Արզանյանցները ձեռք են բերել հաջորդ տարիներին և լրացրել գիրքը, մանավանդ որ, ըստ հուշագիրների, գրքի տիպը շատ անպիտան էր, թերևս այդ պատճառով էլ կիսատ է մնացել: Բացառված չէ նաև, որ գրքի այդ ու մեզ չհասած հաջորդ էջերը (97–98 և այլն) լրացվել են Աբովյանի ողբերգական մահվանից հետո, 60-ական թթ., առայժմ չպարզված հանգամանքներում:

տպարանում տպագրված մամուլներին, ապա դրանք տպագրվել են կամ նույն 1844 թվին, կամ թե չէ 1845 թվի սկզբներին»:

26 *Տե՛ս և* VII, *195 («... տպագրված է, բայց տասը տարի է ինչ, առանց գործածելու, անօգուտ ընկած <է> ... միայն նրա համար, որ Թիֆլիսի գիմնազիայի խորհուրդը... հենվելով իրենց գիտական համարող հայերից ոմանց կարծիքների վրա... գիրքը բաց չեն թողնում հենց միայն նրա համար, որ դա գրված է հասարակ ժողովրդին, ընդհանուրին հասկանալի լեզվով»):*

Հովսեփ Փոնդոյանցը, որ 1861 թվականին Աբովյանի այրուց գնել էր նրա ամուսնու անտիպ երկերի (դրանց մեջ և «Նախաշավղի») հրատարակութեյան իրավունքը, ծանոթանալով իրերի վիճակին, ավելի պարզ՝ ձեռք բերելով նաև Տպագիր «Նախաշավղի» 1–72 էջերի մամուլների տպաքանակի մի մասը, որովհետև հազիվ թե գրքի բոլոր օրինակները պահպանված լինեին, քանի որ Աբովյանն ինքը արդեն որոշ թվով օրինակներ բաժանել էր սրան-նրան, վճռել է ավելի քիչ ծախս անելով՝ պակաս էջերն էլ լրացնել և գիրքը լույս աշխարհ հանել, իսկ հետո, մեզ անհայտ պատճառներով («Նախաշավղի» այդ տարբերակում բավականաչափ շատ էին գրաբար էջերն ու մանկավարժական հրահանգները և խրթին ոտանավորները), փորձնական մի քանի մամուլ պատրաստելուց հետո, հետ է կանգնել այդ մտքից՝ նախապատվությունը տալով Ջեռափիր «Նախաշավղի» առաջին մասին, որը և տպագրել է 1862-ին, Հ. Էնֆիաճյանցի գործակցությամբ:

Այսպիսի վարկածն, ինչ խոսք, կլիներ տրամաբանական, բայց ո՛չ հարցի արմատական լուծում, որովհետև նորից պիտի դժվարանայինք դասագրքի վերջին էջերի տպագրողին մատնանշել:

Հնարավոր է մեկ ուրիշ ենթադրություն նույնպես. դուցե Աբովյանն ի՞նքն է նախաճեռնել «Նախաշավղի» կիսատները լրացնելու, այն էլ ո՛չ առաջ, քան 1843 թ. երկրորդ կեսը, և ո՛չ ուշ, քան 1848 թ. հունվարի չուրջ 20-ը՝ համապատասխան պատվեր տալով կամ հենց իրենց՝ Արղանյանցներին, կամ էլ Անդրկովկասի գլխավոր կառավարչության տպարանին (Արղանյանցների տպարանը 1844-ից միաճուլվել էր այս վերջինին և դադարեցրել իր անկախ գործունեությունը), սակայն ո՛չ թե նրանց ունեցած հին տառերով պատրաստել տալով շարվածքը, այլ բոլորովին նոր տառերով և մասամբ միայն օգտագործելով հները (մեծատառերն ու նոտրդրերը հատկապես):

Աբովյանի թղթոններում (Ա № 116), ի. Կռիլովի «Стрекоза и Муравей» առակի հայերեն թարգմանության ինքնագրի մաքուր էջի վրա, տպագրական տառերով և մանուշակագույն ներկերով, երկու անգամ գրոշմված է «Զարման» անունը, նաև՝ «Մխ» և «Սխ» գլխատառերը: Զարման-ը Աբովյանի դատեր անունն էր, որը ծնվել է 1843 թ. հունիսի 25-ին, հետևաբար այդ անձնանվան հայտնվելը Աբովյանի ձեռագրերի մեջ, այն էլ 1843 թ. կեսերից առաջ, նվազ ենթադրելի է: Նշանակում է՝ «Նախաշավղի» 73–96 և հետագա (կորած) էջերի տպագրության փորձը 1843-ի հուլիս ու հաջորդ ամիսների նախաճեռնություն պիտի դիտվի: Չի՛ բացառվում մեկ այլ վարկած էլ: Կարող է պատահել, որ խնդրո առարկա տառերը «Նախաշավղի» հետ ընավ կապ չունենն, դրանք Աբովյանը ձեռք է բերել կամ ընտրել է «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի շարվածքի համար, որի տպագրությունը պետք է սկսվեր 1841 թ. աշնանը, բայց մեզ անհայտ պատճառով հետաձգվից (մանավանդ որ,

տառերի դրոշմները պահպանվել են առակների ձեռագրերի վրա, իսկ առակները «Պարապ վախտի խաղալիք»-ի հիմնական նյութերն են):

Մի վերջին վարկած էլ. 1844 թ. մարտի 1-ին, դեռ փետրվարի 19-ին ստորագրված կից գրության հետ միասին, Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության գրասենյակից ստանալով Տփղիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդի 1843 թ. դեկտեմբերի 22-ի օրագրության (նիստի արձանագրության) քաղվածքը, որը վերաբերում է «Նախաշավղի» երկրորդ քննարկմանը և այդ ընթացքում հայտնված կարծիքներին՝ դասագրքի բովանդակության, արժանիքների ու թերությունների մասին, ապա և՝ հանգիստ վիճակում ծանոթանալով արված դիտողություններին ու տեսնելով, որ դրանք հիմա այնքան էլ թշնամական չեն, ինչպես առաջներում, ու հնչտ ուղղելի[27]*, իսկ հետո էլ, ապրիլին, պաշտոնի բերումով լինելով Տփղիսում ու հանդիպումներ ունենալով նաև Արզանյանցների հետ, որոշում է ավարտել «Նախաշավղի» տպագրությունը և Արզանյանցների նոր ձեռք բերած տառերով շարել է տալիս գրքի վերջին պրակները, 73 էջից սկսած: Բայց Արզանյանցները հազիվ պատրաստում են ևս 3 մամուլ, յուրաքանչյուրը 4-ական թերթից (ամբողջը՝ 24 էջ) և գրքի 96-րդ էջում, մեզ անհայտ պատճառներով, կրկին ընդհատում «Նախաշավղի» տպագրությունը, այս անգամ՝ առհավետ:*

Հարցն այն է, որ կիսատ է մնում «Էջմիածին» ներբողը, ու թվում է, թե գլխավոր պատճառը Աբովյանի հոգեկան աշխարհի նոր ալեկոծումներն էին: Որքան էլ աներեր ու հաստատուն լիներ նրա համոզումը, թե ազգային լուսավորության գործում առաջամարտիկների դերը հոգևորականներին պիտի վերապահել, այնուամենայնիվ, 40-ական թթ. առաջին կեսին հայ կղերի ու Աբովյանի փոխհարաբերությունները այնպես լարված էին, որ նա չէր կարող հրապարակորեն ներբողել նրանց, այն էլ այդպիսի սենտիմենտալ ու ազաչական ոճով:

Մի պահ ընդունենք, սակայն, որ «Նախաշավղի» վերջին կիսատ մնացած մասի լրացման փորձն արվել է ո՛չ այդ ընթացքում, կամ 1844-ի գարնանը, այլ ավելի ուշ, այդ դեպքում ե՞րբ:

Վերջին անգամ, 1848 թ. հունվարի 5–19-ը անցկացնելով Տփղիսում (Աբովյանը Երևանից այստեղ էր եկել՝ առանց նախապես թուլլտվություն խնդրելու Անդրկովկասյան երկրամասի ուսումնական մասի կառավարչից, ինչպես այլ դեպքում անում էր, դրանով իսկ խախտելով ընդունված պաշտոնական կարգը), ի չարս այլ անհետաձգելի գործերի, չի բացառվում, որ ղբաղվեր նաև «Նախաշավղի»

---

27 *Համապատասխան վավերագրերը տե՛ս ՀԱ, ֆ. 1, ց. 1, գ. 1710, թ. 16–19: Կա և Աբովյանի մակագրությունը.* «К исполнению. Книга мною получена. Титулярный советник Х. Абовьян» *(«Ի կատարումն: Գիրքն ես ստացել եմ: Տիտղոսավոր խորհրդական՝ Խ. Աբովյան»): Նույն տեղում, թ. 16ա:*

*վաղուց սկսած տպագրությունն ավարտելու հարցով, դուցի և, մինչև իսկ, խնդրելով փոխարքա Մ. Ս. Վորոնցովի աջակցությունը: Անժխտելի իրողություն է նաև, որ գրքի շարունակությունը տպագրության հանձնելուց առաջ, Աբովյանը կատարել է ինչ-ինչ փոփոխություններ: Սա ենթադրություն չէ: Օրինակ՝ «Ագնվամտություն» պատմվածքին, ավելի ճիշտ՝ նրա վերնագրին, նախորդում է բաժնի խորագիրը՝ **«Բարոյական պատմութիւնք»**, մինչդեռ գրքի համապատասխան մասում, հիշյալ պատմվածքից բացի, ուրիշ նյութեր չկան: Պիտի հավանական համարել, որ դասագրքի ձեռագրում եղել են համանման արձակ այլ գործեր ևս, որոնք Աբովյանը հապալելով՝ թողել է մեկը (երևի այն պատճառով, որ «Ագնվամտություն» պատմվածքի կեսն արդեն տպագրվել էր, և, ուզեր թե չուզեր, պիտի լրացներ) և փոխարենն ավելացրել տարբեր սեռի քնարական հատվածներ, բոլորն էլ աշխարհաբար, որոնք արմատապես փոխել են դասագրքի բնույթը և այն մերձեցրել ժողովրդական ընթերցանության գրքի: Առակներից մեկ-երկուսի բնագիրը նույնպես վերանայված են, և նախապատվությունը տրված է ո՛չ թե սկզբնական տարբերակներին, որոնք պատրաստված էին 30-ական թթ. վերջերին և հետագայում օգտագործվել կամ փոխանցվել են «Նախաշավղի» նոր խմբագրությանը, այլ «Պարապ վախտի խաղալիքի» համար վերամշակած տարբերակներին, ապացույց՝ «Զարմանալի մարդիկը», «Մոլլա Մասրափնի պղինձը» առակները, մասնավորապես վերջինը, որը 1840-ին դեռ կոչվում էր «Հեռևանք կուլը չահասիրության», որպիսի վերնագիր, անկասկած, այդ առակն ունեցել է նաև Տպագիր «Նախաշավղի» ավարտված ձեռագրի մեջ, որը 1838-ին է արտագրվել:*

Վերջացնե՛նք. Հայաստանում և հայկական գաղթօջախներում XIX դարի առաջին կեսին դպրոցական մեջ եղած հայերեն տպագրական տառերի սեռակների խնամքով հավաքված ու դասակարգված որևէ համահավաք ցուցակ կամ «Բառարեզ» (Ալբում) գոյություն չունի: Հայ մատենագետներն այդ ուղղությամբ քիչ բան են արել: Թեոդիկի «Տիալ ու տառը» մեր բոլոր հարցասիրություններին պատասխաններ չի՛ կարող տալ: Հետևաբար, սահմանափակված լինելով անձամբ մեզ մատչելի տպագիր նյութերով՝ դժվարանում ենք ասել, թե Անդրկովկասում կամ Ռուսական կայսրության մեջ նույն ժամանակները բացված հայ և օտար տպարաններից կամ տպագրիչներից ո՞րն էր օգտագործում «Նախաշավղի» 73–96-րդ էջերի շարվածքի համար գործածված սովորական տառատեսակները: Համենայն դեպս, կրկնում ենք, այդ տառերը մեզ չեն հանդիպել 1840-ական թթ. գործող տպարաններից և ո՛չ մեկում (մեծատառերը և նոտրերները, համոզված ենք, բոլորն էլ Արղանյանցների տպարանում գործածվածներն են):

Կարո՞ղ էր Աբովյանն ինքը հատուկ դիտավորությամբ պատրաստել տված լինել այդ տառերը՝ հետագայում հրատարակչական գործունեություն ծավալելու նպատակով: Նման մի ենթադրություն,

որքան էլ գայթակղիչ լինի, բոլորովին չի ամրապնդվում փաստերով: Հայտնի է, վերջապես, որ նույն 40-ական թթ. «Մահ Աբելի» գրքի հրատարակման առիթով, Աբովյանը բանակցություններ էր վարում (հեռակա) Մոսկվայում գործող տպագրիչ Գրիգոր ավագ քահանա Սուքիասյանցի հետ՝ միջնորդ ընտրելով ոմն Հեջուբյանի[28]: Ինչո՞ւ չէր կարող նույն Սուքիասյանցին հանձնարարել նաև «Նախաշավղի» վերջին մամուլների տպագրությունը: Բնականաբար, չէր կարող, որովհետև հեռավորությունը լուրջ ու խափանառիթ պատճառ էր, և դրա համար պիտի պահանջվեր նաև գրաքննության հատուկ թույլտվություն: Մեր վերջնական եզրակացությունը դարձյալ հինն է մնում. «Նախաշավիղն» ամբողջությամբ տպագրվել է Արշանյանցների տպարանում, առաջին 72 էջերը՝ երեք տարբեր տառատեսակով, իսկ պահպանված կամ առ այսօր հայտնի վերջին 24 էջերը (73–96)՝ նոր տառատեսակներով, բայց ո՛չ թե 1838–39 թթ. ընթացքում, այլ ավելի ուշ, կա՛մ 1844-ի գարնանը, կա՛մ 1848-ի սկզբներին: Կարող ենք նաև ավելացնել. գրքի վերջին էջերը (97 և մյուս), դուցե, ընդհանրապես չեն էլ տպագրվել, ընդհատվել են Աբովյանի մահվան պատճառով, իսկ ձեռագիրն էլ ընկել է մասնավորների ձեռքը և երկար ժամանակ ոտով-գլխով անհետացել, մինչև որ մի քանի էջը հայտնվել է հեռուներում և հետագայում այլոց անունով հրատարակվել: Բայց այդ մասին քիչ հետո:

3

«Նախաշավիղը» լրջորեն նախապատրաստված ուսումնական ձեռնարկ է, առայժմ մեզ մատչելի իր 96 էջերի (ըստ որում դրանցից մեկը՝ 8-րդը, մաքուր է) պարունակությամբ՝ մեծ ու փոքր ոտանավորներով ու պատմվածքներով, երգերով ու աղոթքներով, առակներով ու բարոյախոսական հորդորներով, բնության զարմանահրաշ ու ահեղ երևույթների նկարագրություններով, արտաքին աշխարհի մասին նկատողություններով. վերջապես՝ նորավարժ մանուկներին կարճ ժամանակամիջոցում գրել-կարդալ սովորեցնելու դյուրին եղանակների մասին գրաբար հրահանգներով ու խորհուրդներով, որոնք, սակայն, հասցեագրված են ղեկավարներին: Նյութերն ընտրված են մանուկների մտավոր ու հոգևոր կարողություններին և հետաքրքրությունների համակողմանի հաշվառմամբ ու այն նկատառումով, որ օր-ավուր աճող և մտավոր հասունացում ապրող երեխայի գլխում ծագող նորանոր հարցերին ու իմացական պահանջմունքներին տրվեն դյուրըմբռնելի ու ճշգրիտ պատասխաններ: Հետևաբար՝ ման-

28 *Տե՛ս* Դ II, *160:*

կանն աստիճանաբար ճանաչել տալով ու ընտելացնելով տեսանելի աշխարհին, այսինքն՝ շրջապատի առարկաներին ու երևույթներին, Աբովյանը նրանց հայացքը փոխում էր երկրից դեպի երկինք և չանում հաղորդակից դարձնել նաև բնական երևույթների պատճառներին ու արարչության գաղտնիքներին՝ միևնույն եղանակով բացատրելով, թե ինչի՞ց են իրականում առաջանում քամին ու փոթորիկը, երկրաշարժն ու կարկուտը, ինչո՞ւ են տարվա եղանակները փոխհաջորդում միմյանց, ի՞նչ օգտակար լան կարող են մեզ սովորեցնել գանազան դարերում ու երկրներում ապրած մարդկանց իմաստալից մտքերն ու արժանահիշատակ գործերը, առակ-դեղջուկների սուր խոսքերն ու խելոք պատասխանները, վերջապես՝ կյանքի ու աշխարհի բանաստեղծական ընկալումների, ազգային կյանքի վերափոխման ուղիների մասին խորհրդածություններն օգնությամբ կրթել մանկան միտքը, հոգին ու ճաշակը, նախապատրաստել գալիք օգտաշահ գործունեության, որպես մարդկության օգտակար անդամի, որպես իր հայրենիքի ու ազգի բարօրության մտահոգված աղնիվ քաղաքացու:

Այս ամենի մեջ մնկուսի է մնում «Լջմիածին» վերնագրով գրաված բանաստեղծությունը (թե՞ քնարական մենախոսությունը), նաև՝ անավարտ, որովհետև «Նախնյաշավղի» մեզ հասած առավել լրիվ օրինակում, վերջին 94–96 էջերում, տեղ են գտել քերթվածի առաջին չորս հատվածները միայն, ըստ որում՝ չորրորդն էլ ո՛չ լրիվ, որի պատճառով անպատմելիորեն ընդհատվում են քնարական հերոսի խորհրդածությունները, երկի թեմայի ու գաղափարական բովանդակության զարգացումը, իսկ նման դեպքերում ավարտուն սյուժեի ու հատակորեն դրսևորված գաղափարի մասին խոսելն ինքյան դառնում է ավելորդ: Հնօրյա վավերագրերից և «Նախնյաշավղի» պաշտոնական գրախոսների արած դիտողություններից հայտնի էր այնքանը միայն, որ Աբովյանը դասագրքի վերջին մասերում զետեղված նյութերի, նաև՝ «Լջմիածնի» մեջ հորդորում էր հայերին՝ մտածելու իրենց զավակների կրթության մասին: Նշանակում է՝ «Լջմիածինը» ավելի ծնողներին և, ընդհանրապես, հայությանը հասցեագրված երկ է, քան մանուկների, գրաճանաչությունը հաղթվհազ ավարտած գյուղացիական ընկալումներին պատշաճող ոտանավոր, թեպետև բանաստեղծության պահպանված հատվածներում նման մտքեր դեռ չեն արծարծվում: Նշանակում է՝ երկի գաղափարական բովանդակության բարձրակետը պետք էր որոնել վերջին հատվածների մեջ, որոնք, սակայն, մեր ձեռքին չկային, տակավին չէին հայտնաբերված ու, գուցե թե, չէին էլ պահպանվել:

Տարիներ առաջ սկսելով Տպագիր «Նախաշավղի» ուսումնասիրությունը՝ հենց այդ պատճառով էլ շարունակ հետաձգում էինք «Էջմիածին» քերթվածի, նաև գրքի մասին վերջնական խոսք ասել: Թվում էր, թե հայ պարբերական մամուլի ծովածավալ աշխարհում, մեր բանասիրական թափառումների դեռ առաջին քայլերին, անգամ, մեր ուսանողական տարիներին, հանդիպել էինք նման բովանդակությամբ մի ամբողջական ոտանավորի՝ Տպագիր «Նախաշավղից» շատ ավելի ուշ և բոլորովին ուրիշ հեղինակի ստորագրությամբ հրատարակված:

Որովհետև Աբովյանի՝ «Էջմիածին» խորագրով երկ գրած լինելու մասին վկայված էր տակավին 1842 թվականին ու հավաստիացված նաև, որ այն «Նախաշավղի» նյութերից է, իսկ սկզբի հատվածներն էլ առկա էին հիշյալ դասագրքի տպագիր տարբերակում, ուրեմն, նթե մեր ենթադրությունը կամ կարդացածը պատրանք չէր, ապա Աբովյանի քերթվածի ամբողջական բնագիրը, վաղ թե ուշ, պետք է հայտնաբերվեր: Հետևաբար, այն ժամանակ էլ ընթերցողի հետ կբաժանեինք մեր նկատառումներն ու տարակուսանքները:

Եվ այս միտքը մեզ հալածում էր ավելի քան 30 տարի, մինչև որ տարակուսանքներն իրենք իրենց փարատվեցին, և «Էջմիածին» քերթվածի ամբողջական բնագիրը սեփական աչքերով վերստին կարդացինք անցյալ դարի 50-ական թթ. վերջերի հայ մամուլում:

1975–76 թթ. մեր ազատ ժամանակը մասամբ հատկացնելով Խ. Աբովյանի կենսամատենագիտությունը լրացնելուն, որը վերջին բաժինն էր դառնալու մեր «Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրություն» տակավին ձեռագիր, բազմահատոր աշխատության, սկսեցինք կրկին անգամ թերթել անցյալ դարի 20-ական թվականներից սկսած՝ լույս տեսած հայերեն, ռուսերեն և գերմաներեն գրքերն ու ժողովածուները, դասագրքերն ու մամուլը՝ վերջիններից տարիների ընթացքում մեր հավաքած նյութերը վերստուգելու և մատենագիտական պատշաճ մշակման ենթարկելու համար: Երեք անգամ պատվիրեցինք «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի 1859 թ. հավաքածուն և երեք անգամն էլ, հագիվ 30-րդ համարին հասած՝ հարկադրված եղանք դադարեցնել ընթերցումը (հիվանդության պատճառով): 1981-ի վերջերին տառապելով աչքացավով՝ այնուամենայնիվ վճռեցինք, թեկուզ և դանդաղորեն, բայց, ի վերջո, ավարտել այդ հավաքածուի և ուրիշ մի քանի գրքերի հետ ծանոթությունը, հետևաբար և՝ «Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրության» կարևոր բաժիններից մեկի վերանայումն ու լրացումները: Մեծ դժվարությամբ հասնելով սեպտեմբերի

5-ի № 36-ին՝ մենք մնծապես վարձատրվեցինք, տեսնելով որ դեռ ուսանողական օրերից, 1940-ական թթ. վերջերից ևկող տպավորությունը քնավ էլ պատրանք չէր: Մեր առջև էր «Էջմիածին» քերթվածի ամբողջական բնագիրը, 200 տողից ավելի (ճիշտը՝ 209), միայն թե վերագրված այլ հեղինակի ու ժամանակների, որպիսի դյուտը՝ «Նախաշավղի» տպագիր տարբերակի առկայության դեպքում, պարտադրում էր այլ գունավորում կամ անուն տալ իրողությանը. առկա էր դրագողության ակնհայտ փաստ:

«Էջմիածնի» այս երկրորդ, ամբողջական հրատարակության մեջ, բնագրային աննշան տարբերություններով, նախ՝ կրկնվում էր երկի սկիզբը (բոլոր 89 տողերն անխտիր), իսկ ապա՝ ևս 120 տող, որոնցով տրամաբանական վախճանի էր հասնում ու ամբողջանում հեղինակի ասելիքը: Այդ ամենը չատ բնական է: Դատելով բոլոր նշաններից՝ Աբովյանի երկը հրապարակ էր հանված անփութոխ, առանց կրճատման կամ խմբագրման, բայց և մի աննշան ծանոթության հավելմամբ: «Մեղու Հայաստանիկ» խմբագիրն ու նրա թղթակիցն ակնհայտորեն աքղնելով ճշմարտությունը և սեփականացնելով ուրիշի մաքի պտուղը՝ քնավ կասկած չէին տածում, որ երբևէ կպարզվեր գաղտնիքը, և բանաստեղծության բնագիրը կվերադարձվեր իր իսկական հեղինակին:

«Մեղու Հայաստանիկում» «Էջմիածին» քերթվածի բնագրին նախորդում է թերթի խմբագիր Ստեփանոս քահանա Մանդինյանին ուղղված մի նամակ, որ 1859 թ. հուլիսի 25-ին, Դաղստանի լեռներում ծվարած Բոգոզ գյուղի մերձակայքում հաստատված ռուսական զինվորական ճամբարից, առաքել էր Ռոստոմբեկ Երզնկյանց Հաղբատեցին՝ ծանոթացնելու համար ընթերցող հասարակությանն «իր» սույն բանաստեղծության հորինման չարժառիթներին:

Դաղստանում, Շամիլի դեմ մարտնչող հայ սպաները, այսինքն՝ ինքը Ռոստոմբեկը, Միքայել Մելիքյանցը, Գևորգ Շուբաչյանցը, Գրիգոր Խանչալյանցը և ուրիշներ, թվով տասը հոգի, հիշյալ լրագրի 25-րդ համարից (տպագրվել է 1859 թ. հունիսի 21-ին—Պ. Հ.) տեղեկանալով, որ Ամենայն Հայոց կաթողիկոս է հաստատվել Մատթեոս Ա. Ջուհաճյանը և օրեր առաջ չքեղ հանդեսով մուտք է գործել Տիflիս, նաև խորապես վշտանալով, որ հեռու գտնվելով հայրենի քաղաքից՝ չեն արժանացել Վեհափառի օրհնությանը, բնական պահանջ են զգում կիսելու համազգային ուրախությունը և փութով հավաքվելով խնջույքի՝ նախ փոխնփոխ կարդում են «Մեղվում» տպագրված նյութերն ու ճառերը՝ ընդմիջելով դրանք հոգևոր երգերով ու չարականներով («Հրաշափառ Աստուած», «Նմանեալք Մովսիսի հարք վարդապետք»), «Իսկ ի վերջոյ, — եզրափակում է նույն Երզնկյանցը, — և ես կարդացի ի լուր փոքրիկ Հայկազեան ժողովի մերոյ, ի հատարս բարձրածայր լերինն Բոգոզի, ի Դաղստան, զայս հետևեալ «Էջմիածին» ոտանաւորն»:

*Առաջին հայացքից՝ Ռ. Երզնկյանցի խոսքերից այն տպավորությունն է ստացվում, որ «Էջմիածին» բանաստեղծությունն ընդհանրապես հայոց կաթողիկոսների գահակալության առթիվ հայ գրողներից կամ Դաղստանում պանդխտած հայ զինվորականներից ինչ-որ մեկի հորինած անտիպ գրվածքներից է, որն ինքը, մյուսների նման, կարդացել է խնջույքի ժամանակ: Բայց նամակի հետագա տողերը ցրում են այդ պատրանքը և, որպես երկի հեղինակ, առաջին պլան մղում իրեն՝ Ռ. Երզնկյանցին: Բանաստեղծության 197-րդ տողում առկա ընդգծված բառերի կապակցությամբ էլ այսպիսի ծանոթություն է տրված. «**Երգ կենաց» կոչի անուն Սրբազան Կաթուղիկոսին մերոյ և պատուական Հայրապետին S. S. Մատթէոսի»**, որն և կասկած չի թողնում, որ բանաստեղծությունը ներկայացվում է որպես նոր կաթողիկոսի գահակալության առիթով հորինված և Դաղստանից ուղարկված երկ, ուրեմն՝ գրված 1859 թվականի կեսերից ո՛չ առաջ և հեղինակություն նույն Երզնկյանցի, որովհետև, եթե ոտանավորի հեղինակն ուրիշ մարդ լիներ, նամակագիրը չէր կարող նրա անունը թաքցնել: Ներկա դեպքում՝ Երզնկյանցը համեստություն է անում և ուղղակիորեն չի ասում, որ «Էջմիածնի» հեղինակն ինքն է, որ իսկական քերթողի համար ճիշտ որ գնահատելի հատկություն է, իսկ գրագողի համար՝ նախազգուշական քայլ:*

Այս բոլորով հանդերձ՝ մենք երախտապարտ ենք Ռ. Երզնկյանցին, որ ճարպկորեն յուրացնելով Աբովյանի գրվածքը, դոնե այդ ճանապարհով մեզ է հասցրել նրա բանաստեղծության ամբողջական բնագիրը, հետևաբար և՝ «Նախաշավղի» կորած վերջին էջերից մի քանիսը (գրքի չափսով չարելու դեպքում բանաստեղծության չարունակությունը՝ տողեր 90–209, կկազմեր լրիվ 4 էջ):

Բաղդատելով իրար հետ բանաստեղծության առաջին 89 տողերի ղույգ հրատարակությունները «Նախաշավղում» և «Մեղու Հայաստանի» լրագրում՝ էական տարբերություններ չենք նկատում, իսկ եղածներն էլ (չուրջ քսան տողի մեջ) ավելի խմբագրական բնույթի են, թերևս՝ Ստ. Մանդինյանի ուղղումները, կամ էլ բնագրի ո՛չ ուշադիր արտագրության արդյունք: Պետք է ենթադրել, որ Ռ. Երզնկյանցի ձեռքին է եղել Աբովյանի բանաստեղծության ինչ-որ արտագրություն կամ «Նախաշավղի» վերջին էջերի ձեռագիրը, և նա կա՛մ այդ արտագրությունն է ուղարկել Մանդինյանին, կա՛մ նրանից հանած նոր պատճենը: Իսկ կրկին ու կրկին արտագրությունները միշտ էլ ծնունդ են տալիս նման տարբերությունների:

*Երկու հրատարակությունների մեջ առկա են մի քանի ուրիշ անհամապատասխանություններ էլ. բնագրի տ. 38-ի լուսահօր և տ. 75-ի **լուսաւորիչ** բառերը «Մեղու Հայաստանիում» տպված են դլխագրերով, իսկ տ. 10-ի **Սանդարամետի** հատուկ անունը՝ փոքրատառով: Տող 17-ի **«Նոյեան Կայանի»** արտահայտության երկրորդ բաղադրիչը (Կայան)՝ դարձյալ փոքրատառ, իսկ տ. 65-ի **«Մի՛ծնոյն»** (Միածնոյն)*

բառի սղված ա տառի փոխարեն դրված ապաթարցը անտեսված է: Վերջապես՝ ուղղված է վրիպակով տպված «ժանդ» բառը՝ ժանտ (տ. 64):

Աբովյանը «Նախաշավղում», ամենուր, բանաստեղծությունը բաժանել է հատվածների և վերջինները հաջորդաբար համարակալել՝ 1, 2, 3 և այլն: Տառացիորեն նույն ձևով՝ հատվածների է բաժանված նաև «Մեղու Հայաստանիի» բնագիրը, միայն թե վերջինիս առաքողը կամ խմբագիրը բաց են թողել համապատասխան թվանշանները: Հավատարիմ մնալով հեղինակի կամքին՝ մենք բանաստեղծության չարունակությունն ևս համարակալել ենք՝ 5, 6 և այլն, ստանալով 9 հատված, միայն թե թվանշանները դրել ենք ո՛չ թե համապատասխան հատվածի առաջին տողի սկզբում, ինչպես Տպագիր «Նախաշավղի» մեջ է, այլ հատվածի վերին, կենտրոնում, և յուրաքանչյուր հատվածից հետո թողել նաև մեկական ազատ տող[29]:

Նորից ենք կրկնում. բոլոր այս մանր տարբերությունները լոկ խմբագրական կարգի են և ոտանավորը երկիցս արտագրելու հետևանք: Նույն քնության տարբերություններ, անտարակույս, պետք է լինեն նաև բնագրի 90–209 տողերի մեջ ևս, բայց դրանց հայտնաբերումը դրեթե անկարելի է, քանի դեռ չի պտնվել «Նախաշավղի» ամբողջական ձեռագիրը կամ էլ դրքի 97 և հաջորդ էջերի (այսինքն՝ վերջին մամուլների) տպագիր օրինակը: Բացառված չէ նաև «Էջմիածին» բանաստեղծության՝ հեղինակի կենդանության օրերին արված որևէ արտագրության պատճենը՝ առանձին թղթի վրա կամ հնօրյա ձեռագիր ռակեմորիկներում ու ժողովածուներում, որ կարող են երևան բերել միայն ոքնաջան որոնումները:

4

«Էջմիածինը» հայրենասիրական բանաստեղծություն է, հայրենասիրության գաղափարի արծարծման ինքնատիպ օրինակ, որը գաղափարական ու գեղարվեստական էական հատկանիշներով մերձենում է ուշ միջնադարի հայ տաղերգուների ստեղծագործական փորձին: Հիշենք դեթ Աբրահամ Աստաբատցուն, որը Էջմիածնին նվիրված մի ամբողջ դրքք է հրատարակել: Թեպետև վերջինիս հարինվածքները կամ չափածո հանդարանությունները անկատար են և՛ արվեստով, և՛ ոգով, բայց մատհոդության առաքիան նույնն է՝ պանծացումը այն հոգևոր սրբության ու կանդուն սրբավայրի, որը հայոց գոյատևման միակ ապավենն է: Փրկության այլ խարխոխ ու

---

29 Բնագրային մյուս ո՛չ էական տարբերություններն ընթերցողը կգտնի սույն հոդվածի հավելվածում, քերթվածի ամբողջական ու ճշտված բնագրից անմիջապես հետո:

ապավինն քրիստոսը չի տեսնում, թեպետ դժվարանում է դիտավորությունները հատակորեն արտահայտել:

Համանման լուսանդակությամբ բանաստեղծությունների մասին Մ. Աբեղյանը ուշադրավ նկատողություններ է թողել. «Հայրենասիրության դաղափարը,— գրել է նա,— որը վերջին (այսինքն՝ XIX — Պ. Հ.) դարու բանաստեղծության գլխավոր շարժիչն է, դեռ չի զատված կրոնական-եկեղեցականից: Այդ ներկայանում է կա՛մ դեռ ողբի ձևով, ինչպես մեր հին գրականության մեջ է եղել, կա՛մ թե, ինչպես դարձյալ հաճախ հնուսը եղել է, կենտրոնացած է էջմիածնի շուրջը, որի անունը ժողովրդականացնելու և սիրելի դարձնելու համար գրում են ներբողներ և տաղեր»[30]:

Աբովյանի բանաստեղծությունն ևս լինելով հանդերձ կրոնական-եկեղեցական հայրենասիրության դրսևորման օրինակ՝ դաղափարական-գեղարվեստական հատկանիշներով շատ հեռու է նրանց «ծայրահեղ աստիճանի սխոլաստիկ մեկնություններից»: Էջմիածնի անունը սիրելի դարձնելու նպատակով չէ, որ Աբովյանը գրիչ է առել ձեռքը, այլ հիշեցնելու և հաստատելու համար այն դերն ու նշանակությունը, որ վերապահված էր ամենայն հայոց հոգևոր կենտրոնին՝ ապրի ջլատված ուժերը միավորելու և նրա քաղաքական ու հոգևոր վերածնունդն ապահովելու համար, միայն թե այդ ամենը նա արտահայտում է վարպետորեն ձևով, պատմական զուգահեռների ու մեջբերումների օգնությամբ:

Աբովյանի ուրիշ գրվածքներում նույնպես մենք գտնում ենք էջմիածնի դերի ու նշանակության մասին հատուկ դատողություններ, որոնց լուսյսի տակ, ինչ խոսք, նախ՝ հաստատվում է մեր նկատողության ճշտությունը, և ապա՝ դյուրին է դառնում նշմարել, թե դեպի ո՞ւր է ուղղված հեղինակի խոսքի սլացքը. «Հայաստան,— գրել է Աբովյանը Ներսես Աշտարակեցուն նվիրված նոթերից մեկում, 1846 թ. մայիսին,— դարուք բազմօք գոլով զրկեալ յամենայն չքոյ և յիշխանական մեծութենէ նախնի փառաց իւրոց, դարուք վերստին յէջմիածին իւր միայն հայէր իբր ի դարան և պաշտպանարան հաւատոյ և արտաքին զօրութեան· Գլուխ եկեղեցւոյ Հայոց էր միանգամայն և ըստ մասին գլուխ մարմնաւոր իշխանութեան: կաթողիկոսք էջմիածնի հովուելով զհօտ իւրեանց սփռեալս ըստ ամենայն ծագս տիեզերաց՝ խնամէին զնա և առաջի մարմնաւոր բռնութեանց: Ո՛չ ի վարկապարապի ուրեմն՝ սկսեալ ի Լուսաւորչէ անտի մինչև ցայսօր ընդ սուրբս եղեն դասակից, որք ուղղութեամբ և

---

30 Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, գիրք II, Ե., *1946*, էջ *471*:

արդարութեամբ և ազգօգուտ սխրագործութեամբ վայելչապարզեցին զաթոռ Հայոց և զժողովուրդն միանգամայն»[31]:

Նշանակում է՝ «Էջմիածին» բանաստեղծութեան գաղափարական բովանդակութիւնը ավելի հարուստ ու կենսական է, քան կարելի է մակարներել խորագրից, իսկ հորինվածքն էլ, իր ամբողջութեան մեջ, ոչ թե կրոնական նպատակ է, այլ հայ հայրենասիրական քնարերգութեան հնաոճ բարձրարուեստական օրինակ, ազգային վերածնութեան և լուսավորութեան գաղափարը իրականութիւն դարձնելու բուռն ձգտման հրաշափառ արտահայտութիւն:

5

Եթե «Էջմիածին» բանաստեղծութիւնը մեզ հասած լիներ լոկ «Մեղու Հայաստանեայ» տարբերակով ու այլ հեղինակի անունով, իսկ «Նախաշավղի» 94–96 էջերն էլ, ընդհանրապես, պահպանված չլիներին, դարձյալ, հենվելով նախ՝ «Նախաշավղի» հրատարակութեան պատմութեանը վերաբերող նյութերի վրա, ուր հիշատակութիւն կա Աբովյանի գրչին պատկանող նույնանուն երկի մասին, և ապա՝ ուշի-ուշով քննելով բուն քերթվածը, որի մեջ հեղինակի անձին ու նախասիրութիւններին վերաբերող տողեր կան, կարելի էր անսխալ ապացուցել, որ նրա իրական հեղինակը խաչատուր Աբովյանն է:

«Էջմիածին» քերթվածը հորինելիս՝ Աբովյանն օգտագործել է ստեղծագործական նույն դիտուքն ու սկզբունքները, կատարել հայոց և համաշխարհային պատմութեան ականավոր դեմքերի մեջև միևնույն զուգահեռները՝ այդ ընթացքում թույլ տալով ժամանակագրականի նույն սխալները, դեպքերն ու դեմքերը նժարելով ու գնահատելով նույն չափանիշներով, ինչ իր մյուս երկերի մեջ («Վերք Հայաստանի», «Ուղեւորութիւն դեպի Անիի ավերակները» և այլն):

Նախ և առաջ կուզեինք ուշադրութիւնը հրավիրել քերթվածի 150–161 տողերի վրա, որոնք խանգարում են հայոց «դեղագեղ սուրբ աթոռին»՝ նաև հեղինակի մանկութեան տարիների քաղցր ու սրտակեղեք տպավորութիւնների վերհուշեր են՝ վերարտադրված խիտ տողերով և զգայուսական հզոր շնչառով.

Սրբազան իմ վայր, Իջման սուրբ տեղի,
Գեղագեղ Աթոռ սուրբ Էջմիածնի.
Մնօղ հաւատոյ, կայան հայրենեաց,

---

31 *Ա. № 48, էջ 5:*

Խորան սրբութեան, դրախտ Արամեանց:
Քե՛զ զիմ մանկութեան չունչ մատաղածին,
Քե՛զ զիմ տղայութեան ուխտ դեռ նորածին,
Քե՛զ զիմ համր բերան բացի ի սկզբան,
Քև ծանեայ զիմոց հսկայից կայան:
Դու զիմ գայթ ոտից պնդեալ կազմեցեր,
Դու զիմ անլոյս աչս բացեալ պարզեցեր.
Քե՛զ զիմ ջերմ ողջոյն տամ ես ի բացէ,
Քե՛զ զիմ սուրբ համբոյր ճօնեմ ի սրտէ:

Այս տողերն իրենց զուգահեռներն ունեն Աբովյանի այլ ինքնախոստովանությունների մեջ, որոնք վերստին նույնն են հավաստում.

«Էջմիածինը... — գրել է նա, — փրկեց հայ ազգի անունն ու եկեղեցին, մի ազգի, որը հայտնի է աշխարհի արարչագործությունից մինչև մեր ժամանակները, որպես հրաշք ու զարմացումն ողջ աշխարհի...»: «Էջմիածնում չէ՞ր, միթե, — շարունակում է Աբովյանը, — որ ես իմ կյանքում, առաջին անգամ, ճանաչեցի աշխարհը, մի աշխարհ, որ չնայած էությամբ միապաղաղ, բայց լի էր բազմազան տեսարաններով, զգայություններով, իրադարձություններով՝ և՛ սրտակեղեք ու հոգեպարար, և՛ սարսափելի ու հաճելի, որոնք ես ապրել եմ իմ ինը տարեկան հասակից...»: «Դա միանգամայն առանձնակի, բազմաբնույթ, միաժամանակ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր աշխարհ էր, միակն իր տեսակի մեջ, որպիսին, դժբախտաբար, հայկազուններն այլևս երբեք չեն տեսնի...»: «Հենց այստեղ էլ ես կազմեցի իմ առաջին ըմբռնումները կյանքի, աշխարհի մասին»[32]:

Ինչպես մեր մեջբերած նախորդ, չափածո հատվածում, այնպես էլ այս արձակ ինքնախոստովանության մեջ, վերարտադրված են միևնույն մանկական տրամադրություններն ու տպավորությունները, վերապրած միևնույն մարդու՝ Խաչատուր Աբովյանի կողմից, բայց արդեն այրական հասակում: Բանն այն է, որ Ռ. Երզնկյանցն երբեք էջմիածնում չի ապրել ու կրթվել: Նա ծնվել է 1827-ին, Հաղբատում, իսկ Աբովյանը «Էջմիածին» քերթվածը հորինել է դրանից տասը-տասնմեկ տարի հետո, 1837–38-ին, Տփղիսում, որով հիմնովին բացառվում է Ռոստոմբեկ Երզնկյանցի հնարավոր առնչությունն այդ երկին:

Մի օրինակ էլ՝ քերթվածում առկա պատմական գործիչների մեծացումներին առնչվող, որ, ինչքան մեզ հայտնի է, հայ

---

32 Ե VII, *128, 131, 132 [172, 175, 176]: Հայ. թարգմ. վերանայված է:*

մատենագրության մեջ միայն Աբովյանի երկերում է հանդիպում և ժամանակագրական առումով էլ չի ներդաշնակում պատմական եղելություններին: Քերթվածի 124–126 տողերը ձայնում են.

Տիգրան զԱննիբաղ՝ ծերունին անբաղդ,
Ցիւր նիզակակից, բարձակից առնէր,
ԶԱնտիոքայն յիւր ձեռ՝ գրաւէր զդաշտ...

Այս նույնն, ավելի պարզ ու հասկանալի խոսքերով՝ գտնում ենք նաև «Վերք Հայաստանի» երկրորդ գլխի առաջին հատվածում. «Տիգրան՝ արքա արքայից, Աստրոց աշխարհն իր ձեռի տակ բերեց ու կարթագինացոց հսկային՝ Աննիբալ զորապետին, իր մոտ հրավիրեց»[33]*: Պլուտարքոսի «Զուգակշռություններից» հայտնի է, որ կարթագենյի հռչակավոր զորավարը Հայաստանում ապաստան է գտել Հայոց Արտաշես Առաջին թագավորի օրոք, մ. թ. ա. երկրորդ դարի 80-ական թվականներին*[34]*, Աբովյանը, սակայն, դեպքերը հարյուր տարով մերձեցնում է մեզ՝ բերելով առաջին դար:*

Վաղարշակը՝ հայոց Արշակունյաց հարստության ավանդական հիմնադիրը, «Վերք Հայաստանի» վեպում բնութագրված է այս խոսքերով. «Վաղարշակ Պարթևն... Հայաստանին կարգ տվից, նախարարներ հաստատեց»[35]*: Միևնույն բնութագիրն առկա է նաև «Էջմիածին» քերթվածում.*

Վաղարշակ ի դէմս Նոյեան կայանի...
Զհայկայ սիրազուն որդիս հարդարէր
Պետ կամ նախարար, սեպուհ, կուսակալ,
Տէր կամ զօրավար՝ ինքեան թիկնակալ...
(տ. 116, 121–123)

Աբովյանի սիրած այլաբանական պատկերներից կամ համեմատություններից մեկը «ի թևս թեթևս...» բառակապակցությունն է, թևեր, թռիչք և թեթև բառերին, իրեն խորհրդանիշների, հաճախակի

---

33 Խ. Աբովյան, *Վերք Հայաստանի*, Ե., *1981*, *էջ 114:*

34 Плутарх. Сравнительные жизнеописания, в трех томах, т. II, Лукулл, XXXI, М., 1963, с. 199 [«Рассказывают, что карфагенянин Ганнибал, после того как Антиох окончательно проиграл войну римлянам, перешел ко двору Артакса Армянского, которому дал множество полезных советов и наставлений»], նաև՝ *«Վերք Հայաստանի», էջ 330–331 (ծանոթագրություններ):*

35 Խ. Աբովյան, *Վերք Հայաստանի*, *էջ 114:*

դիմելը, միշտ միասին, բայց մեկ-մեկ էլ՝ առանձին-առանձին, երբ փորձում է պատկերել մտքի ու երևակայության անկաշկանդ սավառնումները: Եվ հիրավի, թեթևասահ թևերի ճախրանքը խիստ դիպուկ համեմատելի է տվյալ գաղափարին: Աբովյանն այս առումով ուներ իր մեծ նախորդը՝ հանճարեղ Գրիգոր Նարեկացու, որի նմանաբնույթ արտահայտություններն առատորեն սփռված են մասնավորապես «Մատեան ողբերգութեան» պոեմում:

Ամենակատարյալ օրինակը հետևյալն է.

«Եւ քանզի իբր անհաս, ո՛չ ըմբռնական այս մեծ զաւրութիւն, արագ սլացմամբ ի թեւս թեթեւս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն հետեւման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ իսպառ որոշեալ, փակեցաւ յինէն...» (ՂԴ, իդ)[36]:

Բայց «Մատեան ողբերգութեան» պոեմում առկա են համանման ուրիշ արտահայտություններ էլ.

«Որքան մըտացըս թեւս ընթանայ զանբերելիսն յիշատակել...» *(խԹ, գ):*

«Անհաս իմաստից թեւոց սլացման...» *(ԼԴ, գ):*

«Իբր ի թռիչըս թեւոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց՝
Յաչխարհն հայրենական հայել...» *(խԶ, բ):*

«Եւ ոչ թէ՝ եւ ի թռիչս ամբարձման թեւոց բերիցի...» *(կԶ, ա):*

«Զմտացս արագեալ ըղթեւս՝ յերեւոյթ իրին ոչ հասի...» *(ԻԶ, գ):*

«Եւ կառավարեալ ի թեւս հողմոց՝ եղեալ ի քերոբէս...» *(ԼԴ, զ):*

«Եւ վասն զի սլացեալ ոգւոյս թեւաւք,
Ի թիւս անքաւից ծննդոց մարդկան...» *(ՄԵ, ա):*

«Իբր թեւաւք իմն թռիչս արձակեն...» *(կԹ, բ) և այլն:*

Ընտիր օրինակ է տալիս նաև Նարեկացու՝ Ապարանից իաչէի պատմությունը.

«Իբր ի թռիչս օդոց ի թեւս թեթեւս...» *(Բան ՂԶ)* [37]*:*

Աբովյանն անդիր գիտեր Նարեկը, Գրիգոր Նարեկացու մյուս ստեղծագործությունները, և այսպիսի պատկերավոր արտահայտու-

---

[36] *Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երևան, 1985, էջ 635: Այսուհետև, քաղվածքից անմիջապես հետո, կնշենք պոեմի գլուխը (Բան) և հատվածը, երկուսն էլ հայկական թվանշաններով, առաջինները՝ մեծատառերով, վերջիններն՝ փոքրատառ:*

[37] *«Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 373:*

թյուններըը նրա ճաշակով էին ու նախընտրելի և բազմիցս օգտագործվել են բանաստեղծություններում, նամակներում, հոդվածներում: Մերկապարանոց չլինելու համար քաղենք Աբովյանի գրաքար բանաստեղծություններից ու մյուս երկերից համապատասխան տողերը՝ ժամանակագրական կարգով.

«... Եւ զիա՞րդ զետեղիւր զանձն իմ զարմացումն անհնարին՝ իբրև ի թևս թեթևս վերամբարձեալ առ փափագելին յամենայն ազգաց (իմա՛ Արարատ լեռը—Պ. Հ.)...»:

(Նամակ Հ. Տեր-Մարուքյանին, 21 սեպտ. 1829)

«... Խոյացեալ ի թևս ամպոց երկնամբարձ...»:

(«Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան...», 1829)

«Եւ լռին գիշերն մեղմընթաց հետիւք թևովք հեչտալից...»:

(«Պանկնոտեալ ամոք Արև մայիսի...», 1832)

«Վերաճեմիք լուսափայլ ի թևս ամպոց յայն կայան,
Ուր հրճուին, զմայլին հոգեհոյլք հրեշտակաց...»:

«Երկնաթռիչ վերելեալ ի թեթև թևս մտաց,
Տարբերիմ ես ընդ ձեզ ընդ ոլորտս ամենայն...»:

(«Ողբերգութիւն ի վերայ մահուան...», 1834–36)

«Ի թևս նուագիդ ամբարձեալ ի վեր...»:

(«Առ էմ. Կ.», 1835)

«Ի հոյլս աստեղաց սլացեալ թևօք մտացդ լուսածին...»:

(«Առ Մ. Ա.», 1837–38)

«Տեսեալ քո թռիչ վեհ, երկնապարիկ,
Ի թևս թեթև ամպոց ճիւնափայլ,
Մուսայդ իմ գողտրիկ, ոգի՛դ չնաշխարհիկ,
Կարօտ իմ հոգի զքեզ խանդաղատեալ...»:

«Շփեա՛, իմ Մուսայ, թևովք քով հեզիկ,
Թո՛ղ ժանտ այս մթեր ամպոց թանձրաձիգ
Խռնեսցի՛ ի մի կոհակ, յոյզ մըրիկ...»

(«Աղերս առ Մուսայն», 1840)

«Հա՛ն ղնա ի վեր, յայն վայր սխրալի,
Ուր ի թևս թեթևս ընդ քեզ վերանան

Եւ նոցա ջերմին մաղթանք երկնդիմի,
Որոց սէր ջերմ յիս մնասցէ յաւիտեան...»:
(Պատառիկ՝ «Այլ քեզ, Մուզայ սուրբ...» սկսվածքով, 1847)

«Դիմեա՛ց յառոյգահասակդ այդ պատանի զուարթատեսիլ՝ ի նժոյգ երկնապարիկ, ի թևս թեթևս ի լերանց օդաճախրիկ...»:
(«Առ հանդէս մտից... Ներսիսի...», 1846, մայիս)

Նշանակում է, եթե «Էջմիածին» բանաստեղծությունը մինչև իսկ անանուն երկ էլ լիներ, Աբովյանի դրչին վերջինիս պատկանելը ամենից ավելի հավանական պիտի համարվեր, որովհետև վերը վկայակոչված հատկանշական արտահայտության նմանակը՝ թեթևասահ թևերի այլաբանությունը, առկա է նաև «Էջմիածին» քերթվածի հենց սկզբնական մասում (տող 4).

«Ի թևս թեթևս ամպոց՝ Միածինն...»:

6

Էջմիածնին նվիրված հնօրյա շարականը հրավեր ուղղելով համայն հայությանը՝ այդ սուրբ վայրի երկրպագության ու պանծացման համար, հորդորում էր.

Եկայք, չինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի...[38]

Այսինքն՝ եկե՛ք պայծառացնենք Էջմիածինը և դարձնենք կրթության հենոց, ազգային լուսավորության հովանավոր ու աղբյուր, որովհետև, դեռ հին դարերում, այնտեղից են դուրս եկել ազգային դպրության ու լուսավորության մեծ հիմնադիրներն ու առաջամարտիկները: Նույն գաղափարն է ընկած, ի վերջո, Աբովյանի «Էջմիածին» քերթվածի հիմքում՝ պարուրված հնօրյա լեգենդների խորհրդավոր շղարշով, պատմական զուգահեռներով և դալխի կանխատեսումներով:

Էջմիածնի կառուցումը սկիզբ էր դնում հայոց հոգևոր ու հանրային կյանքի նոր դարագլխի: Հալածելով «խավարի որդիներին» և վշրելով Սանդարամետի կապանքները՝ հայոց աշխարհի մեծ լուսավորիչները՝ Գրիգորն ու Տրդատը, «Նոյան կայանի» դեմ հանդիման, «Արամյան ծաղկածին դաշտերի ծոցում», կառուցեցին հույսի այս հզոր պատվարը՝ դարձնելով այն Թորգոմյան թափառյալ

---

38 «Շարական հոգևոր նրգոց սուրբ և ուղղափառ եկեղեցւոյս Հայաստանեայց», Էջմիածին, 1861, էջ 465:

որդիների համար «Վայր մխիթարիչ յանձնամահ վշտաց» և «Հոգւոյ փրկարան», տալով Հայաստանին «նոր Աստուած, նոր կեանք, նոր խորան փառաց, նոր աղդի պարծանք»: Եվ վերածնված Հայաստանում ծավալվում է մի հարուստ ու բազմաբովանդակ առօրյա.

Աստ՝ ել աղօթից, անտի՝ էջ չնորհաց.
Աստ՝ ել աղէտից, անտի՝ էջ գթութեանց.
Աստ ի վեր ուխտից խնկին հոտ անոյշ,
Անտի ածի վայր բարեաց չնորհալոյս... (տ. 87–90)

Էջ նորա և ել՝ լի անմահութեամբ,
Ել նորա և էջ՝ տօնեալ բարութեամբ... (տ. 93–94)

Ավելի ու ավելի ծավալվելով և վերհիշելով էջմիածնի հետ անքակտելիորեն կապված պատմական անցքերն ու անձանց՝ Տրդատին, Խոսրովին, Անակին, Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերին ու սրանց հետևորդներին, որոնք իրենց նախանձելի կամ ապիկար ընթացքով բազմապատկելին կամ մռայլելին հայոց փառքը՝

Ոմն ծաղկեցոյց զդէմս Հայաստանի,
Ոմն նսեմացոյց զարև աչխարհի.
Ոմն աղօթիւք զերկինս բանայր,
Ոմն ի ծով արեան զմեր երկիր թանայր.
Ոմն ի ծոցոյ հօր զօրհնութիւն բերէր,
Ոմն յաչաց ազգին արտօսր վեր ցնդէր.
Մինն բազկատարած՝ հաշտութիւն մաղթէր,
Միւսն աւերակաց գթիւս յաճախէր... (տ. 109–116)

Վերջապես՝ մեկ անգամ ևս հիշեցնելով, որ Հայաստանն է մարդկության օրրանը, և այստեղ էր գրախտը, որ Հայաստանում փրկության գաղտն ըրհնդհղից հալածված մի բուռ արդարները և վերաշինեցին աշխարհը՝

Ի ծագ սուրբ լերին մեր Արարատայ
Նոյեան երերի ոտք կառիւր անահ.
Աստ ճիւռ մարդկութեան գիւր առաջին չունէ
Պատարագ անոյշ վերնոյն նուիրեաց մունջ...
(տ. 142–145)

որ Հայոց երկնակամարում Հյուսիսի խրոխտ Արծվի խորհրդի ու հովանավոր թևերի տարածման չնորհիվ այս վայրերից ընդմիշտ հալածվել ու խորտակվել է վիսալուսնի սիրապետությունը, իսկ Հայկազյան տոհմի երերուն զավակներն էլ դուել են պատասպարան ու

հովանի, — Աբովյանն անցնում է ազգի առջև ծառացած կենսական խնդիրների արծարծմանը՝ ջանալով էջմիածնի, այսինքն՝ Հայոց նորօրյա աշխարհի հոգևոր պետերին ոգեկոչել ազգաշահ դործերի ու բաղձալի սխրանքների, չհապդրգռել նրանց հայ նոր երիտասարդության կրթության ու լուսավորության հարցերով: Քերթվածի 8-րդ հատվածն ամբողջությամբ հենց այդ մասին է խոսում ու պատմում՝ պաղատագին աղերսանքն ու դառը կշտամբանքը միախառնած իրար.

Ո՛հ, ե՞րբ բացցին չահքն լուսածին քո տան,
Ո՛հ, ե՞րբ քո դրախտի վտակք մեղրածորան
Կամ քո աղաւնւոյ շիւղ կանաչագեղ,
Ե՞րբ թռուցեալ գայցէ ի կարօտ մեր տեղ:
Ընդէ՞ր փակես, մա՛յր, զստինս ամրապինդ,
Ընդէ՞ր զքո անոյշ աղբիւր սուրբ կաթինդ
Խլես ի չրթանց ծարաւի որդւոցդ,
Վանես ի գրկաց դէմս քոց տղայոցդ.
Ո՛չ տածես բազկաւ մայրենի սիրոյ,
Ո՛չ սնուցանես քրտամբք քո գթոյ.
Զդաշտս Հայաստանի ծաղկամբք նորանոր,
Զհովիտս լուսածին՝ հայրենեաց զգեոր.
Մի՞թէ հառաչանք մեր ընդ վայր ծախին,
Մի՞թէ պաղաչանք մեր յունայն հնչին.
Մի՞թէ մօր գթոտ սիրտ քնքուշ, գողտրիկ,
Այդպէս անարգէ զմանկանց իւր մնջիկ:
Բա՛րձ, մայր իմ քաղցրիկ, ծնօղ ցանկալի,
Բա՛րձ ի քո բազուկս ողորմ, նազելի,
Զքնարբի գլուխ որդւոց քոց ի վեր,
Տո՛ւր թևօք քովք մեղմ, հեզիկ, չնչաբեր,
Տո՛ւր, բա՛րձ, առ ի վեր զձեռս հսկայից
Զքեւ պատելոց, ընդ քեւ մոխրակից
Դարուք մաշելոց, մնացեալոց անյայտ,
Ա՛ծ ի լոյս զնոսա, բե՛ր ի ցոյց, ի յայտ (տ. 162–185)

Քերթվածն ավարտվում է լավատեսական երանգներով՝ նրա եղրափակիչ մասը կարծես կանխագուշակ պատգամ լինի լուսավորված Հայաստանի մասին, խանդավառ ներբող ազգային միասնության, յուրօրինակ Հավատո հանգանակ, որին պիտի սրբորեն հետևեն բոլոր նրանք, ում թանկ է հայրենիքի վառքն ու վերածնությունը և լուսավորության ամենահալած չողերի տարածումը հին Հայաստանի նորովի փրկված հողում:

Որդիք Հայկազանց ի սուրբ դէմս հաւուց
Խայտասցեն, ճխասցեն ի դարս դարուց.
Զքեզ օրհնեսցեն, աննման իմ Մայր,
Զքեզ գեղգեղեսցեն, երկնանմանդ վայր... (190–193)

Մի սիրտ, մի հոգի, ընդ ծագս տիեզերաց
Հայկազեան որդիք յամայր ունիցին.
Ի մի սէր վառեալ, զմի չունչ ի բերան՝
Զուգաչուրթն զՔեզ տօնել յաւիտեան... (206–209)

Մշտապես գալիքն աչքի առաջ և այս երազանքով տարված՝ Աբովյանը հետդորպատյան բոլոր տարիներին դիմաց, ապերսպ, բացատրեց ամենայն Հայոց վեհապետներին՝ ազգային վերածնության իր ծրագրի խորհուրդը, ազգային կյանքի և նրա հոգևոր կենտրոնների վերաշինման անհրաժեշտությունը, սակայն միշտ էլ փոխըմբռնման չարժանանալով՝ դառնացած հեռացավ և, ի վերջո, գալիք սերնդին նշանակելով իր սրտի անբուժելի ցավը՝ տոկաց ու սպասեց բարեգեպ ժամանակների: Հայաստանի քաղաքական վերածնությանը պետք է հաջորդեր հոգևոր կյանքի վերաշինումը, այլապես անկարելի կդառնար ազգի բարոյական կործանման առաջն առնել:

«Էջմիածին» քերթվածն, այսպիսով, նաև Աբովյանի լուսավորական ծրագրերի ու պատգամների բանաստեղծական արտահայտությունն է, անցյալ դարի 30-ական թթ. Հայոց հոգևոր կյանքը լճացումից դուրս բերելու հորդոր ու պահանջ՝ ինքնատիպ ոճով ու կառուցվածքով, նոր ժամանակների հայրենասեր անհատի կերպարի ստեղծման փորձ, հայրենասերի, որը ձուլված է քերթվածի քնարական հերոսի հետ, գծված ու անհատականացված մի այնպիսի ոճով, որը հատուկ է նաչատուր Աբովյանի արձակ ու չափածո ողջ ժառանգությանը, որ հեղինակի, որպես անօրինակ հայրենասերի, հոգու և էության զարկն ու չունչն է կրում իր մեջ՝ գրական ամենատարբեր սեռերի ու տեսակների միջոցով մարմին առնելով:

«Էջմիածին» քերթվածն առ այսօր, ամբողջական ընդգրով, ծանոթ չէր, իսկ սկզբի հատվածները պատշաճ քննության չէին արժանացել, թեպետ նրանց հայտնաբերման օրերից անցել է ուղիղ երեսունհինգ տարի: Նորահայտ բնագրի հետազոտության առաջին արդյունքների մասին նախապես զեկուցել ենք Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտխորհրդի նիստերից մեկում, դեռ 1982 թ. հունվարին: Նույն եղրակացություններն էլ գրված են սույն հոդվածի հիմքում: Ներկայումս, երկու սկզբնաղբյուրների համադրման

ճանապարհով վերականգնելով քերթվածի բնագիրը՝ հանձնում ենք հայոց նոր բանաստեղծության պատմության և Աբովյանի գրական ստեղծագործության գեղագիտական ու գաղափարական հատկանիշները հետազոտողների ուշադրությանը՝ հուսալով որ այն արժանի տեղ կգրավի Աբովյանի ստեղծած լավագույն երկերի շարքում և կարժանանա ճիշտ մեկնաբանության:

Ստորև ընթերցողը կգտնի հարազատ վերարտադրությունը հեղինակային բնագրի, որի մեջ մեր արած միջամտությունն աննշան է. կանոնավորել ենք կետադրությունը և ուղղել մեկ-երկու ակնհայտ վրիպակ: Բնագրի առաջին 89 տողերի՝ զույգ հրատարակության համեմատության ընթացքում երևան եկած բնագրային տարբերությունները հաշվառման կենթարկվեն վերջում, տողահամարներով:

ԷՋՄԻԱԾԻՆ

<1>

Երկնի՛ց մակարդակ ցելանի·ի ծուէնս,
Դրունք ահեղագոչ թնդմամբ երկփեղկին.
Զօրուք երկնային՝ Փրկիչն ի պարէնս.
Ի թևս թեթևս ամպոց՝ Միածինն՝
Պար առեալ խմբովք հրեղինաց գնդի,
Ի ձեռս զոսկեայ ուռն ամրակուռ հզօր.
Ի բարձանց ի վայր խոյանայ, սահի՝
Կերտել զիւր տեղի Իջման լուսաձոր
Վանել զանդնդոց զորդիս խաւարին,
Փշրել զխուփ չրթանց Սանդարամետի,
Ի ծոց ծաղկածին Արամեան դաշտի,
Ի գագաթ խրոխտ, սէգ Սադայէլի
Կանգնել զսուրբ խորան երկնանման բեմի
Սուրբ Լուսաւորչեան վսեմ Աթոռոյ.
Զիւր էջ՝ Միածինն կնքել աչխարհի.
Արամեան սեռիս տալ արձան չքոյ.
Ի դէմս ծերունւոյ՝ Նոյեան Հայկեան,
Ամբառնալ ի վեր կրկէս հաւատոյ.
Ի պսակ փառաց Հայկազեան գրոհի,

---

* Թերևս, պիտի ուղղել՝ ... լուսաձոր—Պ. Հ.:

Բանալ նոր, հզօր պատուար այս յուսոյ.
Միածնի սուրբ էջ թողուլ Թորգոմեանց
Թափառեալ որդւոց վայր իջևանի,
Վայր մխիթարիչ յանճնամահ վշտաց,
Տեղի փրկութեան ի խորս երկրի:
Ի ցոյց աչխարհաց, ազգաց հզօրաց,
Ի տես բուռն դարուց, ամաց ալէկործ,
Ի սաստ թշնամեաց, ստամբակ վիրագաց,
Ի նշան փառաց Նաչին կենագործ:

<2>

Երկինք աստ դղրդան, երկիր փախս առեալ՝
Ցահի, ի դողման ոլորտք որոտան.
Լոյսն փայլակնաձև քառաթև ցայտեալ՝
Ի խոր գիշերի, ի քուն թանձրութեան
Ճաճանչ ոսկեփայլ ի մեր դաշտ ծագեալ,
Ջմռայլ աղջամուղջ ի լոյս տունչեան
Երկնահրաշ տեսլեամբ աստ յեղափոխեալ՝
Հրեշտակին թևովք Գրիգորեան երազ
Դարձեալ ի նշան կենդանի, անխախտ,
Մերո՛յն լուսահօր դէմք Աստուածահրաշ
Կթին ի բարձունս աստ յուսով հաստատ,
Թէ դառն իւր ճգանց կնդրուկ երկնառաք,
Թէ ծանր իւր քրտանց պտուղ սրբանուէր.
Վերնոյն ի սուրբ քիմս բուրեալ պատարագ.
Գետնամած չնչոյն աղօթից ճենճեր,
Սուրբ չարչարանացն, արեանն ողջակէզ,
Միածնին յախորժ հաճոյս վերխնկեալ
Էջ իւր ախոյեան՝ զՀայկայն ասպարէզ.
Կնքել սուրբ մատամբ հոգւոյ փրկարան,
Հաւատոյ տեղի, զԲելիարին գահ
Ցօրինել օծման Գլխոյն Հայկազեան
Սեղան սրբութեան՝ վայրագացն ի յահ:
Զսուրբ աւազանին ծոցոյ հոգեսնունդ
Զաւակս ի գիրկս Հօրն Միածնին անճառ՝
Հաննել, ամբառնալ, կործանել զանդունդ,
Ի դասս հրեղինաց, յերկնայնոցն կաճառ:

<3>

Աստ գլուխ ի գուճս, աստ երես ի կոր,
Վեհին Տրդատայ դամարճակ ահեղ՝
Հզօր դիւցազանց զօրաց քաջակուռ
Վառեալ, վահանեալ զինուք ոսկեյեղ.
Գունդագունդ յերկթևս, յակճիռս կաճառին
Զկռոցն մթեր, ուխտ պատարագի,
Փոխեալ ի նուէր երկնընծայ սրտին,
Կթեալ զաչս ի վեր, ձեռն ի ծնօտի,
Մաղթեն արտասուօք և զիւրեանց հոգի
Սրբել յաղմկէ ժանտ մեղացն ալեաց,
Եւ զինքեանս առնել Մի'ծնոյն հօր որդի,
Եւ զինքեանս փրկել յարիւնառուչտ ժանեաց
Կատաղի դիւաց, կռոց պաշտամանց.
Եւ յիւրեանց ի սիրտ զնչոյլ հաւատոյ՝
Կաթել, ճաճանչել յերկնային բարձանց,
Զխաւարին առնել զորդիս աստ լուսոյ,
Տալ Հայաստանի նոր Աստուած, նոր կեանք,
Նոր խորան փառաց, նոր ազգի պարծանք:

<4>

Լերինք խնդային՝ կայծակամբ հարեալ,
Երկիր սասանմամբ զիւր արգանդ բացեալ.
Ձեռն ի ձեռի, մեր Հայր Լուսաւորիչ,
Տրդատ՝ հզօր հսկայ, արքայ արքայից,
Հիմն եդին սրբոյ Տաճարիս մեծի,
Զլուսոյն տիպ առեալ չափ գործոյն բարի.
Պայազատք զիւրեանց քրտանց սուրբ կաթիլ,
Իչխանաց զարմք աստ փոյթ աճապարեալ,
Զան չանիք խառնեալ՝ զիւրեանց հոգւոյ դրախտ
Բերին, հասուցին յայս պատկեր անախտ,
Յորում Հայկազանց սրբանուէր սրտի
Մաղթանաց ուղերձ երկնաճայն լեզուի
Ի վեր առաքին ջերմին արտասուօք,
Ի վայր իջանի Միածինն փառօք:
Աստ՝ ել աղօթից, անտի՝ էջ շնորհաց.

Աստ՝ ել աղէտից, անտի՝ էջ գթութեանց.
Աստ ի վեր ուխտից խնկին հոտ անոյշ,**
Անտի ածի վայր բարեաց չնորհալոյս.
Աստ տուն աղերսից վայր իջևանի,
Անտի Միածինն փառօք իջանի.
Էջ նորա և ել՝ լի անմահութեամբ,
Ել նորա և էջ՝ տօնեալ բարութեամբ.
Միածինն զիւր սուրբ գահ էջմիածին
Ի բիւրոց ընտրեաց Իջման իւր տեղին,
Ուր սրբոց Հանդէս, նախնեաց տօն, անուն
Ի խումբս դպրաց՝ որդւոց երկնաւուն,
Զոյգ ընդ երկնայնոց քաղցրաձայն հնչմանց
Սըլանան ի վեր, առ Տէրն բարձանց:

<5>

Աստ խնկեցան մեր հսկայից արիւն,
Աստ բուրեցան մեր մանկանց կեանք փայլուն.
Տրդատայ ոտից վոչի երկրաստատ,
Խոսրովայ կողից անմեղ արեան կաթն.
Անակայ հոգի՝ անխիղճ, խարդաւան,
Գրիգորի աղերս՝ երկնահաչտ սուրբ ճայն.
Հռիփսիմեանց անբիծ կուսութեան ծաղիկ,
Գայանեանց անտխեղծ աղօթք երկնաթռիչք:
Ոմն ծաղկեցոյց զդէմս Հայաստանի,
Ոմն նահատակոյց զարև աշխարհի.
Ոմն աղօթիւք զերկինս բանայր,
Ոմն ի ծով արեան զմեր երկիր թանայր.
Ոմն ի ծոցոյ հօր զօրհնութիւն բերէր,
Ոմն յաչաց ազգին արտօսր վեր ցնդէր.
Մինն բազկատարած՝ հաշտութիւն մաղթէր,
Միւսն աւերակաց զթիւս յաճախէր:
Վաղարշակ ի դէմս Նոյեան կայանի՝
Ալէզարդ Մասեաց, ի հաճոյս սրտի,
Զիւր կուռ գունդ, ահեղ՝ յասպարէզ կոչէր,
Զհայկեայ օթևան պճնեալ զարդարէր:
Զհայկեայ սիրազուն որդիս յարդարէր

** Այստեղ ընդհատվում է «Նախաշավիղի» տարբերակը: Հանգամանքների շարունակությունը հրատարակվում է ըստ «Մեծն. Հայաստանի» — Պ. Հ.:

Պետ կամ նախարար, սեպուհ, կուսակալ,
Տէր կամ զօրավար՝ ինքեան թիկնակալ***:
Տիգրան զԱննիբաղ՝ ծերունին անբաղդ,
Ծիւր նիզակակից, բարձակից առնէր,
ԶԱնտիոքայն յիւր ձեռ՝ գրաւէր զդաշտ,
Զ Պոմպեան յոխորտ՝ զօրս վանէր, վանիւր:
Տրդատ քաջայաղթն յՈլիմպեան դաշտի
Զպսակ յաղթական յիւր ճակատ կապէր.
Հռովմեան սաղա՛րտաւ ի գլուխ իւր գնդի՝
Զպարսից տայր հոգի, սրոյ ճարակ և մեռ.
Զվիթխարւոյն ահեղ՝ Գեղոեհոն քաջի,
Զաղիս փողոտէր, յերկծուէնս պատառէր:
Վարդան քաջաձեռն զիւր սուրբ դաս քաջաց
Ի սէր հաւատոյ, ի զերծ Հայրենեաց,
Ի պսակ տան Տեառն, ի մեր սուգ և լաց
Փնջեալ բոլորէր՝ վերնոյն խնդազգած:

<6>

Աստ դրախտն Եդեմայ զիւր գետոց առաջ
Մայրենի սիրով ջամբէր, ոռոգէր.
Աստ հեղեղն զիւր թափ, ո՛չ գտեալ զայլ անց,
Փշրեալ խորտակիւր, զտապանն վանէր.
Ի ծագ սուրբ լերին մեր Արարատայ
Նոյեան երերի ոտք կառիւր անահ.
Աստ ճիւռ մարդկութեան զիւր առաջին չունչ
Պատարագ անոյշ Վերնոյն նուիրեաց մունջ:
Աստ հիւսսեան Արծուի՝ թռուցեալ երկնամբարձ,
Ջծագ կիսալուսնին ի խոր խորտակեաց,
Ածեալ ընդ թևօք զերերուն որդիս
Հայկազանց տոհմի՝ զաւակս քաջոգիս:

<7>

Սրբազան իմ վայր, Իջման սուրբ տեղի,
Գերագահ Աթոռ սուրբ Էջմիածնի.
Մնօղ հաւատոյ, կայան Հայրենեաց,

*** Հեղինակային ընդգրում, այս երեք տողերի հետ միասին (121—123), անկասկած, եղել է ևս մեկ տող, որով լրացել է տունը: Անուշադրության պատճառով՝ այն անվերադարձ կորել է—Պ. Հ.:

Խորան սրբութեան, դրախտ Աբրամեանց:
Քե՛զ զիմ մանկութեան չունչ մատաղածին,
Քե՛զ զիմ տղայութեան ուխտ դեռ նորածին,
Քեզ զիմ համբ բերան բացի ի սկզբան,
Քև ծանեայ զիմոց հսկայից կայան:
Դու զիմ գայթ ոտից պնդեալ կազմեցեր,
Դու զիմ անլոյս աչս բացեալ պարզեցեր.
Քե՛զ զիմ ջերմ ողջոյն տամ ես ի բացէ,
Քե՛զ զիմ սուրբ համբոյր ճօնեմ ի սրտէ:

<8>

Ո՛հ, ե՞րբ բացցին ջահքն լուսածին քո տան,
Ո՛հ, ե՞րբ քո դրախտի վտակք մեղրածորան
Կամ քո աղաւնւոյ չիւղ կանաչագեղ,
Ե՞րբ թռուցեալ գայցէ ի կարօտ մեր տեղ:
Ընդէ՞ր փակես, մա՛յր, զստինս ամրապինդ,
Ընդէ՞ր զքո անոյշ աղբիւր սուրբ կաթինդ
Խլես ի չրթանց ծարաւի որդւոցդ,
Վանես ի գրկաց դէմս քոց տղայոցդ.
Ո՛չ տածես բազկաւ մայրենի սիրոյ,
Ո՛չ սնուցանես քրտամբք քո գթոյ.
Զդաշտս Հայաստանի ծաղկամբք նորանոր,
Զհովիտս լուսածին՝ հայրենեաց զձոր.
Մի՞թէ հառաչանք մեր ընդ վայր ծխին,
Մի՞թէ պապաչանք մեր յունայն հնչին.
Մի՞թէ մօր գթոտ սիրտ քնքուշ, գողտրիկ,
Այդպէս անարգէ զմանկանց իւր մնջիկ:
Բա՛րձ, մայր իմ քաղցրիկ, ծնօղ ցանկալի,
Բա՛րձ ի քո բազուկս ողորմ, նազելի,
Զքնարբի գլուխ որդւոց քոց ի վեր,
Տո՛ւր թևօք քովք մեղմ, հեզիկ, շնչաբեր,
Տո՛ւր, բա՛րձ, առ ի վեր զձեռս հսկայից
Զքև պատելոց, ընդ քև մոխրակից
Դարուք մաշելոց, մնացելոց անյայտ,
Ա՛ծ ի լոյս զնոսա, բե՛ր ի ցոյց, ի յայտ:

<9>

Իջցէ՛ Միածինն, բայց ո՛չ բուռն ուռամբ,
Սթափեսցէ՛ զքուն հսկայից բռամբ,

Որք զքև ամփոփին, ի ծոց քո հանգչին,
Ի տես աչխարհի թո՛ղ նոքա դնիցին:
Որդիք Հայկազանց ի սուրբ դէմս հաւուց
Նայտասցեն, ճխասցեն ի դարս դարուց.
Զքեզ օրհնեսցեն, աննման իմ Մայր,
Զքեզ գեղգեղեսցեն, երկնանմանդ վայր:
Ծոց քո եղիցի նոցա ապաստան,
Զքև խանդաղատեալ նոքա պերճանան.
Ի պերճ իւրեանց գլուխ՝ ՕՇԵԱԼՆ այն երիցս,
Ի վեհն ԵՐԳ ԿԵՆԱՑ Արամեան գնդիցս:
Խնկովք օրհնութեան եկեսցեն, կայցեն,
Սրտի եռանդեամբ զնա տօնեսցեն.
Սիրոյ պատարագ նմա մատուսցեն,
Քեզ, նմա՝ յամայր զիւրեանց ուխտ բերցեն.
Թէ՝ մի է Աթոռն Միածնին անծնի,
Մի սուրբ Գահ նորա Իջման Միածնի.
Մի անհատ Հայոց՝ սերունդ քաջազանց,
Մի նորա մեծ Գահ՝ սուրբ էջմիածին.
Մի սիրտ, մի հոգի ընդ ծագս տիեզերաց
Հայկազեան որդիք յամայր ունիցին.
Ի մի սէր վառեալ, զմի չունչ ի բերան՝
Զուգաչուրթն զՔեզ տօնել յաւիտեան:

Բ ն ա գ ր ա յ ի ն տ ա ր բ ե ր ու թ յ ու ն ն ե ր

(«Մեղու Հայաստանի», 1859, սեպտեմբերի 5, № 36)

տող 4 ի թևս թեթևս ամպոց միածին
» 5 Պարառնալ խմբիւք հրեղինայ գնդի
» 6 ի ձեռս դոսկէուռն ամրակուռ, հզօր,
» 9 վանել զանգնդոց որդիս խաւարին,
» 11 ի ծոյ ծաղկածին Արամեան դաշտին,
» 20 Բանալ նորա մեծ պատուարս այս յուսոյ
» 21 Զմիածնայ սուրբ էջ թողուլ Թորգոմնանց
» 23 վայր մխիթարութեան յանճնամահ վշտաց.
» 30 Հայի ի դողման տիեզերք որոտան
» 36 Հրեշտակին թևօք Գրիգորեան երազ

» 45 Մխածնին յախորժ հաճոյս վեր խնկեալ
» 46 Էջ իւր ախոյեան զՀայկեայն ասպարէզ.
» 52 Զաւակս ի գլուխս հօր Մխածնին անճառ
» 68 Եւ ի սիրտ իւրեանց զնշոյլ հաւատոյ
» 70 Զխաւարին առնել որպիս աստ լուսոյ
» 73 Լերինք թնդացին կայծակմամբ հարեալ,
» 76 Տրդատ մեծ հսկայ, արքայ արքայից
» 78 Լուսոյն ախալ առեալ չափ գործոյն բարւոյ
» 85 Ի վեր առաքեն ջերմին արտասուօք
» 89 Աստ խնկին ի վեր ուխտից հոտ անոյշ

«ԱՉՔԻ ԼՈՒՅՍ ՋԱՆ...»
ԵՐԳԻԾԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Բանաստեղծությունը, որի ստեղծման չարժառիթների բացահայտմանն են նվիրված հետագա էջերը, առաջին անգամ հիշատակվում է (միայն թե լոկ սկսվածքով) Ն. Տեր-Կարապետյանի՝ տակավին 1894-ին պատրաստած ճեմարանական չարադրության մեջ (լույս է տեսել 1897-ին), հեղինակի այլևայլ արձակ ու չափածո գործերի ու գրությունների շարքում, որոնց ձեռագրերը պահվում էին գրողի որդու՝ Վարդան Աբովյանի (1840 – 1896) մոտ[1]: Նշանակում է՝ մինչև 1894-ը ոտանավորի գոյության մասին ոչինչ հայտնի չի եղել: Բնագիրը հրատարակվել է շատ ավելի ուշ, մեր օրերում միայն, ուղիղ քառասուն տարի առաջ, 1939 թվականին, նախ՝ «Գրական թերթում»[2], ապա՝ Լենինականի «Բանվոր» լրագրում (արտատպություն նախորդիից)[3]:

Խ. Աբովյանի թղթոնների մեջ, որոնք 1938 թ. օգոստոսին գրողի թոռները հանձնել էին Հայաստանի գրական թանգարանին՝ հայտնաբերելով ու հրատարակելով հիշյալ բանաստեղծությունը, վաստակաշատ աբովյանագետ Ռ. Զարյանը վերջինիս կցել էր նաև մի փոքրիկ ծանոթագրություն՝ փորձ անելով կռահել երկի ստեղծման չարժառիթները:

Շատ չանցած՝ սույն ոտանավորը տեղ է գտնում Խ. Աբովյանի «Ընտիր երկերի» երկրորդ հատորում, որի կազմողն ու ծանոթագրողը դարձյալ Ռ. Զարյանն էր (գիրքը արտադրության է հանձնվել 1938 թ. դեկտեմբերի 11-ին, ստորագրվել է տպագրության՝ 1940 թ. սեպտեմբերի 23-ին)[4]: Ըստ որում՝ բանաստեղծության բնագիրն արտատպված

---

[1] ՆՏԿ, էջ 135–136 (նախապես՝ «Լումա», 1897, Բ գիրք, օգոստոս, էջ 183–184), ան՛ս, մանավորապես, մասնագիտական հետևյալ անդնդանքր. «Տնտր 4. Ղարիպ (ոտան.), Հունայնություն աշխարհի, այգին Ղորդանովի. Ինչն ու բրուլր (ոտան.), Աչքի լույս ջան, դարդ մի անիլ (ոտան.)», քաղվածք՝ «Խաչատուր Աբովյանի աշխատությունները և մի քանի ուրիշ թղթեր՝ պահված յուր հիշատակարաններում» հատվածից (ընդգծումը մերն է — Պ. Հ.):

[2] «Գրական թերթ», 31. I. 1939, էջ 4 («Խաչատուր Աբովյանի նորահայտ բանաստեղծություններից»):

[3] «Բանվոր», 1939, № 34, էջ 4:

[4] Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հ. II, Ե., MCMXL, էջ 165–166:

է անփոփոխ, իսկ բացատրական-ծանոթագրությունը՝ փոքր-ինչ խմբագրված: Ահա՛ բանաստեղծության ուղղված է մի մարդու դեմ, — գրում է նա, — որի գլխավորությունը, ինչպես երևում է, վաճառականությունն է եղել: Թե ո՞վ է այդ վաճառականը և ի՞նչ դիպվածով է նա Աբովյանի երդիծանքի առարկան դարձել, դժվար է ասել: Կարելի է միայն որոշ ենթադրություններ անել: Իր աշակերտներին գրած նամակներում Աբովյանը բացահայտ արհամարհանքով է խոսում թիֆլիսաբնակ վաճառականներ Մանդինովների, Խերոդինովների, Թայիրովների մասին: Թերևս և սրանցից մեկնումեկին է նկատի ունեցել Աբովյանը: Այս ենթադրությունը առավել հավանականություն է ձեռք բերում նրանով, որ բանաստեղծության մեջ տրված է ինչ-որ Գաբրիելի անուն, որը, սակայն, հետագայում հեղինակը ջնջել և դրել է՝ «Աչքի լուսո ջան», հարկավ հեգնանքով: Թայիրով եղբայրներից մեկի անունը եղել է Գաբրիել: Հավանաբար, Աբովյանի երդիծանքի հերոսը եղել է հենց այդ Գաբրիել Թայիրովը», — և այլն[5]:

Աբովյանագիտության այն տարիների մակարդակը թույլ չի՛ տվել դիտնականին վերջնական, սպառիչ խոսք ասելու, և նա բավարարվել է ենթադրությամբ: Գրողի հակնյածավալ անտիպ ժառանգությունը նոր-նոր էր միայն դրվում գիտական շրջանառության մեջ, և շատ խնդիրներ, ինչպես և սույն բանաստեղծության հերոսի իսկական նախատիպն ու ստեղծման պատմությունը դեռ սպասում էին իրենց հայտնաբերողին, իրենց հիմնավոր լուսաբանմանը: Ջենք ասում արդեն, որ «վաճառական Թայիրովները» Խ. Աբովյանի այս բանաստեղծության հետ ո՛չ մի առնչություն չունեն և նրանց մասին Խ. Աբովյանի նամակներում ընդհանրապես ոչինչ չկա ասված:

Բանաստեղծությունը վերջին անգամ հրատարակվել է 1948 թ., գրողի երկերի ակադեմիական հրատարակության առաջին հատորի մեջ, ուր հավաքված է նրա չափածո ողջ ժառանգությունը: Բնագիրը նորից է պատրաստված, նշված են նաև բնագրային տարբերություններ[6]: Ինչ վերաբերում է մեկնությանը, ապա դա նոր ոչինչ չի ավելացնում Ռ. Զարյանի նախկին ենթադրություններին: «Երդիծական այս բանաստեղծությունը, — կարդում ենք հատորի ծանոթագրություններում, — հանված է № 60 տետրակից. աչխատհատոր,

---

5 Նույն տեղում, էջ 393:

6 Ե I, 176–177: Նախորդ հրատարակության համեմատությամբ ճշտված է 12-րդ տողը («Ընաիր երկերում»՝ «Ուզած դրքերդ...», այնինչ բնագրում՝ «Տպած դրքերդ...» է):

անթվակիր. գրված է Թիֆլիսում. ուղղված մի վաճառականի, որի անունը Գաբրիել է, որովհետև սկզբում «աչքի լույս Ջան» տողերի տեղը գրված է եղել «Գաբրիել Ջան» և ապա ջնջված: Գաբրիելը հավանաբար Գաբրիել Թայիրովն է, որը հայտնի հարուստ էր և իրեն համարել է գրականության հովանավորող: Աբովյանն առհասարակ վատ կարծիք է ունեցել Թիֆլիսի հայ հարուստների մասին, ծաղրել է նրանց տգիտությունը, ագահությունը և այլն: Տպագրվել է 1939 թ. «Գրական թերթ» № 5-ում»[7]:

Այս վերջին տողերի հրապարակման օրերից անցել է ավելի քան երեսուն տարի: Բանաստեղծության հեղինակային ինքնագրի (autograph) և նախորդ տպագրությունների համեմատությունն այժմ արդեն հնարավորություն է տալիս ո՛չ միայն վերջնականապես ճշտել բնագիրը, սպառիչ հաշվառման ենթարկել բնագրային տարբերությունները, կանոնավորել կետադրությունը, այլև, որ ամենակարևորն է, նոր հետախուզումների լույսի տակ վերականգնել սույն երկի ստեղծման պատմությունը՝ անխոնջ մատնացույց անելով և այն անցքն ու անձնավորությունը, որոնք Խ. Աբովյանի սպառիչ ծաղրի առարկան են:

Բայց մինչ այդ մեզ բերենք բանաստեղծության բնագիրը և բնագրային տարբերություններն ամբողջությամբ, որովհետև ստորև հաճախ պետք է վերադառնանք դրանց:

Աչքի լույս Ջան, դարդ մի՛ անիլ,
Խաչ կճարես, փառք աստուծո.
Ի՞նչդ ա պակաս, աստուծո օրը
Ռումբին լիքը տանդ ա ըլում:
Խանի խարաբ, ի՞նչ ես ուռչում.
Լեյպցիգ, Լոնդոն ման ես էկել,
Ալվան բաներ չատը տեսել:
Կուպեցություն չէիր ուզում,
Խաչ ու չնի հետը ընկնում.
Էսօր, էքուց փոչտը կգա,
Մուրազդ կառնիս, տո՛, քեֆ արա՛:
Տպած գրքերդ, դասթա-դասթա,
Ցեց, մկներին դառել են փայ.
Մկներն են քո անունդ օրհնում,
Ում փող տվիր՝ վրեդ ծիծաղում:
Աչքի լույս Ջան, չատ մի՛ ուռչիլ,

---

[7] Նույն տեղում, էջ 392:

Իմաստուն ես, չատ մի՛ փքվիլ.
Շատ էլ որ դու հենց հաստատաս,
Փորիդ, քիսիդ զարար կտաս:
Դու ոլ չըլիս, էլ ի՞նչ կանենք,
Քեզ չունեննանք, էլ ո՞ւմ սիրենք.
Մեր մեջլսի վարդը դո՛ւ ես,
Մեր քաղաքի փառքը դո՛ւ ես:
Ասենք՝ գրքի հոտ ես առել,
Փիլիսոփա, վարպետ դառել,
Ջէ՛, էլի մեր քաղքի ճուտն ես,
Մենք լավ գիտենք՝ ի՞նչ պտուղ ես.
Կարդացողից դու հեռու կա՛ց,
Քոնն ա գազը, դուքանդ բա՛ց.
Կապիկները դու կուլ տալով՝
Մարդ ես դառել տանով, տեղով.
Տո՛, էն թոզի կեղտն ու հոտը
Դեռ կպած են չլնքիդ մոտը.
Մեզ ընչի՞ ես բեղնամ անուս
Ու քեզ ու քեղ թանկ-թանկ ծախուս:
Մեկ բոյ ունիս՝ գազ ու կես ա,
Գլուխդ հետը լիտր ու կես ա.
Սիրուն երեսդ՝ ճարխալի նման,
Կարմրել ա խիստ արմաղան:
Կախեթու կուլրն, ուռմբին թողած,
Հազարփեչեն, կուլեն կորած՝
Քու ի՞նչ բանն ա խելքիդ ղոռ տաս,
Աչքերդ չռես, ուռած ման գաս:
Աչքի լույս չան, լավ չե՛ս անուս,
Կարդացողից չե՛ս հեռանուս:

Բ ն ա գ ր ա յ ի ն տ ա ր բ ե ր ու թ յ ու ն ն ե ր

(Նշվում են տողահամարներով, ընդվաժ բառերը առնված են ուղիղ փակագծերի մեջ):

1 [Գաբրիել] ջան, [նազ] մի անիլ,
2 Խաչ[դ] կճարես, փառք աստուծո.
4 [Հաղար գիրք ա տանդ տպվուս.]
7 [Սիրուն աղջկերք շատ ճիտ արել.]

8 Կուպեցուբյուն[ն] չէիր ուզում,
13 Մկներին [են, ա՛խ, ար]ել փայ.
16 [Գաբրիել] չան, շատ մի ուռչիլ,
32 Տո էն թոզի կեղտն ու<թերի գրված և ընչված բառ՝ հիսե՞>] հոտը
33 Դեռ կպած են [աչքիդ] մոտը.
38 Երեսդ [թունդրի խփի] նման,
40 Կախեթու էտիկն՞>] կուպրն, ռումբին թողած
44 [Գաբրիել] չան, լավ չես անում[8]*,*

Լուռ Հանդիմանության և կշտամբանքի խոսքեր չէ, որ հնչում են այս բանաստեղծության մեջ, այլ շառաչուն ապտակ՝ հայ տնաբուբս դիտնականների և նորելուկ վաճառականների երեսին, որոնց դաշնակցության ծնունդը, ինչպես ստորև կտեսնենք, ոչ թե բարերարություն էր, այլ չարիք՝ ազգային լուսավորության և հառաջադիմության համար:

«Վերք Հայաստանի» վեպում, ցանկանալով երախտադիտության ինքնաբուխ խոսք ուղղել իր մասնավոր աշակերտների ծնողներին, Ս. Աբովյանը սկզբնապես գրել էր. «Աստված էլի կյանք տա՛ Թիֆլիզի վաճառականներին, Աստված նրանց պահի՛, պայծառացնի՛, Ազգի համար հաստատ մնան, որ որդիքը մեկ տեղ տալիս՝ աղաչում են, մունաթ են անում. թե «Հայի, Հայի լեզուն, Հայի դիրը, արևի՛դ մեռնիմ, երեխես թող Հայի լեզուն լավ սովորի ու ինձ նման անլեզու չմնա. մեկ ջուղաբ չվարենա տալ: Մենք հո մարդի հետաբում չենք: Կմնծանա, որ ողորմի չտա, ուշունց խոմ չի՛ տալ: Մյուս լեզվըները խոմ կսո՛վորի, կսո՛վորի: Դրա դարդը չո՛ւնիմ: Ժամ գնալիս՝ մնում եմ բերանս բաց՝ տավարի պես կաղնած: Ո՛չ ասածն եմ հասկանում, ո՛չ կարդացածը: Մենք խոմ Հա՛յ չենք, վա՛յ մեր հոգուն» և այլն: Խոսքը կասի իր մտքումն, թե սպիտակ, չալ-չալ մանեթների հունարն ա, որ լեզուս էս հանգին բաց ա ընկել: Փողի համն ուրիշ ա, օձը բնիցը կհանի: Թո՛ղ ասում են, ասեն: Մանեթ որ ունենամ, ընչի՞ էսպես սոված կըլիմ, ու աչքիս լիսը կթռցնեմ»[9]*:*

Վեպի վերջնական վերամշակման ժամանակ, սակայն, զգալով, որ ոգևորության պահին ասել է բաներ, որ ակնհայտ չափազանցություններ էին ու կարող էին այլ կերպ մեկնաբանվել, վերևի ընդարձակ խոսքերը քամել է ու թողել այսքանը. «Աստված կյանք տա էն

---

[8] *Ա. № 60, էջ 29–30:*

[9] *Ե III, 239:*

ծնողացը, որի որդիքն ինձ մոտ են: Նրանց առաջին խնդիրն միշտ էն ա էլել, որ նրանց որդիքը Հայերեն լավ գիտենան: Գերեզմանն էլ որ մտնիմ, նրանց էս սուրբ խոսքը մոքիցս չի՛ դնալ»[10]*: Վաճառականի դասի խնկարկման և ո՛չ մի հետք...*

Ինչ խոսք, Ի. Աբովյանն իրավացի էր, երբ զգայված՝ օրհնութեան խոսք էր ուղղում Թիֆլիսահայերից ոմանց, որոնց բարոյական աջակցութեյունը՝ կյանքում իր մանկավարժական սկզբունքները արմատավորելու և հանուն ազգային առաջադիմութեյան մղած անզիջում պայքարում հզոր նեցուկ էր նրա համար, մինչդեռ վաճառականութեյան համակրանքը հետադիմների կողմն էր. նրանք չահեցնում էին այս վերջիններին և եթե ո՛չ ուղղակի, ապա անուղղակի ձևով վնասում Ի. Աբովյանին, երևութեյի, որ չէր կարող աննկատ մնալ նրա ուշադրութեյունից և նյութ չծառայել դառը խորհրդածութեյունների համար, ինչպիսին «Աչքի լուսա չան, դարդ մի՛ անիլ...» բանաստեղծութեյունն է, որի չարժառիթն այն տարիներին Թիֆլիսում հայանի դեպքերն ու անձնավորութեյուններն էին:

Ռուսական միրապետութեյան առաջին տասնամյակներից տեղական վաճառականութեյան կենցաղում մի հոսի սովորութեյի էր արմատավորվել: Նրանցից առավել աչքի ընկնողներն ինչ-ինչ մեթ կամ դատապարտելի ճանապարհներով հարստութեյուն դիզելուց հետո՝ հետամուտ էին խաչ ու մեղալով իրենց «սրբացնելու», մանավանդ որ դա աղնիվ եղևալու և վստահութեյուն ձեռք բերելու անզուգական միջոց էր: Բայց ուս պաշտոնութեյունը հնշտութեյամբ չէր բաշխում չքանշանները. պարգևատրվողների համար պետք է միջնորդեին աշխարհիկ և հոգևոր բարձր իշխանութեյունները՝ հիմք ունենալով տվյալ անձնավորութեյան կատարած որևէ հանրօգուտ գործը կամ բարերարութեյունը: Օրինակ՝ 1838 թ. կառավարչապետ Գ. Ռազնի միջնորդութեյամբ Աննայի ժապավենով ոսկի մեդալներով պարգևատրվում են Սահակյան Եգորի Խաչատրյանը, Հովհաննես Զաքարի Շադինյանը և ուրիշ երկու վաճառականներ, որոնք Տրապիզոնի վրայով ողջ Առաջավոր Ասիան հետզհետե եվրոպական ապրանքների փոխարեն դերատարում էին Անդրկովկաս ներմուծել ռուսական ձեռնարկութեյունների արտադրանքները[11]*: Հաջորդ տարվա սպրիլին Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի միջնորդութեյամբ ոսկի մեդալ է տրվում Մեծ Ղարաքիլիսայի բնակիչ Սարգիս Տեր-Սահակյանին, որը*

---

10 *Նույն տեղում, էջ 65:*

11 *Վ.Ա., ֆ. 2, ց. 1, գ. 4481,* «Закавказский вестник», 1838, № 20 (28.V), *էջ 32:*

բազում անգամներ նվիրաբերություններ էր արել Էջմիածնի վանքին, իր միջոցներով փոստային ձիեր էր պահում Ղչլաղ ու Համամլու փոստակայաններում, նվիրված էր Ռուսաստանին[12] *և այլն:*

Ռուսական մեդալներով պճնազարդվելու հմայքը հանգիստ չէր տալիս մասնավորապես Թիֆլիսեցի վաճառական Գաբրիել Աբելի Շադինյանին, որը, չնայած անհագ ցանկությանը՝ մինչ այդ առհասարակ որևէ բարի գործով չէր փայլել: Եվ այժմ, երբ դրա փափագը կար, նորից այնպիսի բան է անում, որ կես ճանապարհին չահվում է մեծապես: Նա իր միջոցներով տպագրում է հայոց լեզվի քերականության դասագիրք, որպիսիք, սակավագյուտ լինելու պատճառով՝ ձեռքի վրա ծախվում էին 6 — 10 ռուբլով, և երկու տարբեր անգամներ (վերջինը՝ 1840 թ. հունիսին) 300-ական օրինակ նվիրում է Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությանը[13]*: Դա այլ բան չէր, քան Հակոբ և Դավիթ Արզանյանցների բանաքաղությունը*[14]*, մեթոդապես անկատար մի ձեռնարկ: Թերթենք այն:*

Տիտղոսաթերթը հետևյալն է.

***«Քերականութիւն Հայ:** /Հ ա մ ա ռ օ տ/: Արդեամբք և ծախիւք առն ազգասիրի: Գաբրիելի Աբելեան Շ ա դ ի ն ե ա ն ց: /Տփղիս/: 1840: /Ի տպարանի Հեղինակաց Քերականութեանս **Յ. և Դ. Արզանեանց**»/*[15]*:*

Երկրորդ էջում տեղավորված է հոդևոր դրաքննության կողմից տվյալ ձեռնարկը տպագրության թույլ տալու մասին որոշումը (ռուսերեն և հայերեն միաժամանակ).

«С разрешения высокостепенного Армянского патриарха Иоанneса. /*Տպագրեցաւ*/ *Հրամանաւ բարձրաստիճան կաթուղիկոսի Հայոց /տեառն Յովհաննու Կարբեցւոյ*»/:

Գիրքը բացվում է հեղինակների ռուսերեն առաջաբանով (անխորագիր, էջ 3 — 4), ուր հապնդիկ և ընդհանուր ձևով մատնանշվում են դասագրքի աղբյուրները՝ Վենետիկի Մխիթարյանների հրատարակած քերականական աշխատությունները. և վերջին հիշվում ու ներբողվում է հրատարակիչ բարերարը փողատեր Գ.

---

12 *Նույն տեղում, գ. 5170:*

13 *Նույն տեղում, ֆ. 424, գ. 40, թ. 16 և ֆ. 2, ց. 2, գ. 372:*

14 *Հիշյալ գրքի օրինակներն այժմ պահվում են Մատենադարանում և ՀՀ պետական գրադարանում (տե՛ս Հ. Դավթյան, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Ե., 1967, էջ 259, № 1060):*

15 *Թեք գծիկով (/) անջատված բառերն ու արտահայտությունները առանձին տողեր են:*

Շադինյանը՝ պսակված «Հայրենասիրի» մեդալով, այն էլ՝ մեծաքանակ. «Издание этой Грамматики принял на себя почтенный Патриот *Гавриил Авелович Шадинов* и шесть сот экз. принес в дар Дирекции Закавказских училищ для безденежной раздачи бедным ученикам уездных училищ...» *(«Այս քերականության հրատարակությունը <ծախքն> իր վրա առավ հարգարժան Հայրենասեր* ***Գաբրիել Աբելի Շադինյանը*** *և մի հարյուր օրինակ նվիրեց Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությանը՝ գավառական դպրոցների աղքատ աշակերտներին ձրի բաժանելու համար»)*[16]:

Բուն քերականությունը զբաղեցնում է գրքի 5 — 275 էջերը, իսկ վերջին՝ 276-րդ էջի վրա տպագրված է Արզանյանց եղբայրների, այս անգամ արդեն հայերեն, ծանուցումը իրենց բարերարի՝ Գաբրիել Աբելի Շադինյանի «Մեծագործության» թմբկահարության և հոդորական խոսքով առ հայ հարուստներ, որպեսզի վերջիններս նրա օրինակին հետևեն և ազգօգուտ ձեռնարկներ անեն:

Մենք բերենք տարիահաճության այս պլուխգործոցը ևս.

ԱՋԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յաւելումն գրոց հայրենի բարբառոյ է անհրաժեշտ իմն պարտաւորութիւն որոց միանգամ նախանձաւորքն են պայծառութեան և լուսաւորութեան ազգի և հայրենեաց: Ի չինութենէ անտի դպրոցաց ի Տփխիս՝ սակաւք միայն ի մերազնեայց յօժարամիտ բերան ի տպագրութիւն մատենից հարկաւորաց առ ի կրթութիւն հայազգի մերս դրականութեան. և այնք ևս յաւէտ վաճառաշահութեան, քան ձրիաբար բաշխելոյ տակս ձեռնամուխ եղեն յայն գործ չահաբեր. թէ և այս այսպէս՝ բայց անդէն ի տպագրութեան առաջիկայ համառօտ Հայ Քերականութեանս ոմն յերևելեաց Տփխիսայ՝ աղնուամիտ պարոն Գաբրիէլ Աբէլեան Շադինեանց. այն՝ որում դէպ եղև երբեմն ի գնին ելանել վանացն սրբոյն Ղազարու, որ ի Վենետիկ՝ ինքնայօժար կամօք յանձն էառ զծախս տպագրութեան սոյն Քերականութեան, զոր և ընծայեաց արքունի դպրոցացն Վրաստանի վասն ձրիաբար բաժանելոյ տանակ համբակաց պարապելոց յուսումն մերս բարբառոյ: Զայս գործ գովանի և բազմարդիւն յառաջ բերաք աստանօր ո՛չ իբր քարոզեսցի

---

16 *«Քերականութիւն հայ». էջ 3: Գրքում երկու տող (էջ 7 և 214–15) Արզանյանցները նշում են, որ ձեռնարկը կազմել են Մ. Չամչյանի և Գ. Ավետիքյանի աշխատությունների հետևությամբ, իրականում տառացի արտագրելով, երբեմն՝ համառոտելով կամ էլ ի մի ձուլելով զուտ ապրյուրներում տպվածը:*

ասվիմբ ազգասիրութիւն բարեպաշտօն առնս այսորիկ, այլ զի արծաթածացի նոյն կայծ ուսումնասիրութեան և ի միտս միւս մերազնէից՝ որոց ի սոյն օրինակ բարեգործութիւնս՝ լինել քաջայօժար ո՛չ կասկածիմք:

Յ. և Դ. Արզանեանք

Գ. Շագինյանի և Արզանյանց եղբայրների միջև վադուց էր մտերմություն հաստատվել: Վերջիններս նրան պատկանող տանն էին հիմնավորվել, իրենց մասնավոր դպրոցն ու տպարանը բացել[17] և փոխադարձաբար, ուսումնական կամ առևտրական գործառնություններում, օգտաշահ խորհուրդներ էին տալիս միմյանց:

Թվում է, թե հանուն մեզալի քերականության դիրք տպագրելու և վերատեսչությանը նվիրելու միտքը Արզանյանցներն էին հուշել Գ. Շագինյանին, մանավանդ որ, ինչպես վկայում են վավերագրերը և հենց գրքի վրա եղած նշումը, այդ ձեռնարկը արժանացել էր կաթողիկոսի և վերատեսչության հավանությանը[18]: Բայց այս գնեքում Գ. Շագինյանը գործում էր իբրև խորամանկ վաճառական, որն առանց շահի մեկ կոպեկ էլ քամուն չէր տա[19]: Նա պարզ տեսնում էր, որ կրթական գործն սկսել էր հսկա քայլերով առաջանալ. իրար հետևից բացվում էին պետական ու մասնավոր ուսումնարաններ. աշակերտության համար ավելի ու ավելի շատ գրքեր էին դուրս գրվում Ռուսաստանից ու արտասահմանից. վերջապես, հատկապես հայոց լեզվի ուսուցման գործում, լուրջ դժվարություններ էին ծագում՝ կապված դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մեծ պակասի հետ, որովհետև եղածները հին էին՝ Վենետիկի (Մ. Զամչյան, Գ. Ավետիքյան) ու Պոլսի (Մեսրոպ Տեր-Հարությունյան) հրատարակություններ, կամ էլ Սալլանթյանց Միքայել վարդապետի հեղինակությունը, որոնք դժվարամարս էին, խիստ թանկ և դասագրքային դպրոցներում գործածելու համար աննպատակահարմար:

Արզանյանց եղբայրներին Գ. Շագինյանն ընդառաջում էր հատկապես այն բանի համար, որ մի փոքր գումար ծախսելով՝ նախ տեր էր

---

17 *ՎԱ, ֆ. 424, ց. 77, թ. 4–5:*

18 *Նույն տեղում, ֆ. 2, ց. 2, գ. 372, թ. 1ա:*

19 *Գաբրիել Շագինյանի «գրամոլությունը» երևում է նաև հետագայում: Պարզվում է, որ նա մտադրություն է ունեցել Տիֆլիսում գրախանութ բաց անել (տե՛ս «Կովկաս», 1846, մայիսի 4, № 17), իսկ 1847 թ. էլ սուբր Նունեի անվան կանանց բարեգործական ընկերությանն է նվիրում մեկ օրինակ հայերեն «Կովկաս» լրագիր (տե՛ս «Кавказ», 1847, № 4, с. 4), անտարակույս, ինչ-ինչ թաքուն ակնկալիքից դրդված:*

դառնում մեծ պահանջ ունեցող մի դասագրքի, այն էլ պաշտոնապես հավանության արժանացած, և սկզբնապես մի քանի տասնյակ օրինակ վաճառելով՝ հետ էր ստանում իր ծախսած փողը, իսկ ապա՝ մնացած հարյուրավոր օրինակները նվիրելով Անդրկովկասյան գլխոցների վերատեսչությանը, ձեռք էր բերում մի հեղինակավոր միջնորդ, որ նրան կհասցներ իր բաղձանքին՝ խաչի կամ մեդալի: Որքան էլ տարօրինակ է, դասագիրքը լույս է տեսնում 1840 թ. կեսերին միայն, մինչդեռ Գ. Շապինյանի «մեծագործության» մասին բարձր իշխանություններին հաղորդվում է 1839 թ. աշնանը: Այդ տարվա հոկտեմբերի 28-ին Անդրկովկասյան գլխոցների վերատեսչի պաշտոնակատար Վասիլկովսկին երկրամասի կառավարիչ Գոլովինի ուշադրությունը հրավիրելով Գ. Շապինյանի բարեգործության վրա (նա իր ծախսով տպագրել էր Արղանյանցների քերականությունը և 300 օրինակ նվիրել վերատեսչությանը)՝ միջնորդում է, որ Գ. Շապինյանը պարգևատրվի ոսկե մեդալով: Գոլովինի պատասխանն ուշանում է: Որպեսզի գործն արագանա, 1840 թ. հունիսին Գ. Շապինյանը 300 օրինակ էլ է նվիրում վերատեսչությանը[20]: Բայց մեդալի մասին նորից ո՛չ մի խոսք: Ինչպես երևում է, այս հապաղումը դվարճալի խոսակցությունների նյութ է դառնում Թիֆլիսում՝ հարկադրելով Խ. Աբովյանին ևս իր վերաբերմունքն արտահայտել «Աչքի լույս Ջան...» երգիծական բանաստեղծությամբ[21]:

Գ. Շապինյանն ինչքան էլ վատ մարդ լիներ, Խ. Աբովյանը հաղիվ թե նրա խորտակված պատրանքները ծաղրի առարկա դարձներ, եթե ուրիշ, ավելի լուրջ դրդապատճառներ չլինեին: Հայտնի է, որ Անդրկովկասյան գլխոցների վերատեսուչ Ե. Օ. Հասանովսկիների խազամոլության, ապա և պետական գումարները վատնելու և բանտարկելու անուղղակի հետևանքներից մեկը «Նախաշավղի» տպագրության խափանումն եղավ: Խ. Աբովյանի 1839 թ. և հաջորդ տարիների փորձերը (ընդհուպ մինչև 1844 թ.)՝ «Նախաշավիղն», իբրև

---

20 ՎԱ, ֆ. 2 ց. 372, թ. 1ա և 9:

21 «Աչքի լույս Ջան...» երգիծարանության նախորդ հրատարակիչների կարծիքով՝ այդպես ծաղրված է ափիոնասեր վաճառական Գաբրիել Թայլոնվը (տե՛ս Ռ. Զ., Խաչատուր Աբովյանի նորահայտ բանաստեղծությունները, «Գրական թերթ», 1940, № 5, Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հ. II, էջ 393), որն իբր «Հայոնի հարուստ էր և իրեն համարել է պրակտիության հովանավոր» (տե՛ս Ե I, 392, Ռ. Նանումյանի ծանոթագրությունը), բայց այդպիսի անձնավորության մեր ձեռագրական և պիտանական թափառումների ընթացքում չենք հանդիպել տակավին, ուր էն նա լիներ «պրակտիության հովանավոր»:

ուսումնական ձեռնարկ, Անդրկովկասի գավառական դպրոցներում օգտագործելու համար հոգևոր իշխանություններից պաշտոնական թույլտվություն ձեռք բերելու, միաժամանակ և պետական միջոցներով այն տպագրելու, ապարդյուն անցան: Եվ այդ առումով նրան քիչ չխանգարեցին Արզանյանց եղբայրները, իբրև դպրոցների վերատեսչության իշխանավորների ականջին փսփսացող: Իսկ հիմա, Գ. Շադինյանի օգնությամբ տպագրելով իրենց դասագիրքը, նոր, անհաղթահարելի պատնեշ էին կանգնեցնում «Նախաշավղի» առջև՝ առերես երբեմն գովաբանելով այն:

Խ. Աբովյանն առաջադրում էր աշխարհաբարը դրականության և դպրոցի լեզու դարձնելու խնդիրը, կազմել էր մի երկրորդ քերականության դասագիրք ևս՝ հայոց հին ու նոր լեզուները համեմատական եղանակով ուսուցանելու նպատակով, ժողովրդական ընթերցանության համար զանազան գրքեր: «Նախաշավղի» լույս աշխարհ գալն աստիճանաբար ճանապարհ կբանար դրանց առաջ ևս՝ իր ու իր գաղափարակիցների այս ու մյուս հրատարակություններով սկիզբ դնելով նոր դպրոցի, մատենագրության ու հայագիտության բարգավաճմանն ու հաղթանակին[22]*:*

---

22 *Դեռ տպագրությունը չավարտված և պաշտոնապես լույս չտեսած, «Նախաշավիղը», իբրև ուսումնական ձեռնարկ, մասնավորապես հայերեն տառերի հնչման իր նոր եղանակով (հնչական ոճ կամ մեթոդ) ազդում էր իրենից հետո հրապարակ հանված քերականական աշխատությունների վրա: Դրա ապացույցներից մեկն էր նաև Արզանյանցների հրատարակած ներկա «Քերականութիւն հայ համառօտ»-ը (Տփղիս, 1840): Այս գրքի 237-րդ էջում Արզանյանցները գրում են. «Տառք ի մերս լեզու յերևսունևվեց գիրս բովանդակին, որոց ձևք այսպէս կերպավորին. ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ...» և այլն, «յորս յաւելեալ զաւոդ օ և ֆ՝ լինին երևսունևևութիւն»: Այս տողերի աղբյուրը Մ. Ջամչյանի Քերականությունն է, ուր կարդում ենք. «Տառք ի մերս լեզու յերևսնևևվեց գիրս բովանդակին, որոց ձևք և հնչմունք այսպէս կերպաւորին՝ ա—այբ, բ—բեն, գ—գեմ կամ գիմ, դ—դա, ե—եչ, զ—զա, է—է, ը—եթ կամ ըթ, թ—թո կամ թօ...» և այլն, «յորս յաւելեալ զաւոսդ օ և ֆ՝ լինին երևսունևևութն, զորոց զյաւոիւթիւնսն տե՛ս ի բառարանի» (Մ. Ջամչեան, Քերականութիւն Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 147, Նույնը՝ Տփղիս, 1826, էջ 147): Արզանյանցները արտապրելով Մ. Ջամչյանին՝ դուրս են թողել տառերի հնչման վերաբերյալ հրահանգը կամ տառերի անվանումը՝ այբ, բեն, գիմ, դա և այլն՝ դրանով իսկ լռելյայն համաձայնելով Խ. Աբովյանի «Նախաշավղի» առաջարկած սկզբունքին. «Խնդրեմ ի փառս Աստուծոյ ի բաց թողուլ զյիմար անուանակոչութիւն տառից՝ այբ, բեն, գիմ, ըթ և այլն. զամենայն տառս պարտ է ըստ բնական հնչմանն արտասանել...» (Ե հ. V, 11–12):*

«Նախաշավիղը» 1838–39 թթ. տպագրվում էր հենց Արզանյանցների տպարանում, ու այդ առիթով վերջիններս ծանոթ էին գրքի բնագրին, իսկ

Վերաբանչությունն էլ իր նկատառումներն ուներ. Գ. Շագինյանի «բարեգործության» չնորհիվ առանում էր ձրի գաղափարք, որը, թերևս, մեկ-երկու հարյուր ռուբլի եկամուտ էլ բերեր, մինչդեռ Խ. Աբովյանին ընդառաջելիս՝ պետք է ո՛չ միայն գրկվեր օգուտից, այլև նոր ծախքեր աներ՝ միաժամանակ զրկվելով պահպանողականության ու հայ եկեղեցականության:

Ահա՛ թե ինչպիսին էր հայ անաբուշ գիտնականների և վաճառականության ու ինքնակալության պաշտոնյաների դաշնակցության պատուղը: Ահա թե ինչո՛ւ Խ. Աբովյանը չէր կարող լռել և իր բացասական վերաբերմունքը չարտահայտել Շագինյան — Արղանյանց գործակցության մասին:

«Աչքի լույս Չան, դարդ մի՛ անիլ...» բանաստեղծության միայն մի ինքնագիր է պահպանվել[23], այն էլ հետագայում արբագրված «Իշն ու Բլբյուլը» առակի նախնական տարբերակին կից[24] և նույն այն մեծադիր տետրակում, ուր ամփոփված են նաև «Ղարիբն» բանաստեղծությունը, «Հունայնության աշխարհի, այդին Ղորղանովի» արձակ երկը և «Ո՞ւմ ասեմ սրտիս դարդերն ես, ա՛խ, ո՞ւմ...» քնարական հատվածը, բոլորն էլ աշխարհաբար, բոլորն էլ անթվակիր, բոլորն էլ սևագիր և 1839 թ. վերջերից 1840 թ. վերջերն ընկած ժամանակամիջոցում հղորինված գրվածքներ, իսկ մասնավորապես «Աչքի լույս Չանը...»՝ 1840 թ. երկրորդ կեսին:

Առանձին բանաստեղծական տողերի չակուռմները կամ հապավումները սույն ռուսնավորի մեջ շատ չեն, և բավանդակության ու ոճով այն էական փոփոխության չի ենթարկվել: Առաջին, տասնվեցերորդ և նախավերջինն տողերը, ինչպես ցույց են տալիս բնագրային տարբերությունները, սկզբնապես հնչել են՝

Գաբրիել Չան, դարդ մի՛ անիլ...
Գաբրիել Չան, շատ մի՛ ուռչիլ...
Գաբրիել Չան, լավ չե՛ս անում...

մասնավորապես Դավիթ Արղանյանցը նրա անպաշտան գրախոսն էր, որը «Նախաշավղի»՝ Անդրկովկասյան պարոցներում գործածելու հարցը քննում էր Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդում: Այս ուշագրավ խնդրին, սակայն, կանդրադառնանք այլ առիթով:

23 Տե՛ս Ա, № 60, էջ 29–30:

24 Այս առակի հղացումն ևս կապված է «Նախաշավղի» ձախող տպագրության պատմության հետ:

Հետագայում, սակայն, հավանաբար զգալով, որ ամբողջ բանաստեղծությունն այնքան թափանցիկ է դրված, որ ընթերցողների համար դժվար չի լինի կռահել, թե ծաղրված հերոսն իրականում ո՞վ է, «Գաբրիել ջանը» փոխարինել է «Աչքի լույս ջան» արտաքնապես մտերմիկ արտահայտությամբ, որն իրականում ավելի ընդգծուն է դարձրել Խ. Աբովյանի հեգնանքը: Ջնջված են նաև նախապես գրված երկու ամբողջական բանաստող՝ 4-րդ [Հազար դիրք ա տանդ տալումմ] (ակնարկ, որ Արզանյանցների տպարանը տեղավորված է Գ. Շադինյանի տանը) և 7-րդ [Սիրուն աղջկերք չատ ճիտ արել] (ակնարկ, որ նա վարքուբարքով թեթև է): Վերջապես՝ բանաստեղծության երկրորդ տունը, չգիտես ինչու, մնացել է թերի, երեք տողանոց:

Խ. Աբովյանը, անտարակույս, վերոհիշյալ ուղղումներով ջանացել է հնարավորին չափ սանրել Գ. Շադինյանի անձին ու անձնականին վերաբերող մանրուքները, առանց, սակայն, հեռանալու նախատիպի արտաքին և բնավորության հատկանշական գծերից: Այդ են վկայում առկա դիպուկ, ճշգրիտ, ինչո՞ւ չէ, նաև թափանցիկ բանաստղերն ու ամբողջական քառյակները.

Տպած գրքերդ, դասթա-դասթա,
Ծեց, մկներին դառել են փայ.
Մկներն են քո անուղղ օրհնում,
Ում փող տվիր՝ վրեդ ծիծաղում...
Ասենք՝ գրքի հոտ ես առել,
Փիլիսոփա, վարպետ դառել,
Ջէ՛, էլի մեր քաղքի ճուտն ես,
Մենք լավ գիտենք՝ ի՞նչ պտուղ ես...
Տո՛ էն թոզի կեղտն ու հոտը
Դեռ կպած են շլնքիդ մոտը.
Մեզ ընչի՞ ես բեղնամ անում
Ու քեզ ու քեզ թանկ-թանկ ծախում:
Մեկ բոյ ունիս՝ գազ ու կես ա,
Գլուխդ հետը լիտր ու կես ա...
Քու ի՞նչ բանն ա խելքիդ զոռ տաս,
Աչքերդ չռես, ուռած ման գաս...

Կառուցվածքային առումով էլ ինքնատիպ է սույն քերթվածը: Առաջին տողից մինչև վերջինը, արտաքնապես մտերմիկ ու հանդարտ խոսքերով՝ թվում է, թե հեղինակը ձգտում է բարոյական ընթացքի և խելամիտ գործերի կոչել իր «սրտամոտ ընկերոջը», իր «աչքի

լուսին», բայց ամեն անգամ էլ տեղն ու տեղը հիշատակում է նրա այնպիսի արարքներ, որոնք բնորոշ են միմիայն արդահատելի հոգիներին:

Ճիշտ է, Գ. Շապինյանը ըմբռնվելու է կյանքի բարիքները, ոտքի տակ տվել ողջ Եվրոպան, բայց էությամբ մնացել է հինը՝ նենգ ու խաբեբա.

Խանի խարաբ, ի՞նչ ես ուռչում.
Լեյպցիգ, Լոնդոն ման ես էկել,
Ալվան բաներ շատը տեսել:
Կուպեցուբյուն չէիր ուզում,
Խաչ ու չնի հետը ընկնում.
Էսօր, էքուց փոշտը կգա,
Մուրազդ կառնիս, տո՛, քեֆ արա՛...
Կարդացողից դու հեռու կա՛ց,
Քոնն ա գազը, դուքանդ բա՛ց.
Կապեկները դու կուլ տալով՝
Մարդ ես դառել տանով, տեղով...

Խ. Աբովյանի կյանքը եղել է չարունակական պայքար ընդդեմ հնի, ավատականի ու հետադիմականի, հանուն նորի ու առաջադիմականի, և այդ կենաց ու մահվան կռվի դրական արձագանքները լսվում են նրա շատ ստեղծագործություններից:

«Աչքի լույս չան, դարդ մի՛ անիլ...» երգիծանքը այդ պայքարի դրվագներից մեկի դրական վավերագիրն է, ուր անողոք ձևով մերկացվում է վաճառականության և հին մտավորականության դաշնակցությունն ընդդեմ նոր հայախոսության ու դպրոցի, որոնց սկզբնավորումն ու ապատ զարգացումը Խ. Աբովյանի վհուկ նպատակներից էին, էլ չենք ասում՝ նրա կյանքի բարձրագույն իմաստը, առանց որի նա չէր պատկերացնում հայ ժողովրդի ազգային համախմբումը և տնտեսական, քաղաքական ու հոգևոր վերածնունդը:

Որքան էլ սկզբունքային ու անզիջում, Խ. Աբովյանի ծիծաղը չար չէ, որովհետև նա կարեկցող սրտի տեր էր, էությամբ բարի և անձնական նկատառումներից վեր կանգնած մարդ: Միայն մի զրվագ. երբ ժամանակ անց, 1841 թ. փետրվարին վախճանվում է նրա դասընկերոջ (Ներսիսյան դպրոցից)՝ Նիկողայոս Տեր-Շմավոնյանի կինը, Խ. Աբովյանն այդ առթիվ մի ակնարկ է գրում և ղեկավարելով ոճով նկարագրելով հուղարկավորության հանդիսան ու սգավոր հարազատներին, անկեղծորեն ցավակցում է նաև Գ. Շապինյանին, որի

մորաքրոջ աղջիկն էր հանգուցյալը: «... քանի պարոն Գ. Շագինովի էն վերջին աչեն ու վախը միտս ա ընկնում, որ գերեզմանի գլխին կանգնած՝ ընչանք կարգը կնկատարեին, հենց գիտես, թե ազնիվ երիտասարդի սիրտն ուզում էր, որ տրաքի, էնքան բերնին ու աչքին հուփ էր տվել..., քանի նրա էն վերջին գլխին տալը, էն աննման աչքն ու ունքը էնպես արտասվակոլոլ տեսնիլը որ միտքս չի ընկնում... էս սհաթին էլ աչքս սևանում ա, սիրտս արին ա կաթում, օրս ու ումբրս հող դառնում»[25]:

Վերը բերված տողերից, թերևս, ուրիշները հետևեցնեին, թե Խ. Աբովյանի երգիծանքն առօրեական, մտերմիկ կատակ էր լոկ և զուրկ հասարակական բովանդակությունից: Բայց ներկա դեպքում դա կլիներ սուիեստաբանություն: Կյանքում, տեղն եկած ժամանակ, այո՛, Խ. Աբովյանը նաև սրամտում էր ու նաև՝ երբ տեսնում էր, որ յոթ օտարն անգամ կարիք ունի սրտամոտ խոսքի, կարեկցանքի, չէր զլանում իր մխիթարանքի խոսքն ասել՝ սկզբունքային հարցերում, սակայն, չիջնելով անձնականության աստիճանի, երբեք չզիջելով և դրանով իսկ ցուցադրելով իր բարձր բարոյականությունն ու մարդասիրությունը:

Անկախ նրանից, թե ով էր նրա երգիծանքի առարկան՝ նախածանոթ մե՞կը, թե՞ հակառակորդը, եթե բախման չարժառիթը նվիրական գաղափարների ոլորտին էր վերաբերում, իսկ այդ անձն իր գործով ու ընթացքով խանդարում էր իրեն, Խ. Աբովյանի խոսքը պառնում էր հատու, ճաղկող ու դատապարտող: Գ. Շագինյանի «ազգային բարերարությունը» վերջին տեսակից էր և փաստորեն խոչընդոտում էր ազգային հառաջադիմությանն ու լուսավորությանը, ուստի և նենգակա էր արդարացի ու խիստ քննադատության:

Այս է «Աչքի լույս Չան...» երգիծանքի բարոյական կողմը:

---

[25] Խ. Աբովյան, *Թիֆլիսի հայոց հանդուստարանը (Ե, IV 45)*:

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

(«ՀԱՐԵՆԵԱ՛Յ ՄԽՈՅՆ...»)

Տակավին 50-ական թվականների սկզբներին, «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմության կենճռոտ խնդիրները քննելիս, ամեն անգամ, երբ անհրաժեշտություն էր զգացվում վերընթերցելու «Ազատու խոսքը» երկարաշունչ, հանգավոր ու անավարտ խոհրդածության բնագիրը, որն այլ բան չէ, քան բազում տարիներ հղինակի մխրքն ու հոգին փոթորկած նվիրական հույզերի ու դաղափարների մարմնավորման նախնական, թուլլ փորձ, հասնելով ձեռագրի 244-րդ էջին, ավելի քան 5300 տող հետևում թողած՝ կանգնում էի մեծ հարցականի առջև՝ չդանելով դոհացուցիչ բացատրություններ:

Այստեղից սկսած՝ անապատելիորեն փոխվում են պատումի ոճն ու լեզուն, թափն ու ընթացքը: Ազգապրական սուրբ նկարագրությունները իրենց տեղը զիջում են հայրենասիրական զմայլելի մի նկրքուղի, նկրչնչված մի ինքնախոստովանության, որպիսիք բնավ էլ սովորական այցելուներ չեն Աբովյանի՝ անակնկալներով այնքան հարուստ ստեղծագործական առօրյայում, անգամ «Վերք Հայաստանիի» մեջ:

Փոխվում է նաև էջի ձևավորումը. վերին լուսանցքը սովորականից լայն է, ինչպես նոր բանաստեղծություններ արտագրելու դեպքում: Տետրակի էջերի սովորական էջերի խտությունը 23 — 25 տող է, այստեղ ընդամենը 21 տող կա:

Ձեռագրի այս ու հաջորդ էջերում, արդեն դրաբարով՝ Աբովյանն իր հավատարմության երդումն է տալիս հայրենի հողին ու մայրենի լեզվին, բայց ո՛չ ավանդական խոսքով՝ ռամկական մրմունջներով ու այլաբանություններով, ինչպես ուրիշ դեպքերում, երբ իշխող երանգները թախիծն են ու սրտի անբուժելի ցավը...

Հպարտ ու ոխրական են հնչում Աբովյանի խոսքերը.

Հայրենեա՛ց ծխոյն, հայրենեա՛ց բոցոյն,
Հայրենեա՛ց օդոյն, հայրենեա՛ց հրոյն
Ես զո՛հ ողջակէզ...

և նույն թափով էլ չարունակվում ու ավարտվում (արդեն ձեռագրի 246-րդ էջում) հետևյալ եզրափակիչ խոսքերով.

Զի ծուխ Հայրենեաց՝ քաղցր, լուսաճեճեր,
Է հուր երկնային, ի մարմնի՝ անմեռ,—

սկզբից մինչև վերջ. համարյա անփոփոխ՝ թղթին հանձնելով ուղիղ 46 տող:

Ասում ենք՝ **համարյա անփոփոխ**, որովհետև այս բանաստեղծության մեջ գրության պահին և մտահղացումը թղթին հանձնելուց անմիջապես հետո որոշ սրբագրություններ, այնուամենայնիվ, արվել են, բայց ընդամենը վեց տողի մեջ, ու բոլորն էլ սովորական փոփոխություններ են՝ կրկնությունների վերացում, մոռացած բառի վերականգնում, քերականական սխալի ուղղում:

Ահա՛ այդ վեց տողերն սկզբնական տեսքով (նշում ենք տողահամարներով).

2 Հայրենեաց հրոյն, Հայրենեաց հրոյն
7 Սուրբ նորա ծաղկին, երկնային
10 Երկնային ազգին, Հայկազանց գրոհին
14 Շնչոյն խնկաբեր, շնչոյն շնորհածոր
16 Բերանին համեղ, բերանոյն ուժեղ
42 Ի ջերմ սեղանոյ, սրտիս երկնառաք

Երկրորդ տողի մեջ կրկնվող **հրոյն** բառերից առաջինի համար Աբովյանը հարմար է դատել ընտրել այլ փոփոխակ՝ **օդոյն**: Յոթերորդ տողում, **երկնային** մակդիրից առաջ ավելացրել է նախատես բացակայող **ծոցոյն** որոշյալը: Տասներորդ տողում, վերջին **գրոհին** բառը փոխարինված է՝ **բազկին**, որովհետև **գրոհին**-ը կրկնվում էր նաև տասնմեկերորդ տողում և՝ տեղին:

Տասնչորսերորդ տողում **խնկաբեր** մակդիրը փոխարինված է **երկնաբեր**-ով, որովհետև **խնկաբեր** բառի առկայությունը հակասում էր բանաստեղծական տան կառուցման որդեգրված սկզբունքին՝ այն արդեն օգտագործված էր նույն տան առաջին կամ ընդհանուր բանաստեղծության տասներեքերորդ տողում:

Տասնվեցերորդ տողում, հենց սկզբում հանդիպող **բերանին** գոյականը հոլովված է ըստ աշխարհաբարի կանոնների, այնինչ ամբողջ ոտանավորը հորինված է գրաբարով. այդ էլ թելադրել է Աբովյանին բառի գրությունը հազիվ ավարտած՝ ուղղել և համապատասխանեցնել գրաբարի ուղղագրությանը՝ **բերանոյն**:

Քառատուներկուերորդ տողում միանգամից փոփոխված են երկու բառ՝ ջերմ որոշիչը և հալոցք՝ սրտիս որոշյալը: Առաջինը փոխարինված է սուրբ մակդիրով, իսկ վերջինը՝ սիրոյս-ով, ըստ որում՝ փոփոխվում առաջ Աբովյանը մեկ մտածել է բանաստեղծության նախավերջին բառը փոխել այլ հոմանիշով՝ «... ըղձոյս երկնառաք», ու մինչև անգամ սրտիս որոշյալը ջնջելուց հետո վերևից ավելացրել «ըղ...» տառերը, բայց անմիջապես էլ փոխել է միտքը, ջնջել է գրած երկու տառերը՝ ըղ..., և կողքին ավելացրել՝ «...սիրոյս» (երկնառաք):

Այսպիսով՝ քննության առնված վեց տողերը ճշգրտվել են և դարձել առավել հստակ.

2 Հայրենեաց՛ց օդոյն , Հայրենեաց՛ց հրոյն
7 Սուրբ նորա ծաղկին , ծոցոյն երկնային
10 երկնային ազգին , Հայկազանց բազկին
14 Շնչոյն երկնաբեր , չնչոյն չնորհածոր
16 Բերանո՛յն համեղ , բերանո՛յն ուժեղ
42 Ի սուրբ սեղանոյ , սիրոյս երկնառաք

Ի վերջո՝ ի՞նչ է այս հանգամանքի հաստատումը. «Ադամու խաղի» անթաժանելի մա՞սը, թե՞ անկախ բանաստեղծություն, տարբերակ չարունակ հարց ենք տվել մեզ և չդանելով պատասխանը՝ վերստին չարունակել քննությունը, մինչև որ, վերջապես, վայելցինք հայանության բերկրանքը, բայց ո՛չ Թանգարանի ընթերցասրահում, այլ հայրենի վայրերից հեռու, Կովկասյան սարերից անդին, հիմանդասանյակում, ուղիղ տասը տարի առաջ:

2

Իսկական արվեստագետը միշտ էլ ինքնատահայման բուռն ցանկություն ունի, իր ու իր ժողովրդի կյանքի ու ճակատագրի համար բախտորոշ նշանակություն ունեցող հարցերի մասին անձնական նկատառումներն արտահայտելու անհրաժեշտություն: Եվ նմանօրինակ խոստովանություններ, ընդհանրապես, արվում են այն երկերի էջերից, որոնք հասցեագրված են ընթերցող լայն շրջաններին, եթե, անգամ, տվյալ դեպքում դրողը չունենա էլ համապատասխան լսարան ու համախոհներ: Դարեր հետո էլ անկեղծ ու մարդասիրական խոսքը կգտնի իր ունկնդրին, կառաջնորդի սերունդներին...

Նման պահերին ապագիր խոսքին ու հրապարակային ելույթներին փոխարինելու են գալիս նամակները, անգամ օտարներին

Հասցեագրված անձնական ու պաշտոնական գրագրությունները՝ այն էլ ո՛չ մայրենի, այլ օտար լեզվով, բայց հայի մտածողությամբ և մտքերն արտահայտելու ձևերով պատմելով նվիրական իդեալները կենսագործելու ճանապարհին ապրած ճախողանքների, խորտակված երազանքների ու համառ հետապնդումների մասին... ապա և՝ բանաստեղծությունները, որոնք գրվում են ո՛չ այլոց, այլ անձամբ իր՝ հեղինակի համար, սեփական հոգին դատարկելու և, դեթ ժամանակավորապես, հոգեկան հանգիստ գտնելու:

Աբովյանի չատ ինքնախոստովանություններ այս բնույթի ու բովանդակության ունեն:

Առաջներում նա ինքնարտահայտման էր հասնում ավելի չատ մորմոքուն խոսքերով, ունկնդրի հետ, կարծես, դեմ դիմաց նստած զրուցելիս՝ հոգին բաց անելով, թեպետև վերջնական արդյունքը նամակ էր կամ խնդրագիր և, որ աննչան իրողություն պիտի դիտվի, ինչպես ասացինք, մեծ մասամբ գրված օտար լեզվով:

Որպեսզի առարկայազուրկ չհնչեն մեր այս հավաստիացումները, մեկ-երկու մեջբերում անենք Աբովյանի անկեղծ խոստովանության և ինքնարտահայտման ամենավառ օրինակներից՝ քաղելով 40-ական թթ. սկզբների գրություններից.

«Ach! wäre dies Blatt mein Herz selbst, und dann, dann werden Sie wohl sehen, wie ich fühle, wie ich leide. Mag man mich tadeln, ich denke Armenisch, ich fühle Armenisch! »

***(«Ա՛խ, եթե սիրտս լիներ այս թերթի տեղ, ապա այն ժամանակ Դուք ինքներդ իրապես կտեսնեիք, թե ես ի՞նչ եմ զգում, ինչպե՞ս եմ տառապում: Թո՛ղ ինձ կշտամբեն, ես հայերեն եմ մտածում, ես հայերեն եմ զգում...»**[1]:*

Այսպես էր գրում Աբովյանը 1841 թ. մարտի 30-ին, իր պաշտելի ուսուցչի և բարերարի՝ Ջրիդրիխ Պարրոտի այրուն ուղղված ցավակցական նամակում:

«Имя отечества, нации не всем свято, грусть и восторг при воспоминании их не всем понятны. Я недостойный, ничтожный, может быть, но природа сама дала мне эти чувства..

(«Հայրենիքի, ազգի անունը ամենքի համար չէ՛, որ սուրբ է. թախիծն ու հրճվանքը, <որ ծնվում են> դրանք հիշելիս՝ բոլորին չէ՛,

---

[1] *Ե X, 238:*

որ հասկանալի են: Ես, գուցե, անարժան եմ, չնչին, բայց բնությունն ինքն է տվել ինձ այդ զգացմունքները»)[2]:

Այս խոսքերով էլ 1842-ի գարնանը Աբովյանը փորձում էր չարժել Անդրկովկասյան գլխավոր հրամանատարի պաշտոնակատար Ի. Ռոսկովշենկոյի կարծրացած սիրտն ու դուռը, որպեսզի չխանգարեին իրեն գնի ազատ ժամերը նվիրելու հայրենիքի լուսավորությանը, հայրենի պատանեկության կրթության սուրբ գործին:

Եվ իր բոլոր հին ու նոր ինքնախոստովանություններին իմաստուն, առիթն եկած ժամանակ, Աբովյանը խտացրել է մի տարողունակ արտահայտությամբ.

«Жить и умереть для отечества–вот задача, выбранная мною еще с самых юных лет...»

(«Ապրել և մեռնել հայրենիքի համար՝ ահա՛ տակավին պատանեկան ամենավաղ տարիներից իմ ընտրած նպատակը»)[3]:

«Հայրենասի՛ր ծնող...» քերթվածն իր ոճով սահմանապատվելով ինքնաբուխ հայրսման առաջին փորձերից՝ մնրմնում է այս վերջինին: Նորահայտ տողերի տիրական ոգին հանուն հայրենիքի ու մայրենի լեզվի կենդանի ոգեկոչ դառնալու անկասելի ձգտումն է՝ արտահայտված հպարտության ու արժանապատվության բարձր զգացումով և բոցեղեն խոսքերով:

1979 թվականի փետրվարին, Էջմիածնի առաջնորդարանի Զորի կոչվող հանդրվանի իմ սենյակում, արդեն ո՞րերորդ անգամ ուշադրությամբ ընթերցելով «Ազատու խաղը»՝ միջազգային ներքին կապը, հերթականությունն ու իրական բովանդակությունը գնի ինձ համար վերջնականապես պարզելու, քնագրի ուղղագրությունն ու կետադրությունն ինչ-որ չափով կարգավորելու և մեր օրերում տպագիր բնագրում արված անիմաստ լրացումներն օտարելու նպատակով՝ հանելով 244-րդ էջին, կարծես, միանգամից ցնդից մշուշը, հասկանալի դարձավ «Հայրենասի՛ր ծնող...» սկսվածքով գրաբար հատվածի բուն իմաստը:

Եվ իմ բանասիրական անվերջանալի ու երկարամյա զգեցումների ընթացքում, առաջին անգամ, թերևս, հայանության բերկրանքը վայելեցի անասելի հուզմունքով:

---

[2] *Նույն տեղում, էջ 257:*

[3] *Նույն տեղում, էջ 254:*

Հայտնաբերվել էր Աբովյանի անսովոր ուժի տեր և քնարական-նուրբ ոգով ստեղծագործություն, որը մեկ դարից ավելի խճողվելով նրա ստեղծագործական ձեռագրերի փակուղիներում և տպագրված լինելով հանդերձ՝ անհայտ ու անմատչելի էր մնացել հետազոտողներին ու հանրությանը, չնայած հեղինակը, այդ հրեղեն տողերը թղթին հանձնելուց հետո, ամեն կերպ հոգացել էր, որ ստվար ձեռագրի ապագա վերծանողն անտարբեր չանցներ համապատասխան էջերի վրայով, անջատեր դրանք մյուսներից և լույս աշխարհ հաներ որպես անկախ, ամբողջական, չափածո մենախոսություն, որպես քնարական երգում, որի զուգահեռները ծանոթ են հայ ընթերցողին Աբովյանի ժամանակակից ու հաջորդ քերթողների ստեղծագործական փորձից՝ Հովհան Մլրզա Վանանդեցու, Ղևոնդ Ալիշանի, Ավետիք Իսահակյանի, Դանիել Վարուժանի, Վահան Տերյանի, Եղիշե Զարենցի և ուրիշների՝ Հայաստանին ու հայոց լեզվին նվիրված ձոներից ու ինքնախոստովանություններից:

«Հայրենեա՛ց ծխոյն...»-ը կենտրոնական դիրք է գրավում հայ քնարերգության բազմադարյան պատմության մեջ՝ նախ քնարականությամբ ու արվեստով հայ նոր քերթությունը չաղկապելով Գրիգոր Նարեկացու բանաստեղծական ավանդների հետ: Քերթվածի ողնաշարը կազմող կրկնությունները և հրեղեն թափը նարեկացիական են, բայց ոգին, ձգտումը, բովանդակությունը սավառնում են դեպի հետագա դարեր, կապվում Վարուժանի, Տերյանի ու մյուսների ստեղծագործական փորձին, կարծես, նրանց գրչի տակից դուրս եկած լինեն:

Աբովյանի քնարական այս խոստովանությունը հայ բանաստեղծության գալիք ճանապարհն ուղենշող երկ է, թեպետ առեղծվածը պարզվում է միայն հիմա...

Աբովյանի ձոնն արդյոք ունե՞ր արտաքին ազդակներ կամ ի՞նչն է իբրև այդպիսին ծառայել: Մեզ մտահոգել է նաև այս հարցը, որովհետև ազգային մատենագրության մեջ Հայրենի ծուխը, որպես նվիրական խորհրդանիշ, ներքողվել է դեռ հին ժամանակներից, վիպասանների երգերի մեջ, որոնց՝ մեզ հետաքրքրող բեկորը հասել է մինչև XI դար և գրի առնվել իմաստասեր, համայնապետ ու պետական գործիչ Գրիգոր Մագիստրոսի կողմից.

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի...

վերջին չնչում, օտարության մեջ, տենչում ու թախծում էր Հայոց Արտաշես Առաջին արքան:

Վիպասանական այս երգին, թերևս, ծանոթ չէր Աբովյանը[4]*, բայց նրան պաշտելի էր հայրենի ծխի սրբության խորհուրդը, որը նստած էր ամեն հայի սրտում:*

Отечества и дым нам сладок и приятен!
(Հայրենիքի ծուխն էլ քաղցր է մեզ ու ախորժ...)

մի առիթով ասել է ռուս բանաստեղծ Գ. Ռ. Դերժավինը («Арфа», 1798), *որի ներշնչված բառերն այնուհետև դարձել են թևավոր խոսք և որպես բնաբան օգտագործվել այլոց հուշիչ ու մարդկային մենախոսություններում: Մենք նկատի ունենք Ֆ. Գլինկայի «Ռուս մարդու երազանքն օտարության մեջ» ռոմանսավորը*[5]*, որի տարբերակին ավելի քան մեկ ու կես դար ապրում է որպես ժողովրդական երգ և որին լավատեղյակ էր Խ. Աբովյանը:*

Եվ այնուհանդերձ՝ «Հայրենիա՛ց ծխոյն...» մենախոսության առեղծվածային ապդակները պիտի փնտրել միայն ու միայն հեղինակի տանջալից խոհերի մեջ ու հոգու խորքում:

3

Բանաստեղծության ամբողջական, հարատար բնագիրը ընթերցողներին ներկայացնելուց առաջ ևս մի քանի նկատողություն.

«Վերք Հայաստանիի» հատաջաբանում, անդրադառնալով այդ երկի արարման առաջին օրերին իրեն պաշարած հուշերին ու խոհերին, իր հոգեվիճակին, Աբովյանը խոստովանում է. «Հայաստան հրեշտակի պես առաջիս կանգնել, ինձ թև էր տալիս: Ծնող, տուն, երևելություն, տած, լուծ ըանիր՝ էնպես էին կենդանացել, որ էլ աչխարքը միաքս չէր գալիս...»[6]*: «Հայրենիա՛ց ծխոյն...» սկսվածքով դրաբար քերթվածը փաստաբանության է հայրենիքի ու մայրենի լեզվի՝ հենց այդ սպասվություններին հետ չակկապված:*

---

[4] *Այս երգի վրա, Գրիգոր Մագիստրոսի թղթերի ամբողջական հրատարակության (1910) շատ առաջ, ուշադրություն է դարձրել Մ. Ջամչյանը իսկ «Պատմութիւն Հայոց», հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 351. «Ո՛ տայր ինձ—ասէր /Արտաչէս թ մետանիլ իւրում/—զծուխ ծխանի, և զտաւտան նաւատարպի...» և այլն: Իսկ նրա Պատմությանը Աբովյանը ծանոթ էր:*

[5] *Տե՛ս* Федор Глинка. Сочинения, М., 1986, с. 45.

[6] *Նույն տեղում:*

Դատելով ձեռագրից, նաև վերջինիս բնագրագիտական քննության արդյունքներից՝ բանաստեղծության ձևն ու դաղափարը հղացել են միանգամից և ապա, ինչպես արդեն ասել ենք, առանց էական փոփոխությունների, վերարտադրվել հեղինակի ձեռքն ընկած առաջին իսկ թերթերի՝ հետագայում № 55 ստվար մատյանի պրակներից մեկը դարձած տետրակի ապատ էջերում:

Հորինվել է 1841 թվականի փետրվարի կեսերին, «Վերք Հայաստանի» վեպի նախնական տարբերակի վերջին դրվագների գրության պահերին առաջացած կարճատև դադարներից մեկի ժամանակ ու մի շնչով: Թվագրված չէ, բայց գրության տարին ու ամիսը որոշվում են անսխալ:

Բնագիրը տեղավորված է Աբովյանի թողոնների այժմյան № 55 ձեռագրի 244 — 246 էջերում, որոնց նախորդում և հաջորդում են «Աղաստու խաղի» դրվագները, ըստ որում՝ դրանցից առաջինը վերջավորված պատում է, ավարտվում է 243 էջի ճիշտ վերջում և եզրափակվում այս տողերով.

. . . . . .

Մեզ էլ իրան սուրբ, երկնային տեսույն,
Մեղավոր բերնով խնդրենք, որ Աստված
Արժանի անի, մեզ չկորցնի:
Ամեն:

Իսկ բանաստեղծությունից անմիջապես հետո սևագրված դրվագի հենց գլխում (որ սկսվում է 246 էջի 3-րդ տողից), ուր վերստին նկարագրվում են Ապովենց ընտանիքի ամենամյա ուխտագնացությունները, հետևյալ հանգավոր տողերից առաջ՝

Էսպես, իմ որդիք, մենք ուխտ գնալիս,
Աղջիկ, տղա էատեղ իրար տեսնելիս
Իրար թամարզու, միշտ կարոտ իրար...

Հուշելու համար իր ձեռագրերի գալիք վերծանողներին, որ նախորդ «Հայրենեա՛ց ծխոյն...» սկսվածքով հատվածն անկախ ստեղծագործություն է և չի կարելի միացնել «Աղաստու խաղին», գերթվածի վերջում և հիշյալ տողերից առաջ, այդ երկուսի արանքում, դրել է բաժանման նշան՝ երկու կարճ, զուգահեռ գծիկ:

Աբովյանի վախն, ինչպես ապագան ցույց տվեց, իզուր չէր, որովհետև մեր օրերում «Աղաստու խաղի» հրատարակողները,

չկռահելով հեղինակի զգաստացնող նշանների իմաստը, անտեսել են զրանք, ոտանավորը զրկել են անկախ կյանքով ապրելու իրավունքից և այդպիսով դուռ բացել թյուրիմացության:

Բնօրրանի՝ հայրենի ծխի ու հրի, հայրերի հավատի ու կրոնի փառաբանությունը տարակարծությունների տեղիք չի տալիս: Բայց ահա՛ զրաբարի, իբրև ազգային վերածննդության հզոր գործոնի, փառաբանությունը կարիք է զգում բացատրության: Ճիշտ է, զրաբարի օգտագործումը ողջ ազգի լուսավորության համար Աբովյանը դեռ անժամանակ էր համարում, նրա կարծիքով՝ ժողովրդին նախ պետք էր կրթել հանուրին հասկանալի, խոսակցական աշխարհաբարով և հետո միայն, գպրոցի միջոցով, վերադառնել քաղաքական դժբախտ հանգամանքների պատճառով կորցրած հին գանձը՝ զրաբարը, որի համար կպահանջվեր տևական ժամանակ: Այս նկատառումով էլ ահա՛, քնարական մենախոսությունների պահերին, երբ, ընդհանրապես, գրում ու խոսում էր ինքն իր համար և մեկ այլ, ուրիշ պատասխան չէր ակնկալում, բացի գալիք գարերի լուսավորված ու կրթված ընթերցողից, մտքերը վերարտադրում էր բացառապես զրաբարով, այդ ուժեղ ու սուրը լեզվով, ինչպես կոչում է նրբին քերթվածի մեջ: Հետևաբար՝ հրատարակվող ոտանավորի մեջ ներքոզվող լեզուն զրաբարն է՝ պատմական հայրենը, ու այս չպետք է մոռանալ:

Ցանկանալով վերականգնել արդարությունը՝ մենք վերսին պատրաստել ենք բանաստեղծության բնագիրը (օտարել սխալները, կանոնավորել կետադրությունը) և հիմա հանձնում ենք զրականության պատմաբանների ու լայն ընթերցողների ուշադրությանը: Ավելացնենք միայն, որ քերթվածի առաջին, անկատար հրատարակությունը պետք է որոնել Աբովյանի Երկերի ակադեմիական լիակատար ժողովածուի II հատորում, «Ազատու խոպի» հետ ձուլված[7]:

Երկարամյա մոռացությունից հարությունն տալով սուրն քերթվածին և, որպես անկախ երկ, հրատարակելով՝ կարծում ենք, դեռ այսուհետև, այն կարժանանա գնահատության և պատշաճ տեղ կգրավի Աբովյանի հայրենասիրական խորհրդածությունների ու ձոների շարքում[8]:

---

[7] *Այդ հատորը լույս է տեսել 1948-ին. տե՛ս էջ 142–143, տպեր 5318–5363:*

[8] *Մինչ այս՝ 17-րդ տողն, առհասարակ, վերծանվել ու տպագրվել է սխալ՝ «Ուժեղ սուր լեզուին...» (տե՛ս նե II, էջ 143), իսկ 46-րդ տողում սպրկել է գրիպակ՝ «Ի հուր երկնային...» (տե՛ս «Հայրենիքի ձայն», 1984, № 46 և «Գարուն», 1965, № 1), մինչդես հեղինակը պարզ գրել է. «Ի հուր երկնային...»:*

***

Հայրենեա՛ց ծխոյն, Հայրենեա՛ց բոցոյն,
Հայրենեա՛ց օդոյն, Հայրենեա՛ց հրոյն
Ես զո՛հ ողջակէզ՝ աննմա՛ն սիրոյն,
Աննմա՛ն տեսոյն, աննմա՛ն գեղոյն:
Սիրտ իմ պատարագ սուրբ նորա ճորոյն,
Սուրբ նորա դաշտին, սուրբ նորա լերին,
Սուրբ նորա ծաղկին, ծոցոյն երկնային,
Ծոցո՛յն երկնային, ճայնին երկնային:
Երկնային խմբին, երկնային խնկին,
Երկնային աղգին, Հայկազանց բազկին,
Հայկազանց գլոհին, Հայկազանց գնդին,
Հայկազանց սրտին, չնչո՛յն Հայկազանց:
Շնչո՛յն Հայկազանց, շնչոյն խնկաբեր,
Շնչոյն երկնաբեր, շնչոյն չնորհածոր,
Շնչոյն վարդահոտ, բերնին մեղրաթոր,
Բերանո՛յն համեղ, բերանո՛յն ուժեղ:
Ուժե՛ղ, սուրբ լեզուին, լեզուին սոխակի,
Որ զիմ մանկութեան չրթունս դեռ անզօր
Բացին ի նանիկ ծնողաց՝ չնորհաւոր.
Ծնողաց չնորհաւոր, որք զիմ գայթ մարմին
Ի սուրբ խանճարուրս սիրով պատեցին,
Սիրով պատեցի՛ն, արտասուօք թացին,
Ի ծոց Գրիգորի սուրբ Լուսաւորչին.
Ցաւազան նորա, ի ջուր փրկագին,
Սրբալոյս իւղով զիմ ճակատ օծին.
Հայկայ սուրբ բառիւ զիմ անուն եդին,
Տուր խաչի կոչեալ՝ զիս դրոշմեցին:
Խաչին այն հզօր, խաչին այն ուժգին
Ես սիրտ տամ տուր՝ սիրով, կաթոգին.
Նա զիմ Հայրենիս ընդ քառաթևովն
Պահեսցէ՛ անփորձ, անսասան, անխռով.
Նկուն՝ զքշնամիս նորա արասցէ՛,
Հզօր՝ զբարեկամս նորա պահեսցէ՛:
Հայրենեա՛ց ծխոյն՝ բոց անշէջ սիրոյս,
Հայրենեա՛ց բոցոյն՝ հուր սիրտ իմ խղճոյս.
Հայրենեա՛ց հրոյն՝ փայտ իմ ոսկերաց,

Հայրենեա՛ց փայտին՝ կայծ վառ իմ չնչոյս,
Հայրենեա՛ց չնչոյն, հոգիս բնակարան,
Հայրենեա՛ց հոգւոյն՝ մարմինս զուարակ:
Ի քիմս Հայկազանց հզօր Հսկայից
Անոյշ ողջակէզ, անոյշ պատարագ
Ի սուրբ սեղանոյ, սիրոյս երկնառաք
Լիցի՛, ճոնեսցի՛ ի խորոց սրտիս
Ի բարձունս ի վեր, ճորոյս աստիս: —
Զի ծուխ Հայրենեաց՝ քաղցր, լուսաճենճեր,
Է հուր երկնային, ի մարմնի՝ անմեռ:

«ՖԵՈԴՈՐԱՅԻ» ԱՌԵՂԾՎԱԾԸ

1

Այս խորհրդավոր երկի ստեղծագործական ձեռագրերը չեն պահպանվել, ոչ էլ վերջնական տարբերակի ինքնագիրը, բայց մնացել է պատճենը, որը ժամանակին աչքի է անցկացրել Աբովյանը և տեղ-տեղ էլ, եթե նկատել, ապա օտարել է արտագրողի սխալները[1]*:*

Ինքնատիպ ձևավորում ունի անվանաթերթը.

ՖԵՈԴՈՐԱ
ԿԱՄ ՈՐԴԻԱԿԱՆ ՍԵՐԸ

Երգախաղ, մեկ անգամ տալու

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՊՈՎՅԱՆՑ

1841. Հուլիսի 11, Տփղիս

Ուրիշ դեպքերում Աբովյանն իր ձեռագրերի անվանաթերթերի վրա, սովորաբար, ինչ-որ ձևով նշում էր տվյալ երկի ինքնուրույն հղացում կամ թարգմանական լինելը: Այսպես օրինակ՝ ***«Ի Խ. Ապովեանէ...»*** *(«Վերք Հայաստանի»),* ***«Աչխատասիրեալ ի Խաչ. Ապովեանէ...»*** *(«Նախաշավիղ»),* ***«Ի Խաչ. Ապովեանէ, աչխատասիրեալ ըստ հեղինակութեան պարոն Վիլհելմի Տափփէի»*** *(«Նոր տեսական և գործնական*

---

[1] *Մ. Տեր-Ազարյանցը («Կռունկ հայոց աշխարհին», 1861, № 7, էջ 547) թվարկելով Աբովյանի աշխարհարար, անտիպ գրվածքները՝ վկայում է, որ «Ֆեոդորա» երգախաղն ունեցել է երկու ձեռագիր կամ տարբերակ. մեկը՝ «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուին կից, իսկ մյուսը՝ առանձին տետրակով: «Այս վերջին օրինակը առաջինի հետ չենք բաղդատել՝ իմանալու համար, կա՞ արանց մեջ զանազանություն, թե ո՛չ. բայց նյութը միևնույն է»—ավելացնում է նա: «Խաղալիքին» կից տարբերակը մեղ հասած բնագիրն է, որ արտագրված է ուրիշի կողմից, իսկ Աբովյանը վերանայել է (այժմ պահվում է՝ Ա № 56), իսկ մյուս ձեռագրի հետագա ճակատագիրը անհայտ է:*

քերականութիւն Ռուսաց վասն Հայոց»), «Շինեց ու սազացրեց Խաչատուր Աբովյան» («Պարապ վախտի խաղալիք»), «Ցառաջ ածեալ և հաւաքեալ ի ճշմարտախօս վկայութեանց ժամանակակից մատենագրաց ի Խաչ. Ապովեանէ» («Վիճակ ևկեղեցւոյն Հռոմայ ի Միջին դարս»[2]: «Ցետոդորայի» անվանաթերթի վրա, սակայն, այդօրինակ նշում չի արված, որ ևնթադրել է տալիս, թե Աբովյանն ինչ-որ բանից, այնուամենայնիվ, ղդուշացել է: Անկարևոր չէ և մի այլ պարագա՝ անվանաթերթին Աբովյանի ձեռքով չի կազմված, այլ՝ արտագրողի, և «Ագէլայիդայ ֆօն Վուլֆինգեն կամ Յիշատակարան բարբարոսութեան երեքտասանեորդ դարու» թարգմանական «եղերերգութեան» անվանաթերթի նման[3], «Ցետոդորայինն» ևս անանուն է եղել սկզբում, և արտագրողն է, թերևս, ավելացրել «Խաչատուր Ապովեանց» բառերը (հնարավոր անճշտությունները կանխելու համար ասենք, որ առաջին հրատարակության մեջ հեղինակի ազգանունը տպագրված է վրիպակով՝ **Աբովանց**, հակառակ բնագրի, բայց դա խմբագրողի սխալն է և 60-ական թթ. իրողություն): Բուն երգախաղի արտագրության ձեռագիրը հետագայում աչքի անցկացնելիս՝ Աբովյանն այդ հավելումը կամ չի նկատել, կամ էլ ընդհանուր ավելորդ է համարել:

Այսքանն իրրև նախապիտություն: Այժմ տեսնենք, թե ե՞րբ և ինչպե՞ս է հղացել «Ցետոդորայի» հայացման գաղափարը:

Անվանաթերթի վրա, բարեբախտաբար, պահպանվել է թվականը՝ «11 Հուլիսի 1841», որից ևննելով պիտի եզրակացնել, որ «Ցետոդորայի» աշխատանքները Աբովյանն ավարտել է հուլիսի 11-ին: Նկատի ունենալով «երգախաղի» փոքր ծավալը՝ անհավանական չէ ևնթադրել, որ այն Աբովյանից մի չաբաթից ավել ժամանակ չէր կարող խլել:

«Վերք Հայաստանի» վեպի վերջին գրվագներից մեկում Աբովյանը պատմում է, որ երբ Երևանի գրավման լուրը Հասնում է ռուսական բանակի հայ սպաներ Գևորգ Ամբատյանին և Կարապետ Երեւանցուն, վերջիններս այնքան են ոգևորվում, որ կորցնում են քուն ու հանգիստ և առանց պինվորական իշխանությունների գիտության, ծպտված, հայրենի վայրեր շտապում՝ հայրենակիցների հետ համագործային ուրախությունը կիսելու: Երևանի բերդում անսպասելիորեն հանդիպելով նրանց և չափազանց զղացված նմանօրինակ ազգասիրությունից՝ Ներսես Աշտարակեցին ասում է. «Դուք էն օրինակն եք

---

[2] *Բացատրություն է կազմում «Հայագրիչներն» պոեմի անվանաթերթը, որի վրա Աբովյանը միայն ստորագրել է. «Խաչ. Ապովեան» (տե՛ս Ա № 61):*

[3] *Տե՛ս Ա № 11:*

ցույց տվել, որ մեկ որդի Սիբիրից ոտով գնացել ա Մոսկով, որ իր Հորն ազատի»[4]*:*

Դժվար չէ նկատել, որ Ներսեսի բերանով Աբովյանը վերհիշում է ժամանակին լայն տարածում գտած զրույցը երիտասարդ սիբիրուհու մասին, որը ոտքով երկար ճանապարհ կտրելուց և դառը փորձությունների ենթարկվելուց հետո, ի վերջո, հասնում է ռուս միապետի դուռը, աքսորված Հորն ազատելու թույլտվություն ազերսում և ստանում:

Գ. Սմբատյանի և Կ. Երուսալեմսկու Հանդիպումը Ներսեսի հետ, 1827 թ. հոկտեմբերին, Երևանի բերդում, չատ հնարավոր է, որ վիպական հնարանք չէ և իրականում էլ տեղի է ունեցել, թեպետև համապատասխան վավերաթղթերով առայժմ անկարելի է հավաստել: Բայց որ վերոհիշյալ արտահայտությամբ Աբովյանն, իրենից անկախ, մատնել է հենց նույն չրջանում երիտասարդ սիբիրուհու կամ, ավելի ճիշտ, որդիական սիրո ամենահաղթ ուժը ներբողող այդ գրվածքով իր խանդավառված լինելը, վեր է ամեն կասկածից, մանավանդ որ և՛ «Վերքի» մեջ, և՛ «Ֆեոդորայում» որդիական սերը չարդում էր բնության չղթաները և աներևակայելի հրաշքներ գործում: Երկի գաղափարական բովանդակության այս կողմն էլ հարկադրել է Աբովյանին այն օժտել ենթավերնագրով՝ «Որդիական սերը», առնելով այդ արտահայտությունը երգախաղի Ութերորդ տեսարանից: Բայց այդ մասին հետո:

Երկու հնարավոր եզրակացություն կարելի է անել այս ամենից. կամ 1841 թ. հուլիսին «Վերքի» համապատասխան էջերը նոր էին գրվում, և Աբովյանն, անուղղակիորեն, մինչ այդ ավարտած կամ հայացրած գրվածքի բովանդակությունն էր հաղորդում իր ապագա ընթերցողներին, կամ «Վերքի» ստեղծագործմանը զուգընթաց, ուշադրություն դարձնելով երիտասարդ սիբիրուհու զրույցի

---

[4] *Ե III, 182: Իրողությունն այս է. 1804 թ. մի անփորձ աղջիկ՝ Պրասկովյա Գրիգորևնա Լուպանովա, Սիբիրից գալիս է մինչև Պետերբուրգ, ուր կարողանում է տեսնել միապետին, նրա ոտքերն ընկնել և աղաչանքյուն խնդրել ու ազատել տալ իր աքսորված Հորը և նրա երկու ընկերներին: Ինքն էլ նպատակին հասնելուց հետո, վախճանվում է ինչ-որ վանքում (տե՛ս* В. Г. Белинский, Полное собрание сочинений, т. IV, М., 1954, с. *625): Այս պատմության դրական առաջին արձագանքներն են Մարի Սոֆի Ռիստո Կոտենի (1770–1807) «Եղիսաբեթ Լ. կամ Սիբիր աքսորվածները» վեպը և Բռավիլի դը Մեսորի (1763–1852) «Երիտասարդ սիբիրուհին» վիպակը (ըստ առաջինի՝ Եղիսաբեթը Պետերբուրգ է ուղևորվում 1801 թ. մայիսին): Երկուսն էլ, իրրև մանկական ընթերցանության նյութ, չատ էին տարածված Ֆրանսիայում:*

եվրոպական մշակումներից մեկի վրա[5], Աբովյանը նախ՝ դրան յուրովի ուրճագանքում էր վեպի վերոհիշյալ դրվագով, իսկ ապա, վեպն ավարտելուց հետո, անհապաղ ձեռնարկում նրա հայացմանը:

Բոլոր դեպքերում՝ «Վերքի» վրա իր հիմնական աշխատանքները 1841 թ. հուլիս ամսին Աբովյանն ավարտել էր և դրանից անմիջապես հետո (կամ վերջին էջերին դուզընթաց) մի կարճ ժամանակ էլ իրեն նվիրել է, ի շարս այլ փոքրածավալ երկերի, նաև «Ծեռդուրայի» հայացմանը:

2

«Ծեռդուրայի» հեղինակային պատկանելության խնդիրը հներին, գոնե մինչև ներկա դարու սկզբները, չի հուզել ամենևին: Միայն այն, որ հիշյալ թատերգությունը տպագրվել է «Պարապ վախտի խաղալիքի» կազմում, հիմք է ծառայել, որ այդ գործն անառարկելիորեն դասվի Աբովյանի ինքնուրույն ստեղծագործությունների շարքը: Մանավանդ որ հօդուտ դրա է, կարծես, խոսում նաև «Ծեռդուրային» Աբովյանի կցած բացատրականը («Էս խաղի միտքը»): Մենք ընդունք ամբողջությամբ.

«Շատ մարդ կըլի լսած, — գրում է Աբովյանը, — որ Աղեքսանդր կայսեր ժամանակին, երբ Ռուսաց Ցարանցուցին չարչիցին, ու էնքան մեծ ողորմություն դուրս էկավ ամեն մարդի համար, մեկ չահիլ ազջիկ՝ Սիբիրուցը փախած՝ էկավ Մոսկով. քանի ժամանակից հետ կայսերը պատահեցավ, ոաններն ընկավ ու հորը ազատիլ տալ ուից: Էս խաղը նրա վերջին օրերի պատմությունն ա ցույց տալիս, թե ինչպե՞ս

---

5 Ի դեպ, Մինաս Բժշկյանցի «Վարժութիւն մանկանց ի պէտս յուսաստիչեան մայր դպրատան Ղարսոյ քաղաքի» ընթերցարանում (Վենետիկ, 1824). չորրորդ հարյուր էջի վրա (157–252), վերապատմված է Ֆրանսիայի գրպիտուհի Մարի Կոտանի «Աքսորականք ի Սիպերիա» վեպի բովանդակությունը՝ «Հայրասիրութիւն եղիսաբեթին» խորագրով և առանց հեղինակի անվան (տե՛ս Հ. Դավթյան, Հայ գիրքը 1801–1850 թվականներին, էջ 115): Աբովյանը կարող էր ծանոթ լինել այդ վեպի եթե ո՛չ ֆրանսերեն բնագրին, ապա հայերեն թարգմանությանը: Մ. Կոտանի երկի գլխավոր հերոսներն են Սահնիպալ Պոտոցկին, որը հանդես է գալիս Պետրոս Սփինճեր անունով, նրա կինը՝ Ֆեոդորան, դուստրը՝ Եղիսաբեթը, Տոլոչկի կատավարիչը (անանուն), որը որպէ Սմոլոֆը, որ հետո ամուսնանում է Եղիսաբեթի հետ, մի քրոնավոր են: Առաքինության և ատելածապաշտության, չերմեռանդության և պարկեշտության զգացումներ արթնացնել մանկան մեջ, ահա՛ հայացնողի հոգացման առարկան, նաև՝ Մ. Կոտանի նպատակը:

պայծառը պատահեցավ: — Հույս ունիմ, որ ամեն մարդ հնդուր համար ավելի հավեսով կարդա, չունքի մեկ պժար բառ չկա միջումը, բոլոր աչխարհաբառ ա: Մախսուս էս լեզվովը գրեցի, որ գեղըցիք էլ հասկանան, քաղաքացիք էլ: Միթե գեղըցին մարդ չի՞, չի՞ ուզիլ, որ մեկ նոր բան էլ նա լսի կամ կարդա: Էլի խոսողը թո՛ղ խոսի»[6]*:*

Հատկապես «Մախսուս էս լեզվովը գրեցի» բառերը մեջտեղից վերացնում են կասկածի ամեն հիմք, թեպետև ***«գրեցին»*** *չի նշանակում սոսկ «ստեղծագործեցի», այլև՝ փոխադրեցի, հայացրի:*

Հայ գրականագետներից առաջինը Ա. Զոպանյանն է, որը ավանդական տեսակետը վիճարկման չենթարկելով և «Ֆեոդորայի» ինքնուրույն երկասիրություն լինելն ընդունելով հանդերձ, դեռևս 1906-ին, մատնացույց է արել նրա ազերսակցությունը օտար հեղինակությունների հետ. «Նյութը՝ ռուսական կյանքն առնված և, հավանականաբար, նմանության տիկին Քոթենի «Աքսորականք ի Սիպերիա» վեպին: Ապա ղդուշանալով, որ ասածը հակասական մեկնություններ տեղիք կարող է տալ թերևս, ավելացրել է. «Աբովյանի միակ թատերական փորձն է... լավ ղարձված մելոդրամ մըն է, ժողովրդական անուշ լեզվով մը գրված, և հայ թատերագրության նախափորձներուն մեջ արժանի է որոշ տեղ մը բռնելու»[7]*:*

Շատ չանցած՝ «Ֆեոդորայի» մեկ այլ, օտար զուգահեռ էլ երևան բերեց Վրթանես Փափազյանը գրելով. «Նյութը հիշեցնում է Բսավիե դը Մևտրի «Երիտասարդ Սիբիրուհին» վեպը: Հեղինակը, ինչպես ինքն էլ ասում է, լսել է Ալեքսանդր կայսեր ժամանակվա այն դեպքը և «անկախորեն և բավական հաջողությամբ չինել է թատերգություն»[8]*:*

*Թե որքանով էին իրավացի Զոպանյանն ու Փափազյանը, հետո կտեսնենք, բայց նրանցից մի քանի տարի հետո, իբրև անառարկելի իրողություն, մեկ այլ բանասեր գրում էր, որ «Ֆեոդորան» **«ռուսական պիես»** էր, և Աբովյանն այն «**թարգմանել** էր երևանյան բարբառով»*[9]*:*

---

[6] *Ե IV, 241. «Պարապ վախտի խաղալիք», Տփղիս, 1864, էջ 109:*

[7] *Ա. Զոպանյան, Դեմքեր, հ. II, Փարիզ, 1929, էջ 67 — 68: — Մ. Կոտտենի վեպի համեմատությամբ՝ Աբովյանի «Ֆեոդորան» ճիշտ որ ինքնուրույն գրվածք պիտի դիտվեր, և Զոպանյանն այդ առումով իրավացի էր:*

[8] *Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, նոր շրջան, Բ տպ., Պոլիս, 1934, էջ 99—100:*

[9] *«Հայկարամ Ադայանը ժամանակակիցների հուշերում», Ե., 1967, էջ 176: Այ. Խալանթարի «Գրական գործի ընտավորությունը» հոդվածը, նախապես տպագրված՝ «Մշակ», 1911, № № 134—136:*

Դժբախտաբար, «Ֆեոդորայի» օտար բնադրի (նախօրինակի) որոնումներն առաջ տանելու փոխարեն, արդի բանասերները որդեգրեցին այդ երկի գնահատման ավանդական չափանիշները: «Ֆեոդորան» կրկին հռչակվեց «միանդամայն ինքնուրույն գրվածք»՝ կառուցված «շրջիկ թեմայի վրա»[10], որի առաջին մշակողներն արդեն մատնանշված՝ ֆրանսիացի բարոյախոս-գրողներ Մարի Սոֆի Ռիստո Կոտաենը և Բասվիլ դը Մեսարն էին՝ առաջինը իր «Էլիզաբեթ կամ Սիբիրիայի աքսորյալները» (1806) վեպով և երկրորդը՝ «Երիտասարդ Սիբիրուհին» (1815) նորավեպով[11]: Նրօրյա հետազոտողներն, իհարկե, իրենց են վերագրում «Ֆեոդորայի» եվրոպական զուգահեռների հայտնագործման պատիվը՝ պժիամութեամբ տալով Փափազյանի անունը միայն, իսկ Զոպանյանին էլ ամենևին չհիշելով, որովհետև հանդիպել են հիշյալ վեպիկների հայ թարգմանութեյուններին «Բազմավեպի» էջերում, 1862 և 1873 — 1874 թվականներին, որ, դուցե թե, ավելի անտեղյակութեյան հետևանք է:

Եթե բանն այսքանով վերջանար, կլիներ հրաշալի: Բայց, տարաբախտաբար, եղան մարդիկ էլ, որոնք եվրոպական ազերսակցութեյունը համարեցին մահացու մեղք և հայ գրողների համապատասխան գործերի համար, անկախ իրերի դրութեյունից և նրանց ապրած ու գործած միջավայրից, սկսեցին «հայտնագործել» հյուսիսային ազդակներ, հերյուրել անպայմանորեն ուժ հեղափոխական-դեմոկրատների ու խոշորագույն գաղափարների մոտ վարպետութեյան դպրոց անցած լինելու «վկայաթղթեր»: Աբովյանը չէր կարող բացառութեյուն կազմել, թեպետև իր կրթութեյունն ստացել էր մայրենի ու գերման լեզուներով և գրական ուսուցիչ ու առաջնորդ ունեցել հիմնականում հայ պատմագիրներին, ուշ միջնադարի հայ տաղերգուներին, ապա եվրոպական գրողներից հատկապես Շիլլերին, ռուսներից էլ՝ Մ. Լոմոնոսովին, Վ. Ա. Ժուկովսկուն, Ն. Մ. Կարամզինին ու Ի. Ա. Կռիլովին, որոնք, սակայն, հեղափոխական-դեմոկրատներ չէին: Զբավարարվելով եղածով՝ սկսեցին որոնել «Ֆեոդորայի» համար ևս ռուսական զուգահեռներ ու սկզբնաղբյուրներ՝ ոտնահարելով, հաճախ, գրականագիտութեյան ամենատարրական կանոնները, և չատ-չատով գտան փնտրածը: Ահա՛ թե ինչեր ասացին.

«Ֆեոդորան» փոխառված այսժեով, սակայն միանդամայն ինքնուրույն մշակմամբ, սոցիալական դրամա է, որ առաջ է քաշում հումանիստական գաղափարներ և, հակառակ կղերա-նացիոնալիս-

---

10 Ե IV, *324 (Հ. Մուրադյանի ծանոթագրութեյունը):*

11 Ի. Աբովյան, *Ընտիր երկեր*, հ. I, Ե., *1939*, էջ *343*: Ե IV, *324*:

տալական կերպարների, պատկերում է անարդարացի կերպով Սիբիր աքսորված հորը փրկելու համար Ֆեոդորայի ցույց տված անձնվիրությունն ու տանջանքները: Թեմատիկայով և կերպարների ստեղծման մեթոդով, հումանիստական գաղափարներով՝ Աբովյանի պիեսը արձագանքում էր ժամանակի ուռւս գեղարվեստական գրականության պրոգրեսիվ ավանդներին», — գրել է պրոֆ. Գ. Աբովը[12]:

Առաջին հայացքից միանգամայն բանական այս մտքերին հարգարժան պրոֆեսորը կցում է նոր և ընդարձակ պարզաբանումներ, որոնք վատարյալ «Հեղաշրջում» են առաջ բերում աբովյանագիտության մեջ և գլխովին մերժում «Ֆեոդորայի» առնչությունները ֆրանսիական գրականության հետ. «Մինչև այժմ էլ խոսելով «Ֆեոդորա» պիեսի մասին, մեր գրականության պատմաբանները չարունակ պնդել են, թե Աբովյանն իր պիեսը գրել է հետևելով ֆրանսիացի երկրորդական գրողներ Կոտտինին և Քսավեյին, որոնք նույն այժժով արձակ գրվածքներ ունեն: Մինչդեռ իմ որոնումները պարզեցին, որ Աբովյանը «Ֆեոդորան» գրելիս նկատի է ունեցել իրեն ժամանակակից Պոլևոյի «Պարաշա» պիեսը: Հայտնի է Բելինսկու գնահատականը Պոլևոյի «Պարաշայի» մասին, որ լույս է տեսել 1840 թվականին: Աբովյանը ծանոթ է եղել թե՛ «Պարաշային» և թե՛ Բելինսկու գնահատականին: — «Ֆեոդորայի» ու «Պարաշայի» համեմատությունից պարզվեց, որ Աբովյանը միանգամայն վերափոխել է Պոլևոյի պիեսը ոչ միայն գործող անձանց անուններով, այլև այժժի հիմնական մասերով. նա պիեսից դուրս է վտարել ցարի նկատմամբ եղած սիրո ու նվիրվածության մի շարք մոմենտները [sic!], կենցաղագրական մի շարք տարրերը, փոխել է գործող անձանց սոցիալական պատկանելությունն ու հոգեբանությունը, ուշադրությունը կենտրոնացնելով հումանիստական ու քաղաքական սուր մոմենտների վրա, ավարտելով իր պիեսն այն եզրակացությամբ, որ հայրական ու որդիական սերն ավելի ուժեղ է, քան աշխարհի տիրակալները, իշխաններն ու ցարերը»[13]:

Որովհետև գիտությունը չի կարող միևնույն տեղում դոփել և անպայմանորեն պիտի զարգանա, զարգացվեց ու ավելի դունագարգվեց վերոհիշյալ դրույթն ևս:

Ս. Բազյանն, օրինակ, իբրև «հանրահայտ իրողություն», գրում էր, թե Աբովյանը 1834 — 35 թթ. «մի քանի ամիս Պետերբուրգում ապրելով՝ լրջորեն հետաքրքրվել է 1812 թ. Հայրենական պատերազմի

---

12 Գ. Աբով, Գարրիել Սունդուկյան, Ե., 1953, էջ 22–23:

13 Նույն տեղում, էջ 23:

պատմությամբ», «հաղորդակցվել դեկաբրիստների դաղափարներին», «որոնց արդյունքը պիտի համարել «Թեոդորա կամ որպիական սերը» դրամայում նրա ստեղծած դրական հերոսի՝ Հայրենական պատերազմի մասնակից ռուս զինվորի կերպարը»[14]:

Ճափազանցություն էլ չպիտի ունենա, և ամենատևեռնեթ վարկածն անգամ՝ հավանականության դեթ մի նշույլ, բայց այս տողերի հեղինակի համար դրանք անարժեք բաներ են, հետևաբար և՝ հարկադրված ենք հիշեցնել միայն, որ «Թեոդորայում» Հայրենական պատերազմի մասնակից ռուս զինվորի կերպար առհասարակ չկա: Էլ չենք ասում, որ հիշյալ թատերդության «զինվորներից» մեկը գեներալ է և աքսորվել է Հայրենական պատերազմից 14 տարի առաջ[15], 18-րդ դարի վերջերին կամ 19-ի սկզբին, իսկ մյուսը մայոր է, ապրում է ապահովության մեջ և ապատում է իր կյանքի ապագա ընկերուհու անակնկալ հայտնվելուն:

Գրականագետ Ս. Արեշյանն էլ ավելի առաջ անցնելով՝ այս թատերդության հիման վրա Աբովյանին դարձրել է ռուսական դրական առօրյայում գործած «նատուրալնայա շկոլայի» հետևորդ: «Աբովյանն առաջիններից մեկն էր, — գրել է նա, — որ դիմել է նատուրալ դպրոցին և, ակնհայտ է, որ քիչ բան չի վերցրել հիշյալ աղբյուրից՝ ազդեցությամբ դրական վարպետության: Պատահական չէ, որ հայ դրականության մեջ Աբովյանն առաջինն է կերտել ռուս մարդկանց դրական կերպարներ և գրել ռուսաց կյանքից առնված «Թեոդորա կամ որպիական սերը» դրաման»[16]:

Սույն «Հայոնագործության» հեղինակներից մանավորապես պրոֆ. Գ. Աբովը ունեցավ նաև իր երախտամոռ հետևորդները, որոնցից մեկը՝ մինչև վերջին թելը կողոպտելով նրան, ինքնապատվաստելու համար ինչ-որ բաներ սրբագրելուց, «գյուտն» ամբողջությամբ իրեն վերագրելուց հետո, իբրև թե բանին անտեղյակ նորից-նոր հայտարարեց. «Փաստորեն, «Թեոդորան» հանդիսանում է անցյալ դարի 40-ական թվերի սկզբին աշխարհաբարով գրված առաջին ինքնուրույն դրաման... Աբովյանի պիեսը համարյա ընդհանուր ոչինչ չունի Ֆրանսիացի հեղինակների գրվածքների հետ, բացի պատմվածքի չոր կմախքից... Աբովյանը ինքնուրույն կերպով մշակել և դրամատիկական ձևի է վերածել իր ժամանակին հետաստանում

---

14 *Տե՛ս* С. Базян, Х. Абовян и его роман «Раны Армении» *(Առաջարան «Վերքի», 1955 թ. ռուսերեն հրատարակության, էջ* VIII*):*

15 *Ն* IV, *256:*

16 С. Г. Арешян, Армянская печать и царская цензура, Е., 1957, стр. 248.

չատ տարածված երիտասարդ սիբիրուհու պատմվածքը» և այլն: Իսկ հետո անդրադառնալով Պոլևոյի «Պարաշա Սիբիրյաչկա» դրամային ու նրա մասին Բելինսկու գրած թատերախոսականին՝ Պոլևոյի դրամայի, ֆրանսիացի հեղինակների գործերի և «Ֆեոդորայի» մի քանի մակերեսային զուգահեռներ անցկացնելուց, ինչպես և Բելինսկուց որոշ քաղվածքներ անելուց հետո, «խիստ հավանական» է համարում, որ Աբովյանը «ծանոթ է եղել Պոլևոյի պիեսին», որ «Ֆեոդորայի» «հղացումը և գրելու մղումը» նա «ստացել է ռուս թատրոնում այդ ժամանակ մեծ հաջողություն գտած «Պարաշա Սիբիրյաչկա» դրամայից», որ «Ֆեոդորայի» երևան գալը «բացատրվում է» «ռուսական առաջավոր մտքի ազդեցությամբ», և այն «պատկանում է ռոմանտիկական ուղղության՝ կրելով իր վրա նախառոմանտիկական շրջանի սենտիմենտալիզմի դրոշմը»[17]*:*

3

Բայց ո՞րն էր Բելինսկու հավատամքը Ն. Ա. Պոլևոյի «Պարաշա Սիբիրյաչկան» Ալեքսանդրյան թատրոնում բեմադրելու առիթով գրած թատերախոսականի շրջանում (տպագրվել է 1840 թ. փետրվարի 3-ին, «Լիտերատուրնայա գազետայում», № 10, վ. Բ. ստորագրությամբ), քանի որ այդ գրվածքը ո՛չ որևէ ինքնատիպ եզրահանգում կամ դրույթ է պարունակում, ո՛չ էլ քննադատի քիչ թե շատ աչքի ընկնող աշխատություններից է:

Այս թատերախոսականից երկու-երեք տասնօրյակ առաջ ռուս գրականության իսկապես առաջնակարգ մեկ այլ գրվածքի՝ Գրիբոյեդովի «Խելքից պատուհասին» անդրադառնալիս, Բելինսկին ազդարարում էր, որ այն «գեղարվեստական հորինվածք չէ», որ նրա գլխավոր հերոսը՝ Չացկին, «ճղճղան է, ճամարտակող և իդեալական ծաղրա-

---

[17] Վ. Թերզիբաշյան, *Հայ դրամատուրգիայի պատմություն (1668–1868), Ե., 1959, էջ 282–288: Եվ այս գրքի հեղինակը, և՛ նրա նախորդը (պրոֆեսոր Գ. Աբովը) Պոլևոյի թատերգության էության մեջ խորամուխ չեն եղել, այնինչ քննադատությունը վաղուց նշել է, որ այն գրված է «պետական պաշտոնական գաղափարախոսության ոգով», և Բելինսկին Պոլևոյի «Պարաշա Սիբիրյաչկայի» հաջողությունը «վերագրել է գլխավորապես գերատեսչների լավ խոպին» (տե՛ս* В. Г. Белинский, Полное собрание сочинений, т. IV, стр. 607*): Վերջապես՝ անծանոթ չէ նաև Բելինսկու անձրոց կարծիքը. «Այս անատուն Պոլևոյը «Պարաշկանների»... հիացնում է ողջ հասարակությանը»* (В. Г. Белинский. Собрание сочинений в 9-ти томах. т. 3, М., 1978, с. 570)*:*

ձու»: Փոքր-ինչ ավելի ուշ, 1840 թ. մարտին տպագրված «Մանկական դրքերի մասին» մատենախոսականում, Բելինսկին գարգադնում էր մտքեր, որոնք բխում էին նույն այդ ժամանակ նրա քարոզած «իրականության հետ հաշտվելու» տեսությունից, իրողություն, որ շարժում է Գոգոլենի (1840, ապրիլի 6) և ժամանակի ուրիշ առաջադեմ մտածողների արդար զայրույթը: Ճիշտ է, Բելինսկին դրում էր, թե «Արվեստը ճշմարտության արտահայտություն է, և միմիայն իրականությունն է մնծագույն ճշմարտությունը», բայց իրականությունն ասելով հասկանում էր միապետական Ռուսիան և ինքնակալական կարգերը:

Ինչպես ռուս գրականության պատմաբանները և Բելինսկու կյանքի ու ստեղծագործության հետազոտողներն են անկեղծորեն խոստովանում՝ 1837, 1838, 1839, անգամ 1840 թ. առաջին կեսի իր հոդվածներում Բելինսկին «տեսականորեն հաշտվում էր ինքնակալության հետ», «արդարացնում էր ինքնակալությանը», «կռիվ էր հայտարարել ֆրանսիական ռացիոնալիզմի, մատերիալիզմի և ամիիզմի դեմ», «քաղաքացիական ազատություն» ասելով հասկանում էր սոսկ «ժողովուրդ կազմող անհատներից յուրաքանչյուրի ներքին ազատությունը», որը ձեռք պիտի բերվեր բանականության միջոցով: Բելինսկին «անտեսում էր բացատրման գաղափարն իբրև պատմական օրենք», արվեստագետներին հորդորում էր «չխառնվել քաղաքական և պետական գործերի մեջ»: Նա ճիշտ չէր գնահատում նաև համաշխարհային գրականության առանձին երևույթներ. հարձակումներ էր գործում Շիլլերի դեմ՝ վերջինիս ողբերգությունները որակելով «պարզապես անբարոյականացնող» երկեր:

Կարճ՝ Բելինսկու դիրքորոշումն այդ շրջանում «բանական իրականության հետ հաշտվելն էր»: Ինչպես Գերցենն է ցավով նկատել, Ռուսիայի ամենաանհանգիստ միաքը քարոզում էր «հնդկական հայեցողական անդորը և պայքարի փոխարեն տեսական հետազոտությունների կոչում»:

Բելինսկու գաղափարական նոր որոնումների ու հայացքների բնկման սաբիները եղան 1840 — 41 թթ., երբ նա ներքին ծանր ու ջղաձիգ պայքարից հետո, ի վերջո, անցում կատարեց դեպի հեղափոխական դեմոկրատիզմ: Սկզբում դրա ցոլքերը նշմարվեցին մատերիմներին գրած նամակներում, իսկ 1841-ի սկզբներից արդեն՝ գրական-հրապարակախոսական երկերում, ինչպիսիք են Մ. Լերմոնտովի բանաս-

տեղծությունների (1841, փետրվար) և Գոգոլի «Մեռյալ հոգիների» (1842) բազմակողմանի ու խոր վերլուծությունները և այլն[18]:

Այդ մոլորությունների համար այսօր ոչ ոք չի դատապարտում Բելինսկուն, քանի որ բուն ռուսական իրականությունն այն տարիներին կյանքի և արվեստի երևույթներն ավելի սթափ նժարելու հող ու հնարավորություններ չէր ընձեռում: Առավել ևս նույն այդ շրջանի հայ իրականությունը, որն ավելի ողբալի էր, էլ չենք ասում, որ Բելինսկու քարոզած բանական իրականության և միասնական կարգերի հետ հաշտվելն էլ որևէ չափով չէր կարող բարձրացնել հայերին և ցարիզմի դեմ պայքարի հանել, ինչպես միամտություն ունեն կարծելու և գրելու որոշ պատմաբաններ՝ ամեն ինչ, ըստ այդմ, գլխիվայր չուռ տալով: Այս բանը, դժբախտաբար, անտեսում են նաև որոշ գրականագետներ, երբ դատողություններ են անում Բելինսկու դաղափարական ազդեցության մասին 30-ական թթ. և 40-ականի սկզբի հայ գրողների և, մասնավորապես, Աբովյանի վրա:

Աբովյանն ևս, ինչպես Բելինսկին, ունեցել է իր մոլորությունները, նա էլ ռուս միասնության՝ հայոց հանդեպ ունեցած բարի դիտավորությունների վերաբերյալ ոսկի երազներ է հյուսել, միայն թե ո՛չ Բելինսկու ազդեցությամբ, այլ 1828 — 1830-ական թվականների հայ իրականության և հայոց պատմության մեջ, ռուսների ձեռքով Արևելյան Հայաստանը պարսկա-թուրքական բռնապետություններից ազատագրելու չնորհիվ առաջ եկած նոր տեղաշարժերի թելադրանքով:

Բելինսկու չրջադարձն, ասացինք, ակներև դարձավ 1841 — 42 թթ. հրատարակած հոդվածներում, այնինչ մինչև 1841 թ. փետրվար-մարտը Աբովյանի գլխավոր ստեղծագործությունները՝ «Նախաչավիղն» ու «Վերքը», գրված էին արդեն, հետևաբար և աննպատակ է Բելինսկու դաղափարական ազդեցության արձագանքները որոնել նաև դրանց մեջ: Ինքնըստինքյան ավելորդ է, վերջապես, «Ճեռքորան» Բելինսկու ազդեցության հետ կապելը, քանի որ. ինչպես ստորև կտեսնենք, նա այլ դաչտերի տունկ է՝ հայ իրականությունն փոխադրված:

Աբովյանն իր դրական ուսումնառությունն անցել և վարպետության դասեր էր քաղել համաչխարհային, գլխավորաբար գերման

---

[18] *Այս ամենի մասին մանրամասնություններ տե՛ս* «История русской литературы», т. VII, М-Л., *1955*, с. *42–48:* Ю. Оксман, Летопись жизни и творчества В. Г. Белинского, *Մոսկվա, 1958 (համապատասխան տարիների ժամանակագրություններ): Այս հեղինակավոր աշխատություններից են առնված և վերևում մեր բերած փաստարկները, որոնք ավելորդ համարեցինք սկզբնաղբյուրներով կրկին հաստատել:*

քերթողներից, իսկ սրանցից էլ մասնավորապես Շիլլերից, այնինչ Բելինսկու համար Շիլլերը, դոնն մինչև 1840-ը, անբարոյականացնող հեղինակ էր:

4

Կարելի է վերհիշել խիստ զվարճալի, բայց և գավառապիտուկի լրջությունը մինչև վերջ պահած ուրիշ չարադրություններ էլ «Ֆեոդորայի» ծագման ու գաղափարական բովանդակության մասին, որոնց հավատացողներ ու թմբկահարողներ կան, բայց ավելի լավ է չչահագործենք ընթերցողի համբերությունը, քաղվածքները մի կողմ թողնենք և, օտարներին մեր դիտական խնդությունը հաստատող նոր ապացույցներ չտալու համար, անկեղծորեն խոստովանենք ճշմարտությունը, որքան էլ այն ահաճ լինի:

«Ֆեոդորան» մեծապետչին հարապատությամբ գերմաներենից հայերեն թարգմանված երկ է: Նրա իրական հեղինակն է գերմանացի ո՛չ անհայտ թատերգու և դործիչ Աուգուստ Կոցեբուե (1761 – 1819), որին հաջիվ թե ծանոթ լինելին Բելինսկին և Պոլևոյը, որովհետև Ա. Կոցեբուե սպանվել է 1819-ին, մինչդեռ վ. Գ. Բելինսկին ծնվել է 1811-ին և ապրում էր Չեմբարուեմ: Նման պարագաներում՝ Ն. Ա. Պոլևոյն (1796 – 1846) ինքը կարող էր ազդվել Կոցեբուից: Իսկ ինչ վերաբերում է Աբռյանին, ապա հայտնի է, որ վերջինս դնալ-դալ ուներ Կոցեբուի որդիների հետ (Պավել և Ծրիստրիխ), որոնք դինվորական և քաղաքացիական բարձր պաշտոններ էին գրավում Անդրկովկասում: Այնպես որ այս պարագան ևս կարող էր որոշ դեր խաղալ Կոցեբուի գրվածքը հայացնելու դործում: Դուցե, նրա որդինե՞րն էին խնդրել...

Ա. Կոցեբուի թատերգությունը, որքան հայտնի է, առաջին անդամ հրատարակվել է 1812 թ., Լայպցիգում[19]*: Շատ չանցած՝ նրա համար երաժշտություն են գրել գերման երգահաններ Յոհան Փիլիպ Շմիդը (1812 և 1816)*[20] *և Կոնրադ Կրոյցերը (1816): Ուրիշներն էլ հյուսել են*

19 «Almanach dramatischer Spiele zur geselligen Unterhaltung auf dem Lande», B. X, Leipzig, I, 1812. *Երկրորդ հրատարակությունը՝* «Feodore. Russische National-Singspiel», 1813 *(առանց տպագրության վայրի):*

20 «Arien und Gesänge aus Feodore». Musik. Johann Philipp Schmidt. Berlin, 1812, *13 էջ: Այլ տպագրություն՝* Frankfurt a. M., 1816. *12 էջ:*

մեներգեր հիմք ունենալով կոցեբուի երգախաղի առանձին հատվածներ, և ավելի ճոխացրել այն[21]*:*

Կարճ՝ Աբովյանը ոչ թե «Ֆեոդորայի» հեղինակն է ու, կամ էլ, ինքնուրույն երկ հորինելիս՝ Բելինսկուց կամ Պոլևոյից ապդակներ ստացած մեկը, այլ թարգմանիչն է XIX դ. առաջին տասնամյակներին գրված ու հրատարակված դերմաններեն մի թատերգության, որի բնագիրն էլ այսօր ծանոթ է մեզ, հեղինակն էլ, ու նաև՝ քերթողի գրական դավանանքն ու գաղափարական դիրքորոշումը:

Ահա՛ «Ֆեոդորայի» դերմաններեն բնօրինակի խորագիրը, գործող անձանց անունները և առաջին տեսարանը (Մարիայի երգը)՝ ըստ մեզ մատչելի հրատարակության.

FEODORE

Ein Singspiel in einem Aufzuge.

(Den Stoff hat eine wahre Begebenheit geliefert).

Personen

Der Kaiser.
Major Willikoff, ein reicher Gutsbesitzer
Marie, seine Schwester
Iwan Petrowitsch, ihr Oheim
Feodore.

(Der Schauplatz ist ein Zimmer auf dem Landgute der Majors, an der Strasse zwischen Moskau und Petersburg).

Erster Scene

Marie (allein)

Der Frühling ist erschienen.
Die jungen Birken grünen.

---

[21] *Մանրամասնությունները տե՛ս* K. Goedeke, Grundrisz zur Geschichte der deutschen Dichtung ans den Quellen, B. V, Abteil. II, Dresden, 1893, *էջ 285: § 180: Նույնի երկրորդ, վերամշակված հրատարակությունը Հերբերտ Յակոբի աշխատասիրությամբ՝ հ. XV, Բեռլին, 1964, էջ 247, § 180:*

Veilchen hauchen Duft;
Es bringen laue Weste
Gesiederte, singende Cäste,
Die Schwalbe zwitschert im Neste
Und der Guckguck ruft.

Mit kindlichem Gemüthe
Seh'ich in jeder Blüthe
Eines Gottes Spur;
Wo sich die Würmchen regen,
Wo sich die Sonnen bewegen,
Da prangest Du mir entgegen,
Tempel der Natur![22].

Աբովյանի վարպետ գրչի տակ Կոցեբուի գործի խորագիրն ու առաջին հանգավոր տողերը հնչում են այսպես.

ՖԵՈԴՈՐԱ կամ ՈՐԴԻԱԿԱՆ ՍԵՐԸ

Երգախաղ մեկ անգամ տալու

Խաղացող անձինք

Կայսրը
Մայոր Վելիկով, հարուստ պետատեր
Մարիա, նրա քիրը
Իվան Պետրովիչ, նրանց հորաքույրը
Ֆեոդորա, մեկ ջահել աղջիկ

Խաղալու տեղը մեկ օթյախ է, մայորի պետությը, փուշտի ճամփի վրա, Մոսկովու ու Պետրուբրգի միջումը:

---

[22] «Theater von Kotzebue», *մասն 47, Պրագա, 1822, էջ 65–67: Ի դեպ, գործող անձանց այսօրինակ կազմ ու անուններ պատահում են նաև Ա. Կոցեբուի՝ ռուսական կյանքից առնված մեկ այլ թատերգության՝ «Հոր վերադարձը» նախերգի մեջ: Այստեղ էլ բնիմ են բարձրանում Մայորը, Մարիան, Ֆեոդորան, Իվան Պետրովը են (տե՛ս* «Neue Schauspiele von August von Kotzebue», Leipzig, 1801, S. 525–573: «Die Zurückkehr des Vaters. Ein Vorspiel»).

Առաջին տեսարան

Մարիա (միայն երգե)

Բացվել ա գարունքն, սար ու ձոր ծաղկել,
Մանիշակի հոտն ամեն տեղ բռնել.
Հովն արևմտյան իր քաղցր թևով,
Ղոնաղ է բերում ղշերն՝ երգելով:

Ծիծեռնակն էկել՝ չինում ա իր բունն,
Հոպոպն բաղերի վրա նստում անքուն.
Ա՛խ, ինչպե՛ս, ինչպե՛ս, ինչպե՛ս քաղցր ա օրն,
Ինչպե՛ս մարդի սիրտն չսիրի էս օրն:

Ինչպես երեխա՝ սիրտս բացվում ա,
Երբ տեսնում եմ ես՝ ամեն ծաղկի վրա
Աստուծո խնամքը, նրա սուրբ սերը:
Բոլոր կենդանիք չարժում թևերը,

Արեգակն իր տեղը չարժում, մեր մտնում,
Աստղերն իմ գլխիս իրանց լիսը թափում,
Քո տաճարն, քո տաճարն բացվում առաջիս,
Ո՛վ սուրբ քնություն, որ տվիր էս հոգիս[23]*:*

Եթե ամբողջ գիրքը համեմատենք գերմաներեն բնագրի, ներկա դեպքում՝ մեր տրամադրության տակ եղած՝ Պրագայի 1822 թ. հրատարակության հետ, կտեսնենք, որ Ա. Կոցեբուի «երգախաղը» հայերեն է թարգմանված ամենայն հարազատությամբ և մնծագույն ճշդրտությամբ: Պահպանված են բոլոր չափածո հատվածները կամ երգերը, գործող անձանց, տեսիլների ու տրամախոսությունների քանակը, հեղինակային նշումներն ու ընդգծված մասերը: Միայն անհրաժեշտության դեպքում, թերևս, նաև հանգի թելադրանքով, բնագրի առանձին արտահայտություններ ու բառեր փոխարինված են հայերեն համարժեքներով: Տարբական պատճենումից խուսափելու համար, օրինակ, «Die jungen Birken grunen=մատղաշ կնճիները կանաչել են» հյուսիսային բնապատկեր ակնարկող արտահայտության փոխարեն գտնում ենք «Սար ու ձոր ծաղկել» միանգամայն հայկական

---

[23] *Ե* IV, *241–242:*

համարժեքը: Կարճ՝ դուք ունենք ո՛չ թե բառացի, տարիական, այլ համարժեք թարգմանության հետ: Արովյանը նախանձելի վարպետությամբ կարողացել է վերաստեղծել «Ֆեոդորայի» հայկական փոխակերպությունը, մի բան, որ ամեն մի իսկական թարգմանությանը ներկայացվող պլխավոր պահանջն ու արժանիքն է:

Իհարկե, մեկ-մեկ միջամտություններ էլ են արվել: Երգախաղը մկրտված է մի երկրորդ, բացատրական խորագրով եւս. սոսկական «Feodore»-ի փոխարեն այն վերակոչված է «Ֆեոդորա կամ Որդիական սերը»: Գործող անձանց ցանկում, պլխավոր հերոսուհու (Ֆեոդորայի) անվան դիմաց ավելացված է «մի ջահել աղջիկ» արտահայտությունը, որ բնագրի հետամուտ հրատարակության մեջ (1822) բացակայում է: Գոցեբուէի «Den Stoff hat eine wahre Begebenheit geliefert» արտահայտության փոխարեն թատերախոսին կցված է մի սեղմ նախաբան («Էս խաղի միտքը»)՝ չգիտես ինչու չտալով գրվածքի իրական հեղինակի անունը[24]:

Օտար գրվածքները թարգմանության կամ փոխադրության միջոցով «որդեգրելը» հին օրերում տարածված երեւույթ էր, և հպիվ թե դրա համար հարկ լինի որևէ դատապարտելի բան նշմարել: Իսկ ինչ վերաբերում է վերեւում մեր նկատած չեղումներին, ապա դրանցից վերջին երկուսի պատճառը հեշտությամբ է կռահվում, իսկ գրվածքն երկրորդ խորագրով՝ «Որդիական սերը» կոչելը, ունի այլ ակունք:

Նախ՝ «որդիական սեր» արտահայտությունը դանում ենք «Երգախաղի» ութերորդ տեսարանում՝ կայսեր և Ֆեոդորայի միջև տեղի ունեցած հետեւյալ հարց-պատասխանների մեջ.

> *«Կայսրն. Վե՛ր կաց, որդի. ի՞նչպես, Սիրելիցը մենա՞կ ես էկել:*
> *Ֆեոդորա. Մեն մենակ:*
> *Կայսրն. Ախր ի՞նչպես:*
> *Ֆեոդորա. Ոտով:*
> *Կայսրն. Ոտո՞վ:*

---

24 *«Ֆեոդորայի» վերմաներեն բնագիրը մինչև 1822 թ. ունեցել է ութիշ հրատարակություններ, իսկ Արովյանի հայերեն թարգմանությունը՝ մի երկրորդ ինքնագիր նուսխա: Առաջիններից մեզ մատչելի չեն այժմ, իսկ վերջինն, ինչպես ասացինք, չի պահպանվել: Այնպես որ չատ բան դեռ անորոշ է մնում: «Ֆեոդորայի» թարգմանության ընթացքում Արովյանի թափած առնձապոդծական ողջ աշխատանքի մասին լրակատար պատկեր հնարավոր կլիներ տալ, եթե ձեռքի տակ ունենայինք բնագրի բոլոր հրատարակությունները և նրա հայերեն թարգմանության գոլգ տարբերակները՝ հանդերձ առնձապոդծական ձեռագրերով, որոնցից ընդմիշտ զրկված ենք:*

Մայորն. Ա՛հ...
Կայսրն. Ի՞նչը քեզ էդպես սիրտ տվեց:
Ֆեոդորա. Աստուծո ապավինությունը:
Կայսրն. Ի՞նչը քեզ զորություն տվեց:
Ֆեոդորա. Որդիական սերը:
Կայսրն. Էդ երկար ճանապարհին ո՞վ էր քեզ պահում:
Ֆեոդորա. Իմ անմեղությունը:
Կայսրն. Ի՞նչ հնարք ուներիր կամ ապրուստ:
Ֆեոդորա. Ուրիշների լավությունը...» և այլն:

Եվ ապա՝ գլխավոր հերոսին անձնուրաց սխրանքի մղող և զորություն պարգևող դիացումը՝ «որդիական սերը», նույնպիսի հիացմունքով պատկերված է նաև «Վերքի» Հառաջաբանի այլաբանական դրվագում: «Որդիական սերն էր, որ բնության դրած զնջիրը քանդեց» արտահայտության մեջ ևս ուղղակիորեն դրսևորվում է տվյալ գրվածքի դաղափարական բովանդակությունը կամ խորհուրդը:

Բայց մինչ այդ խնդրին անցնելը մի քանի խոսք Աուգուստ Կոցեբուի անձի ու գործի մասին, որովհետև Աբովյանի ստեղծագործական ճանապարհին նա հանդիպում է նաև հետագայում, եթե մի կողմ թողննենք Աբովյանի դորպատյան տետրակներում առկա՝ Կոցեբուի չափածո երկերից կատարված արտագրությունները:

5

Ե՛վ Աբովյանից առաջ, և՛ նրա օրերում, ինչպես հասարակական, այնպես էլ գրական պատկառելի շրջաններում Աուգուստ Կոցեբուն նախանձելի հռչակ ու հեղինակություն չուներ, չնայած Եվրոպայում և Ռուսիայում քիչ գրողներ կարող էին մրցել նրա հետ իրենց անձնական ու պաշտոնական բազմազան կապերով, բեղմնավորությամբ և տարածվածությամբ: Երեք հարյուրի չափ թատերգություններ, ապա և նույն սեռի մանր ու խոշոր գրվածքներ, բազմաթիվ պատմվածքներ ու բանաստեղծություններ, օրագրեր, հիշողություններ, պատմագրական ուսումնասիրություններ, հրապարակախոսական երկեր, խմբագրած ու հրատարակած մի քանի պարբերականներ, ահա՛ ոչ լրիվ թվարկմամբ այն հսկայածավալ գրական ժառանգությունը, որ Կոցեբուն թողել է իրենից հետո և որն այսօր, դերակշիռ մասով, մեռած ու մոռացված է:

Բայց մի ժամանակ այդ գրվածքները գերման քաղքենիների ու հետադեմ խավերի հոգևոր սնունդն ու գաղափարական զենքերն էին, նրանց զգացմունքների ու մտքերի հայտարարը:

Հին ու արդի պատմաբանները, կոպեռւի դիմաստավորը գծելիս՝ նրան որակում են «ծախու գրագիտ» և «ցարական (ռուսական — Պ. Հ.) լրտես», «զգայացունց քաղքենիական գրականության» ներկայացուցիչ, որի կենցաղային թատերգություններն «հետադիմական դեր էին կատարում»՝ ամբողջությամբ ներծծված լինելով թթու միապետական գաղափարներով և «հետադեմ, ապդայնական կրքերով»[25]*:*

Մինչ նրա մեղադրամաներն ու զգայացունց պատմվածքները Եվրոպայի և Ռուսիայի առաջավոր գրողների ու գրականագետների (Գյոթե, Շիլլեր, Հեգել, Ա. Շլեգել, Պուշկին, Բելինսկի և այլն) սրտերն էին խառնում և պարբերականների էջերում ու մասնավոր գրագրություններում անողոք, բայց արդարացի քննադատության արժանանում[26]*, շարքային, գեղջուկ ընթերցողներն ու հանդիսատեսները մնում էին համակված նրա հերոսներով ու կիզծ պատմություններով: Քաղքենիական միջավայրում և նվաստ (լակեյան) հոգիների շրջանում Կոպեռւի բարոյախոսությունն ու քարոզը ոգևորություն ու երախտանքի բացականչություններ էին կորզում: Ճիզվիտներին հատուկ անմիջականությամբ նա կարողանում է բաց անել ամենափակ սրտերն անգամ, շահել նրանց բարեհամությունն ու համակրանքը:*

Գրականության պատմաբանները չեն ժխտում նաև, որ Կոպեռւի թատերգությունները արտաքնապես ինչ-որ գրական բաներ էլ ունեին: Վերարտադրելով կենցաղային պատկերներ ու մանր մարդ-

---

25 *Համմ.* «История немецкой литературы», հ. II, *Մոսկվա, 1963, էջ 315—324 և հ.* III. *Մոսկվա. 1966. էջ 207, 226. 335, 337, 341 և այլն: Հաջորդ էջերում, Կոպեռւի անձն ու գործը գնահատելիս՝ հենվում ենք նույն այս հրատարակության վրա, մասնավորապես «Գաղքենիական գրամա» հատվածի (տե՛ս հ. II, էջ 315—324):*

26 *Հեգելն, օրինակ, իր «Գեղագիտության» մեջ Կոպեռւի անմիմ-անհամար թատերգությունները բնութագրել է «բանաստեղծական աստումով՝ մեծ մասամբ աննշան և, մինչև իսկ, պարզ ասած՝ վատ գրվածքներ», «թուլիկ սակրապոմմներ և կեղծիքներ»: «Մեր ժամանակներում, — նկատել է նա, — միայն Կոպեռւին է հաջողվել բարձրացնել գինն այնպիսի բարոյական կատարելության, որ իրականում նողկալի է, և գռնապարզն ու խրախուսել այն, ինչը կարող է ցուցադրվել միմիայն նրա համար, որ ներմակ է ոչնչության» (Գ. Վ. Гегель, Эстетика, հ. III. Մոսկվա, 1971, էջ 570 և 580): Ռուսերեն նախորդ թարգմանության մեջ, որից օգտվել ենք սկզբնապես, մեջբերված տողերը փոխադրված են այլ ձևով (տե՛ս* Гегель, Сочинения, т. XIV, Лекции по эстетике, кн. III, М., 1958, с. 359, 369*):*

կանց առօրյան, նա ինչ-որ չափով հակադրվում էր կլասիցիստական ողբերգուբյուններին: Իր գրվածքներում, բայց ո՛չ կյանքում, երես դարձնելով պալատական բեմերից՝ նա օթևան էր փնտրում հետամնաց ծայրագավառների բնակչության մոտ՝ վերջիններին տալով «մատչելի և հաճելի հոգևոր սնունդ»: Նա բնության անմեղ զավակներին ավելի բարձր էր դասում, քան քաղաքակիրթ մարդկանց. գովերգում էր նահապետական մարդասիրությունը, բախտավորում տառապյալներին, արդարացնում մեղավորներին, հաչտեցնում հակադիր կողմերը, հանգստացնում կրքերը, քարոզում բարեգործություն և հոգևկան խաղաղություն: Այս ամենը նրան ազմկալի հաջողություն էր բերում: Ունկնդիրների կամ հանդիսատեսների ուշադրությունը չեղկլով գրվածքի բուն խորհրդից՝ նա տակավ առ տակավ ու աննկատելի ձևով նրանց մեջ ներարկում էր գաղափարական վտանգավոր թույնը:

Իր գեղարվեստական ու հրապարակախոսական ողջ գործունեությամբ Ա. Կոցեբուն բացահայտ կամ քողարկված ձևով մեծարում էր միապետական կարգերը՝ դրանք համարելով «կառավարական լավագույն ու բանական ձև»: Նա մարդկանց կուլը հնազանդության էր կոչում, փաստաբանելով, թե միապետը բոլորիս հայրն է, հրաշալիորեն տեսնում ու հասկանում է իր զավակների ցավն ու կարիքները և ամոքում ու բախտավորում բոլորին: Դրա համար էլ ոչ թե սլիտի դիմել պայքարի, այլ խաղաղեցնել կրքերը: Իդեալ միապետներից հետ չէին մնում Կոցեբուի մյուս հերոսները՝ բարի մեծատուները և առատաձեռն իշխանները. սրանք ևս, դրեթե միշտ, ղորավիդ էին կանգնում կամ հովանավորում թշվառներին ու տառապյալներին՝ նրանց հոգում վառված ահավոր դժոխքը վերափոխելով դրախտի: «Ֆեոդորայում» իրերի վիճակը հենց այդպիսին է:

6

Գիտե՞ր արդյոք Աբովյանը, թե ինչ համարում և կշիռ ուներին Կոցեբուի անձն ու գործը Ռուսիայում և Գերմանիայում, անտարակույս, բայց նա մեզ նման չէր մտածում, երբ Կոցեբուի ստեղծագործություններին էր դիմում, դրանք հայացնելու փորձեր անում: Աբովյանը լուսավորիչ էր, չէր տեսնում ազգի մեջ դասակարգեր ու սոցիալական հակամարտություն, այլ սոսկ՝ բարու և չարի բախում, որի ընթացքում, ի վերջո, հաղթանակելու էին Առաքինությունն ու Բարին:

Երկար դարեր քաղաքական անկախությունը կորցրած և օտար նվաճողների լծի տակ իր հոգևկան ու բարոյական կերպարանքն աղարտած, նաև սեփական քաղաքակրթության նվաճումները վաղուց մոռացած մի ժողովրդի համար, ինչպիսին հայերն էին, անհրաժեշտ էր

ուշական ժամանակ և հզոր հովանավորություն, որպեսզի կարողանար ուշքի գալ դարավոր թմրությունից, քերել իր մխքն ու հոգին թանձրորեն պատած բարբարոսության ժանգը, լուսավորվել և մտնել ժամանակի քաղաքակիրթ ազգերի շարքը: Եվ ահա՛, հանդամանքների բերումով, հանդես էր եկել այդ բազձալի հովանավորը և իր գնդերն հասցրել մինչև զուլդ Մասիսներ: Դա Ռուսաստանն էր, որն Աբովյանի ըմբռնմամբ՝ մի մեծ ընտանիք էր, իսկ նրա մեջ ապրող ժողովուրդները՝ հավասար զավակներ, որոնց կյանքի ապահովության, նաև երջանկության համար հոգում էր թագավոր կայսրը: Խախտել այդ ընտանիքի խաղաղությունը, նշանակում էր վտանգել անփական ապահովությունն ու կյանքը, նորից մատնվել բռնությունների ու կոտորածի, տրորվել պարսկաթուրքական գավթիչների կրնկի տակ: Այս առումով՝ կոցեբուի դրվածքներում առկա միապետության վառաբանումը Աբովյանի դիտավորություններին չէր հակասում: Դոնի 1841-ին նա այդպես էր դատում ու ըմբռնում:

Որպես գեղագետ, ընդառաջելով Հանուբի պահանջներին և ծայրագավառային, հետամնաց երկրի անպրագետ ժողովրդին՝ «Հարիր հազարին», մատչելի և հաճելի հոգևկան սնունդ տալու հրամայականին և պարզ տեսնելով, որ, դոնն առայժմ, անկարելի էր այդ բացերը լրացնել ինքնուրույն ստեղծագործությունների միջոցով, Աբովյանը, ուզեր թե չուզեր, պետք է դիմեր եվրոպական կամ էլ ռուսական համապատասխան հորինվածքներին: 1830 — 40-ական թվականներին Երևանի, անգամ Տիֆլիսի բնակչությունն ավելի թուռնդ կերակուր չէր էլ կարող մարսել: Տիֆլիսի քաղքենիների ու երևելիների («ազգի իշխանք») համար[27], որոնցից մի քանիսի որդիները կրթվում էին հենց Աբովյանի ձեռքի տակ և որոնց գրական ճաշակին ու պահանջմունքներին ինքը լավատեղյակ էր, — Շեքսպիրի, Շիլլերի կամ Գյոթեի արվեստն ու գաղափարներն առայժմ, նեթե նրանց գրվածքներն հայացվելին էլ, մնալու էին անմարսելի. նրանց Հանդիսատեսն հետո պիտի դար:

---

[27] *Աբովյանը նրանց կոչում էր «ո՛վ ընտիր իշխանք», «ի՛մ ազգի իշխանք, ի՛մ թագ ու պարծանք»՝ տարբերելով «բազի ազա, բազի հասատափար, իշազլուխ իշխան»-ներից, որովհետև սրանք տարված էին օտարամոլական հովերով, մինչդեռ առաջիններըր՝ «ազգի պատվական իշխանքը», նույն ազգի համար «հազար մանեմներով կխարջեն... ժամ կշինեն»: Աբովյանը խրախուսանքի խոսք էր ասում և ընդառաջ գնում նաև նորակ վաճառականներին. «Ասված էլի կյանք աս Թիֆլիսի վաճառականներին. Ասված նրանց պահի՛, պայծառացնի՛, ազգի համար հաստատ մնան...» (և* IV, *44 և 45, և* III, *61, 237 և 239):*

Հանրությանը նոր լեզվին ընտելացնելու և թշվառի նկատմամբ կարեկցանքի զգացում առաջ բերելու համար միայն, ժամանակավորապես, Աբովյանն իրնում էր «Վերքի» գաղափարական բարձունքներից և զբաղվում գրականության ժողովրդականացման ամենաառօրեական հարցերով, որոնց վերաբերյալ այնքան պարզ ու հստակ գրել է «Վերքում».

«Ամեն մարդ իր սրտի խարջ բան կուզի: Ջո զարլու փլավն ինձ ի՞նչ օգուտ, որ ես չեմ սիրում»[28]*:*

Աչքի առաջ ունենալով այս ամենը՝ մեզ կրկին իրավունք չենք վերապահում կշտամբելու Աբովյանին՝ գրական առաջավոր ավանդներից չեղվելու կամ հրաժարվելու համար, մինչ Շիլլերի հանճարեղ թատերգությունների փոխարեն հայացնում էր Աուգուստ Կոցեբուի քաղքենիական-զգայացունց թատերգությունները, գործեր, որոնց հեղինակը ազատությունը վնասակար բան էր համարում և թմբկահարում էր զորանոցային կարգերը, ջանք չէր խնայում իր գրվածքների օգնությամբ մեռցնելու ընթերցողի մեջ ընդվզման ոգին և շարունակ հորդորում ու համոզում էր նրան, որ պետք է գոհ լինել բախտից և կուրորեն հնազանդվել նախախնամությանը, որը հրաշալիորեն է տեսնում ու տնօրինում ամեն ինչ, իր որդեգրած սկզբունքների թելադրանքով կեղծում էր պատմական անցյալն ու իրականությունը:

Թարգմանելով Կոցեբուի «Ֆեոդորան», բայց ո՛չ մի խոսք չասելով նրա իրական հեղինակի մասին՝ Աբովյանն, ինչպես երևում է, առաջնորդվում էր գրական-թարգմանական այն յուրօրինակ քաղաքականությամբ, թե համաշխարհային գրականությունն իր ուժեղ ու թույլ կողմերով մի ամբողջություն է, և գրողների առաջադեմ կամ հետադեմ լինելը նշանակություն կարող է ունենալ միայն տվյալ ազգի համար և պատմական որոշակի հանգամանքներում, բայց ո՛չ մեկ ուրիշի, որի հոգևոր զարգացումը դեռևս շատ է հետ մնում և որին՝ բարձրացնելու նպատակով, թարգմանարար մատուցվում են տարբր գրվածքներ:

Կոցեբուի ժողովրդականությունը Եվրոպայում, նրա համակրանքը բնության անմեղ զավակների նկատմամբ, նրա գործերում առկա նահապետական մարդասիրության դովքը ինչ-որ կետում մերձենում էին «Վերքում» Աբովյանի պաշտպանած նմանօրինակ տեսակետներին և վոխ առնելով՝ որդեգրվում:

---

[28] *Ե III, 4:*

Ավելին, այդ ճանապարհով Աբովյանը, կարծես, որոշ չափով մեղմում էր Կոցեբուի երկասիրության սակերտա կողմերը: Եթե «Ծեոդորայում» առկա միապետության գովքը, որ անկոծկելի է, եվրոպական իրականության մեջ, մասնավորապես ֆրանսիական Մեծ հեղափոխությունից հետո, հանրության կողմից չէր խրախուսվում քնավ կամ հնչում էր որպես ձայն բարբառո հանապատի և բոլորովին այլ վերաբերմունքի արժանանում, ապա Հայաստանում կամ անդրկովկասյան իրականության մեջ պարարտ հող ուներ ու անչափ բաղձալի էր (դա մարդկանց անուղղակիորեն մտածել էր տալիս իրենց կորցրած պետականության վերականգնման մասին), Թադավորի, որն արդարադատ է ու հովանի՝ ինչ-ինչ դժբախտ հանգամանքների բերումով տառապող իր աղնիվ հպատակների:

Դառնալով ունկնդիրն ու ականատեսը Ծեոդորայի նման վիճակուն օրիորդի անելևակայելի սխրանքի, նրա նվիրվածությանն իր իդեալին, նրա անօրինակ ծնողասիրությանը, հետևողականությանը, հաստատակամությանը, բայց և՝ բարոյական մաքրությանը, նրա, որ ո՛չ մի արգելքի առջև կանգ չի առնում, երբ մեջտեղում է իր ամենանվիրական սրբության, իր սիրելի հոր ապրել-մեռնելու խնդիրը, հանդիսատեսը ևս համակվում էր նույն զգացումներով, բարոյապես մաքրվում ու նախապատրաստվում նման զոհաբերության:

Աբովյանին լավ հասկանալու համար կարելի էր էլի մանրանալ, բայց ինչ և ինչքան էլ ասինք, չպիտի կարողանայինք թաքցնել մի բան. հայության հոգևոր վերածնունդն իրականացնելու, հայ նոր գրականության հիմքերը դնելու ճանապարհին Աբովյանը գաչնակիցներ է փնտրել արևմտաեվրոպական զգայացունց դրամայի հեղինակների ու կերպարների շրջանում՝ համոզված լինելով, թե գրանք ասիական դեսպոտիզմի պայմաններում մարդու մեջ պատվաստելու էին սուրբ զգացումներ՝ տալով սիրո և առաքինության իդեալներ:

Այսօրինակ գաչնակցությունը հայ և լուսավորական չարժման առաջամարտիկների համար չատ բնական էր, չնայած որ հեղափոխական-դեմոկրատիզմի հայեցակետից ելնելով՝ այն պիտի մերժվեր: Աբովյանը, սակայն, հեղափոխական-դեմոկրատ չէր, այլ լուսավորիչ և ժողովրդասեր[29]*:*

---

[29] *Այս հղման գրված էին վաղուց (1968-ին), երբ լույս տեսավ «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» (Երևան, 1971) ժողովածուն, որտեղ գետեղված «Աբովյանի և Բելինսկու գաղափարական առնչությունների հարցի շուրջը» հոդվածի հեղինակը, երևակայական առնչակցություններն իրականություն հռչակած՝ ճգնում է «ապացուցել» անապացուցելին, որ իբրև թե «Ծեոդորան» Աբովյանի ինքնուրույն*

Հայկական իրականության խեղճությունն էր ներկա դեպքում հարկադրում Աբովյանին՝ Կոցեբուի հերոսներին ձայնափոխ դարձնելու, և ոչ թե հրաժարումը Գյոթեի կամ Շիլլերի բարձր գաղափարա-

---

ստեղծագործությունն է, և լուրջ գյուտ արածի կեցվածք ընդունելով ազդարարում է, թե «Ֆեոդորայի» «սյուժեն Աբովյանը վերցրել է... 1840 թ. Պոպովի թարգմանությամբ ռուսերեն լույս տեսած Բռավիե դը Մնստրի «Երիտասարդ սիբիրուհին» վիպակի առթիվ Բելինսկու գրած գրախոսականից, որ լույս էր տեսել նախ՝ «Литературная газета»-ի 1840 թ. փետրվարի 3-ի, ապա նաև՝ «Отечественные записки» ամսագրի մայիսյան համարներում» (էջ 183): Այս հայտարարությունը, ինչպես և հոդվածն ամբողջությամբ, ինքնուրույնության նշույլ իսկ չի պարունակում. հոդվածագիրը յուրացրել է Գ. Աբովի, Վ. Թերզիբաշյանի, Ս. Բազյանի չափազանցությունները (իհարկե, առանց նրանց անուններն ամբողջ նոր սխալներով զարդարելով դրանք: Մի քանի կետերի վրա, այնուհանդերձ, ուշադրություն հրավիրել՝ հետագա գայթակղություններից ոմանց դեռ պահելու համար:

Նախ՝ Աբովյանը չէր կարող Բելինսկու «գրախոսականից» սյուժե փոխ առնել և ինքնուրույն գրամա գրել, քանի որ, ինչպես տեսանք, հակառակ «Բելինսկու հանձնարարականի»՝ անտեսել է Պոպովի թարգմանած նորավեպը և հայացրել Աուգուստ Կոցեբուի գրվածքը: Կոցեբուի մասին Բելինսկին միայն էլ որոշակիորեն բացասական կարծիք է ունեցել, հետևաբար բացառվում է նաև որևէ հնարավոր ներթաղրություն, թե Կոցեբուին դիմելու չարժառիթը, թերևս, կարող էին Բելինսկու՝ առայժմ մեզ անմատչելի ու անծանոթ ակնարկները լինել:

Ապա «Литературная газета»-ում Բելինսկին Բռավիե դը Մնստրի նորավեպի մասին գրախոսական չի տպագրել: Այդտեղ նա ունի թատերախոսություն, այն էլ Պոլևոյի «Պարաշա Սիբիրյաչկան» Ալեքսանդրյան թատրոնում բեմադրելու առթիվ:

Այնուհետև՝ Ա. Պոպովի թարգմանած «Երիտասարդ սիբիրուհու» մասին «Отечественные записки»-ի 1840 թ. (հ. X) № 5-ում տպված փոքրիկ մատենախոսությունը (չուրջ 30 տող) անսատարգիր է և ոչինչ չասող, հետևաբար, նեթե Աբովյանն այն կարդացած էլ լիներ, չէր կարող իմանալ, թե հեղինակն ո՞վ է:

Վերջապես՝ դեռ 1968-ին, որպես դժարճալի թյուրիմացություն, խոսվել է Կոցեբուի թատերգությունը Աբովյանին վերագրելու և նրա վրա Բելինսկու գաղափարական ազդեցությունը որոնելու ձախողակ փորձերի մասին (տե՛ս մեր «Хачатур Абовян. Жизнь, творчество, время (1809–1836). Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук», Ер., 1968, с. 4):

Մոռացության մատնել այս իրողությունները, անտեսել արդեն արված զգաստացնող ակնարկները և սուտ ու սխալ «փաստարկների» դորությամբ նոր առասպել հորինել Բելինսկու Աբովյանի վրա ունեցած գաղափարական ազդեցության մասին, նշանակում է կամ բացարձակ անտեղյակ լինել արծարծվող խնդրին, կամ էլ գեղեցկացնել իրողությունները և աննպատակ խեղաթյուրել փաստերը:

կանուխ թյամբ և ազատաբաղձ ոգով համակված երկերից, որոնցով նա մինչև վերջ էլ ոգևորված մնաց:

Գերմանական գրչայացունց-քաղքենիական թատերդության հայացումը ազացույց է նաև մի ուրիշ, անկոծկելի ճշմարտության. Աբովյանի գրական հայացքների վրա խոր ազդեցություն ուներ սենտիմենտալիզմը: Ճիշտ է, նրա դեղադիտական սկզբունքները վերջնականապես թրծվել էին ռոմանտիզմի քուրայում, բայց սենտիմենտալիզմն, ամբողջությամբ վերցրած, չէր հաղթահարված և, իբրև ծննդյան արատ, ծանրանում էր նրա հոգուն: Մարդկանց հոգեցունց ապրումներն ու տվայտանքները վերարտադրելիս՝ Աբովյանը շատ հաճախ սենտիմենտալիզմի աչքաչափով էր այդ ամենը նժարում: Մանավանդ որ ծայրագավառային, հետամնաց երկրի ժողովրդի հոգուն էլ ավելի ու ընտանի էին նման հուզերն ու կրքերը:

Ամփոփենք. իսկական գրականագիտության խնդիրը գրողի ու նրա ստեղծագործության վերաբերյալ ճշմարտության հայտնագործումն է, որը լացաուռւմ է ամեն կարգի ենթագրական առնչակցություն ու գունազարդում, որքան էլ գրանք «չոյող» և կամ «նպաստավոր» լինեն:

«Ֆեոդորան» թարգմանություն է գեռևս 1812 թ. հրատարակված գերմանական նույնանուն մի թատերգության, որի իրական հեղինակը 1819 թ. սպանված գրող ու գործիչ Աուգուստ ֆոն Կոցեբուե չէ:

«Ֆեոդորայի» գրչայացունց սեր ու գաղափարական սովերների անտեսելը, այդ երգախաղի մեջ հեղափոխական-դեմոկրատական գեղագիտության սկզբունքների գրսևորումները որոնելը, նրա ծնունդը Բելինսկու ազդեցության հետ կապելը ցավալի թյուրիմացություն է, գրական հետազոտության տարրական կանոնների անտեսում, հայ մեծ գրողի աշխարհընկալման բարդ ու հակասական էությունը չըմբռնելու արդյունք, որոնց պատուղները, որպես զվարճալի թյուրիմացություններ և տգիտության գլուխգործոցներ, դեռ երկար ժամանակ ալիսի գնդեռն անտեղյակների «աբովյանական» հայտնագործություններ մեջ:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Երկուս ու կես տասնամյակ առաջ (1947 թ.) ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանը XVIII դ. 80-ական թվականների հայ ազատագրական շարժումներին նվիրված իր մեծարժեք աշխատության մեջ ու նրան կից լուսաժիպ հավելվածում, հայերեն բնագրերով և ռուսերեն թարգմանությամբ մեջ է բերել ու հետազոտել կարևորագույն վավերագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում նորովի դիտելու Խաչատուր Աբովյանի ռուսական կողմնորոշման ակունքների խնդիրը: Վերջին, մասնավոր հարցը գիտնականին չի՛ զբաղեցրել, Աբովյան գերդաստանի ազատագրական որոնումների և ռուսական կողմնորոշման վերաբերյալ նա ակնարկներ չի արել, իսկ աբովյանագետներն էլ, փոխանակ օգտագործելու և իմաստավորելու նրա ջանքերով գիտական շրջանառության մեջ բերված այդ վավերագրերը, կա՛մ անտեղյակ են եղել դրանց, կա՛մ էլ՝ անտարբեր: Մինչդեռ դրանց նշանակությունը չափազանց մեծ է:

Ա. Հովհաննիսյանի հայտնաբերած նյութերը հնարավորություն են տալիս խորհելու, որ Աբովյանի ռուսական կողմնորոշումը լոկ կյանքի դասերի վրա, 1820-ական թթ. ձևավորված համոզում չէր, որի սկզբնական ազդակները նա ստացել էր Էջմիածնի ու Տփղիսի իր դաստիարակներից (Անտոն Մուրղնեցի, Ներսես Աշտարակեցի, Հարություն Ալամդարյան), այլ ուներ խոր արմատներ, որոնք հասնում էին մինչև իր նախահայրերը, մինչև երջանկահիշատակ պապը՝ Պարոն Ապովը:

Պարոն Ապովը կամ «Ապով դի Վիրապը» մասնակիցներից մեկն էր Երևանում XVIII դ. 80-ական թթ. սկզբներին կազմակերպված այն պաղտնի ժողովի, որի պարագլուխներն էին երևելի հայորդիներ Մելիք Աբրահամը (վախճ. 1827, հոկտեմբեր)[1] և Գաբրիել Յուզբաշին, որոնք Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հորդորներով հարաբերության մեջ մտնելով ռուսական արքունիքի՝ Եկատերինա կայսրուհու, պետական ու ռազմական նշանավոր գործիչներ Գրիգորի Ալեքսանդ-

---

[1] *Մելիք Աբրահամ Մելիք Ադամալյանցը վախճանվել է Երևանի գրավումից մի քանի օր հետո՝ վայելելով իր փայփայած իդեալի բարեհաջող կատարումը: Ի դեպ, Յիցիանովի անհաջող արշավանքից հետո (1804), նա է կազմակերպել Երևանի հայության մի մասի գաղթը Տփղիս (Հավլաբար): Տե՛ս Մատ., ԿԴ № 42/295ա և ե III, 57–58:*

լովիչ և Պավել Սերպեևիչ Պոտյոմկինների հետ, գործում էին հօգուտ ռուսական զենքով Հայաստանն ազատագրելու սրբազան գաղափարի:

Ժամանակն ու գառը փութաշժությունները էին նրանց բերել այդ աներեր համոզմանը: Ջմռռանանք, որ 1779 թ. ու հաջորդ տարիներին Այրարատյան աշխարհում տեղի ունեցած սահմռկեցուցիչ իրադարձությունները, որոնք երկրին ու ժողովրդին բերին նոր, ահավոր տառապանքներ՝ հարստահարություն, տարագրություն և կոտորած (ո՛չ թե միայն թուրք ու պարսիկ տիրողների, այլև քրիստոնյա վրաց թագավորի ձեռքով), ավելի քան բաց էին արել մարդկանց աչքերը՝ կրկին ու կրկին հաստատելով, որ տարերական հնազանդությամբ անկարելի է այլևս ապրել, պետք է չուառափուշթ որոնել-գտնել քաղաքական ազատության ճանապարհը:

Արդեն ամենուր խոսում էին դեպի Անդրկովկաս ու Վիրք, դեպի Այրարատյան աշխարհ և Կասպյան դաշտանները Ռուսաստանի առաջիկա նոր արշավանքների մասին, որոնք վերջապես իրականություն պիտի դարձնեին հայկական պետականության վերանորոգման հույսը, որ մի ժամանակ Մեծն Պետրոսը և Ռոմանովների զահի հաջորդ տիրակալները տվել էին Իսրայել Օրուն և նրա գործի չարունակողներին:

Կարծես թե դարասկզբից (1701), «Հայ քաղաքական բանակարությունների ուղղության մեջ» կատարված «պատմական հեղաբեկման» օրերից (ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի արտահայտություններն են[2]—Պ. Հ.) հայոց աշխարհիկ և հոգևոր առաջնորդների վարած մերթ համարձակ, մերթ էլ հեռատես ու զգուշավոր (Սիմեոն Երևանցի) քաղաքականությունը բարի պատգեներ էր տալիս, և չուառով մարդիկ պիտի տեսնեին Հյուսիսի Արծվի խոլական թռիչքը դեպի զույգ Մասիսներ:

Ռուսները, ծածուկ թե ակներև, գալում էին դեպի հարավ, իսկ հայերն էլ գրկաբաց սպասում, ընդառաջ էին վազում՝ օրերի հարց կարծելով գարերով անլուծելի մնացած այդ ճակատագրական խնդրի իրագործումը:

Այս պարագաներում միանգամայն արամաբանական է, որ չատերը սիրով գործակցեին նրանց, ինչպես և եղավ:

Ռուսիայի արևելյան, մասնավորապես, հայկական քաղաքականության դեկավարները չատ չուառով երևանցիների շրջանում գտան եռանդուն գործակալներ (անշուշտ, ո՛չ առանց Հովսեփ Արղությանի աջակցության), հանձին երևանցի Սահակ Տեր-Սահակյանի («Սահակ Սակիչ Պօպօվ»), որը Գեղամյանց նշանավոր տան գավակն էր և Սիմեոն Երևանցու ձեռնասուն աշակերտներից ու մերձավոր գործա-

---

2 *Տե՛ս* Աշոտ Հովհաննիսյան, *Երկեր հայ ազատագրական մտքի պատմության, հրտր երկրորդ, Ե., 1959, էջ 497:*

կից՝ ներից մեկի՝ Սահակ Դեղամայի եպիսկոպոսի եղբայրը: 1783 թ. աշնանից Հովսեփ Արղությանի հրահանգներով կապվելով Ռուսաստանի արևելյան քաղաքականության իրականացնողներից մեկի՝ գեներալ Պավել Սերգեևիչ Պոտյոմկինի հետ, նա ո՛չ միայն զորավարին ու արքունիքին էր հասցնում Պարսկաստանի, Թուրքիայի և Անդրկովկասի մահմեդական խանությունների տնտեսական կյանքի ու քաղաքական անցուդարձերի մասին արժեքավոր տեղեկություններ, այլև Այրարատյան աշխարհի ու Երևանի բնակչության մեջ բարենպաստ կարծիք ստեղծում Ռուսաստանի մասին, չահագրգռված շրջաններում պարզաբանում հյուսիսի տիրակալի դիտավորությունները՝ հայոց թագավորությունը վերականգնելու վերաբերմամբ, այնքան, որ բնաչխարհիս երևելիները գործնական քայլեր են անում՝ ուղս արքունիքի և Հայոց ապագա գահակալ Գ. Ա. Պոտյոմկինի հետ գաղտնի հարաբերություններ սկսելով պարսկական և թուրքական լծից Հայաստանն ազատագրելու շուրջ: Այս նույն նպատակին էր, հարկավ, ծառայում ուղսաց դեսպան «Կրաք-մայոր Փեթրիի» այցելությունը էջմիածին և հանդիպումները Ղուկաս Կարնեցու հետ, որոնց վերաբերյալ մանրամասնություններ առայժմ հայտնի չեն: Գիտենք միայն, որ 1783 թ. հոկտեմբերի 10-ին կաթողիկոսի անունից մայորին նվերներ են մատուցում. «Ռուսաց երկրէն եկեալ Էջէի անուամբ կրաք մայոր կոչեցեալ Ռուսին, որոյ անունն էր Փէթրի, մինչ եկն ի սուրբ Աթոռս, նմա եառաք ա կարմիր զարպապ կապայ, որ էր մեր խանի տուածն սրբազան կաթուղիկոսին, ա թիրմայ չալ (թո՛ղ դիւր և դրան մարդկանց նաղտն). ի հոկտեմբերի 10»[3]:

Դատելով պահպանված վավերագրերից՝ Երևանի «քանի մի խորհրդական մարդկանց», նրանց մեջ և Աբովյանի պապի կոդմնորոշումը դեպի Ռուսաստան ձևավորվում է 1781 թ. կեսերին: Նրանք անում են որոշ հետախուզական քայլեր՝ առժամանակ խուսափելով անմիջական բանակցություններից. չրջահայեցողություն հանդես բերելով՝ նրանք չէին ուզում դեռ չոուր չտեսած բոլիկանալ, այլ սպասել բուն հեղեղին, որի ձայնն օր-ավուր ավելի էր ահագնանում՝ անհանգստացնելով ու սարսափեցնելով տեղի մահմեդական իշխողներին:

Սպասողական այս վիճակից, ինչպես և պետք էր սպասել, ավելի հայերն էին նեղվում և երկուս ու կես տարի հետո, հաբիաթրված՝ առաջին պաշտոնական նամակն ուղղում Հովսեփ Արղությանին, որը թեպետ Սիմեոն կաթողիկոսի հաճությամբ, դեռ 1774-ին[4], Ռուսաստան

---

3 *Տե՛ս Մաա., ԿԴ № 2/11, էջ 264:*

4 *Համմա. «Դիվան հայոց պատմության», գիրք Ը., Տփղիս, 1908, էջ 320 («Սիմեոն կաթողիկոսի Հիշատակարանը»): Արղությանը եպիսկոպոս է ձեռնադրվել 1771 թ. դեկտեմբերի 25-ին (Նույն տեղում, գիրք ԺԱ, էջ 458), իսկ 1773 թ. նոյեմբերի 17-ին ծայրագույն վարդապետության պատվոգրո*

էր առաքվել իբրև նվիրակ ու առաջնորդ տեղի և չրջակա երկրների հայության, սակայն գաղտնի հանձնարարություն ուներ գլուխ բերելու նաև Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության գործը: Առաջիկա բանակցություններում Արղությանն էր լինելու հայ ժողովրդի և հոգևորականության ներկայացուցիչը, բնականաբար և նրան պիտի «անհանդստացնեին»:

Նամակը գրված է 1784 թ. հունվարի 13-ին և վավերացված է Մելիք Աբրահամ Մելիք Ադամալյանցի և Գաբրիել Յուզբաշի Գևոդամյանցի կնիքներով: Մեզ մատչելի է եղել նրա միայն մի էջի լուսապատճենը (կնիքներն ու առերպրությունները այդտեղ չկան) և հնարյա, ուսերեն ընդարձակ վերաշարադրանքը ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի աշխատությունից[5]:

Պաշտոնական վավերագիր լինելուց բացի, այդ նամակը նաև մի գեղեցիկ բանաստեղծություն է, չրջաբերություններով գրված հանգավոր ուղերձ, որպիսիք մեր քառնամյա ձեռագրական թափառումների ընթացքում սակավ են պատահել[6]:

«Գերապատիւ և Արժանավայել Մեծի դիտիդ Համայն Հեւսխատքնակ ազինդ Հայոց, Տեառնդ Յովսէփայ Ակրի և փառազարդ Եպիսկոպոսիդ Մարուբ և Սուրբ Աջդ կարօտախառն սիրով համբուրեմք և զողջ կեալդ ժամեմք»: — Այս է խորագիրը:

Իսկ Նախաբանն արձակ է շարադրված: Հեղինակներն այդտեղ իրենց տարակուսանքն են հայտնում երկար ժամանակ Արղությանից նամակ չստանալու համար, հավատում, որ անխափան են պահում նրա հանդեպ հին սերը և լսելով նրա հաջողությունների մասին՝ ամբողջ

ստացել (նույն տեղում): Իբրև նվիրակ՝ Աստրախան է ժամանել 1773 թ. դեկտեմբերի 17-ին: Առաջնորդ է նշանակվել 1774 թ. հուլիսին («Արարատ», 1876, № 9, էջ 323):

5 Տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Е., 1947, стр. 115–116, 270 և չհամարակալված լուսատիպ հավելվածը: Բուն վավերագիրը պահվում է Հին վավերագրերի պետական կենտրոնական դիվանում, Մոսկվայում (разряд=խումբ XXIII, գործ 13, մաս VII, թ. 61):

6 Մեզ ծանոթ է նմանօրինակ մի ուրիշ, հնօրյա նամակ ևս՝ գրված Ղուկաս Կարնեցու ձեռքով և ուղղված «առ կայսրն Գերմանիոյ Յովսէփ» (1785, փետրվարի 15), բայց գրա վերջաբանն է միայն չափածո. «Նուաստս Ղուկաս կաթողիկոս, /Ես պատրիարք ազգիս Հայոց, /Յար եմ հովիւ հօտիս փորու, /Բրիստոսական նկեղեցւոյ»: Վանն բանիցս ազգասիրական, /Որք ի վերոյ գրեցեալ կան...» և այլն («Դիվան հայոց պատմության», գիրք Թ, էջ 508): Հայկական կաթոլիկության պատմահայության ներկայացուցիչ էր. անշուշտ, այս իրողությունը, որը ուշագրության չի արժանացել (Ֆրանսիացիների նման հայերն էլ հանգամանք են գրում ամենաստորադասության գրածքներին ու առօրյա գրություններին):

հոգով ուրախանում («Զեկ լիցի Սրբութեանդ, զի ահա քանի ժամանակ էանց, և ո՛չ յիշեցեր բնաւ, և ո՛չ մատնաշաւի թղթով անդամ: Այլ ծառայք քո որպէս երկին և եռանդն անմոռանալի ծրարեալ պահեմք զսէրն նախկին: Արդ՝ լսելով զյաջողութիւն և զբարեկեցութիւն սրբութեանդ, զուարճանամք և ցնծամք ի սիրտ և ի հոգի: Եւ՝ թէ մերս կեցութիւն զննեցէս օժանդակութեամբ արժանահայց Աղօթիդ՝ պահեալ է Տէր անվնաս մինչև ցարդ և յապագայն, իւրնէ յանձին»):

Սովորական ձևով գրված այս նախաբանը, սակայն, դիտավորություն ուներ հետաքրքրասերների ուշադրությունը չեզևլու բուն չարագրանքից, որ ազատագրական ուղիներ որոնող նրևանցի ազդեցիկ հայոց դաղտնախորհուրդ ծրագրի արծարծումն էր Հովսեփ Արդութեանի. իսկ վերջինիս միջնորդությամբ էլ՝ ռուս արքունիքի և Կովկասի ռուսական զորքերի հրամանատար, գեներալ Պավել Սերգեևիչ Պոտյոմկինի առջև: Բայց ավելի լավ է մնջ բերենք նրանց բուն խոսքը.

Վարկպարագի գոլ գիտեա՛
Զիարդութիւն քոյազնէիցս:

Զի սինլքորքն այլասեռից,
Պատճառելով բևեռն երկնից՝
Ճշդել ջանան մերազնէից
Արմատախիլ նման խոտից.
Կասեալ փչրեն ժողովն խրճից,
Եւ հողմնավար առնեն յարդից:

Արդէ՛ն յուսամք փոյթ փրկութեան
Բամբչին մեծի ողորմութեան,
Եւ առ չքնաղդ՝ իբր բողոք,
Այլ առ ասպետն՝ որպէս ողոք,
Գուցէ լիցին ինչ բարութիւնք,
Փոքեր հօտի քում փրկութիւն:

Վերջնոցս ևս միոյ յիշման
Թէ համարիս լինիլ արժան,
Յայնժամ ծէ՛ր մեր որպէս մուրհակ
Եւ կնիքս նոցա պատանդ,
Հանդերձ համայն մեր ընտանեօք
Եւ շրջակայ ստորատրելովք:

Պատճէն ծրելոցս՝ դարձուցանել,
Ժտեմք փութով յուսադրել:
Զի մեզ ո՛չ էր իրս այս ծանօթ,
Ի պսակէն առաք ինչ հիւթ.

Երեքսրբեանն միջնորդիւ
Եւ կողամուխ սրբոյ Տեգիւն:

Ողջ լինիլ քոյ յայսմ հետէ
Միշտ յարաժամ խնդիր մերմէ:

Այս հանդավոր ուղերձն, ինչպես տեսնում ենք, լիքն է չրջասուբյուններով. «Մեծ բամբիշը» Եկատերինա II կայսրուհին է, «Ասպետը»՝ Պ. Ս. Պոտյոմկինը, «Զքնաղը»՝ Հ. Արղուբյանը, «Երկնի բևեռը»՝ Ռուսաստանը, «Այլասեռ սինկլտոները»՝ Երևանի պարսիկ ու թուրք իշխողները, «Փոքր հոտը»՝ հայ ժողովուրդը, որը, ինչպես հնձած խոտ, կառաղի հողմի լերանն ընկած, աստիճանաբար քշվում է հեռու, նոսրանում ու ոչնչանում:

Թեև ինչ պատասխան է տվել այս տագնապալի հրավերին Հ. Արղուբյանը, չգիտենք, բայց այն ոգևորության ալիք է առաջ բերել Այրարատյան տան երևելիների շրջանում և համարձակություն ներշնչել՝ անհապաղ պաշտոնական ազեքսպիր ուղղել Եկատերինա կայսրուհուն ու նրա մերձավոր խորհրդականներ Գրիգորի Ալեքսանդրովիչ և Պավել Սերգեևիչ Պոտյոմկիններին՝ համառոտիվ նկարագրելով իրենց անելանելի վիճակն ու կրած հալածանքները, խնդրել օր առաջ օգնության հասնելու: Դա 1784 թ. մայիսի 31-ին էր:

Կայսրուհուն և Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինին ուղղված ազերսագրերը դեռ չեն հայտնաբերված, դրանց լսվանդակությունը լոկ կռահում ենք: Հրատարակված է միայն Պավել Սերգեևիչ Պոտյոմկինին ուղարկվածը[7], որը, ինչպես տեսել կտեսնենք, անխաբ-դար հայելի է ո՛չ միայն հայոց անելանելի վիճակի, այլև Ռուսաստանի արիապետության տակ անցնելու նրանց միահամուռ ձգտման արտահայտիչը:

Այս խնդրագրի տակ էլ ահա՛ հանդիպում է Խաչատուր Արովյանի պապի՝ Պարոն Ապովի կնիք-մատանու գրությունը՝ «Գրիստոսի ծառայ Ապով», իսկ վերևը՝ «Ապով գր Վիրապ» (այսինքն՝ Վիրապի որդի Ապով) մակագրությունը:

---

7 *Վավերագրի յուրատիպ պատճենը և ռուսերեն հնօրյա թարգմանությունը տե՛ս Արզար Հովհաննիսյանի նշված աշխատության մեջ, էջ 116–117 և 272–273, թղթված՝ Հին վավերագրերի պետական կենտրոնական դիվանից (խումբ XXIII, գործ 13, մասն VIII, թ. 160ա–բ և 161ա–բ): Շնորհակալությամբ նշում ենք, որ պատմաբան Վարդան Գրիգորյանն է այս և հաջորդ վավերագրի վրա մեր ուշադրությունը հրավիրել:*

Տեսնենք, թե որոշակիորեն ի՞նչ էին պատմում ու խնդրում Պարոն Ապովն ու նրա համախոհները ռուս կառավարությունից և Պ. Ս. Պոտյոմկինից.

«Բարձրապատիւ և Գերազանց Կառավարչիդ Մեծի՝ Պաւլ Սարգիչ Ահարկու Զորապետիդ՝ Մեծաւ խոնարհութեամբ զայս ինչ Արզ առնեմք.

*Յայտնի եղև մեզ զամենայն բարերարութիւնս և զողորմութիւնս մարդասիրութեան ձերոյ՝ սակս անտիրացեալ ազգիս մերոյ, և հաւաստեցաք ի թղթոյ Տեառն Յովսէփայ արհի և փառազարդ եպիսկոպոսին: Արդ մեք ոչ եմք երկբայ ի փրկութենէ մերմէ, որ ի ձեռն Ամենապատուելոյդ և խնամակալութեամբ խնամակալի մերոյ՝ գերափայլ և մեծ իշխան Քնէազին ընկալնըլոց եմք զողորմութիւն յամէնողորմ և բազմագութ*** [=եկատերինէի] և ակն ունիմք փութով տեսանել: Վասն զի երկարութիւն բանից և գործոց ձերոց՝ ճշտումն և նուազութիւն բերէ մնացորդացս զանազանակերպ և բազմահնար մեքենայք սոցին: Որոց վասն փղցկեալ սրտիւ, արտասուաթոր աչօք և աղէխարշ մորմոքմամբ աղաղակեմք առ ողորմած և բազմագութ Տեարդ՝ Արագահաս առնել զողորմութիւն, մինչ կենդանի եմք և ի յետին չունչս, զի մեռելոյն ոչինչ օգտէ՝ դեղն որքան զօրեղ իցէ: Վերջին աղերս ծառայիդ այս է, զի մինչև ցայժմ որքան խնամք որ ունեցեալ ես ի սրտի քում առ ողորմելի ազգս մեր, ըստ գրեցելոյ Հոգևորի հօրն մերոյ Տեառն Յովսէփայ արքեպիսկոպոսին, զայնն բազմապատիկս արասցէս ի փառս Քաչելոյն և սոսկալի Հարչարանաց նորին՝ հուսուցանելով զաղաչանաց թուղթս մեր առ մեծագոյն և հզօր*** [=եկատերինէին] և առ արժանապատիւ և մեծանուն իշխան քնէազ Գրիգոր Ալեքսանդրիչ Պոտէկինին՝ շարժելով զնոսա կրկին խնամս և ողորմութիւնս: Քանզի ընդ արձակ է ամանակս, զի առիւծք ի գուբս ննջին, և աղուէսք ի դաշտս ճմին, և յուսամք, թերևս, յաջողութեամբ և ամենազօրին Աստուծոյ հասցին ձեռք ձեր ի մեզ հանդերձ ողորմութեամբ, և տեսցեն աչք մեր զփրկութիւն և զբարեկեցութիւն մեր՝ ձեռամբ ձերով: Եւ այն ամենայն ի թղթոյ Տեառն Յովսէփայ հարազատին ձերոյ իմասջիք: Ողջ լեր Տէրամբ մերով միշտ: 1784 մայիսի ելն գրի»:*

Ընդամենը տասը անուն-հայրանուն ու կնքադրոշմ ենք պտնում խնդրագրի վերջում (թեպետ ազատութեյան գաղափարով խանդավառվածները, պիտի կարծել, ավելի շատ են եղել), այն էլ, գրեթե բոլորը, երևանցիներ: Այս հայորդականութեյամբ.

1 «Մէլիք Աբրահամ դի մէլիք Օհաննէս» [Աղամալյանց]

2 «Իւղբաշի Գաբրիէլ դի Իւղբաշի Ալլահվերդի» [Գեղամյանց]
3 «Մանուկանոս Սակիչ Պօղօվ» [Գեղամյանց]
4 «Մէլքիսէթ, եղբայր Հանգուցեալ Սիմէօն Կաթողիկոսի»
5 «Օվաննէս դի մահտեսի Օհան»
6 «Ապօվ դի Վիրապ» [Ապովյանց]
7 «Իսրայէլ դի Աղաբաբ»
8 «Օվաննէս Թաւալեան»
9 «Մահտեսի Օվակիմ դի մահտեսի Մարգար»
10 «Ոսկան դի Յարութիւն»:

Սրանցից առաջին երկուսը միաժամանակ Երևանի հայության ներկայացուցիչներն էին պարսից տիրողների առջև և Այրարատյան աշխարհի ամենահարուստ և հեղինակավոր գերդաստանների նահապետները: Մանուկանոս Տեր Սահակի որդի Գեղամյանցը պարսից գառաբանի կարևոր պաշտոնյա էր և այս ու մյուս խնդրագրերի շարադրողը: Աբովյանի պապի մասին խոսելն ինքյան ավելորդ է, քանի որ նա, թերևս քանաքեռցի, բարձր հեղինակություն էր վայելում ո՛չ միայն երկրամասի աշխարհիկ, այլև հոգևոր պետերի մոտ: Օվաննես Թաւալյանին հանդիպում ենք ուղիղ մի քառամյակ հետո էլ, երբ նա մի խումբ հայերի գլուխն անցած՝ տարագրվել էր Փամբակ և ուրիշ համախոհների հետ նորից հոգում էր հայրենիքի ազատագրության մասին: Սիմեոն կաթողիկոսը արդեն սրբացած մարդ էր հայության աչքում, և այդ բավական էր, որ նրա եղբայրն ամենուր ճանաչվեր: Մնացածների ո՞վ և ի՞նչ լինելու մասին առայժմ բավարար ապացույցներ չունենք:

Ինչևէ, երկրամասի ամենաերևելիներն են խնդրագրի առորագրողները, և Աբովյանի պապն էլ նրանց մեջ: Անշուշտ, նախքան այս և դեռ չհայտնաբերված մյուս երկու ազնվատոհմիկները կազմելը, նրանք մի քանի անգամ հանդիպել և հանդամանորեն կշռադատել են ձեռնարկած քայլի հետևանքները, բայց ավելի բանական եզք, քան Ռուսաստանին օգնության կանչելը, չեն նշմարել:

Որպես արևելցիներ, նրանք խոսում են այլաբանական պատկերներով ու ծաղկուն արտահայտություններով, բայց և՝ արժանապատվության բարձր զգացումով ու խոհականությամբ, որոնք, սակայն, չեն խանգարում ճշտորեն գնահատելու առեղծված իրադրությունը, որը հղի էր ամենաողբերգական հետևանքներով: Նրանք աղերսում են՝ «Արագահաս առնել զողորմութիւն, մինչ կենդանի եմք և ի յետին չունչս, զի մեռելոյն ոչինչ օգուտ՝ դեղն ոսքան զօրեղ իցէ», շտապեցնում, որովհետև, կարծես, նպաստավոր են իրադրությունները, «զի առիւծք ի դուբս ննջին, և ազուէսք ի պաշտս ճեմին»: Դժվար էր

Այրարատյան աշխարհի ու հայության տառապանքներն ու տագնապները ավելի թափանցիկ ներկայացնել, քան այս այլաբանությունների միջոցով:

Ինչպես տեսանք, Երևանի երևելիները գեներալին խնդրում ու խորհուրդ էին տալիս իրենց մասին անհրաժեշտ ուրիշ տեղեկություններ իմանալ Հովսեփ Արղությանից, մի մարդուց, որին վերապահված էր գլխավոր դերակատարը լինելու այս հերոսական ողբերգության: Նա էր առաջմ հայերին ու ռուսներին միմյանց կապող օղակը, մշտապես ծագող հարցերին հանդամանալից պատասխաններ տվողը և անհրաժեշտ տվյալներ հայթայթողը, մանավանդ որ առաջին երեք նամակներն էլ նրան էին ուղարկված՝ ըստ պատկանելույն հասցնելու, իրենց անսասան հավատի ու բաղձանքի մասին խոսելու և ռուսաց գալուստը փութացնելու համար: Պահպանվել է նույն անձանց կնիքներով վավերացված մի նամակ էլ՝ Հովսեփ Արղությանին ուղղված, որ ավելի համառոտ է, բայց և գործնական: Ահա՛ այն.

«Գերամաքուր և սրբազնագործօղ Սուրբ Աչ Տեառնդ Յովսէփայ Արհիապանծ Եպիսկոպոսիդ և Արբենասարաս Դիդիդ բոլոր Ազին Հայոց, որք ի կողմանդ Հիւսիսոյ, մեծաւ խոնարհութեամբ և կարի փափակմամբ համբուրեմք:

Յուսոյ և բերկրութեան թուղթդ մեզ էհաս, և զոր ինչ ի նմա գրեալն էր, ծանեաք, և զմնացորդսն ևս սիրելի եղբայրն մեր և հարազատ ծառայն քո տիրացու Ստեփաննոսն պատմեաց մեզ. Աստուած անպակաս արասցէ հրամանացդ ի գլխոյ մերմէ, ըստ աշխատանացդ և զվարձս կրկնապատիկս տացէ:

*Արդ ահա՛ երիս թուղթս գրեցաք քանի մի խորհրդական մարդկանց կնքաւ, որպէս տեսանելոց ես. նախ՝ հզօր և հանրահրամանի*** [=եկատերինէ] *Մեծի: Երկրորդ՝ գերափայլ և մեծ իշխան Գրիգոր քնէազին, երրորդ՝ մեծազօր և բազմահնար Պաւլ Սարդիչ մեծի ասպետին, և աղերսանօք ժտեմք, զի զաղաչանաց թուղթս մեր մատուցես առ ողորմած տեառսն մեր, և մեք աներկբայ ակն ունիմք փրկութեան և ողորմութեան:*

Այսքան էր մերս խնդիր, որոց սպասեմք ընդունիլ փութով հասարակաց Ազատութիւն և յատկացելոց՝ զողորմութիւն, ուստի հայցեմք ի բազմաշխատ և յոգնաջան Տեառնէդ մերմէ փութով հասուցանել մեզ յոյս բանիւ կամ գործով, վասն զի մերձ է լինիլ զերիս ամս, որ զձայն Ահաւոր լսեմք, և զգործն անագան, որոց յաջողեսցէ Տէր կատարել զգործս և իւրեանց ցնծութեամբ:

Ողջ լեր Տէր մեր ի պարծանս նուաստ ծառայից քոց միշտ:

1784 մայիսի ելն գրի»:

Արծրուքյանին ուղղված այս նամակի առարտքողներն էլ, ինչպես ասացինք, նորից նույն տասը հոգին են, միայն թե կնքագրչմների հերթականությունը փոքր-ինչ խախտված է. Աղաբաբի որդի Իսրայելի ազգանունը 7-րդից բարձրացված է չորրորդ համար, դրա հետևանքով էլ Պարոն Ասլովը վեցերորդից իջել է յոթերորդ տեղը[8]:

Թե ե՞րբ և ի՞նչ ճանապարհով այս և նախորդ նամակ-աղերսագիրը հասան Հովսեփ Արծրուքյանի և դներալ Պ. Ս. Պոտյոմկինի ձեռքը, ի՞նչ եղան կայսրուհուն ու Գ. Ա. Պոտյոմկինին հասցեագրվածները, չգիտենք, բայց հայտնի է, որ չատ չանցած՝ պահանջվում է Այրարատյան հայոց հատուկ ներկայացուցչին ևս ուղարկել: Վիճակն ընկնում է Սահակ Գեղամյանցին (Սահակ Սակիչ Պալով), որը և 1784-ի օգոստոսի 1-ին, Ղուկաս Կարնեցու հաճոքյունն ու օրհնությունը առանալուց հետո, ուղևորվում է նախ՝ Տիլզիտ, ուր վրաց Հերակլ թագավորի հետ հանդիպումներ ունենալուց և հանձնարարություններ առանալուց հետո գիմում է Գեորգիևսկ, ներկայանում Պ. Ս. Պոտյոմկինին, որ էլ չատ-չուտով նրան ուղարկում է Պետերբուրգ՝ ժամանակ չտալով Հովսեփ Արծրուքյանի հետ տեսնվելու և վերջինի հրահանգներն առանալու[9]: *Այնուհետև նրանց կապող օղակը դառնում են լատարյանները: Իսկ թե Սահակ Գեղամյանցն ինչպե՞ս էր լուրեր տալիս Երևանում թողած իր համախոհներին՝ Մելիք Աբրահամին, Գաբրիել Յուզբաչուն, Պարոն Ասլովին և մյուսներին՝ ռուս սրքունիքի ու Գ. Ա. Պոտյոմկինի հետ ունեցած իր հանդիպումների մասին, մնում է անորոշ:*

Գիտենք նաև, որ Արծրուքյանը Ս. Գեղամյանցին էր ուղարկել հայ-ռուս պաշնադրի իր նախագիծը՝ խորհուրդ տալով առաջիկայում դեկավարվել նրանով, իսկ սեպտեմբերի 10-ին, Գ. Ա. Պոտյոմկինին ուղղված նամակում, լավատեսնս բնութագրելով Ս. Գեղամյանցին՝ խնդրել էր լսել ու ընդառաջել նրան: Մանոթանանք այդ տողերին ևս, որովհետև անմիջականորեն վերաբերում են Այրարատյան աշխարհի երեսփոխանների դրաշավորությամբ սկսած, բայց և կարճ ժամանակում չատ հետևն գնացած դիտավորություններին:

«...Զարթնան և բնակիչք Արարատեան, և ցանկան ի ձեռն Ձերոյ պայծառափայլութեան լարի մերձնորդութեամբն ազատիլ ի դառն

---

8 *Տե՛ս Արծար Հովհաննիսյանի նշված աշխատությունը, էջ 117 և 272 և լուսատիպ հավելվածը: Բուն նամակը պահվում է Հին վավերագրերի պետական կենտրոնական դիվանում (fond XXIII, գործ 13, մաս VIII, թ. 166ու–բ և 165–167):*

9 *Մանրամասնությունները տե՛ս Արծար Հովհաննիսյանի նշված աշխատության մեջ, էջ 119–121:*

*ծառայութենէ նեղչաց իւրեանց, զանկեալ թագն կանգնել և վերստին նորոգել զմանկուքիւն ազատութեան իւրեանց իւրև զարծուի: Ուստի փութացան առաքել առ Ձեզ, ամենախոնարհ աղաչանօք իւրեանց, Ստեփանն Սահակեան՝ այր հանճարեղ և երկայնամիտ և ի բանս խորհրդական, որ մինչև ցայժմ ի բազում բանս պիտոյացեալ է գալով Սերգէեվիչին ի տեղւոջէ իւրմէ, վասն որոյ խոնարհաբար խնդրեմ՝ մի՛ ընդունայն համարել զխնդիր նոցա, այլ տալ զօգնութիւն ըստ յուսոյ իւրեանց և լինիլ նոցա առիթ փրկութեան և արձանագրել զանձն **Մեծի կայսերուհւոյն** ի մէջ Արարատայ ի տեսիլ աշխարհի թէ՝ սա՛ է փրկիչն ազգին Հայոց, և թողուլ վասն ձեր անուն յաւիտենական»*[10]:

Հայոց բազմանքների և ռուսների արտաքին քաղաքականութեան այսօրինակ զուգադիպութիւն դժվար էր երևակայել: Ռուսներն, իսկապես, նույն շրջանում ծրագրում էին Անդրկովկասում, Վրաստանի կողքին ստեղծել նոր Հայաստան ու Աղվանք, կազմել վերջիններիի համար կառավարութիւններ և բանակցութիւններ սկսել դրանց ներկայացուցիչների հետ՝ Ռուսաստանի կազմում ներգրավելու վերաբերյալ: Դեռևս միմիայն նախագծերի ու դիվանագիտական վավերաթղթերի մեջ վերածնված այդ Հայաստանը պետք է լիներ շատ ընդարձակածավալ և իր մեջ առներ «Բոլոր հին հայկական հողերը»՝ նախապես դրանք ռուսական զննքով և հայերի զինակցութեամբ նվաճելով Պարսկաստանից և Թուրքիայից[11]:

Թուրքերը, որոնք հարյուրամյակներ շարունակ ձգտում էին նվաճել ողջ Կովկասը, անտարբեր դիտողներ չէին, ինչպես և անտեղյակ՝ Ռուսաստանի հեռուն դնացող մտադրութիւններին, ուստի ամեն միջոցի դիմում էին, որպեսզի կասեցնեն նրա առաջխաղացումը դեպի հարավ և խանգարեն հայկական պետականութեան վերականգնմանը: Ավելին, նրանք շատ հզոր ու հավատարիմ դաշնակիցներ ունեին, ի դեմս Անդրկովկասի մահմեդական խանութիւնների, որոնք 1784 թ. աղերսագիր էին ներկայացրել Թուրքական կառավարութեանը՝ Բարձրագույն Դռան հովանավորութեան տակ անցնելու խնդրանքով, մինչդեռ հայկական ուժերը փոքրաթիվ ու ցրիվ էին, թուրք ու պարսիկ սարդար-խանների հսկողութեան տակ:

Թուրքերի ո՛չ պակաս զորավոր դաշնակիցներից էին նաև լեռնական հրոսակները, որոնց պարբերական ասպատակութիւնները Վրաստանում և Այրարատյան աշխարհում հովանավորում էր օսմանյան կառավարութիւնը՝ անհրաժեշտութեան դեպքում նրանց

---

10 *Ա. Հովհաննիսյանի աշխատութեյան լուսաոիսկ հավելվածից:*

11 *Նույն տեղում, էջ 131:*

ապատան տրամադրելով Ախլցխայում և Կարսում: Այսպես եղավ և՛ 1874, և՛, հատկապես, 1785–1786 թթ.: Թո՛ղ որ 1785-ին Հակառուսական չարժումներ սկսվեցին նաև Հյուսիսային Կովկասում:

Լեռնական հրոսակների հետ կողք-կողքի ու նրանց հետքերով չարժվում էին թուրքական թափառախմբերը, լրացնում նրանց պակասը, հողին հավասարեցնում հրաշքով փրկված բնակավայրերը: 1784–1786 թթ. Արցախի, Լոռու և Այրարատյան աշխարհի հայությունը կրկնակի տառապանքներ:

Ներքին ու արտաքին այս իրադրությունները ներսում ու թուլացնում էին ռուսների դիրքերը: Նրանց հայկական հետախնդրությունների մեջ հին կիրքն ու ջերմությունն այլևս չէին երևում: Աստիճանաբար անուշադրության էր մատնվում նաև Այրարատյան հայոց ներկայացուցիչ Ս. Գեղամյանցը: Ընկրկում էին նաև Երևանի խմբակցության անդամները՝ հույսերը դնելով ավելի հաջողակ ժամանակների: Ոգևորությամբ սկսված գործը ողբալի վախճան էր գտնում՝ թևաթափ դարձնելով Պարոն Ապովին ու մյուսներին:

Ուշագրավ է, որ Երևանի հայոց առաջնորդների ազերսագրերը ժամանակին հայերենից ռուսերեն թարգմանող լեյբգվարդիական (անձնապահական) հնձյալ գնդի կրտսեր ենթասպա (կապրալ) Վասիլ Վահանովը (Վարպան Վահանյա՞ն) 1786-ին, առանձին գրքույկով, թարգմանեց ու հրատարակեց Մովսես Խորենացու Ողբը (Плачь о Армении. Из сочинений славного армянского историка Моисея Хоринацеса, перевел В. В..., Санктпетербург, 1786, 27 էջ), իրողություն, որն ինքյան ցույց է տալիս, որ թարգմանչին էլ էր պատել իր հայրենակիցների ցավը, և Այրարատյան աշխարհի հայության փայփայած ազատագրական պատրանքների այս նոր խորտակումը լալու ավելի հարմար ձև նա չէր կարող գտնել, քան հանճարեղ քերթողահոր Ողբի հրատարակ հանելը և ռուս հասարակայնության ծանոթացնելը[12]:

Մի չնորհակալ գործ էլ է կատարում Վ. Վահանյանը. նույն 1786-ին պետերբուրգաբնակ հայ ազնվական Մարգար Աստվածատուրի Մանիչարյանցի հորդորով ու աջակցությամբ, ապա և Ստեփան Գեղամյանցի օգնությամբ՝ ռուսերեն է թարգմանում ու հրատարակում Հակոբ Շահամիրյանցի (թե՞ Մ. Բաղրամյանի) «Նոր տեսարակ, որ կոչի

---

12 Թարգմանությունը ձոնված է Եկատերինա Հովհաննեսի Լազարյանցին: Աշխատասիրողը հույս է հայտնում, որ իր հովանավորուհին այդ գրքում «կգտնի իր ղպայուն սրտին, կարեկցանքին և արցունքներ թափելուն արժանի նկարագրություններ՝ մարդկային թշվառությունների վերաբերյալ» (էջ 5):

Յորդորակ» («Краткое историческое и географическое описание Царства Армянского») աշխատությունը՝ ձոնելով այն Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինին, դրանով իսկ ուռւս համապատասխան շրջաններին և, առաջին հերթին, գեներալ-ֆելդմարշալին հասցնելով թշնամիներից զարկված ու թալանված հայության ողբն ու օգնության կանչերը և հիշեցնելով նրանց, գեթ վերջին անգամ, երբևէ տված փրկության խոստումները (գրքի չափածո բնաբանն այդ ոգով է կազմված):

Ողբից հետո, բնականաբար, մարդ պահ մի ուշքի է գալիս, հիշում չօգտագործված հնարավորությունները, երևակայության մեջ դեռ չվայելած երանությունները տավերագծում: «Նոր տեսարկի» ուռւսերեն թարգմանությունը այդ կարճատև դադարի պտուղն էր, որի առաջ բերած ազդանքները մեզ անհայտ են մնում: Որքան գիտենք, հայոց թագավորության վերածնման ծրագրեր այնուհետև չկազմվեցին: Յարերի հոգը Անդրկովկասի նվաճումն ու Ռուսիային կցելն էր, չնայած սին խոստումներ տվողների կարելի էր հանդիպել: 1787-ին նուչն Մանիչարյանցի ծախքով, Պետերբուրգում, տպագրվեց Եղիշեի Պատմությունը Վարդանի և Հայոց պատերազմի մասին, հայոց լեզվով, որ անուղղակիորեն հասկացնում էր հայրենակիցներին, թե ազատագրության միակ հույսը սեփական բազկի ուժին ապավինելն է: Այլ ելք նրանք, գոնե այդ ժամանակ, չէին նշմարում:

Աբովյանն իր երջանկահիշատակ պապի՝ Պարոն Ալովի առանձնահատուկ պաչտամունքն ուներ և դեռ փոքրուց անհագ հետաքրքրություն էր ցույց տալիս նրա հիշարժան խոսքերի ու գործերի նկատմամբ: Դորպատյան տարիներին գրառված (գերմաներեն) և միայն Հաքսահաուզենի մանանակի վերապատումներով հայտնի նրա մանկապատանեկան հիշողություններն շատ էջեր հավերժացնում էին Պարոն Ալովի կերպարն ու առաքինի գործերը:

Եթե ո՛չ հորից ու հորեղբորից, ապա գեթ Ադամալյանց տան նահապետներից կամ մեկ ուրիշից, դեռ 20-ական թթ., անդամ ռուսպարսկական պատերազմի հաղթական ավարտից հետո էլ, մինչ երիտասարդ Խաչատուր Աբովյանը խորհում էր հայոց քաղաքական ապատագրության ուղիների շուրջ, իսկ այնուհետև՝ ցնծությամբ ողջունում ռուսների մուտքը Արևելյան Հայաստան, պետք է տեղեկացած լիներ իր պապի ու մյուսների երբեմնի դաղտնախորհուրդ բանակցությունների մասին, որոնք ընդառաջ էին գնում հայոց հարյուրամյա բաղձանքներին՝ Ռուսաստանի սրրապետության տակ անցնելու:

Եվ ինչպես որ պապն ու համախոհները XVIII դ. 80-ական թթ. մղձավանջային անցուդարձերի մեջ վստահորեն կողմնորոշվում էին դեպի Ռուսաստան, ինքն ևս այլ ուղեցույց աստղ, քան բևեռայինը՝ չորոնից երբեք, մտածելով, թերևս, որ ո՛չ միայն խելամիտ չէր լինի, այլև սարսափելի վիրավորանք կհասցներ պապի սուրբ հիշատակին:

Գաղտնիք չէ, որ 30-ական թթ., մինչ եվրոպական պիտուքյան ու մշակույթի ուսումնասիրության ու յուրացման շնորհիվ Աբովյանի աշխարհըմբռնումները հեղաշրջվեին, և նա սկսեց հայոց կյանքի ու աշխատանքի բարվոքման նոր ուղիներ և ձևեր նշմարել, այնուհանդերձ չարունակեց փառաբանել մարդկայնության ու բարոյականության մի շարք սկզբունքներ, որոնք այնպես արմատացած էին իրենց դարպատանում և որոնց կյանքի կոչողը Պարոն Ապովն էր՝ հայ նահապետական դարդատանի ավանդների ու կենսափիլիսոփայության կրողն ու արտահայտիչը:

Աբովյանի հետևողական կողմնորոշումը դեպի Ռուսաստան այս պարագաներում ավելի է իմաստավորվում: Այժմ արդեն հասկանալի է, թե ինչու կյանքի ամենածանր պահերին անդամ նա աներևակայելի էր պահում իր հավատը և քարոզում ու պատգամում էր հայրենակիցներին՝ ռուսների հետ մշտապես լինել բարեկամ, որովհետև դա է հայության գոյության ու վերածնության նախապայմանը ներկա դարաշրջանում:

Այս ամենի իսկուն վկան դարձավ «Վերք Հայաստանին»:

ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

Խաչատուր Աբովյանի անվան ու ստեղծագործության հետ սերտորեն կապված են մեր մշակույթի և հանրային մտքի պատմության մի շարք հանգուցային հարցեր ու շրջադարձային իրողություններ. հայոց նոր գրականության սկզբնավորումը, հանուրիին հասկանալի աշխարհաբարի համար մղվող պայքարի ամենաբորբոքուն ու դրամատիկ շրջանը, նոր պատմագրության, իմաստասիրության, ազգագրության ու բանագիտության առաջին քայլերը, հայ ժողովրդի համախմբումը մայր հայրենիքում և որպես ազգ ձևավորվելու ընթացքը. օտար բռնապետական լծից արևելահայության փրկությունը և ռուսական հզոր տերության հովանու տակ նրա անտեսական և մշակութային կյանքի առաջընթացը և այլն: Այս անչափ խորհրդանշական իրադարձությունները դժվար թե տեղի ունենային չատ կարճ ժամանակահատվածում, եթե Ռուսաստանն ու ռուս ժողովուրդն իրենց մարդասիրական օգնությունը ժամանակին չհասցնեին:

Հայ և ռուս բարեկամության գաղափարի ամենաեռանդուն ժողովրդականացնողը և ամենանվիրված պաշտպանը Խաչատուր Աբովյանն էր: Նրա մեծագույն նպատակն այդ ժողովուրդների հոգևոր ու քաղաքական սերտ մերձեցումն էր, առանց որի աներևակայելի էր հայության գոյությունն ու բարգավաճումը:

Այս բոլորով հանդերձ՝ հայ նոր գրականության և հասարակական մտքի պատմության հետազոտողների համար Աբովյանի ռուսական առնչությունների հարցը յուրօրինակ գայթակղության քար է դարձել: Մասնավորապես վերջին տասնամյակների հետազոտողներից ոմանք Աբովյանի ստեղծագործությունները լրջորեն վերընթերցելու, նրա հայացքները անկանխակալ և համակողմանի քննության ենթարկելու փոխարեն ակսել են մտացածին «մեկնաբանություններով» աղավաղել հանրահայտ ճշմարտությունները. կասկածել հայ ժողովրդի պատմական բախտի մեջ Ռուսաստանի խաղացած դերի մասին մեծ գրողի ու մտածողի ասած խոսքերի անկեղծությանը, որոնել դրանց մեջ ինչ-որ թաքնված ենթաիմաստ կամ դիտավորություն, որպիսիք իրականում չկան և չէին կարող լինել:

Շեշտելով պատմական իրադրություններն ու ժամանակները՝ որոշ ուսումնասիրողներ Աբովյանին վերագրում են տեսակետներ ու մտքեր, որ նա ընդհանրապես չի՛ ունեցել կամ արտահայտել: Ի վերջո,

Աբովյանը հռչակվում է «հակապետական գործիչ» ու «բունտար», և մտացածին հանցանքների համար «դատապարտվում» մի այնպիսի պատժի, որն, ընդհանրապես, ածանոթ է հնօրյա Ռուսիայի բանտերի և իրավունքի պատմությանը[1]*:*

Գրականագիտի խիղճը մեղ իրավունք չի տալիս անտարբեր դիտողի դերում մնալ և հանդուրժել պատմական ճշմարտությունների այսօրինակ քմահաճ մեկնաբանմանը, մեծ հայրենասերի մաքուր կերպարի այսօրինակ աղավաղմանը, որքան էլ վերջինս գայթակղիչ լինի: Գաղտնիք չէ, որ անցյալի դեմքերն ու դեպքերը վեհ են ու հերոսական իրենց իրական գործերով ու ընթացքով, եթե մինչևիսկ՝ ժամանակակից հայեցակետից վերլուծելով, նրանց մեջ ինչ-ինչ տվերներ էլ երևան գան կամ նկատվեն:

Աբովյանը և Ռուսաստանը թեման մի քանի գլխավոր հայեցակետեր ունի, որոնցից ընդհանուր ձևով քննության կառուցեր երկքը. Աբովյանի ռուսական կողմնորոշման խնդիրն, ընդհանրապես, Աբովյանի առնչությունները ռուսական մշակույթի հետ և Աբովյանը որպես ռուսաց լեզվի, գրականության ու մշակույթի տարածող XIX դ. 30 — 40-ական թվականների հայ իրականության մեջ:

Սկսենք բուն նյութից:

*ա. **Աբովյանի ռուսական կողմնորոշումը.** — Հայ ժողովրդի համար ռուսական կողմնորոշումը հավասար էր ազգության ֆիզիկական գոյության և նորքին, հոգևոր ազատության պահպանման: Ամենայ արտաքին օգնության նա անկարող էր վերականգնել իր խաթարված քաղաքական կյանքը: Երես թեքել Ռուսաստանից կամ խուսափել նրա հետ մերձենալուց, նրա գինակցությունից, նշանակում էր այսուհանդ նա պատասպարավել է՛լ ավելի վատթար սարկության և լիակատար ոչնչացման: Հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական պարզացումը*

---

[1] *Աբովյանի անհետացման վարկածի լուծման վերջին, ճախող փորձին անդրադարձել ենք հատուկ հոդվածով (տե՛ս «Լրաբեր», 1977, № 5. «Աբովյանի անհայտացման հին վարկածի նոր «մեկնաբանումը») ու ցույց ավել, որ դա պիտության հետ ընդհանուր ոչինչ չունի: Հիմա էլ այդ կարծիքին ենք: Ակադեմիայի հրատարակությամբ, դրանից հետո. 1979 թ. լույս է ընծայվել վարկածի արծարծողներից մեկի՝ Վ. Դադարյանի գիրքը, որի մեջ կրկնվում են նույն անհամոզիչները ու խնդրահյուծված փաստերը՝ առավել չափազանցված: Այժմ էլ Աբովյանը ներկայացվում է որպես քաղաքական աքսորական և 1853 թ. գնա կենդանի, Սիբիրում կամ այլուր ուսուցչության պարապող անձնավորության (բայց ինչ՞ը, չի ասվում): Սա միամիտ լեգենդ է: Այսօրինակ փորձերը միայն ապակողմնորոշում են անտեղյակ ընթերցողներին:*

XVII–XVIII դդ. սահմանագծին հասել էր մի այնպիսի ողբալի վիճակի, երբ առանց հզոր հովանավորության այլևս անկարելի էր նրա առաջխաղացումը: Այս բանը հրաշալիորեն հասկանում էին վերջին դարերի հայ ազատագրական չարժման առաջնորդները՝ Իսրայել Օրին ու Հովսեփ Էմինը, Եսայի Հասան-Ջալալյանցն ու Սիմեոն Երևանցին, Հովսեփ Արղությանն ու Ներսես Աշտարակեցին, իսկ հետագայում՝ Հարություն Ալամդարյանն ու Խաչատուր Աբովյանը, մինչ չարունակում էին պարսկական ու թուրքական բռնապետական լծից Հայաստանի լիակատար ազատագրման ու վերամիավորման ուղիների որոնումը, մինչ հյուսում էին վերածնված ու լուսավորված Հայաստանի մասին իրենց չքեղ երազները, իրենց հանապազօրյա գործունեությամբ նպաստում ռուս անվան հեղինակության բարձրացմանը Արևելքի ժողովուրդների չրջանում, արագացնում պարսից դժոխքից հայության փրկության ժամը, որն և, ի վերջո, հնչեց 1827 թ. հոկտեմբերի 1-ին:

Կյանքի դասերն էին Աբովյանին հասցրել այդ աները համոզմանը, որին հետագայում նա երբեք չդավեց: Աբովյանը հրաշալիորեն ըմբռնում էր կատարվածի ողջ վեհությունը և չրջադարձային նշանակությունը. Ռուսաստանը հայ ժողովրդին փրկել էր ֆիզիկական ոչնչացումից, ազատել սարկական հնազանդությունից, առել իր հովանավորության տակ, հնարավորություններ ստեղծել ազգորեն համախմբվելու և ինքնաճանաչման գալու: Այս ամենը ինքնաբուխ ցանկություն էին առաջացնում որոշակի վերաբերմունք արտահայտելու, և Աբովյանի ամենատարբեր ստեղծագործությունների մեջ, հիրավի, գտնում ենք մեծ չրջադարձի անցուդարձերի արժեքավորման խորհրդաստ փորձեր: «Իմ հայրենիքի ազատագրության միտքը, — գրել է նա, — պետք է ողջ կյանքիս ընթացքում խնդությամբ ու չնորհակալությամբ լցնի իմ սիրտը և ջերմ մաղթանքներ ուղղի Ռուսաստանի անսասանության և հարատևության համար դեպի այն հակը, որի հայրական սիրտը մեզ էլ արժանացրել է մի բարեգործ կառավարության՝ բոլոր այն նեղություններից ու տանջանքներից հետո, որոնց ներքո մենք խորապես տառապում էինք դարեր չարունակ»[2]: Ավելի ու ավելի խորանալով իրադարձությունների մեջ՝ Աբովյանը կանխատեսում է նաև Ռուսաստանի մեծ ու քաղաքակրթիչ դերը ողջ Արևելքի կյանքում: «Իմ անխախտ համոզումն է, — հայտարարում էր

---

2 Ե VIII, 65 և 82 (բնագիրը ֆրանսերեն է, թարգմանությունը վերանայված է):

նա, — որ միմիայն Ռուսաստանն է ի վիճակի Ասիայի ժողովուրդներին հասցնելու նրանց սրտանց ատելի քրիստոնեությանը»[3]:

Այս գաղափարները ու ըմբռնումները դրսևորվել են Աբովյանի այն բոլոր ստեղծագործություններում, որոնք առնչվում կամ վերաբերում են Արևելյան Հայաստանի՝ ռուսական հզոր տերության կազմի մեջ մտնելու դարաշրջանի հայության կյանքը, կենցաղը, մտածողությունը, ազատագրական որոնումները, հերոսական սխրանքները ու պատմական ողբերգությունները, մեծ լուսավորչի համարձակ ծրագրերը ազգային կյանքի վերածնության մասին:

Այդ ստեղծագործությունները հասուկենտ չեն և ո՛չ էլ կյանքի են կոչվել պատահականորեն, այլ բազմաթիվ են ու բազմաժանր. նաև՝ խորապես մտածված ու վերապրած էջեր, թղթին հանձնված մեծ ջրղի ու մտածողի ստեղծագործական կյանքի ավելի քան քառասուն տարիների ընթացքում: Դրանց երախայրիքը «Նոր ի՞նչ են այս ցույցք մերս Հայաստանի...» բանաստեղծությունն է՝ գրված 1827 թ. հոկտեմբեր — նոյեմբերին, որին այնուհետև հաջորդում են արձակ ու չափածո մի շարք ուրիշ երկեր՝ «Խնդամիտ զգայմունք երախտապէտ Հայկազին յազատութիւն Հայրենեաց իւրոց» (1828 — 1830), «Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ» (1829), «Մուտ Հայկայ ի Հայաստան» (1830), «Մտածմունք ի տեսիլ Հայրենեաց» (1840°), «Աղերս առ Մուսային» (1840°), «Վնասք Հայաստանի» (1841), «Հազարփեչեն» (1841°), «Մուտ ի Հայրենիս» (1844): Սրանց գաղափարապես մերձենում են Աբովյանի ուղեգրությունները ու ակնարկները՝ «Առ բարեհոնութ ա սիրելի աշակերտս իմ» (1838), «Հուսպարակական պատերազմի նախօրեին» (1846°), «Ուղևորություն գնալի Անիի ավերակները» (1847), հրապարակային գանազան ելույթներ, նամակներ և կրթական-լուսավորական նախագծեր՝ մատուցված ռուսաց կայսերը, Անդրկովկասյան գլխավոր հրամանատարության վերատեսչությանը, Բնախույզների մոսկովյան կայսերական ընկերության վարչությանը՝ ընդհուպ մինչև 1848 թ. սկզբները, որոնց բոլորի բուն նպատակը Ռուսաստանի հովանու տակ հայ և անդրկովկասյան ժողովուրդների տնտեսական ու կրթական վիճակի վերափոխումն է, Ռուսաստանի նկատմամբ հայ ժողովրդի երախտագիտական զգացումների մշտաբորբոք պահպանումը: Գրական-հրապարակախոսական վերոհիշյալ երկերի մեջ Աբովյանը փառաբանում է ռուսներին՝ նրանց անշահախնդիր եղբայրական օգնության համար:

---

3 Նույն տեղում, էջ 83:

Մի դեպքում դրանք տևական բռնության մեջ չնչահեղձ դարձող հայության զավակների բաղձանքն ու աղերսանքն են՝ ռուսաց հովանավորությանն արժանանալու համար. «Տե՛ր Աստված, դու մեր ռուս թագավորի սիրտը ահմ քցես, որ գա, մեզ ազատի...»[4]*, մյուս դեպքում մատնանշում են այն բաղձալի պայմանը, որ անհրաժեշտ է առանց ռուսական տերության հովանավորության, հետևաբար՝ ամեն ջանք պետք է գործադրել, որ ռուսական գնդերն ընդմիշտ մնան Այրարատյան աշխարհում, կամ, ինչպես Աբովյանի քնարական հերոսն է ասում, «իրանց բարի ոտը մեր աշխարհիցը չկտրեն, որ բալքի մեր հայրենիքը նրանց արծվի թևերի տակին զորանա, մնծանա, գարգերը մոռանա ու էլ նա իր առաջին փառքին հասնի»*[5]*:*

Այդ նույնն է պատգամում Աբովյանն իր քնարական, սրտակեղեք խոստովանության մեջ՝ արված Մուսային. խորասուզվելով մեր ազգի ողբերգության իրական պատճառների մեջ, ի վերջո, նա գտնում է հայության կործանված տունը վերաշինելու վստահելի նեցուկն ու պատվարը, որից չեղվելը համազոր էր հանցափորձության: Ուստի Աբովյանն սթափ մտքով, բայց և զգացված՝ փառաբանում է այդ հովանավորությունը.

Մեր ջերմ արեգակ զիւր շողս սփռեսցէ՛,
Մեր սուրբ դաշտօրայք զկնդրուկս խնկեսցէ՛
Առ մե՛ր լուսատու Արքայ մեծազօր,
Առ մե՛ր Հայր գթած, բարի և հզօր,
Կնդրուկ սրբութեան սիրոյ սուրբ սրտից,
Կնդրուկ անուշից, զոհ ողջակիզից,
Արդար սեղանոյ Նոյան սուրբ դաշտաց...
Ձմեր մայր, զտեր, մեր պաշտպան-փրկիչ
Ձնոր մեր այս Նոյ տօնել խնդալից.
Տօնել, տօնախմբել և նաւակատել,
Երգել, փառատրել զմուտ նորա և զել.
Ձմեր սիրտ, հոգի նմա զոհ մատնել,
Եւ զմեզ ընդ նորայն արծուի թևովք
Ի չար թշնամեաց պահել, պահպանել...[6]*:*

---

[4] *Ն*, III, *33:*

[5] *Նույն տեղում, էջ 114:*

[6] *Ն*, I, *211–212:*

Խորհրդանշական են, վերջապես, Աբովյանի յուբօրինակ հոգևոր կտակը դարձած այն խոսքերը, որոնք գտնում ենք իր անհետացումից փոքր-ինչ առաջ, հրացայտ սլացքով գրված վերջին կարևոր ստեղծագործության՝ «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ճամփորդական խորհրդածությունների մեջ: Հայրենակիցների ուշադրությունը հրավիրելով այն մեծ կորուստների վրա, որ ունեցել է Ռուսաստանը Արևելյան Հայաստանի փրկության համար մղված մարտերում՝ թափելով իր ազգի հազարավոր զավակների արդար արյունը, Աբովյանն արյամբ սրբագործված այս բարեկամությունը հավերժ պահելու պատգամ է ուղղում իր հայրենակիցներին. «Եվ թո՛ղ վեր ելնեն բագրատունիները, թո՛ղ հառնեն Տիգրաններն ու Հայկյան հսկաները՝ արժանավայել կերպով օրհնելու տոթ, կիզիչ Հարավը բարեկարգող Հյուսիսի որդիների առաքինի գործերը: Եվ թո՛ղ Հայաստանի ամայացած, բայց կրկին կենդանացած տաճարներում վերառաքվի միայն մի՛ աղերս, միայն մի՛ աղոթք. Աստված, պահի՛ր թագավորին և հզոր ու բարերար սրբազան Ռուսիան»[7]*:*

Վերջին ժամանակներս, երբեմն, հայտարարվում է, որ իբր Աբովյանը միմյանցից տարբերել է երկու Ռուսաստան և ռուսական երկու մշակույթ կամ կուլտուրա. վառաբանել է դեմոկրատականը, հոգնակս մերձեցել հեղափոխական Ռուսաստանի հետ, բայց և հիմքից մերժել ու նշավակել պաշտոնականը, միապետական Ռուսաստանը: Սա չփաստարկված, միամիտ և հակապատմական տեսակետ է: Աբովյանն իր համոզումներով ու էությամբ մինչև ուղն ու ծուծը լուսավորիչ է, նրա անկեղծ համոզմամբ՝ «Ազգը, որ կա, մի մարմին ա, ամեն մարդ՝ նրա անդամը: Ամենն էլ ձեռներիցը էկածը պետք է աննն, ինչքան կարողություն ունին, միմյանց քոմակ աննն, որ առողջ, սաղ, չալամաթ մնան»[8]*: Այս ըմբռնումը յուբօրինակ հավաստումն է ռուս և արևմտաեվրոպական լուսավորիչներին տրված բնութագրի. «... նրանք միանգամայն անկեղծորեն հավատում էին ընդհանուր բարօրությանը և անկեղծորեն ցանկանում էին այն, անկեղծորեն չէին տեսնում (մասամբ դեռ չէին կարող տեսնել) հակասությունները այն կարգի մեջ, որ ճորտատիրականից էր աճում», «լուսավորիչներն իրենք իրենց հատուկ ուշադրության առարկա չէին առանձնացնում բնակչության ոչ մի դասակարգ, խոսում էին ո՛չ միայն ժողովրդի մասին ընդհանրապես, այլև նույնիսկ ազգի մասին ընդհանրապես»:*

---

7 *Ե* VII. *149:*

8 *Ե* III, *237:*

բ. Աբովյանի առնչությունները ռուսական մշակույթի հետ. — Մի անըմբռնելի ձգտում ունեն Աբովյանի գրական առնչությունների ուսումնասիրողները: Առանձին բանասերներ, չգիտես ինչու, իրենց մի տեսակ ընկճված են զգում, որ Աբովյանը չի հիշվում Պուշկինի, Լերմոնտովի, Բելինսկու անձնական բարեկամների շրջանում: Հայ «տարաբախտ» գրողին այդ «անցանկալի» վիճակից դուրս բերելու համար ոմանք մտացածին ու կեղծ զուգահեռներ և հանդիպումներ են հորինում վերոհիշյալների հետ՝ չունենալով ձևքի տակ և ո՛չ մի նշանախեց: Նրանք մոռանում են, որ Աբովյանը, իբրև բանաստեղծ, ձևավորվել է անցյալ դարի քսանական թվականների կեսերին և գրական ուսուցիչներ ու առաջնորդներ է ունեցել նախ և առաջ հայ հին պատմիչ-գրողներ Խորենացուն ու Եղիշեին, միջնադարյան հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացուն, իսկ ապա՝ հետևել ու յուրացրել Մխիթարյան բանաստեղծական դպրոցի և ուշ միջնադարի հայ տաղերգուների (Պետրոս Ղափանցի, Պաղտասար Դպիր, Սիմեոն Երևանցի, Պետրոս Աղամալյան) ստեղծագործական փորձը: Ավելի ուշ, ռուս գրականության ծանոթանալուց հետո, Աբովյանը նախընտրել է Մ. Վ. Լոմոնոսովին, Ն. Մ. Կարամզինին, Ի. Ա. Կռիլովին ու Վ. Ա. Ժուկովսկուն, որոնք, հիրավի, այդ (նաև հաջորդ) տասնամյակներին գրական բարձր հեղինակություն էին վայելում Ռուսաստանում: Վերջիններիս հետ հոգեհարազատությունը պայմանավորված էր նաև Աբովյանի անձնական խառնվածքով ու գրական դավանանքով. սկսելով կլասիցիզմից և անցնելով սենտիմենտալիզմի բովով, ի վերջո, նա հանգեց ռոմանտիզմին: Հետագայում, ծանոթանալով Արևմտյան Եվրոպայի ժողովուրդների գրականություններին, Աբովյանը հարստացրեց ու վերակառուցեց իր բանաստեղծական աշխարհը. նրա սիրելի գրողները դարձան նաև Հոմերոսը, Տասսոն, Ռուսսոն, Շիլլերը, Գյոթեն, Բյոռնսը, բայց բնավ չաղոտացան հայ ուսուցիչներ Եղիշեի ու Նարեկացու և ռուս մեծ դասականներ Լոմոնոսովի, Կարամզինի, Կռիլովի և Ժուկովսկու պայծառ կերպարները: Ահա՛ այս գրողներին էլ ունենալով իր մտքի ու հոգու ամենաազնիվ զգացումներն առկոչած գեղագետների շարքում՝ Աբովյանն ավարտեց իր ստեղծագործական կյանքը: Տեսականորեն հնարավոր է, որ ինչ-որ ժամանակ, ինչ-որ առիթով, Աբովյանը թերթած լինի Պուշկինի, Լերմոնտովի կամ Բելինսկու ստեղծագործությունները, ինչպես և ընդհակառակը, հնարավոր է, որ նա հեռվից կամ, թեկուզ, մոտիկից մեկին կամ մյուսին տեսած լինի, գուցե և մեկ-երկու բառ, մի քանի ընդհանուր խոսքեր փոխանակած, բայց այդ մասին նա ընդհանրապես ոչինչ չի՛ ասել, իր դրական կամ բացասական վերաբերմունքը որևէ ձևով երբեք

չի՛ արտահայտել, նրանց գործերը չի՛ թարգմանել, իր ստեղծագործությունների մեջ նրանց մաքերին ուղղակի կամ անուղղակի ձևով չի՛ արձադանքել: Պուշկինի, Լերմոնտովի և Բելինսկու անձին ու գործին վերաբերող վավերական և հուշագրական նյութերում էլ Աբովյանին տառացիորեն առնչվող ոչինչ չկա:

Հարկ կա՞ այս պայմաններում պատրանքներով և իրականության տեսք տված անիրական ու անդո առնչակցություններով ո՛չ միայն հրապուրվել, այլև անվորձ ընթերցողներին ստիպել, որ հավատան, ասենք, մի կողմից՝ Աբովյանի, և մյուս կողմից՝ առանձին-առանձին վերցրած, Պուշկինի, Լերմոնտովի և Բելինսկու անձնական ու գաղափարական գաղտնի կապերի գոյությանը: Պատմությունն այդ իրավունքը մեզ չի ընձեռում և խորհուրդ է տալիս բավարարվել այն դրողներով, որոնց Աբովյանն իսկապես ճանաչել է:

*դ. **Աբովյանը որպես ռուսաց լեզվի, գրականության և մշակույթի տարածող հայ իրականության մեջ.** — Դեռ քահանական թվականներին հայոց եկեղեցու լրջախոհ պետերը, տակավին էջմիածնի վանական դպրոցի աշակերտ Աբովյանին ուղարկում են Թիֆլիս՝ ուսանելու նաև «գծագրկեալ լեզու ռուսաց»[9]: Այստեղ մնալով չորս տարի՝ Աբովյանը ո՛չ միայն բավարար գիտելիքներ է ամբարում ռուսաց լեզվի ու մշակույթի մասին, այլև ստանձնաբար գալիս է այն համոզման, որ եթե ավատական Հայաստանի համար կրթության լույսը ճառագում էր անտիկ քաղաքակրթության օրրաններից՝ Ալեքսանդրիայից, Աթենքից, Եդեսիայից կամ Հռոմից, ապա նորկա դարում դրանց փոխարինելու էին գալիս ռուսական գիտության և մշակույթի օջախները՝ Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանները, որոնց ձգտում ու գիմում էին հայ ուսումնատենչ երիտասարդները:*

Իր վաղ շրջանի նամականիներից մեկում, ճարտասանական դյուտերի և այլաբանական դատողությունների միջոցով, Աբովյանն այն միտքն էր զարգացնում, թե ժամանակի հայ երիտասարդությունն անհամեմատ ավելի նախանձելի վիճակում է, քան Արևմուտքի ճանապարհնները մաշած հները, մինչ «... երթային յԱթենս և չահէին ինքեանց զվաճառս գիտանճառ լուսաւորութեան: Բայց ելցեն այժմ նոքին իսկ նախնիք մեր, ելցեն և բարեբարք նոցա, ելցեն և տեսցեն, թե զո՞ր բարիս երջանկութեան արդէն գտանին ի Ջեզ (այսինքն՝ ռուսների տիրապետության օրերին — Պ. Հ.) թուռւնք և որդիք իւրեանց. քանի՛ գերապատկութեամբ անցին զանցին զնոքօք ի վայելչութեանս

---

9 *Ե X, 119:*

երկնակենցաղ բարգաւաճութեան և արտօնութեան, ողորմութեան և բարերարութեան, լուսաւորութեան և իմաստութեան»[10]:

1837 թ. սկզբներից մինչև իր խորհրդավոր անհետացումը զբաղվելով մանկավարժական գործունեությամբ՝ սկզբում Թիֆլիսի, իսկ հետո Երևանի գավառական դպրոցներում, միաժամանակ նաև՝ իր քաց արած մասնավոր պանսիոնում, Աբովյանը մշտապես ավանդում էր ռուսաց լեզու՝ վերջինիս հիմնավոր ուսուցումը դիտելով որպես էական նախապայման հայ պատանիների հոգեկան ու ֆիզիկական կատարելագործման և բարեկեցության հասնելու համար, մանավանգ որ, պատմական հանգամանքների բերումով՝ ռուսաց լեզուն դարձել էր հայ պատանեկության մտավոր զարգացմանը նպաստող օժանդակ միակ աղբյուրը[11]: *Ժամանակակիցների վկայությամբ՝ մի առիթով իր աշակերտներին նա ասել է. «Ռուսերե՛ն, երեխա՛յք, ռուսերե՛ն, դուք ինքներդ պիտի բանաք ձեր ճանապարհը»*[12]:

Որևէ օտար լեզվի ուսուցման նպատակը, ըստ Աբովյանի, ո՛չ թե տեսական անձի համար ժամանակավոր օգուտներ քաղելը պիտի լիներ, որն, ի դեպ, չէր բացառվում, այլ ամենից առաջ և գլխավորապես, օտար գրականության, գիտության ու արվեստի հուշարձանների օգնությամբ իր միտքն ու հոգին կրթելն ու ազնվացնելը, կյանքի ու աշխատանքի կազմակերպման լավագույն ձևերի ընդօրինակումը, նրանց մտքերի ու մտածողության ընթացքին ծանոթանալը, նրանց հետ հոգեպես մերձենալն ու բարեկամանալը: Հայ ժողովրդի զավակների համար, մասնավորապես, կենսական անհրաժեշտություն էր ռուսաց լեզվի ուսուցումը, որը նրանց առջև, ռուսական լայնածավալ կայսրության մեջ, բաց էր անում գործունեության և առաջադիմության լայն ասպարեզ և իր մշակութային գանձերով մեծապես նպաստում հայ պատանեկության հոգևոր ազնվացմանն ու վերածնությանը, հայ և ռուս ժողովուրդների փոխըմբռնմանը, քաղաքական ու հոգևոր մերձեցմանը. «Այս իմաստով՝ արևելյան և արևմտյան լեզուներից ո՞րը կարող է այնպես նպաստամատույց լինել մեր ազգի համար, ինչքան ռուսերենը»[13], — *գրել է Աբովյանը:*

Արևելահայ իրականության մեջ Աբովյանն առաջիններից մեկն էր, որ ընթանալով իր բազմերախտ ուսուցչի՝ Հարությունն Ալամդարյանի հետքերով, կազմել է ռուսաց լեզուն համեմատական եղանակով

---

10 *Նույն տեղում, էջ 118, և № 512:*

11 *Ե IX, 9:*

12 *ԺԱՄ, էջ 60:*

13 *Ե IX, 12 (թարգմանություն գրաբարից):*

դասավանդելու համար մի աքանչելի ձեռնարկ՝ «Նոր տեսական և գործնական քերականութիւն Ռուսաց լեզուի Հայոց» խորագրով: Այդ գիրքը 1840 թ. քննութեան է ենթարկվել և արժանացել Ս. Պետերբուրգի գիտութիւնների ակադեմիայի հավանութեանը, սակայն միջոցների պակասութիւնը պատճառ դարձավ, որ մնար անտիպ և լույս աշխարհ գար միայն մեր օրերում:

Պահպանվել և մեզ են հասել Աբովյանի՝ դպրոցական բարձր իշխանութիւններին հղած բազմաթիվ զեկուցագրեր ու զեկույցներ (рапорт), որոնցով նա գործնական միջոցներ էր առաջարկում Անդրկովկասյան դպրոցներում ու տեղական ժողովուրդների չրջանում ռուսաց լեզվի դասավանդման և ուսուցման գործը բարելավելու, ռուսական մշակույթը տարածելու համար:

Հայ և ռուս, ռուս և անդրկովկասյան ժողովուրդների փոխըմբռնման և հոգեկան մերձեցման գաղափարի գրական արտահայտութիւններից է Աբովյանի «Հազարփեչեն» պոեմը, ըստ էութեան՝ մինչև այժմ ճիշտ չմեկնաբանված մի ստեղծագործութիւն: Հայ ժողովրդի բարոյական դիմաստուերի ազնվացմանը նպաստելու էին կոչված ռուս գրողների ստեղծագործութիւններից Աբովյանի կատարած բազմաթիվ թարգմանութիւնները, որոնցից լավագույնները Կռիլովի ու Խեմնիցերի երկերն են: Շատ տաղանդավոր հայերն այդ երկերը զարդարել են հայերեն դասագրքերն ու ընթերցարանները և դարձել հարազատ, սիրված գործեր:

Ընդհանրապես, ի՞նչ է թարգմանել Աբովյանը ռուս գրականութիւնից: Ահա՛ դրա քիչ թե շատ ամբողջական պատկերը.

ա) Ն. Մ. Կարամզինից՝ «Ռաիսա» հնօրյա բալլադը, «Կղզին Բորնհոլմ» նորավեպից «Законы осуждают...» («Անդութ օրէնք դատապարտէ...») սկսվածքով երգը և «Ռուս ճանապարհորդի նամակները» երկի V մասից մի հատված՝ Կլիխկյան Հայաստանի վերջին թագավոր Լևոն Վեցերորդ Լուսինյանի մասին:

6

բ) Ի. Ա. Կռիլովից՝ «Արաբևքը», «Ճղնավորն ու Արջը», «Անցվորականքն ու Շունը», «Ջաղրի չունը ու Ձիլը», «Գիկն ու Գառը», «Աւյուծն ու Մոծակը», «Ալապաստրակը փորս անկիս», «Աղուէս և Խաղող», «Ճսկուռ և Մրջիւն» առակները (վերջին երկուսը՝ դրաբար):

գ) Ի. Ի. Խեմնիցերից՝ «Խանը», «Ռոռերը», «Ծառը», «Անքաղաքավարի էշը» առակները:

դ) Ի. Ի. Դմիտրիևից՝ «Արտուտը իր ձագերովը ու Երկրագործը» առակը:

ե) Վոյեյկովից (Ալեքսանդր Ֆյոդորովի՞չ)՝ «Плач русского» («Ռուսի ողբը») եկեղեցդության սկիզբը, իսկ այդ երկը դրված էր

Ալեքսանդր Առաջինի մահվան թարմ տպավորության տակ (Աբովյանը նախ՝ արտագրել է ամբողջ ոտանավորը և ապա՝ ձեռագրի լուսանցքում թարգմանել առաջին երկու տները):

զ) Առայժմ չպարզված աղբյուրներից ու հեղինակներից Աբովյանն այնուհետև թարգմանել է՝ 1. «Բաղդատի ճամփորդ էշը», «Կատուն ու Մուկը» և «Եղն ու Շունը» առակները. 2. Հայ ժողովրդի պատմության մասին մի փոքրիկ հոդված՝ քաղված 1820-ական թթ. ռուսական ինչ-որ լրագրից և մնջ բերված՝ իր «Համառոտ ակնարկ հայերի մասին» պերմաններեն աշխատության մեջ. 3. «Император Александр в Париже и падение Наполеона, или беспримерные черты величия, правосудия и благости Русского царя, дарующего миру мир» *(Մոսկվա, 1814) անանուն գրքույկի առաջին էջերը:*

է) Բացի սրանցից՝ Աբովյանի «Նոր տեսական և գործնական քերականություն Ռուսաց վասն Հայոց» ձեռնարկի հավելվածներում գտնում ենք ռուս գրողներ Կարամզինի «Կեանքն Աթենացւոց», Դմիտրիևի «Աղաւնեակ», Գ. Ռ. Դերժավինի «Ճշմարիտ երջանկություն», Լոմոնոսովի «Տաղերդություն ըստ Յորայ» ստեղծագործությունների և մի դպրոցական թատերգության ռուսերեն բնագրերն ու հայերեն վերծանությունները՝ փոխադրված մերթ բառացի, մերթ էլ միայն առանձին բառեր կամ արտահայտություններ (տողեր):

ը) Աբովյանի հայացրած զվարճալի և կարճ պատմվածքների տետրակներում տեղ են գտել ռուս սենտիմենտալիստների կյանքից առնված գրվագներ՝ իշխան Գ. Ա. Պոտյոմկինի անխմաստ չռայլության[14] և Պետրոս Մեծի անվնհերության ու հաստատակամության մասին[15], որոնց սկզբնաղբյուրները, սակայն, պարզված չեն. հնարավոր է, որ դրանք չարադրելիս՝ Աբովյանը ռուսական ժողովրդական զրույցները նկատի առած լիներ: Երկու մանրապատումն էլ բարոյախրատիչ նպատակներ են հետապնդում:

Թարգմանությունների կատակցությամբ նշենք, որ դրանք ինքնուրույն ստեղծագործություններ չեն և չի կարելի հավասարության նշան դնել թարգմանվողի ու թարգմանողի գրական նախասիրությունների և աշխարհընդունումների միջև: Բայց հատկապես Աբովյանի դարաշրջանում, երբ սովորություն չկար թարգմանած երկերի սկզբնաղբյուրը նշել, ու հաճախ դրանք այնպես էին հայացվում, որ բնավ էլ դյուրին չէր տվյալ գրողի ինքնուրույն հորինվածքներից զանազանելը, պետք է զգույշ լինել և աչք չփակել հոդնհարա-

---

14 *Ե* IV, *61:*

15 *Նույն տեղում, էջ 89:*

պատմության դրսևորումների հանդեպ, որոնք, ցանկանք թե ոչ, առկա են ռուս գրականությունից Խ. Աբովյանի կատարած վերոհիշյալ թարգմանությունների և սեփական հորինվածքների մեջ:

Ռուս գրողների քնարական և ուսուցողական, մանկավարժական ու պատմական այն երկերը, որոնք թարգմանել է Աբովյանը, ներդաշնակում էին նրա լուսավորական աշխարհայեցողությանը և ստեղծագործական տվյալ չլքվուլի ճանապարհին նախասիրություններին: Նույնը պիտի ասենք նաև Աբովյանի՝ ռուսերեն բնագրերով կարդացած գրքերի մասին, որոնցից ցայժմ հայտնի են՝ Մ. Ն. Զագոսկինի «Յուրի Միլոսլավսկի կամ Ռուսները 1612 թվականին» պատմավեպը (Բ տիպ, Մոսկվա, 1830), որ ժամանակին լայն տարածում ուներ, Ն. Մ. Կարամզինի «Ռուսական տերության պատմություն» բազմահատոր աշխատությունը, Ֆ. Բուլգարինի «Իվան Վիժիգին» վեպը (4 հատոր, Ս. Պետերբուրգ, 1829), որը ռուս քաղքենիների սիրած գրքերից էր, «О должностях человека и гражданина» խորագրով անանուն ընթերցարանը, հավանաբար նաև՝ «Жизнь генерал-лейтенанта князя Мадатова» վարքագրությունը (Ս. Պետերբուրգ, 1837), որի հետքերը նկատվում են «Վերք Հայաստանի» վեպում (Երրորդ գլխի առաջին տողերը):

Նույն «Վերք Հայաստանիում» ոճական փոխառություն կա նաև ռուսերեն մեկ այլ սկզբնաղբյուրից՝ Սերգեյ Գլինկայի (1775 կամ 1776 – 1847) «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատությունից («Обозрение истории армянского народа от начала бытия его до возрождения Области Армянской в Российской империи»), *որը հրատարակվել է Լազարյանների աշակերտությամբ, երկու գրքով, Մոսկվայում, 1832 – 1833 թվականներին:*

Առաջին մասի նախաբանում, վերհիշելով հայոց պատմության հերոսական դրվագներն ու հայրենասեն գործիչների անուննները և ընդգծելով նրանց սխրանքների ու առաքինությունների վեհությունը, մինչև իսկ գերապատվությունը՝ նույն ժամանակներում ապրող և համաշխարհային պատմության էջերն իրենց տարատափաղդու գործերով և աշխարհակալական նկրտումներով լցրած՝ Արևելքի ու Արևմուտքի հուչակավոր անձանց համեմատությամբ, Ս. Գլինկան օգտագործում է համադրության ու հակադրության մի հետաքրքրական եղանակ, որին ստեղծագործական առօրյայում, հետագայում, դիմում էր նաև Խ. Աբովյանը:

«Հայ ժողովրդի պատմությունը, — գրում է Գլինկան, — ձուլված է հին աշխարհի համարյա բոլոր ժողովուրդների պատմության հետ. Հայոց լեռների բարձունքներում է, որ ըստ ավանդությունների և

ժողովրդական անգիր զրույցների՝ կանգ է առել մարդկության երկրորդ օրրանը (այսինքն՝ Նոյի տապանը — Պ.Հ.):

Հայաստանի սահմաններում է մահ գտել առաջին աշխարհակալը կամ մարդկայինն այլասերողը (այսինքն՝ Բելը — Պ. Հ.): Նրա ընդերքից են դուրս եկել առաջին աշխարհազորայինները՝ Թոթափելու համար ***Աժդահակի*** *տանջալից տիրապետությունը և կործանելու համար* ***Սարդանաբաղին****, որն իր այլասերված կրքերի պատճառով երես թեքեց մարդկայնությունից: Հայկական բնաշխարհում էր, որ* ***Վահեն*** *դեմ կանգնեց* ***Ալեքսանդր Մակեդոնացուն****, որը հետամուտ էր հին աշխարհը խոնարհեցնել իր հաստատ սրի տակ: Հայոց հողում էր, որ* ***Արտաշեսը*** *խարխլեց ու կործանեց* ***Սելևկյանների*** *հսկայությունը, հզորությունն ու նվաճումները: Հայոց լեռների մեջ թաքնվեց հռոմեացիների վրեժխնդրությունից Հալածական* ***Հաննիբալը*** *հուսալով այս բարձունքներից դիմագրավել* ***Կապիտոլիի*** *անգղներին: Հայոց աշխարհի ընդերքից էր* ***Արտաշես Առաջինը****, որը հատկապես մեծ էր մարդկության հանդեպ տածած իր սիրով. նա ասպարեզ իջավ ո՛չ թե աշխարհակալության համար, այլ փրկելու Ասիան իշխանամոլ հռոմեացիների կատաղի հեղեղումներից»*[16]*:*

Առանց մասնագիտական քննության էլ հետաքրքրասերը կտեսնի ու կհամոզվի, որ, հիրավի, բնության գրման այս ոճը, պատմական գործիչների դնահատման այս եղանակը կիրառված է «Վերք Հայաստանի» վեպի երկրորդ դլխի հենց առաջին դրվագներում նույնպես, մինչ Աբովյանն իմաստավորում էր հայ ժողովրդի անցած պատմական ուղին՝ հին դարերից սկսած, և ներբողում Հայաստանի հողն ու նրա զավակների հայրենանվեր գործերը, այն հողն ու «հիանալի աշխարհը, ուրտեղ որ ***դրախտն*** *էր եդեմական, ուր որ Աստված, բոլոր աշխարհը ջրհեղեղովը երբ որ կործանեց, հայոց սուրբ Մասյա սարը միայն արժան տեսավ, որ Նոյան տապանը նստի... ուր որ անպարտելին* ***Հայկ****՝ անաստված Բելա ... անհոգի մարմինը իր նետ ու աղեղին մատաղ արեց... Պարույր՝ Արքակի հետ Սարդանաբաղին էրեց... Վահե՝ Դարևհ Կոդմանի հետ Աղեքսանդրի ճամփեն ուզեցավ բռնի...» և այլն*[17]*:*

Փոխառությունն այնքան ակներև է, որ բացատրություններ տալն ավելորդ է դառնում: Բայց Աբովյանի դլխավոր գրքում եղած ռուսական արձագանքները միայն սրանք են...

---

16 С. Глинка, Обозрение истории армянского народа, ч. I, М., 1832, с. III–IV.

17 *Ե III, 54 (նաև՝ «Վերքի» 1981 թ. հրատ., էջ 113–114):*

Աբովյանը ռուսերեն թարգմանություններով է կարդացել (և, ինչպես երևում է, ինչ-ինչ հատվածներ էլ վերաշարադրել հայերեն) միջնադարյան նշանավոր աստվածային Թովմա Կեմպացու (1380 — 1471) «Յաղագս համահնեւմանն Քրիստոսի» — «О подражании Иисусу Христу, четыре книги, или Фомы Кемпского Златое сочинение для христиан» (Մոսկվա, 1784) երկը և Հովսեփ Երկայնաբազուկ Արղությանի «Исповедание христианской веры Армянской церкви» աշխատությունը (Ս. Պետերբուրգ, 1799): Էջմիածնի վանքում ապրած տարիներին ձեռքի տակ է ունեցել Մովսես Խորենացու Հայոց պատմության և Աշխարհացույցի ռուսերեն թարգմանությունները՝ կատարված Հովսեփ սարկավագ Հովհաննիսյանի ձեռքով և հրատարակված Պետերբուրգում, 1809 թ. (2 հատոր), ինչպես նաև Գ. Խալդարյանի «Գիրք որ կոչի չափիղ լեզուագիտութեան» ձեռնարկը (Ս. Պետերբուրգ, 1788), որն իրականում հայ-ռուսերեն բառարան էր:

«Նախաշավիղ» նախապատրաստական նյութերի տետրակներից մեկում, ուր մեծ թիվ են կազմում թարգմանական նյութերը, հիշվում է մի ռուսերեն ժողովածուի խորագիրը՝ «Отрывки из прозаических сочинений лучших писателей для постепенных занятий переводами с русского языка на французский и немецкий» (երկրորդ հրատ., Ս. Պետերբուրգ, 1829)[18]: Բուն գրքի ուսումնասիրությունը, սակայն (դրա մի օրինակը պահվում է Սանկտ Պետերբուրգի Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանում), ցույց տվեց, որ Աբովյանն այդտեղից ոչինչ չի վերցրել: Ի դեպ, «Հատվածների» հեղինակների մեջ Պուշկինի անունը չկա:

Տիղիսում և Երևանում ուսուցչություն անելիս՝ տեղի դավառական դպրոցների համար Աբովյանը դուրս է գրել ռուսաց լեզվով բազմաթիվ պարբերական հրատարակություններ (հարիավ՝ պետական միջոցներով). ամենահեղինակավորը «Отечественныя записки» ամսագիրն է, ապա գալիս են՝ «Журналъ министерства народнаго просвѣщенія», «Маякъ», «Сѣверный», «Сѣверный зритель», «Сѣверная пчела», «Библіотека для чтенія», այնուհետև՝ ուսումնական պանդոկի ձեռնարկներ, դասագրքեր, ընթերցանության գրքեր, բայց մասնավորապես այս վերջիններիի մեջ, բացառությամբ Կռիլովի առակների ժողովածուի, համարյա ուշագրավ բաներ չկան:

Ի՞նչ նյութեր ու տեղեկություններ է Աբովյանն անձամբ քաղել մամուլից. քիչ բան գիտենք և այդ մասին, որովհետև նրա ձեռքով

---

18 Ա № 107:

որևէ նշում կամ գրանցում չի պահպանվել, եթե չհիշենք Ի. Շոպենի վիճակագրական տեղեկագրերից մեկը («Հանրային կրթության մինիստրության ամսագրի» 1840 թ. XXVII գրքից)[19] և Շամախու մոտ խփած նավթի չատրվանի մասին մեկ հոդված, որ երկրաբան Հ. Աբիխի խնդրանքով թարգմանել է Տփղիսի «Զակավկազսկի վեստնիկ» լրագրից, ռուսերենից գերմաներեն (1845, փետրվարի 15, № 4, հոդվածի հեղինակը Պ. Իոսելիանին է)[20]:

Վերջապես՝ Աբովյանը մեկ անգամ չէ, որ հմայվել է ռուսական երգերով, որոնցից «Не шей ты мне, матушка...»-ի բառերի ու մեղեդու ազդեցությամբ (իրական հեղինակը Նիկոլայ Գրիգորևիչ Ձիգանովն է, 1797 – 1831) դրել է հայերեն բանաստեղծություն («Կարե՞մ սրտիս կսկիծը լեզվով քեզ պատմել...»), իսկ «Прощаюсь, ангел мой...» սկսվածքով երգն էլ նախապես ունկնդրելով Վասիլևյան կողու 15-րդ գծի վրա ապրող օրիորդ Տատյանա Յակիմովայի կատարմամբ՝ հետո արտագրել է իր պետերբուրգյան գրություններից մեկի ազատ մասերում:

Աբովյանի ճամփորդական խոհրդածությունների՝ «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ռուսերեն երկասիրության մեջ (1847 թ.) հանդիպում են այսպիսի տողեր. «И колокольчик-дар Валдая, зазвенел при тихой, очаровательной погоде, по равнинам Эчмиадзинским, унылым гудением своим, гармонией небесной» («**Եվ զանգակը՝ Վալդայի պարգևը, իր թախծալի ձայնով, երկնային ներդաշնակությամբ՝ ղողանջում էր խաղաղ եղանակին, Էջմիածնի հարթավայրում**»)[21]: Բնավ չենք սխալվի, եթե այդ նկարագրության մեջ փնտրենք բառացի փոխառություններ ռուսական ժողովրդական հայտնի երգերից՝ «Եռաձի կառքը» («Тройка»), որի իրական հեղինակը Ֆյոդոր Նիկոլաևիչ Գլինկան է (1786 – 1880), երգ, որն իր հերթին, թեթև խմբագրությամբ՝ քաղված է 1825 թ. հյուսված «Ռուս մարդու երազը օտարության մեջ» («Сон русского на чужбине») քերթվածից (տողեր 25 – 44).

Вот мчится тройка удалая
В Казань дорогой столбовой,

---

19 *Ա. № 13:*

20 *Բնագիրը պահվում է Սանկտ Պետերբուրգում, Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանի ձեռագրերի բաժնում, Հ. Աբիխի անմշակ թղթոնների մեջ: Օգտվել ենք մեզ տրամադրված լուսապատճենից:*

21 *Ե VII, 137 (ընդգծումները մերն են—Պ. Հ.):*

И колокольчик, дар Валдая,
Гудит уныло под дугой...

(Ահա՛ սուրում է անվախ կառքը եռաճի
Կազան տանող մեծ ճանապարհով,
Եվ զանգակը՝ պարգևը Վալդայի,
Թախծորեն ղողանջում է լծաղեղի տակից...) [22]:

Համանման արտահայտություն՝ «Եվ զանգակը՝ պարգևը Վալդայի...», հանդիպում է ժամանակի ուրիշ գրվածքներում էլ, օրինակ՝ «Отечественныя записки» ամսագրի 1845 թ. հավաքածուի հոդվածներից մեկում (Ч. XXXVIII, «Смесь» — «Խառը նյութեր» բաժին, էջ 12), իսկ այդ պարբերականի համարներն Աբովյանի տեսչության օրերին ստացվում էին Երևանի դավառական գրպրոցում: Խոսքը Տիլիսում երբեմն ուսուցչությամբ պարապող Կ. Սպասկի-Ավտոնոմովի ակնարկի մասին է, ուր նկարագրված է նրա ուղևորությունը դեպի Մասիսի սառոտը, 1843 թվականի սեպտեմբերին, և ուր, մասնավորապես, կարդում ենք. «Колокольчик, дар Валдая... раздается теперь почти всюду между гор и по долам Закавказья...» *(«Զանգակը՝ Վալդայի պարգևը, հնչում է այժմ Անդրկովկասի լեռներում ու հովիտներում, համարյա ամենուր...»)*[23]*: Բայց Աբովյանի անմիջական ազդակը կամ աղբյուրը ո՛չ թե այս ակնարկն է, այլ Ց. Գլինկայի երգը: Այսպիսով՝ հայտնաբերվում է ևս մի նոր անուն Աբովյանի նախասիրած ռուսական ժողովրդական երգերից, որը նրա ուսումնառության տարիներին, 1820 — 30-ական թթ., լայնորեն տարածված էր ողջ Ռուսիայում և որը, թերևս, ինքը՝ Աբովյանն էլ էր երգում:*

Ուշադիր քննություն կատարելիս, դուցե, էլի ինչ-ինչ մանրուքներ ևս գան, բայց հաղիվ թե դրանք նոր եզրակացությունների հիմք

---

22 *Նախնական տարբերակում (տպագրվել է՝* «Северная пчела», 1825, № 74*)՝* «И мчится тройка...», «Гудит, качаясь...» *(«Եվ սուրում է եռաճի կառքը...», «Ղողանջում է՝ օրորվելով»), տե՛ս* Ф. Глинка, Сочинения, М., 1986, с. 45*: Վերջնական տարբերակը տպագրվել է 1832–1833-ին, տե՛ս* «Песни русских писателей», т. I, М., 1988, с. 312, 610*: Երգարանների մեջ էլ համբագրված է երկրորդ տողը՝* «Вдоль по дорожке столбовой...» *(«Մեծ ճանապարհի երկայնքով...»), տե՛ս* «Русские народные песни», М., 1980, с. 133–134*:*

23 К. Спасский-Автономов, Второе посещение Арарата (из путевых записок). —«Отечественные записки», т. XXXVIII, СПб., 1845, с. 18 («Смесь»).

ծառայեն: Պուշկինի, Լերմոնտովի ու Բելինսկու երկերի առնչությամբ չափից ավելի բծախնդիր ենք եղել ու ցավով պիտի արձանագրենք, որ առայժմ ոչ մի չյուղ չենք գտել:

Այսպիսով՝ Աբովյանի ինքնամոռաց նվիրումը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման գաղափարին, նրա հետևողական գործունեությունը՝ հայ միջավայրում տարածելու ռուսաց լեզուն և ռուսական մշակույթը, թելադրված էին մեր ժողովրդի պատմական զարգացման որոշակի շրջափուլի՝ XIX դ. առաջին կեսի ազատագրական ու լուսավորական շարժման չահերով: Նրա համապատասխան երկերն ու ասույթները, նրա կրակոտ պատգամները այլ ենթախմաստ չունեին, բացի ռուսական հզոր պետության հովանավորությունը վայելելու, այդ հովանավորության տակ ազգորեն համախմբվելու, տնտեսական ու կուլտուրական բարվոք վիճակի հասնելու մտահոգությունը: Ապագա Ռուսաստանի, նաև ռուս ժողովրդի օգնությամբ ազատագրված ու միավորված Հայաստանի պետական կարգի հարցը Աբովյանը քննության նյութ չի դարձրել, և ոմանց այսօրվա մտահոգությունը, թե հայ մեծ լուսավորչին պետական կառավարման ի՞նչ ձևի կողմնակից հռչակել, որ դա ներդաշնակեր հեղափոխական դեմոկրատիզմի աչխարհայեցողությանը, լուրջ ու գիտական չէ, անհող է ու հակապատմական:

Միապետական Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով՝ հայությունը, բնականաբար, միանգամից չբուժեց իր բոլոր, դարավոր վերքերը: Միացումից հետո լուսավոր շատ կողմերի հետ երևան եկան՝ ահա ստվերոտ կետեր, որոնք միապետական վարչակարգի և պաշտոնեության գործունեության հետևանքն էին: Աբովյանն այդ առթիվ բազմիցս իր քննադատական խոսքն է ասել, թերություններն ու չարաչահումները վերացնելու :ուղիների վերաբերյալ իր նկատառումները հայտնել: Սակայն վերջիններս հեռուն գնացող հետևություններ անելու հիմքեր չեն տալիս: Դարն ու ժամանակը սահմանափակում էին նաև Աբովյանի մտահորիզոնը:

Աբովյանը կրողն է լուսավորական-դեմոկրատական աչխարհայեցքի ու ռոմանտիկ պատմահայեցողության նաև հայ-ռուսական գրական-մշակութային առնչությունների ոլորտներում: Նա անկեղծորեն փառաբանել է հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման գաղափարը և իր գործունեությամբ խոր հետք թողել հայ հասարակական մտքի պատմության մեջ:

ԹՅՈՒՐԻՄԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

(ԱԲՈՎՅԱՆԻ ԵՎ ՊՈՒՇԿԻՆԻ ՄՏԱՅԱԾԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ)

1

*Միանգամայն հանիրավի ու անտրամաբանական պատճառաբանություններով՝ Աբովյանի կենսագրության առեղծվածների շարքն է դասվել Պուշկինի հետ, իբր, ունեցած հայտնի ու ծածուկ չփումների հարցը և հետազոտողներին դրել անելանելի վիճակում: Գրական-գիտակչան աշխարհի բախտը տնօրինող լուրջ ու հետևակ որոշ գիտուններ զարմանում են, որ Աբովյանի հին կենսագիրները, կարճատեսությա՞ն, թե՞ անտարբերության պատճառով, չափավորել են իրենց երևակայության թռիչքը և լռությամբ անցել այս գայթակղիչ հարցի կողքով: Բնավ չանհանգստանալով, որ դրա համար փաստեր են պետք, որոնց բացակայության դեպքում լուրջ հետազոտողը չի կարող օդեղեն ամրոցներ կառուցել, նաև խանդավառված իրենց չարած դյուտով՝ նրանք տրամաբանական հարց են տալիս. «Ինչպե՞ս կարող էր Աբովյանը Պուշկինին չճանաչել», — ու անճայն էլ թելադրում պատասխանը, որովհետև հարցն իր մեջ պարունակում է նաև հաստատական պատասխան: Այդ դեռ ոչինչ: Անզոր լինելով բացատրել, թե Աբովյանն, ինչո՞ւ, ապրելով ու գործելով 19-րդ դարի առաջին կեսին և Ռուսական կայսրության մեջ, որի մշակույթը հագեցած էր Պուշկինով, նաև երկար տարիներ դպրոցում ավանդելով ռուսաց լեզու, այնուամենայնիվ, որևէ ձևով չի արտահայտել իր անպայմանորեն դրական վերաբերմունքը ռուս հանճարեղ բանաստեղծի արվեստի ու գաղափարների, նրա հեղափոխական ու հակացարական ելույթների մասին, մինչդեռ Աբովյանի պաշտոնակիցներից մեկը՝ ադրբեջանցի գրող ու լուսավորիչ Միրզա Ֆաթալի Ախունդովը, պարսկերեն մի ամբողջ պոեմ է հյուսել Պուշկինի մահվան առթիվ, որ հրատարակվել է Պետերբուրգի «Сын отечества» հանդեսում, *1838 թ.*, իսկ դևկաբրիստ-գրող Ա. Բեստուժև-Մարլինսկին էլ, որ աքսորված էր Անդրկովկաս, թարգմանել է նույնը ազատ ոտանավորով (տպագրվել է

տասնամյակները հետո), վերջապես՝ առաջին հերթին հանուն ազգի ու հայոց նոր գրականության մեծ հիմնադրի պատվի, այդ «գիտունները» ոչ միայն կյանքի են կոչել անգո միջադեպեր՝ Աբովյանի ու Պուշկինի անձնական ծանոթությունն ու սերտ բարեկամությունը հաստատող, այլև քաղաքացիական իրավունք են «ձեռք բերել» լեգենդի համար, որն, իբրև անառարկելի ճշմարտություն, հիմա հիշում ու կրկնում են տեղի-անտեղի:

Ինչպես բոլոր նորօրյա լեգենդները, այս մեկն էլ սկիզբ է առել անհող հայտարարություններից և շատ կարճ ժամանակամիջոցում «ձևավորվել» ու «բյուրեղացել»: Նախահայրը արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆ. Գ. Աբովն է: Վերջինս դեռ 1948-ին գրել է, որ չնայած Աբովյանի գործերում չեն հանդիպում Պուշկինի, Լերմոնտովի և այլոց անունները, «բայց անվիճելի է Աբովյանի լավատեղյակությունը նրանց ստեղծագործություններին, և տածած սերը՝ նրանց նկատմամբ»[1]: Այլ առիթով, պրոֆեսորը նաև պնդում է, հարկավ, մերկապարանոց, որ Աբովյանն է ապագա թատերգակ Գ. Սունդուկյանցի մեջ սեր արթնացրել դեպի ռուսական պայծառ կուլտուրան ու գրականությունը, ինչպես նաև հանդեպ Պուշկինը[2]:

Ուղիղ հինգ տարի անց Գ. Աբովին միացավ Վ. Պարտիզունին, որն ավելի աչալուրջ լինելով՝ փորձեց բոլոր անորոշությունները հարթել հռետորական «դյուտով». «Անհնար է,— հայտարարում էր նա,— որ ... ռուս կուլտուրայի պրոպագանդիստ Աբովյանը ծանոթ չլիներ ժամանակի ռուսական մտքի տիտաններ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Բելինսկու և մյուսների գրվածքներին...»[3]: Զարմանալու հարկ, կարծում ենք, բնավ չկա: Աբովյանն, իհարկե, լսած պետք է լիներ Պուշկինի և մյուսների անունները, թերևս նաև կարդացած՝ նրանց որոշ գրվածքներ, բայց հատկապես որո՞նք, չէ՞ որ առանց առարկայական ու շոշափելի ապացույցների անհնար է պնդել, թե այս կամ այն գրողն ինչ կարծիք է ունեցել մեկ ուրիշի անձի ու գործի մասին. հակակրե՞լ է, թե՞ համակրել: Գրական առնչությունների հարցն առաջադրելիս՝ անառարկելի փաստեր են պետք, այլապես անիմաստ կդառնա ամեն մի հետևություն, որքան էլ այն գայթակղիչ լինի: Վ. Պարտիզունին ևս այդ չի անում, Աբովյանի ու Պուշկինի ենթադրական առնչությունների օգտին արտահայտվելով՝ նորից այդ վարկածը փաստարկներով չի ամրապնդում:

---

1 Г. Абов, Хачатур Абовян, Е., 1948, с. 45.

2 Գ. Աբով, *Դարերին Սունդուկյան*, Ե., 1953, էջ 20–21:

3 Վ. Պարտիզունի, *Խաչատուր Աբովյան*, Ե., 1952, էջ 112:

Չանալով մի որոշ չափով ինքնուրույն երևալ՝ հայ մանկավարժական մտքի պատմաբան Մ. Սանթրոսյանն էլ ուրիշ «պյուտա» է անում. «Անկասկած պետք է համարել Աբովյանի ծանոթությունը նաև Պուշկինի, Լերմոնտովի և իր ժամանակի այլ ականավոր ռուս գրողների ստեղծագործություններին»,—ասում է նա, քանի որ Աբովյանը ռուսերեն էր ավանդում գավառական դպրոցում, իսկ դպրոցական դասագրքերում «զետեղվում էին ռուսաց ականավոր գրողների ստեղծագործություններից նմուշներ»[4]: Այսքանն, իրրև սկիզբ, իհարկե, վատ չէ, բայց սլրոֆ. Սանթրոսյանը պարտավոր էր այնուհետև որոշակիորեն ասել, թե ժամանակի ո՞ր դասագրքերում Պուշկինի ո՞ր գրվածքներն են տպագրվել: Բայց դրա պատասխանը նա չի տալիս, որովհետև ո՛չ նյութն է հետազոտել, ո՛չ էլ ձեռքի տակ համապատասխան տվյալներ ունեցել. դատել է ենթադրաբար, իսկ ձևակերպման մեջ էլ խուսափել դեթ վերապահությունն անելուց:

Ըստ էության՝ առաջինը գրող և իմաստասեր Մարիետա Շահինյանն է, որ ենթադրություններ անելուն զուգահեռ՝ որոնել է նաև կովանները և այն դեղեցիկ պատրանքը փայփայել, որ Աբովյանը կարդացել է Պուշկինի՝ Ջոն Տեների հուշապատումի մասին գրած հոդվածը (տպագրվել է «Սովրեմեննիկ» հանդեսի 2-րդ գրքում, 1836-ին) և հետագայում, «Վերք Հայաստանիի» մեջ, Պուշկինի հետևությամբ քննադատել է եվրոպական տերությունների գաղութային քաղաքականությունը, որի ահավոր հետևանքներն ու ողջ սարսափն իրենց կաշվի վրա զգացել են մասնավորապես ամերիկյան բնիկները: «Պարզապես անիմաստ է ենթադրել, որ 1836 թ. «Սովրեմեննիկը» նա (այսինքն՝ Աբովյանը—Պ. Հ.) չի կարդացել»,—ասում է Մ. Շահինյանը[5]:

Հազիվ թե զարմանալու հարկ լիներ, եթե Աբովյանը «Սովրեմեննիկը» կարդացած չլիներ, որովհետև բոլորը չէ, որ հասցնում են ամեն բան կարդալ, բայց էականն այդ չէ, այլ այն, որ այս այնքա՜ն ցանկալի գյուտը մերժվում է ինքնաբերաբար, քանի որ Ամերիկայի բնիկների դժբախտ ճակատագիրը Աբովյանին հուզել է Պուշկինից ու «Վերք Հայաստանի» վեպը գրելուց շատ առաջ, դեռ 1834-ին[6]:

Աբովյան—Պուշկին գայթակղիչ նյութի վրայով հպանցիկ անցել են և ուրիշ գրականագետներ (ասենք՝ Ս. Արեշյանը), որոնք այլևս չեն

---

[4] Մ. Սանթրոսյան, *Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը*, Ե., 1953, էջ 133:

[5] М. С. Шагинян, Воля народа, газета «Коммунист» (Ереван), 1953, 4 марта.

[6] Պ. Հակոբյան, *Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը*, Ե., 1955, էջ 137–139:

տատամսում և համոզված հայտարարում են. «Աբովյանը լավատեղյակ էր ռուս գրականության խնդիրներին, դիտեր... Պուշկինին, Լերմոնտովին...»[7]:

Անտեղյակների համար այսքանն էլ բավական էր, որ վերջնական ձևավորում ստանար լեգենդը: Եվ այդ օրը չուշացավ:

1971 թվականին, Պուշկինյան հանդեսների օրերին, բանաստեղծ Գևորգ Էմինը «Սովետական Հայաստան» օրաթերթի միջոցով հրապարակորեն ծանուցեց. «Պատահական չէ, որ դեռևս Պուշկինի կենդանության օրոք հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը (որը նույնպես Պուշկինի առաջին թարգմանիչներից մեկն է) Դորպատում մի առիթով հանդիպելով Պուշկինի ամենից ոխերիմ թշնամիներից մեկին՝ Ֆադեյ Բուլգարինին, ո՛չ միայն ընդհարվել է նրա հետ, այլև նրան երես առ երես հետադեմ ու ստահակ կոչել, հեռակայորեն լուծելով նաև Պուշկինի վրեժը»[8]:

Էմինը այսքանով չբավականացավ: Լոկ իրեն պատկանող «դյուտին» նա պատշաճ տեղ է հատկացրել նաև, հիրավի, անկեղծ հայրենասիրությամբ և անվիճելի տաղանդով հյուսված «Յոթ երգ Հայաստանի մասին» գրքում, որի «Դար» ու «Գիր» գլուխներում հին մաքերն ավելի է ճոխացրել և վերախմբագրելուց հետո պարուրել նոր հանդերձանքով.

«...ուուս դեկաբրիստ սպան պատանի Խաչատուր Աբովյանին կարդում էր Պուշկինի արգելված բանաստեղծությունները...»: «Երևանի աղատագրումից հետո, որի մասնակիցն ու ականատեսն էր նա, Խաչատուր Աբովյանը դեկաբրիստ ռուս սպաներից առաջին անդամ լսում է Պուշկինի բանաստեղծությունները, Երևանի հինավուրց բերդում դիտում Գրիբոյեդովի «Խելքից պատուհասի» առաջին բեմադրությունը»: «... Հետաքրքիր ու բնորոշ է, որ դեռևս մի ամբողջական Ռուսաստան տեսնելով ու դովերգելով հանդերձ, Աբովյանն արդեն բնազդորեն զգում էր, որ կա Պուշկինի Ռուսաստանը և մատնիչ «գրող» ու «առակագիր» Ֆադեյ Բուլգարինի Ռուսաստանը... Եվ խնկարկելով առաջինին, Աբովյանը Դորպատում, մի տաք վեճի

---

[7] С. Г. Арешян, Армянская печать и царская цензура, Е., 1957, с. 248.

[8] *«Սովետական Հայաստան», 1971, հունիսի 8, № 131: Այլ առիթով էլ Էմինը գրում է, որ Աբովյանը Բուլգարինին որակել է* «хулиганом и мракобесом» *(տե՛ս* «Семь песен об Армении», с. 147*):*

ժամանակ, խիստ անարդել ու վիրավորել է երկրորդին՝ անուղղակի կերպով նրանից հանելով իր պրչեղբոր՝ Պուշկինի վրեժը...»[9]:

Երբ բանաստեղծական չափազանցության տարրերը, որոնցով, սովորաբար, առատ են լինում հանդիսությունների ժամանակ ասված խոսքերը, օտարում ենք Գ. Էմինի հայտարարություններից, ապա տակը ճշմարտության հատիկ չի մնում բնավ, չնայած, կարծես, ամեն ինչ ասված է հստակ ու աներկմիտ:

Խնդիրն այն է, որ Աբովյանին ու Պուշկինին առնչվող բազմաբնույթ ու բազմաշերտ գրականության, հնօրյա հուշերի ու վավերագրերի մեջ չկա և ո՛չ մի տվյալ, կես-բերան ասված թեկուզ մեկ խոսք, մինչև իսկ՝ խոսել ու անուղղակի ակնարկ, որն իրավունք տար նման ենթադրություններ անելու: Ռուս-պարսկական պատերազմն սկսվելու առաջին օրերին Աբովյանը Լոռիում էր, իսկ հետագայում էլ, մինչև 1828 թ. դարունը, ուսուցչություն էր անում Հաղբատի վանքում, հետևաբար ո՛չ Երևանի բերդում կարող էր հանդիպել «ռուս դևևաբրիստ սպայի» հետ, ո՛չ նրանից լսել Պուշկինի «արդելված բանաստեղծությունները», ո՛չ էլ դիտել «Խնկքից պատուհասի» առաջին բեմադրությունը: Աբովյանի թողած դրական ժառանգության մեջ նմանատիպ չի պատահում որևէ տող կամ արտահայտություն, որ արձագանքը լիներ Պուշկինի մտքերի կամ թարգմանված ու փոխադրված լիներ նրա գրվածքներից. որոնողներ շատ են եղել, բայց բոլորն էլ, ի վերջո, հուսախաբ են եղել:

Այս պայմաններում, կրկնում ենք, թյուրիմացության արդյունք են Աբովյանին Պուշկինի երկերի առաջին հայ «թարգմանիչներից մեկը» հռչակելը, իբր թե Երևանում, դևևաբրիստ սպաների միջոցով, նրա արգելված բանաստեղծություններին հաղորդակից լինելը, Երևանի բերդում Գրիբոյեդովի «Խնկքից պատուհասի» առաջին ներկայացումը դիտելը, վերջապես՝ Աբովյանի և Բուլգարինի ընկերական պատմությունը Պուշկինի հետ կապելը:

Ով լրջորեն կարդացել է Աբովյանի Դորպատյան օրագրերը, չի՛ կարող չհիմանալ, որ երբ 1834-ի նոյեմբերին Աբովյանը որոշում է այցելել Բուլգարինին, ապա վերջինիս դիտեր իրրև հայտնի լրագրողի

---

[9] Գ. Էմին, *Յոթ նրզ Հայաստանի մասին*, Դիրք հայրենաշունչ, Ե., 1974, էջ 25, 225 և 228: Նույնի ռուսական տարբերակում մեջբերված հատվածը ավելի «ազքատ» է. «...Офицер-декабрист читал Абовяну запрещенные стихи Пушкина... Абовян видел и воспевал лишь одну, «цельную» Россию, хотя инстинктивно чувствовал, что есть в ней и Пушкин, которого он обожал и переводил на армянский язык» (Г. Эмин, Семь песен об Армении, с. 19 и 147).

և խնդրելու էր նրան, որ «Северная пчела»-ում տպագրեր ռուս և եվրոպական չրջաններին քաջածանոթ հայ գործիչ ու բանաստեղծ Հարությունն Ալամդարյանի մահը ծանուցող մի նամակ՝ ռուսերեն թարգմանությամբ և կից բացատրականով: Բուլգարինի անձնավորությանն ու կենցաղին Աբովյանը ծանոթանում է ահա ա՛յս կապակցությամբ, ու հետո միայն, երկիցս այցելելով Դորպատի արվարձաններում գտնվող կարլովո ագարակը՝ Բուլգարինի կալվածքը, նրա անձնավորությունից, տան սարք ու կարգից ստացած առաջին տպավորությունները և ընկեր-բարեկամների դիտողությունները բաղդատելով իրար հետ, կազմում է վերջնական ու անխախտ մի կարծիք, այն էլ միայն 1834 թ. նոյեմբերի վերջերին, բայց ո՛չ դրանից առաջ:

Առաջներում Բուլգարինը, որպես գրող, անգամ հետաքրքրել է Աբովյանին, որի ապացույցը Բուլգարինի «Իվան Վիժիգին» վեպն է, որ Աբովյանը ընթերցել է 1831-ին: Անճամբ չփվելուց հետո միայն Աբովյանը նկատում է, որ Բուլգարինը արտաքինով նման է «չինականի ու հարբեցողի», կենցաղով զզվելի է, վարվեցողությամբ՝ «հույժ անքաղաքավարի», բնավորությամբ՝ «տմարդի»: Նրա տան կառավարությունը «ողբալի» է, ծառաները՝ «գողեր ու խաբեբաներ»[10], և, այնուհանդերձ, Աբովյանը նրա երեսին չի ասել «հետադեմ և ստահակ» կամ «хулиган и мракобес», ինչպես ասել է տվել Գ. Էմինը: Աբովյանը բարոյապես այնքա՜ն բարձր էր, այնքա՜ն կիրթ, որ չէր կարող իրեն թույլ տալ նման դեռևկությունները՝ անգամ Բուլգարինի վերաբերմամբ:

Այո՛, Բուլգարինի անքաղաքավարի վարվեցողությունն է եղել պատճառը, որ Աբովյանը դուրս է եկել համբերությունից, այն էլ երկրորդ անգամ նրա կալվածքն այցելելուց հետո: Այդ չարաբաստիկ օրը, սկզբում, Բուլգարինը բավական երկար սպասեցնել է տվել Աբովյանին, հետո՝ չքմեղացել, մեղադրել ծառաներին, որ իրենց լավ չեն պահել, իսկ վերջում, չկարողանալով քողարկել իր բուն էությունը՝ անվայել խոսքերով վիրավորել է Աբովյանի արժանապատվությունը: Բայց այդ ընթացքում էլ Պուշկինի անունը չի՛ հիշվել, ուրեմն՝ սխալ ու անտեղի է Գ. Էմինի մյուս հայտարարությունը նույնպես՝ «Հեռակայորեն Պուշկինի վրեժը լուծելու» մասին: Կարճ՝ Աբովյանի և Բուլգարինի ընդհարման պատմությունը չի կարող ոչնչով օգնել Աբովյան-Պուշկին ենթադրական կապերը բացահայտելուն: Պետք են անվիճելի փաստեր, թեկուզ և արժեքով տկար, եթե միայն հնարավոր լիներ գտնել այդպիսիք:

---

10 Ե VI, *302–304:*

Այդ դեպքում Աբովյանն ինչո՞ւ իր օրագրերում ու նամակներում չի՛ տվել Պուշկինի անունը, ինչո՞ւ իր վերաբերմունքը որևէ առիթով կամ ձևով չի՛ արտահայտել: Ինչպե՞ս պիտի լուծվի այս առեղծվածը. միայն ու միայն, կրկնում ենք, փաստերով ու ղգաստ տրամաբանությամբ, բայց ո՛չ հերյուրված ու կեղծ լեգենդներով:

Պուշկինը հսկա բանաստեղծ է, ռուս նոր գրականության և գրական լեզվի ճանաչված հիմնադիր, ո՛չ միշտ՝ հավասարակշռված մարդ, բայց ազատախոհ մտածող: Աբովյանի անձն ու դործը նույն նշանակությունն ունեն հայերիս համար: Շատերի, նաև մեր բաղձանքն էր, որ կյանքում ու գրական առօրյայում այդ երկուսն, իրոք, ծանոթներ ու դաշնակիցներ լիններին, թարգմանած ու տարածած՝ միմյանց երկերը: Դժբախտաբար, դա մեր բաղձանքն է լոկ: Պուշկինը դեռ առաջին քայլերից հռչակվել է ու հրատարակվել, Աբովյանը մնացել է անհայտության մեջ՝ կենդանության օրերին բախտ չունենալով իր գեղարվեստական ստեղծագործություններից անդամ մեկ տող հրատարակված տեսնելու:

Ջենք ժխտում, շատ հնարավոր է, որ Աբովյանն ու Պուշկինը լսած լինեին միմյանց անունները, ձեռքերն առած՝ այս կամ այն դիրքը կամ լրագիրը, ուր հիշված լիներ մեկի կամ մյուսի անունը, տպված՝ ոտանավորը կամ հոդվածը, բայց այսօրինակ հավանականությունները տկար են գիտական վարկածի հիմք դառնալու: Այո՛, ինչ-որ տեղ և՛ Աբովյանը, և՛ Պուշկինը հանդիպել են մարդկանց, որոնք կամ որոնց ազգականները նախքան այդ, կամ տարիներ հետո, ինչ-ինչ առիթներով, չփվել են մեկի կամ մյուսի հետ, բայց պնդել, թե մասնավորապես Աբովյանը աղերսում էր նրանց՝ Պուշկինի մասին պատմելու, և այդ ճանապարհով, միջնորդաբար, հաղորդակից էր դառնում Պուշկինի ազատատենչ մտքերին, կլիներ անհեթեթություն, քանի որ սկզբնաղբյուրները դրական ո՛չ մի ակնարկ չեն պարունակում:

2

Ամեն դարաշրջան ու սոցիալական խավ ուներ իր վարվեցողության կանոնները, իր բարոյական հասկացողությունները, կապերի ու չփումների թուլյատրելի սահմաններըը: Այդ անգրեն կանոնները չափավորում էին մարդկանց կենցաղն ու ընթացքը: Աբովյանը դրանց ազդեցության ոլորտում էր և բացառություն չէր կարող կազմել: Նա բազմազան ծանոթությունների սիրահար չէր, ավելին՝ քաշվում էր և զգուշանում անկոչ հյուր անվանվելուց: Ուսումնառության տարիներին (1830–36 թթ.) Դորպատում կամ ռուսաց մայրաքաղաքներում

եթե անգամ հանդիպել կամ այցելել է սրան-նրան, ապա միայն հեղինակավոր հանձնարարականներով ու անհետաձգելի գործերով, որ վերաբերել են հայութ֊յան հոգևոր ու տնտեսական վիճակը բարվոքելուն, հայ ընդունակ, բայց աղքատ պատանիների ուսումնառութ֊յունն առաջ տանելուն: Նույն այս դիտավորութ֊յամբ, բայց Ֆ. Պարրոտի, պրոֆ. Կ. Բլումի ու այլոց հանձնարարական նամակների օգնութ֊յամբ միայն, ի վերջո, Աբովյանը կարողացել է անձամբ ծանոթանալ ակադեմիկոս Ք. Ֆրեհնի, բանաստեղծ Վ. Ժուկովսկու, արևելագետ Ֆ. Ադելունգի, պետական գործիչներ Յ. Բենկենդորֆի, Դ. Բլուդովի, Կ. Նեսելրոդեի, Գ. Մորգանովի և այլոց հետ: Դժբախտաբար, Պուշկինի անունն այդ ցանկում չի հիշվում, և նա Աբովյանին ոչնչով չէր կարող օգնել, որովհետև հիշյալ տարիներին ինքն էր կարոտ աջակցութ֊յան: Ջմոռանանք նաև, որ դեպի Արզրում, ռուսական գործող բանակ, Պուշկինի կատարած ճանապարհորդութ֊յան նկարագրութ֊յունը, 1830–31 թթ. նրա հրատարակած զանազան բանաստեղծութ֊յուններ պարտադրում են մեզ զգաստ լինել և Պուշկինին հայ ժողովրդի խանդավառ բարեկամների շարքը չդասել, ռուս զենքի ուժով Արևելյան Հայաստանը նվաճելու գաղափարի համակիր չհռչակել, ինչպես մերկապարանոց ձևով վարվում են այդ նյութով հմայված հայ բանասերները՝ «Պուշկինը Հայաստանում» ու նման խորագրերով հոդվածների մեջ, այլևայլ առիթներով: Ըստ մեկի՝ Պուշկինի գրվածքներում, իբր, կարելի է գտնել «Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու օբյեկտիվ գնահատականը», նա իր ուղեգրութ֊յան մեջ կարողացել է «արժանին հատուցել ոչ միայն ռուսական բանակին, այլև տեղական բնակչութ֊յան՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների հերոսական գործողութ֊յուններին» և այլն[11]*:*

Այս կարգի հայտարարութ֊յունները սովորաբար չեն հերքվում, քանի որ Պուշկինի երկերում ոչ միայն բառ իսկ չենք գտնի Արևելյան Հայաստանը Ռուսիային միացնելու բախտորոշ իրադարձութ֊յան մասին, այլև այդ հասկացութ֊յունն ինքյան, որը խորթ էր նրա ըմբռնումներին ու բառապաշարին: Դա բացահայտորեն երևաց ռուս-թուրքական պատերազմի հենց առաջին օրերին, պատերազմ, որի ռազմաբեմերում իրենց քաջագործութ֊յուններով աչքի ընկան բազում տիտղոսավոր և անանուն հայորդիներ: Վերջիններիս ոչ մեկի անունը նույնպես դուք չեք գտնի Պուշկինի ուղեգրութ֊յան մեջ և նամակներում:

---

[11] *«Երևկոյան Երևան», 1974, հունիսի 1, № 126:*

Կարճ՝ անձամբ հայերի ու Հին Հայաստանի նկատմամբ Պուշկինի վերաբերմունքն ամենևին էլ հուսադրող չէր, եթե ո՛չ՝ աննպաստ: Պուշկինն, անշուշտ, տեսականորեն ճիշտ էր, մինչ քննադատում էր ռուս միապետության նվաճողական քաղաքականությունը, բայց նման դիրքորոշումը չուր էր լցնում հայության թշնամիների՝ թուրք չարդարարների ջրաղացին: Դյուրահավատ չլինենք: Ռուսաց ազգային մեծ բանաստեղծը՝ միանգամայն անտեղյակ հայության դարավոր տառապանքներին, չէր խրախուսում հայկական հողերի ազատագրումը թուրքական լծից և նրանց միացումը Ռուսաստանին, որն, ինչպես ցույց տվեց մոտ ապագան և որին հուսով ու աներեր հավատով արդեն մեկ դարից ավելի ձգտում էին հայ ժողովրդի առաջավոր զավակները, հայության բոլոր անկեղծ բարեկամները, շրջադարձային եղավ հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական հարաճուն կյանքի համար՝ նրա դարավոր մաքառումների ու հաղթանակների տարեգրության մեջ բաց անելով նոր էջ:

Պուշկինի կյանքի և ստեղծագործության նշանավոր հետազոտող Յու. Ն. Տինյանովը պարզել է վաղուց (1936 թ.), որ 1828–29 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին Պուշկինը պաշտպանում էր մի տեսակետ, որ չատ հաճախ ու աննկուն ձևակերպել էր նրա համախոհը՝ բանաստեղծ Պ. Ա. Վյազեմսկին. «Թուրքական պատերազմը հայրենական գործ չէ, դա 1812 թվականի ռուսական կռիվը չէ» («Война турецкая не дело отечественное, она не русская брань 1812 года»)[12].

Մինչդեռ Աբովյանի հայրենակից դեղջուկները և հայոց աշխարհիկ ու հոգևոր պետերը օր ու գիշեր աղերսում էին՝ «Տե՛ր Աստված, դու մեր ռուս թագավորի սիրտը ողորմ քցես, որ գա, մեզ ազատի, ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնինք...»[13], *իսկ Պուշկինի դրական բարեկամներից ու ընկերներից մի քանիսն աներկմիտ ոգևորությամբ հնչեցնում էին իրենց ռոմանտիկ ռազմակոչերը, որոնցից միայն մեկը, կուզենք, որ վերստին կարդային մեր ընթերցողները.*

В ПЕРСИЮ!

Я слышу клич призывный брани!–
Ему внимает жадный слух.–

---

[12] Ю. Н. Тынянов, Пушкин и его современники, М., 1968, с. 193.
[13] *Ե՛ս* III, *33:*

На битву рвется меч из длани,
В груди пылает юный дух!

Зарокотали смертью струны–
Я узнаю их вещий глас!
Их громозвучные перуны,
Друзья - на бой подвигнут вас!

На бой! на бой, на поле славы,
Стремитесь бурною толпой!
Вас увенчает лавр кровавый,
Бессмертье–храм откроет свой!

Сожмите меч в руке могучий!
Отважн обнажите грудь!
На сонм врагов, как вихрь летучий,
Неситесь в незабвенный путь!

Туда, туда, где бурны волны
Аракса берега поят,
И где, ковчега страж безмолвный,
Стоит двуглавый Арарат!

Туда,–где колыбель Вселенной!
Где мира первобытный рай!
Там лавр для нас цветет нетленной,
Молве велим:–не умолкай!

О конь, кипящий духом брани,
Неси меня на бурный бой!
Как цвет да не увяну ранний,
Да не паду в стране чужой!

И ты руке нетерпеливой
Не измени, надежный меч!–
Тебе вверяю я порывы
Души младой:–с тобою лечь!

ԴԵՊԻ ՍԱՐՍԿԱՍՏԱՆ

Լսում եմ ձայնը գոռ մարտակոչի,
Անհագ հետևում նրա տաք հևքին,
Մարտի է նետվում սուրը կտրիճի,
Կրծքում բոցկլտում իր մատաղ հոգին:

Մահվան թնդյունով լարերն են հնչում,
Նրանց ձայները դիտեմ մի առ մի,
Նրանց բարձրագոչ չանքերը չաչուն,
Բարեկամնե՛ր, ձեզ կտանեն կռվի...

Դեպի մա՛րտ, դեպի փառքի ասպարեզ,
Սուրացե՛ք դուք ձեր քաջմուքյամբ անհուն.
Արնագույն դափնին պսակում է ձեզ,
Անմահությունն իր տաճարն է բացում:

Սեղմեցե՛ք սուրը ձեր հզոր ձեռքում,
Մերկացրե՛ք դուք ձեր կուրծքը քաջարի,
Թշնամյաց վրա, հողմի պես շաչուն,
Թռե՛ք ուղիով անմոռանալի...

Այնտե՛ղ, դեպ այնտե՛ղ, ուր ալիքները հորդ
Ջրում են Արաքսի ափերը տխուր,
Եվ ուր տապանին կանգնած է պահնորդ
Ջույգ դաշտերով Արարատը լուռ:

Այնդ, ուր օրրանն է տիեզերական,
Ուր որ նախաստեղծ դրախտն աշխարհի,
Այնտեղ աճում է դափնին անթառամ
Մեզ համար, ի սեր դրա, մի՛ լռի...

Օ՛, նժո՛ւյգ, ոգմի ոգուդ անբաժան,
Տա՛ր ինձ դու դեպի խենթ մի պայքարի,
Ծաղկի պես ես չեմ թոշնի վաղաժամ,
Ո՛չ, չեմ ընկնելու երկրում օտարի...

Եվ դու իմ ձեռքին հեչտ ու անհամբեր
Մի՛ դավաճանիր, օ՛, սուր հուսալետ,
Քեզ եմ ես հանձնում հոգու իմ ջահել
Բռնկումները... կընկնեմ ես քեզ հետ...[14]:

---

[14] «Северная лира на 1827 год», Издание подготовили Т. М. Голыц и А. Л. Гришунин, М., «Наука», 1984, с. 103–104. *Հայ թարգմանությունը Լ. Ամատյանի:*

Ա. Պուշկինն, ընդհակառակը, ինչպես իրավացիորեն նկատվել է, բանավեճի մեջ մտնելով այս քերթվածի հեղինակի հետ[15]*, որը հայտնի բանաստեղծ ու պատմաբան Անդրեյ Մուրավյովն է՝ Հայաստան աշխարհի հնության անմեռ հուշարձանների ու նրա աշխարհահռչակ սրբությունների ապագա անդուլ ուխտավորն ու խանդավառ նկարագրողը, հեղինակը «Վրաստան և Հայաստան» եռահատոր ուղեգրության և բազում ոգեշունչ նամակաների–իր ապակողմնորոշող պատասխանով, որ խորագրված է «Հաֆիզից» («Из Гафиза») և որն, իրականում, ո՛չ միայն թարգմանական երկ է, այլ ինքնուրույն բանաստեղծություն (գրված՝ ռուսական ճամբարում, Եփրատի ափին, 1829 թ. հունիսի 5-ին և տպագրված՝ 1830-ին), դիմելով ռուս ղինվորներին ասում է.*

Не пленяйся бранной славой,
О красавец молодой!
Не бросайся в бой кровавый
С карабахскою толпой!
Знаю, смерть тебя не встретит:
Азраил, среди мечей
Красоту твою заметит–
И пощада будет ей!
Но боюсь: среди сражений
Ты утратишь навсегда
Скромность робкую движений,
Прелесть неги и стыда!

Մի՛ հմայվիր ռազմի փառքով,
Օ՛, դու ջահել, ու սուրբ ոխով
Մի՛ նետվիր մարտ արյունահեղ
Ղարաբաղյան ամբոխով:
Գիտեմ, մահը քեզ չի հասնի,
Ազրայիլը անվարան
Գեղեցկությունդ կըտեսնի
Եվ կլգթա գեթ նրան:
Բայց վախենում եմ, թե մարտում
Դու կորցընես առհավետ
Համեստությունը քո սրտում,
Եվ ամոթը՝ նրա հետ[16]*:*

---

[15] *Տե՛ս նույն տեղում. էջ 335:*

[16] А. С. Пушкин, Полное собрание сочинений в десяти томах. Т. III, М.–Л., 1949, с. 117. *Հայ. թարգմ. Լ. Ասմարյանի:*

Բանաստեղծության չորրորդ տողի՝ «Ղարաբաղյան ամբոխով» արտահայտության փոխարեն; ինչպես դիտել է Յու. Տինյանովը, բանաստեղծության ձեռագիրը տարբերակում, սկզբնապես եղել է. «Քրիստոնյա ամբոխով» («С христианскою толпою...»): Իսկ Քրիստոնյա կամ Ղարաբաղյան ամբոխը, որի տակ ոմանք այլ բան են ուզում տեսնել (Պասկևիչի, իբր, բանակում թուրքերի դեմ կռվող մահմեդական զորամասերը), իրականում հայ ժողովուրդն էր, որը թուրք-պարսկական բռնապետական լծից ազատագրվելու համար ռուսաց արքունիքի դռներն էր մաշում Պետրոս Մեծի օրերից սկսած, և այդ անցքերին ընդհանուր գծերով Պուշկինը ծանոթ էր, մինչ հետաքրքրվում էր Պետրոս Մեծի անձով ու գործերով, որի ժամանակներից են Ղարաբաղի մելիքներն սկսել իրենց քաղաքական բանագնացությունները ռուսական արքունիքի հետ՝ հայոց պետականությունը վերականգնելու համար:

Այդ նույն օրերին է վերաբերում նաև «Դելիբաշ» ոտանավորը (գրված՝ 1829 թ. հունիսի 13-ին, մշակված՝ 1830 թ. սեպտեմբերի 7-ին, տպագրված՝ 1832-ին), որով Պուշկինը հայհոյության հորդոր է կարդում ռուսներին ու թուրքերին և առանց վարանելու խոսքն ուղղելով ռուս վինվորներին՝ խորհուրդ տալիս նրանց մոռանալ կռիվն ու ռազմաճակատը:

Перестрелка за холмами;
Смотрит лагерь их и наш;
На холме пред казаками
Вьется красный делибаш.

Делибаш! не суйся к лаве,
Пожалей свое житье;
Вмиг аминь лихой забаве:
Попадешься на копье.

Эй, казак! не рвися к бою:
Делибаш на всем скаку
Срежет саблею кривою
С плеч удалую башку.

Мчатся, сшиблись в общем крике...
Посмотрите! каковы?..
Делибаш уже на пике,
А казак без головы.

Կրակոցնե՛ր բլրի հետև.
Ճամբարներն են իրար գալիս,
Բլրի վրա, մեր զորքի դեմ
Դելիբաշն է կարմրին տալիս:

Էյ՛, Դելիբաշ, քեզ խնայիր,
Ակնթարթ է այս խաղը չար,
Զուր մի նետվիր կրակ, նայի՛ր,
Մեկ էլ տեսար, տեգին կպար:

Կազա՛կ, մարտ մի նետվիր զոռով
Դելիբաշը կիջնի վերից,
Կթռցնի իր կեռ քրով
Քաջ գլուխդ ուսերից:

Թռան... ճիչեր... Սպառնագին
Իրար դիպան... Տեսեք սրանց.
Դելիբաշը՝ արդեն տեգին,
Կազակն առանց գլխի մնաց[17]:

Պուշկինի սկզբնական ու հետագա տարիների հայկական անդրադարձումները նույնպես մեզ համար հազիվ թե կարելի լինի նպաստավոր կոչել, քանի որ նա իր անձնական հոգսերի ու ցավերի կողքին չէր ըմբռնում մեր ժողովրդին բաժին ընկած դառը ճակատագիրը, մեր բարի ու ազնիվ հոգին:

Համառոտակի ծանոթանանք այդ անդրադարձումներից մեկերկուսին. որոնց, թվում է, տեղյակ էր նաև Խաչատուր Աբովյանը:

3

Ժամանակագրական առումով՝ Պուշկինի հայկական անդրադարձումներից առաջիններից մեկն ու ամենատարօրինակը Մարիամ Աստվածածնի մասին նրա հորինած թուրնոտ զավեշտն է, որը ոմանց անկեղծ համոզմամբ՝ արվեստի իսկական գլուխգործոց է, իսկ ուրիշների պնդմամբ՝ դեղարվեստին չվերաբերող երկ և ըստ էության՝ անբարոյական հորինվածք, ուր ոտնահարվում ու ծանակվում են

---

[17] *Նույն տեղում, էջ 138: Հայ. թարգմ. Պ. Սևակ, երկերի ժողովածու, հ. II, էջ 226:*

մարդկութեան նվիրական սրբութիւնները և նրանց խորհրդից լխող մաքուր զգացումները:

*Խոսքը «Գաբրիելական» («Гавриилиада», 1821) պոեմի մասին է: Եթե հավատանք հեղինակին, ապա այս երկի առարկայական բովանդակությունը՝ դիշերային և արթմնի երաղների պահերին կույս Մարիամին գայթակղող Գաբրիել Հրեշտակապետի չարաճճի արկածների, Տիրոջ, ապա և կույսի տարփանքների մասին պատմող դրվագներն, իբր, ինքը քաղել է **հայկական ավանդություններից:***

Но говорит армянское преданье,
Что царь небес, не пожалев похвал,
В Меркурии архангела избрал,
Заметя в нем и ум, и дарованье–
И вечерком к Марии подослал...

Ավանդությունն հայոց, սակայն, ասում է,
Թե երկնից արքան, չխնայելով գովասանքներ՝
Հրեշտակին ընտրեց որպես Մերկուրիոս,
Որովհետև նրա մեջ տեսավ և՛ խելք, և՛ չնորհք,
Ու դիշերով ուղարկեց Մարիամի մոտ..[18]

Որովհետև «Գաբրիելականը» դրված է կայսրության հարավում Պուշկինի անցկացրած աքսորի տարիներին, մասնավորապես 1821-ին, նշանակում է՝ նման մի զրույց կամ ավանդություն, բանահյուսական կամ մատենագրական աղբյուրներից ծագող, ռուս բանաստեղծը կարող էր լսել Ղրիմի, Օդեսայի կամ Քիշինևի հայերից, որոնցից ոմանց հետ, իսկապես, այդ տարիներին նա չվրաններ է ունեցել: Ռուս բանասերներն, անգամ, մատնացույց են անում այդ անձնավորությանը՝ օգնության կանչելով հայ պատմաբաններին, ի դեմս Քիշինևի Հայոց արքեպիսկոպոս Գրիգոր Զաքարյանի, կառչելով Պուշկինի օրագրերում եղած մի անորոշ դրառումից. «Պարահանդես Հայոց արքեպիսկոպոսի մոտ»[19]*: Բայց պարահանդեսը տեղի է ունեցել «Գաբրիելականի» դրությունից երեք ամիս հետո, իսկ բանաստեղծի և արքեպիսկոպոսի անձնական վերհարաբերությունների մասին տուեալներն ոչինչ հայտնի չէ:*

---

[18] А. С. Пушкин, Полное собрание сочинений в десяти томах, т. IV, М.–Л., 1949, с. 141. *Ըստ հույն դիցարանության՝ Մերկուրիոսը Զևսի դեսպանն էր, ատենագրների պատգամներն ու ցանկությունները մարդկանց հայտարարողն ու գործադրողը:*

[19] Л. А. Черейский, Пушкин и его окружение, Л., 1988, изд II, с. 163–164.

Արդյո՞ք հնարավոր ու ենթադրելի է նման զրույցի գոյությունը:

Մարիամ Աստվածածնին առնչվող հայ միջնադարյան պարականոն զրույցների, ժողովրդական անգիր պատումների և հակակրոնական բանահյուսության տպագիր ու ձեռագիր հին ու նոր մատյանների մեջ բնավ չեն հանդիպում համանման բովանդակությամբ երգիծական պատմություններ ո՛չ Գաբրիել Հրեշտակապետի՝ Տիրոջ հանձնարարությամբ Մարիամին այցելելու, ո՛չ էլ հետագայում Սատանայի ու Մարիամի, Գաբրիելի ու Մարիամի, Տիրոջ ու Մարիամի բուռն հանդիպումների մասին: Այդ ամենը, թվում է, կամ Պուշկինի երևակայության ծնունդն են, կամ արևմտաեվրոպական հեղինակների հակակրոնական բովանդակությամբ երկերից քաղված հորինվածքներ, իսկ հայկական անգո զրույցի վկայակոչումը՝ լոկ գրական հնարանք՝ ստեղծագործական ազատություն ստանալու և հարկ եղած դեպքում նաև չքմեղանալու, որ ինքը սոսկ վերաշարադրողն է Աստվածամոր մասին հայերի հորինած անբարոյական և վարկաբեկիչ զրույցների, իսկ բարոյականությունից զուրկ և նման ստորության ունակ անձինք՝ հայերը:

Ներունդներն արդեն երկրորդ հազարամյակն է, որ Աստվածամորն այլևս որպես հողեղեն արարած չեն դիտում, այլ դերագույն մաքրության, առաքինության, գթասրտության ու սուրբ Մայրության խորհրդանիշ, մինչդեռ Պուշկինն իր աչխույժ ոտանավորով, երևակայության զորությամբ կյանքի կոչված պիղծ ու բաց նկարագրություններով ջանում է նրան իջեցնել անմաքուր դետնի վրա, այսինքն՝ արատավորել նվիրական խորհրդանիշն իր վեհության մեջ, խարխլել մարդկության ամենագեղեցիկ իդեալը, աղքատացնել նրա հոգին՝ փոխարենը հրամցնելով մարդուն բարոյապես ստորացնող սեռամոլական կրքեր: Անպամ աթեիստ քերթողը, ձեռքը գրիչ առնելուց առաջ, պիտի մտածի, որ ինքը բարոյական իրավունք չունի վիրավորելու թեպետև կույր, բայց միլիոնների սրբազան Հավատը, թքել նրանց դերագույն սրբության վրա և ինքնարդարացման համար մեղքը բարդել այլոց, ներկա դեպքում՝ հայերի վրա, որ աստվետական քայլ չէ:

Հետագայում, թվում է, Պուշկինը ներքուստ ամաչում էր, երբ հիշում էր այս «քաչագործությունը», մինչ ամուսնանալով Նատալյա Գոնչարովայի հետ և չանալով գեղեցկության և մաքրության համեմատելիներ գտնել՝ երկար ու համառ որոնումներից հետո դիմում էր իր լոկ «ալսակազերծած» կերպարին՝ կնոջը կոչելով մերթ «իմ չնդաչք

Տիրամայր» («Моя косая Мадонна»)[20], *մերթ էլ պարզապես, «իմ Տիրամայր» (տե՛ս «Տիրամայր» սոնետը՝ գրված 1830-ին):*

Исполнились мои желания. Творец
Тебя мне ниспослал, тебя, моя Мадонна,
Чистейшей прелести чистейший образец.

Կատարվեցին ցանկություններս: Արարիչն
Առաքեց քեզ ինձ համար, քե՛զ, իմ Տիրամայր,
Մաքրամաքուր գեղեցկության մաքրամաքուր տիպար...[21]:

Մեղմ ասած՝ խոր մոլորության ու թյուրիմացության արդյունք է նաև 1829–30 թթ. գրված և հետմահու հրատարակված (1837 թ.) «Թազիտ» («Тазит») *պոեմում լեռնցի հերքեղի բերանով հայերին տրված անարդական բնութագիրը.*

Ты трус, ты раб, ты армянин!
Դու վախկո՛տ ես, դու ստրո՛ւկ ես, դու հա՛յ ես...[22]:

---

[20] А. С. Пушкин в воспоминаниях современников, т.II, М., 1974, с. 165.

[21] А. С. Пушкин, т.III , с. 176.

[22] А. С. Пушкин, т. IV, с. 318. *Քննարկվող տողերը գրելուց յոթ-ութ տարի առաջ Պուշկինը հայերին ուրիշ բնութագիր է տվել: Նրա թողոններում մնացած (նաև՝ տպագրված) և հայ ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած մի պատառիկում, որտեղ հեղինակն իր անսքող վերաբերմունքն է արտահայտել զանազան ժողովուրդների և ազգագրական խմբերի վերաբերյալ, որոնց հետ անմիջական շփումների մեջ է եղել Ռուսիայի հարավում անցկացրած աքսորի տարիներին, մասնավորապես 1821-ին (որ և պատառիկի գրության թվականն է), առկա են այսպիսի մակդիրներ.*

«Еврей сребролюбивый,	*«Արծաթասեր հրեա,*
Казак, Кавказа властелин,	*Կովկասի տիրակալ կոզակ,*
Болтливый грек,	*Շատախոս հույն,*
Турок молчаливый,	*Լռակյաց թուրք,*
Важный перс,	*Գոռող պարսիկ,*
Хитрый армянин...»	*Խորամանկ հայ...»*

(А. С. Пушкин, Полное собрание сочинений, т. II, с. 96).

Ի՞նչ իմաստով պիտի հասկանալ խորամանկ (хитрый) *մակդիրը, դժվարանում ենք ուղղակի պատասխան տալ: Եթե առաջնորդվենք ժողովրդական ընկալմամբ, խորամանկությունն, ամեն դեպքում, դրական հատկանիշ չէ, թեպետև պատերազմների ժամանակ խորամանկությամբ կարելի է հաղթանակներ տանել, անգամ փոքրաթիվ ուժերով: Առտնին փոխհարաբերությունների ընթացքում խորամանկությունը համազոր է*

Նաև՝ դարձյալ լեռնցուն վերագրվող զայրույթն ու զարմանքը, որ որդին չի կողոպտել կամ սպանել Տփղիսից Ռուսաստան ուղևորվող հայ վաճառականին.

Отец
Где был ты сын?

Сын
В ущельи скал
Где прорван каменистый берег,
И путь открыт на Дариял.

Отец
Что делал там?

Сын
Я слушал Терек.

Отец
А не видал ли ты грузин
Иль русских?

Сын
Видал я, с товаром
Тифлисский ехал армянин.

Отец
Он был со стражей?

Сын
Нет, один.

ննջգուլթյան, որին զոհ են գնում պարզ ու անապակ, բարի ու անչար հոգիները: Պուշկինի «хитрый»-ն, կարծում ենք, այս վերջին տեսակից է: Աբովյանը նման դեպքերում ասում էր.

Խորամանկ մարդիցն աստված ազատի,
Խելացին ընբռա ո՛չ խերն, ո՛չ չառը
Իր օրումն երբեք չի պետք է ուզի... (b II, *201):*

Отец
Зачем нечаянным ударом
Не вздумал ты сразить его
И не прыгнул к нему с утеса?–

Հայրը
Ո՞րտեղ էիր դու, որդի:

Որդին
Ջորում, ժայռերի մեջ,
Ուր հարթեցված է քարքարոտ ափը,
Եվ ճամփա է բացված դեպի Դարիալ:

Հայրը
Ի՞նչ էիր անում այնտեղ:

Որդին
Ուշկնդրում էի Թերեքին:

Հայրը
Իսկ չտեսա՞ր դու վրացու
Եվ կամ էլ ռուսի:

Որդին
Տեսա՛, ապրանքը հետն առած՝
Գնում էր Թիֆլիսցի մի հայ:

Հայրը
Պահակախո՞ւմբ կար նրա հետ:

Որդին
Ո՛չ, մենակ էր:

Հայրը
Ինչո՞ւ գլխումդ միտք չծագեց՝
Անսպասելի հարվածով սպանել նրան,
Ինչո՞ւ չթռար նրա վրա ժայռից[23]*:*

---

[23] *Նույն տեղում, հ. IV, էջ 315:*

Ճիշտ է, հայի մասին այս անարգական խոսքերն արտասանողը լեռնցին է, բայց եթե գրողն ըստ էության հաղորդակից չէ տվյալ ազգության ճակատագրին, ապրած կյանքին ու անցած պատմական ուղուն, տանջանքներին ու տենչանքներին, իրավունք չունի, թեկուզև հերոսի բերանով, «ստրուկ» ու «վախկոտ» կոչելու հային, եթե անգամ նրա հերոսը թշնամի լինի քրիստոնեությանը և ատելությամբ լցված՝ հայի նկատմամբ: Իսկական հումանիստը նման բան չէր անի, եթե անգամ թյուր կարծիք էլ ուենենար իր գրվածքի մեջ հիշատակվող ազգի, ներկա դեպքում՝ հայերի մասին:

Նույնը պիտի ասել մոլի կրքերի արգասիք «Սև չալ» քերթվածքի մասին (գրված՝ Քիշինև, 1820 թ. նոյեմբերի 20-ին), որի քնարական հերոսը տափական կատաղության մեջ սպանում է իր անհավատարիմ հոմանուհուն՝ հույն աղջկան, նրա սիրեցյալ հայ պատանուն և երկուսի մարմիններն էլ նետել տալիս Դանուբի մեջ («Неверную деву лобзал армянин.../ В дунайские волны их бросил тела...»)[24]*: Ժամանակակիցներից մեկը՝ Հարություն Մակարի Խուդաբաշյանը, դառնացած հարցրել է. «Բայց ինչո՞ւ է Պուշկինը ծաղրում հայերին...»: Ջնայած, հակառակը պնդողներ էլ կային, որոնք այդ տողերը բնավ էլ իբրև ծաղր չէին ընկալում*[25]*:*

4

Դառնանք հիմա Պուշկինի՝ անմիջականորեն հայերին առնչվող դլխավոր գրվածքին՝ «Ճանապարհորդություն դեպի Արզրում 1829 թվականի արշավանքի ժամանակ» («Путешествие в Арзрум во время похода 1829 года») *ուղեգրությանը: Ինչ խոսք, առիթներն անչափ շատ էին, և Պուշկինն անսահմանափակ հնարավորություններ ուներ հայոց բախտի, Արևմտյան Հայաստանի ազատագրության, հայկական թագավորության վերականգնման մասին իր անկեղծ կարծիքն հայտնելու, ինչպես 20-ական թթ. սկզբներին՝ հույների վերաբերմամբ, որն անվերապահորեն դրական էր ու չէր թաքցվում: Բայց այս դեպքում հայերը Պուշկինի մտահոգության առարկան չէին, հայության ապագան նրան չէր հուզում, նրա սիրտն ու հոգին այլ փոթորիկներով էին բռնված:*

Մի կողմ թողած պատմա-աշխարհագրական ու տեղագրական բազմաթիվ սխալները, որոնք իրենց անցած ճանապարհին հանդիպած

---

[24] *Նույն տեղում, հ. II, էջ 16–17:*

[25] «Пушкин в воспоминаниях современников», Л., 1950, с. 184.

անձանց ու անցքերի մեծ մասամբ անտարբեր և բնությանն հրաշք տեսարաններին, տեղանքին ու տեղացիներին մի առանձին արժեք չտվող եսակենտրոն ճանապարհորդների անբաժան ուղեկիցներ են, դառնանք գրքի ամենահատկանշական դրվագներին:

*Պուշկինը կարսում վայելում է իսկական **հայկական հյուրասիրություն**, հայ մարդու հարկի տակ արժանանում սրտաբաց ընդունելության, որոնց մասին, սովորաբար, անկեղծորեն ու ջերմությամբ են գրել բոլոր նրանք, որոնց բախտ է վիճակվել չփվելու հայերի հետ: Մինչ փողոցում, անօդնական վիճակում, անձրևի տակ կանգնած՝ թրջվում էր Պուշկինը, և ո՛չ մի թուրք ուշադրություն չէր դարձնում նրա վրա, նեղս չէր հրավիրում, հենց առաջին հայը իր տան պատուհանից տեսնելով օթևանի կարոտ օտարականին՝ միայն ու միայն մարդասիրությունից դրդված, ինքնահոժար իջնում է փողոց, նրան տուն հրավիրում, կերակրում, տաքացնում, չորերը չորացնում, դիշինելու տեղ տալիս՝ դրա դիմաց ոչինչ չակնկալելով, օթևան տալու համար վարձ չպահանջելով ու չսպասելով, որ խղճի ու աստուծո դեմ բան կլինեն: Իսկ Պուշկինն էլ կողմնակի դիտողի աչքերով այդ ամենն արձանագրելով՝ անձնական երախտանքի նշույլ իսկ ցույց չի տալիս*[26]*:*

Պուշկինի առաջարկությամբ՝ Կարսից մինչև ռուսական զորակայան ու Արղրում, նրան ուղեկցում է հյուրընկալի 17-ամյա եղբայր Արտեմը (Հարություն—Պ. Հ.), որը խանդավառված էր Հայաստանի ազատագրությամբ և աշխատում էր դրանով վարակել նաև օտարականին: Վերջինիս արձագանքը, սակայն, անհասկանալիորեն տարօրինակ էր. «Կես ժամ հետո մեկնեցի Կարսից, և Արտեմը (այսպես էր կոչվում իմ հայը) արդեն արշավում էր կողքիս, թուրքական հովատակի վրա, քրդական ճկուն տեսք ձեռքին, դաշույնը գոտին խրած, և զառանցելով թուրքերի ու ճակատամարտերի մասին»[27]*:*

Ի՞նչը պիտի լիներ Արտեմի «զառանցանքի» առարկան, եթե ո՛չ Հայաստանի ազատագրումը, բայց Պուշկինը դրա հանդեպ իր դրական վերաբերմունքը չի արտահայտում:

---

[26] *Համմտ.* А. С. Пушкин, Полное собрание сочинений в десяти томах, т. VI, М.–Л., 1949, с. 673.

[27] Ա. Ս. Պուշկին, *Ընտիր երկեր երեք հատորով, հ. 2. Արձակ երկեր, Ե., 1937, էջ 304, Թարգմ. Մ. Գևորգյանի: Այս և հաջորդ բոլոր քաղվածքները համեմատված են ռուսական ակադեմիական 10-հատորյակում տպագրված «Ճանապարհորդության» բնագրի հետ: Տե՛ս* А. С. Пушкин, Полн. собр. соч., т. VI, с. 674 *(այսուհետև՝* Ա. Ս. Պուշկին, *Ճանապարհորդություն, ռուս., էջ... և հայ., էջ ...):*

Կարսից մինչև Արզրում Պուշկինն անցնում է պատմական Հայաստանով՝ հայկական հին ու նոր բնակավայրերի ու հուշարձանների միջով: Բայց «Ճանապարհորդություն դեպի Արզրում» գրքից չի զգացվում, թե ի՞նչն է նրան հուզել հայկական բնակավայրերից ու հուշարձաններից, որո՞նք են նրա ուշադրությունը գրավել, հայ մարդու բնավորության ո՞ր գիծն է նրան խորհելու նյութ տվել. ամենուրեք թուրքերն են, կարեկցանքն ու ջերմ վերաբերմունքը Պուշկինը նրանց համար է պահել՝ մոռանալով երբեմն անգամ ռուսական-հայրենականը:

Ահա՛ թուրք զինվորների համազգեստը.

«Թուրքերը վրա էին տալիս մեծ հանդգնությամբ... նրանց բարձր չալմաները, գեղեցիկ դոլիմանները և ձիերի սարքը խիստ հակապատկերն էին կոզակների կապույտ համազգեստների և հասարակ ձիասարքի»[28]*:*

Ահա՛ գերի բռնված թուրք Հակկի-փաշան.

«Նա նստած էր ծալապատիկ և ծխամորճ էր ծխում: Նա մոտ քառասուն տարեկան էր երևում: Ծանրակշռություն ու խորին հանգստություն էր արտահայտում նրա գեղեցիկ դեմքը»[29]*:*

Ահա՛ երիտասարդ թուրքի դիակը.

«Ինձ ձին... կանգ առավ մի երիտասարդ թուրքի դիակի մոտ, որն ընկած էր ճանապարհի լայնքով: Նա, թվում էր, մոտ 18 տարեկան էր, գունատ, կուսական դեմքը չէր այլանդակված»[30]*:*

Ահա՛ մահամերձ թուրք բեկը և վիրավոր թուրք զինվորը.

«Ծառի տակ պառկած էր մեր թուրք բեկերից մեկը՝ մահացու կերպով վիրավորված: Նրա մոտ հեկեկում էր նրա սիրելին... Մեռնող բեկը չափազանց հանգիստ էր և անշարժ նայում էր իր երիտասարդ բարեկամին... Անտառից դուրս եկավ մի թուրք՝ սեղմելով իր վերքը արյունոտված չորի կտորով: Զինվորները մոտեցան նրան, որպեսզի սվինահար անեն՝ գուցե մարդասիրությունից դրդված: Բայց այդ ինձ չափազանց վրդովեցրեց: Ես պաշտպանեցի խեղճ թուրքին և հազիվ հազ նրան ուժասպառ և արյունաքամ եղած վիճակում բերի իր ընկերների մոտ»[31]*:*

Եվ հանկարծ, սրանց կողքին, մի ամբողջ զավեշտական պատմություն՝ հայերին առնչվող: Թուրքերը քշել-տարել էին հայերի

---

[28] **Ա. Ս. Պուշկին**, *Ճանապարհորդություն..., ռուս., էջ 677, հայ., էջ 307:*

[29] *Նույն տեղում, ռուս., էջ 686, հայ., էջ 313:*

[30] *Նույն տեղում, ռուս., էջ 681, հայ., էջ 310:*

[31] *Նույն տեղում, ռուս., էջ 684, հայ., էջ 312:*

անասունները: Լեռներում ապրող գեղջուկների համար անասունները կորցնելը համազոր էր սովամահության: Հայերն եկել էին օգնություն աղերսելու ռուս հրամանատար Անրեպից: Իսկ վերջինս, առանց հասկանալու, թե հայերն ինչ են խնդրում, անգամ մինչև վերջ չլսելով նրանց՝ զինվորներ է ուղարկում, որոնք և, օգնելու փոխարեն, թալանում են հայերի վերջին հավերը: Իր հերթին, Պուշկինն էլ խորամուխ չլինելով բանի էության մեջ, ավելացնում է այս տողերը. «Այդպիսով՝ մենք 40 վերստ պատույտ տվինք, որպեսզի մի քանի հայկական հավերի կյանքը փրկած լինենք, մի բան, որ ինձ բնավ զվարճալի չէր թվում»[32]*:*

Սեղծ լրջությամբ արձանագրված այս խոսքերը եթե անհոգի ծաղր էլ չհամարենք հայերի թշվառության հանդեպ, ապա ամենևին ծիծաղելի չեն:

*Աշխարհում ոչ ոքի մտքով չի անցել **անիծյալ** կոչել հացը, բայց «Ճանապարհորդություն դեպի Արզրում» գրքում հանդիպում է համանման արտահայտություն. «Ճաշի վոխարեն կերա ես **անիծյալ չյուրեկը**՝ այն բլիթանման, մոխրի հետ կիսախառն թխած **հայկական հացը**...»*[33]*:*

Պուշկինը մեծագույն բավականությամբ նկարագրել է թուրքաց հարեմը, երկսեռ թուրքին, բայց թուրքական բռնությունից և հարատահարությունից աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկին փրկելու հարցը նրան չի անհանգստացրել: Այո՛, Պուշկինը մի քանի տող ունի գրած Արզրումի դրավումից հետո հայերի խանդավառ ցույցի մասին ընդդեմ թուրքերի, և անկեղծ ուրախություն՝ ռուսների գալստյան առթիվ, բայց ցուցարարների շարքում տեսնելով իրեն ուղեկցող հայ երիտասարդին (Արտեմին)՝ շատ է զարմանում, որ նա նրանց մեջ է. «Մենք մտանք քաղաք, որը զարմանալի տեսարան էր ներկայացնում: Թուրքերն իրենց տափակ կտուրներից մռայլ նայում էին մեզ վրա: Հայերն աղմկելով վխտում էին նեղ փողոցներում: Նրանց տղաները վազում էին մեր ձիերի առաջից. խաչակնքելով ու կրկնելով՝ Քրիստիա՛ն... Քրիստիա՛ն... Մեծ զարմանքով ես այստեղ հանդիպեցի իմ Արտեմին, որն արդեն շրջագայում էր քաղաքում՝ չնայած խիստ հրամանին, որ ոչ ոք ճամբարից չբացակայի առանց հատուկ թույլատվության»[34]*:*

---

32 *Նույն տեղում, ռուս., էջ 687, հայ., էջ 314:*

33 *Նույն տեղում, ռուս., էջ 671, հայ., էջ 302 (ընդգծումներն իմն են—Պ. Հ.):*

34 *Նույն տեղում, ռուս., էջ 690. հայ., էջ 317:*

Արտեմի վարմունքի մեջ դատապարտելի ոչինչ չկար, Արզրումի գրավումը նրան էլ թևավորել էր հույսերով՝ առաջիկայում ազատագրված տեսնելու հայկական հողերը թուրքական տիրապետությունից և միակցված Ռուսաստանին: Հայերի խանդավառ ցույցի խորհուրդն այս էր: Հետևաբար, եթե իսկապես զարմանալու բան կա, այդ ռուս բանաստեղծի անտարբերությունն է տվյալ պատմական կարևոր իրողության հանդեպ: Մի՞թե Պուշկինի ներքին տագնապները այնքան ահավոր էին, որ նա ի վիճակի չէր կենտրոնանալու և ըմբռնելու Արզրումի հայոց խանդավառ ցույցի չարժառիթը: Անհասկանալի է մնում նաև, թե նման հոգեվիճակում նա ինչո՞ւ չէր դարչում և հետաքրքրվում էր թուրք ներքինու կյանքով՝ միաժամանակ հավատացնելով ընթերցողներին, թե նրա ցուցմունքները «բնախոսական տեսակետից թանկարժեք էին...»[35]*:*

«Ճանապարհորդության» մեջ թուրքերից ազատագրված հայկական հողերն իրենց բուն, Հայաստան անունով հիշվում են միայն մեկ անգամ, այն էլ դարձյալ ընդգծված անբարյացակամությամբ՝ «Անապատներ» կոչմամբ. «Կոմսը նվիրեց ինձ, ի հիշատակ, մի թուրքական թուր: Ես այն պահում եմ որպես հիշատակ փայլուն հերոսի հետքերով Հայաստանի նվաճված անապատներում կատարած թափառումների»[36]*:*

5

Շատ տասնամյակներ առաջ գրել են նաև Պուշկինի հայկական մեկ այլ «նախասիրության» մասին՝ ազդակ առնելով տակավին 1898-ին «Նոր Դար» լրագրի էջերում Յուրի Վեսելովսկու կողմից գրական շրջանառության մեջ դրած՝ Պուշկինի սևագիր ու անավարտ որոշ պատառիկներից, մասամբ էլ, այլափոխելով դրանց բովանդակությունը, պատառիկներ, որոնք իրականում բանաստեղծի երբեմնի մտահղացման իրեղեն ապացույցներն էին՝ 1822-ին ծրագրած «Բուվա» պոեմից մնացած բեկորները (հիշեցնե՛նք նաև, որ նույն նյութը Պուշկինից շատ առաջ մշակել էր նաև Ռադիշչևը՝ բնավ չանտեսելով ասքի մեջ եղած հայկականը):

---

35 *Նույն տեղում. ռուս., էջ 697, հայ., էջ 322:*

36 *Նույն տեղում, ռուս., էջ 700, հայ., էջ 325: Արդարացի լինելու համար չենք կարող չասել, որ հայերից ու Հայաստանից մի բան է դուր եկել Պուշկինին, և այդ՝ սոխով պատրաստված ոչխարի միսը, կերակուր, որ թվացել է նրան «խոհարարական արվեստի դադաթնակետ» (նույն տեղում, ռուս., էջ 673, հայ., էջ 304):*

«Շատ քչերին է հայտնի այժմ,—գրում է ռուս գրականագետը,—որ Պուշկինի չավարտված երկասիրությունների մեջ կա երկու ոտանավոր, որոնց միջի գործողությունը պետք է տեղի ունենար Հայաստանում, Ջենդևնեյ (անհաջող կերպով ստեղծված անուն է, իհարկե) թագավորի պալատում: Առաջին ոտանավորի մեջ Պուշկինը կամեցել է նկարագրել հայ թագավորի կռիվը յուր թշնամիների դեմ, որոնք այրել էին նրա երկրի մեջ դաշտերն ու դյուղերը, և ապա նկարագրել նրա վրանների տեղի ունեցող չքեղ խնջույքը, ուր հավաքվում են «զորավոր թագավորներ, թագուհիներ, իշխանուհիներ և դյուցազուններ» (անճշտություն, ոտանավորի մեջ «թագուհիներ, իշխանուհիներ» բառերը չկան, այլ՝ «սրբքայազուններ»—Պ. Հ.), որպեսզի Ջենդևնեյի մոտ մնան 20 օր չարունակ: Երկրորդ ոտանավորը նվիրված պետք է լիներ հայոց թագավորի աղջկան, որի մասին բանաստեղծն ասում է, որ նա «գնդեցիկ էր ինչպես մայիսի շուշան և կայտառ՝ ինչպես Կովկասյան լեռների եղնիկ»: Գեղեցկուհու ձեռքը խնդրում են շատ իշխաններ ու կարիճներ, բայց ծեր թագավորը պետք է որոշի, թե ո՞րին է կամենում յուր վեհան և դաշնակիցը դարձնել»[37]*:*

Արդեն մեր օրերում, ինչպես հիշեցինք, ավելի առաջ անցնելով՝ հայ-ռուս գրական առնչությունների հետազոտողները հայտարարում են, թե Պուշկինն իր «Բովա» պոեմում ստեղծել է «Հայաստանի՝ այդ հզոր, հյուբասեր երկրի գունագեղ կերպարը»[38]*, կամ էլ՝ «Պուշկինը նյութեր է հավաքել հայ ժողովրդի հեռավոր անցյալից մի պոեմ գրելու համար»*[39]*: Բայց Պուշկինը, իրականում, իր գրվածքներից և ոչ մեկի մեջ Հայաստանի կերպարը չի՛ ստեղծել ու երբեք էլ նյութեր չի՛ հավաքել՝ հայոց մասին պոեմ գրելու: Այո՛, նա փորձ է արել վերամշակել վերջին դարի ռուսական մի ասք, սակայն այն ոչ թե հայրենի հերկերի բերք էր, այլ օտար դաշտերի տունկ («Ասք քաջարի սուլհու, արքայազն Բովայի մասին»), որի նախօրինակը հորինվել էր Ֆրանսիայում, տակավին XII–XIII դարերում: Ասպետական այդ վեպն այնուհետև թարգմանվել է իտալերեն, իսկ այստեղից էլ անցել հարավ-սլավոնական երկրները: Վերջապես՝ XVI դարում (իտալերե՞ն, թե՞ սերբերենից) «Բովան» թարգմանվել է բելոռուսերեն, իսկ վերջին լեզվից, միայն հաջորդ հարյուրամյակում, ռուսերեն՝*

---

37 Յու. Վեսելովսկի, *Դրիյդենը և հայերը: —«Նոր Դար», 1898, № 201, քաղվածք՝ «Ա. Պուշկին», հոդվածներ և նյութեր, Ե., 1937, էջ 198:*

38 Գ. Հովնան, *Հայ-ռուս պրական կապերը 19–20-րդ դարերում, գիրք 1, Ե., 1960, էջ 24:*

39 С. Г. Арешян , Армянская печать и царская цензура, с. 88.

ճոխացվելով ռուսական բանահյուսությանը բնորոշ տարրերով[40]: Ասքում կամ ասպետական վեպում եղած ողջ հայկականը գալիս էր ֆրանսերեն սկզբնագրից և պատմական որոշակի սկզբնաղբյուր չէր ենթադրում, էլ չենք ասում՝ հայկականն աստիճանաբար դուրս էր մղվում, իրողություն, որն, առհասարակ, հատուկ է բոլոր ազգերի հեքիաթներին:

Անտարակույս, իրավացի են ռուս հին դրականության ժամանակակից հետազոտողները, որոնք առ ոչինչ համարելով կամ անտեսելով «Բովայի» մեջ եղած հայկականը՝ գրում են. «Արկածային-սիրային բովանդակությամբ թարգմանական երկերի մեջ առաջին հերթին հարկ է հիշել «Բովա Կորոլևիչի մասին պատմությունը», որի բեղուսներեն թարգմանությունը XVII դարի սկզբներին, թերևս, փոքր-ինչ վաղ, հիմք դարձավ ռուսական բնագրի համար: Ամբողջ երեք հարյուրամյակ, ընդհուպ մինչև XX դարը, Բովան տարածված էր ժողովրդական միջավայրում: Այս պատմության մեջ փառաբանվում էին անձնական հատկանիշները, դյուցազնական սրարքները, քաջությունը: Պատմության հերոսը սիրահարվում է, սխրանքներ գործում, մարտնչում արդարության համար: Այս պատմության ռուսական տարբերակն աստիճանաբար կորցնում է ասպետական վեպի հատկանիշները և ձեռք բերում ռուսական հեքիաթի տարրեր»[41]:

Պուշկինի մտահղացումը վերջնական կերպարանք չի ստացել, իսկ «Բովայի» հեղինակային պլանում և պահպանված անմշակ տողերի մեջ, հակառակ դրանց բովանդակության՝ Յու. Վեսելովսկու վերաշարադրման, իրականում, չեն հանդիպում ո՛չ հայ ցեղանունը, ո՛չ էլ հայի ու Հայաստանի մասին որևէ բնութագրական խոսք[42]: Ձենք

---

40 *Տե՛ս* Н. К. Гудзий, История древней русской литературы, М., 1938, с. 361–367, *նույնի կազմած՝* «Хрестоматия по древней русской литературе», изд. 8, М., 1973, с. 452.

41 История всемирной литературы, т. 4, М., 1987, с. 345. *Համապատասխան գլխի հեղինակը ակադ. Դ. Լիխաչովն է:*

42 *Պատառիկներն ու նշումները տե՛ս* А. С. Пушкин, Полное собрание сочинений, т. IV с. 401–403. *Պուշկինի հայկական առնչությունների բազմամասնակ հետազոտող Կ. Դրիգորյանը իր վերջին գրքում «Բովայի» կապակցությամբ (Ասքի, բայց ո՛չ Պուշկինի ծրագրային նշումների) նկատել է նաև, որ «Դժվար է խոսել հեքիաթային սյուժեի պատմական հիմքի մասին»* («Из истории русско-армянских литературных и культурных отношений», Ереван, 1974, с. 28), *իսկ ինչ վերաբերում է Պուշկինի ծրագրած երկին, ապա այն իրավացիորեն դուրս է թողել*

ասում արդեն, որ խնդրո առարկա պատառիկների մեջ Զենզեվեյը ո՛չ թե հայոց, այլ վրաց թագավոր է, և այդ Պուշկինն է ասում: Ահա՛ նրա բուն խոսքերը.

1

Кого союзником и другом
Себе ты выбрал, Зензевей,
Кто будет счастливым супругом
Царевны дочери твоей–
Она мила как ландыш мая,
Резва как лань Кавказских гор.

Քեզ դաշնակից ու բարեկամ
Արդ՝ ո՞ւմ ես ընտրել, Զենզեվեյ,
Ո՞վ պիտի դառնա երջանիկ ամուսինը
Քո աղջկա՝ արքայադստեր:
Նա գեղեցիկ է ինչպես մայիսյան շուշան
Ու կայտառ՝ ինչպես կովկասյան լեռների այծյամ:

3

Народ кипит, гремят народны клики.
Пред теремом грузинского владыки–
Съезжаются могучие цари,
Царевичи, князья, богатыри–
Царь Зензевей их ласково встречает,
Готовит пир – и ровно сорок дней
Своих гостей он пышно угощает.

Ամբոխն եռուզեռի մեջ է, թնդում են ժողովրդի կանչերը.
Վրաց տիրակալի տնակի առջև
Հավաքվում են հզոր թագավորները,
Արքայազուններ, իշխաններ, դյուցազուններ.
Զենզեվեյ արքան նրանց ընդունում է ջերմորեն,
Խրախճանք սարքում և ուղիղ քառասուն օր
Առատորեն հյուրասիրում իր հյուրերին...[43]*:*

Հայկական անդրադարձումների արդասիք համարվող՝ պուշկինյան երկերի չարքից:

43 А. С. Пушкин, Полное собрание сочинений, т. IV, с. 402–403.

Նշանակում է՝ Պուշկինը գիտակցորեն այլափոխել է և՛ հնօրյա ասքը, և՛ վերջինի՝ Ռադիշչևի մշակումից ընթերցողին ծանոթ այուժեն՝ Հայաստանի փոխարեն դործողությունների ծավալման միջավայը դարձնելով Վրաստանը, հայոց արքայի փոխարեն ասպարեզ հանելով վրաց անգո թագավորին ու նրա արքունիքը, և այդ ձևով ջնջել հայկականը հիշեցնող ամեն հետք:

*Այս նկատողության ճշմարտությունը հաստատվում է նաև Պուշկինի ստեղծագործական ձեռագրերի մեջ եղևան եկած պատառիկներով, որոնք այլ բան չեն, քան նախորդ էջում մեջբերված հատվածների նախնական, անմշակ փորձերը: Այդտեղ **Հայաստանը** և **հայոց թագավորը** (Զենզեվեյը) դեռ հիշատակված են, բայց հետագա մշակումների ժամանակ, բանաստեղծի կամքով՝ «Հայաստան» երկրանունն ընդհանրապես ջնջված է, իսկ «հայոց թագավորն» իր անունն ու տեղը զիջել է վրացուն: Նշանակում է՝ փոփոխությունն արված է դիտակցորեն:*

Ահա՛ այդ անմշակ ու սևագիր պատառիկներից 2-րդը, որի վրա, ի դեպ, հենվելով, անցյալներում իր վարկածն է կառուցել նաև Յու. Վեսելովսկին՝ այդպես էլ հասու չլինելով բուն ճշմարտությանը.

[В Армению, в палаты Зензевея]
Съезжаются могучие цари,
Царевичи, князья, богатыри;
Армянский царь их ласково встречая,
Готовит пир – столы свои,
И с ними добрый Зензевей
Пирует ровно сорок дней...

[Դեպի Հայաստան, Զենզեվեյի ապարանքները]
Հավաքվում են հզոր թագավորներ,
Արքայազուններ, իշխաններ, դյուցազուններ.
Հայոց թագավորը նրանց ժպտերես դիմավորելով՝
Խրախճանք է սարքում՝ իր սեղանները պատրաստում,
Եվ նրանց հետ բարի Զենզեվեյը
Ուղիղ քառասուն օր քեֆ է անում...[44]:

---

44 *Այս ու մյուս հատվածի նախնական փորձերն, իրրև անկախ բանաստեղծության մասեր, մեջ են բերված պրոֆ. Հ. Դանալանյանի վերջին դրքի քնագրերի բաժնում: Տե՛ս* О. Ганаланян, Армения в творчестве русских поэтов, Е., 1988, с. 121–122.

Թե այս բոլորից հետո ի՞նչ իրավունքով «Բովայի» մտահղացումն ու սևագիր երեք պատառիկները (Հանդերձ ծրագրային նշումներով) պիտի կապվեն Հայոց հետ, ոչ միայն անբացատրելի է մնում, այլև դառնում յուրատեսակ բանասիրական կեղծիք:

*Եվս երկու խոսք. ռուս հայտնի բանաձևա ու աղբարկաձևա Նիկոլայ Եվդոկիմիչ Օնչուկովը (1872–1942) «Բովա» պոեմը բնութագրել է որպես **երգիծանք**՝ ուղղված եկատերինա Բ կայսրուհու դեմ՝ այդ անավարտ երկից մեզ հասած սևագիր հատվածներում երևացող բանահյուսական կերպարների տակ իրականում տեսնելով XVIII դարի վերջին տասնամյակներին գործած պատմական ո՛չ երկրորդական դեմքերի՝ անձամբ կայսրուհուն (Մլլիսարիս), Գրիգորի Օռլովին (Դադոն), Պետրոս Երկրորդին (Բենդոկիր Տկարամիտ), Պավել Առաջինին (Բովա) և այլոց՝ իրենց ոչ անհայտ կրքերով ու արդահատելի գործերով, ոմանց էլ աննախանձելի օրհասով: Նկատված է այնուհետև, որ զարմանալի համընկնումներ կան հեքիաթի ավանդական սյուժեի և եկատերինայի կայսրության շրջանում ու, մասամբ, հետո կատարված անցքերի միջև՝ կապված մասնավորապես Պետրոս Երկրորդի և Պավել Առաջինի սպանության հանգամանքների հետ: Այնպես որ, հեքիաթի կերպարները ցանկալի դիմակներ էին մտրիկ անցյալի սև գործերը հրապարակ հանելու համար*[45]*:*

Այս ևս իր հերթին պարտադրում է հայ հետազոտողին ձեռնպահ մնալ «Բովայի» հարցում և չորոնել այնտեղ հային ու Հայաստանը, որովհետև դրական տվյալ մտահղացման մեջ Պուշկինին խոսեցնողը վրիժառուության կիրքն էր. նա քողարկված ձևով հաշիվներ էր մաքրում թագակիր տիկնոջից ու նրա հոմանիներից՝ իր նախնիներին հալածելու համար՝ բնավ չտարվելով ռոմանտիկ հրապուրանքներով:

Եզրափակենք. Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Հարավ և նրա հազթական զորքերի հուժկու հարվածների տակ պարսկական և թուրքական ռազմա-ֆեոդալական պետությունների խուճապն ու նահանջը, հայկական հին հողերի մի մասի ազատագրումն ու միացումը Ռուսական կայսրությանը, դեպի ամայացած Արևելյան Հայաստան ձգվող վերաբնակիչների անվերջանալի քարավանները չնայնում էին Արարատյան աշխարհը, վերածնում հայրենյանը, որն

---

45 *Տե՛ս Պուշկինյան հանդիսությունների առթիվ «Լիտերատուրնայա գազետայի» թողարկած ամենամյա հատուկ համարի նյութերը՝* «Пушкинский праздник», 1984, с. 5.

սկսում էր աստիճանաբար ձևավորվել որպես ազգ և ներդրավվել ընդհանուր լուսավորական շարժման ոլորտ:

Աբովյանն իր հայրենիքի ոխերիմ թշնամին կլիներ, եթե այս պարագաներում չգնահատեր ռուս-թուրքական և ռուս-պարսկական վերջին պատերազմների բախտորոշ դերը հայության կյանքում, չփառաբաներ ռուս պետականությունը, ռուս թագավորին ու նրա զորավարներին: Չէ՞ որ, Մարքսի բառերով ասած՝ «Ռուսիայի քաղաքակրթիչ դերը», մասնավորապես, հայերիս համար, հենց այս կետից էր սկսվում:

Պուշկինին, ընդհակառակը, այդ հարցերը բնավ չեն մտահոգել, հայի, իբրև ազգության մասին, նա աղոտ պատկերացում է ունեցել, չենք ասում՝ թյուր: Հայերի ազատագրության խնդիրը նրա հոգացումների առարկան երբեք չի՛ եղել: Ռուս կոզակի արյունը «քրիստոնյա ամբոխի», այսինքն՝ հայերի համար թափելը անմտություն է համարել: Իբրև այլազգի, Պուշկինը, թերևս, ճիշտ էր, իբրև մարդասեր՝ խորապես մոլորված: Էլ ո՞ւր մնաց որևէ ազգի կամ մարդու պատասխանատվությունը մարդկության ու քաղաքակրթության ճակատագրի համար:

Աբովյանն երբեք Պուշկինի դուռը չի՛ թակել, նրան ծանոթ չի՛ եղել, նրա ստեղծագործություններով չի՛ խանդավառվել: Գնահատենք Պուշկինի ստեղծագործության թողած խոր հետքը հայ կյանքում, ընդգծենք դրանց մասնակցությունը հայոց գեղարվեստական մտածողության ձևավորման գործում, բայց այդ չսկսենք Աբովյանից, ղլան հայասիրական երանդ չտանք:

Շեքսպիրն էլ հայերի ու Հայաստանի մասին ոչինչ չի ասել, բայց որքան երախտապարտ են նրան Հայաստանն ու հայ ընթերցողը, հայ հանդիսատեսը՝ իրենց հոգևոր աշխարհի հարստացման ու վերաիոխման համար, որոնց ազդակները գալիս էին նաև Շեքսպիրի ստեղծագործություններից:

ԱՎԵԼՈՐԴ ԷՋ ԱԲՈՎՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սարգիս Քամալյանցը Աբովյանի մասնավոր դպրոցի (պանսիոնի) աշակերտների չարքն է դասել նաև անվանի թատերդակ Գաբրիել Սունդուկյանցին և վերջինիս անունից պատմել «Հուշեր», որոնց հարազատությունը շատ է կասկածելի:

Իբրև թե ծերունազարդ դրոշը 900-ական թթ., Միքայելյան փողոցով ոտքով Մուշտայիդ զբոսանքի դնալիս, հաճախակի պատահելով Քամալյանցին՝ ասել է.

«Խաչատուր Աբովյանցը եղել է իմ ուսուցիչը. նա է ինձ ռուսաց լեզվից պատրաստել: Նա չլիներ, ինձ գիմնազիայում չէին ընդունի: Նրա մոտ պատրաստված աշակերտները Մոսկվայում, Պ. Բուրդում էլ անվանի էին, ինչ թե Թիֆլիսում: Շատ լավ մարդ էր, շատ էլ աշխատասեր: Նրա մասնավոր դպրոցը կես-պանսիոնի պես բան էր. բաղկացած էր մի մեծ սենյակից ու բոլորովին կից էր ուղղիչ ուչիլիշչէի շենքին, որտեղ նա ամոթլիանել էր. գնվում էր Ալչվանդի խանութից քիչ վերև, ուր Լոտի կոնդիտերի խանութն է:

Եղբայրս՝ Միքայելը, նույնպես կարդում էր Աբովյանցի մոտ, բայց շատ հարղաքար, անուշակալ տղա էր. մի օր վարժապետը մի քանի անդամ նկատողություն արեց, որ ուշքը վրեն պահի, եղբայրս ականջ չդրեց: Աբովյանցը տաք բնույթ ուներ, բարկացավ, բռնեց նրա ականջից, այնպես ամուր քաշեց, որ բլթակն արյունաթաթախ եղավ: Վարժապետը մեղավոր չէր, Թիֆլիսի տղեքը ցեղք էին. խնդրեմ, գնթաղվա, — թախանձեց ծերունի դրամատուրդը, — ոչովի չասես, թե էդ բանը Սունդուկյանցի բերանից է դուրս նկել Աբովյանցի մասին»[1]*:*

Սունդուկյանցին վերագրված այս սակավատող հուշի մեջ աչք են ծակում կեղծ ոճավորումն ու ընդհանուր խոսքերը: Ա՛յն, որ Աբովյանը «շատ լավ մարդ էր, շատ էլ աշխատասեր» և «տաք բնույթ ուներ», հայտնի են վաղուց, հենց մեծ դրոշի ժամանակակիցների և օտարերկրացի ճանապարհորդների վկայություններից: Բայց որ Աբովյանը մի օր Սունդուկյանցի եղբոր՝ Միքայելի ականջն այնպես է քաշել, որ բլթակն արյունաթաթախ է եղել, առանց այլևայլության

[1] *ԺԱՄ, էջ 121–122:*

հորինվածք է. քանի որ բացահայտորեն ծեծի ու մարմնական պատիժների դեմ պայքարող մանկավարժը (Աբովյանը) փարիսեցի չէր, որ գրչով մի բան քարոզեր, իսկ գործնականում հակառակն աներ[2]:

Այսքանն իմիջիայլոց:

Վերոբերյալ քաղվածքում մի արտահայտություն կա միայն, որ երկու մեծ գրողների երբեմնի առնչություններին է վերաբերում. «Նա (Աբովյանը — Պ. Հ.) է ինձ ռուսաց լեզվից պատրաստել: Նա չլիներ, ինձ դիմնազիայում չէին ընդունի», — իբրև թե ասել է Սունդուկյանցը, և այդ խոսքերն էլ, ինչպես ստորև կտեսնենք, բավականաչափ կասկածելի են, չնայած Աբովյանն իսկապես որ աշակերտներ էր պատրաստում՝ դիմնազիայի բարձր դասարաններն ընդունվելու համար, իր մասնավոր դպրոցում ռուսերեն էր ավանդում, իսկ 1840-ին օգնել էր մի երիտասարդի՝ դիմնազիա ընդունվելու համար, որի անունն-ազգանունը, սակայն, Խաչատուր Առվանյան էր[3]:

Իսկ թե այս վերադրումից, այս մի քանի բառերից ի՛նչ հետևություն են արել դրականագետները, ի՛նչ օդեղեն ամրոցներ կառուցել, թո՛ղ կարդան վերջին տասնամյակների սունդուկյանագետների գրվածքները, Աբովյանին նվիրված հավուր պատշաճի հոդվածները, ուր ճոխացված մեջ է բերվում այդ ապշեցուցիչ լեգենդը, և Ռուբեն Զարյանի տակավին 1952-ի հիմնավոր առարկությունները, որոնք, ցավոք, արհամարհվեցին[4]:

Որպեսզի մեր արածը մերկասարանոց հայտարարություն չլինի, նմուշի համար արտագրենք սունդուկյանագետներից մեկի հանրածանոթ գրվածքից մի քանի հատված Աբովյանի ու Սունդուկյանցի մտացածին առնչակցությունների վերաբերյալ.

«1838 — 40 թվականներին Սունդուկյանը ընդունվում է Արղանյանների պանսիոնը, այնուհետև՝ դիմնազիան, միևնույն ժամանակ հաճախելով Խաչատուր Աբովյանի մասնավոր պանսիոնը ... Դորպատից վերադարձած մեծ լուսավորիչն արթնացնում էր իր աշակերտների մեջ սեր դեպի ռուս մեծ ժողովուրդը, դեպի նրա պայծառ կուլտուրան ու գրականությունը, դեպի ռուս ժողովրդի

---

[2] *Այովյանը մեկ անգամ չէ, որ պաշտոնապես հայտարարել է. «Երևխաներին խրատությու միջոցներն իմ կողմից սահմանափակված պիտի լինեն միմիայն նկատողություններով և հանդիմանություններով՝ առանց որևէ մարմնական պատժի» (Ա № 519, համմտ. Դ II, 237):*

[3] *Դ II, 164: վԱ, ֆ. 2, ց. 2, պ. 2757, թ. 11ա:*

[4] Գ. Սունդուկյանց, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. III, ե., 1952, էջ 680: Մ. Սաթթրոսյան, *Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը*, ե., 1953, էջ 78, 209:

լավագույն զավակներ՝ Լոմոնոսովը, Գրիբոյեդովը, Պուշկինը, Կռիլովը, Լերմոնտովը, Բելինսկին: Սունդուկյանի աշակերտական տետրակներից երևում է, որ այդ ժամանակ արդեն մեծ է եղել նրա հետաքրքրությունը դեպի դրականությունը... <արել է> արտագրություններ ռուս հեղինակների գործերից ... Աբովյանն ու իր հետևորդները աշակերտության մեջ զարդացնում էին այն գիտակցությունը, որ պետք է ապրել ժողովրդի, աշխատավորության հոգսերով. ազնվականներին, իշխաններին, հարուստներին, «եվրոպացի» չինովնիկներին պետք է տարբերել իսկական ժողովրդից՝ ազդի ազատության համար կռվող, կյանքի բարիքներ ստեղծող աշխատավոր ազասիներից: Պետք է կապվել ժողովրդի հետ, գրականության մեջ պատկերել նրա կյանքն ու հոգսերը, պետք է ժողովրդի հետ խոսել ժողովրդի լեզվով, գրականության մեջ արտահայտել նրա հույզերը, պայքարել միջնադարյան խավարամտության դեմ:

Խաչատուր Աբովյանի այս ավանդներն անկասկած խոր ազդեցություն են թողել պատանի Սունդուկյանի աշխարհայացքի ձևավորման վրա: Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ պատանի Սունդուկյանի մեջ աշակերտական տարիներին, հենց Խաչատուր Աբովյանի ազդեցությամբ է սաղմնավորվել հակումը դեպի ռեալիզմն ու թատրոնը»[5]*:*

Ի՞նչ է հետևում այս երկարաշատուտ քաղվածքից: Այն որ՝

1. Սունդուկյանցն Աբովյանին աշակերտել է Տփղիսի դիմնազիայում սովորելու ընթացքում [?!]:

2. Աբովյանն է Սունդուկյանցի մեջ սեր արթնացրել դեպի ռուս ժողովուրդն ու նրա մշակույթը, դեպի Լոմոնոսովի, Գրիբոյեդովի, Պուշկինի, Կռիլովի, Լերմոնտովի և Բելինսկու ստեղծագործությունները:

3. Աբովյանի մոտ ուսանելու չրջանում են Սունդուկյանցի տետրակների մեջ երևում արտագրություններ ռուս հեղինակների ալճակ ու չափածո գրվածքներից:

4. Աբովյանը չանացել է հասկացնել Սունդուկյանցին, որ միևնույն ազդի մեջ գոյություն ունեն տարբեր դասակարգեր ու շահախնդրություններ:

5. Աբովյանի ազդեցության հետևանքով է Սունդուկյանցն հակվել դեպի ռեալիզմն ու թատրոնը:

Եթե բանը սույն մենագրությամբ վերջանար, չարժեր, թերևս, անդրադառնալ, բայց խնդիրն այն է, որ Ղամալյանցի երևակայությամբ կյանքի կոչված և Գևորգ Աբովի վերաիմաստավորած լեզենդը

---

5 Գ. Աբով, *Գաբրիել Սունդուկյան*, Ե., *1953, էջ 20–21:*

թափանցել է նաև մեր ամենահեղինակավոր աշխատության՝ հայոց նոր գրականության պատմության ակադեմիական չարագրանքի մեջ, ուր ազդարարվում է նաև, որ «Աբովյանի աշխարհիկ դաստիարակությունը» Սունդուկյանցին «կապում է նաև «դրսի» հետ: Պանսիոնում Սունդուկյանցն առաջին անգամ ծանոթանում է դպրոցական թատրոնի հետ»[6]*:*

Արդյո՞ք չափից ավելի հեռուն չեն գնացել հարգարժան գրագետները (ինչպես կասեին մեր արևմտահայ եղբայրները) և արդյո՞ք բանական չէր լինի, որ նախքան իրենց գիտական չարագրություններին ձեռք զարկելը նրանք մեկ անգամ էլ ուշի-ուշով կարդային Սունդուկյանցի ինքնակենսագրական նոթերն ու նամակները, որոնց մեջ պարզ ու որոշ ասված է, թե 1830 — 40 թթ., հենց այն տարիներին, երբ Աբովյանը պաշտոնավարում էր Տփղիսի դավառական ուսումնարանում (1837.2 — 1843.8), Սունդուկյանցն ո՞ւմ մոտ, ո՞րքան ժամանակ և ի՞նչ առարկաներ է ուսանել՝ մի կողմ թողած բազմիցս նրա ասած խոսքերը, թե «Ամենից ավելի ես ինձ երախտապարտ եմ համարում նախ՝ իմ մորս, որ իր բարությամբ և առողջ դատողությամբ իմ ողջ կյանքի ընթացքում ղեկավարել է իմ գործունեությունը, և, երկրորդ, իմ դաստիարակներին՝ գիտնական Ջրպետյանին և նրա կրթված փարիզեցի ֆրանսուհի կնոջը, որոնց մոտ ես մնացել եմ վեց տարի չարունակ, առավոտյան ժ. 8-ից մինչև երեկոյան 6-ը: Մայրս և իմ մանկության դաստիարակներս արել են այն, որ խեղճին, զրկյալին և կարոտյալին ես վերաբերվել և վերաբերվում եմ խորին կարեկցությամբ»[7]*:*

Բերենք Սունդուկյանցի ինքնակենսագրական նոթերից մեր նյութին հայող մի երկու ուրիշ քաղվածք ևս.

Ա

<1898. սեպտեմբերի 30>

«Ջրպետյանի մոտ ես եղել եմ ... վեց տարի և հինգ ամիս (1832 թ. ապրիլի 1-ից մինչև 1838 թ. սեպտեմբերի 1-ը) ... Ես նրանց (Ջրպետյանի և կնոջ — Պ. Հ.) մոտ սովորել եմ առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը բացառապես հայերեն և ֆրանսերեն, իսկ հետագայում նաև՝ լատիներեն ու իտալերեն: Բայց, որովհետև նրանք ռուսերեն չգիտեին, հանգուցյալ մայրս այնպես կարգավորեց, որ

---

[6] *«Հայ նոր գրականության պատմություն», հ. III, Ե., 1961, էջ 179:*

[7] *Գ. Սունդուկյանց, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, էջ 472–473:*

Հետագայում, երեկոները, ես ռուսերենի դասեր էի վերցնում սկզբում հայ-կաթոլիկ Մամուլյանից[8], իսկ հետո՝ դիմնազիայի հայոց լեզվի ուսուցիչ Աբարատյանից: Ապա սովորելով Արզանյանների պանսիոնում (1838-ից մինչև 1840 թ.), հետո՝ ռուսաց դիմնազիայում (1840-ից մինչև 1846 թ.) և վերջապես՝ Պետերբուրգի համալսարանում (1846-ից մինչև 1850 թ.) ես, իհարկե, ուսումնասիրել եմ ռուս հեղինակներին...»[9]:

Բ

<1909, հոկտեմբեր>

«... Ուսումս սկսել եմ նախ՝ ուսուցիչ Շահան-Ջրպետյանի մոտ, որ բնակվում էր մեր տանը ... սկսած 1832 թ. ապրիլի 1-ից... ավելի քան վեց տարի, առավոտից մինչև երեկո... Պարոն Ջրպետյանի վախճանից հետո, որը տեղի ունեցավ 1838-ի օգոստոսի 16-ին... ես ուսումս շարունակեցի նրբայրներ Արզանյանների պանսիոնում, ապա այդ շրջանում Տփղիսում գոյություն ունեցող միակ ռուսական գիմնազիայում...»[10]:

Գ

<1911, փետրվարի 28>

«Ես պարապում էի նրանց (Հակոբ Շահան-Ջրպետյանի ու նրա ֆրանսուհի կնոջ — Պ. Հ.) մոտ առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժ. 8-ը, 1832 թ. ապրիլի 1-ից մինչև նրա հիվանդության օրը, այսինքն՝ մինչև 1838 թ. մարտի 1-ը...»[11]:

Սունդուկյանցի՝ ռուսերենի ուսուցիչների մասին վստահելի ցուցում ունի նաև նրա ամենամտերիմ բարեկամը՝ Գևորգ Զմշկյանը, որ հրապարակվել է տակավին 1889 թ. սկզբին, այսինքն՝ մի ժամանակ,

---

8 *Բահանա Մամուլյանցն այլ ոք չէ, քան Տիղլիսի հայ կաթոլիկների եկեղեցու երբեմնի ժամկոչ Յակոբ Մամուլովը, որի պղծոցը դործում էր 1815 թվականից՝ սովորեցնելով հայերեն, ռուսերեն, վրացերեն և լատիներեն: Ի դնալ, մի ժամանակ այնտեղ էր վարժվում նաև Երևանի թեմական դպրոցի առաջին տեսուչ Թովմա Թևոսյանցը (տե՛ս* Աղ. Երիցյանց, *Պատմություն, էջ 270–271):*

9 *Նույն տեղում, էջ 462, 464–465, մասամբ և՝ 472:*

10 Գ. Սունդուկյանց, *երկերի լիակատար ժողովածու, հ. IV, էջ 426–428 (թարգմանություն ֆրանսերենից):*

11 *Նույն տեղում, էջ 505:*

երբ մեջտեղում չկային վերոհիշյալ վկայություններից և ո՛չ մեկը: Ջմշկյանը պարզ ու որոշ դրել է. «...Ռուսերեն լեզուն ուսանելու համար Սունդուկյանցի մայրը ուղարկելիս է եղել նորան պարապելու երեկոյաններըը նախ մի կաթոլիկ ռուսագետ ոմն Մամուլովի և հետո հայտնի հայագետ Արարատյան վարժապետի մոտ. օգոստոսի 16-ին, 1838 թ. վախճանվում է Ջրպետյանը, և այնուհետև Գաբրիել Սունդուկյանցը մտնում է Ալրզանովների պանսիոնը, որտեղ ուսումը ավարտելուց հետո, քառասուն թվականին, անցնում է դիմնազիոն և այդտեղ ուսումը ավարտելուց հետո, 20-ին օգոստոսի 1846 թվականի, գնում է Պետերբուրգ...»[12]:

Համաձայն այս անառարկելի վկայությունների՝

***1832 թ. ապրիլի 1-ից մինչև 1838 թ. մարտը** (գուցե և մինչև օգոստոս ամիսը) Սունդուկյանցի դաստիարակներն են եղել Հակոբ Շահան-Ջրպետյանը և նրա ֆրանսուհի կինը: Առավոտյան ժ. 8-ից մինչև ժ. 6-ը անցկացնելով նրանց մոտ՝ Սունդուկյանցը ուսանել է հայերեն, ֆրանսերեն, նաև լատիներեն ու իտալերեն, իսկ ռուսերենի դասեր առել է երեկոները, սկզբներում հայ կաթոլիկ Մամուլյանցից, հետո՝ հայագետ Առաքել Արարատյանից:*

***1838 — 1840 թթ. (մինչև հունվարի 15-ը)** Սունդուկյանցը պաշտոնապես հաճախել է Արզանյանց եղբայրների մասնավոր դպրոցը* (Благородный пансион кандидатов Арзановых), *չնայած մասնավոր կարգով նրանցից ռուսերենի դասեր է առել նաև 1840 թվականի առաջին ամիսներին (օրինակ՝ մարտի 12-ին)*[13]:

***1840 — 1846 թթ. (մինչև օգոստոսի 20-ը)** Սունդուկյանցը սովորել և ավարտել է Տիֆլիսի միակ ռուսական գիմնազիան*[14]:

---

12 Գ. Ջմշկյան. *Գաբրիել Սունդուկյանց, «Մուրճ». 1889, № 1, էջ 134:*

13 *ԳԱԹ, Գ. Սունդուկյանցի թղթոններ, № 6/III (Արզանյանցների տված ավարտական վկայականը) և № 86/III (Սունդուկյանցի աշակերտական տետրակը):*

14 *Տիֆլիսի գիմնազիայում Սունդուկյանցի ուսանած տարիների վերաբերյալ մեր ձեռքին առայժմ վավերական քիչ տեղեկություններ կան: Հայտնի է, որ 1842 թ. նա չորրորդ դասարանի աշակերտ էր և հաճախադեմներից էր (տե՛ս ԼԱ, ֆ. 1268, ց. 1, գ. 197, թ. 48), 1844 թ. սովորում էր հինգերորդ դասարանում (տե՛ս նույն տեղում, ֆ. 733, ց. 95, գ. 981, թ. 9ա, Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության 1844 թ. տարեկան հաշվետվությունը՝ կազմված 1845 թ. փետրվարին), իսկ 1845 թ. նոյեմբերի 4-ին, վեցերորդ դասարանի աշակերտ եղած միջոցին, պարգևատրվել է գովասանագրով (տե՛ս Գ. Սունդուկյանցի թղթոններ, № 9/III):*

Թե 1840 թ. ո՞ր օրն է Սունդուկյանցը հանձնել դիմնազիայի ընդունելության քննությունները և ապա՝ հաճախել դասերի, ճշտած չէ: Թերևս, մայիսին, որովհետև նույն ամսի 13-ին է նրան արված ծաղկի պատվատոմսի վկայականը[15]*: Այդ դեպքում՝ հունվարի կեսերից (այսինքն՝ Արզանյանց եղբայրների մասնավոր դպրոցն ավարտելուց հետո) մինչև մայիս կրկին նրանց հրահանգներով է շարունակել պարապել: Պահպանվել են Սունդուկյանցի 1840 թ. երկու տետրակները, որոնք պարունակում են ֆրանսերենից և հայերենից ռուսերեն թարգմանված առաձիներ և մանրապատումներ: Տետրակներից մեկն անթվակիր է, մյուսն սկսվում է 1840 թ. մարտի 12-ից: Երկուսի դրեթե բոլոր էջերի վրա հանդիպում են ուղղումներ: Եվ, որ հավաստանց ուշագրավ է, Սունդուկյանցի քերականական սխալներն ու ոճական անհարթությունները ուղղողը այլ ոք չէ, քան Հակոբ Արզանյանցը: Իսկ այս անառարկելիորեն հաստատում է, որ մինչև դիմնազիա մտնելը, 1840 թ. հունվարից սկսրիլը դոնե, Սունդուկյանցն իր ռուսերենը կատարելագործել է նույն Արզանյանցների մոտ, բայց ո՛չ Աբովյանի, որի ձեռագիրը Սունդուկյանցի աշակերտական տետրակներում ամենևին չի պատահում*[16]*:*

Այս բոլորից հետո դժվար չէ տեսնել, որ Աբովյանի մոտ սովորելու հնարավորություն ու դիտավորություն Սունդուկյանցն ամենևին չի ունեցել:

Աբովյանը հայության ամենամեծ հեղինակություններից էր, իսկ օտարներից էլ խիստ ճանաչված ու դնահատված անձնավորություն՝ անցյալ դարի 40-ական թթ. սկսած: Ուստի Սունդուկյանցը հաղիվ թե անպատասխանելի համարեր իր ուսուցիչների շարքում Աբովյանի անունը հիշելու, եթե նրա մասնավոր դպրոցում իսկապես սովորած լիներ:

Բարեբախտաբար (թե՞ դժբախտաբար), իր նամակներում և գրույցների ժամանակ նա անվանել է նախքան դիմնազիա ընդունվելն ունեցած իր ռուսերենի ուսուցիչների անուննները, որոնք անկարելի է չփոթել Աբովյանի հետ:

Մի անգամ էլ հիշեցնենք գրանց անուննները.

---

15 *Գ. Սունդուկյանցի թղթոններ, № 2/III:*

16 *Տե՛ս ԳԱԹ, Գ. Սունդուկյանցի թղթոններ, № 85/III և, հատկապես, 86/III: Հակոբ և Դավիթ Արզանյանցների ձեռագրերը հնչուեթյամբ տարբերվում են ո՛չ միայն իրարից, այլև Աբովյանի ձեռագրից: Բացի այդ, № 85/III տետրակի վրա Սունդուկյանցը հետագայում գրել է.* «Почерк старшего Арзанова», «В пансионе Арзановых» *(«Ավագ Արզանյանցի ձեռագիրը», «Արզանյանցների պանսիոնում»):*

1. Ոմն հայ կաթոլիկ Մամուլյանց, 2. Առաքել վարժապետ Արարատյան, 3. Հակոբ և Դավիթ Արզանյանցներ:

Որովհետև Քամալյանցի «դրի առած» հուշերի սկզբնական, անաղարտ տարբերակը հրատարակվել է տակավին 1908 թվականին, իսկ Գ. Սունդուկյանցն էլ այդ տարիներին դեռ ողջ-առողջ էր, նրա խոսքերին չէր կարելի այլ գունավորում տալ, տեսնենք, թե իրականում ի՞նչ է լսել նրանից Քամալյանցը. «Ըստ Գ. Սունդուկյանցի, որ ռուսերենի մասնավոր դասեր է վերցրել Խ. Աբովյանից, «уездное училище»-ն գտնվում էր այն անկյունում, ուր Ալչվանդի խանութն է», — և միայն այսքանը[17]*:*

Սունդուկյանցն, ինչպես տեսնում ենք, որոշակի ոչինչ չի՛ ասել Աբովյանից մասնավոր դասեր առնելու տևողության ու ժամանակի մասին, իր դասառությունները չի՛ կապել գիմնազիայի համար պահանջվող ռուսաց լեզվի քննության հետ, նա իրեն Աբովյանի մասնավոր պանսիոնի աշակերտների շարքը չի՛ դասել, եղբոր հետ կապված որևէ դրվագ չի՛ վերհիշել: Նշանակում է՝ դրանք բոլորը Քամալյանցի երևակայության ծնունդն են:

Շատ հնարավոր է, որ Սունդուկյանցի մայրն իր որդուն, նախքան Արզանյանց եղբայրների պանսիոն հանձնելը, մի կարճ միջոց ուղարկած լիներ Աբովյանի մոտ՝ ռուսաց լեզվի դասերի, որոնք ընդհատվել են չատ չուտով ու անհայտ պատճառով, իրողություն, որ բնավ չի խոսում Աբովյանի օգտին: Ընդհակառակը, կարելի է, անդամ, ենթադրել, որ տիկին Սունդուկյանցին, որը սահմանափակ աշխարհայացքի տեր լինելով հանդերձ՝ գործնական մեծ խելք ուներ, դուր չի եկել Աբովյանի դասավանդման եղանակը, որ խարսխվում էր նորագույն մանկավարժների փորձի վրա, ուստի նախապատվությունը տվել է հնաոճներին՝ Արզանյանցներին:

Ճշմարտության հավատարիմ մնալու համար ասենք, որ Քամալյանցի 1908 թվականի հոդվածում էլ թռուցիկ ձևով հիշվում է Միքայել Սունդուկյանցի հետ պատահած դեպքը, միան թե ո՛չ նրա դրամատուրգ եղբոր բերանից լսված, այլ ընդհանուր ձևով հիշատակված փաստ՝ Աբովյանի գործադրած դաժանությունների մասին. «Սունդուկյանց Միխայիլի ականջի բլթակը նույնպես քաշելուց արյունոտվել էր»[18]*: Բանն այն է, սակայն, որ Միքայելը սովորում էր ո՛չ թե Աբովյանի մասնավոր դպրոցում, այլ Թիֆլիսի գավառական*

---

17 Ս. Քամալյանց, *Խաչատուր Աբովյանց: —«Հայրենիք» (լրագիր), Թիֆլիս, 1908, հունիսի 23, № 10, էջ 2:*

18 *Նույն տեղում:*

ուսումնարանում, իսկ այս երկու հաստատությունների աշակերտների վիճակների միջև հսկայական տարբերություններ կային. մեկում մարմնական պատիժները միանգամայն բացառված էին, մյուսում խստությունն ու ծեծը սովորական բաներ էին և պաշտոնապես թույլատրված:

«Հայ և նմանց ծերերի պատմածը Աբովյանց անմահ խաչատուրի մասին» հուշապատումն ստեղծելիս՝ Քամալյանց Սարգիսն այսպիսով՝ ո՛չ միայն փաստական անճշտություններ է թույլ տվել, այլև Սունդուկյանցին վերագրել է խոսքեր, որոնք նա չի ասել 1908-ին և չէր կարող ասել նաև հետագայում: Ըստ Քամալյանցի հայտարարության՝ Աբովյանի մասին տեղեկություններ հավաքելիս նրա պրոցայիցները երիք հոգի էին՝ Գևորգ Աքիմյան, Դավիթ Դավրիչյան և Իսահակ Խանդալամյան: Նրանց խղճի վրա էլ ծանրանում է Աբովյանին վարկաբեկող այն մի քանի դրվագը, որոնց հերոսները նույն այդ մարդիկ էին, եթե միայն Քամալյանցն իր լսածը ճիշտ է վերապատմում. «Բարկացած ժամին իրան մոռանում էր. ձեռին ինչ էլ լիներ, վրա էր բերում աշակերտի մեջքին, գլխին: Ջեռնափայտ մանածելու սովորություն չուներ, բայց ծխելու երկար չիբուխ էր պահում. երբեմն այն էր գավազանի տեղ բանացնում... չէր կարողանում տանել անուշադիր աշակերտին. խիստ պատժում էր, ով իրան լարված ուշադրությամբ չէր լսում: Մի անգամ Աքիմյանց Գեորգը չարունակ դես-դեն էր նայում, չէր ուզում ուշքը վրեն պահել: Աբովյանը մոտեցավ, բռնեց գլխի մազերից և խփեց կողքի պատին: Հետևանքն այն եղավ, որ աշակերտի քիթն արյունեց և ուսուցչին խոր ցավ պատճառեց: Մի անգամ էլ Դավրիչյան Դավիթը դասը թողել էր, տուն փախել: Մյուս օրը Աբովյանը բռնեց, վեր պցեց գլորոցում և իրա ձեռով լավ ոտքի տվեց: Սունդուկյանց Միխայելի ականջի բլթակը նույնպես քաշելուց արյունոտվել էր: Ծուլերին, դաս չսովորողներին չոքացնում էր»[19]:

Մի երբեմն կետ կա, որ հետազոտողը չպիտի շրջանցի, և դա առնչվում է Սունդուկյանցի մորը: Վերջինս 1838 թ. որդուն հանձնելով Արլանյանց եղբայրների մասնավոր դպրոցը, անտարակույս, նկատի էր առել և այն, որ Արլանյանց Դավիթը, միաժամանակ, գիմնազիայի ավագ ուսուցիչներից էր (ավանդում էր պատմություն և վիճակագրություն), անհրաժեշտության դեպքում, կարող էր Գաբրիելին օգնել ու տեղավորել այնտեղ, մինչդեռ Աբովյանի վոխհարաբերությունները գիմնազիայի հետ թշնամական էին: Բացի

19 Նույն տեղում:

այդ, Արզանյանցներն էլ ավարտած լինելով Մոսկվայի Լազարյան ճեմարանը (ոսկե մեդալով) և համալսարանը (թեկնածուի աստիճանով, 1825-ին)՝ հանրային չրջանում լավ ռուսագետի և լուրջ դիտնականի համարում ունեին, Աբովյանից, դուցե, ավելի: Հաղիվ թե նրանք հեչտութեյամբ կուլ տային անարգանքը և երկար տարիներ Սունդուկյանց գերդաստանի հետ իրենց մտերմութեյունը պահպանեին, եթե տիկին Սունդուկյանցը, անբավարար գտնելով որդու սովորածը, Գաբրիելին հաներ նրանց մասնավոր դպրոցից և հանձներ Աբովյանին, որ սա վերստին պատրաստեր նրան ռուսաց լեզվից՝ գիմնազիա ընդունվելու համար:

Սարգիս Քամալյանցը, երբ հերյուրել է Սունդուկյանցին վերագրված հուշը, այս ամենը, դուցե, չի իմացել, բայց Սունդուկյանցի կյանքի և ստեղծագործութեյան հետազոտողներն իրավունք չունեին անտեսելու տվյալ պարագաները: Զարմանում ես նաև, որ իրեն չատ մոտիկ մարդկանց՝ Գ. Զմշկյանին և Ադ. Քալանթարին[20] պատմելով գլխով անցածները, երբեմն՝ խիստ անձնական բաներ, Սունդուկյանցը ոչինչ չի ասել Աբովյանի մասին, բայց ահա՛ Ս. Քամալյանցին, որի մտերմութեյունը մեծ թատերգակի հետ կասկածելի է, հաղորդել է անգամ Աբովյանին վարկաբեկող բաներ, նրանից երբեք չառած ռուսերենի դասերի մասին վկայել:

Պետք է այս սուտն ընդմիշտ վտարել Աբովյանի և Սունդուկյանցի կենսագրական ուրվագծերից և, որպես ցավալի թյուրիմացութեյուն, երբեք չվերհիշել: Իսկ եթե հարկ է, որ անպայման գտնվի մեկը, որ ներշնչած լինի Սունդուկյանցին սեր դեպի ռուս դրականութեյունը կամ ռեալիստական թատրոնը, թո՛ղ այդ մեկը լինի նրա իրական ուսուցիչներից որը կամենաք, թեկուզ հայ կաթոլիկ Մամուլյանցը, վարժապետ Արարատյանը կամ Դավիթ ու Հակոբ Արղանյանցները, և ո՛չ Աբովյանը, քանի որ Սունդուկյանցն անձամբ Աբովյանի հետ ունեցած իր առնչութեյունների մասին տառացիորեն ոչինչ չի՛ ասել, իսկ Տիղիսի գավառական ուսումնարանին և Աբովյանի մասնավոր դպրոցին վերաբերող պաշտոնական գրագրութեյուններում ու ցուցակներում նրա անունը ո՛չ մի տեղ չի՛ հանդիպում: Սունդուկյանցի եղբոր՝ Միքայելի անունն, իրոք, պատահում է, միայն թե նա գավառական ուսումնարանի աշակերտ էր և ո՛չ Աբովյանի մասնավոր դպրոցի, այն էլ մի ժամանակ, երբ Գաբրիելը ուսանում էր գիմնազիայում:

---

20 Տե՛ս «Մուրճ», 1889, № 1 (նույնը՝ Գ. Զմշկյան, Իմ հիշատակարանը, Ե., 1953, էջ 168–172): — «Արոր», 1910, № 1–2:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

(«ԿԱՐԼՈՍԻ ՄԵԾԻ ՋԱՀԵԼՈՒԹՅԱՆ ՍԵՐԸ»)

ԱԲՈՎՅԱՆ ԵՎ ՊԵՏՐԱՐԿԱ

Աբովյանի թողոններում, 9-րդ համարի տակ, պահվում է մի մեծադիր տետրակ՝ բաղկացած 20 բաց մոխրադույն, հաստ ու ամուր թերթից (22×34), որպիսիք առաջներում օգտագործում էին առավելապես առօրյա դրագրությունների և ժողովրդական էժանագին հրատարակությունների համար: Դրա մեջ Աբովյանը նախ արտագրել է «Լինդա» խորագրով թարգմանական պատմվածքը, որի նյութն իսպանական կյանքից է՝ այդ նպատակի համար ծախսելով առաջին 14 թերթը լրիվ և հաջորդ 15-րդ թերթի Ա էջի սկզբի 8 տողը: Նույն էջի 9-րդ տողից սկսվում է նոր բաժին՝ «Կարճառոտ պատմություններ», 10-րդ տողը հատկացված է բաժնի մեջ մտնող կարճ պատմվածքներից առաջինի խորագրին՝ «Կարլոսի Մեծի ջահելության սերը», որին հետևում է մանրապատումի բուն շարադրանքը: Այն զբաղեցնում է նույն թերթի շարունակությունը և հաջորդ էջն ամբողջությամբ: 16–17 թերթերի և 18 Ա էջի վրա տեղավորված է բաժնի երկրորդ ու վերջին նյութը՝ «Երազ» ակնարկաշարը, որ քաղված է Պետրարկայի հուշագրական նոթերից: Հաջորդ ու վերջին թերթերի վրա (18-ի Բ էջը և 19–20-ը լրիվ), որոնք, բնականաբար, համարակալված են, որևէ նոր երկ չի արտագրված: Երկուսուկես թերթն էլ մնացել են մաքուր: Սրանցից բացի, երկու չհամարակալված, անջատ թերթ էլ կա տետրակի սկզբում և մեկը՝ վերջում: Թե ինչո՞ւ կենտ, երբ տետրակը միշտ կազմվում է զույգ թերթերից, դժվարանում ենք ասել: Դրանք անցյալներում № 9 ձեռագրի համար չապրիլ են ծառայել, հետագայում մաշվել ու անջատվել են, իսկ արդեն 1940-ական թթ. վերջերին, տետրակը կազմելու ընթացքում, միացվել են նրան:

Առաջին չհամարակալված թերթը Աբովյանի ժամանակներից է գալիս: Թերթի վերին մասում, ճիշտ կենտրոնում, ռուսերեն գեղեցիկ տառերով Աբովյանը գրել է «Чахотский» տարօրինակ ազգանունը (Թոքախտավորյան), որի ով լինելն առայժմ մեզ համար պարզ չէ (երևի, դրական կերպար), իսկ ձախ կողմում, սկսելով հենց վերևից,

մեկը մյուսի տակ, հատ-հատ գրել է իր մի քանի ստեղծագործությունների մոտավոր խորագրերը՝ ոմանց կողքին դնելով բազմապատկման նշան, որ, երևի թե, նշանակում է, որ այդ գործերի հետ ծրագրված անելիքը կամ դեռ չի ավարտել, կամ ընդհակառակը՝ արդեն վերջացրել (մաքուր արտագրե՞լ, թարգմանե՞լ) է:

Ահա՛ այդ ցուցակը հեղինակի գրած ձևով ու հաջորդականությամբ.

«Մոլլա Մասրադնի կերակուրը»
«Աղասու խաղը» X
«Ամերիկու գտնիլը» X
«Ֆեոդորա»
Գժություն, Ախմախություն
«Հազարփեչեն» X

Մեղք ա՛րի
եղ բերիլ (մեռնելուցը)

Եթե մի կողմ թողնենք վերջին երկու տողը, որոնք հարադիր բայեր են (թերևս, գրչափորձեր), նշանակում են՝ **մեղանչել, ուշքի բերել,** և յանկուսմ տեղ են գտել, երևի, հեղինակի լեզվական հետաքրքրություններին բավարարություն տալու պատճառով (նշել է, որ չմոռանա), ապա մյուսներից՝ **«Մոլլա Մասրադնի կերակուրը»** «Պարսալ վախտի խաղալիքի» մեջ մտնող «Մոլլա Մասրադնի ճաշը» առակի խմբագրված խորագիրն է: Այդ երկն առ այսօր ծանոթ է միայն մի ինքնագրով (Ա № 56), այն էլ պակասավոր: Պահպանվել են առակի սկիզբն ու վերջը, իսկ միջին մասի ինքնագիրը առաջին տպագրությունից հետո (1864 թ.) կորել է: Պատճառն այն է, որ արտագրված է եղել կազմած պրակի միջին, զույգ թերթերի վրա (թ. 14–17): Հիմա թերթերից երկուսը (14 և 17) կան, իսկ երկուսը (15–16) անվերադարձ կորել են: Երևի, հետագայում, Աբովյանը վերամշակել է այդ էջերը, բայց չի հասցրել կարել, միացնել հիմնական տեքստին, և հետնորդների անզգուշության պատճառով այդ 4 էջը (ընդարձ 47–137 տողը) պատահարի են ենթարկվել (ամբողջը 182 տող է, կորել է ուղիղ կեսը):

«Աղասու խաղը» «Վերքի» նախնական, չափածո տարբերակն է, որի սկզբի 368 տողը 1845-ի առաջին ամիսներին (համենայն դեպս՝ դրանից էլ առաջ) Աբովյանը մշակել ու տողացի թարգմանել է դերմաններեն՝ Ֆ. Բոդենշտեդին ուղարկելու նպատակով (Ա № 65): Կողքի նշանը գուցե և աշխատանքներն ավարտելուն է վերաբերում (կամ դեռ չսկսելո՞ւն):

«Ամերիկու գոնիլը» հայանի «Ամերիկու լիս քցիլը» արձակ երկն է աշխարհագրական մեծ դյուտերի մասին, որը փոխադրված է գերմանական աղբյուրներից (առավելապես, Կամպեից) և մնացել է անավարտ: Մեզ է հասել միայն մի մաքրագիր ինքնագիր (Ա № 14):

«Ֆեոդորան» Աուգուստ Ֆոն Կոցեբուի նույնանուն երգախաղի թարգմանությունն է (1841 թ.): Ունեցել է մի երկրորդ ձեռագիր ևս, որ կորել է: Սույն ցանկի մեջ է մտել, երևի, այդ ձեռագրի կապակցությամբ: Պահպանվել է լոկ 1842–43-ին Թիֆլիսում արտագրված օրինակը, որը կազմված է «Պարսալ վախտի խաղալիքի» հետ (Ա № 56):

«Գժոլթյուն, Ախմախությունը» անհայտ երկ չէ, այլ «Կարճառոտ և ղվարճալի պատմությունք» մանրապատումների առաջին չարքի ենթավերնագրի համառոտումը: Իրականում՝ «Գժոլթյուն, Կատաղություն, Տխմարություն, Զվարճություն, Զեղխություն, Փառասիրություն, Ժլատություն (նաքայազություն)», տե՛ս Ա № 12: Յավոք, այդ ժողովածուն մնացել է անավարտ: Բացակայում է հայկական մասը, որ վեհեղվելու էր երկրորդ չարքի վերջերում:

Վերջապես՝ **«Հազարփեչենն»** էլ նույնանուն պոեմն է: Սրա առաջին տարբերակի ինքնագիրը չի պահպանվել, այն ծանոթ է «Մեղու Հայաստանի» լրագրի մեջ հրատարակված բնագրով, իսկ երկրորդը (Ա № 61) հասել է մինչև մեր օրերը և, ինչպես ենթադրում ենք, վերամշակել է 1845 թ. կամ հետո (1846–1847 թթ.), թերևս, գերմաներեն թարգմանելու մտադրությամբ:

Անցյալ դարի 70–80-ական թթ. միայն, երբ հոր գրական ժառանգությանը սեր է կանդնում Վարդան Աբովյանը, սկսում հավաքել ու կարգի բերել նրա կորած, ցրված ու քայքայված ձեռագրերը, սույն № 9 տետրակը ևս որդու ուշադրությունն է գրավում: Նախ՝ առաջին թերթի կենտրոնում նա գրում է տետրի մեջ ամփոփված հիմնական երկի խորագիրը (սև մելանով)՝

«Լինդա (պատմություն)»:

Իսկ ապա կազմում և թ. 2-ի վրա արտագրում է նյութերի լրիվ ցանկը.

1. Լինդա (պատմություն)
2. Կարճառոտ պատմություն. Կարլոսի Մեծի ջահելության սերը
3. Երազ Պետրարքայի բանաստեղծի. 2 երազ (իրականում՝ 3 — Պ. Հ.):

Յաշխարհաբառ:

«Լինդայի» սկզբնաղբյուրը գտնելու ուղղությամբ մեր կատարած որոնումներն առայժմ արդյունք չեն տվել. Մաքս Շնայդերի «Von

wem ist das doch?!» մասոնագիտության մեջ (Բեռլին, 1907) հիշվում է «Lindau oder Der unsichtbare Bund» խորագրով մի արձակ երկ, հեղինակությունն Յոհան Վայցելի (Joh. Weitzel) և լույս տեսած 1805-ին: Բայց այդ հրատարակությունը մենք չկարողացանք ցարդ գտնել: Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի գրադարաններում չկար. իսկ արտասահմանից պատասխան չենն տալիս: Պետարհայի երաշների սկզբնաղբյուրներն ևս հնարավոր չեղավ գտնել: Բացի այդ՝ լատինեբենին չենք տիրապետում, իսկ ռուսերենով հրատարակված նրա երկերի շարքում համանման էջերի չենք հանդիպել: Ուստի մեր ուշադրությունը կենտրոնացրինք «Կարլոսի Մեծի ջահելության սերը» պատմվածքի վրա ու այն հույսով, թե ազդակը գերման իրականությունից սկիտ լինի: Եվ ի վերջո որոշ արդյունքի հասանք, որի մասին է և մեր հետագա խոսքը: Բայց որպեսզի մեր նկատողությունները վերացական չլինեն, նախ՝ ամբողջությամբ մեջ բերենք այդ պատումի հայերեն բնագիրը, ինչպես դուրս է եկել Աբովյանի գրչի տակից.

ԿԱՐԼՈՍԻ ՄԵԾԻ ՋԱՀԵԼՈՒԹՅԱՆ ՍԵՐԸ

Էնպես են պատմում, թե Մեծն Կարլոս՝ կայսրն Գերմանացվոց, ջահել ժամանակը մեկ աղչկա հետ էնքան սեր ա քցում, որ գիշեր-ցերեկ կուշտը կտրած՝ մեկ բան էլ ա միտքը չի՛ բերում, ո՛չ իր ժողովուրդը, ո՛չ աչխարքը, ո՛չ թագավորական գործքերը, հենց նրա սերն ա ուզում վայելի, նրա չորս կողմովն ա պտտում: Ինչքան մեծամեծք, իշխանք, նախարարք խրատ են տալիս, հնարք են գործում, քյար չի՛ անում, նա իր գժոությունից ձեռք չի՛ վերցնում: Աստուծո ողորմությունը հասնում ա, աղչիկը ցավագարվում, մեռնում ա: Իր դառան մարդիկը բոլոր ուրախանում են, թե էս ա, սերը կվերջանա: Բայց Աստված ո՛չ չհանց տա, ինչ թագավորի հալն ա ըլում: Մեռելի մարմինը բալասամով ու անուշահոտ քաներով օծիլ ա տալիս, իր օթախումը դնում ու շաբաթներով կուշտը կտրում, նստում, լաց ըլում, իր սրտի դարդերը նրան պատմում, խորհուրդ հարցնում, համբուրում, էնպես որ, հենց իմանաս, թե կենդանի ա: Էլչի, նախարար, իշխան՝ մեկին էլ ա մոտը չի՛ թողում: Ամեն բանից ձեռք ա վերցնում:

Վերջը նրան մեկ սիրեկան վազիր ա ունենում, որ շատ բարի, աստվածապաշտ մարդ ա ըլում: Սա սկսում ա գիշեր-ցերեկ Աստված աղաչիլ, որ մեկ ճար անի, հենց բանի՛ր, սրա հույսն էլ ա կտրվում, վերջի գիշերը էլի էնպես աղոթք անելիս ու լալիս՝ երկնքիցը հանկարծ մեկ ձեն ա գալիս, թե թագավորի սերի պատճառը էն մեռելի լեզվի

տակին ա: Էս որ իմանում ա, փառք ա տալիս Աստծու ու գնում, թաքուն մատը մեռլի բերանը տանում, լեզվի տակիցը մեկ մատանիք ա դուս գալիս, ալմազի ակնով չինած: Հենց մատնիքը հանում, տանում ա, թագավորը տուն ա գալիս ու իր սովորության գյորա իսկույն իր սիրելու մոտ վազում, հենց սառած մեյջդի երեսը աչքովն ա ընկնում թե էչ, իսկույն ջանը դող ա ընկնում, սիրտը գնում, ու հենց էն սհաթին հրամայում ա, որ տանին թաղեն:

Էստուց դենը սերը էն վեզիրի վրա ա քցում, էնպես որ աչքիցը չի՛ ուզում հեռանա: Վեզիրը խելոք մարդ ըլելով՝ չի՛ ուզում, որ թչնամիքը չատանան ու իրան վնաս տան. մատանիքը տանում, մեկ ջմջմի մեջ ա քցում: Էն օրվանից սկսած թագավորը տուն-տեղ թողում, գալիս, նրա ղրաղին նստում, սաղ օրը էն ջմջմին ա մտիկ անում: Վերջը էլ սիրտը չի՛ համբերում, հրաման ա անում, որ ջմջմեն իստակեն, մեկ ամարաթ ա չինել տալիս էն տեղ ու թախտ էլ էնտեղ ա փոխում, ու մինչև մահը էն տեղ մնում, ու կտակ անում, որ որդիքն էլ էս տեղ նստին, էս տեղ օծվին: Էսպես՝ Ախեն քաղաքի չինելու պատճառը Կարլոսի ջահելության սերն ա ըլում[1]*:*

Կարլոս Մեծը (742 կամ 747–814) Գերմանիայի, ավելի ճիշտ՝ Ֆրանսիայի, նաև՝ արևմտաևրոպական պատմության ականավոր դեմքերից է, վաղուց Աբովյանի հիացումն ու համակրանքը չհաած կիսալեգենդար անձնավորություն: Այդ լեգենդների ու զրույցների պահպանման ու տարածման գործում քիչ դեր չէին խաղում դերման հոգևորականները: Պատմում էին, օրինակ, որ Կարլոս Մեծի մահվան օրը Ախենի եկեղեցիների զանգերը հնչում էին իրենք իրենց, նաև հավատացնում, որ Կարլոս Մեծն իր դամբարանում ո՛չ թե պառկած ննջում է, այլ բազմած է գահին, ծնկներին հենած մեկ կայսրած սուրը, որը շարունակում է սարսափահար անել հեթանոսներին...[2]*:*

Այս պայմաններում միանգամայն հասկանալի է դպիր Խաչատուրի առանձնահատուկ հետաքրքրությունը նրա գործունեության մեջ: «Մեծ է Հանդիպաղ, այո՛, ի հնումն, մեծ և Աղեքսանդր Մակեդոնացի, մեծ և Կարլոս կայսրն գերմանացւոց, և Պետրոս կայսրն Ռուսաց, և Նապալէօն. և այլք բազումք, բայց ո՛չ այնքան նոքա, որքան ժամանակն և հանդամանքն արարին զնոսա մեծ: Չէին նոքա ծնեալ

---

[1] *Ան այսօր տպագրվել է երկու անգամ՝* Ս. Աբովյան, *Հնարք երկեր. հ. I, Ե., 1939, էջ 291–292: — «Երկերի լիակատար ժողովածու», հ. IV, Ե., 1947, էջ 106:*

[2] *Տե՛ս* «Песнь о Роланде», М.-Л., 1964, с. 141.

յայնպիսի ժամանակի, հաւատայ ինձ, և ո՛չ կարէին ունել զայնպիսի աստպարէզ գործոյ, զորս լուեալ մեր ի զարմանս կրթիմք...»,–գրել է Աբովյանը (Ե VIII, 101):

*VIII դարի մայրամուտին Կարլոս Մեծը վերականգնեց Արևմտյան Հռոմեական սրբազան կայսրությունը՝ գերման սրի նվաճումները տարածելով Հունգարիայից մինչև Իսպանիա և Դանիայից մինչև Հռոմ քաղաքն ու ավելի հարավ: Նրա անձն ու գործերը նյութ են դարձել բազում հերոսապատումների: Կարլոս Մեծի հանգամանալից կենսագրությունը կամ վարքագրությունը համբերատարությամբ հյուսել է նրա կրտսեր ժամանակակիցը՝ միջնադարյան նշանավոր գրող Այնհարդը (*Eginhardus, *մոտ 770–840,* «Vita Caroli»–«*Կարլոսի կյանքը*»), ուր վերաստեղծված է հռչակավոր կայսեր հոգեբանական կերպարը և կարևորագույն գործերի պատմությունը (*չուրջ 820 թ.*), ըստ այդմ՝ հետևելով Հռոմեական պատմագրության ավանդներին, մասնավորապես, Սվետոնիուսի ոճին: Այդ գիրքը մեզ մատչելի չէ, ու Աբովյանն էլ հազիվ թե այն ձեռքի տակ ունենար, որովհետև խնդրո առարկա պատումի սկզբնաղբյուրները մատնանշող գերման գրականության մեջ, որ, այնուհանդերձ, հետագայում ծանոթացանք, դրա խորագիրը բացակայում է: Բացի այդ էլ՝ Աբովյանի փոխադրածը այլ կարգի զրույց է և վիպում է Կարլոսի բնավորության այնպիսի գծերի մասին, որոնք կառավարվում են ճակատագրի կամեցողությամբ և տարօրինակ ու զարմանահրաշ կերպով:*

Ազդակը կամ սկզբնաղբյուրը որոնելիս՝ սկզբներում կարծում էինք, թե գիրքը պիտի լիներ գերմաներեն ու այն էլ արձակ, որպիսին, սակայն, մենք չկարողացանք գտնել, թեպետ դեգերեցինք երկար, չա՛տ երկար: Հետո անցանք հարևան ազգերի գրական անդաստաններ, բայց արդեն ո՛չ ծրագրված որոնումների ընթացքում, որոնք, հասկանալի է, սկզբում ապարդյուն էին անցնում, վերջապես մեր ուշադրությունը գրավեցին Վերածնության դարաշրջանի իտալական նորավեպերը, ռուսերեն թարգմանությամբ: Գիրքը հրատարակվել էր վաղուց (1912–1913 թթ.) ու այս տիտղոսաթերթով.

Новеллы итальянского возрождения. Избранные и переведенные П. Муратовым. Часть третья: новеллисты чинквеченто. Книгоиздательство К. Ф. Некрасова. Москва, MCMXIII *(Շապիկի վրա՝* MCMXII*):*

Այստեղ էլ, պատահականորեն բայց արած առաջին և հաջորդ էջերում (այն է՝ էջ 193–195), կարդացինք վաղուց որոնած խորագիրն ու պատումը. «Любовь Карла Великого», *և հեղինակի անունը՝ Անտոնֆրանչեսկո Դոնի (նորագույն տեղեկատու գրականության մեջ*

Հղինակի անունը դրվում է անջատ՝ Անտոն Ֆրանչեսկո Դոնի [1513–1574], որին և հետևում ենք[3]*: Նա և՛ դրող է, և՛ մտածող, և՛ մատենագետ, նաև՝ Բոհեմական: Նորավեպերի հատուկ ժողովածու Դոնին չի թողել, և այս կարգի պատումները ցրված են նրա տարաբնույթ ու այլևայլ ձեռագրերի մեջ*[4]*, այնպես որ դժվարանում ենք ասել, թե ո՞րտեղից է քաղված սույնը և ի՞նչ փոխհարաբերության մեջ է դանվում նույն ձեռագրի մյուս նյութերի հետ, ավելացրած նաև գրության թվականը: Հղինակի կենսագրության մեջ մութ ու կասկածելի էջեր չատ կան, բայց ներկա պահին մեզ հետաքրքրողը Դոնիի արկածախնդիր էությունն ու թափառումները չեն, այլ Կարլոս Մեծի մասին նորավեպը, որի բովանդակությունն ու միջադեպերը, մի որոշ տարբերությամբ, գրեթե համընկնում են Աբովյանի հայացրած ղրույցի հետ:*

Ուստի առայժմ ձեռնպահ մնալով համեմատություններից՝ նախ հայերեն թարգմանությամբ մեզ բերենք երկու-երկու էջ կազմող այդ հետաքրքրական պատումը, որը մեծապես պիտի օգնի Աբովյանի սկզբնաղբյուրի հետագա որոնմանը:

ԿԱՐԼՈՍ ՄԵԾԻ ՍԵՐԸ [5]

Կարլոս Մեծի կենսագրությունից տեղեկացել եմ, որ նա, երբ արդեն տարիների քիչ բեռ չուներ ուսերին, ո՛չ էլ նվազ փառք, անսովոր ձևով սիրահարվում է անչափ գեղեցիկ մի աղջկա, որը ստորին դասից էր ու դրանով իսկ քիչ էր համապատասխանում նրա թագավորական արժանապատվությանն ու վեհությանը: Եվ նա թույլ տվեց, որ այդ կիրքն այնպես իշխի իր վրա, որ բոլորովին մոռացավ իր պատիվն ու փառքը, որոնց մասին առաջներում այնպես հոգ էր տանում, միանգամայն բարձիթողի արեց պետական գործերը և, ի վերջո, հրաժարվեց ամեն ինչից, անգամ ինքն իրենից՝ չմտածելով ոչ մի այլ բանի մասին, բացի իր սիրեցյալից՝ որով առաջ բերեց իր բարեկամների ու իր ընկերների բուռն զայրույթն ու անասելի ցավը: Բայց, չնորհիվ Աստուծո, երբ թվում էր, թե նրան փրկելու և գործերը կարգավորելու

---

[3] *Տե՛ս* Краткая литературная энциклопедия, т. 2, М., 1964, с. 746.

[4] *Ըստ Բրոքհաուզ և Եֆրոնի Հանրագիտարանի ավյալների (հ. 21, էջ 241) Դոնիի նովելներն առաջին անգամ հավաքվել ու հրատարակվել են 1815-ին:*

[5] *Իտալերեն բնագիրը, որ ձեռք բերինք ավելի ուշ, խորագրված է. «Կարլոս Մեծի սիրո պատմությունը»:*

ոչ մի հույս արդեն չկա, երբ ոչ ու փուչ սերը փակել էր Կարլոսի ականջները ամեն տեսակ բարի խորհուրդների հանդեպ, անսպասելի մահը հանկարծ տանում է բոլոր դժբախտությունների պատճառ դարձած այդ կնոջը: Այս իրադարձության առթիվ արքունիքն սկզբներում մեծագույն ուրախություն ապրեց, բայց դրանից ավելի մեծ ու վատ եղավ համընդհանուր հիասթափությունը, երբ բոլորը նկատեցին կայսեր սրտում բույն դրած նոր, սարսափելի ախտը: Մահը ոչ թե վերջ դրեց նրա կրքերի մոլեգնությանը, այլ այդ ամենը կենտրոնացրեց այն կնոջ մեռած ու անշունչ մարմնի վրա, որը պատած էր բալասանով և օծված՝ անուշահոտ յուղերով, հագցված էր ծիրանի զգեստներ և պճնված՝ թանկարժեք զարդերով, և որին հենց այս տեսքով նա անդադար իր գիրկն էր առնում, բռնկվում տարօրինակ ու դժբախտ ցանկություններով:

Անկարելի է ասել, թե որքա՜ն չարիք, որքա՜ն թշվառություն են առաջ գալիս, երբ մի անձի մեջ համատեղվում են թագավորն ու սիրահարը:

Ինչ է թագավորելը, եթե ոչ փառավոր ու արդար կառավարում: Մյուս կողմից՝ ինչ է սերը, եթե ոչ ստոր ու թշվառ գերություն: Այն ժամանակ, երբ պետության կարևորագույն գործերի համար նրա մոտ էին ժամանում <տարբեր> ժողովուրդների դեսպաններ և մարզերի կառավարիչներ, Կարլոս կայսրը, ոչ ոքի չթողնելով իր մոտ՝ ողբալի ձևով, մեն-մենակ, փակվում էր իր սենյակում, անկողնուց վեր չէր կենում՝ գրկելով և համբուրներով ծածկելով մեռած կնոջ մարմինը, զրուցելով նրա հետ ու գուրգուրելով նրան այնպես, կարծես կենդանի լիներ և իրեն պատասխանելու ընդունակ: Պատմում էր նրան իր կրքերի ու վշտերի մասին, նրա հետ հառաչում ու լալիս: Եվ այսպես, ըստ երևույթին՝ մտածելն իսկ սարսափելի էր, որ ոչ մի միջոց չկար, որն օգներ այդ դժբախտությանը՝ թշվառ անմտությանը թագավորի, որ առաջներում իր բոլոր գործերի մեջ դրսևորում էր այնպիսի իմաստություն:

Այդ ժամանակ Կարլոսի պալատում էր Քյոլնի եպիսկոպոսը, որն աչքի էր ընկնում, ինչպես ասում են, թե՛ խոհականությամբ և թե՛ սրբությամբ, ու մինչ այդ ծառայում էր որպես կայսեր առաջին խորհրդական: Իր տիրոջ վիճակը նրա գութը շարժեց, և տեսնելով, որ մարդկային միջոցները չեն օգնում, դիմեց Աստծուն, աղոթեց նրան և իր ամբողջ հույսը դրեց Աստուծո վրա՝ ապասելով, որ նա վերջ կդնի այս դժբախտությանը: Երկար ժամանակ ու անդադրուն կերպով նա աղոթեց Տիրոջը, հետևաբար և մի օր, իբրև մխիթարություն, հրաշք տեղի ունեցավ: Երբ նա սովորական ձևով պատարագ էր անում՝

պաղատագին աղոթելով և բազմիցս թրջելով իր կուրծքն ու խորանը արցունքներով, հանկարծ լսեց երկնքից եկող մի ձայն, որն ասում էր նրան, թե կայսեր խելագարության պատճառը թաքնված է մեռած կնոջ լեզվի տակ: Այդ նույն պահին, ուրախացած, նա վերջացրեց պատարագը և դիմեց այնտեղ, ուր գտնվում էր մեռած մարմինը: Օգտվելով Կարլոսի մեծ վստահությունից՝ մեն-մենակ ներս մտավ <թագավորի> հատուկ ննջարանը, մոտեցավ մեռածին, մատը կոխեց նրա բերանը և սառը լեզվի տակ գտավ փոքրիկ մատանու վրա հագցրած ադամանդը, որը և <հանեց ու > փութով տարավ իր հետ:

Շուտով նույն սենյակը մտավ նաև ինքը՝ Կարլոսը, և ըստ սովորության նետվեց առաջ, որ դրկի մեռածին, բայց հանկարծ, վախվորած, հետ-հետ քաշվեց ու չհամարձակվեց այլևս ձեռք տալ նրան՝ հրամայելով անհապաղ հեռու տանել ու թաղել: Եվ այդ պահից նա փոխեց իր վերաբերմունքը եպիսկոպոսի հանդեպ, վերստին սկսեց սիրել նրան և օր-օրի վստահել ավելի շատ բաներ: Վերջիվերջո, նա դադարեց որևէ բան անել՝ առանց նախապես եպիսկոպոսին հարցնելու, ու երբեք, ո՛չ ցերեկը, և ո՛չ էլ գիշերը, չէր բաժանվում նրանից:

Սա էլ, լինելով արդարադատ ու զգուշ մարդ, դուշակեց, թե պատճառն ինչ է, և կամեցավ ուսերից դեն նետել ծանրությունը, որը շատ ուրիշներ հաճույքով կվերցնեին իրենց վրա: Վախենալով, որ մատանին հանկարծ ինչ-որ մեկի ձեռքը կընկնի և միաժամանակ չհամարձակվելով հալել այն, որպեսզի դրանով իր թագավորի կյանքը չենթարկի վտանգի, այն նետում է մոտերքում եղած մի խոր ճահճի մեջ: Կայսրն այդ ժամանակ իր բարոնների հետ, պատահաբար, Ախենում էր և նա այդ օրից այս քաղաքն սկսեց սիրել մյուս բոլոր քաղաքներից ավելի: Նրա համար ավելի թանկ վայր չկար, քան այդ ճահիճը. ժամեր շարունակ կանգնում էր նրա վերևում՝ հիանալով ճահճի բույրով, կարծես այն լիներ ամենահաճելի օծանելիքը:

Վերջիվերջո, նա այնտեղ փոխադրեց իր ողջ արքունիքը և անհավատալի ծախքեր անելով՝ այս ճահճի խորքերում հիմքեր դցել տվեց և նրանց վրա բարձրացրեց պալատ ու տաճար, որպեսզի իրեն չկարողանան այնտեղից բաժանել ո՛չ մարդկային, ո՛չ էլ աստվածային իշխանությունը: Այնտեղ անցկացրեց նա իր կյանքի մնացած օրերը, օրենք հրատարակեց, որ իր հաջորդների կայսերական թագադրությունը տեղի ունենա այնտեղ: Այժմ էլ պահպանվում է այդ օրենքը և կպահպանվի մինչև այն պահը, քանի դեռ կայսրությունը կմնա գերմանացիների ձեռքում:

Աբովյանի հայացրած պատումի և սույն նորավեպի մեջ, առաջինն հայացքից, ամեն ինչ, կարծես, դաշն է, հիշեցնում են միմյանց և՛ խորագիրը, և՛ դիպաշարերը, ու թվում է, թե, այսքանից հետո, որոնումներին կարելի էր վերջակետ դնել և հանգիստ սրտով հայտարարել սկզբնաղբյուրի գյուտի մասին: «Աբովյանը և իտալական դրականությունը» թեմայի սկիզբն էս, թվում է, թե արդեն դրված է, բայց... թվում է միայն: Աբովյան-թարգմանիչն ընդհանրապես սովորություն չունի նման ձևով հետևելու սկզբնաղբյուրին: Հիմնական կետերում նա երբեք չի հեռանում բնագրից, թեպետ թարգմանության մեջ միշտ և ամենուր որոնում է ստեղծագործական ազատություն և իր ոճական նախասիրությունների կնիքը դնում թարգմանած երկի վրա: Իսկ ներկա դեպքում առկա է միևնույն նյութի երկու վերապատում՝ միմյանց անծանոթ հեղինակների կողմից: Ուստի, տրամաբանականն այն է, որ պետք է գոյություն ունենա մի երկրորդ աղբյուր էս ու ավելի նախնական, որից միաժամանակ, անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով, օգտվել են և՛ Աբովյանը, և՛ նրանից դարեր առաջ՝ իտալացի արձակագիրը, որովհետև նմանությունների հետ միասին, որոնք երբեմն այնպիսիք են, որ, կարծես, կրկնելիս լինեն միմյանց, նրանց պատումների մեջ կան նշանակալից տարբերություններ, որոնց հանդեպ անկարելի է աչք փակել:

Դոնիի երկը իր ժանրային հատկանիշներով նորավեպ է, Աբովյանինը՝ ավանդական զրույց, հետևաբար՝ ավելի բանահյուսական, քան գրական տեսակ: Հավատարիմ իրենց որդեգրած սկզբունքներին՝ Դոնին ընդգծում է, որ Կարլոս Մեծին տարօրինակ ու անբնական կրքերը պաշարում են բավականաչափ փորձառություն անցնելուց հետո, որ իսկ և իսկ նորավեպին բնորոշ մանրամասն է, մինչդեռ Աբովյանը կայսեր այդօրինակ սերը կապում է ջահելության, ասել է՝ անփորձության հետ: Իր խոսքերին վստահություն ներշնչելու նպատակով՝ Դոնին վկայակոչում է սկզբնաղբյուրը, որ է Կարլոս Մեծի վարքագրությունը, հիմնական գործող անձանցից մեկին անվանում իր իսկական կոչումով՝ Ջոյնի եպիսկոպոս: Աբովյանն, ընդհակառակը, ծավալվում է ավանդապատումների ընձեռած հնարավորություններն սահմաններում՝ անտեսելով իրական ժամանակն ու անունները. «Էնպես են պատմում...», «մեկ սիրեկան վազիր ա ունենում...»: Դոնին Ախենի մոտ արքայական պալատի կառուցումը դիտում է որպես հետևանք Կարլոս Մեծի տարօրինակ սիրո, Աբովյանը՝ Ախեն քաղաքի սկզբնավորումն ընդհանրապես, որ բնորոշ է տեղագրական ավանդություններին:

Դոնիի նորավեպի կենտրոնական հերոսը, ինչպես և սպասելի էր, երբեմնի հռչակավոր ու բազմափորձ, բայց, ի վերջո, ճակատագրական սիրո հարվածների տակ կքված և իր անձը մոռացած անհատն է, Աբովյանինը՝ երիտասարդական անդավաճան ու կույր սերը, այն հզոր զգացումը, որի դիմաց անզոր է ամեն ոք: Ինչպես Աբովյանն ինքն էր խորհրդածում մեկ այլ առիթով, այս նույն շրջանում՝ «Սերը, սուրբ սերը, որ բալասամի պես կենդանացնում ա մարդի սիրտը, ու թրի պես կտրատում, սերը, ի՞նչ ասես, որ չանի: Ի՞նչ կրակ կարա անսեր սիրտը տաքացնիլ. ի՞նչ ջուր կարա սիրով վառված հոգին դինջացնիլ, հանգցնիլ: Սիրով վերավորված սիրտը ո՛չ հողից կվախենա, ո՛չ գողից. ո՛չ ահ դիտե, ո՛չ վախ. ո՛չ սրից երեսը կդարձնի, ո՛չ ջրից: Քանի չատ ա սերը, էնքան քաղցր ա տանջանքը: Սերին ի՞նչ կդիմանա, որ մահից վախենա»[6]:

Երկու պատումների էական տարբերությունն, այսպիսով, հերոսի ընտրության մեջ է, որը Դոնիի նորավեպում հռչակավոր պատմական անհատն է, իսկ Աբովյանի ստեղծագործության մեջ՝ անձնավորված զգացումը, որ միանգամայն դաշն է հայ ռոմանտիկ գրողի դավանած դեղագիտական սկզբունքների հետ: Այդ հզոր զգացումներն էլ, ի վերջո, մարդուն մղում են աշխարհաշեն գործերի, ներկա դեպքում՝ դարավոր ճահճի չորացմանը և հարուստ ու դեղեցիկ Ախեն արքայանիստ քաղաքի հիմնադրմանը: Երկուսն էլ թեպետ հավատում են աստվածային հրաշքներին և խորհրդավոր ուժերի միջամտությանը աշխարհի գործերին ու մարդկանց ճակատագրին, բայց Դոնին դրանք նկարագրելիս չռայլ է ու պերճախոս, Աբովյանը՝ զուսպ և, որքան կարելի է, իրապատում, ինչպես ժողովրդական ասացողները:

Ուստի այլ բան չի մնում, քան նորից սկսել անհայտ սկզբնաղբյուրի որոնումը՝ վերադառնալով կրկին դերման իրականությունն և ուշադրությամբ թերթելով բանահյուսական հուշարձանների այն ժողովածուները, որոնք, մեր ենթադրությամբ, Աբովյանը կարող էր ուսումնասիրած լինել դորպատյան տարիներին:

Այս անգամ մեր գործն ավելի հեշտ եղավ: Մենք նախ՝ առանձնացրինք դերման տեղանունների մասին հյուսված և հնից եկող այն զրույցները, որոնք առնչվում էին Կարլոս Մեծին ու նրա դարաշրջանին, Ախեն քաղաքին և այնտեղ կատարված եկեղեցական նշանավոր անցուդարձերին, որ սկզբներում աչքաթող էինք արել: Եվ չսխալվեցինք:

---

[6] Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի», Ե., 1981, էջ 309:

Տեղեկացանք, օրինակ, որ 809 թվականին Ախենում տեղի է ունեցել եկեղեցական կարևոր ժողով, որը քննել է Վեմ Հավատոյի հետ կապված հարցեր, և Կարլոս Մեծը գործոն մասնակցություն է ունեցել այդ ամենին՝ պարտադրելով Հռոմի պապերին հարգել Ախենի որոշումները[7]: Հայտնի դարձավ այնուհետև, որ Կարլոս Մեծը պետական նախաձեռնություն է հանդես բերել գյուղատնտեսության զարգացման և ճահիճների չորացման վերաբերյալ: Վերջապես՝ մասնավորապես Ախենում կառուցել է բազում հոյակապ ու չքեղ տաճարներ և հատկապես մեկը, ուր հետո թաղվել է ինքը կամ կառուցվել է իր դամբարանը, մի զարմանալի կառույց, որի գաղտնիքները մինչև վերջ պարզված չէին: Բայց սրանք միայն մեր պատումի հնության և պատմական հիմքերի մասին էին վկայում...

Այնուհետև մեր ձեռքն առանք Գրիմ եղբայրների նշանավոր ժողովածուն, ուր զանազան աղբյուրներից ի մի են հավաքված գերմանական ավանդապատումները: Նրա առաջին երկու հրատարակությունները լույս են տեսել 1816 և 1818 թթ., և հետմահու ևս երկու տպագրություն՝ 1891-ին և 1905-ին: Մեր ենթադրությամբ՝ Աբուվյանին ծանոթ պիտի լիներ առաջին երկու հրատարակություններից որևէ մեկը: Մենք օգտվել ենք 1986 թ. լիակատար հրատարակությունից, որ թվով 5-րդն է. **Brüder Grimm**, Deutsche Sagen, Vollständige Ausgabe, Verlag Neues Leben, Berlin, *վերջինիս 448-րդ էջում, հերթական 458 համարի տակ, տեղ է գտել ցանկալի պատումը,* «Der Ring im See bei Aachen» *(«Ախենի մոտի լճակի մատանին») խորագրով:*

Ճիշտ է, սրանով հարցը չի լուծվում վերջնականապես, բայց հայտնագործվում է սկզբնաղբյուր տանող ճանապարհը: Հետևաբար, նախ ծանոթանանք Գրիմ եղբայրների խմբագրած բնագրին՝ հանդերձ բանասեր Աշոտ Ալեքսանյանի հայ թարգմանությամբ ու մեր մասնակի խմբագրությամբ:

Der Ring im See bei Aachen

Petrarcha, auf seiner Reise durch Deutschland, hörte von den Priestern zu Aachen eine Geschichte erzählen, die sie für wahrhaft ausgaben und die sich von Mund zu Munde fortgepflanzt haben soll. Vorzeiten verliebte sich Karl der Große in eine gemeine Frau so heftig, daß er alle seine Taten

---

[7] *Տե՛ս* М. Поснов, История христианской церкви, Брюссель, 1964, с. 555–556.

vergaß, seine Geschäfte liegenließ und selbst seinen eigenen Leib darüber vernachlässigte. Sein ganzer Hof war verlegen und mißmutig über diese Leidenschaft, die gar nicht nachließ; endlich verfiel die geliebte Frau in eine Krankheit und starb. Vergeblich hoffte man aber, daß der Kaiser nunmehr seine Liebe aufgeben würde; sondern er saß bei dem Leichnam, küßte und umarmte ihn und redete zu ihm, als ob er noch lebendig wäre. Die Tote hub an zu riechen und in Fäulnis überzugehen; nichtsdestoweniger ließ der Kaiser nicht von ihr ab. Da ahnte Turpin, der Erzbischof, es müsse darunter eine Zauberei walten; daher, als Karl eines Tages des Zimmer verlassen hatte, befühlte er den Leib der toten Frau allerseits, ob er nichts entdecken könnte; endlich fand er im Munde unter der Zunge einen Ring, den nahm er weg. Als nun der Kaiser in das Zimmer wiederkehrte, tat er erstaunt wie ein Aufwachender aus tiefem Schlafe und fragte: «Wer hat diesen stinkenden Leichnam hereingetragen?» und befahl zur Strunde, daß man ihn bestatten solle. Dies geschah, allein nunmehr wandte sich die Zuneigung des Kaisers auf den Erzbischof, dem er allenthalben folgte, wohin er ging. Als der weise, fromme Mann dieses merkte und die Kraft des Ringes erkannte, fürchtete er, daß er einmal in unrechte Hände fiele, nahm und warf ihn in einen See nah bei der Stadt. Seit der Zeit, sagt man, gewann der Kaiser den Ort so lieb, daß er nicht mehr aus der Stadt Aachen weichen wollte, ein kaiserliches Schloß und ein Münster da bauen ließ und in jenem seine übrige Lebenszeit zubrachte, in diesem aber nach seinem Tode begraben sein wollte. Auch verordnete er, daß alle seine Nachfolger in dieser Stadt sich zuerst sollten salben und weihen lassen.

Ահեննի մոտի լճակի մասանին

Պետրարկան, Գերմանիայում կատարած իր ուղևորության ժամանակ, լսել էր Ահեննի քահանաներից մի զրույց, որի իսկությանը պատմողները չէին կասկածում և որը, բերանից բերան անցնելով, լայն տարածում էր գտել:

Ժամանակին Կարլոս Մեծը սիրահարված է եղել մի հասարակ կնոջ այնպես ինքնամոռաց կերպով, որ աչքաթող է արել իր բոլոր գործերը, պարտականություններն ու զբաղմունքները. անգամ սեփական անձն էլ է անուշադրության մատնել: Ողջ արքունիքը տարակուսած ու անհանգստացած էր նրա այդ կրքի պատճառով, որն ամենևին էլ հանգելու նշաններ ցույց չէր տալիս: Վերջապես, օրերից մի օր էլ, նրա սիրեցյալ տիկինը վարակվում է ինչ-որ ախտով ու մահանում: Ամանք

զուր տեղը կարծում էին, թե, գոնե այսուհետև, կայսրը ձեռք կքաշի իր սիրուց: Սակայն նա չարունակ նստում էր դիակի կողքին, համբուրում ու գրկում նրան, զրուցում հետը, որպես թե դեռևս կենդանի լիներ: Դիակն սկսում է նեխել ու գարշահոտ արձակել չորս բոլորը: Բայց և այնպես՝ կայսրը նրանից ձեռք չէր քաշում: Արքեպիսկոպոս Տուրպինի[8] *գլխում միտք է հղանում, թե մի գուցե դրա տակ ինչ-որ կախարդա՞նք լինի թաքնված: Ու մի օր, երբ կարլոսը դուրս էր եկել, նա հանգամանորեն տնտղում է մահացած կնոջ մարմինը՝ մտածելով, թերևս, իրեն հաջողվի որևէ բան պարզել: Վերջապես, հանգուցյալի բերանում, լեզվի տակ, մի մատանի է գտնում, որն իսկույնևեթ դուրս է քաշում: Եվ երբ կայսրը սենյակ է վերադառնում, այնպիսի զարմացական տեսք է ընդունում, ասես, նոր միայն արթնացած լիներ խոր քնից, և հարցնում է. «Ո՞վ է ներս բերել այս գարշահոտ դիակը», և կարգադրում, որ անմիջապես թաղեն: Այդպես էլ անում են, միայն թե դրանից հետո կայսրն սկսում է ճգտում հանդես բերել արքեպիսկոպոսի կողմը. ուր էլ որ վերջինս գնար, ինքը կրնկակոխ հետևում էր նրան: Երբ այդ իմաստուն, բարեպաշտ մարդը նկատում է դա և հասկանում մատանու զորությունը, վախենում է, որ մի գեղեցիկ օր էլ այն կարող է անիրավ մեկի ձեռքն ընկնել, ուստի վերցնում ու նետում է քաղաքի մոտ գտնվող լճակի մեջ: Այդ ժամանակից ի վեր, ասում են, կայսրը մի այնպիսի սիրով է կապվում այդ տեղանքին, որ Ախեն քաղաքից այլևս ոչ մի քայլ չի ուզում ոտքը դուրս դնել: Այստեղ կառուցել է տալիս կայսերական դղյակ ու մի չքեղ տաճար, ուր և անցկացնում է իր մնացած ողջ կյանքը, նույնիսկ ցանկություն հայտնում, որ մահվանից հետո հենց այդտեղ էլ թաղեն իրեն: Անգամ կարգադրում, որպեսզի իր բոլոր հետնորդներն այդ քաղաքում ստանան իրենց առաջին օծությունը և նվիրաբերություններ կատարեն նրան:*

Գերման միջավայրում ձևավորված պատմական սուն զրույցը XIII դարում լայն տարածում ուներ: Ավանդապատումի հենց առաջին բառերը, թե «Պետրարկան... լսել էր Ախենի քահանաներից մի զրույց...», և գրքի ծանոթագրություններում մեջ առկա հղումը՝ «Petrarcha: Epistolae familiares, lib. I, c. 3», *ոչ մի կասկած չեն թողնում,*

---

8 *Ռոլանդի մասին հյուսված միջնադարյան երգից տեղեկանում ենք, որ Տուրպին-Տուրպենը (753–794), Հիրավի, Կարլոս Մեծի խորհրդականներից ու զորավարներից էր, Ռեյմսի արքեպիսկոպոսը, իսկ այդ քաղաքը Ֆրանսիայի տարածքում էր: Դոյություն ունի մի անվավեր ժամանակագրություն, որը վերագրվում է Կնոջ Տուրպենին (տե՛ս* «Песнь о Роланде», *վիլյակոչված հրատ., տներ* XII, LXIV *ևն, էջ 174, 180):*

որ Աբովյանի պլիսավոր, եթե ոչ միակ աղբյուրը իտալական մեծ դրող և հումանիստ Ֆ. Պետրարկայի (1304–1373) բարեկամներին ուղղված նամակների առաջին հատորն է եղել, որը, սակայն, անցած հինգ տարիներին չկարողացանք ձեռքի տակ ունենալ՝ ո՛չ բուն դիրքը, ո՛չ էլ համապատասխան էջերի լուսապատճենը, որպեսզի կարողանայինք հարազատությյան աստիճանը որոշել:

Մի բան, այնուամենայնիվ, այս հայտնությունը հուշեց և օգնեց փորձ անել լուծելու: Ինչպես ասել ենք նախորդ էջերում, № 9 տետրակում «Կարլոսի Մեծի ջահելության սերը» պատումին հաջորդում է «Երազ» խորագրով ակնարկների չարքը, որը Պետրարկայի տեսած կամ նրա հետաքրքրությունը չարժած երազների մասին է: Թվում է, սա բավարար կռվան է եզրակացնելու, թե և՛ առաջին, և՛ վերջին երկերը քաղված են ոչ միայն Պետրարկայից, այլև նրա միևնույն «Epistolae familiares» դրքից: Այդ դեպքում՝ ո՞ր լեզվից: Շատ հնարավոր է, որ լատիներենից, որն Աբովյանը գիտեր, թեպետ վերջինից նրա թարգմանած մեկ այլ ստեղծագործություն ևս այսօր մեզ հայտնի չէ:

№ 9 տետրակի չապիկի վրա Աբովյանի նշած ստեղծագործությունների խորագրերի առթիվ մեր ունած բացատրությունները որոշ հիմքեր են տալիս ենթադրելու, որ այս վեց երկերի համապատասխան ինքնագրերը Աբովյանը պատրաստել է իր ստեղծագործական կյանքի վերջին տարիներին: Եվ որովհետև այդ տետրակի մեջ ամփոփված երկերից երկուսը հենց «Կարլոսի Մեծի ջահելության սերը» և «Երազ» կարճ պատմվածքներն են, նշանակում է՝ Պետրարկայի նամականուց դրանք քաղված ու հայացված են նույնպես հնդինակի ստեղծագործական կյանքի վերջին շրջանում, 1845–47 թթ.: Ի դեպ, «Վերք Հայաստանի» վեպի մեջ կատարված լրացումների մեջ ևս, որոնք դարձյալ 1845 թ. ու հետագա տարիներին են արված, դարձյալ փայլում է Պետրարկայի անունը: Նշանակում է՝ կյանքի վերջին տարիներին Աբովյանը զբաղված էր Պետրարկայով և թարգմանում էր...

Բայց առայժմ այսքան: Ժամանակագրանական և մյուս հարցերին ավելի հանգամանորեն կանդրադառնանք, երբ հնարավորություն կունենանք ձեռք բերելու Պետրարկայի «Epistolae familiares» դրքի համապատասխան էջերի լուսապատճենները կամ ուրիշները կդքաղվեն դրանով:

Գրքի նշքայրների ժողովածուի ծանոթագրություններում հիշատակված են երկու ուրիշ դիրք էլ, ուր հետաքրքրասերները կարող են գտնել Կարլոս Մեծի երիտասարդական սիրո և Ախեն քաղաքի

հիմնադրման մասին հնօրյա զրույցի տարբերակները: Դրանց հեղինակներն ու խորագրերն են.

1. Dippoldt, Karl der Große, S. 121.
2. Aretin, Sage von Karl, S. 89, 90.

Մեր որոնումները հաջողությամբ չպսակվեցին: Երևանի պայմաններում մենք ոչ միայն չկարողացանք այդ մատյանները գտնել, այլև նրանց հեղինակների մասին որևէ տեղեկություն հավաքել: Շնորհակալ կլինեինք, եթե ճեռնհասներն ուղարկեին համապատասխան էջերի լուսապատճենները:

ԼՐԱՑՈՒՄ

Վերոհիշյալ էջերը վաղուց գրված էին, մասամբ էլ հրատարակված («Գարուն», 1992, № 9), երբ բարեպատեհ առիթ ունեցա հանդիպելու իտալահայ բանասեր Գաբրիելա Ուլահաջյանին և կարճ ժամանակից, նրա սիրալիր աջակցության չնորհիվ, ստանալ Պետրարկայի որոնածս նամակի լուսապատճենը: Մոտ մեկ տարի այդ էջերն ինձ համար համր ու փակ էին, որովհետև Երևանում ապրող և լատիներեն իմացող բանասերները խորհրդավոր ժպիտով կարդում և անձայն վերադարձնում էին թերթիկները՝ ոչինչ չասելով դրանց բովանդակության մասին, իսկ Իտալիայից եկած հայ (առավելապես Մխիթարյան) բանասերներն՝ իրենց դիմելիս, չանում էին հավատացնել, թե սիրով կթարգմաններին, եթե իրենց ժամանակը սուղ չլիներ:

Վերջապես՝ 1995 թ. ամառը ես հանդիպեցի տեղացի մեկ այլ լատինագետ բանասերի, ավելի բանիմաց և պատրաստակամ, որի աջակցությամբ հայացվեցին Պետրարկայի նամակի համապատասխան պարբերությունները: Այդ թարգմանությունն էլ, լեզվական թեթև սրբագրությունից հետո, մեջ եմ բերում ստորև՝ կանխավ իմ խորին շնորհակալությունը հայտնելով թարգմանչին՝ բանասիրության թեկնածու Գոհար Մուրադյանին:

«... Տեսա Կարլոսի Ախենի պալատը և այդ իշխանավորի գերեզմանը մարմարյա տաճարում, որ պետք է ակնածանք ներշնչեր բարբարոս ցեղերին: Այդտեղ էլ տաճարի սպասավորներից ոմանցից լսեցի մի պատմություն, որն իմանալը զուրկ չէր հետաքրքրությունից. նրանք ինձ ցույց տվին դրա գրառումը, իսկ հետագայում ես այն

կարդացի ժամանակակից գրողների մոտ՝ անչափ հարազատորեն վերարտադրված: Ներքին ցանկություն ունեմ դա քեզ էլ պատմելու, բայց այն ձևով, որ ոչ թե պատմածիս մեջ փնտրես արժանահավատություն, այլ տեսնես, թե ինչպես են այն հաղորդել հեղինակները:

Պատմում են, որ կարևոս թագավորը, որին հանդիպում են «Մեծ» մականունով հավասարեցնել Պոմպեոսին և Ալեքսանդրին, խելակորույս ու ինքնամոռաց կրքով սիրահարվել էր մի հասարակ կնոջ: Եվ նրա հրապույրներից կուրացած՝ արհամարհելով բամբասանքները, որոնց նկատմամբ մինչ այդ սովորաբար անչափ զգայուն էր, անտեսելով թագավորության հոգսերը, մոռանալով իր բոլոր մյուս գործերը և, վերջապես, սեփական անձը, երկար ժամանակ ոչնչով բնավ չէր զբաղվում և պատսպարվել էր նրա գրկում՝ ի զայրույթ և ի տրտմություն յուրայինների: Վերջապես, երբ արդեն հատել էր Հույսը, քանի որ անառողջ այս սերը փակել էր արքայական ականջները փրկարար խորհուրդների հանդեպ, անսպասելի մահը տարավ կյանքն այդ կնոջ, որը հենց պատճառն էր չարիքների:

Այս առթիվ արքունիքն սկզբում մեծ, բայց թաքուն ուրախություն ապրեց, որին, սակայն, հաջորդեց նախորդից ավելի ծանր վիշտ, որովհետև թագավորի հոգին քանի գնում, պարուրվում էր ավելի ու ավելի այլանդակ հիվանդությամբ: Նրա կրքերը չէին խաղաղվում կնոջ մահվանից հետո էլ՝ փոխադրվելով վերջինիս ամոթալի ու անարյուն դիակի չուրջ, որը բալասանով ու բուրումնավետ յուղերով օծելով, թանկարժեք քարերով զուգելով և ծիրանիով ծածկելով՝ օր ու գիշեր փայփայում էր որքան ողորմելի, նույնքան էլ կրքոտ փաղաքշանքներով: Չնարավոր չէ ասել, թե ինչքան անմիաբան, նույնքան էլ վատ կարող են զուգակցվել սիրահարի ու թագավորի գործերը, և, հիրավի, հակադիր բաները երբեք հաշտ ու խաղաղ չեն զուգորդվում: Իսկ ի՞նչ է թագավորությունը, եթե ոչ արդար ու փառավոր կառավարում, և ընդհակառակը. ի՞նչ է սերը, եթե ոչ անփառունակ ու անարդար ստրկություն: Եվ այսպես, երբ հաճախ սիրահար, իսկ ավելի ճիշտ, խելագար թագավորի մոտ թագավորության կարևորագույն գործերով գալիս էին տարբեր ազգերի դեսպաններ, զորավարներ ու գավառների կառավարիչներ, այդ ողորմելին՝ նստած իր մահճի վրա, բոլորին դուրս վռնդելով և դռները փակելով՝ փարվում էր իր սիրեցյալ դիակին՝ հաճախակի դիմելով իր սիրուհուն, կարծես կենդանի լիներ և կարողանար պատասխանել: Նրան էր պատմում իր հոգսերի ու գործերի մասին, նրան էր ուղղում իր մեղմ քնքշանքներն ու իրիկնային հառաչանքները, նրա առջև չարունակ

Հեղում սիրո զգացմանն ուղեկցող արցունքները՝ վշտի ահարկու ամոքում, սակայն, այնուամենայնիվ, չատերից միայն այդ ձևն էր ընտրել, ինչպես ասում են, իմաստնագույն թագավորը:

Ավելացնում են այդ պատմությանն այն ևս, ինչ, իմ կարծիքով, ո՛չ կարող էր պատահել, ո՛չ էլ հարկ կար, որ պատմեին: Այն ժամանակներն արքունիքում էր գտնվում քյոլնցի մի իշխանավոր այր, որն, ինչպես ասում են, հայտնի էր իր արքունյամբ և իմաստությամբ, նաև թագավորի մերձավորն էր ու նրա ավագագույն խորհրդականը: Սա խորապես ցավելով իր տիրոջ խղճալի վիճակի համար և հասկանալով, որ մարդկային հնարամտությամբ ոչ մի կերպ հնարավոր չէ օգնել նրան, դիմեց Աստծուն՝ անդադար աղոթելով, նրա վրա հույսը դնելով, բազում հառաչանքներով աղերսելով վերջ տալու դժբախտությանը: Եվ որովհետև այսպես շարունակվեց երկար, և թվում է, թե չէր դադարելու աղոթել ու աղերսել, մի օր վարձատրվեց մի լուսավոր հրաշքով. երբ զոհ մատուցողի օրինակով և ամենասրտառուչ աղոթքներից հետո իր կուրծքն ու սեղանը ողողել էր արտասուքով, երկնքից մի ձայն լսվեց. «Մահացած կնոջ լեզվի տակ է թաքնված արքայի խելագարության պատճառը»: Ուրախացած դրանով և կատարելով նվիրաբերություն՝ պալատականը շտապում է այն սենյակը, ուր գտնվում էր դիակը, և օգտվելով բոլորին հայտնի՝ թագավորի հետ մտերմության իր իրավունքից՝ ներս է մտնում, ծածուկ խուզարկում կնոջ բերանը և սառած ու քարացած լեզվի տակ գտնելով գոհարակուռ մի փոքրիկ մատանի՝ անմիջապես դուրս է հանում: Շուտով կարլոսը վերադառնում է և, ըստ սովորության, շտապում մեռյալի հետ ցանկալի հաղորդակցման, բայց հանկարծակի գալով՝ ցնցվում է չորացած դիակի տեսքից և սարսափած հրամայում, որքան հնարավոր է արագ, տանել այն ու թաղել:

Դրանից հետո արդեն նա ամբողջությամբ կապվեց իր կառավարչի հետ. սիրում էր նրան, փայփայում և օրեցօր ավելի սերտ չփվում նրա հետ, այնքան՝ որ ոչինչ չէր անում առանց նրա խորհրդի, չէր բաժանվում նրանից ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը:

Երբ այս զգաց արդար ու խելամիտ այրը, չատերի համար ցանկալի ու պատվաբեր բեռից որոշեց ազատվել և զգուշանալով, որ մատանին ուրիշի ձեռքն ընկնելով կամ հալվելով կարող է իր տիրոջը վտանգի ենթարկել՝ նետեց ինչ-որ ճահճի մոտ գտնվող շատ խոր փոսի մեջ: Դրանից հետո էլ թագավորն իր մեծամեծներով բնակություն հաստատեց հիշյալ ճահճի մոտերքում, և, այսուհետև, այդ վայրը նրա համար գերադասելի էր բոլոր քաղաքներից: Նրա համար այլևս ճահճից

Հաճելի ոչինչ չկար. ապրում էր նրա մոտ, օգտվում նրա ջրերից, զմայլվում նրա բուրմունքով, որ կարծես ամենաքաղցր բանը լիներ:

Հետագայում նա այդտեղ փոխադրեց իր մայրաքաղաքը և երերուն ճահճի մեջտեղում՝ հսկայական ծախսերով քարեր լցնելով, կառուցեց պալատ ու տաճար, որպեսզի մարդկային կամ աստվածային ոչ մի ուժ իրեն այդտեղից չհեռացնի: Իր կյանքի մնացած մասն էս նա անցկացրեց այդտեղ ու նույն տեղում էլ թաղվեց՝ նախօրոք հոգալով, որպեսզի իր հետնորդների թագադրությունն այդտեղ լինի, նախևառաջ այդտեղ գահակալեն: Այդ կարգը չարունակվում է այսօր էլ և կպահպանվի այնքան ժամանակ, քանի դեռ Հռոմեական կայսրության սանձը նախախնամության ձեռքում է»[9]:

Պետրարկայի և Աբովյանի պատումների ուշադիր համեմատությունը բերում է այն եզրակացության, որ վերջինի սկզբնաղբյուրը առաջինն է, միայն թե Աբովյանը ոչ թե անմիջականորեն թարգմանել է Պետրարկային, այլ համառոտելով՝ չարադրել նրա դրի առած ղրույցը և ամփոփել իր ասելիքը ավելի սեղմ նախադասություններով: Ե՛վ հերոսները, և՛ դեպքերի ընթացքը երկուսի չարադրանքում էլ նույնն են, միայն թե Պետրարկայի տողերում զգացվում է հեղինակի անձնական վերաբերմունքը հերոսի ու նրա գործերի նկատմամբ, այն էլ ոչ դրական առումով: Աբովյանն, ընդհակառակը, չանում է քնարական շնչով պարուրել այդ խորհրդավոր, ճակատագրական ու դժբախտ սիրավեպը: Այդ էլ պարտադրել է նրան չրջանցելու, հապավելու կամ փոխելու մի քանի կետեր:

Պետրարկան, թվում է, մեծ համարում չունի Կարլոս Մեծի նկատմամբ, անդամ, զարմանում է, որ նրան հավասարեցնում են Ալեքսանդր Մակեդոնացուն և Պոմպեոսին: Աբովյանը պարզապես անտեսել է այդ հանդամանքը:

Պետրարկան ուղղակիորեն չի նշում, թե ճակատագրական սերը հասարակ կնոջ հանդեպ ո՞ր տարիքում էր մոլեգնում կայսեր սրտում՝ հարկադրելով մոռանալ պալատական գործերն ու արքայական պարտականությունները և արհամարհել անդամ դժգոհությունները ու բամբասանքները, որոնք խրախուսելի գծեր չէին հզոր միապետի համար: Աբովյանը, կարծես, սահում-անցնում է այդ իրողությունների վրայով և նշում միայն, որ սերը բորբոքվել էր Կարլոսի սրտում

---

9 F. Petrarca, Le familiari. Ed. critica a cura di V. Rossi, Fireuze, 1933. Familiarium Rerum. Liber primus, 4 [3]. Ad Iohannem de Columna Romane Ecclesie cardinalem, peregrinationis proprie descriptio. Pp. 24–27.

երիտասարդության տարիներին, որի անցանկալի հետևանքները միանգամայն հասկանալի էին ու զուցեև ոչ դատապարտելի:

Պետրարկան բացորոշ հանդիմանելով իր հերոսին՝ անվանում է նրան «խելագար», «ողորմելի», որը մոռանալով ու արհամարհելով երկրի կառավարման հետ կապված գործերն ու հոգսերը, օր ու գիշեր առանձնացած սիրուհու դիակի հետ՝ առավել մոլի ու անսովոր կրքով փաղաքշում էր նրան: Աբովյանը, սակայն, ակնհայտ կարեկցանքով է պատմում այդ մասին՝ քաջ զգալով, որ պատճառն ուրիշ է, և իր պատումից դուրս թողնում նաև Թագավորի ու սիրահարի տարբերությունների ու կոչման մասին Պետրարկայի դատողությունները:

Մի կարևոր իրողություն ևս. Պետրարկան կաթոլիկ հոգևորական էր, երիտասարդ հասակում սիրուց այրված, բայց հետագայում բանականության ուժով իրեն զսպած խստաբարո մի վանական: Սիրո ու վայելքի մասին նրա ըմբռնումներն արդյունք էին ոչ թե երկու սրտերի անմիջական հաղորդակցման, այլ, առավելապես, փոքր-ինչ վերացական ընկալումների ու տրամաբանական դատողությունների, որովհետև քանի կենդանի էր սիրած կինը, երբեք նրա հետ դեմ առ դեմ չէր նստել ու զրուցել: Այդ է պատճառը, որ նա հեշտությամբ կշտամբում էր Կարլոսին: Մինչդեռ Աբովյանը, որ դեռ էջմիածնի վանքում եղած տարիներին, պատանեկան հասակում անմասն չէր մնացել սիրո տառապանքներից, իսկ հետագայում, Դորպատում, Տփղիսում և Երևանում ոչ մեկ անգամ զգացել, թե ինչ բարձունքների ու անկումների կարող է հասցնել սերը մարդուն, հասկանում էր Կարլոսի ապրած երանություններն ու ողբերգությունը և անկեղծորեն կարեկցում նրան:

Աբովյանի վերաբերմունքը Պետրարկայի նկատմամբ նրա ստեղծագործական-գիտակցական ողջ կյանքում միշտ էլ եղել է ջերմ ու համակրական: Առաջին անգամ, որքան գիտենք, Պետրարկայի քնարական էջերն (Սոնետներն ու Կանցոնները) Աբովյանն ընթերցել է դորպատյան ուսումնառության տարիներին, 1835 թ. (գերմաներեն թարգմանությամբ)[10]: Ճիշտ է, այդ առթիվ նա որևէ հիշողություն չի թողել, սակայն տպավորությունը եղել է հզոր, որ երևում է նրա երկրորդ անդրադարձումից, մինչ առիթ է ներկայանում հիշելու համաշխարհային գրականության մեծ դասականներին, որոնք նախանձելի են բոլոր ժամանակների ու սերունդների համար:

---

10 *Տե՛ս Դորպատի համալսարանի գիտական գրադարանի ձեռագրերի բաժին, ընթերցողների մատյաններ, ÜRA N°215, P-931, նաև՝ Գ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան, կյանքը, գործը, ժամանակը, էջ 547:*

«Վերք Հայաստանի» վեպի նախնական տարբերակի հորինման պահերին Աբովյանը մշտապես աչքի առաջ է ունեցել Պետրարկային, իսկ մի առիթով էլ անվանել նրան «**Քնարն Իտալիոյ՝ թախծեալ Պետրարքայ**»՝ այդ ձևով, թվում է, սպառիչ բնութագրելով նրա մեծությունն ու արվեստը. իտալական ազգային քնարերգության ամենամեծ դեմքն ու թախծալի երգերի հեղինակը[11]: Վեպի վերջնական վերամշակման ժամանակ, *1845–46 թթ.*՝ երազելով այն օրվան, երբ աշխարհաբարով ավելի կատարյալ երկեր կստեղծվեն, քան իր վեպը՝ իրենց արվեստով ու վարպետությամբ մերձենալով համաշխարհային գրականության մեծ դասականներին, որպես բարձրագույն չափանիշ Աբովյանը մատնանշում է Պետրարկայի գործերը. «Երանի էն ահաթին, որ մեկ ազնիվ հայի ծնունդ իմ անպիտան լեզվի վրա բարկանա, իմ անպիտան գրությունը դեն քցի ու ինքը նորեն էնպես գրի մեր քաջ հայերի պատմությունը, որ լսող-կարդացող վառվի, բորբոքի, պարմանա, հիանա ու էն գրողի ղալամն ու դիրքը, ինչպես Պետրարքինը, մատունքի տեղ պաշտի, ծոցումը պահի»[12]:

Աբովյանի և Պետրարկայի ծանոթ վերջին հանդիպումը խնդրո առարկա մանրապատումի և նրան ուղեկցող «Երազ»-ների վերապատումն ու հատվածական թարգմանություններն են, որոնք հաղորդակից են դարձնում Պետրարկայի անձնական կարոտների, կորուստների և ներքնատեսության զարմանալի ունակության հետ, որի դիմաց անզոր են ժամանակն ու տարածությունը:

Բայց Պետրարկայի երազների մասին, ներկա պահին, հանգամանորեն խոսելու համար մեզ պակասում են անհրաժեշտ սկզբնաղբյուրները:

---

11 *Ն* II, *132:*

12 Խ. Աբովյան, *Վերք Հայաստանի*, *Ե.*, *1981*, *էջ 310:*

ՎԵՐՋԻՆ ՎԵՐԵԼՔԸ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹ

1

1846 թվականի սեպտեմբերի կեսերին կատարված այս ուղևորությունը Հայոց բնաշխարհի նահապետ լեռան քննապատմական ուսումնասիրության առումով նոր բան չտվեց, մանավանդ որ նախաձեռնողը մի անգլիացի լորդ էր, իսկ նպատակը՝ մասնավոր հետաքրքրասիրություն. Արարատի գագաթից նամակներ գրել փոխարքա Վորոնցովին և Անգլիայում թողած իր բարեկամներին: Մինչդեռ վերելքին ուղեկցող հանգամանքները և նրան վերաբերող պաշտոնական վավերագրերն ու հուշագրություններ հնարավորություն են ընձեռում ավելի խոր թափանցելու Աբովյանի ներաշխարհը, ճանաչելու նրա առերես բարեկամներին, ականատես դառնալու օր-ավուր խորացող նրա հոգեկան դրամային:

Շուրջ մեկուկես տասնամյակ առաջ առիթ ենք ունեցել գրելու, որ, ընդհանրապես, թյուր պատկերացումներ են եղել անգլիացի միլիոնատեր ու ճանապարհորդ Հենրի Դեմբի Սեյմուրի (Henry Danby Seymour) *և հայ մեծ գրողի փոխհարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև ճիշտ չի որոշվել նրանց հանդիպման տարին*[1]*: Սխալների պատճառը, մեր կարծիքով, Կ. Կոստանյանցի «Հայագիտությունն Արևմտյան Եվրոպայում» (Թիֆլիս. 1910) մատենագիտական տեսությանը կից դրացուցակի տեղեկանքներից մեկն է եղել, որից կառչելով, բայց և որը խնամքով թաքցնելով՝ անցյալի որոշ ուսումնասիրողներ հավատացել են, թե Սեյմուրը հետագայում հրատարակել է իր 1845 թ.* [sic!] *Արարատյան վերելքի նկարագրությունը, և չնայած ապարդյուն՝ երկար չա՛տ երկար որոնել են այդ, ըստ էության, անգո գիրքը. մինչդեռ հարկ էր ուշադրությամբ կարդալ համապատասխան տեղեկանքը, աչքից անցկացնել վկայակոչված աղբյուրները, և սխալը միանգամից մեջտեղ կդար*[2]*:*

---

[1] *Տե՛ս և* VII, *457–458 (ծանոթագրություններ):*

[2] *Առաջինը և Շահազիզն է, որ հիշատակել է այդ թյուրիմացության ծնունդ գիրքը, ներառել Աբովյանին վերաբերող գրականության ցանկի մեջ (տե՛ս «Տնտեսագիր Հայոց դիտության և արվեստի ինստիտուտի», № 3, 1928, էջ 167. նաև Դ I. 266, № 14) և, չգիտես ինչից դրդված. կազմել հայերեն տիտղոսաթերթը.*

Ինչ չեն արել անցյալում, պետք է այժմ անել՝ տաճնամյակների թյուրիմացության պարզաբանումն սկսելով Կոստանյանցի կազմած մատենագիտական տեղեկանքի (տեղավորված է նրա դրքի 122-րդ էջում) հանդամանալից քննությունից: Դա հետևյալն է.

Seymour H. D., His few lines about his ascent of Ararat in 1845, London, 1877.

(Սեյմուր Հ. Դ., Նրա մի քանի տողը 1845 թ. իր վերելքի մասին դեպի Արարատ, Լոնդոն, 1877):

Սեյմուրը, դոնե, պիտի իմանար, որ ինքն Արարատի գագաթ է բարձրացել ո՛չ թե 1845, այլ 1846 թ. սեպտեմբերին, և աշխատության խորագրի մեջ վերելքի տարին ճիշտ մատնանշեր, որ, չգիտես ինչու, չի արել: Նա, ինչպես երևում է մեջբերված տողերից, կանոնավոր վերնագիր էլ չի դրել: Ինչևէ, առայժմ մի կողմ թողնենք այդ տարօրինակ սխալները և առաջ անցնենք, քանի որ հիշյալ կասկածելի տեղեկանքից անմիջապես հետո Կոստանյանցն արել է հղում՝ v. (իմա՛ vide, այսինքն՝ տե՛ս) Frechfeld (=Freshfield D. W.), *որպիսի ապացնման տակ նույն դրքի 48-րդ էջում գտնում ենք մի ուրիշ աշխատության խորագիր՝* «Early ascents of Ararat»՝ *տպագրված Լոնդոնի* «Alpine Journal»*-ի 1877 թ. տարեգրքում: Տարօրինակ է նաև այն, որ հիշյալ տեղեկանքից հետո էլ արված է հակադարձ հղում՝* v. Seymour՝ *կասկած չթողնելով, որ երկու խորագրերն էլ Կոստանյանցը քաղել է մի երրորդ աղբյուրից՝ ձեռքի տակ չունենալով այդ ենթադրական աշխատություններից և ո՛չ մեկը և պարզ ու որոշ չասելով, թե իրականում Ծրեչֆիլդի հոդվածի՞ց պիտի տվյալներ քաղել Սեյմուրի մասին, թե՞ ընդհակառակը:*

Սեյմուր, *Վերելք Արարատ 1845 թվի, Լոնդոն, 1877 [Տարբերակ՝* Սեյմուր, *Վերելք Արարատ, (1845 թ.), Լոնդոն, 1877 թ.]:*

Շահազիզի հաջորդն ու «ժառանգորդը» պատմաբան Ա. Հովհաննիսյանն է (տե՛ս նրա «Ավովյան», Երևան, 1933, էջ 71), որը լիակատար հավատ ընծայելով նախորդի «գյուտին» և Կոստանյանցի մատենագիտական ցուցակին՝ մի քայլ առաջ է անցել և կազմել է անգլերեն տիտղոսաթերթ. H. D. Seymour: His few lines about his ascent of Ararat. London, 1877.

Ըստ որում՝ երկուսն էլ բառ իսկ չեն ասել, թե հրապարակ հանելով այդ ենթադրական մատյանը (հայերեն կամ անգլերեն), ի՞նչ հիմքեր են ունեցել: Սեյմուրի անդո դիրքը, վերջապես, շփոթեցրել է եվրոպա-հայկական մատենագիտության մերօրյա կազմողներին, որոնցից ամենաարանի-մացը՝ Ա. Ալպոյաջյանը, իր «Հայկական մատենագիտության» մեջ (Երևան, 1969, էջ 271) տվել է տրան՝ առանց տուգելու արտագրելով Կոստանյանցի հորինած տեղեկանքը:

Երկար տարիներ Աբովյանի կյանքի և ստեղծագործության առեղծվածային հարցերի լուսաբանումը մեր գրական-բանասիրական հետազոտությունների կետ-նպատակը դարձրած լինելով՝ բնականաբար, չէինք կարող անտարբերությամբ անցնել այսօրինակ գայթակղիչ, բայց և խճճված խնդրի կողքով:

Որպեսզի թյուրիմացությունը հիմնավորապես պարզվեր, և այլևս տարակարծության տեղիք չմնար, հենց սկզբից պարտք համարեցինք հիշյալ տեղեկանքների հավաստիությունը մեկ անգամ էլ ստուգել: Շատ գրապահոցներ այցելեցինք, տեղեկատու շատ աղբյուրներ քրքրեցինք՝ ծանոթ լինելով հանդերձ Ա. Հովհաննիսյանի՝ տակավին 1933 թ. կատարած որոնումների տխուր վախճանին: Հարկադրժան պիտնականն այն ժամանակ անկեղծորեն խոստովանել էր. «Մոսկվայում և Լենինգրադում մեզ չհաջողվեց գտնել H. D. Seymour: «His few lines about his ascent of Ararat. London, 1877» աշխատությունը, որտեղ հնարավոր է, որ նոր տեղեկություններ լինեն Աբովյանի մասին»[3]:

Ջենք թաքցնում, սկզբում մեզ նույնպես չհաջողվեց նման խորագրով գիրք կամ հոդված գտնել ո՛չ թե միայն Մոսկվայում ու Լենինգրադում, այլև Երևանում, Թիֆլիսում, Կիևում, Կազանում, Տարտուում, նաև արտասահմանյան գրադարաններում, որոնց հարցում էինք ուղղել մասնավոր կարդով:

Եվ դա թող ո՛չ ոքի չզարմացնի, քանի որ, ինչպես հետագայում պարզվեց, այդպիսի ուղեգրական երկ առհասարակ գոյություն չի ունեցել, Սեյմուրը, եթե մինչև իսկ որոշ գրառումներ էլ ունեցել է, ապա գրանք երբեք չի՛ հրատարակել, վերջապես՝ նրան վերագրվող գրքի ենթադրական խորագիրը ե. Շահազիզն ու Ա. Հովհաննիսյանը անկախաբար փոխ են առել Կարապետ Կոստանյանցից՝ առանց նրա հղումների վրա ուշադրություն դարձնելու:

Այս որոնումների ընթացքում մի զարմանալի բան, այնուամենայնիվ, պատահեց մեզ, երբ կարդացինք վերջին տարիներս լույս տեսած մի գրականագետի աշխատություն, որը ո՛չ միայն իրականության տեղ է ընդունել Ա. Հովհաննիսյանի ենթադրությունը, այլև իրեն ներկայացրել է գոյություն չունեցող այդ «գիրքը» կարդացած. այն էլ հայերեն թարգմանությամբ, ու «գիրքն» էլ հռչակել որպես նոր փուլ աբովյանագիտության մեջ: Այդ գրականագետը սևով սպիտակի վրա գրել է. «Նոր էտապ է սկսվում աբովյանագիտության մեջ՝ 70 — 80-ական թվականների էտապը: Ստեղծված հետաքրքրությունը բավարարելու համար Աբովյանին որոնեցին նաև եվրոպացի

[3] Ա. Հովհաննիսյան. *Աբովյան, Ե., 1933, էջ 71:*

ճանապարհորդների աշխատություններում ու հուշերում: Թարգմանեցին Հաքսահաուզենից բացի Բոդենշտեդին (Հ. Բարխուդարյան, 1889) և Սեյմուրին (1877)»[4]:

Քանի որ Սեյմուրին վերագրվող գրքի հիմնական առանցքը միայն ու միայն Արարատի գագաթ բարձրանալը պիտի լիներ, մենք ուշիուշով վերընթերցեցինք տվյալ նյութին վերաբերող հին ու նոր մի քանի աշխատություններ և, ի վերջո, անդլիացի նշանավոր դիտնական և ճանապարհորդ Հ. Ֆ. Բ. Լինչի «Հայաստան» երկհատոր ուղեգրության մեջ (Լոնդոն, 1901) առանց մեծ դժվարության գտանք այս 60-ամյա թյուրիմացության պատասխանը:

Լինչի հոյակապ գործի մատենագիտության բաժնում, ուր հիշատակված են Արարատին վերաբերող կարևորագույն հոդվածներն ու գրքերը՝ լույս տեսած հին ժամանակներից մինչև XIX դարի վերջերը, կա մի այսպիսի տեղեկանք.

«Seymour (H. D.) His few lines about his ascent of Ararat in 1845 are to be found in Freshfield's Early Ascents of Ararat. Alpine Journal, VIII, p. 215, London, 1877».

Հիշյալ բառերը թարգմանելով հայերեն՝ ստանում ենք.

«Սեյմուր (Հ. Դ.). Նրա մի քանի տողը՝ 1845-ի իր վերելքի մասին դեպի Արարատ, մեջ է բերված Ֆրեշֆիլդի «Հին վերելքներ Արարատի գագաթը» հոդվածում, «Alpine Journal», VIII, էջ 215, Լոնդոն, 1877»[5]:

---

[4] Ս. Բագյան, Աբովյանի դրական ժառանգությունը, Ե., 1966, էջ 29: Ցավալի է նաև, որ Հ. Բարխուդարյանի թարգմանությունը ևս աբովյանագիտական նվաճում է դիտված, մինչդեռ թարգմանիչը նման դիտավորություն բնավորվին չի ունեցել. նա հայացրել է Բոդենշտեդի «Հազար ու մեկ օր Արևելքում» գրքի՝ Հայաստանին նվիրված գլուխներից տասկ մեկը, ուր Աբովյանի մասին ներք փոքրիկ պարբերություն միայն կա, մինչդեռ նույն Բոդենշտեդի գրքի՝ Աբովյանի մասին գրած ամբողջական գլուխը գանց է առնված: Հիշեցնենք հետևնակին, որ Բոդենշտեդի՝ Աբովյանին նվիրված իսկապես ուշագրավ էջերը հայերեն են թարգմանվել ու հրատարակվել նախորդից ուղիղ քսան տարի առաջ (1869 թ.), Պոլսի «Մասիս» լրագրում (№ 931 և 932, դեկտեմբերի 13 և 30): Թարգմանիչն է ոմն Ա ր տ ա վ ր ե ց ի : Եթե խոսքը «նոր էտապի» մասին է, ապա 1869 թ. պիտի լիներ դա:

[5] Lunch H. F. B., Armenia, vol. II, London, 1901, p. 481. Նույնը տե՛ս նաև Լինչի աշխատության ռուսերեն թարգմանության մեջ (Տիֆլիս, 1910, հատ. II, էջ 632): Դժվար չէ նկատել, որ Կոստանյանցն իր մատենագիտական ցանկում այս լավ չհասկացված տողերն է աննշան կրճատումով արտագրել (կամ արտագրել տվել)՝ առանց մտածելու, որ հետևորդների համար թյուրիմացության դուռ է բանալու:

Կարծես հին մշուշը ցրվում է, և հրապարակ է գալիս մերկ ճշմարտությունը: Սեյմուրը ո՛չ թե գիրք է գրել, այլ մի քանի տող միայն հաղորդել իր վերելքի մասին, որոնք և մեջ են բերված, ինչպես Լինչն է ասում, Ֆրեշֆիլդի հոդվածի 215-րդ էջում:

Բայց ի՞նչ է ասել Սեյմուրը իր վերելքի և Արովյանի մասին այդ մի քանի տողի մեջ և կամ, առհասարակ, Արովյանը նրա ուշադրության կենտրոնում եղե՞լ է, թե՞ ոչ: Պարզ է, որ առաջադրված հարցերին վերջնականապես պատասխանելու համար պետք էր ձեռքի տակ ունենալ նաև «Ալպիական ամսագրի» 1877 թ. № 8-ը:

Հարկ եղավ հարցում ուղղել Լոնդոնի Բրիտանական թանգարանին: Պատասխանը շատ չուշացավ. ստացվեց մեր որոնած ամսագրի համապատասխան էջերի լուսապատճենը, որոնց մեջ և Սեյմուրի այնքա՜ն արյուն պղտորած տողերը, ընդ որում դրանք հանդիպում են ո՛չ թե անմիջապես հոդվածում, որը վերաբերում է Ֆրեշֆիլդի՝ 1868 թ. մայիսի 27-ի վերելքին Արարատի գագաթ, այլ այդ հոդվածին «Ալպիական ամսագրի» խմբագրի կցած ծանոթագրության մեջ՝ խորագրված «Հնօրյա վերելքներ դեպի Արարատ» («Early Ascents of Ararat»): Բերում ենք Սեյմուրի խոսքերը նախ՝ բնագրով, ապա՝ հայերեն.

Mr. Seymour says: «I cannot lay my hands on my notes now. My companions were two Armenians and a Cossack officer. I remember that we slept in a woody dell before commencing the ascent in charge of the Cossack guard. We could obtain no porters, and one of the Armenians served as guide. We had to carry all we wanted for our ascent ourselves. I remember I had chickens, &c., fastened round my waist. At the last moment the Armenian who served as guide refused to come because he had no boots. I had to give him my own boots and wear some Persian slippers. The time we could stay on the summit was very short, as the clouds began to gather round us. We reached the plateau on the top and descended, I remember, by a different hollow of the mountain to that by which we had ascended, coming down a tremendous snowslide. Our Cossacks lifted a good many cattle on the following day».

«Իմ գրառած նոթերը,— ասաց պարոն Սեյմուրը,— հիմա ձեռքիս տակ չեն: Գործակիցներս էին երկու հայ և մեկ կազակ սպա: Հիշում եմ, որ մինչև վերելքն սկսելը մենք քնեցինք անտառային բացատում, կազակների պաշտպանության տակ: Մենք չկարողացանք բեռնակիրներ գտնել, իսկ մեր առաջնորդը մի հայ էր: Այն բոլորն, ինչ

վերելքի համար պետք էր մեզ, ստիպված էինք ինքներս տանելու: Հիշում եմ, որ ունեի ճաեր և ուրիշ բաներ՝ կապած իմ գոտուն: Վերջին պահին այն հայը, որը մեր առաջնորդն էր, հրաժարվեց գալ, որովհետև կոշիկներ չուներ: Ես ստիպված էի նրան տալ սեփական կոշիկներս և ինքս հագնել պարսկական մուշկեր: Այն ժամանակամիջոցը, որ մենք կարող էինք մնալ լեռան կատարին, շատ կարճ էր, որովհետև մեր չուրջն սկսեցին ամպեր կուտակվել: Մենք հասանք գագաթի հարթությանը և վերադարձանք, ինչքան հիշում եմ, ոչ այն չավղով, որով բարձրացել էինք՝ ճանապարհին սահելով ձյունապատ ահավոր լանջերով: Մեր կազակները հաջորդ օրը հավաքեցին շատ անասուններ» [6]:

Սեյմուրի վկայության մեջ, ինչպես տեսնում ենք, Աբովյանի անունն անգամ չկա, ուր թե այն նոր էջ դառնար աբովյանագիտության մեջ: Դուցե թե առաջնորդ ասելով Սեյմուրը նկատի է ունեցել Աբովյանի՞ն, շատ հնարավոր է, բայց հայտնի է վերջինիս նույն խնդրին նվիրված «Նոր վերելք դեպի Արարատ» հոդվածից (ռուսերեն), ուր ասված է, որ ինքը սոսկ ուղեկցել է անգլիացի միլիոնատիրոջը դեպի Արարատ, մինչդեռ իրենց իրական առաջնորդը՝ դեպի լեռան գագաթ, եղել է Նոր Ակուռի գեղջուկ Սիմեոն Սարգսյանը, որը մի տարի դրանից առաջ ճանապարհ էր ցույց տվել նաև Հ. Աբիխին: Կարճ՝ Սեյմուրի խոսքերը, որ ամբողջությամբ մեջ բերինք, ավելի իր անձին են վերաբերում, քան մեկ այլ ուրիշի, և աբովյանագիտությանը ոչնչով չեն օգնի:

Բավականաչափ ընդարձակ այս նախաբանից հետո արդեն կարելի է անցնել բուն խնդրին և պարզել՝ ո՞վ էր Սեյմուրը, ե՞րբ է նա հանդիպել Խ. Աբովյանին և ի՞նչ պատահարներով է ուղեկցվել նրանց համատեղ վերելքը դեպի Լյառն Մասիս:

Հետագա շարադրանքի համար աղբյուր են ծառայելու Աբովյանի չափազանց կարևոր ուղեգրությունը («Նոր վերելք դեպի Արարատ»),

---

6 «Alpine Journal», VIII, London, 1877, p. 215. *Դեպի Արարատի պատմած կատարված հնօրյա վերելքներին նվիրված ակնարկների մեջ կա հիշատակություն, որ Հ. Սեյմուրն իր վերելքի մասին պատմել է Արարատի պատմիչ իր հայրենակից, հնագետ ու դիվանագետ (այն օրերին՝ Բալդադի անգլիական հյուպատոս) Հենրի Ռոուլինսոնին (1810–1895) ուղղված նամակում: Թե ի՞նչ է պատմել նա, որտե՞ղ է տպագրվել այդ նամակը, վերելքին ուղեկցվող դիպվածներից հատկապես որո՞նց է անդրադարձել, առայժմ չկարողացանք պարզել, որովհետև հնարավոր չեղավ ձեռք բերել նամակի պատճենը (հիշատակությունը տե՛ս* F. Parrot, Reise zum Ararat, Leipzig, *1985, Մարիանն և վերներ Շտամների վերջաբանը, էջ 228):*

պաշտոնական երկու-երեք վավերագիր՝ պահպանված Վրացական ԽՍՀ պետական պատմական դիվանում, մի հնօրյա նամակ Սեյմուրի՝ էջմիածին ժամանելու վերաբերյալ, կաթողիկոսական հուշաթերթիկի պատճենը և մի քանի պատառիկ Ֆ. Բոդենշտեդի երկհատոր հիշողություններից (Բեռլին, 1888):

2

Հենրի Դեմբի Սեյմուրը անգլիական հին, ազնվական գերդաստանի զավակ էր՝ հպարտ իր ծագմամբ և չափազանց հարուստ: Հազիվ համալսարանն ավարտած՝ նա իրեն նվիրել էր ճանապարհորդությունների, հեռավոր, անծանոթ աշխարհներ տեսնելու և ուսումնասիրելու:

1840-ական թթ. սկզբներին նրան տեսնում ենք Արևելքում: Տեղացիների ներքին կյանքի մեջ խորանալու և արևելյան գլխավոր լեզուները բուն աղբյուրից սովորելու դիտավորությամբ՝ իր սեփական անգլիացի սպասավորից բացի, վարձել էր նաև հատուկ ծառաներ՝ մի պարսիկ, որին բերել էր Հնդկաստանից, և մի վրացի ու թուրք, որոնց գտել էր Տփղիսում: Սրանք նաև առաջնորդի դեր էին ստանձնելու՝ Անդրկովկասում չրջագայելիս:

Քանի երիտասարդ էր Սեյմուրը, բարձրից էր նայում մարդկանց՝ բոլորովին արժեք չտալով դերք ու պաշտոնի, իսկ երբ ավելի լրջացավ, սկսեց իրեն չրջապատել ազատամիտ (լիբերալ) կուսակցության գործիչներով՝ հարելով Վիգերի կուսակցությանը, նրանց հետ սեղան նստել[7]: Մեծամիտ էր և անչնորհակալ՝ հարկ չհամարելով, գոնե, սոսկական քաղաքավարական խոսք ասել կամ վերհիշել անունն այն անձանց, որոնք մի ժամանակ իրեն օգնել ու աջակցել էին:

Մեծ հաջողություններ ուներ Սեյմուրը բարձրաչխարհիկ կանանց չրջանում, հովանավորվում էր դեներալուհիներից: Սրամտում էր և փիլիսոփայում՝ առաջին հանդիպածի վրա չչմեցուցիչ ապշեցուցիչ թողնելով: Սիրում էր համաչխարհային խնդիրներ լուծել մի հարվածով, կամ մատի փաթաթան դարձնելով ազգերի ու ժողովուրդների կյանքի ստվերոտ կողմերը՝ անողոք դատավճիռ կարդալ՝ իրեն նեղություն չտալով պարզել, թե հասարակական-քաղաքական-տնտեսական ի՞նչ իրադրություններ հետևանք էին այդ ամենը:

---

[7] *Սեյմուրի մտերիմներն էին՝ լորդ Ջորջ Ռասսելը, հայտնի արևելագետներ Լեյարդը, Ռաուլինսոնը և Ֆերգյուսոնը:*

Լինելով Կովկասի փոխարքա Միխայիլ Սեմյոնովիչ Վորոնցովի առաջին կնոջ քրոջ որդին և վայելելով «նորին պայծառափայլության» բարձր հովանավորությունը՝ վերջինիս իշխանության սահմաններում, մասնավորապես Անդրկովկասում, նա իրեն ազատ ու անկաշկանդ էր զգում:

Անզուսպ ու կամակոր մարդ էր Սեյմուրը, ինչ միտքն ընկներ, անհապաղ կաշխատեր իրականացնել՝ չմտածելով որ դա կարող է ուրիշներին ինչ-ինչ ահաճություններ պատճառել:

Միայն նրա խելքին կարող էր փչել, որ աշուն ժամանակ, առանց նախապատրաստության և պատշաճ հանդերձանքի, կարելի էր բարոյական ճնշմամբ հարկադրել մարդկանց, որ առաջնորդեն իրեն դեպի Արարատ, այն էլ ո՛չ թե երկրաբանական-աշխարհագրական ուսումնասիրությունների, այլ սրբազան լեռան գագաթից իշխան Վորոնցովին և իր անգլիացի ընկեր-բարեկամներին նամակներ գրելու համար:

Սեյմուրին մոսկվից գիտեր գերման բանասեղծ Ֆ. Բոդենշտեդը: Հայտնի է, որ 1859-ին, լինելով Լոնդոնում, վերջինս հյուրընկալվել էր նրա տանը, բայց ծանոթացել էին ավելի վաղ, 1844/45-ի ձմեռը, Տիղլիսում, պարահանդեսներից մեկի ժամանակ, դեներալ Նայդհարդի կնոջ հանձնարարությամբ: Կա ենթադրություն, ավելի շուտ՝ չհիմնավորված պնդում, իբր Բոդենշտեդն է խնդրած եղել Աբովյանին, որ երբ Սեյմուրը ժամանի Երևան և ներկայանա իրեն, ապա օդնի և աջակցի նրան, իսկ Սեյմուրին էլ խորհուրդ տվել՝ Երևան հասնելուն պես որոնել-գտնել Աբովյանին: Եթե հաստատ է այս ամենը, ապա Բոդենշտեդն անպայման մի քանի տող պիտի գրած լիներ Աբովյանին՝ նախապես ուղարկած կամ Սեյմուրին հանձնած: Սակայն այդօրինակ նամակ մեզ տեղում չկա, թո՛ղ որ Աբովյանի և Բոդենշտեդի նամակագրությունն ամբողջությամբ չի՛ հայտնաբերված տակավին: Այդ ենթադրվող նամակը, որի գոյությունը շատ կասկածելի է, պետք է առնվազն մեկուկես տարվա հնություն ունենար, քանի որ Բոդենշտեդն իր «Հազար ու մեկ օր Արևելքում» հուշագրքի համաձայն՝ Անդրկովկասից հեռացավ 1845 թ. դարնանը[8], իսկ Սեյմուրի՝

---

8 *Տե՛ս* F. Bodenstedt, Tausend und ein Tag im Orient, III, Berlin, 1865, S. 31, 94, 211: *Ըստ այսմ՝ Թիֆլիսից Բոդենշտեդը դուրս է եկել 1845-ի «գարնան սկզբին», «ապրիլի 19-ի առավոտյան ժամը 8-ին» թողել Ռեդուտ Կալեն (Սուխումին), իսկ մայիսի վերջին կանգ առել Կուրչի նավահանգստում, այնուհետև Ղրիմից դիմել է Օդեսա, իսկ այտեղից էլ՝ Կոստանդնուպոլիս: Հայտնի է նաև, որ Թիֆլիսից մինչև Դորի նրան ուղեկցել է Սեյմուրը ու վերադարձել (տե՛ս* F. Bodenstedt, Erinnerungen, հ. I, 2-րդ հրատ., Բեռլին,

Պարսկաստանից, Հին-Ջուղայի վրայով, արդեն երկրորդ անգամ, Ռուսիայի տիրապետության սահմանները մուտք գործելը սպասվում էր 1846-ի գարնանը միայն: «Առանց իրերն ախտահանելու՝ բաց թողնել Ջուղայի կարանտինով Պարսկաստանից եկող անգլիահպատակ Սեյմուրին», — փոխարքա Վորոնցովի անունից 1846 թ. մարտի 26-ին հրամանագրվել էր այդ նույն մաքսատան պետին[9]:

Երկար սպասեցին մաքսատան աշխատողները և միայն սեպտեմբեր ամսին դիմավորեցին Սեյմուրին և ճանապարհ դրին դեպի Երևան:

Սեպտեմբերի մոտավորապես 13-ին նա արդեն Այրարատյան աշխարհի մայրաքաղաքում էր:

3

Աբովյանը Սեյմուրին չէր սպասում: Առանց այն էլ 1846-ին և Երևանյան նախորդ երկուս ու կես տարիներին օտար ճանապարհորդների երեսից այնքան դառնություններ էր տեսել, որ հիմա, հանուն հոգեկան հանգստի, զգուշանում էր նրանցից:

Հազիվ Երևան ժամանած՝ 1843 թ. օգոստոսի վերջերին, դպրոցական բարձր իշխանության հանձնարարությամբ նա ուղեկցում է Ալուգուստ Ֆոն Հաքստհաուզենին երևանյան գավառի այլևայլ կողմերում: Մի քանի օր հետո Աբովյանի օգնությանն է դիմում մեկ ուրիշ օտար ճանապարհորդ՝ Պավել Լիվենը: Նրանց նպատակակետերից մեկը էջմիածինն էր, ուր, սակայն, շատ վատ են ընդունում և՛ մեկին, և՛ մյուսին, իսկ հետո, խուսափելու համար գլխացավանքներից, Սինոդի իշխանավորները տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսի անունից զրպարտանքներով լի մի ամբաստանագիր են ներկայացնում Անդրկովկասյան երկրամասի գլխավոր կառավարչին, ուր մեղադրում են Աբովյանին, թե նա, ապրելով Արևելքի և Արևմուտքի խաչուղիներում, առանց նախապես իմաց տալու, օտար ճանապարհորդներին քարշ է տալիս էջմիածին, հաղորդակից դարձնում վանքի ներքին կյանքին, խռովում միաբանների անդորրը. բողոքում էին, որ նրա հանդգնությունների պատճառով նոյան տապանն անգամ հանգիստ չունի, աղաչում, խնդրում էին, որ այդ «հանդուգն մարդուն» հեռացնեն Երևանից: Ճիշտ է, այս ամբաստանությունն անհեռևանք անցավ, քանի որ Աբովյանն օտարներին ուղեկցում էր բարձր իշխանու-

1888, էջ 350): Հոկտեմբերին Սեյմուրի ձայնը լսվում էր Անդրկովկասից, իսկ հետո կորչում է. նշանակում է՝ մեկնել էր Արևելք (տե՛ս ՎԱ, ֆ. 4, ց. 6, գ. 312):

9 ՎԱ, ֆ. 4, ց. 3, գ. 144, թ. 1:

թյուններին հանձնարարությամբ ու խնդրանքով, սակայն նրա սիրտը խոր խոցվեց հայրենակիցների այդօրինակ տմարդի արարքից[10]: Օտարներին մոտ ծնվելով Հայաստանում՝ Աբովյանն ամեն անգամ աչքի առաջ ուներ ազգի և հայրենիքի չհները, չանում էր եվրոպացիների չըջանում նպաստավոր կարծիք ստեղծել հայոց մասին, մինչդեռ նույն ազգի հոգևոր պետերը ո՛չ միայն երախտամոռություն էին հանդես բերում, այլև թունավորում էին նրան չըջապատող մթնոլորտը:

Պակաս դառնությունները չբերեց Աբովյանին 1844 թ. ևս, երբ նորից, իշխանավորների հրամանով, ապրիլից մինչև սեպտեմբեր, առաջնորդեց և ուղեկցեց երկրաբան Հերման Աբիխին Հին Հայաստանի արևելյան և արևմտյան աշխարհներում՝ մեծապես օգուտ բերելով նրա «գաղտնախորհուրդ այդ գիտարշավին» (Աբովյանի արտահայտությունն է):

1840-ական թթ. սկզբներից, Ռուսիայի նախաձեռնությամբ և Անգլիայի ու Ֆրանսիայի գործակցությամբ, նախապատրաստվում էր Թուրքիայի ապագա բաժանումը՝ տվյալ տերությունների միջև: 1844 թ. վերջնական, դաղտնի բանակցություններ Համար Նիկոլայ Առաջինը մեկնեց Անգլիա: Եվ հիմա, Աբիխին գործուղելով Անդրկովկաս և Հայաստան, Ռուսաստանը կամենում էր պարզել, թե ի՛նչ ռազմական և տնտեսական նշանակություն կարող են ունենալ Հին Հայաստանի հյուսիս-արևելյան գավառները, որոնք, ըստ այդմ, անցնելու էին իր տիրապետության տակ:

Աբովյանը մեծ չանքեր թափեց Հանուն Աբիխի առաքելության արդյունավետ վախճանի, բայց այս անգամ էլ նրա «մխիթար վարձատրությունն եղավ ստոր երախտամոռությունը և հավիտյան մոռթը»[11]:

Եվ ինչի՞ համար: Համատեղ չըջագայությունների վերջին փուլում, 1844 թ. օգոստոս-սեպտեմբերին, Աբիխը և Աբովյանը երկար անգամ փորձ արին բարձրանալ Արարատի գագաթը, և ամեն անգամ էլ չատ փոքր և հեչտ հաղթահարելի տարածություն էր մնում մինչև նպատակակետ, սակայն անսպասելիորեն հայտնված կատաղի փոթորիկը, ձյունախառն կարկուտն ու ամեհի կայծակը հարկադրում էին նրանց

---

10 «Գիտական նյութերի ժողովածու» (Հին ձեռագրերի պետահետազոտական ինստիտուտի), № 1, ե., 1941, էջ 189–193: Ե VII, 138 [181–182]: «Բանբեր Հայաստանի արխիվների», 1962, № 3, էջ 101: ՀԱ, ֆ. 1, ց. 1, պ. 64, թթ. 6–8:

11 Դ I, 218:

հետ դառնալ, եթե չէին ուզում կյանքով հատուցել նման հանդգնության համար:

Այս ամենից հետո, փոխանակ բախտից գանգատվելու և բնության տարերքին հայհոյելու, Աբիխն անհաջողության մեղքը բարդում էր Աբովյանի վրա, մինչդեռ վերջինս հանգամանորեն պատմել ու ցույց էր տվել, թե Պարրոտն և ինքը 1829-ին ի՛նչ ճանապարհով և ի՛նչպես էին հասել Արարատի բարձրագույն կատարը: Չկարողանալով անհաջողության պատճառները սառնասրտորեն վերլուծել և պատշաճ հետևություններ անել՝ Աբիխը չտապեց հայտարարել. «Եթե ավելի քիչ լսեի Աբովյանին և հետևեի իմ սեփական կարծիքին, ապա... գագաթ հասնելն ինձ համար զբոսանք կլիներ...»[12]:

Այսօրինակ տմարդությունն այնքան խորը խոցեց Աբովյանի վեհ հոգին, որ ամիսներ շարունակ չէր կարողանում ինքն իրեն գտնել և որևէ լուրջ բանով պարապել. «Գարշելի Ա<բիխն> ինձ ծուլացրել է...», — կարդում ենք 1845 թ. գարնանը Բոդենշտեդին հասցեագրված մի երկտողում[13]:

Աբովյանը քինախնդիր չէր, ամեն դառնություն անմիջապես կմոռանար, երբ խնդիրը վերաբերեր գիտության և սնոտիապաշտության հակամարտությանը, և բոլորանվեր կաջակցեր լուսյսի ու բանականության հաղթանակին: Աբիխն այս առումով լավ էր հասկացել Աբովյանին, և հետագայում, երբ պատեհ-անպատեհ նրա օգնության կարիքն էր զգում, ապա սուիեստաբանում էր. «Ինձ համար չեմ խնդրում, այլ գիտության համար... Արե՛ք այդ չնորհը, խնդրում եմ...»[14]:

Երբ 1845 թ. կեսերին Աբիխը ձեռնարկեց նոր վերելք դեպի Արարատ, Աբովյանը սիրտ չունենալով այլևս անձամբ գործակցելու՝ իբրև թարգման և առաջնորդ հանձնարարեց իր երբեմնի հառաջադեմ և սիրելի աշակերտ Պետրոս Շարոյանին: Վախճանն եղավ բարեհաջող: Հուլիսի 29-ին Աբիխը, Շարոյանը, ակոռեցի դեղջուկներ Սիմեոն Սարգսյանը և Հունան Մարտիրոսյանն ու մեկ-երկու ուրիշներ բարձրացան Նոյան լեռան գագաթը: Դա Աբովյանին սրտանց ուրախացրեց: Ավելին, վորձով համոզված լինելով, թե ինչ մոլեգին ուժ է տգիտությունը, և ինչպես կարող են ամենաստոր ձևով վարկաբեկվել Քրիստոսի առաքյալներն անգամ, նաև՝ աչքի առաջ ունենալով Պարրոտի օրինակը, որի անօրինակ խիզախումը ճգնեցին

---

12 **H. Abich.** Aus Kaukasischen Landern, B. I, Wien, 1896, S. 157.

13 *Ե* VII, *350 [356]:*

14 *Դ* II, *186:*

հերքել խավարի որդիները՝ մոլեռանդ կրոնավորները և նախանձոտ պաշտոնյանները, — Աբովյանը չխնայեց ժամանակը և ձեռքից եկածն արեց՝ օրինական ձևով վավերացնելու համար Աբխի վերելքի իսկությունը: Նրա հոգացումների չնորհիվ՝ Երևանի հոգևոր իրավարանում 1845 թ. օգոստոսի 8-ին ակոռեցի գեղջուկները համապատասխան ցուցմունքներ տվին, որոնց հիման վրա կազմվեց վերելքը հաստատող անառարկելի վկայագիրը[15]*, որն Աստվածատուր Արարատյանի ձեռքով ուղարկվեց Աբովյանին, որպեսզի վերջինս հասցներ Աբխին: Մինչև որ հարմար մեկը կգտնվեր Տփղիս գնացող՝ վկայագիրն անհետացավ մեջտեղից: Ի՞նքն անզգուշորեն կորցրեց, թե՞ ինչ-որ մեկը գողացավ նրա տանից, պարզված չէ: Ցավալիորեն, մինչև որ Աբովյանը կգտներ այն կամ նոր պատճեն պատրաստել կտար և կուզարկեր (ինչ որ իրականում արվեց)՝ Աբխին ստորաբար սկսեց սրանրա մոտ տրանջալ, թե Աբովյանն, իբր, հայ հոգևորականության «կամօք» և «համահաւանութեամբ» հորինելով այդ վարկածը՝ իրականում թաքցրել է «զվկայագիրն՝ առ ի ստել և ժխտել զճանապարհորդութիւն նորա»*[16]*:*

Մինչև հիմա ո՛չ ոքի մտքով չէր անցել Աբովյանին մեղադրելու անազնվության մեջ, բայց ահա՛ դոռոզամիտ Աբխին այդ անում էր՝ առանց խղճի խայթ զգալու, որովհետև ռուսական պաշտոնեության սանդուղքների վրա նրանից մի քանի աստիճան բարձր էր կանգնած[17]*, պալատական խորհրդական էր և պրոֆեսոր...*

Այսօրինակ վիրավորանքներ կրելով՝ Աբովյանը թևակոխեց 1846 թվականը, իսկ հետո դառնությունների ու տհաճ անակնկալների չարանը վերջ չունեցավ...

4

Երևանում Սեյմուրի հայտնվելը (ի դեպ, նրան ուղեկցում էր աստիճանավոր ոմն Ի., թերևս, Վորոնցովի կարգադրությամբ) Աբովյանի համար անակնկալ էր. այդպես էլ ինքը գրում է՝ «պատահմամբ

---

15 *Աբխի՝ 1845 թ. վերելքը հաստատող այդ, ինչպես նաև մյուս վավերագրերի պատճենները տե՛ս «Կովկաս», 1846, մարտի 21, № 11:*

16 *Ե՛ս X, 271:*

17 *Հմմտ.* F. Bodenstedt, Tausend und ein Tag im Orient, *հատ.* I, *հ.* II, *Բեռլին, 1850, էջ 160:*

ծանոթանալով նրա հետ...»[18], *որովհետև առաջներում նրան չէ՛ր տեսել, նրա մասին չէ՛ր լսել և հիմա էլ չէ՛ր սպասում, մինչդեռ Սեյմուրը, ինչպես երևում է, որոշել էր նախապես, թե Երևան հասնելուց հետո ո՞ւմ և ինչի՞ համար էր դիմելու:*

Ֆ. Պարրոտի «Reise zum Ararat» գիրքը, ըստ էության, քաղաքակիրթ մարդկության համար վերստին հայտնագործեց Արարատ-Մասիսը և միաժամանակ անփոխարինելի ուղեցույց դարձավ Արևելքով և, մասնավորապես, Հայաստանով հետաքրքրվող ճանապարհորդների ու բնախույզ-գիտնականների համար, որոնց մեծ մասը, որպես կանոն, նախապես կարդում էր հիշյալ ուղեգրության բնագիրը, իսկ ավելի ուշ՝ նաև անգլերեն թարգմանությունը (լույս է տեսել 1845-ին, Լոնդոնում, իսկ հաջորդ տարի արտատպվել Նյու-Յորքում)[19], *և ապա՝ ընկնելով Հայաստան, առիթը բաց չէր թողնում լինել Մասսի փեշերին կամ մագլցել նրա լանջերն ի վեր, այն էլ Աբովյանի հետ: Եթե դիպվածով Աբովյանին չէին հանդիպում, ապա որոնում-գանում էին:*

Երևան ժամանելով մոտավորապես 1846 թ. սեպտեմբերի 13-ին և որոնելով ու գտնելով Աբովյանին՝ Սեյմուրը խորամանկորեն ծածկեց Հայաստան գալու իր բուն դիտավորությունը: Նա Աբովյանից միայն խնդրեց, որ առաջնորդի իրեն մինչև այն վայրը, ուր մի ժամանակ հարուստ ու փարթամ Ակոռի գյուղն էր փռված, ինչպես նաև ցույց տալ 1840 թ. երկրաշարժի ավերածությունների հետքերը («Նա հրավիրեց ինձ ևս ուղեկցելու իրեն գոնե մինչև այնտեղ...»):

---

18 *Այս և հետագա բոլոր քաղվածքները, եթե հատուկ այլրյուր չի նշված, արված են Աբովյանի «Новое восхождение на Арарат» հոդվածից: Վերջինիս ինքնագիրը չի պահպանվել, տպագրվել է՝ «Кавказ», 1847, մայիսի 17, № 20, արտատպությունն ու թարգմանությունը՝ Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակության VII հատորում (Ե., 1956, էջ 65–76): Դեռ հեղինակի կենդանության օրոք՝ «Նամակի» (հոդվածի) ռուսերեն բնագիրը արտատպվել է նաև՝ «Сборник газеты Кавказ, издаваемой О. Н. Константиновым. Первое полугодие 1847 года», Տիflիս, 1847, էջ 198–206: Մեր օրերում, միայն հայերեն թարգմանությունը, տեղ է գտել՝ Դ I, 238–243:*

19 Journey to Ararat. By **Dr. Friedrich Parrot**. With map and woodcuts. Translated by W. D. Cooley. London, Longman, Brown, Green and Longmans, [1845]. — *Նույնը՝* New York, Harper & Brothers, Publishers, 1846. —*Վերջինի արտատպությունը (լուսատիպ)՝* **Friedrich Parrot**, A Journey to Ararat: Russia Observed Series. New York, Arno, 1970 *(այս հրատարակությունը չենք տեսել):*

Սեյմուրը մտադիր էր նաև մի օրով կանգ առնել Էջմիածնում և հանդիպել կաթողիկոս Ներսես Աշտարակեցու հետ, որը վաղուց չէր, որ ժամանել էր Մայր Աթոռ (մայիսի 13-ին) և օծվել ու բազմել Հայրապետական գահին (հունիսի 9-ին):

Երկաք օրը լիուլի կբավականացներ այդօրինակ ծրագրի իրականացման համար, մանավանդ որ Սուրբ Խաչի տոների պատճառով Աբովյանն էլ ազատ էր պալրոցական պարապմունքներից: Եվ «ես հաճույքով ընդունեցի ազնիվ անգլիացու առաջարկությունը», — ասում է Աբովյանը:

Սեպտեմբերի 14-ին նրանք արդեն Էջմիածնում էին և նույն օրն էլ արժանացան Ներսես Աշտարակեցու սիրալիր ընդունելությանը:

Կաթողիկոսն օրեր հետո գրած իր նամակներից մեկում մեջ է բերում անգլիացու խոսակցությունից մի պատառիկ. «Զգալի է ինձ յոյժ, — ասել է Սեյմուրը, — ղի ի Բաղդատայ մինչ այսր ո՛չ ուրեք տեսի զոք խորհրդածող վասն օգտի հասարակութեան, այլ ամենայն ոք խորհի վասն անձին միայն, որով ապաքսխտ գտանի ամենայն Թուրքաստան, Պարսկաստան և Հայաստան»[20]: Այս խոսքերը պետք է որ Ներսես Աշտարակեցու համար Աբովյանը թարգմանած լիներ, թեպետ Վեհափառ Հայրապետը հարկ չի համարել իր նամակում Աբովյանի անունն անգամ հիշելու...

Ներսես Աշտարակեցու անտիպ հիշատակարանում (ավելի ճիշտ՝ դրած և ուղարկած նամակների մատյանում) պահպանվել է Սեյմուրի հետ ունեցած հանդիպման մասին մեկ այլ դրառում ևս, որից պարզվում է, որ անգլիացի ճանապարհորդին ավելի իր փառամոլությունը հագուրդ տվող արևելյան (հայկական) հիշատակներ՝ կաթողիկոսական ինքնագիրն է հետաքրքրել և նախանձելի ծանոթություններ, քան նրկիրն ու ժողովուրդը:

Կաթողիկոսը գրում է.

«Ի 14 սեպտեմբերի այսր ամի լօրդ Հէնրի Դամբ Սիմօր եկն յԱթոռն, որում և մեք տուաք զայս մեր ձեռագիրը ըստ նորուչն խնդրանաց, ի վերայ սովորական կարմրագեղ թղթոց կնքեցելոց.

Ներսէս ծառայ Քրիստոսի... և այլն:

---

20 *Մատ., կԴ № 259/80, էջ 2: Նամակն ուղղված է Զ. Հ. Շահազիզյանին և գրված է ն. թ. սեպտեմբերի 28-ին:*

Թողութեամբ [21] հոգւոյ՝ յարգելով զգալուստ ձեր մեծանձնութեան ըստ հաճոյս ձեր վասն ունելոյ զանուն իմ ի միտս ձեր, գրեմ իմով սեպհական մատամբ զսոյն, տէր Հէնրի Դամբ Սիմօր լօրդ, վասն մնալոյ առ ձեզ, և հաւատարմացուցանեմ, թէ ունիմ պահել անմոռաց զյիշատակ անուան ձեր՝ ըստ ջերմեռանդութեանց ձերում բարեպաշտ քրիստոնէութեանց, զոր վայելեցաք ի սուղ միջոցի ի 14 այսր սեպտեմբերի յայսմ 1846 ամի ի վանս սրբոյ Էջմիածնի որ յԱրարատ:

Պատրիարգ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց ՆԵՐՍԵՍ» [22]*:*

Սեպտեմբերի 15-ի առավոտյան, հրաժեշտ տալով կաթողիկոսին, իսկ ապա ձիեր վարձելով՝ Աբովյանն ու Սեյմուրը (նաև աստիճանավոր պարոն Ի.-ն) թողնում են Էջմիածինը և Արաքսի ափերն մերկացած հովտով դիմում դեպի Արարատ:

Իրենց բուն դիտավորութիւնն Աբովյանից դարձյալ թաքցնելով՝ Սեյմուրն ու իր մյուս ուղեկիցները մեկ-մեկ խոսք էին դցում, թե իրենք «ինչքան երջանիկ կլինեին», եթե կարողանային բարձրանալ լեռան գագաթը: «Այդպիսի ցանկութիւնն ինձ ավելի քան տարօրինակ էր թվում», — ասում է Աբովյանը՝ մտքով չանցկացնելով, որ հենց դրան էլ նրանք ձգտում էին:

Խումբը նույն օրն էլ հասնում է Արալըխ կազակական պահակակետը՝ կարելով 50 վերստ տարածություն: Միայն այժմ Սեյմուրը հայտնում է իր վճռական մտադրությունը՝ բարձրանալու Արարատի գագաթը: Այդ անսպասելի լուրը Աբովյանին մտատանջության մեջ է դցում: Նա փորձում է մի քանի անգամ «համոզել անգլիացուն՝ ետ կենալու այդ ձեռնարկությունից, բայց իզուր...»:

Մինչ կանգ են առնում Նոր Ակոռի գյուղում՝ առաջնորդներ վերցնելու համար, օգտվելով պատեհությունից՝ Աբովյանը փորձում է վերադառնալ Երևան, սակայն անսպասելիորեն հայտնվում է ղինափակի հրամանատար եսավուլ Կ-ն և համոզում մնալ՝ խոստանալով անձամբ ուղեկցել նրանց և հոգալ բոլոր պետքերը:

Եվ ահա՛ կազակական պահակակետից առնելով հարկավոր պարեն ու պաշար և առաջնորդ վերցնելով նորակոռեցի դեղջուկ Սիմեոն Սարգսյանին (Աբիխի նախորդ տարվա ուղեկցին)՝ եսավուլի, երեք հայի և չորս կազակի ուղեկցությամբ Աբովյանն ու Սեյմուրը ճանապարհ են ընկնում դեպի Հին Ակոռի (ավերակները): Արդեն

---

[21] *Այս բառը ննթադրաբար ենք վերծանել, հնարավոր է և՝ «Ուրախութենամբ»:*

[22] *Մատ., Կ-Դ № 93/202, թ. 92ա:*

երեկոյան հասնում են լեռան վրվածքից հրաշքով փրկված փոքրիկ այդին և գիշերում այնտեղ:

«Վշտալի է, — ասում է Աբովյանը, — երբ մարդ նայում է երեմնի ծաղկյալ բնակավայրից մնացած այդ տխուր հետքերին, նամանավանդ ինձ՝ նրա նախկին բարեկեցությունը հիշողիս և այդ վայրերը... հաճախակի այցելողիս համար... Մի քանի ծառ այստեղ-այնտեղ՝ բոլորովին չորացած ու մի քանի տեղ էլ դեռ տխրադեմ կանաչ մնացած, մի քանի տապանաքար Սուրբ Հակոբի հովտից աջ, խոտերի մեջ խրված՝ նախկին գերեզմանոցի մնացորդները, ու մի քանի փոս էլ՝ զոհված մարդկանց տների վրա, բան գտնելու հույսով, գիշատիչ քրդերի ձեռքով փորված, — թախծալիորեն հիշեցնում էին անցյալ կյանքի հետքերի մասին»:

Այս վերջին տողերը խիստ հատկանշական են Աբովյանի նույն օրերի հոգեվիճակը հասկանալու համար:

Այլևս անկարող լինելով ամենուր տիրող քաոսացած կարգ ու կանոնը փոխել կամ էլ հայրենյան լուսավորության ճանապարհին շարունակաբար ծառացող արգելքները հաղթահարել, վերջապես, որ ամենահրատապն է, խրախուսանք ու օժանդակություն չգտնելով տերեվի ազգակիցների չրջանում և այդ պատճառով կորցնելով գալիք լավագույն օրերի հույսը՝ որքան էլ Աբովյանն իր վրա ուժ էր գործադրում հայրենի բնաշխարհի անզուգական գեղեցկություններով (անգամ, տարվա այդպիսի ուշ ժամանակին) ու Արարատ լեռան վեհափառությամբ հրապուրվելու, այնուամենայնիվ առավել հուզիչն ու ցնցողը թախծալի պատկերներն էին դառնում, անցած ճանապարհին հանդիպած մերկացած դաշտերն ու չորացած բուսականությունը, երեմնի հարուստ ու փարթամ դյուղից մնացած միակ վկաները՝ շիմաքարերն ու դատարկ փոսերը, որ գանձ գտնելու հույսով փորել էին պիշատիչ թափառաշրջիկները:

Ուրիշ բան դժվար էլ էր Աբովյանից սպասել, մանավանդ որ նա, ուղիղ երկու շաբաթ դրանից առաջ (օգոստոսի 31-ին), Մկրտիչ Էմինին ուղղված նամակում, կիսելով «հոգեծանոթ» պիտնականի հետ իր անբուժելի հոգևոր վիշտը, գրում էր. «Ես վերջացուցի համարեա՛ թէ՝ զնպատակ կենացս: Բիւրազգի սրտամաշուխիւնք փոխով առագաստեալ զամենայն իղձ և դիտաւորութիւն իմ ի նպաստաւորութիւն ուսման մերազգի մանկանց՝ ատկեն զիս հրաժարիլ ի պաշտօնէ և որոնել անձին զվիճակ առանձնական: Անհնարի՛ն է ընդդէմ խթանի աքացել. յանչուքն երևան լաւ է ունիլ զէշ մի կամ ջորի պատրաստական, քան զամենայն դիտութիւնս հրեշտակային, բայց ո՛չ. ժամանակն, հանգամանքն, այլ ո՛չ երևան, կամ այլ ոք կրեն և առաջ

բերեն զայս անյաջողութիւն: Սիսալ է, որ զազգ մեր ուսումնասիրեայց համարի, ամենայն ուսումն և կարգադրութիւն պարտի համապատասխանիլ վիճակի և կարեաց ժողովրդեան, մեք ո՛չ այսպէս վարիմք, վասն որոյ կամ իբրև վարձկան՝ յօդուտ մեր միայն հայելով՝ պարտիմք շարունակել զպաշտօն սոյնօրինակ, կամ թէ ի բաց կալ միանգամայն յայնմանէ առ ի ստանալ զանդորրութիւն խղճի և սրտի: Զվերջինն որոնելով այժմ՝ կամիմ առանձնանալ և ի կամս բարձրելոյն թողուլ զամենայն, որ գալոցն է...»[23]:

Այս հոգեվիճակի՝ Աբովյանի ներաշխարհում վաղուց սկսված ողբերգության եզրափակիչ արարի գրավոր արձագանքներից է, մեր կարծիքով, նաև գերման բանաստեղծ Ֆ. Բոդենշտեդին ուղղված, սակայն, տակավին չհայտնաբերված նամակը, որի բովանդակությունը, յուրովի ընկալմամբ, վերջինս մնջ է բերել իր «Հազար ու մեկ օր Արևելքում» ուղեգրության առաջին հրատարակության մնջ և հետագայում փոքր-ինչ խմբագրել:

Այդ վկայությունը տալու առիթը Աբովյանի խորհրդավոր անհետացման լուրն էր, որ Բոդենշտեդին էր հաղորդել Անդրկովկասյան դպրոցների երթեմնի վերատեսուչ Ի. Վ. Ռոսկովշենկոն, որը 1841 – 1842 թթ. պակաս դառնություններ չէր պատճառել հայ նահատակ հանճարին:

Բոդենշտեդն ասում է.

«Դեռ այն միջոցին (իմա՛ 1844 թ. վաղ գարնանը – Պ. Հ.), երբ ես ծանոթացա Աբովյանի հետ, նա գտնվում էր վերին աստիճանի մռայլ և անհույս տրամադրության տակ, որ էլ ավելի ծանրացավ նրա և Դորպատի պրոֆեսոր Աբիխի... միջև պատահած ցավալի դեպքի պատճառով... Աբովյանն իր վերջին նամակում գրում էր ինձ, որ վճռել է ռուս պետական ծառայությունը թողնել, և որ մտադիր է քաշվել Հայաստանի ներսերը՝ իր հայրերի օրինակով հողագործության նվիրվելու և դրանով ապրելու, որովհետև իր աննշան եկամուտները չեն բավարարում քաղաքի պահանջներին, և որ, առհասարակ, իր վիճակի բարելավմանը շարունակ սպասելը իրեն էլ ավելի մեծ թշվառության դիրքը պիտի նետի...»[24]:

---

23 Մատ., Լազարյանների դիվան, թղթ. 108, գործ 60, վավ. 25 (հմմտ. «Մ. Խորենի երկասիրությունները», Մոսկվա, 1898, էջ 245–246, նաև ե X, 272–273):

24 F. Bodenstedt, Tausend und ein Tag im Orient, II, Berlin, 1850, էջ 160–161: Ա. Բակունցը «Հայաստանի ներսերը (թե՞ խորքը) քաշվել» կամ, ինչպես ինքն է թարգմանել՝ «Հայաստանի ներքին մասը դնալ» արտահայտությունը հասկացել է «Օսմանլուի Հայաստան» (=Արևմտյան Հայաստան)

Ֆ. Բոդենշտեդն այսօրինակ կարևոր տվյալ հաղորդելով հանդերձ, հասարակ քաղքենու նման էր դատում՝ ամեն ինչ դրամի և ստամոքսի հանգեցնելով, մինչդեռ, այդուհանդերձ, Աբովյանի տառապանքների աղբյուրը իր հոգեկան աշխարհում էր, իր բարձր ու նվիրական իդեալների աստիճանական խորտակումը զգալու և տեսնելու մեջ:

Ազգի մեջ վերածնվելու ուժ և հնարավորություններ նա չէր դտնում և այդ պատճառով տառապում էր ու տանջվում, դպրոցական–հանրային գործունեությունից հրաժարվելու վճիռ կայացնում:

Սեպտեմբերի 16-ի առավոտյան վաղ Աբովյանն ու Սեյմուրը ճանապարհ են ընկնում և չատ չուտով հասնում Փոքր Մասի հյուսիսային փեչին փուլված անտառը, որտեղից քայլ առ քայլ հետևելով պրոֆ. Աբիխի նախորդ տարվա երթուղուն՝ մոտ ժ. 2-ին հասնում են Աբիխի դիշերատեղին, ուր և դադար են առնում:

Բուն վերելքն սկսում են հաջորդ առավոտյան, հրաչալի եղանակին: Շալակներն առնելով հարկավոր ամեն բան՝ տաք դգեստներ, ածուխ, վայտ, հաց, գինի, և գինվելով կազակական տեդերով՝ սկզբից չարժվում են դեպի արևելք՝ Փոքր Մասի ուղղությամբ ձգվող ձորով, իսկ այնուհետև դեպի հյուսիս–արևմուտք՝ հասնելով Աբիխի հայտնագործած նվիրական չավղին, որ, «կարծես, մի բնական սանդուղք լինի» և միակ հարմար ուղին է վերելքի համար՝ «հենց բնության կողմից այդ նպատակով ստեղծված»:

Որոշ ժամանակ անց՝ հաղթահարում են նաև Աբիխի դատած չավղի դժվարանցանելի տեղերը և ցերեկվա մոտ ժամը 5-ին կանգ առնում մի հարմարավետ դիշերատեղում, որ հավասար էր Փոքր Մասի բարձրությանը: Կրակ են վառում, տաքանում, ուտում և քնում:

Սեպտեմբերի 18-ին, արեգակի առաջին ճառագայթների հետ, Աբովյանն ու Սեյմուրը նորից մագլցում են դեպի վեր: Շուտով երևում է Աբիխի սպասավոր Կարլ Յենկի՝ 1844 թ. կանդնեցրած խաչը: Վերելքի ուղին սկսում է ավելի ու ավելի զառիթափ դառնալ: «Պետք էր դարձյալ մի քանի ղորեղ քայլ ևս անել բավական թեք լանջի վրայով, որպեսզի հասնեինք լեռան կատարը», — դրում է Աբովյանը և

տեղափոխվել՝ կապելով դա հեղինակի իրրև թե տաճկական կողմնորոշման հետ (տե՛ս «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայությը», Երևան, 1932. էջ 49): Նրան իրավացիորեն առարկելով՝ պատմական Աչոտ Հովհաննիսյանը գրել է, թե «պաշտոնը թողնելու և հայկական բնաշխարհում երկրագործությամբ տպրիու մտայնություններ ինքյան կապ չունի հետապնդում ծայր առած «թուրքական օրիենտացիայի» հետ... Անհավանական չենք գտնում, որ... Աբովյանը նկատի էր առնեցել պարզապես Բանաքեռ փոխադրվելու միտքը» (տե՛ս Ա. Հովհաննիսյան. Աբովյան, էջ 61–62):

բերկրանքով ավելացնում. «Այս անգամ բախտը կամեցավ ինձ չնորհել մարդկային ցեղի նախահոր սրբազան բնակավայրին առաջինը երկրպագելու երջանկությունը»: Գագաթին կանգնած՝ մինչ Աբովյանը մտաբերում էր անցած-գնացած օրերը, վերհիշում Պարրոտին, 17 տարի առաջ Արարատի արծաթե կատարին կանգնեցրած իր խաչը, հուզվում և թախծում, Սեյմուրը նամակներ էր գրում փոխարքային և իր անգլիացի բարեկամներին...

Կեսօրն արդեն անցել էր, երբ բռնում են վերադարձի ճանապարհը՝ սրածայր ձեռնափայտերի օգնությամբ սղալով փխրուն ձյան վրայով: Գիշերատեղի են հասնում իրարից անջատ՝ արդեն մթան մեջ, և քնում ցածուն թողած իրենց մարդկանց մոտ: Բնությունն էլ, կարծես, Աբովյանի հոգու նման կարճատև մեղմությունից հետո նորից խառնվում է, և ահավոր ու չարագուշակ ամպերը կախվում են նրանց գլխին:

«Արարատը նույն այդ գիշերը հագավ յուր անդրջրհեղեղյան քղամիդը, որն ավելի ու ավելի անթափանցիկ էր դառնում, իսկ երեկոյան դեմ անգամ ներքևում արձագանք տվող կայծակն ու ամպրոպի ճայթյունները ակներևորեն ցույց էին տալիս մեզ, թե ինչպիսի կատաղի մրրիկ էր պար գալիս նոր միայն թողած լեռան գագաթին», — եզրափակում է իր ակնարկը Խ. Աբովյանը:

Սեպտեմբերի 19-ին նրանք բռնում են վերադարձի ճանապարհը դեպի Էջմիածին, ուր և հասնում են հենց նույն կամ հաջորդ օրը:

Էջմիածնում «պատվարժան մելիքնատեերը» հրաժարվում է հայ գյուղացիներին վճարել վարձած ձիերի համար նախապես պայմանավորված գումարը, և գյուղացիներն էլ անկարող լինելով պատժել Սեյմուրին՝ գողանում են Աբովյանի նոր, թանկարժեք վերարկուն: «Ահա՛ և իմ ո՛չ այնքան նվազ-կարևոր աշխատանքների ամբողջ վարձատրությունը (награда)», — մի տարի հետո դառը հեգնանքով վերհիշում էր Աբովյանը[25]:

Սեյմուրից Աբովյանը բաժանվեց սեպտեմբերի չուրջ քսանին, իսկ դրանից մի շաբաթ հետո պատեհություն նրան (Աբովյանին) հանդիպեցրեց ռուս գրող և ճանապարհորդ Ա. Ն. Մուրավյովի հետ (1846, հոկտեմբեր), ապա մեջտեղ եկան դպրոցական անհետաձգելի գործեր, այնպես որ Արարատի գագաթը կատարած իր վերջին վերելքի նկարագրությունը կարողացավ, իբրև բաց նամակ, գրել և ուղղել Տփղիսի «Кавказ» լրագրի խմբագրությանը 1847-ի առաջին ամիսներին միայն:

---

25 ե VII, *138 [182]:*

Այս պարբերաթերթերում էլ, որոշ կրճատումներով, լույս տեսավ Աբովյանի նամակ-հոդվածը նույն 1847 թ. մայիսի 17-ին (№ 20), «Նոր վերելք դեպի Արարատ» խորագրով (թերևս՝ խմբագրության դրած) և «Քաղվածքներ Խ. Ա. Օբովյանի նամակից» ենթավերնագրով:

Հոդվածն առիթ դարձավ, որ հայ խավարամոլները կատաղորեն իրենց թույնը թափեն Աբովյանի վրա և ջղաձգորեն սրեր ճոճեն: Այս մասին էլ ա՛հա՛ կուզեինք մանրամասնորեն խոսել, որովհետև առաջին անգամ էր, որ հայ մամուլը խոսում էր Աբովյանի մասին, այն էլ այդպիսի ոճով:

5

Մինչ ռուս ու եվրոպացի գրողների, բնախույզ-դիտնականների ու ճանապարհորդների երկասիրությունների[26] և ժամանակի պարբերականներում[27] երևացած լրատվությունների չնորհիվ Աբովյանի անունը, դեռ երիտասարդական տարիներից, հռչակվել էր Ռուսիայում ու Արևմուտքում, որպես լուրջ պատրաստության տեր մտավորականի, իր հայրենիքը հիմնավորապես ճանաչող անձի ու մեծ հայրենասերի, և դիտական հետազոտությունների նպատակով Անդրկովկաս ու, մասնավորապես, Հայաստան ուղևորվող օտարները, տեղ հասնելուն պես, անհապաղ որոնում, գտնում էին նրան և նրա ծանոթությունն ու աջակցությունը խնդրում, նույն Աբովյանն իր հայրենիքում, իր ազգակիցների չրջանում, դրեթե անծանոթ մարդ էր՝ մի տեսակ մեկուսացված և անուշադրության մատնված:

Եթե հայ մտավորականները XIX դ. 30 — 40-ական թթ. միտումնավոր լռություն էին պահպանում նրա անձի ու գործի վերաբերմամբ

---

26 Նկատի ունենք Ֆ. Պարրոտի «Ուղևորություն դեպի Արարատ», Մ. Վագների «Ուղևորություն դեպի Արարատ և Հայկական բարձրավանդակ», Կ. Կոխի «Թափառումներ Արևելքում, 1843 և 1844 թվականների ընթացքում», Ֆ. Բոդենշտեդի «Հազար ու մեկ օր Արևելքում» և «Կովկասի ժողովուրդները և նրանց պատմապրական կռիվները ընդդեմ ռուսների», Ա. Ն. Մուրավյովի «Վրաստան և Հայաստան» և այլոց նմանատիպ գործերն ու հոդվածները:

27 Նկատի ունենք՝ «Тифлисские ведомости», «С. Петербургские ведомости», «Исторический, статистический и географический журнал или Современная история света», «Военный журнал», «Журнал Министерства народного просвещения», «Библиотека для чтения», «Северная пчела», «Кавказ», «St. Petersburgische Zeitung», «Dörptsche Zeitung», «Dorpater Jahrbücher», «Göttingische gelehrte Anzeigen» և այլ պարբերականներ:

ու խուսափում նրանից, ողբերգական անհետացումից հետո անգամ, մի ամբողջ տասնամյակ, գրեթե, չհամարձակվեցին մի քանի տող նվիրել նրա պայծառ հիշատակին և անաչառորեն դնահատել հայ ժողովրդի լուսավորության և ազգային նոր գրականության սկզբնավորման համար նրա կատարած վիթխարի գործը: Աբովյանի համար այս անմարդկային իրողությունը աղբյուր ու ակունք էր հոգեկան դրամայի:

Մի անգամ է միայն Աբովյանը «բախտ ունեցել» կարդալու իր անունը մեսրոպյան գրերով ու հայերեն լրագրի էջերում («Կովկաս», 1847, հունիսի 7, № 23), այն էլ մի աղավաղված լրատվության մեջ, որի ծանուցողներն էին Գաբրիել Պատկանյանը և Կարապետ Շահնազարյանցը՝ երկուսն էլ, ցավոք, առերես, Աբովյանին երկար տարիներ բարեկամ անձինք:

Լուրը հետևյալն էր.

«Անգղիացի աշխարհաշրջիկն Հենրի Դենբի Սիմուր ի 1846 ամի ի սեպտեմբերի 17 եկեալ է մի գագաթանց Մասեաց լերին, և հանդիպեալ ի ճանապարհին նշանացն զորս եդեալ էին Մհծանուն գիտնական վարժապետն Պարրոտ՝ ի 1829 ամի, ճանապարհորդն Վաղներ՝ ի 1842 ամի, և երևելի աշխարհաշրջիկն Աբիխ՝ ի 1844 ամի, կալեալ է զնոցին շաւիղ, և հասեալ է ի տափարակավայր մի, զոր ի պատճառս մառախլապատ գոյոյ շրջակային՝ համարեալ է գլուխ Մասեաց, վասնորոյ և ուղեկից նորա Խ. Ա. Աբոյանց պարծանօք խօսի ի նամակի իւրում. [Թէ առ այս նուագ կամ եղև նախասահմանութեան ինձ չնորհել զերանութիւնն՝ զառաջինն նախ համբուրել զնուիրական օթեակ նախահօրն ազգի մարդկան»[28]:

Վերելքից ավելի քան ութ ամիս հետո, որպես ուշագրավ (բայց ուշացած) նորություն, քաղելով այս լուրը Աբովյանի «Նոր վերելք դեպի Արարատ» հոդվածից և ծանուցելով հասարակայնությանը, կովկասահայ անդրանիկ լրագրի հրատարակիչները թուլլ էին տվել կոպիտ աղավաղումներ, որոնք, թերևս, կարելի է բացատրել սնոտիապաշտ ամբոխին հաճոյանալու և Աբովյանին հրապարակորեն անվանարկելու նրանց դիտավորությամբ:

---

[28] *«Կովկաս», 1847, հունիսի 7, № 23, էջ 3 [91]: Ընդգծումը հեղինակինն է: Այդ բառերն ուղղակիորեն թարգմանված են Աբովյանի «Նոր վերելք դեպի Արարատ» հոդվածից.* «На этот раз судьбе угодно было предоставить счастье мне первому поклониться священной обители Праотца рода человеческого».

Նախ՝ Աբովյանն ու Սեյմուրը, հակառակ «Կովկասի» լրատվության, սկսելով իրենց վերելքը 1846 թ. սեպտեմբերի 16-ին՝ Արարատի գագաթ էին հասել ո՛չ թե հաջորդ օրը, այլ սեպտեմբերի 18-ին:

Ապա՝ վերելքի ճանապարհին, հակառակ նույն լրատվության, նրանք չէին տեսել Պարրոտից և Վադներից մնացած որևէ հետք, էլ չենք ասում, որ Վադներն Արարատ բաձրանալու փորձ ամենևին չէր արել:

Բացի այդ, նախորդ ընախույզներից Ֆ. Պարրոտը և Հ. Աբիխը (վերջինիս հետքերով և Հ. Սեյմուրը) Արարատ էին բարձրացել տարբեր կողմերից, հետևաբար նրանք չէին կարող միևնույն ճանապարհն անցած և միևնույն կետին հասած լինել, մանավանդ որ լեռան գագաթը ո՛չ թե սրածև կոն է, այլ բավականաչափ ընդարձակ մի տարածություն, որի վրա կան մեծ ու փոքր նրնք բլուրներ:

Այնուհետև՝ Արարատի շրջակայքը սկսել է մառախլապատվել սեպտեմբերի 18-ի կեսօրից հետո, երբ Աբովյանն ու Սեյմուրն արդեն հասած լինելով լեռան կատար՝ պատրաստվում էին վայրէջքի, ուստի և, հակառակ նույն լրատուների, նրանք չէին կարող Արարատի բարձրադիր լանջերից մեկին ընկած ինչ-որ տափարակ չվոթել բուն գագաթի հետ և հրապարակավ ստել:

Վերջապես՝ Աբովյանի աղգանունը «Կովկասի» հրատարակիչները դիտավորյալ աղավաղել էին: Մինչ «Кавказ»-ը ռուսերենի տառադարձությանը հարմարեցնելով՝ օգտագործել էր «Х. Л. Обовьян» տարբերակը, «Կովկասի» լրագրողները, կարծես չիմանալով, թե այդ աղգանունը հայերեն ինչպես պիտի գրել, տառադարձել էին՝ «Հ. Ա. Աբոյանց»՝ դիտավորյալ դուրս վանելով նաև «վ» (Աբովյանց) տառը:

Այս բոլորը, սակայն, «անմեղ» չարություններ էին: Մաղձն ու թույնը հետո էին, «Կովկասի» հենց նույն համարում, վերոհիշյալ լրատվությունից անմիջապես հետո ղետեղված «Լեռն Արարատ և տապան Նոյի» խորագրով անստորագիր հոդվածի մեջ[29], որը խավարամտության և անտիապաշտության ջատագովություն էր ըստ

---

[29] *Հայ հետազոտողներից այս հոդվածի վրա առաջինն ուշադրություն է դարձրել (առանց քաղվածքներ անելու) պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը (տե՛ս նրա «Աբովյան», էջ 71): Վերջինս խորագրից անմիջապես հետո նշել է նաև ենթավերնագիրը՝ «Հերքումն Պարրոտի, Արիխի և այլոց՝ Մասնաց վրա բարձրանալուն»: «Կովկասի» մեր օգտագործած համարում նման ենթավերնագիր չկա: Շատ հնարավոր է, որ դիտնականի ձեռքի տակ ինչ-որ արտագրություն է եղել և ոչ հոդվածի տպագիր բնագիրը:*

էության և որի հեղինակն, ամենայն հավանականությամբ, Գաբրիել Պատկանյանն էր[30]:

Սկզբից մինչև վերջին տողը Աբովյանի դեմ էր ուղղված այն, թեպետ ինչ-ինչ նկատառումներով նրա անունն ուղղակի ձևով չէր հիշվում և խառնված էր Արարատի գագաթի հին ու նոր հաղթահարողների հետ՝ բոլորին էլ մկրտելով միևնույն անվանարևիչ կոչումով՝ «իմաստակներ»:

Արտագրելով Աստվածաշնչի հայտնի խոսքերը, թե ***«Նստաւ Տապանն ի լերինս Արարադայ»*** *(«Մնունդք», Ը 4)*[31]*, «հայկական հայրենասիրությունից» կուրացած հոդվածագիրը զարմանք էր հայտնում, «զի ո՛չ հայեցեալ յայս, այժմեան իմաստակք ոմանք, որք* ***զանճինս առ իմաստունս ունին, ելանեն*** *ի գլուխս լերանց Արարադայ ի խնդիր Նոյեան Տապանի որպէս երբեմն ելին նաև գիտնականքն՝ Վարժապետն Պարրոտ և աշխարհաչրջիկն Աբիխ, և այլք ևս, և այժմ ևս լսի, թէ ելեալ են և այլք» (իմա՛ Սեյմուրը և Աբովյանը. — Պ. Հ.): «եթէ վախճան սոցա է, — շարունակում է անանուն հոդվածագիրը, — սուտ առդրել զԱստուածաշունչ Մատեանն, զուր են ճիգն և երկունք սոցա... Իսկ եթէ վախճան սոցա է հերքել ջրել զստուգութիւն պատմութեան Հայոց, որ հիմնեալ յԱստուածաշունչն... դարձեալ ի* ***նանիր վաստակքն...*** *յամօթ այնոցիկ՝ որք զապացուցեալ ճշմարտութիւնն կամին ուրանալ: Զի՞նչ կամին ասել իմաստակքս: — Մեք ելաք ի գլուխ Մասեաց, և ո՛չ տեսաք զՏապանն Նոյի, — ուրեմն՝ չէ՛ անդ, ուրեմն՝ չէ՛ և եղեալ անդ, Հուսկ ուրեմն՝ կամ սուտ է գրեալ յԱստուածաշունչն, կամ Մովսէս ի խօսիլն զԱրարադայ՝ ո՛չ խօսի զՄասեաց, այլ զայլ լեռնէ, որ չէ ի Հայաստան»:*

Եզրակացությունը պարզ է. որովհետև Հայերից Աբովյանն էր (ու իր աշակերտ Պ. Շարոյանը) երկիցս եղել Արարատի գագաթին, այդ մասին հայերեն ու օտար լեզուներով պատմել ընթերցողներին՝ ո՛չ մի խոսք չասելով Նոյան տապանի գոյության մասին, ուստի և նա է սուտ հռչակողը Աստվածաշնչի քարոզած հավիտենական ճշմարտու-

---

30 *Այսպես ենթադրելու հիմք է տալիս Գ. Պատկանյանի մի ակնարկը՝ արված հետագայում, երբ այլևս Աբովյանը կենդանի չէր և չէր կարող ճշմարտությունն իմանալ: Տե՛ս նրա «Արարատ» ամսագրի անդրանիկ համարում (1850, սեպտեմբերի 1, էջ 6) դետեղված անխորագիր հոդվածը՝ «Արարատյան լեռի գլուխը...» սկսվածքով:*

31 *Այսպես կոչված Զոհրապյան Աստվածաշնչում՝ «Եւ նստա՛ւ տապանն յեւթնեւրորդում ամսեանն ի քառանեւեթն ամսոյն ի լերինս Արարատայ» (Վենետիկ, 1805, էջ 6):*

թյուններին, անանկ հռչակողը ազգային պատմության սրբությունների, դավաճանողը՝ սեփական հայրենիքի ու ազգի:

Որքան սպառնալից էր հոդվածի սկիզբը, այնքան թունոտ հեգնանքով ու արհամարհանքով էին գրված վերջին պարբերությունները: Բերելով զանազան պատճառաբանություններ և մի անգամ ևս անհերքելի հռչակելով Աստվածաշնչի խոսքերը՝ հոդվածագիրը սովետաբանում էր, թե ցարդ Մասիս բարձրացողները «չեն ելեալ յայն գագաթ, յորում Տապանն Նոյի գտանի, և թէ ելեալ իսկ են յայն գագաթ, [չեն] փորեալ ուրեք զերկիր»: Իսկ ապա՝ ուժ առնելով այս «դյուտից» և զգուշացնելով ներկա ու ապագա աշխարհաշրջիկներին՝ «մի՛ ի զուր աշխատիլ գտանել կամ ղերինն Արարադայ զայն գլուխ, ուր Հանդեաւ Տապանն, կամ զՏապանն իսկ», դի նոքա «նախախնամութիւնն կամեցեալ է ծածկել ի հետաքրքրութենէ մարդկան», — հոդվածագիրը այս ծաղրական «խորհուրդն» էր տալիս նրանց. «...Մի՛ յանդգնաբար ասասցեն՝ թէ չէ անդ Տապանն, այլ ասասցեն վչտահար, թէ և յայս նուաղ ևս աշխատութիւն մեր ևս ի դերևս դի ո՛չ մարթացաք գտանել ելանել յայն գագաթ, յորում էր Տապանն Նոյի»:

Դժվար չէ կռահել, որ «Կովկասի» հրատարակիչները անուղղակիորեն պահանջում էին Աբովյանից՝ գլուխ խոնարհել «ազգային հայրենասիրությանը» զորություն տվող սրբությունների առջև՝ չմտածելով անգամ, որ մարդկության հոգևոր զարգացումը և որոնող միտքը անանկ է հռչակել դրանք. ենթարկվել անոտիապաշտ ամբոխի կամքին և, հակառակ իրականության, հրապարակորեն վկայություն տալ տապանի գոյության և գլուխության անդորության վերաբերյալ, հանուն անձնական ապահովության՝ մեղանչել ճշմարտության և արդարության առջև:

Գ. Պատկանյանն ու Կ. Շահնազարյանցը առանց իրենց անձը ի ցույց դնելու հրապարակային հարձակում գործելով Աբովյանի վրա՝ յուրաքանչյուրն իր հոգու խորքում փայփայում էր հեռուն գնացող դիտավորություններ. օրակարգում էր Ներսիսյան դպրոցի տեսչության հարցը, որն Աբովյանին վստահելու մտադրություն ուներ կաթողիկոս Ներսես Աշտարակեցին, մինչդեռ Պատկանյանն ու Շահնազարյանցը, իրենցից բացի, ուրիշ թեկնածու չէին պատկերացնում: Աբովյանի անկաշառ հայրենասիրության նկատմամբ լուրջ կասկածներ սերմանելով՝ նրանք կարծում էին, որ Ներսես Աշտարակեցին այդպիսի մեկին հազիվ թե հավատ ընծայեր և, վերջիվերջո, հարկադրված լիներ իրենց աջակցությունը խնդրելու, իսկ թե ո՞րին, այդ էլ կախված էր առերես դաշնակցած ապագա հակառակորդներից յուրաքանչյուրի ճեռնարեցությունից:

Կարճ՝ «Կովկասի» վերոհիշյալ զրպարտագրի ծնունդ տվողը հետին շահախնդրություններն էին, որոնք Ներսես Աշտարակեցու նման չրջահայաց անձնավորությանը չէին կարող ապակողմնորոշել:

Ահա՛ թե ինչու 1847 — 1848-ի ձմեռը, երբ վերջնականապես վճռվում է վերակառուցել Տփղիսի դպրոցը և հրավիրել նոր տեսուչ, Ներսես Աշտարակեցին արժեք չտալով պարապ զրպարտանքներին՝ առանց վարանելու վավերացնում է Աբովյանի թեկնածությունը, մանավանդ որ Պատկանյանն ու Շահնազարյանցը իրենց բարերարությամբ, մտավոր կարողություններով և մանկավարժական հմտությամբ չատ էին զիջում նրան, չենք ասում արդեն, որ Աբովյանի համար հայության լուսավորությունը կենաց ու մահու խնդիր էր:

Աբովյանը տեղի չտվեց: Եվ ինչպե՞ս կարող էր, երբ դա կլիներ հրաժարումն տարիներ շարունակ իր գրած, հրատարակած ու քարոզած գաղափարներից, կլիներ ամենամեծ վիրավորանքը իր սիրելի ուսուցչի՝ Ֆրիդրիխ Պարրոտի հիշատակին, որի անունը հայ մանուկների սրտերում հավերժացնելու համար վերջին տարիներին կազմել էր նրա հանրամատչելի կենսագրությունը և իրենց 1829 թ. Արարատյան վերելքի պատմությունը, որից, դժբախտաբար, մի պատառիկ է սոսկ մնացել, իսկ մնացած գլուխները 1897 թվականից հետո անհայտ անձինք գողացել են Աբովյանի ձեռագրերի պահարանից: Մեր բոլոր որոնումները, գոնե առայժմ, արդյունք չեն ունել[32]*:*

Հայտնի է նույն 1847 թ. աշնանը, Երևանում, վոստապետ Ա. Քալանթարյանցի հետ Աբովյանի բռնած գրազը և ապա՝ նախապատրաստությունները (Բլավատսկու հետ միասին) հաջորդ, 1848-ի ամռանը Արարատի գագաթը բարձրանալու համար, որ խափանվեց Աբովյանի ողբերգական մահվամբ: Գրազի չարժառիթների ու պայմանների մասին Աբովյանը գրած է եղել հոդված՝ «Ученый спор в Эривани 18 ноября», *թերևս, «Кавказ»-ում տպագրելու և հակառակորդներին հակահարված տալու համար, բայց ինչ-ինչ*

---

32 *Ն. Տեր-Կարապետյանն իր գրքում («Խաչատուր Աբովյան», Տփղիս, 1897, էջ 135) մնջ է բերել այդ գործի գլուխներից մնկ-երկուսի խորագրերը՝ այլ նյութերի հետ խառը. «Պարրոտ, Ղոնաղլուխյուն, Ֆրխատոսի ծնունդը, Տարեմուտ, Թադումն, Հայրենասիրություն, Պարրոտի բնությունը, Պարրոտի գրություններ»: Վերջիններն ամփոփված են եղել մի քառածալ դավթարում և եղել են աշխարհաբար: Այդ բնույթի մի պատառիկ, սակայն գրաբար լեզվով, տպագրել ենք Խ. Աբովյանի Երկերի ակադեմիական հրատարակության VII հատորում, «Հատված Ֆ. Պարրոտի կենսագրությունից» խմբագրական խորագրի տակ, ուր Ակռռիի Սբ. Հակորի վանահայր Կարապետ վարդապետի բնութագիրն է տրված (տե՛ս էջ 211–214):*

պատճառներով այդ ևս լույս աշխարհ չի եկել, իսկ ձեռագիրն էլ, որ մինչև 1897 թ. պահվում էր Աբովյանի դիվանում, անհետացել է խորհրդավոր կերպով:

Այդ ամենի մասին ավելի մանրամասն կխոսենք այլ առիթով:

«Կովկասի» խնդրո առարկա հոդվածի հրապարակումից հետո Աբովյանը խզեց հարաբերությունները Գաբրիել Պատկանյանի հետ և նրա անունն ընդմիշտ ջնջեց իր բարեկամների շարքից: Տարիներ անց, վերհիշելով այս անցքերը, Պատկանյանը չքմեղանում էր՝ թյուրիմացության պատճառ համարելով Աբովյանի ազդանվան սխալ դրությունը, որն իբր թե կարապետ Շահնազարյանցի հարկադրանքով էր արվել: Բավական մանվածապատ ձևով նա այս ամենը պատմում է իր Հիշատակարանի այն մասում, որ վերաբերում է իր և Ներսես Աշտարակեցու դժոխքյանը և Կարապետ Շահնազարյանցի փորձին՝ հաշտեցնելու նրանց:

« — Սրբազան վեհապետն հրամայեց ինձ, — ասում է Գ. Պատկանյանին Կ. Շահնազարյանցը, — որ գամ, վերահաստատյուն գործեմ և, թե հնար է, ձեզ հաշտեցնեմ:

Տեր Գաբրիելը պատասխանեց.

— Եթե իմ ճանաչած վեհապետն է, նա քեզ այդպիսի լինչ չէր ապսպրեր, մանավանդ՝ ուր ես կամ. իսկ թե յուր բնությունն փոխել է, լավ է, որ ինքս կերթամ, յուր բերանեն կլսեմ և պարտուպատաշաճ պատասխան կուտամ: Խռովարար և չփոթարկու աչեղային հաշտարար չի կարդիր Ներսեսն, և թեև հերկնից ակնարկություն ունենա:

Կարապետ վարդապետն բարկացավ և ասաց.

— Ի՞նչպես կհամարձակիս ինձ խռովարար ու չփոթարկու կոչել:

Տեր Գաբրիելն պատասխանեց.

— Ի մանկությենն իմ սովորել սանձն սանձ կոչել, և խնձորն՝ խնձոր: Ես քո արածն պատմեմ, հետո դու ասա, թե այդպիսի բան անողի անունն եթե չփոթարկու և խռովարար չէ, ապա ի՞նչ է:

Կարապետ վարդապետն ասաց.

— Դու Աբովյանի՞ բանն ես հիշում:

Աբովյանի բանն եղել էր Հովակիմա ապաստավորությամբ, և Տեր Գաբրիելն քանիցս պատմել էր Ավետիքին: Վասնորո, երբ Կարապետ վարդապետի հարցման վերա Ավետիք ասաց՝

— Գալազանն որ չարժեն, դող չունեն կխռնատին, — Հովակիմ բարձրաձայն ծիծաղեցավ:

Տեր Գաբրիելն ասաց.

— Հայր սուրբ, թե խռովարար և չփոթարկու չէիր, ես Աբոյեվ տեսել էի և Աբոյեվ թարգմանել էի, ի՞նչ պատճառով դու փոխել տվիր

Հովակիմին երկու անգամ, հրամայելով որ Աբոյեվի տեղ Աբովյան դնեն: Եթե Աբոյեվն սխալ էր, պակասությունն իմս էր և հանցանաց պատասխանատուն ես էի. քեզ ի՞նչ փույթ էր, որ այն ողորմելին մինչև ի մահ զիս յուր թշնամի համարեցավ: Ես ասացի, թե եթե Աբոյեվն անշուշտ պիտի Աբովյան գրվի, ես չուզեմ, որ իմ հոդվածս տպվի, դու դարձյալ քո կամապաշտությունն կատարեցիր. այժմ ի՞նչ հաշտություն պիտի մեր մեջ տարրացնես... և այլն»[33]*:*

Պատկանյանն, անտարակույս, շատ բան խառնում ու շփոթում է՝ գուցե և թաքցնելու համար Աբովյանի հանդեպ իր գործած անմարդկային արարքը և նրա դառնանալու առիթը համարում այդ չնչին բանը, ո՞վ գիտե: Բայց Աբովյանը մանրախնդիր անձ չէր և ո՛չ էլ այնքան միամիտ, որ չհասկանար, թե ինչ նպատակ էր հետապնդում «Լեառն Արարատ և տապան Նոյի» հոդվածը: Ջմռռանանք ասել, որ 1846 — 1847 թթ. ընթացքում, «Կովկասի» էջերում, առհասարակ չի՛ տպագրվել (կամ տակավին չի հայտնաբերվել) Աբովյանին առնչվող մեկ այլ հոդված, ինչպես և նրա ազգանունը 1847 թ. 23-րդ համարից բացի ուրիշ ո՛չ մի տեղ չի՛ պատահում:

6

Որովհետև անդրադարձանք Աբովյանի հանդեպ հայ մամուլի բռնած թշնամական դիրքին, ավելացնենք նաև, որ շատ ուշ, 1858 թվականի սկզբներից միայն[34]*, փոխվեց այս անարդար կարգը, խախտվեց հանցավոր լռությունը, և մարդիկ զգալով, թե ինչ անդառնալի և ծանր կորուստ են ունեցել, սկսեցին վերհիշել Աբովյանի*

---

33 *Գևթ, Գ. Պատկանյանի հիշատակարան, էջ 295: Մնջրևրված հատվածում հիշված անձնավորություններից Ավետիքը (Տեր-Մկրտչյան — Պ.Հ.) նախիջևանցի մնծահարուստ էր, տեղի գավառական դպրոցի պատվավոր տնօրէն և նյութապես օգնում էր Տեր Գաբրիելին, մինչ սա հրատարակում էր «Արարատ» շաբաթաթերթը, իսկ Հովակիմը նրևանցի էր, տպարանական գործին ծանոթ, բայց դիմաստովերը պղտոր անձնավորություն: Զրույցը Գ. Պատկանյանի և Կ. Շահնազարյանցի միջև տեղի է ունեցել մոտավորապես 1850 թ. (տե՛ս նույն տեղը, էջ 300 և 312): Հովակիմի մասին նաև տե՛ս* **Աղ. Երիցյանց**, *Պատմություն... Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Տիֆլիս, 1898, էջ 219:*

34 *Ուղում ենք ասել «Վերք Հայաստանի» վնպի հայտնությունից, իսկ ապա՝ լույս աշխարհ գալուց հետո միայն: Գրաքննությունը «Վերքի» տպագրությունը թույլատրել է 1857 թ. օգոստոսի 16-ին, վաճառքի է հանվել 1858 թ. օգոստոսի սկզբին (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1858, օգոստոսի 2, № 31, էջ 248): Հրատարակության պատրաստողն ու տարածողը Հովսեփ Գաբրիելի Փոնդոյանցն է:*

կյանքի անցքերը, լուսս աշխարհ հանել նրա՝ իրենց մատչելի գրական նշխարները, առաջին հերթին՝ «Վերք Հայաստանի» վեպը, հետո նաև՝ նրա բանաստեղծական ժառանգության չահեկան էջերը, գնահատանքի անկեղծ խոսք ասել: «Մեղու Հայաստանին» ու «Կռունկ հայոց աշխարհին» էին այդ առումով ավելի չանք թափողները, հետո՝ «Արևմուտքը» և «Հյուսիսափայլը», ի վերջո՝ «Ճռաքաղը», տարբեր ուղղության պարբերականներ, հասարակական տարբեր խմբակցությունների ձայնափողեր:

Իսկ մինչ այդ՝ Աբովյանին նորից մեծարում ու գնահատում էին օտարները (Մ. Վագներ, Ա. Հաքստհաուզեն, Ֆ. Բոդենշտեդ, Կ. Կոխ, Ա. Մուրավյով և ուրիշներ), իսկ յուրայինները՝ հազիվ-հազ հիշում:

1848 — 58 թթ. ժամանակամիջոցում, մինչև «Վերք Հայաստանի» վեպի լույս աշխարհ գալը, միայն երկու պատառիկ է տպագրվել Աբովյանի երկերից:

Առաջինը՝ 1850 թ. մարտի 31-ին, «Արշալույս Արարատյանի» էջերում (№ 360), «Աշխարհիկ բարբառ Երևանցի Հայոց» խորագրով և «Գրեալ ի պատուական Խաչատուր վարժապետէ Աբովեան» ստորագրությամբ: Այս երկը, եթե չհաշվենք արդեն նշված «Նախաշավիղը», Աբովյանի առաջին տպագիր և ստորագրված գրվածքն է մեր իրականության մեջ, այն էլ հեղինակի ողբերգական վախճանից հետո միայն (ինչպես երևում է՝ «Արշալույս Արարատյանի» հրատարակչին դեռ հասած չի եղել Աբովյանի անհայտ կորստյան լուրը, այլապես որևէ ձևով կծանուցեր):

Երկրորդ տպագիր երկը մի չափածո հատված է, ընդամենը 32 տող՝ քաղված «Վերք Հայաստանի» վեպի ձեռագիր օրինակից կամ արտագրությունից և տեղավորված՝ Գամառ Հաթիսպայի «Ազգային երգարանում» (Մ. Պետերբուրգ, 1856/1857 թ., էջ 157 — 158)[35], «Աղասիի երգը» խորագրի տակ, սակայն առանց հեղինակի անվան հիշատակության, որովհետև Երգարաններում ընդունված կարգ էր այդ. Աբովյանի անունն ու այս խաղը այնքան էին ժողովրդականացած ու տարածված, որ ծանոթության կարիք չէր զգացվում: Միևնույն հատվածը, դարձյալ անանուն, արտատպվել է նաև Պոլսի «Մեղվում» (1857, հուլիսի 15, թիվ 21):

---

35 «Ազգային երգարանի» չապրիկի վրա գրոշմված է՝ 1857, անվանաթերթի վրա՝ 1856. Հառաջաբանի տակ՝ 25 հունիսի 1856, իսկ գրաքննիչը թույլատրել է 1856 թ. հուլիսի 18-ին:

Ուրեմն՝ Աբովյանի բուն ստորագրությամբ, նրա անհետացմանը հաջորդած առաջին տասը տարիներին, ըստ էության, լույս է տեսել միայն մի գրվածք...

Նույն տանտամյակում հայ գրողներն ու հրապարակախոսները երկու անգամ իրենց տպագիր խոսքի մեջ անդրադարձել են Աբովյանին. մեկը՝ 1850 թ. սեպտեմբերի 1-ին, «Արարատ» շաբաթաթերթի էջերում (№ 1), միայն ո՛չ թե հարգանքի տուրք մատուցելու համար նրա օրհնյալ հիշատակին, այլ հնօրյա, արդեն մոռացված բամբասանքը վերահաղորդելու և ազգային անապարծությանը հագուրդ տալու դիտավորությամբ: Ցավոք, այդպես է վարվել արևելահայ աշխարհաբար առաջին պարբերականի՝ «Արարատի» խմբագիր ու հոդվածագիր Գ. Պատկանյանը, որն աչք փակելով հայ և օտար բնախույզների անօրինակ սխրանքների հանդեպ՝ սոփեստաբանում էր, թե հայոց Մասիսն, այնուամենայնիվ, անելանելի է մնացել, թեպետև հին օրերից սկսած՝ չատերն են աշխատել. «Նորումս, — առանց խղճի խայթի գրում էր նա, — Դերպատի համալսարանի անդամ, գիտնական Պարրոտ, հայազգի Աբոյանին հետ, նույն փորձն կամեցավ փորձել, բայց եղև անպտուղ»:

Այլ է միանգամայն երկրորդ խոսքի կամ անդրադարձման ազդակն ու ոգին. այն պտնում ենք «Առաջին հոդվածն կերակուր հայազգի երեխաների համար» դասագրքում (էջ 42), որի աշխատասիրողը Աբովյանի պատանեկան տարիների ընկերն ու բարեկամը՝ Ստեփանոս Նազարյանցն էր (Մոսկվա, 1853)[36]: Դա իսկապես որ ազնիվ խոսք էր և եղակի՝ արևելահայ իրականության մեջ, մինչև 1858 թվականը: Հիշյալ դասագրքի հոդվածներից մեկում, անդրադառնալով մերձբալթյան համալսարանական Դորպատ քաղաքին, Նազարյանցը սրտի անհուն կսկիծով ավելացնում էր. «Այս քաղաքում էր իր կրթությունը ստացել Խաչատուր Աբովյան՝ երևելի Հայկազունը, որ, ափսո՜ս, չուտով թառամեցավ յուր ազգի համար»:

Նազարյանցն իր խոսքը երկրորդից հինգ տարի անց, «Հյուսիսափայլում» (1858, № 2), Միքայել Նալբանդյանի՝ Գևորգ Գեղամյանի հիշատակին նվիրված հուշ-հոդվածի խմբագրական ծանոթագրություններում:

Նազարյանցի, Նալբանդյանի, ապա նաև՝ Ստեփան Ոսկանի անդրադարձումներից («Արևմուտք», 1859, № 6, 7 և 10) ու բնութագրականներից հետո արդեն չատերն էին դրում ու խոսում Աբովյանի մասին:

---

36 *Գրաքննիչը տպագրության է թույլատրել 1852 թ. նոյեմբերի 6-ին:*

Մի անբնական իրողության վրա ևս հարկ է ուշադրություն հրավիրել. 40 — 50-ական թթ. գրված ու հրատարակված արևելահայ ճեռնարկներում և մատենագրական տեսություններում, անգամ Աբովյանի կենդանության օրոք, երբ հարկ էր լինում նոր չըջանի հայ քերթողներին ու մատենագիրներին թվարկել ու կամ Արարատյան վերելքին անդրադառնալ, որպես կանոն, Աբովյանի անունը կա՛մ մոռանում էին, կա՛մ էլ թողնում «և այլն»-ի մեջ: Այդպես են վարվել «Մեղու Հայաստանի» պարբերականի խմբագիր Ստեփանոս քահանա Մանդինյանցը[37], *հին հայկաբանության ակնառու դեմքեր ու մանկավարժներ Մ. Մսերյանցը և Հովսեփ Օրբելին՝ իրենց վաղ գրած, բայց միայն 70-ական թթ. հրատարակած գրքերի մատենագիտական հատվածներում*[38]: *Գուցե նրանք աչխարհաբար քերթուԹյունը մատենագրություն չէլի՞ն համարում... Վերջապես՝ այդպես են վարվել նաև Հովհաննես Շահխաթունյանցն ու Մնսրոսլ Թաղիադյանցը՝ Արարատ լեռը նկարագրելիս:*

Շահխաթունյանցն ուղղամիտ մատենադիր էր, բայց և էջմիածնի վանքի երկարամյա սպասավորներից՝ ազգային նվիրական արժեքների ու լուսավորչական դավանանքի երդվյալ պաշտպանը: Գերի մնալով ավանդական տեսակետներին, բայց և նկրքուստ անկարող լինելով աչքը փակել ճշմարտության հանդեպ՝ նա ջանացել է այս երկուսը հաչտեցնել իրար հետ և ներկայանալ որպես իրողության անկանխակալ արժանագրող: Մինչդեռ ասելով մի բան և մոռանալով մեկ ուրիշը՝ նա, ըստ էության, բացառում էր Արարատի բարձրագույն կատարին հասնելու հնարավորությունն ընդհանրապես, իսկ Պալրոտի ճեռնարկումը գնահատում միայն երկրորդ վերելքի արդյունքներով և դիտակցորեն (կամ հարկադրաբար) անտեսում (թե՞ մոռանում) վերջին, հաղթական վերելքը և նրա գլխավոր մասնակիցներից մեկի՝ հաչատուր Աբովյանի անունը:

Ահա՛ թե իր տեղագրական-հնախոսական մեծարժեք աչխատության մեջ նա ինչ է արժանագրել. «Սրա (այսինքն՝ Արարատի — Պ. Հ.) ամենաբարձր գագաթին, պատռվածքի ծայրից ավելի վեր, կան

---

37 *Տե՛ս* Ս. Մանդինյանց, *Քանի մի խոսք հայոց վարդապետաց աչխատանքի վերա, տպագրված՝ «Մեղու Հայաստանի», 1859, № № 22–27:* XIX *դարի հայ մատենագիրների հանդամանալից ցուցակը տե՛ս № 26 (Հունիսի 27), էջ 208: «Վարդապետաց» բառը թո՛ղ տարակուսանքի տեղիք չտա: Ճանկում հիչատակված են նաև՛ աչխարհական հեղինակներ:*

38 *Տե՛ս* Հ. Օրբելի, *Դասատետր նկեղեցական պատմության, Տփղիս, 1871, էջ 216:* — Մ. Մսերյանց, *Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի ի Սիմէօնէ մինչև ցՅովհաննէս Ը. Մոսկուա, 1876, էջ 256:*

ձյունաթաղ երեք բլրակներ. հյուսիսայինը ցածրիկ է, իսկ արևելյանն ու արևմտյանը սրածայր են և բոլորովին անմատչելի: Սրանք էին, որ չկարողացան բարձրանալ 1829 թ. սեպտեմբեր ամսին պարոն Պարրոտն ու իր ընկերները (իմա՛ Խ. Աբովյանը — Պ. Հ.), և այդ բլրակների ստորոտում, այն տեղում, մինչև ուր կարողացան հասնել, կանգնեցրին փայտե մի փոքրիկ խաչ, որի վրա ամրացված էր կապարյա տախտակ՝ հետևյալ արձանագրությամբ. «Սոյն սա եղև ապաստարան ամենայն քրիստոնէից...» և այլն[39]:

Սկզբնաղբյուրներին ծանոթ անձանց համար դժվար չէ նկատել, որ հնախոսը չփոթել է երկրորդ և երրորդ վերելքները, նրանց ընթացքում կանգնեցված՝ տարբեր մեծությամբ խաչերը և այլն:

Նույն իրողությունը, հինգ տարի անց, նկարագրել է նաև Թաղիադյանցը, միայն թե անցքերն ու անձերը ավելի աղավաղած, Աբովյանի անունը կրկին մոռացված է, իսկ որպես վստահելի աղբյուր, որքան էլ տարօրինակ է, մատնանշվում է էջմիածնի՝ իրեն միայն նախածանոթ ինչ-որ միաբանի պատմածը.

«Այլ յանցանել ժամանակաց յանդգնադոյն ևս գտաւ կայսերութիւն Ռուսաց, — ասէր մի ոմն հարազատից Սրբոյ Աթոռոյն, — որ առաքեաց ի Դուբլինայ (sic! Դորպատայ — Պ. Հ.) արս անհաւատս և լուտերականս, որոց ո՛չ հաւատալով Սուրբ Գրոց, իժօրէն պատուել կամեցան զորովայն Մօր Համօրէն մարդկան. և ժպրհեցան ելանել ի կատար լերինն մեծի: Ա՛յ թէ ելին, հա՛. ո՛չ թէ ի կատար անդր, այլ ի կուզ նորա: Տեսանե՞ս, եղբա՛յր, զցցունն արտաքս պալարացեալ յուս լերինն. անդր ելեալ՝ տնկեցին գխաչ և առաստպելաբանեցին, թէ այն՝ բարձրաբերձ և երկնանման լեառն Մասիս, էր միայն 9000 ոտն բարձր ի ծովէ: Կարելի՞ արդեօք»[40]:

Սրանով իսկ Թաղիադյանցն իր բացասական վերաբերմունքն էր արտահայտում Աբովյանի սխրանքի հանդեպ, որովհետև օտար «իժերի» առաջնորդը նա էր:

Ճշմարտախոս լինելու համար ավելացնենք, որ, հակառակ վերոհիշյալ տողերի վարագուրված տոնին, երկու-երեք տարի անց, հայ ընթերցողը հնարավորություն է ստանում հայալեզու հրատարակություններում երկրորդ անգամ հանդիպելու Աբովյանի անվանը՝ շնորհիվ Մորից Վադների «Ուղևորություն դեպի Արարատ և Հայկական

---

39 Յ. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ պատառացն Արարատայ*, հատ. Բ, Վաղարշապատ, 1842, էջ 6, § 336:

40 Մ. Թաղիադեանց, *Ճանապարհորդութիւն... ի Հայս*, հատ. I, Կալկաթա, 1847, էջ 164:

բարձրավանդակ» աշխատությյան հայերեն հատվածական ու համառոտ թարգմանությունների, առաջինը՝ բողոքական քարոզիչ Բլեքվիլդի ձեռքով, Զմյուռնիայի «Շեմարան» հանդեսի 1849 թ. էջերում[41], երկրորդը՝ Վիեննայի Մխիթարյան հայր Փիլիպպոս Ճամճյանի ձեռքով և առանձին գրքով, 1851 թվականին[42]: Իսկ Վաղների գրքում Աբովյանը հիշվում է բազում անգամներ և միշտ մեծարանքի խոսքերով՝ հիացմունքով ու չնորհակալությամբ:

Վաղների գիրքը, սակայն, սրերով ընդունեցին հայ պահպանողականները, անգամ լուսավորիչ Մեսրոպ Թաղիադյանցը, որ 50-ական թվականներին որոշակի նահանջ էր կատարել իր երբեմնի լուսավորական աշխարհայեցողությունից՝ հարելով ազգային ավանդական սրբությունների և լուսավորչական կրոնի անվերապահ պաշտպաններին ու թմբկահարողներին, Բլեքվիլդի թարգմանության առիթով իր խմբագրած «Ազգասեր Արարատյանի» 1850 թ. նոյեմբերի 30-ի 61-րդ համարում (էջ 481 — 486) հանդես է գալիս հատուկ հոդվածով և աչառու քննադատության ենթարկում Վաղների գրվածքը: Վերջինից արված քաղվածքներում, բնականաբար, հանդիպում է նաև Աբովյանի անունը, բայց դրանց վրայով Թաղիադյանցը սահուն է այնպես, կարծես Աբովյանն իրեն բոլորովին անծանոթ մեկը լիներ: Նախանձի՞, դաղափարական թշնամանքի՞, անձնական հակակրանքի՞, ինչին ուզում եք՝ վերագրեցեք, Թաղիադյանցը, սակայն, իր հրապարակախոսական երկարատև գործունեության ընթացքում պլանում է դոնի մի անգամ բարի խոսք ասել Աբովյանի մասին, այնինչ վերջինս, իրեն հատուկ աղնվությամբ ու ոգևորությամբ, ո՛չ միայն պատշաճն է համարել Թաղիադյանցին և տակավին 1832 թ. մարտի 2-ին Հովհաննես Կարբեցուն ուղղված նամակում մատնացույց արել նրան, որպես ազգի լուսավորությանը նվիրված անշահախնդիր անձնավորության, որը կարիք ունի խրախուսանքի և աջակցության, այլև խնամքով

---

41 «Շեմարանի» համապատասխան համարը մեզ մատչելի չի եղել, ուստի և գրում ենք Թաղիադյանցի բանավեճից ելնելով:

42 Փ. Ճամճյանի թարգմանությունն սկզբնապես տպագրվել է Վիեննայի Մխիթարյանների «Եվրոպա» պաշտոնաթերթի 1850 թ. 6–7. 9–12. 14. 16. 18. 20. 22. 27. 29. 31. 33. 36. 41. 42. 44. 46 և 49 համարներում, «Ուսումնականք» ընդհանուր բաժնի «Ազգային» ենթաբաժնում. «Հայաստանի վրա հետաքրքրական լուրեր» խմբագրական խորագրի տակ: Տեզ չահելու նպատակով թերևս, իամ գրաքննական նկատառումներով՝ բնագրի մեջ կատարված են բազմաթիվ կրճատումներ, իսկ երբեմն էլ ամբողջ էջեր ու պարբերություններ վերապատմված են խիստ համառոտ:

պահել նրա մի քանի բանաստեղծությունների ինքնագրերը, որոնք իր ձեռքն էին անցել Խաչատուր Բեկ Շահնազարյանցի թոռոններից[43]:

Ներկա մատենագիտական «չեղումն» ավարտելուց առաջ արձանագրենք, վերջապես, որ նոր ժամանակների՝ հայոց քաղաքական և հոգևոր զարգացման պատմության ուսումնական և գիտական շարադրանքներում ևս Աբովյանի անունը շատ ուշ է մուտք գործել, ու նախաձեռնողները դարձյալ արևմտահայ մտավորականներն են: Նրանք են առաջինը հիշատակել ու բնութագրել Աբովյանին որպես «ճշմարիտ հայրենասեր... անձ»: Մեր խոսքը Ստ. Փափազյանի մասին է, որի «Դասագիրք ազգային պատմության» ձեռնարկում, արևմտահայ հայտնի մանկավարժ և իմաստասեր Նիկողայոս Զորայանի բնութագրին զուգահեռ, մատնանշվում է նաև Աբովյանի տեղն ու դերը հայոց հանրային ու մտածական կյանքում. «Ասոր ի կշիռ կուգա Ռուսաստանի Խաչատուր Աբովյան ճշմարիտ հայրենասեր գրագետ անձը»[44]:

Այս արդեն արտահայտությունն է Աբովյանի անձի ու դործի համազգային ճանաչման:

---

43 Տե՛ս Ա № 73: Այդ բանաստեղծությունները մերօրյա թաղիդյանագետները վերագրել են Աբովյանին և տեղավորել վերջինիս երկերի ակադեմիական հրատարակության մեջ (տե՛ս հատ. I, էջ 249, 250, 311, «Ուրախ լե՛ր, ցնծա՛, մայր ուսումնարան...», «Տաղ ուրախութեան» և «Ոսկեղեն պսակ դլխոյ մերոյ թագ...» ոտանավորները):

44 Ստ. Փափազյան, Դասագիրք ազգային պատմության, Կ. Պոլիս, 1862, էջ 201 (նաև՝ Դ տիպ, 1866, էջ 239):

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՁՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ

Հետագա չարագրանքի հիմքում ընկած են անցած տարիների մեր հեռակա զրույցներն ու դասախոսությունները և դրասերներին ու լրագրողներին տված պատասխանները: Հետևաբար, եթե ինչ-ինչ կրկնություններ նկատվեն, խնդրում ենք ընթերցողներին ներողամտություն հանդես բերել: Մենք դեղեցիկ լեզենդներով չենք դայթակղվել, մենք հանրագումարի ենք բերել այն արդյունքները, որոնց հանգել ենք սկզբնաղբյուրների՝ հնօրյա վստահելի հիշողությունների և վավերագրերի տևական ուսումնասիրությունից:

***

Հաճախ են հարցնում. «Ինչպիսի՞ մարդ էր Աբովյանը. ի՞նչ խառնվածքի, ի՞նչ բնավորության տեր. ի՞նչ էր սիրում և ի՞նչնատում, ինչի՞ց խորշում...»:

Խորամուխ լինելով նրա օրագրերի ու նամակների տողամիջերքին հանդիպող ինքնավերլուծման վորձերի և հնօրյա հուշագրություններում առկա տվյալների մեջ՝ դժվար չէ նկատել, որ դեղչկական միջավայրից սերած այս հանճարեղ քերթողն ու քաղաքացին անսովոր հոգու տեր մարդ էր, անկրկնելի ու հրաշալի, նաև՝ առեղծվածային: Խիստ զգայուն էր, դյուրաբորբոք ու արագաշարժ, ու նույնքան էլ կատածամիտ, և այդ պատճառով նրա ապրած մտատանջության պահերն ավելի շատ էին, քան ուրախության և երանության:

Ճշմարտության ու արդարության առանձնահատուկ պաշտամունք ուներ, սիրում էր հաճախ ասել. «Եղիր արդար և ո՛չ օքից մի վախենար»:

Համոզված էր, որ կանանց հետ մտերմությունը մարդկային հոգուն դերագույն հաճույք պատճառելուց բացի, նաև աստիճանաբար հղկում է նրա բիրտ կողմերը, հոգեկես ու բարոյապես ազնվացնում: Պատանեկան տարիներից մտածում էր իր ստեղծագործությունների միջոցով փառաբանել «Երևանու ալվան աղջկերանց վայելչությունը, ազնվությունը, առաքինությունը, սիրունությունը...», թեկուզ և ճակատագիրը զրկել էր նրան աչխարհիկ վայելչություններից...

Մրգի գերի էր, չատ էր սիրում նաև քաղցր, բայց և՝ սակավապետ, սոխ ու հացով ճաշն ավարտելը սովորական բան ու կենցաղ էր նրա համար: Ավելին, Արարատյան վերելքի օրերին, լեռան բարձունքներում, հենց ձյան սահմանի մոտ գիշերելիս, երբ ուրիշներն ախորժակով ոչնչացնում էին աննդի պաշարը, Աբովյանը եռացնում է մի թաս ջուր, մեջը պղպեղ գցում և ինչպես թեյ ըմպում՝ դրանով կազդուրելով մարմինը: Քեֆի ու հարսանիքի ժամանակ մեկ բաժակից ավել գինի չէր խմում, իսկ երբ ստիպում էին, վեր էր կենում, թողնում, հեռանում: Դրան հակառակ՝ չատ էր ծխում, սենյակը ծխով լցնում, երբ հուզված էր լինում կամ թղթին էր հանձնում ստեղծագործական ծրագրերը...

Գրում ու հորինում էր գլխավորապես գիշերները: Տանը մի մեծ բաժակ կար. դրանով լիքը սուրճ էր պատրաստում (կամ պատրաստել տալիս), կում-կում խմում ու աշխատում: Երբ բաժակը դատարկվում էր, և վերջին կումն էր խմում, լույսն սկսում էր բացվել: Եթե եղանակը թույլ էր տալիս՝ հենց վաղ առավոտյան լողանում էր գետում. Դորպատում ուսանելու ժամանակ՝ դանդաղասահ էմբախ գետում, Թիֆլիսում ապրելու տարիներին՝ Քուռ գետում, իսկ Երևան փոխադրվելուց հետո՝ Հրազդանի կապուտակ ջրերում, ու անմիջապես էլ դիմելով դպրոց՝ սկսում էր զբաղվել իր օրվա գործերով կամ դասերով, մինչև երեկո անցկացնելով կամ աշխատասենյակում՝ դրասեղանի առջև, կամ դասասենյակում՝ ոտքի վրա (դասավանդելիս սովորություն չուներ նստելու): Ժամանակի աննպատակ կորուստն ու պարապությունը նրա համար խորշելի էին...

Ատում էր կեղծիքն ու սուտը, բռնությունն ու հարստահարությունը, անաչխատ վաստակը. «Նհախ տեղը՝ դատած մալը ուտիլը ու դարատակ քնիլը հարամ ա: Մարդ պետք է ինքն էլ աչխատի, որ կերածը հալալ ըլի», — սովորեցնում էր նա:

Ծանր էր ապրում մերձավորի թշվառությունը, երբ չէր կարողանում որևէ բանով թեթևացնել նրա վիճակը, ալեկոծվում էր սիրտը, և կորչում հանգիստը: «Էսօր էլ որ միտք եմ անում, թե ես հացս ուտելիս, տաք տեղը նստելիս՝ հազարավոր հայ ո՛չ հաց ունին, որ ուտեն, ո՛չ շոր ունին, որ տաքանան, սիրտս պատռում ա, օրս խավարում...», — անկեղծորեն խոստովանում էր նա:

Ամբողջ ուշքն ու միտքը կենտրոնացրել էր հայրենի պատանեկության դաստիարակության վրա, որպեսզի, բացի անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելուց, նախապատրաստեր նրանց իրենց ապագա վեհ կոչմանը՝ «իբրև հասարակության օգտավետ անդամ, իբրև միայն ու միայն իր մերձավորների բարիքի համար ստեղծված մարդ»: Ու

Հաճախ էլ խորին ցավով ասում էր. «Ինչո՞ւ, ա՜խ, ինչո՞ւ բախտը զրկել է ինձ կարողությունից՝ սեփական միջոցներովս և՛ պահելու, և՛ դաստիարակելու ո՛չ թե քսան, այլ հարյուր և ավելի մանուկներ՝ ամենաչքավոր դասից, որպեսզի սերմանեի նրանցից յուրաքանչյուրի հոգու մեջ մարդկային ամենասրբազան պարտականությունները...»:

Ստեղծագործական ձախողանքներն ավելի հնչեղ էր տանում, քան մանկավարժական ու կրթական ոլորտներում կրած անհաջողությունները. «Իր մեջ իմ բարոյական կյանքն ամփոփող այս զբաղմունքն է միայն, որ պահպանում է նաև իմ ֆիզիկական դոյությունը. դրա ոչնչացմամբ՝ կյանքն արդեն ինձ համար կյանք չի լինի, այլ լոկ բեռ...», — կարդում ենք Աբովյանի նամակներից մեկում, որն ուղղված է Անդրկովկասյան դպրոցների վերատեսչին:

Դեռ վաղ տարիներից՝ Աբովյանն իր կյանքի վեհ նպատակն էր դարձրել ազնվորեն հայրենիքին ու հայրենի ժողովրդին ծառայելը. «Ես չունեմ ուրիշ մեկ այլ նպատակ, քան Հայրենիքիս համար մեռնել և նվազ չունենս, որպես խոսնկ, ծխել իմ նախահայրերի աճյունների առաջ», — համարյա միշտ կրկնում էր նա, իսկ մի առիթով էլ սեղմ ու տարողունակ խոսքերով բանաձևել է իր հավատո հանդանակը, որին երբեք չդավաճանեց.

«Ապրել և մեռնել հայրենիքի համար...»:

Որոնումների ժամանակ համառ էր ու անդրկում, պատրաստ՝ կյանքի գնով իրականություն դարձնելու իր վեհ նպատակները: Բայց երբ կանգնում էր վիակուղու առջև, հուսահատությունից մազերն էր պոկում և արտասվում... ու այսպես՝ որքան խորն էր ճանաչում աշխարհն ու մարդկանց, բաց աչքով տեսնում դավ ու ձախողանք, այնքան հաճախ էր նրան տանջում հանցավորձությամբ կյանքին վերջ տալու միտքը. «Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ: Ջէի իմանում, թե սրա չարեն ի՞նչ կըլի...», — խոստովանում է Աբովյանը, իսկ ուրիշ անգամներ էլ անկեղծորեն ասում, թե մտադրվել էր ջուրն ընկնել, որպեսզի պրծներ էս դառն աշխարհքից... Այս միևնույն միտքը հալածում էր նաև Աբովյանի գաղափարատիպ հերոսներին և, առաջին հերթին՝ Աղասուն.

Գլորիմ կատաղի գետի փրփրի մոտն,
Հոգոց քաշելով ալարգիմ ես իմ ոտն.
Կամիմ, գերեզմանս որ էս ջուրն ըլի,
Էս սառը պատանն ինձ հողը տանի...

մորմոքում է նա իր հայտնի «Խաղում»:

Աբովյանի մասին շատ վաղուց զանազան զրույցներ են պատմում ժողովրդի մեջ, ու բոլորն էլ գայթակղիչ են և զարմանալի: Օրինակ՝ ըստ անցյալ դարի կեսերին գրի առնված մի այդպիսի զրույցի, «Խաչատուր Աբովյանը երբ Դորպատի գիմնազիայում ուսում էր առնում, ազատ ժամերը գնում էր հացարարի մոտ՝ խմորը ունցում և հաց թխում: Երբ որ ուսուցիչներից մինը զարմացմամբ հարցրուց նորան, թե ինչո՞ւ համար է այդ բանով պարապում նա, Աբովյանը ազգասիրական հպարտությամբ պատասխանեց, թե «Ես իմ հայրենյացս համար հացագործության կատարյալ կերպն եմ սովորում, որ հայրենիքս վերադառնալուց՝ ազգակիցներիս էլ ցույց տամ»:

Հաճախ էր Աբովյանը դառնանում, երբ լսում էր օտարներից կշտամբանքի խոսքեր հայերի տգիտության և չհամոզության մասին, և ցրելու համար նման թյուր կարծիքները՝ պատասխանում էր. «Այո՛, ես էլ եմ չհամոզ, սակայն սուրբ գործի համար...»: Նաև բացատրում, որ ազգերի բնավորությունը ձևավորվում է նրանց դարավոր, պատմական կյանքի ընթացքում, ներքին ու արտաքին բազմազան գործոնների ազդեցության տակ: Օտարի լուծը ո՛չ միայն բաժան-բաժան էր դարձրել հայ հայրենիքն ու հայությանը, այլև խեղել նրա ազգային բնավորությունը: Աբովյանի նվիրական բաղձանքն ու ամենօրյա հոգսն էր՝ վերածնել Հայաստանի մշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքը, ազնվացնել հայի հոգևոր աշխարհը լուսավորության ամենահաղթ ուժով, որպեսզի հայը կարճ ժամանակամիջոցում կարողանար վերագտնել դարերի կորուստը և քայլել ու արարել ժամանակի քաղաքակիրթ ազգերի հետ կողք-կողքի ու նրանց հավասար. «Ի լուսաւորութենէ կանգնի ազգ ինչ, ի լուսաւորութենէ ելանեն ամենայն բարեբախտութիւնք, լուսաւորութեամբ հաստատի... սէր առ Հայրենիս իւր, սէր առ բարեկամս իւր... պաշտպանութիւն Հայրենեաց...», — ահա՛ նրա աներեր համոզումը:

Անձնական կյանքում Աբովյանը երջանիկ չէր. չարունակ ձգտում էր իսկական սիրո ու բախտավորության, որոնք, սակայն, ընդմիշտ լքել էին նրան: Ընտանեկան համակեցության նախանձելի օրինակ դառնալու, ինչո՞ւ չէ, նաև՝ սովորեցնելու համար, թե ինչ զորավոր ուժ է ընտանեկան դաշնությունը, ամուսնացավ օտարազգի օրիորդի հետ, բայց շատ չուտով հարգանքից բացի մյուս զգացումները թոչնեցին... Արգեն 1844-ին Աբովյանը մտածում էր կնոջն ու երեխաներին թողնել և վերստին աբեղայական սքեմ հագնել, որովհետև սովորական վիճակով անհնար էր չոչափելի օգուտ տալ հայրենիքին ու ազգին: Տգետ ու անուս ազգակիցները խորշում էին նրանից, ինչպես

հերձվածողից... Սա ահավոր ողբերգություն էր, ծանր, սրտակեղեք ու անլուծելի դրամա: Ինչպես ինքն էր ասում.

«Ի՞նչ կրակ կարա անսեր սիրտը տաքացնել, ի՞նչ ջուր կարա սիրով վառված հոգին դինջացնել, հանգցնել: Սիրով վիրավորված սիրտը ո՛չ հողից կվախենա, ո՛չ գողից. ո՛չ ահ գիտե, ո՛չ վախ. ո՛չ սրից երեսը կդարձնի, ո՛չ ջրից: Քանի չատ ա սերը, էնքան քաղցր ա տանջանքը: Սերին ի՞նչ կդիմանա, որ մահից վախենա...»:

Աբովյանի մասին նաև չատ գրքեր են գրվել: Դեռ երիտասարդական տարիներից նա հռչակվել է Ռուսաստանում և Գերմանիայում կրթության ու հոգևոր կատարելագործման իր արտակարգ ձգտումների, եռանդի, իր խանդավառ ազգասիրության, Հայաստանի բնության ու պատմության հուշարձանների խոր ու դերազանց իմացության համար: Նրա հոդվածներն ու ուսումնասիրությունները թարգմանվում ու տպագրվում էին ռուսական ու գերմանական պարբերականներում, նրա խորհուրդներից օգտվելով՝ Հայկական լեռնաշխարհում գիտահետազոտական աշխատանքներ էին կատարում ռուսական և եվրոպական արշավախմբերը և առանձին գիտնական անհատներ՝ Ֆ. Պարրոտից սկսած մինչև Հ. Աբիխ և Ա. Մուրավյով: Բայց հայկական լայն շրջաններում Աբովյանի մեծությունն ու կորստյան անբուժելի ցավն ղգացին նրա ողբերգական կորստից չատ տարիներ հետո միայն, ղգացին ու սկսեցին ապարդյուն որոնումները...

Աբովյանի կյանքի չատ օրեր, երբեմն նաև՝ ժամեր, ծանոթ են մեզ, այն էլ՝ ամենայն մանրամասնությամբ: Բայց այդ բոլորով հանդերձ՝ նրա տառապալից ապրումների ու ստեղծագործական խիզախումների չատ էջեր տակավին մնում են անլուծելի ու առեղծվածային: Ամեն բան, իհարկե, դժվար է պարզել մի հեռակա զրույցի ընթացքում, առեղծվածներից ամեն մեկին պատշաճ չափով անդրադառնալ և այդ առթիվ մեզ պաշարած մտքերը կիսել ունկնդիրների հետ, ուստի հաջորդ խոսքերը կնվիրենք բացառապես նրա մահվան առեղծվածին և վերջինիս վրա որոշակի լույս սփռող արժանահավատ վավերագրերին՝ իրենց իրական բովանդակությամբ և չաղավաղված խոսքերով, առանց նախապատվություն տալով մեկին կամ մյուսին, քնավ հանդես չբերելով չահախնդրություն ու կիրք:

1848 թ. ապրիլի 1 լույս 2-ի գիշերը, վաղ առավոտյան, Երևանի գավառական դպրոցի տեսուչ Աբովյանը դուրս է գալիս տանից և այլևս չի վերադառնում: Ե՞րբ էր նա թողել իր ննջարանը և ո՞ւր էր գնացել՝ ո՛չ ոք չէ՛ր տեսել ու չէ՛ր իմացել: Ինքն էլ, նախապես, տաննեղներին ոչինչ չէ՛ր ասել: Առհասարակ, Աբովյանը սովորություն ուներ այս նույն ձևով, առանց որևէ մեկին ասելու, մնկնել որևէ տեղ

և, ժամանակ անց, գործերն ավարտելուց հետո, վերադառնալ: Այդ պատճառով էլ նրա կինը և՛ առաջներում, և՛ այդ օրը՝ ապրիլի 1 — 2-ին, ուշադրություն չի դարձրել, թե ամուսինը ո՞րտեղ է կամ ո՞ւր է մեկնում: Անհանգստությունն ու որոնումներն սկսվում են հաջորդ առավոտյան, ապրիլի 3-ին, երբ Աբովյանը չի վերադառնում, և առաջին անհանգստացողը ուսուցիչ Թուրքեստանովն էր, որին Տփղիսից ուղարկել էին դպրոցական գումարներն ու պետական գույքը Աբովյանից ընդունելու և ժամանակավորապես նրան փոխարինելու, որովհետև Աբովյանը փութով պետք է մեկներ Տփղիս, Ներսիսյան դպրոցի տեսչության պաշտոնն ստանձնելու, որը նրան վստահել էր կաթողիկոս Ներսես Աշտարակեցին:

Գավառական դպրոցի գույքի ու գործերի հանձնումը Աբովյանն սկսել էր մարտի 30-ից: Հաջորդ երեք օրը, ցերեկները, բավականաչափ դանդաղ ու անտրամադիր, կարողացել էր հանձնել միայն դպրոցական գործերը, իսկ գիշերները տառապում էր անքնությամբ: Ավելին, կնոջն ասել էր, թե փոշմանել է, որ որոշել է փոխել աշխատանքի բնույթը: Ինչպես երևում է, այդչափ շուտ, գոնե ապրիլին, նա չէր ուզում, ավելի ճիշտ՝ գործերը թույլ չէին տալիս Երևանից այլ վայր մեկնելու: Ավելին, եթե հավատանք գերմանացի բանաստեղծ Ց. Բոդենշտեդին, Աբովյանը որոշել էր ընդհանրապես թողնելով ուսուցչական պաշտոնն ու պետական ծառայությունը, քաշվել գյուղ (հարկավ, Քանաքեռ) և, պապերի պես, իր ապրուստը հայթայթել երկրագործությամբ:

Երբ Աբովյանը ապրիլի 3-ին էլ չի վերադառնում, Թուրքեստանովի մեջ կասկած է ծագում, թե նա, միգուցե, յուրացրել է պետական գումարները և ծածուկ փախել ու թաքնվել ինչ-որ տեղ, ուստի անհապաղ գրավոր դիմում ու խնդրում է գավառապետին՝ թույլ տալ ոստիկանապետի մասնակցությամբ բաց անելու դպրոցի գանձարկղը: Ստուգում են: Ամեն ինչ իր տեղում էր:

Այդ դեպքում ի՞նչ էր պատահել Աբովյանի հետ, կամ ի՞նչն էր դրդել նրան հեռանալու... Աբովյանին սկսում են որոնել ազգականները, աշակերտները, բայց ... ապարդյուն: Մի քանի օր էլ չանցած՝ Երևանում, ինչ-որ անհայտ անձինք, սկսում են տարածել իրար հակասող լուրեր, որոնք արձանագրված են 1848 թ. ապրիլի 24-ին, Գևորգ Գեղամյանին ուղարկած նամակում (Երևանից — Թիֆլիս):

1. Իբր Աբովյանի մարմինը տեսել են Զանգուի ափերին, ավերակ Սարվանլար գյուղատեղի մոտերքում, բայց, չգիտես ինչո՞ւ, հրել են ջուրը, և գետը տարել կորցրել է:

2. Իբր նրան տեսել են Ակոռի գյուղի ավերակներում, քարի վրա նստած՝ լաց լինելիս: Գյուղացիք հաց են տարել, չի վերցրել:

3. Երրորդի պատմելով՝ Աբովյանը հասած է եղել մինչև Ղարս: Նրան տեսել են չուկայում, ման գալիս: Ճանաչել են: Մեկ առ մեկ հիշում էին, թե ի՞նչ չորեր էր հագել, որ մոտիկ էր իսկությանը:

4. Մեկն էլ ասել է, թե Աբովյանը հասել է Գյանջա և ծպտված՝ աղքատի չորեր հագած, ման է գալիս:

5. Վերջապես՝ վկայում են նաև, թե, իբր, ապրիլի 1-ի գիշերը, ժամը 12-ին, Պլանի ճամփով (Երևանի այժմյան Պլանի գլուխը, որ համապատասխանում է Աբովյանի պուրակին, Երիտասարդական պալատի մոտերքը), ինչ-որ տեղ է չոտապել:

Կարճ՝ հենց առաջին օրերը մեջտեղ են գալիս երկու վարկած՝ մեկը մյուսին ժխտող. մեկով, իբր, Աբովյանն ինքնասպան է եղել և իրեն նետել վարարած Զանգուն, մյուսով՝ տանից փախել-հեռացել է, աստված գիտե, թե ո՞ւր, որովհետև միաժամանակ նրան տեսնողներ են եղել Անդրկովկասի ու Հին Հայաստանի տարբեր կողմերում ու բնակավայրերում:

Անհայտ հանգամանքներում կորած կամ փախած մարդկանց, որոնց մեռած կամ կենդանի, ո՞ւր կամ ի՞նչ լինելը դատական հետաքննությունների միջոցով հնարավոր չէր պարզել, իրավաբանական լեզվով ընդունված էր կոչել «անհայտ բացակայող»: Ժամանակի պաշտոնական դրագրություններում այդպես էլ կոչում են Աբովյանին, իսկ գործն անվանում են «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը»՝ բնավ տարբերություն չդնելով «անհայտ կորած» և «անհայտ բացակայող» եղրույթների միջև:

Ապրիլ — մայիս ամիսներին Երևանցիների շրջանում տարածվում են և այլ լուրեր՝ Աբովյանի «անհայտ բացակայության» կամ փախուստի դրդապատճառները պարզող: Դրանք ևս արձանագրված են 1848 թ. նամակներում՝ փոխանակված Աբովյանի աշակերտների միջև և պաշտոնական դրագրություններին մեջ:

1. Իբր Աբովյանի և Հ. Աբիխի՝ Արարատ բարձրանալու կապակցությամբ հետաքննություն էր լինելու. թեպետև, իրականում, նրանք լեռան բուն գագաթին չէին եղել, բայց խաբել էին հասարակությանը և մամուլում հրապարակել իրենց «սխրանքը» թմբկահարող լուրեր: Եթե կեղծիքը պարզվեր, վատ կլիներ և՛ Աբովյանի, և՛ Աբիխի համար: Այդ պատճառով երկուսն էլ, իբր, փախչում, կորչում են: Աբովյանին, ըստ որում, նորից հասցնում են մինչև Ղարս: Այս վարկածի հերքումը դժվար չէր, որովհետև Աբովյանն ու Աբիխը Արարատ բարձրանալու համատեղ փորձեր էին արել 1844-ին, լեռան բարձրագույն գագաթը չէին հասել, հակառակը վկայող որևէ կեղծ հայտարարություն չէին արել, Աբիխն էլ ոչ մի տեղ չէր փախել:

Հաջորդ երկու վարկածները, սակայն, ուշադրության արժանի են և խորհելու նյութ են տալիս, մանավանդ որ երկուսն էլ կապ ունեն իրական փաստերի և նույն օրերին Աբովյանին զբաղեցնող հարցերի հետ:

2. Որովհետև Աբովյանը 1848 թվականին ևս պիտի Մասիս բարձրանար ու դրա համար հրապարակորեն պրազ էր բռնել, բայց վախենալով որ չպիտի կարողանար բարձրանալ և պարտվելով՝ խայտառակվել, օր առաջ փախչում-կորչում է, որպեսզի այդ ձևով դրազը լուծվի:

3. Ոմանք էլ Աբովյանի կորուստը կապում են նրա պարտապանների հետ: Աբովյանը տարիների ընթացքում զանազան անձանց փող էր պարտք տվել և նույն օրերին մի քանիսից հետ էր պահանջում, որովհետև Երևանից մեկնելու էր իր նոր պաշտոնատեղին՝ Տփղիս, և փողերն իրեն հարկավոր էին:

Նույն ժամանակները Խոր վիրապի մոտ գտնվում է Աբովյանի կոշիկը, որով ավելի է խճճվում խորհրդավոր հանդույցը:

Շրջում էին և այլ լուրեր: Ոմանք, իբր, կենդանի Աբովյանին հանդիպել էին Շամիլի խորհրդականների մեջ, Կովկասյան լեռներում, իսկ ուրիշներն էլ, ընդհակառակը, տեսել էին մեռած Աբովյանի մարմինը, այն էլ Հայաստանում, Արաքսի ջրերում, Հին Արտաշատի ավերակների մոտ, որից և ենթադրել, թե նա ինքնասպան է եղել: Ոմանք պատճառն էլ են ասում. իբրև թե Ներսես Աշտարակեցուց ստացած ինչ-որ նամակ, որն, իբր, Աբովյանին հանել է հավասարակշռությունից և մղել հանցափորձության, կարճ՝ իրեն նետել է կատաղած Զանգուն և խեղդվել:

Կա, վերջապես, մի պաշտոնական գրություն՝ Երևանի քաղաքային ոստիկանության հրավիրագիրը՝ ուղղված Աբովյանի ունեցվածքի խնամակալներին: Խորագրում նշված է. «Вдове его госпоже Эмилии» (Նրա այրուն՝ տիկին Էմիլյային), որ ենթադրել է տալիս, թե ոստիկանության համար ամենահավանականն այն էր, որ Աբովյանն արդեն մեռած կամ սպանված էր:

Բայց ինչպե՞ս:

Ըստ ոմանց՝ Աբովյանն ինքնասպան էր եղել, որի օգտին են արտահայտվել Ստ. Նազարյանցը և Ֆ. Բոդենշտեդը: Ըստ այլոց՝ Աբովյանին սպանել են այլազգիները: Այդ մասին էլ գրել են Առաքել Արարատյանը և Հերման Աբիխը, հետագայում այդ նույն վարկածը հավանական էր համարում Աբովյանի որդին՝ Վարդանը նույնպես: Ըստ որում՝ Հ. Աբիխը սկզբներում, Աբովյանի անհետացման առաջին ամիսներին, համոզված դրում էր, որ նա ինքնասպան է եղել, և ինքը

պիտի խեղճի այդ հուսահատ քայլի պատճառը, բայց 1852-ին, Երևանի բերդի պարիսպ, դնդապետ Փիլլի հետ հանդիպելուց հետո, Գերմանիա, հարազատներին ուղարկած մի նամակում, ընդհատելով դրվիքը, ավելացրել է այս տողերը. «Այստեղ (այսինքն՝ Երևանում — Պ. Հ.) այժմ ամեն ոք հավատում է, որ Աբովյանը ո՛չ թե ինքնասպանություն է գործել, այլ սպանվել է թուրքերի ձեռքով»:

Ի՞նչը կարող էր առիթ տալ կամ պատճառ ծառայել Աբովյանի սպանության: Փորձենք պատասխանել այս բնական հարցին:

Վստահելի վավերագրերի ու վկայությունների անկանխակալ քննությունը մեջտեղ է բերում կամ նշմարել տալիս մի քանի էական պատճառներ, որոնք կարող էին հավասարակշռությունից հանել Աբովյանի անձնական ու դաղափարական հակառակորդներին և մղել հանցագործության:

Դրդապատճառներից մեկը կարող էին լինել այն գեկուցագրերը, որոնք Աբովյանը վերջին երկու տարիներին պարբերաբար հղում էր դպրոցական բարձր իշխանություններին՝ մահմեդական մանուկների վարժարանները պետական հսկողության ենթարկելու և ռուսաց լեզուն նրանցում դասավանդվող առարկաների կարգը դասելու մասին, որովհետև, ինչպես պատճառաբանում էր նա, միայն այդ ճանապարհով հնարավոր կլիներ տեղական թուրք ազգաբնակչությանը հոգեպես մերձեցնել ռուս ազգի հետ և աստիճանաբար արմատախիլ անել նրանց միջից ֆանատիզմի ոգին:

Ամրապնդենք մեր ասածը մանավորապես 1847 թ. ընթացքում Աբովյանի արած նմանաբնույթ դրավոր առաջարկություններով ու հայտարարություններով, որոնք հաղորդվել են դպրոցական ու քաղաքացիական բարձր իշխանություններին (քաղում ենք Աբովյանի համապատասխան գեկուցագրերից մեր թարգմանությամբ).

«Մահմեդական մանուկ դպրոցները պետք է ոչնչացնել...» (Հունվարի 10):

«Պետք է խստագույն հսկողություն ունենալ բոլոր, ինչպես քրիստոնյա, այնպես էլ, ու հատկապես, մահմեդական մանուկ ուսուցիչների վրա, որպեսզի նրանք, առանց անհրաժեշտ իրավունքի, որը կարող է տալ միմիայն ուսումնարանական վարչությունը, չպահեն իրենց մոտ աշակերտներ, անգամ մեկ հոգի» (ապրիլի 25):

«Արգելել մուսուլմանական չարիքին՝ թույլ չտալ ո՛չ մեկին մզկիթներում երեխաներին դաս տալու, եթե նա դրա համար պահանջվող քննությունները չի հանձնել գավառական ուսումնարանում, ըստ սահմանված կարգի ու ծրագրերի. նման ուսուցիչներին և,

ընդհանրապես, մահմեդական դպրոցներն անհապաղ ենթարկել ուսումնարանական գերատեսչությանը» (օգոստոսի 28):

Վերջապես՝ առավել կտրուկ ձևով արված միևնույն առաջարկությանը, որ գտնում ենք պաշտոնական մամուլում հրատարակվելիք Հոդվածի («Поездка к развалинам Ани», 1847/48) *էջերում. «Մահմեդական մզկիթներում կարգել փորձված, բարեխիղճ ռուս ուսուցիչներ՝ պատանի սերնդին ներշնչելու համար այլ զգացմունքներ, այլ մտքեր...», — դպրոցական բարձր իշխանություններին և երկրամասի ղեկավարներին համոզված խորհուրդ էր տալիս Խ. Աբովյանը:*

Այսպիսի հարված ո՛չ մի թուրք մոլլա, մահմեդական ո՛չ մի ուսուցիչ չէր կարող հանդուրժել, և վերջիններիի անխուսափելի հակաքայլերը կամ դավադրությունն Աբովյանի դեմ նյութվում է նույն այդ օրերից[1]*:*

Ինչպես վկայում են հին երևանցիները՝ ճիշտ նույն չրջանում ինչ-ինչ մութ ուժեր սկսում են Աբովյանի դեմ լարել քաղաքի մահմեդական տգետ խառնամբոխին՝ «հայտնագործելով» նրանց մոլեռանդությունը գրգռող զորավոր «փաստեր» ու պատրվակներ:

Բանն այն է, որ Աբովյանի սկսած գործը համարյա անիրագործելի էր, իսկ պայքարը՝ հանդուգն ու անհավասար մի ձեռնարկում, և հենց սկզբից ճախողման դատապարտված: Ճիշտ է, այդ առաջարկությունները նա անում էր անդրկովկասյան ժողովուրդների չահերից ելնելով, որպեսզի ամրապնդվեր Ռուսաստանի հեղինակությունը վերջիններիս չրջանում, Ռուսիայի դիրքերը՝ Կովկասում, որպես նախապայման այս երկրամասի հետագա բարգավաճման և ապահովության՝ թուրքական ու պարսկական դավիչների ոտնձգություններից, բայց Անդրկովկասի ռուս իշխանություններն այնքան զորավոր չէին, որ տեղական մահմեդականության նկատմամբ իրենց քաղաքակրթիչ առաքելությունը կյանքում արմատավորեին: Դրա ժամանակը դեռ չէր հասել: Շատ հնարավոր է, որ Աբովյանի դեմ դավադրությունը

---

[1] *Ե* VII, *139: Ավելի վաղ, 1846-ին, Աբովյանն առաջարկել էր դպրոցական բարձր իշխանություններին՝ «հետպհետե կարճել թուրք մոլլաների իրավունքը՝ <թույլ չտալով նրանց> առանց իշխանության թույլտվության աշակերտներ պահելու, որ դպրոց. առանց ոստիկանության աջակցության, չի՛ կարող ինքնուրույնաբար անել, եթե չի ուզում իրեն ենթարկել լուրջ անախորժություններ: Մահմեդական մասնավոր դպրոցներըդրում էր այնուհետև Աբովյանը—անհրաժեշտորեն պետք է ենթարկել դպրոցիս հսկողությանը և մինչև իսկ, եթե հնարավոր է, նրանց մեջ ևս մացնել ռուս լեզվի դասավանդումը», որպեսզի մատաղ սերունդն այդ ճանապարհով թողներ իր մեջ «արմատացած մոլեռանդությունը» և մոտենար իր «բարերար ազգին», այսինքն՝ ռուս ժողովրդին (Դ I, 165):*

խրախուսում էին նաև Թուրքիայի և Պարսկաստանի հետագեմ չլրջանները՝ կազմակերպելով քաղաքական սպանություն, որ բնավ էլ անհավանական չպիտի դիտվի:

Պակաս վտանգներով հղի չէր և ժամանակակիցների ակնարկած մյուս իրողությունը, որի վրա ուշադրություն ենք հրավիրել տարիներ առաջ, մեր «Վերելք» գրքում (1982): Հնօրյա ուղեդրություններից ու պաշտոնական վավերագրերից ծանոթ է, որ Երևանի փոստապետ Արտեմ Քալանթարյանը՝ Աբովյանի անձնական թշնամիներից մեկը, չարունակ զրպարտում ու լուտանքներ էր թափում Արարատ բարձրացած գիտնականների հասցեին, նրանց մեջ և Աբովյանի, որոնց հրապարակավ անվանում էր ստախոսներ, Արարատի գագաթը բարձրանալն ընդհանրապես՝ անհնարին և այլն: Մեկընդմիշտ փակելու համար զրպարտչի բերանը՝ 1847 թ. նոյեմբերին, Երևանի քաղաքային ոստիկանության ատյանում Աբովյանը Քալանթարյանի հետ պաշտոնապես դրազ է բռնում: Աբովյանին ընկերանում է նաև դավառապետ Բլավատսկին, ու երկուսով խոսք են տալիս 1848 թ. բարձրանալ Արարատի գագաթը և իրենց դավանած ճշմարտությունը գործով ապացուցել: Եթե վերելքը հաջողությամբ պսակվեր, Քալանթարյանը պարտավոր էր վճարել 1000 ռուբլի արծաթով, և Աբովյանն ու Բլավատսկին այդ դումարն ամբողջությամբ նվիրելու էին Թիֆլիսի ս. Նունեի անվան դպրոցին: Իսկ եթե, բան է, չկարողանային բարձրանալ, ապա Քալանթարյանին պետք է վճարեին 1500 ռուբլի արծաթով: Գումարը չատ մեծ էր. ստանալիքը կազմում էր բարձր դասարանի ուսուցչի երեք տարվա աշխատավարձը, իսկ տալիքը՝ հինգ տարվա աշխատավարձը: Որ Աբովյանի համար անկարելի բան չէր Արարատի գագաթ բարձրանալը, Քալանթարյանն էլ չէր կասկածում, ուստի պետք էր մտածել դրա առաջն առնելու, քանի ամառը չէր եկել: Միանգամայն հնարավոր է, որ նա մտածեր ծածուկ, մեջտեղից վերացնել տալ Աբովյանին, որպեսզի նախ՝ չխայտառակվեր, և երկրորդ՝ իր փողերը փրկեր:

Ուրեմն՝ տարբեր շարժառիթներից դրդված երկու դավադրություն Աբովյանի դեմ, որոնց մասին մշուշոտ ձևով խոսվում է Աբովյանի անհետացման մասին պատմող հին վավերագրերում:

Ո՛վ պիտի, սակայն, իրագործեր Աբովյանի սպանությունը: Թվում է, հենց այստեղ է, որ մոլլաներն ու Քալանթարյանը գտնում են հարմար թիկնածուներ և նրանց մղում հանցագործության:

Ժամանակակիցները Աբովյանի սպանության հանցավորներ էին համարում Ասադ և Մամադ Շաֆի բեգերին: Պատճառը՝ որպեսզի Մամադ Շաֆի բեգն ազատվեր Աբովյանին վճարելիք 350 ռուբլի

պարտքից, որը մեծ գումար էր, և Աբովյանը նույն օրերին հետ էր պահանջում: Իր պատճառներն ուներ նաև Ասադ բեգը:

Նույն երևանցիների վկայությամբ՝ Ասադ բեգը, որ Շաֆի բեգի տարեց ընկերներից էր, միաժամանակ հետապնդում էր նրա մորը, մի գեղանի պարսկուհու, որի նկատմամբ, ըստ ժամանակին տարածված խոսք ու զրույցի, անտարբեր չէր նաև Աբովյանը: Բայց, ավելի շատ, պարսկուհին, որովհետև, ինչպես հետագայում խոստովանել է Մամադ Շաֆին, և այդ տպագրվել է մամուլում. «Մայրս, որի հետ նա (Աբովյանը — Պ. Հ.) ծանոթ էր, նրա ասել-խոսելը չէր մոռացել...»[2]: Ուրեմն, Ասադ բեգը՝ խանդի հողի վրա, իսկ Շաֆին՝ պարտքից ազատվելու համար:

Ինչպե՞ս էր գոյացել այդ պարտքը:

Մամադ Շաֆիի հայրը՝ Մուրսալի բեգը, դեռ սարդարի ժամանակներից, պետական այգիների կապալառու էր և մի չոչափելի գումար էր յուրացրել: Երբ ռուսները գրավում են Երևանը, սարդարի պարտապանները դառնում են ռուս պետության պարտապաններ: Այդ փողը ետ ստանալու նպատակով, 1840 թ. սկսած, մի քանի անգամ ռուս կառավարությունը փորձում է նրանց ունեցվածքը հրապարակային աճուրդով վաճառել, բայց երևանցիք խուսափում են դնել: Տարիների հետ այս հարցն ավելի է սրվում, և Շաֆի բեգը (ըստ այլոց՝ նրա մայրը) Աբովյանի օգնությունն է խնդրում: Աբովյանը 1847 թ. աշնանը նրանց փոխարինաբար փող է տալիս՝ 350 ռուբլի արծաթով (այսինքն՝ ոսկի փող) և փրկում է ընտանիքը կործանվելուց: Ասացինք՝ Շաֆի բեգը Աբովյանի աշակերտներից էր, և Աբովյանները դնալ-դալ ունեին նրանց հետ: Դրանից էլ օգտվում են դավադիրները...

1848 թ. գարնանը, երբ Աբովյանը նշանակվում է Ներսիսյան դպրոցի տեսուչ և պատրաստվում փոխադրվել Թիֆլիս, բնականաբար, հետ է պահանջում փողերը: Շաֆի բեգը վկայի ներկայությամբ խոստանում է վճարել պարտքը, միայն թե ո՛չ ռուսական ռուբլիներով, այլ պոլիմպերիալ կոչվող ոսկի փողերով՝ մեկը ռուսական 5 ռ. 25 կոպ. դիմաց, նշանակում է՝ ավելի քան 66 պոլիմպերիալ, որ ժամանակակից չուկայական դներով կանոր չատ մեծ գումար:

Այդ հանդիպումից հետո անցնում են օրեր. Շաֆի բեգը պարտքը չի վճարում, Աբովյանն անհետանում է խորհրդավոր հանգամանքներում, իսկ պարտամուրհակն էլ կորչում է... Եվ այս բոլորը արձանագրված են դատական փաստաթղթերի մեջ: Ավելին, Աբովյանի անհայտ կորստից չատ չանցած՝ Շաֆի բեգը հանկարծ որոշում է

---

[2] «Արձագանք», 1897, № 14:

մեկնել Վարշավա և մտնել այնտեղ գտնվող թաթարական հեծելազորի մեջ: Այդ լսելով՝ Աբովյանի կինը դիմում է ոստիկանությանը և խնդրում նրան դուրս չթողնել քաղաքից, մինչև իրենց հետ ունեցած դրամական հաշիվները չվերջացնի:

Հարցաքննում են Շաֆի բեգին, պատասխանում է, որ ժամանակին իր պարտքն անձամբ վճարել է Աբովյանին: Նույն ոգով են պատասխանում նաև նրա ցույց տված վկաները, որոնք օրենքով վկայություն տալու իրավունք չունեին: Աբովյանի անհետացման հանգամանքները ոստիկանությունը չի կարողանում պարզել: Հետաքննությունը հանգում է փակուղու՝ փաստերի բացակայության կամ կաշառքի պատճառով: Արաքսի ափին, Խոր վիրապի մոտ, մայիսի սկզբներին (մինչև 7-ը) գտնված կոչիկը (որի Աբովյանին պատկանելը հաստատել էր կինը) և քիչ այն կողմ՝ կմախքի հայտնվելը, որևէ բան չեն հուշում ոստիկանապետին: Ո՞վ էր Աբովյանի կոշիկը տարել-դնել չոլերում և հողից հանած կմախքը մոտերքում դրել կամ ի՞նչ նպատակով՝ չնք չեն թափում պարզել: Իրականում, եթե Աբովյանը կենդանի լիներ, չէր էլ անդամ մտածի բոբիկ ոտքերով Թուրքիա կամ, ընդհակառակը՝ դեպի Կովկասյան լեռները փախչել, և եթե նրան դավաճան աքսորած լինեին Սիբիր, անխոսա բան է, որ բոբիկ ոտքերով տանից հաներին և տաժանակրության քշելին... Ուրեմն՝ սպանված Աբովյանի կոշիկն էր, որ դավադիրները հանել էին ոտքից և Երևանից տանելով շատ հեռու՝ դնել չոլում: Շատ հնարավոր է, որ դավադիրների թելադրանքով և պարտքը վերադարձնելու պատրվակով՝ Շաֆի բեգը հրավիրել է Աբովյանին իրենց տուն, հետո հարմար պահ որսալով՝ ընկերների հետ սպանել է նրան, մուրհակը հափշտակել ու ոչնչացրել, իսկ հետքերը ծածկելու համար կոշիկը ոտքից հանելով՝ ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին տարել, դնել է Խոր վիրապի մոտերքը, կողքին էլ դրել Արաքսի մոտերքից հանված ինչ-որ մի տասնհինգամյա կնոջ կմախք, ինչպես այդ վկայում են դատական արձանագրությունները: Ոմանց ասելով՝ Շաֆի բեգն ու նրա համախոհները սկզբներում Աբովյանի մարմինը թաղել են Երևանի իրենց այգում և օրեր հետո միայն տարել-կորցրել, որ ոստիկանությունը, կասկածի դեպքում, չկարողանա հանցանշաններ գտնել կամ սպանվածի մարմինը թաքցրած տեղից հանել:

1903 թվականին «Լումա» ամսագրում (սեպտ. — հոկտ. համարում) տպագրվել են այնպիսի տողեր, որոնց հեղինակը երևանցիներին քաջածանոթ, հայանի բժիշկ և հայրենասեր գործիչ Լևոն Տիգրանյանն է. «Հույս ունիմ, որ պարոն Մամադ բեգ Շաֆիբեգովը, որ մի սիրալիր երիտասարդ է (Աբովյանի աշակերտի որդին — Պ. Հ.), թույլ կտա

<իբենց այգու> այդ եռանկյունի փոսը փորելու և Աբովյանի ոսկորները գտնելու, որոնց կարելի կլինի տեղափոխել Երևանի հայոց նոր գերեզմանատունը»: Այսպիսի հրավեր կարող են ուղղել միայն հաստատ իմացած ու կատարված բաների դեպքում: Բայց բաղձալի թուլլտվությունը Տիգրանյանը չստացավ: Շուտով վախճանվեց նաև ինքը, և գործին հետամուտ նոր մեկը ասպարեզ չեկավ: Աբովյանի ողբերգական վախճանի մասին պատմական վավերագրերի հաղորդածն այսչափ է:

Ներկայումս, հանիրավի, թմբկահարվում է Աբովյանի՝ իբր Սիբիր աքսորված լինելու վարկածը, որն, ի դեպ, ծագել է ո՛չ արևելյան հայերի ու Աբովյանի ազգակիցների, այլ արևմտահայության շրջանում: Առաջին անգամ այդ վարկածն արձանագրել է Ստ. Ոսկանը՝ Աբովյանին նվիրված հոդվածաշարի էջերում, 1859 թվին, որին, սակայն, անձամբ չի հավատացել ու հրապարակով էլ իր կասկածն ու անհամաձայնությունն է հայտնել. «Այս վերջին ենթադրությունները մեզ անհիմն կերևին», — ասել է նա:

Ոմանք հիմա հակվելով այդ անհիմն վարկածին և փորձելով ապացուցել անապացուցելին՝ ճգնում են Աբովյանի գործունեության մեջ հակապետական, հակացարական, հակառուսական կողմեր «հայտնաբերել», որին հասնելու համար նրանց այլ բան չի մնում, քան փաստերի աղավաղումը:

Այդ վարկածը հերքող ամենազորեղ կռվանը տալիս են Աբովյանի անհետացումից հետո կազմված նրա ծառայության ցուցակները, որոնց մեջ եղած այն հարցերին, թե աստիճանավորը (այսինքն՝ Աբովյանը) արդյոք հետաքննության կամ դատի տակ չի՞ եղել, որևէ տույժի չի՞ ենթարկվել, պարզ ու մեկին տրված են այս պատասխանները.

«Под судом и следствием не был, аттестовался способным и достойным» *(«Դատի ու հետաքննության չի՛ ենթարկվել, վկայված է որպես ընդունակ և արժանի <ուսուցիչ>»):*

Վերջերս «հրապարակվեց» («Գրական թերթում») մի «փաստաթուղթ», որի համաձայն, իբր, Աբովյանը 1858 թ. դեռ կենդանի է եղել: Բացարձակապես սխալ, թյուրիմացության և անպատասխանատվության հետևանք է այդօրինակ պնդումը, որովհետև «դյուտի» ժողովրդականացնողներն իրենք ուշադրության չեն կարողացել կարդալ իրենց իսկ թմբկահարած վավերագիրը: Այնտեղ սևով սպիտակի վրա գրոշմված է. «Աբովյանն ապրում է Երևանում, ստանում է 380 ռ. ռոճիկ, օգտվում է պետական բնակարանից, 1846-ին նրան շնորհվել է կոլեգիական ասեսորի աստիճան»:

Եթե Աբովյանն իսկապես աքսորված լինելը, իսկ նրա կենդանի լինելը՝ անվիճելի, այսպիսի անհեթեթություն չէին կարող դրել, նրա բնակության վայրը երևանը չէր մատնանշվի: Պարզ չէ՞, որ «Մատայության ցուցակը» կազմողներին հայտնի չեն եղել Աբովյանի խորհրդավոր «անհետացումն» ու սպանության պարագաները:

Աբովյանի դվխավոր հանցանքը համարում են, իբր, այլախոհությունը: Սակայն Ռուսական կայսրության դեկավարները՝ ցարը և նրա օդնականները, Բենկենդորֆն ու մյուսները, ի՞նչպես դուշակեցին Աբովյանի այլախոհությունը, երբ անհերքելի փաստ է, որ ոստիկանության ու ժանդարմերիան համապատասխան բովանդակությամբ մատնողության թղթեր, Աբովյանի մասին, երբեք չե՛ն ստացել, նրա տունն ընդհանրապես չե՛ն խուզարկել, նրա ձեռագրերն առհասարակ չե՛ն բռնագրավել և, ընդհակառակը, պահպանության համար հանձնվել են կնոջը: Ռուսական պետությունը՝ փոխարքա Վորոնցովի միջնորդությամբ, Աբովյանի կնոջը միանվագ, 600 ռուբլի ոսկով թոշակ է տվել: Խնամակալական մարմիններն Աբովյանի ունեցվածքը բազմապատկելու և նրա երեխաներին վայելուչ ձևով պահելու մասին են հոգացել: Այդ ե՞րբ է եղել, որ պետական հանցագործներին խրախուսել են, այն էլ ցարերը: Մինչև ե՞րբ պիտի խուսափենք համարձակորեն փաստերի աչքերին նայելուց և պատշաճ հետևություններ անելուց:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

Առաջին անգամ հրապարակվող սույն վավերագրերը կարևոր նշանակություն ունեն Խ. Աբովյանի ողբերգական վախճանի հանգամանքները հետազոտելու համար, թեպետ և այդ մասին նրանց մեջ ուղղակիորեն ոչինչ չի ասված: Աբովյանի կորստյան պատճառներից մեկը, դուցե և պլխավորը, իր թուրք աշակերտ Շաֆի բեզին տված պարտքն էր: Օգտվելով ուսուցչի սիրալիր աշակցությունից և դուրս գալով նեզ դրությունից՝ աշակերտը նշված ժամկետին գումարը տիրոջը վերադարձնելու փոխարեն, հաշվենկատ ձևով որսում է հարմար պահը և երախտիքը հատուցելու տեղ միջոց է ընտրում. խաբեությամբ Աբովյանին հրավիրում է իրենց տուն, անդամ վճարում պարտքը, մուրհակը հետ առանում, բայց և փոքը-ինչ հետո, համախոհների հետ սպանում է նրան, կողոպտում, մարմինը մի ծածուկ տեղ թաղում ու կորցնում, մուրհակը ոչնչացնում, իսկ ժամանակ անց, արդեն ոստիկանության հետաքննությունների ընթացքում չքմեղ ձևանալով պնդում, թե ինքն Աբովյանին ոչինչ

պարտք չէ, որ, ճիշտ է, մի ժամանակ պարտք է եղել, բայց հետո վերադարձրել է անճամբ Աբովյանին: Մարդասպանության ու կողոպուտի ծանոթ եղանակ էր այս, և դրանից վարպետորեն օգտվում է Աբովյանի թուրք աշակերտը:

Այս էլ ասենք, որ Վարշավայում կազմակերպված մահմեդական հեծյալ զորամասերում ծառայության մտնողներին ռուս տերությունն օգտագործում էր լեհական ազատագրական շարժումը բռնի ճնշելու, ժողովրդի մեջ սարսափ տարածելու և վայրենի կոտորածների համար: Շաֆի բեգն, ահա, դրան էր ձգտում:

Հին երևանցիները, գրեթե բոլորը, համոզված էին, որ Աբովյանի կորստյան մասին տարածված լուրերը մտացածին են ու հիմնազուրկ. իրականում, նա սպանվել է թուրքերի ձեռքով: Այս համոզմանն էր նաև Աբովյանի որդին՝ Վարդանը: Աբովյանի կինն ու ազգականներն անօգնական մարդիկ էին և անկարող՝ ճշմարտությունը մեջտեղ հաններու, իսկ խնամակալ Ստ. Վեքիլովը կաշառված էր թուրքերից: Ապացույց՝ վերջին վավերագիրը, որ հաստատում է, թե Վեքիլովն ի՛նչ խորամանկությամբ կարողանում է կարճել տալ Շաֆի բեգի մասին Երևանի գավառական դատարանում և ոստիկանության կողմից հետաքննվող գործը, որի ընթացքում կարող էին պարզվել Աբովյանի սպանության հանգամանքները, և անհավատալի չափով նվազեցնելով նրա պարտքի գումարը (350 ռ. փոխարեն՝ 150 ռ.)՝ վճարումն էլ հետաձգել:

Գրությունների բնագրերը (առաջին երկուսը և վերջինը՝ սևագիր) պահվում են Աբովյանի թողոններում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (№ 689, 603, 648 և 602, ըստ հերթականության): Թարգմանությունը մերն է:

I

№ 3
28 сентября
1848 года

В ЭРИВАНСКУЮ УЕЗДНУЮ ОПЕКУ

Эриванский житель Магмад Шафи бек Мурсали бек оглы состоит должным безвестно отсутствующему г. коллежскому ассесору Абовьяну 350 рублей серебром; о взыскании с должника этих денег первая из нас 5 июля текущего года подала в

Эриванскую городскую полицию прошение, но по сие время оная не окончила это дело; а между тем Магмад Шафи бек желает на днях ехать на несколько лет в г. Варшаву, всадником, не оставляя по себе поверенного и ничем не обеспечивая своего займа. Но как это дело без ответчика или его поверенного нельзя обойтись, то покорнейше просим уездную опеку не оставить поспешнее снестись с Эриванскою городскою полициею, дабы принудила Магмад Шафи бека Мурсали бек оглы о назначении по себе законного поверенного и чтобы обеспечил сиротское Абовьяна взыскание.

Թարգմանություն

№ *3*
28 սեպտեմբերի
1848 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Երևանի բնակիչ Մահմադ Շաֆի բեգ Մուրսալի բեգ օղլին անհայտ բացակայող պարոն կոլեգիական ասեսոր Աբովյանին պարտք է 350 ռուբլի արծաթով, պարտապանից այդ փողը գանձելու մասին մեզանից առաջինը[3] *ընթացիկ տարվա հուլիսի 5-ին խնդրագիր է մատուցել Երևանի քաղաքային ոստիկանությանը, բայց ոստիկանությունը մինչև օրս չի վերջացրել այդ գործը, իսկ Մահմադ Շաֆի բեգն, ի միջի այլոց, յանկանում է օրերս, մի քանի տարով, մեկնել ք. Վարշավա, որպես հնձյալ՝ իրենից հետո չթողնելով հավատարմատար և ոչնչով չապահովելով իր պարտքի վճարումը: Եվ որովհետև այս գործն առանց պարտապանի կամ նրա հավատարմատարի չի կարող ավարտվել, ուստի խոնարհաբար խնդրում ենք դավառային խնամակալությանը՝ անտես չառնել փութով դիմելու Երևանի քաղաքային ոստիկանությանը, որպեսզի նա հարկադրի Մահմադ Շաֆի բեգ Մուրսալի բեգ օղլուն իրենից հետո թողնելու օրինավոր հավատարմատար, նաև ապահովելու, հօգուտ Աբովյանի որբերի, ապրանքի պանձումը:*

---

[3] *Խնդրագրի հեղինակները անհայտ կորած Ս. Աբովյանի ունեցվածքի խնամակալներն են, և նրանցից առաջինը նրա կինն է՝ Ամալիա Հյուբշման:*

II

По титулу:

Просят опекуны по имению безвестно-отсутствующего коллежского ассесора Абовьяна жена его Эмилия Абовьян и титулярный советник Векилов о нижеследующем:

Эриванский житель Магмад Шафи-бек Мурсали бек оглы состоит должным безвестно-отсутствующему коллежскому ассесору Абовьяну три ста пятьдесят рублей серебром, каковые деньги не были уплачены Абовьяну до безвестного отсутствия его, о чем знают Эриванские жители Мирза Таги молла-Магмад оглы, Погос Тарвердов и Хачатур Искяндаров, а также и мы. Ныне же при требовании нашем означенных денег Магмад Шафи-бек платить отказывается, а в поданном в Эриванскую градскую полицию отзыве он не опровергает долга сего, отзывается что оные деньги уплатив самому Абовьяну в справедливости своей выставляет таких свидетелей, которые по закону не могут быть допущены ко свидетельству; а потому прилагая при сем три рубля шесть копеек серебром и листа гербовой бумаги 15 копеечного достоинства и копию с сего прошения всеподданнейше просим.

Дабы повелено было сие наше прошение с приложениями принять, записать и по удостоверению вышепоименованных свидетелей под присягою в справедливости сего, взыскать от Магмад Шафи-бека Мурсали бек оглы триста пятьдесят рублей серебром с причитающимися за один истекший год процентами, каковые деньги вручить нам для причисления к капиталу, находящегося под опекою коллежского ассесора Абовьяна. Ответчик имеет жительство в городе Эривале, и здесь же дом с садом. К подаче надлежит в Эриванский уездный суд.

Октября 11 дня 1848 года, г. Эривань.

Сочиненному и набело переписанному опекун титулярный советник Векилов руку приложил.

Ըստ վերտառության՝

Անհայտ բացակայող կոլեգիական ասեսոր Աբովյանի ունեցվածքի խնամակալները՝ նրա կին Էմիլյա Աբովյանը և տիտղոսավոր խորհրդական Վեքիլովը խնդրում են ներքոհիշյալի մասին.

Երևանի բնակիչ Մահմադ Շաֆի բեգ Մուրսալի բեգ օղլին անհայտ բացակայող կոլեգիական ասեսոր Աբովյանին պարտք է երեք հարյուր հիսուն ռուբլի արծաթով, այդ դրամը չի վճարվել Աբովյանին մինչև նրա անհայտ բացակայությունը, որի մասին դիտեն Երևանի բնակիչներ Միրզա Թաղի մոլլա Մահմադ օղլին, Պողոս Թարվերդովը և Խաչատուր Իսքանդարովը, նմանապես և մենք: Այժմ էլ, երբ մենք պահանջեցինք հիշյալ դրամը, Մահմադ Շաֆի բեգը հրաժարվում է վճարել, Երևանի քաղաքային ոստիկանությանը տված ցուցմունքի մեջ, սակայն, չի ժխտում իր պարտքը, բայց ասում է, որ այդ փողերը վճարել է անձամբ Աբովյանին՝ իր իրավացիության համար մեջտեղ բերելով այնպիսի վկաներ, որոնց ըստ օրենքի չի կարելի թույլատրել վկայություն տալու: Հետևաբար՝ սույնին կցելով երեք ռուբլի վեց կոպեկ արծաթով և 15 կոպեկ արժողությամբ մի թերթ դրվագավոր թուղթ, նաև սույն խնդրագրի պատճենը՝ խոնարհաբար խնդրում ենք.

Որպեսզի կարգադրվի մեր սույն խնդրագիրն առդիր դրությունների հետ միասին ընդունել, դրանցել և վերևում հիշված վկաների կողմից երդմամբ սույնի ճշտությունը հավաստելուց հետո, Մահմադ Շաֆի բեգ Մուրսալի բեգ օղլուց դանձել երեք հարյուր հիսուն ռուբլի արծաթով՝ անցած մեկ տարվա համար հասնող տոկոսներով, և այդ դրամը հանձնել մեզ՝ միացնելու համար կոլեգիական ասեսոր Աբովյանի՝ խնամակալության տակ գտնվող դրամապղպեին: Պատասխանողը (պարտապանը — Պ. Հ.) բնակվում է Երևան քաղաքում և այստեղ նա ունի տուն՝ այդու հետ միասին: Ենթակա է ներկայացնելու Երևանի գավառային դատարանին:

Հոկտեմբերի 11-րդ օրը, 1848 թ., ք. Երևան:

Շարադրանքին և մաքրագրությանն իր մասնակցությունն է բերել խնամակալ, տիտղոսավոր խորհրդական Վեքիլովը:

III

Из Эриванской Градской Полиции

Опекунам по имению безизвестно-отсутствующего коллежского ассесора Абовьяна, вдове его г-же Эмилии и господину титулярному советнику Векилову.

Повестка

При требовании градскою полициею в присудствии своем с должников коллежского ассесора Абовьяна, нижеследующих Эриванских жителей, уплаты долга их они отозвались:\\

1. **Саак Саркисов**, что ему коллежский ассесор Абовьян в прошлом году отдав 260 руб. серебром, просил его искупить для него разные строительные материалы и для дома его разные съестные и питейные припасы, который и искупив таковые материалы в г. Александрополе, где он проживал долгое время, за это собственно, на свой счет, доставил ему в г. Эривань; чрез несколько дня времени он же Абовьян опять просил его Саркисова – продать оные другим, и деньги отдать ему обратно; Саркисов продав таковые частью деньги вручил ему, а некоторая часть из оных остались за не продажею в ведении самого Абовьяна, и хотя сим последним обещано было ему за эти его труды вознаграждение, но он таковое и поныне не получил; сколько же им отдано лично Абовьяну за те материалы и сколько издержано по поручению его для дома его денег, тому подробный счет находится у г. Векилова.

2. **Егия Мугдуси Бадалов**, что он долг свой полностью уплатил г<-же> Эмилии и вексель получил обратно.

3. **Каспар и Багдасар Папановы**– тоже.

4. **Мамад Шафи бек Мурсал бек оглы**, что он долг свой уже уплатил лично самому Абовьяну, в чем и сослался на свидетельство здешних же жителей: Абас Кули бека Мустафа бек оглы, Гаджи Алакпера Гаджи Аласкер оглы и Калбалай Мамад Джафар Гаджи Абдул оглы; при спросе полициею этих лиц они отозвались:

а. **Абас Кули бек**, что действительно Мамад Шафи бек состоял должным Абовьяну 350 руб. сереб. Заплатил ему полностью.

б. **Гаджи Алакпер Гаджи Аласкер оглы**, что ему вовсе неизвестно обстоятельство **этого предмета** и не знает–платил ли Мамад Шафи бек Абовьяну долг или нет.

в. **Калбалай Мамад Джафар Мирза Абдулла оглы**, что тому более 8 месяцев коллежский асссесор Абовьян с Мамад Шафи беком встретив его на площади уездного училища, спросил его о курсе полуимпериала в народном обращении, говоря, что Мамад Шафи бек, состоя ему должным, хочет расплатиться полуимпериалами, на что он – Калбалай Мамад Джафар отвечал ему, что в народе курс на полуимпериал существует по 5 р. 25 коп. сер., но после того – получил ли Абовьян от должника своего удовлетворение или нет – ему неизвестно.

И 5. **Машади Исмаил Калбалай Абдул Рагим оглы**, что в число долга своего лично заплатил самому Абовьяну при следовании его в Тифлис 100 руб. серебром с надписью его на векселе, а остальные за тем не иначе может заплатить, как по истечении срока векселя.

Градская полиция извещая Вас о таковых отзывах должников коллежского ассесора Абовьяна на тот конец, чтоб вы противу отзыва первого – Саака Саркисова, доставили свое объяснение, а всех прочих должников, в том числе и Канакирских жителей, которые отозвались, что они желают в долгах своих расчитаться лично с Вами, при сем препровождает к Вам на дальнейшее Ваше распоряжение расписки их, госпоже Эмилиею Абовьян – в полицию при прошении 5-го числа июля текущего года представленные, с тем, дабы вы в потребном случае с требованием вашим обращались в надлежащее судебное место [?], с представлением нужных доказательств.

Частный пристав Карташев.

№ 2962
14 октября 1848 года
г. Эривань

Письмоводитель Пальмов

<Մակագրություններ Ս. Վեքիլովի ձեռքով.>
«№ *3* 16 октября 1848 года».

Երևանի քաղաքային ոստիկանությունից

Անհայտ բացակայող կոլեգիական ասեսոր Աբովյանի ունեցվածքի խնամակալներին՝ նրա այրուն՝ տիկին Էմիլյային, և պարոն տիտղոսավոր խորհրդական Վևքիլովին

Մանուցագիր

Քաղաքային ոստիկանությանն իր ատյանում, Երևանի ներքո-հիշյալ բնակիչներին, որոնք կոլեգիական ասեսոր Աբովյանին պարտքեր ունեն, իրենց պարտքը վճարելու առթիվ պահանջ ներկա-յացնելիս՝ նրանք պատասխանեցին.

*1. **Սահակ Սարգսյանը**՝ թե անցյալ տարի կոլեգիական ասեսոր Աբովյանն իրեն տալով 260 ռուբլի արծաթով՝ խնդրել էր գնել իր (Աբովյանի) համար այլևայլ չինանյութեր և տան համար անհրաժեշտ ուտելու և խմելու մթերքներ, որը և այդ բաները գնելով Ալեք-սանդրապոլ քաղաքում, որտեղ, հատկապես դրա համար, իր միջոցներով ապրել է երկար ժամանակ, բերել-հանձնել է նրան Երևան քաղաքում: Քանի մի օր վրայից անցնելուց հետո՝ նույն Աբովյանը նորից խնդրել է նրան՝ Սարգսյանին, վաճառել դրանք ուրիշներին և փողը վերադարձնել իրեն: Սարգսյանը մասամբ վաճառելով դրանք՝ փողը հանձնել է նրան, իսկ որոշ մասն էլ, վաճառվելու պատճառով, մնացել է հենց Աբովյանի տրամադրության տակ, ու թեպետ այս վերջինը խոստացել էր այդ աշխատանքների համար վարձատրել նրան, բայց այդպիսիք մինչև օրս էլ նա չի ստացել: Իսկ թե այդ չինանյութերի դիմաց նա ինչքան <փող> է հանձնել անձամբ Աբովյանին կամ <Աբովյանի> հանձնարարությամբ, նրա տան <կարիքների> համար, ո՞րքան է ծախսել, դրանց մանրամասն հաշիվը դտնվում է պարոն Վևքիլովի մոտ:*

*2. **Եղիա Մղդսի Բադալյանը**՝ թե նա իր պարտքն ամբողջությամբ վճարել է տիկին Էմիլյային և մուրհակը հետ է ստացել:*

*3. **Գասպար և Բաղդասար Պապանյանները**՝ նույնպես:*

*4. **Մամադ Շաֆի բեգ Մուրսալ բեգ օղլին**՝ թե նա իր պարտքն արդեն վճարել է անձամբ իրեն՝ Աբովյանին, որի համար և վկա է կանչում հենց տեղիս բնակիչներին՝ Աբաս Ղուլի բեգ Մուստաֆա բեգ օղլուն, Հաջի Ալաքպեր Հաջի Ալասկեր օղլուն և Քյալբալայ Մամադ Ջաֆար Հաջի Աբդուլ օղլուն. ոստիկանության կողմից այդ անձանց հարցում անելիս՝ նրանք պատասխանեցին.*

ա. Աբաս Ղուլի բեգը՝ Մամադ Շաֆի բեգն իսկապես պարտք էր Աբովյանին 350 ռուբ. արծաթով <և> ամբողջությամբ վճարել է նրան.

բ. Հաջի Ալաքպեր Հաջի Ալաքպեր օղլին՝ թե իրեն ամենևին հայտնի չեն այդ դործի հանդամանքները և չդիտե՝ արդյոք Մամադ Շաֆի բեգը վճարե՞լ է Աբովյանին <իր> պարտքը, թե՞ ոչ:

դ. Քյալբալայ Մամադ Ջաֆար Միրզա Աբդուլլա օղլին՝ թե կոլեգիական ասեսոր Աբովյանը սրանից ավելի քան 8 ամիս առաջ, դավառական դպրոցի հրապարակում, Մամադ Շաֆի բեգի հետ հանդիպելով իրեն՝ հարցուփորձ է արել ժողովրդի մոտ չրջանառության մեջ դտնվող պոլիմպերիալների արժեքի (курс) մասին, ասելով թե Մամադ Շաֆի բեգը պարտք լինելով իրեն՝ ուզում է վճարել պոլիմպերիալներով, որի առթիվ ինքը՝ Քյալբալայ Մամադ Ջաֆարը, պատասխանել է նրան, թե ժողովրդի չրջանում պոլիմպերիալների արժեքը (курс) կազմում է 5 ռ. 25 կոպ. արծաթով, իսկ թե դրանից հետո արդյո՞ք Աբովյանն իր պարտապանից բավարարություն ստացավ, թե ոչ, իրեն հայտնի չէ:

Եվ 5. Մաշադի Իսմայիլ Քյալբալայ Աբդուլ Ռահիմ օղլին՝ թե իր պարտքի դումարից 100 ռուբ. արծաթով անձամբ վճարել է Աբովյանին, երբ նա ուղևորվում էր Թիֆլիս, նրա ձեռքով արձանագրված է մուրհակի վրա, իսկ մնացածն էլ այսուհետև կարող է վճարել ոչ այլ կերպ, քան մուրհակի ժամկետը լրանալիս:

Քաղաքային ոստիկանությունը հաղորդելով Ձեզ կոլեգիական ասեսոր Աբովյանի պարտապանների այսօրինակ պատասխանները՝ ի վերջո կուզենար, որ դուք հակառակ առաջինի՝ Սահակ Սարդսյանի կարծիքի, տայիք Ձեր բացատրությունները, իսկ մնացած բոլոր պարտապանների <կապակցությամբ,> այդ թվում նաև Քանաքեռի բնակիչների, որոնք պատասխանեցին, թե իրենց պարտքերի համար ուզում են հաշիվ տեսնել անձամբ Ձեզ հետ, հետագա կարգադրությունների համար, սույնին կից Ձեզ է ուղարկում նրանց ստացականները, որոնք ընթացիկ տարվա հուլիսի 5-ին տիկին Էմիլյա Աբովյանը ներկայացրել էր ոստիկանությանը, որպեսզի դուք, հարկ եղած դեպքում, Ձեր պահանջներով դիմեք համապատասխան դատական վայր՝ ներկայացնելով անհրաժեշտ ապացույցներ:

Մասնավոր վերակացու (пристав)՝ *Քարտաշյան*

№ *2962*
14 հոկտեմբերի 1848 թվական
ք. Երևան

Գործավար՝ Պալմով

<Մակագրություններ Ս. Վեքիլովի ձեռքով
«№ 3: 16 հոկտեմբերի 1848 թվական»:

IV

По титулу:

Просят опекуны по имению безвестно-отсутствующего коллежского ассесора Абовьяна жена его Эмилия Абовьян и титулярный советник Векилов и Эриванский житель Магмад Шафи бек Мурсали бек оглы о нижеследующем.

В производстве Эриванского уездного суда состоит дело об отыскивании из нас первыми двумя от последнего 350 рублей сереб. в пользу детей безвестно-отсутствующего коллежского ассесора Абовьяна: ныне мы это дело прекратили между собою миром с тем, что из нас последний по врученной первым двум расписке обязался через шесть месяцев внести сто пятьдесят рублей серебром, по чемя всеподданнейше просим;

Дабы повелено было сие наше прошение принять, записать и дело по сему предмету заведенное считать конченным и предать вечному забвению. Сие прошение к подаче надлежит в Эриванский уездной суд.

Декабря 4 дня 1848 г. № 7.

Թարգմանություն

Ըստ վերտառության.

Անհայտ բացակայող կոլեգիական ասեսոր Աբովյանի ունեցվածքի խնամակալները՝ նրա կին Էմիլյա Աբովյանն ու տիտղոսավոր խորհրդական Վեքիլովը, և Երևանի բնակիչ Մահմադ Շաֆի բեգ Մուրսալի բեգ օղլին խնդրում են ներքոհիշյալի մասին.

Երևանի գավառական դատարանում վարույթի մեջ է մեղանից առաջին երկուսի կողմից վերջինից. հօգուտ անհայտ բացակայող Աբովյանի երեխաների, 350 ռուբլի արծաթով գանձելու մասին գործը: Ներկայումս մենք այդ գործը մեր միջև վերջացնում ենք հաշտու-

թյամբ՝ այնպես որ մեղանից վերջինը առաջին երկուսին տված մուրհակի համաձայն պարտավորվեց վեց ամիս անց մուծելու հարյուր հիսուն ռուբլի արծաթով, ուստի խոնարհաբար խնդրում ենք.

Որպեսզի կարգադրվի մեր այս խնդրագիրն ընդունել, գրանցել և այդ խնդրի մասին հետաքննության մեջ գտնվող գործը համարել ավարտված և մատնել հավիտենական մոռացության: Սույն խնդրագիրն ենթակա է հանձնելու Երևանի գավառական դատարան:

Դեկտեմբերի 4-րդ օրը, 1848 թ., № 7:

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՀԱՅՏ ԿՈՐՍՏՅԱՆ ՀԻՆ ՎԱՐԿԱԾԻ ՆՈՐ «ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ»

Խաչատուր Աբովյանի խորհրդավոր վախճանի հանգամանքները հանելուկ են մնացել սերունդների համար: Ականատես անձինք չեն եղել (կամ գուցե վախեցել են), որ ճշմարտությունը լույս աշխարհ հաններին, իսկ ինքն էլ գրավոր խոստովանություն կամ կտակ չի թողել: Այս պարագան, արդեն նրա անհետացման հաջորդ օրերին, ծնունդ է տվել զանազան վարկածների: Ըստ մեկի՝ Աբովյանն ինքնասպան է եղել՝ իրեն նետելով վարարած Զանգուն (թե՞ Արաքսը): Ըստ մյուսի՝ ծպտված, տանից հեռացել է Կարսի կողմերը, դեպի Գյանջա, Կովկասյան լեռներ՝ Շամիլի մոտ: Ըստ երրորդի՝ Աբովյանին սպանել (թե՞ կենդանի թաղել) են Երևանի այլազգիները, խանդի հողի վրա: 1859 թ. սկզբներից արևմտահայության շրջանում, իսկ փոքր-ինչ ուշ՝ հունդարահայ դաղթօջախում, ծնվում է մի նոր վարկած, ըստ որի՝ Աբովյանը ցարական կառավարության կողմից աքսորվել է Սիբիր և, իբր, դեռ կենդանի է: «Աբովյանը մի ծերուկ է, հալեւոր, և Սիբիրումն է, որին տեսել է մի մարդ, խոսել է հետը: Նա հարց ու փորձ է արել ազգի մասին»,– պատմում էին ներկա դարի սկզբներին[1]*:*

Այսօրինակ լեգենդները, կապված ժամանակի նշանավոր անձանց հետ, շատ էին տարածված թե՛ Եվրոպայում և թե՛ Ռուսաստանում ու Հայաստանում: Ոչ ոքի համար կասկածի առարկա չէ Միքայել Նալբանդյանի մահն ու թաղումը, սակայն պնդողներ են եղել, թե «Մուխալը» չի մեռել, ողջ է տակավին և մի օր պիտի վերադառնա որպես հայոց թագավոր՝ հայ գյուղացիներին հող բաժանելու[2]*:*

---

[1] *Գրի է առել Ավ. Իսահակյանը 1902 թ. նոյեմբերին, Բաքվում և պետեղել Հիշատակարանում՝ բացատրելով նաև, թե ըստ ժողովրդական ըմբռնման՝ սիրված հերոսի մահն անկարելի, աներևակայելի բան է: Սովորաբար, նա հավերժ կենդանի է մնում երկրիս վրա: Ժողովուրդն անընդունակ է համակերպվելու այն մտքին, թե գերմարդկային արարածներն, ընդհանրապես, կարող են մահ ունենալ: Ըստ այդմ՝ Պրոմեթեսի, Արտավազդի, Մհերի և ուրիշ շատերի նման, անմահ է նաև Խաչատուր Աբովյանը (տե՛ս* Ավ. Իսահակյան, *Հիշատակարան, Ե., 1977, էջ 291):*

[2] Աշոտ Հովհաննիսյան, *Աբովյան, Ե., 1933, էջ 68,* Ա. Ինճիկյան, *Միքայել Նալբանդյան, Ե., 1954 էջ 3:*

Հունգար ժողովրդի համար անվիճելի է, որ իրենց ազգային մեծ բանաստեղծը՝ Շանդոր Պետեֆին, հերոսաբար զոհվել է հեղափոխության օրերին, 1849 թ. հուլիսի 31-ին, Ֆահերեդհատուզի մոտ, բայց, այդուհանդերձ, պնդողներ կան, որ նրան աքսորել են Սիբիր և աշխատեցնում էին կապարի հանքերում, և ուր, իբր, նրան տեսել է ինչ-որ քրեական հանցագործ:

Վերոհիշյալ վարկածներից ամեն մեկն ունեցել է իր կողմնակիցներն ու պաշտպանները: Ստ. Նազարյանցն ու Ֆ. Բոդենշտեդն, օրինակ, հավատացած էին, թե Աբովյանն ինքնասպանություն է գործել: Ա. Արարատյանը, Աբովյանի որդի Վարդանը, գերմանացի պետնական Հ. Աբիխը, Աբովյանի աշակերտ Վ. Խուդաբաշյանը և ուրիշներ պնդում էին, որ նա սպանվել է: Ակսել Բակունցը հատուկ աշխատություն է գրել՝ ջանալով հիմնավորել, թե Աբովյանը եվրոպական հեղափոխության լուրն առնելով՝ անցել է Արաքսը ու, թերևս, մեկնել արտասահման: Ռուբեն վարդապետ Մանասյանը զանազան անասելություններից ելնելով՝ հավանական էր գտնում, որ Աբովյանն աքսորվել է Հեռավոր Արևելք և մեռել ու թաղվել է Օխոտսկում:

Առաջին երկու վարկածի կողմնակիցներն Աբովյանի ժամանակակիցներն ու բարեկամներն են, վերջինները՝ նորագույն շրջանի մարդիկ՝ ապրած 1920–1930-ական թթ.:

Ջորս վարկածի կողմնակիցներն էլ վկայակոչել են զանազան դրություններ և ավանդական զրույցներ, իսկ լրջամիտներն ավելի հակվել ինքնասպանության վարկածին, քանի որ այդ դաղափարը Աբովյանին հուզել է ամբողջ կյանքում, թեպետ առկա աղբյուրները բոլորից չատ խոսում են հօգուտ սպանության վարկածի:

Աբովյանի անհետացմանը վերաբերող բոլոր դրավոր աղբյուրները, պաշտոնական դրություններ, ժողովրդական զրույցներն ու ավանդությունները մենք հավաքել ենք և պատրաստել հրատարակության: Հետևությունն այն է, որ առաջին երկու վարկածներն ավելի են տրամաբանական, թեպետև վերջնական եզրակացություն անելն անկարելի է դարձյալ:

Բանն այն է, որ եթե Աբովյանն իսկապես ինքնասպան է եղել, ապա դա պատահել է տանից հեռու, նախորոշված տեղում, և հետքն ընդմիշտ կորել է: Եթե սպանվել է, ապա մարմինը թաքցրել են այնպես, որ հետաքննություններն ի վիճակի չլինեն պարզելու: Եթե դառնացած ու հիասթափված սեփական երկրից, ապրից, ընտանիքից՝ հեռացել է օտար վայրեր, ապա ծպտված է եղել, անունը փոխել և հետապայում էլ ո՛չ ոքի մոտ սիրտը բաց չի արել:

Բայց եթե Աբովյանն, իբրև քաղաքական հանցագործ, բանտարկված ու աքսորված է եղել ցարի կամ ոստիկանության պետի հրամանով, ապա անպայմանորեն պետք է գոյություն ունենային գաղտնի հրահանգներ, կարգադրություններ, դատարանի և Սենատի որոշումներ: Որքան էլ ծանր լիներ հանցանքը, և պատիժը՝ խիստ, ճևականություններն, այնուամենայնիվ, պահպանվում էին, և առանց դատի, բարձրագույն հրամանի, Սենատի հաստատման, մարդկանց չէին աքսորում կամ բանտարկում: Միծաղելի է, բայց պահ մի ենթադրենք, թե նրա կատարածը քրեական հանցանք է եղել. այդ դեպքում դատը, աքսորը կամ կախաղանը անխուսափելի էր, թաքցնելը՝ ավելորդ, իսկ ոտով-գլխով անհետացնելը՝ անկարելի: Եթե Աբովյանն իսկապես քաղաքական հանցագործ է համարվել կամ մեղադրվել դրա համար, ապա նախապես պետք է ենթարկված լիներ նույն փորձություններին, ինչ իր բախտակից մեղավորները. նրան էլ պետք է լրտեսեին, նրա մասին էլ՝ մատնության թղթեր լինեին, նրա վրա էլ՝ գաղտնի հսկողություն սահմանվեր: Թեկուզ և անհիմն, բայց պիտի որոշակի լիներ, թե նա ինչի՞ համար էր մեղադրվում, ինչո՞ւ էր դատվում և ի՞նչ պատիժ պիտի կրեր՝ կախաղա՞ն, տաժանակրությո՞ւն, թե՞ աքսոր: Նրա բախտն էլ նույնը պիտի լիներ, ինչ դեկաբրիստների ու պետրաշևականների, կամ թե՝ Պուշկինի, Լերմոնտովի, Դոգոլի, Բելինսկու, Գերցենի, Օգարևի, Զաոդաևի, Դոստոևսկու, Ադամ Միցկևիչի, Ալեքսանդր Ճավճավաձեի և չատ ուրիշների: Ցարի անձնական գրասենյակում, Երրորդ բաժանմունքի դործերում, Սենատի, դատարանի, բանտերի վարչության ֆոնդերում, ոստիկանական լրտեսագրություններում հիշածս բոլորի մասին էլ կան բազմաթիվ վավերագրեր ու դործեր: Այդ նյութերը ոչնչացնելու մասին ո՛չ ոք չի էլ մտածել: Դրանք առանձին հատորներով հրատարակվել են մեր օրերում ու շարունակվում են ուսումնասիրվել ու հրատարակվել:

Այդ ուղղությամբ հայ դիտնականները վիթխարի ջանքեր են թափել դեռ 1930-ական թթ. (ամենից տևական որոնումներ է կատարել Աշոտ Հովհաննիսյանը), բայց արդյունքի չեն հասել. Աբովյանը նշածս հաստատությունների ուշադրության կենտրոնում չի եղել, նրա մասին դոյություն չունի ո՛չ թե որևէ համապատասխան գործ կամ վավերագիր, այլ հարևանցի ակնարկ անդամ: Աբովյանն երբեք չի մեղադրվել պետական հանցագործության մեջ, ընդհակառակը, նրան կշտամբել են ծայրահեղ ռուսասիրության համար, այն էլ՝ իր վա՛յ հայրենակիցներր:

Ծառայական թերացումներ և ցարական պաշտոնեության հետ ընդհարումներ, այո՛, Աբովյանն ունեցել է, և այն էլ՝ բավականաչափ շատ, բայց այդ ամենը տղայամտություն կլիներ որակել հակացա-

բական, հակաթեատրական գործունեություն և կամ հավասարել այն «հանցանքներին», որոնց համար մեղադրվել կամ հետապնդվել են դեկաբրիստները, Պուշկինը, Լերմոնտովը, Բելինսկին, Դոստոևսկին, Գերցենը, Միցկևիչը և ուրիշներ:

Նման նկատողություններ Աբովյանը շատ է ստացել, լսել է նաև ամենախիստը՝ տեսչական պաշտոնը կորցնելն ու աշխատանքից հեռացվելը, ինչով մի անգամ 1846-ին սպառնացել է Անդրկովկասի ուսումնական մասի կառավարիչ Շրամ Երկրորդը. «...Ամեն համառություն... կհանդեցնի նրան, որ Դուք կզրկվեք ներկա պաշտոնից»[3]: Բայց դրանք Աբովյանին քիչ են մտահոգել: Ընդհակառակը, 1848 թ. հունվարի 19-ին ինքն է բողոքում նման խոչընդոտների դեմ և դրավոր հրաժարական մատուցում[4], որը, բնականաբար, չի ընդունվում: Այն օրերին հեշտ չէր գտնել մեկին, որը համաձայներ ուսուցչության մեկնել Երևանի նման մի խուլ ծայրագավառ:

Աբովյանի հանրային ողջ գործունեության և ստեղծագործության միջով, որպես անխախտ համոզում, անցնում է ռուսասիրության վեհ գաղափարը, որ Թումանյանի բնորոշմամբ՝ հաճախ հասնում էր մոլեռանդության: Նա ռուսական տերության հեղինակության էր բարձրացնում Արևելքում՝ դառնալով ռուս լեզվի ու մշակույթի հետևողական պրոպագանդիստը Անդրկովկասի ժողովուրդների շրջանում: Նրա մշտական հորդորն ու պատգամն էր իր հայրենակիցներին՝ սիրել ռուսներին ու Ռուսաստանը, ցույց տալ պետական հավատարմություն, ռուսաց լեզուն ամենից բարձր դասել և սովորել այն, որովհետև հայ ժողովուրդն իր դոյության ու փրկության համար պարսկաթուրքական լծից՝ նրանց է պարտական: Ռուսները վերակենդանացրին հայությանը, «Ռուսք Հայաստան կանգնացրին ու ասիացվոց բիրտ, դաղան ազգերին մարդասիրություն ու նոր հոգի տվին... Հայք ե՞րբ կարեն ռուսաց արածը մոռանալ, քանի որ չունչ ունին» («Վերք Հայաստանի»):

Ենթադրել, թե Աբովյանն այդպես դրում էր, քարոզում, բայց գաղտնի, բոլորից թաքուն, առանց իր մտքերը ուրիշների հետ կիսելու՝ հակառակը մտածում, լուրջ չէր լինի: Աբովյանի անկեղծությունը և անմիջականությունը կասկածի առարկա կամ վիճարկման խնդիր չեն կարող լինել երբեք: Ասել, որ այսպիսի մեկին կարող էին պատժել, անընդունելի միամտություն կլիներ:

---

[3] ՀԱ, ֆ. 1, ց. 1, գ. 1722, թ. 55ա:

[4] Ա № 509, էջ 3 (նաև՝ Դ I, 221):

Այսպիսին էր Աբովյանի անհետացման անլուծելի առեղծվածի վիճակը մինչև այժմ:

Վերջերս Աբովյանի կորստյան առեղծվածի լուծման փորձով ու «Հայտնագործություններով» հանդես եկան գրականագետ Նշան Մուրադյանը («Գրական թերթ», 26. IX. 1975) և պատմական գիտությունների թեկնածու Վ. Ղազարյանը («Գրական թերթ», 24. IX. 1976): Խմբագրությունը, առանձին կարևորություն տալով, այդ հոդվածները հրատարակել է «Պրպտումներ, վարկածներ, հայտնագործություններ» բաժնում: Սկզբում տպագրվեցին Նշան Մուրադյանի կոմենտարները, ապա հանդես եկավ «հայտնագործության» հեղինակը: Մարդիկ անակնկալի եկան, կարծելով՝ Ամերիկա է հայտնագործվել, մինչդեռ, իրականում, ոչ մի հայտնություն էլ չկա, մեջտեղ է քաշվել Աբովյանի կորստյան հին վարկածներից մեկը, որը քննարկվել ու մերժվել էր ավելի քան քառասուն տարի առաջ:

Երբ մարդ վճռում է հարություն տալ որևէ հին վարկածի, պարտավոր է մեծագույն զգուշությամբ վարվել փաստերի հետ, չանտեսել հակառակ վարկածի օգտին խոսող նյութերը, կրկին ու կրկին ստուգել իրեն, սխալներ ու կեղծիքներ թույլ չտալ, առավել ևս Աբովյանի մահվան առեղծվածը լուծել ցանկացողը. նրանից պահանջվում է անկանխակալություն և հայ մեծ դրողի կյանքի ու հայացքների ճիշտ լուսաբանում: Նա պարտավոր է հաշվի առնել, որ Աբովյանը, լինելով որոշակի հասարակական-քաղաքական իրադրությունների ծնունդ, նաև մարդ էր, ուներ իր համակրանքներն ու հակակրանքները, սերերն ու հիասթափությունները, ոգևորություններն ու մոլորությունները, իր լուսավոր և սևերոտ կողմերը և բնավ պարտավոր չէր մերօրյա չափանիշներով վիճաբանել կամ դատաստեսել:

Արդյոք այդպե՞ս են վարվել Վ. Ղազարյանը և նրա «հայտնագործության» մեկնաբան Նշան Մուրադյանը: Ո՛չ: Անտեսելով անառարկելի փաստերը՝ նրանք, Ն. Մուրադյանի ասելով, «հետևել են անշուք թվացող փաստերի տրամաբանությանը» («Գրական թերթ», 26. IX. 1975), պարզ իրողություններին ցանկալի ընթացք տվել, հանդես բերել մի տենդագին ձգտում՝ ամեն դնով համոզել ընթերցողին, թե Աբովյանն, իբր, որպես քաղաքական հանցագործ և հակապետական, հակառուսական գործիչ, գաղտնի աքսորվել է Սիբիր: Այս ձգտումը շատ է հիշեցնում ժողովրդական երգի պարզամիտ հերոսի մտածելակերպը, որը կորցնելով այլոց լսելու և հասկանալու ընդունակությունը՝ օդերևն ամրոցներ է կառուցում ու նաև զարմանում, որ կարող են իրեն առարկել.

Սաթո՛, թե որ դու ինձ չէիր առնի,
Ինչի՞ ես ձեր դռնով անցա,
Դու լվացք կէնեիր, քո սապոն փրփրավ.
Սաթո՛, քեզ առնելու հատուկ նպատակ ունեմ...

Երևութական «հայանագործություններ» անողների ճախողման պատճառը հենց այս «հատուկ նպատակի» մեջ պիտի որոնել, նպատակ, որը նրանք խնամքով թաքցնում են: Վ. Ղազարյանի «պրպտումների» մեջ շատ մութ բաներ կան: Ն. Մուրադյանի օգնությամբ նա նախ՝ այդ «հատուկ նպատակն» է «ճևակերպել», հետո միայն «ապացույցներ» որոնել իրեն մատչելի վավերագրերի մեջ՝ մեծ մասամբ ապացույցների պատրանք ստեղծելով լոկ և չխորշելով, անգամ, դատապարտելի մեթոդներից:

*Որպեսզի իրեն միանգամայն ազատ զգա, Ն. Մուրադյանը, Վ. Ղազարյանի հետ համաձայնած կազմած, հայտարարում է, թե Աբովյանի անհետացման հարցին վերաբերող **«վավերագրերը թաքցված, ապա ոչնչացված են եղել գերագույն զգուշությամբ»**, որ, իբր, **«արխիվներից ոչնչացվել են գործի գաղտնելիությունը բացահայտող բոլոր փաստաթղթերը»**, և, իբրև ապացույց, նշում «Երրորդ բաժանմունքում Աբովյանի դեմ կազմված, նրա անհետացման և թուրքեստանովի նշանակման 105 թերթանոց, Աբովյանին թոշակ նշանակելու վերաբերյալ գործերը»: («Գրական թերթ», 26. IX. 1975):*

Սա մարդկանց ապակողմնորոշող չէինք ասի՝ կոպիտ սխալ, այլ առնվազն անլուրջ հայտարարություն է, քանի որ Աբովյանի անհետացման վերաբերյալ Երրորդ բաժանմունքում ո՛չ մի գործ չի՛ կազմվել, ուր թե այդ գործը 105 թերթ ունենար կամ ոչնչացվեր, և հետո՝ Աբովյանի ժառանգներին թոշակ տալու շուրջ կազմված գործերից առայժմ հայտնաբերված են երկուքը և դանազան այլ վավերագրեր, որոնք լիակատար պատկերացում են տալիս տվյալ հարցի ընթացքի և լուծման մասին. երկուսը՝ Երևանում, մեկը՝ Ս. Պետերբուրգում, վավերագրերը՝ Գրականության և արվեստի թանգարանում:

Արխիվներում որոնումներ կատարած ամեն ոք շատ լավ գիտեն, որ երբ գործը մի հաստատության համար ավելորդ էր դառնում, մյուսում, որն հարուցում էր խնդիրը, շարունակվում էր պահվել: Ոչնչացված նյութերը, սովորաբար, իրենց կրկնօրինակներն ու պատճեններն էին ունենում: Աբովյանի անհետացմանը վերաբերող նյութերի այն մասը, որ Անդրկովկասյան գլխավոր վերատեսչության դիվանում էր պահվում և հետո ավելորդ է դիտվել, չնորհիվ կրկնօրինակների, պահվել և այժմ էլ պահվում է ՀՀ Պետարխիվում:

Կորուստն, այսպիսով, չատ մեծ չէ: Թիֆլիսի արխիվների հետ կապված նման մի հարց՝ ճիշտ 105 թերթանոց մի գործի կորուստ, երեսուն տարի առաջ պարզել է հանգուցյալ պրոֆեսոր Լևոն Մելիքսեթ-Բեկը (ի դեպ, այս գյուտն իրեն է վերագրել Վ. Ղազարյանը իր նախորդ հոդվածներում)[5]: Հին օրերում, նաև այժմ, եթե մեկը փորձեր որևէ նյութի հետքերը պետական արխիվներում կորցնել, ապա կճախողվեր, որովհետև դրա համար բազմաթիվ մարդկանց տևական ջանքերը կպահանջվեին: Պետք է աննկատելիորեն ջնջվեին և նորից-նոր արտագրվեին տվյալ հաստատությունն ուղարկված կամ այնտեղից ուրիշ տեղեր առաքված այդ ու հետագա բոլոր գրությունների հիմնական, գործավարական և արխիվային համարները, նույն բանը պիտի կատարվեր այն բոլոր քաղաքների ու հիմնարկների դիվաններում, որտեղից ուղարկվել կամ որտեղ ստացվել էին տվյալ գրություններն ու հրահանգները և այլն, և այլն:

Եթե այսօրվա ուսումնասիրողն իր ենթադրած, ավելի չուտ՝ ցանկացած նյութերը չի կարողանում գտնել, դա դեռ չի նշանակում, թե դրանք եղել և միտումնավոր ոչնչացվել են, այլ նշանակում է, որ կամ նման բան չի եղել, կամ էլ դեռ չի գտնվել: Ն. Մուրադյանը և Վ. Ղազարյանը չպետք է մոռանային, որ Աբովյանին վերաբերող չատ կարևոր մի գործ, որ գնված է եղել Երևանի նահանգային դիվանի աշխատակիցներից, 1917 թ. ոչնչացրել են Ալեքսանդրապոլի բախկալները՝ չուկայում իրենց ապրանքը փաթաթելով, որի մասին վկայել է Աբովյանի թոռը մամուլում[6]:

Ենթադրությունն ու ճշմարտությունը միշտ չէ, որ համընկնում են, և ճշմարիտ բանասերն իրավունք չունի մոռանալու այս:

Նշան Մուրադյանը «մեկնաբանելով» Վ. Ղազարյանին, հայտարարում է, թե, իբր, «Կովկասյան բարձրադիր իշխանությունները Աբովյանին մեկուսացնելու ուղիներ են մշակել», իբր թե գոյություն է ունեցել «Աբովյան օպերացիա»: Սա հիմքից զուրկ, թյուր ու մտացածին հայտարարություն է, որը ոչնչով չի փաստարկվում ու չի էլ կարելի: Ընդհակառակը, Կովկասի բարձրագույն իշխանությունները Աբովյանին չատ բարձր էին գնահատում և, սովորաբար, նրան էին հանձնարարում Անդրկովկաս ժամանած օտարերկրացիներին առաջ-

---

5 Լ. Մելիքսեթ-Բեկ, Նոր նյութեր Խ. Աբովյանի մասին (ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, № 9, էջ 33), Վ. Ղազարյան, Խաչատուր Աբովյանի «Դարձը» («Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 3, էջ 42):

6 «Լրմիաժին», 1948, № 5–6, էջ 43:

նորդելու պարտականությունը, այն դնելքում, երբ օտարերկրացիները միշտ էլ ենթակա էին հսկողության: Եթե մեր «դյուտարարների» պես պատելու լիներնք, ուրեմն՝ Աբովյա՞նն էր հսկում նրանց...

Այնուհետև հայտարարվում է, որ, իբր, «1848 թ. հունվարի 11-ին Աբովյանը... պաշտոնապես համարվում է ծառայության իրավունքը կորցրած աստիճանավոր»: Նորից անճշտություն, քանի որ պլրոցական իշխանությունները դրանից հետո Աբովյանին չէին ատեստավորի որպես ընդունակ ու արժանի տեսուչ և ուսուցիչ («аттестовался способным и достойным»)[7]: Այս մասին, սակայն, քիչ հետո:

Հայտարարվում է նաև, թե իբրև, 1848 թ. մարտի 30-ին ժամանելով Երևան, Թուրքեստանովը «Աբովյանին կալանքի է ենթարկում իր բնակարանում՝ կարգադրելով լրել և սպասել»: Եթե դա ճիշտ է, ապա իր բնակարանում կալանավորված Աբովյանն ինչպե՞ս էր պլրոցական դուքսն ու գործերը հանձնում, ինչպե՞ս էր, որ կինն այդ չէր հասկանում: Եթե կալանավորված Աբովյանին հսկել են ոստիկանները, այդ չէր կարող չնկատվել, իսկ եթե Թուրքեստանովը սոսկ սատակ է, չէ՞ որ Աբովյանը հենց մարտի 30-ի դիշերը կարող էր ատնից վախչել...

Իրենց «պլրտուտմների» ու «Հայտնագործությունների» ընթացքում Ն. Մուրատյանն ու Վ. Ղազարյանն, իբր, պարզել են, թե 1843 թ. Աբովյանի՝ «Թիֆլիսից Երևան փոխադրումը եղել է ներքին գործերի մինիստրի գաղտնի նախադծով սահմանված» պատիժ («Գրական թերթ», 26. IX. 1975)՝ մոռանալով հարցնել, թե Աբովյանն ինքն ի՞նչ կարծիքի է եղել: Չէ՞ որ նա պարզ դրել է, թե Երևան է փոխադրվել, որպեսզի «գոնե հոգևկան հանգիստ գտնի», որովհետև պաշտոնակիցները խանգարում էին նրա մատնավոր գլրոցի անկաշկանդ գործունեությանը, նաև հայտարարել. «Իմ յոթնամյա ծառայությունը Թիֆլիսում, իշխանության աչքի առաջ, չնայելով անընդհատ հարձակումներին և մի քանի ծառայակիցներիս անբարյացակամ վերաբերմունքին, որոնք զինվել էին իմ դեմ իրենց բոլոր զորությամբ՝ անձնական հաշիվներից դրդված, և իմ անշահասեր աշխատանքներն ու իմ նուանդագին ցանկությունը՝ օգտակար լինել գոնե իմ հայրենակիցներին հայկական Կովկասի, անբասիր են կացուցել ինձ ինչպես մեր ծավոր, նույնպես և բարձր իշխանության առաջ»[8]: Ինչպե՞ս կարելի է անտեսել Երևան փոխադրվելու մյուս չարժառիթները, որոնցից ամենավճռականը Ներսես Աշտարակեցու կաթոլիկոս ընտրվելն էր (1843 թ. ամառը): Այդ իրադարձությամբ խանդավառված՝ Աբովյանը

---

[7] ԼՄ, ֆ. 733, ց. 82, գ. 270:

[8] Դ I, 145:

կարծում էր, թե Աչտարակեցու հովանու տակ ու նրա աջակցությամբ, ի վերջո, պիտի կարողանա մարմին տալ իր նվիրական երազանքներին և հիմքից սկսելով՝ բաղձալի ավարտի հասցնել լուսավորության շենքը, որ արմատապես պիտի հեղաշրջեր ազգի տնտեսական ու հոգևոր կյանքի պայմանները՝ սկիզբ դնելով նոր վերածնության: Նա որոշում է անգամ թողնել ընտանիքը և աշակերտների հետ վանք վերադառնալ: Իր իսկ խոստովանությամբ՝ նա ո՛չ թե չտասում, այլ սուրում, թռչում է դեպի Երևան. «...Ընդոտն հարեալ զաչխարհս տարածիք՝ առ մայրն հաւատոյ դիմեցի ուխտիւ սրբութեան... աղբեր լուսոյ տանս Թորգոմեան: Ասեմ՝ դիմեցի, բայց սխալիմ յոյժ, թևեցի...»[9]:

Ի լրումն այդ ամենի, նշենք նաև, որ 1843 թ. գարնանը կազմված տարեկան հաշվետվության մեջ, որ ներկայացվել է լուսավորության մինիստրին, Աբովյանի ղեկավարած Թիֆլիսի գավառական ուսումնարանը համարվել է լավագույններից մեկը[10]: Աբովյանի խոսքն այդ ժամանակ այնքան կշիռ ուներ, որ Անդրկովկասի գլխավոր կառավարիչ Նայդհարդը, հարգելով նրա միջնորդությունը, որոշում է օգնություն ցույց տալ 1840 թ. երկրաշարժից կործանված Ակոռի դյուղի բնակիչներին[11]: Մորից Վագները, որ Աբովյանի բարեկամներից էր, ողջունել է նրա նշանակումը: Իր դրքում քննադատելով հանդերձ ռուսական նոր վարչակարգը Հայաստանում՝ Աբովյանի Երևան փոխադրվելը համարել է ուրախալի: «Անդրկովկասը թողնելուցս քիչ առաջ– դրել է Մ. Վադները– ուրախությամբ իմացա, որ պարոն Աբովյանը նշանակվել է իր հայրենի քաղաքի՝ Երևանի դավառական դպրոցի տեսուչ: Այնպիսի խոր դիտելիքների և առաքինության տեր մարդուն, ինչպես նա է, իր բոլոր, հարուստ ուժերը հայրենի պատանեկության նվիրաբերելու՝ այսօրինակ աղնիվ ձգտում ունեցողին, այսպիսի ջերմ հայրենասերին, որը խորին երախտագիտությամբ է լցված հանդեպ իր կայսրն ու նվիրված է նրան, որովհետև վերջինս նրա մեծագույն բարերարն է դարձել՝ միջոցներ տրամադրելով, որպեսզի նա ցանկություններն ու իղձերը իրականացնելու նպատակով դերմանական կրթություն ստանար Դորպատում, այսպիսի բացառիկ և, միաժամանակ, անանձնական մարդուն պետք է որ, հենց երկրամասի իրական չահերից ելնելով, գործունեության լայն ասպարեզ տրամադրվեր: Այնուամենայնիվ,

---

9 ԵՀ, 295:

10 ԼԱ, ֆ. 733, գ. 969, թ. 18ա:

11 Պ. Հակոբյան, Անծանոթ էջեր Խ. Աբովյանի կյանքից ու գործունեությունից (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 10, էջ 78–85):

գերմանական ոգու, գերմանական առաքինությունների այդ քաջարի սերմանողը, մինչև իսկ իր ներկա, բավականաչափ անճոռնի պայմաններում, ոչնչի առջև կանգ չի առնում, որպեսզի իր հայրենի քաղաքի անուշադրության մատնված երիտասարդության մեջ ցանի սքանչելի հույսերի և գեղեցիկ հաջողությունների բազում արգասավոր սերմեր»[12]*: Ե՞րբ է պատահել, որ պատիժը ուրախություն համարեն:*

Նոր «հայտնագործության» ամենամեծ անակնկալը, սակայն, Ներսես Աշտարակեցուն «դիմակազերծելու» անհասկանալի ձգտումն է: Նշան Մուրադյանը և Վ. Ղազարյանը՝ մոռացած խիղճ ու հոգի, դրում են, թե Աշտարակեցու կողմից Աբովյանին Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում աշխատանք տալը կանխամտածված կեղծիք է եղել, որպեսզի ցարիզմը կարողանար նրան գողանալ: Ն. Մուրադյանը գրում է. «...մնջտեղ է նետվում կաթողիկոսի կեղծ հրավերը. չէ՞ որ դժվար չէր պատճառաբանել Երևանից Թիֆլիս ընկած ճանապարհին անհայտանալը...» («Գրական թերթ», 26. IX. 1975): Այսպես կարող են գրել միայն արկածային վեպերում: Ինչպե՞ս կարելի է հնչեղ ու հանդիսավոր մեղադրել մի մարդու, որը պաշտելի անձ էր հայ ժողովրդի և Աբովյանի համար: Նրանք պիտի հասկանային, որ եթե Աբովյանն իսկապես վտանգավոր քաղաքական հանցագործ լիներ, ապա ցարական կառավարության համար դժվարություն չպիտի ներկայացներ նրան մեջտեղից վերացնելը, այն էլ՝ խուլ Երևանում, ուր բազմաթիվ էին չպարզված սպանությունները, որոնցից Աբովյանն էս սարսափած էր (ապացույց՝ նրա «Սոնա» պոեմը):

Որպեսզի մեկընդմիշտ պարզ դառնա, որ Ներսիսյան դպրոցում Աբովյանին աշխատանք տալը հանրահայտ ու անվիճելի իրողություն էր և ո՛չ կեղծիք, ինչպես այժմ հայտարարում են Նշան Մուրադյանն ու Վ. Ղազարյանը, վերհիշենք մի քանի փաստ: Արդեն 1848 թ. հունվարի 5–19-ը անցկացնելով Թիֆլիսում՝ Աբովյանը հանդիպել էր Ներսես Աշտարակեցուն, տեղեկացել նրա պիտավորությանը, որ իրեն է վստահելու դպրոցի տեսչությունը, և նույն օրերին այդ մասին պաշտոնապես զեկուցել Անդրկովկասի ուսումնական մասի կառավարչին և դպրոցների վերատեսչությանը[13]*:*

---

[12] M. Wagner, Reise nach dem Ararat, Stutgartt und Tübingen, 1848, S. 85.

[13] *«Գործ», 1917, № 7–8, էջ 60: «Այս ձմեռ, Թիֆլիսում նստած ժամանակ, ես պատիվ ունեցա ինչպես նորին գերազանցության ուսումնարանական մասի պ. կառավարչին, այնպես էլ Ձերդ բարձննդության զեկուցել հայոց կաթողիկոսի մտադրությունը՝ պաշտոն տալ ինձ Թիֆլիսի հայոց սեմինարիայում»: Աբովյանը Թիֆլիսում եղել է 1848 թ. հունվարի 5–19-ը:*

Երևան վերադառնալուց հետո, փետրվարի 4-ին, Աբովյանը հատուկ նամակ է գրում Հովսեփ քահանա Օրբելուն և խնդրում իմանալ ու հայտնել, թե կաթողիկոսն ի՞նչ կարգադրություն է արել իր վերաբերյալ[14]: Փետրվարի 6-ին Աբովյանի սիրելի աշակերտ Գ. Գեղամյանը Թիֆլիսից նրան գրում էր. «Աչակերտք, թե՛ դիմնազիայի և թե՛ այլ ուսումնարանաց, գլխները բարձրացրել են և անհամբեր ձեր գալստյանն են սպասում, որ իսկույն գան ձեզ մոտ»[15]: Փետրվարի 21-ին Ներսես Աշտարակեցու հանձնարարությամբ՝ Աբովյանին Թիֆլիս է հրավիրում կարապետ Շահնազարյանը՝ «առ ի կատար ածել հասուցանել զհայկական մանկունս յուսմունս կարևորագոյնս»[16]: Փետրվարի 27-ին Գ. Գեղամյանը Թիֆլիսից գրում է Աբովյանին. «Պարոն Առվանովիցն իմացա, թե կաթողիկոսն ձեզ գրել է գալ»[17]: Մարտի 3-ին Ներսես Աշտարակեցին պաշտոնապես, № 75 կոնդակով, դիմում է ուսումնական մասի կառավարիչ Սեմյոնովին՝ ազատել Աբովյանին ներկա աշխատանքից և ուղարկել իր տրամադրության տակ[18]: Մարտի 6-ին, կաթողիկոսի հրավերն ստանալուց և վերջնական վճիռ կայացնելուց հետո, Աբովյանը հույժ կարևոր զեկույցով խնդրում է դպրոցների վերատեսչին՝ արձակել իրեն ուսումնարանական գերատեսչությունից և տեղը նշանակել ուրիշին[19]: Մարտի 9-ին ուսումնական մասի կառավարիչ Սեմյոնովը Ներսես Աշտարակեցու հարգարժան միջնորդագրի հիման վրա կարգադրում է՝ ազատել Աբովյանին իր ներկա պաշտոնից և ուղարկել կաթողիկոսի տրամադրության տակ: Այդ մասին հատուկ գրությամբ (անտիպ) ծանուցվում է Ներսես Աշտարակեցուն (№ 215)[20]: Մարտի 11-ին վերատեսուչն հաղորդում է Աբովյանին, որ «արձակվում եք **ձեր վարած պաշտոնից և ուսումնարանական գերատեսչության ծառայությունից՝ հայոց հոգևոր դպրոցը մտնելու համար»** [21]: Մարտի 15-ին Աբովյանն ստանում է իր ազատման հրամանը (մակագրություն իր ձեռքով): Մարտի 30-ին Թուրքեստանովը, որ ժամանակավորապես փոխա-

---

14 Դ II, *184:*

15 Նույն տեղում:

16 Դ I, *222:*

17 Ա № *251:*

18 Այդ մասին հիշատակությունը տե՛ս Մատ., կԴ № *126/399, թ. 18:*

19 «Գործ», *1917, № 7–8, էջ 60–61:* Բնագիրը՝ ՀԱ, ֆ. *1, գ. 1726, թ. 30:*

20 Մատ., նշվ. վավերագիրը:

21 «Գործ», *էջ 61:* Բնագիրը՝ ՀԱ, ֆ. *1, գ. 1726, թ. 31–32:*

բինելու էր Աբովյանին, ժամանում է Երևան: Աբովյանն սկսում է հանձնել գործերը[22]*: Կնոջ վկայությամբ՝ Աբովյանն ասել է, թե ցավում է, որ որոշել է փոխել աշխատանքի բնույթը*[23]*: Ապրիլի 8-ին Երևանի գավառապետը հաղորդում է Թիֆլիս, կաթողիկոսին, որ Աբովյանը* «На рассвете 2 апреля со своей квартиры неизвестно куда отлучился и до сего времени, при всех принятых мерах к розысканию, нигде никаких следов об нем не открыто. Он, по объяснению его домашних, за три дня до отлучки впал в задумчивость, почти не употреблял никакой пищи, мало говорил, не раздевался и, по-видимому, страдал бессонницею; уходя, он взял только на себя, кроме бывшего на нем платья, шинель и обыкновенную фуражку» *(«Ապրիլի 2-ի վաղ առավոտյան իր բնակարանից հայտնի չէ ո՞ւր է հեռացել և, մինչև սույն պահը, հակառակ ձեռնարկված որոնման բոլոր փորձերի, ոչ մի տեղ նրանից որևէ հետք չի գտնվել: Նա, իր տանեցիների ասելով, հեռանալուց երեք օր առաջ ընկել է մտածմունքի մեջ, համարյա թե որևէ սնունդ չի օգտագործել, քիչ է խոսել, չի հանվել և, ըստ երևույթին, տառապել է անքնությամբ. հեռանալիս՝ բացի հագած չորերից, վրան է առել միայն չինելը և ծածկել սովորական գլխարկը»*[24]*):*

Ապրիլի 14-ին այս նույն լուրը Ներսես Աշտարակեցուն հաղորդում է ուսումնական մասի կառավարիչը՝ ավելացնելով որ Երևանի քաղաքային ոստիկանությունը հետաքննում է Աբովյանի անհետացման հանգամանքները[25]*: Երկու դրությունները էլ Ներսես Աշտարակեցին ստանում է ապրիլի 15-ին և սպասում քննության արդյունքներին*[26]*:*

Սրանք են իրական փաստերը, որոնց մեջ կասկածելի ոչինչ չկա: Ներսիսյան դպրոցում աշխատանքի անցնելը Աբովյանի և Ներսես Աշտարակեցու երկուստեք բուռն ցանկությունն էր: Այդ որոշված էր դեռ 1847 թ. ամառը, և Աբովյանի գործընկերներն էին լինելու Ստ. Նազարյանցը և Մ. Էմինը: Ներսես Աշտարակեցին նրան կնշդծ հրավեր չի ուղղել, ընդհակառակը՝ Աբովյանն է որոշ երկընտրանք ապրել: Ավելին՝ նա հետագայում հոգ է տարել Աբովյանի անօգնական ընտանիքի նկատմամբ՝ 1850 թ. գրելով Լազարյաններին. «Ալովեանն

---

22 *Նույն տեղում, էջ 61:*

23 *Բնագիրը՝ Ա № 593: Թարգմանությունը՝ Դ II, 267:*

24 *Մատ., ԿԴ № 126/399, թ. 21:*

25 *Նույն տեղում, թ. 22:*

26 *Նույն տեղում, թ. 21 և 22, մակագրություններ:*

անյայտացաւ ամենևին առանց հետոց, և Վարդան որդի նորայ 10 ամաց և Զարման դուստր նորա եօթն ամաց մնացին որբք, մայր նոցա թախանձեալ զմեզ՝ խոստացաք վասն որդւոյն նորա խնդրել Ձեզ և վասն դստերն խնդրել... կնէյնայ Վօրօնցովին՝ ընկալնուլ իւր ինստիտուտ»[27]*: Կան և ուրիշ վավերագրեր, որ ավելորդ ենք համարում հիշել: Ներսես Աշտարակեցին ո՛չ մի գաղտնի նամակ չի գրել Աբովյանի մասին: Կեղծիք է՝ «1848 թ. մարտի 3-ին կառավարչապետին հղած՝ Ներսես Աշտարակեցու գրությունը «անհանդիստ Աբովյանի մասին», որ «վկայակոչում է» Վ. Ղազարյանը («Գրական թերթ», 24. IX. 1976): Այդպիսի նամակ գոյություն չունի: Այն Վ. Ղազարյանն է հորինել:*

Եթե կաթողիկոսն ուզենար կործանել Աբովյանին, ապա այդ չատ ավելի վաղ կարող էր անել. 1847 թ. հունիսին հայ մամուլը դատաստան էր պահանջում Աբովյանի դեմ, որը Արարատյան վերելքներով «պղծել» էր ազգային սրբություններ. չանցած մի ամիս՝ բողոքում են Աբովյանի բարոյական նկարագրի դեմ՝ վերագրելով նրան այնպիսի արատներ, որոնք ենթակա էին մեկուսացման և Սիբիր աքսորվելու: Ներսես Աշտարակեցին անտեսում է այդ հրեշավոր զրպարտանքները, քանի որ լավ գիտեր, թե դրանք ի՛նչ անմաքուր աղբյուրից էին ծագում և ի՛նչ հեռագնաց նպատակ ունեին: Ներսիսյան դպրոցի նոր տեսչի խնդիրն էր մեջտեղում, որ արդեն այդ ժամանակ հետատես ու մեծ հայրենասեր Ներսես Աշտարակեցին վճռել էր վստահել Աբովյանին:

«Հայտնագործության» հետամտողներն ավելի են առաջ անցել և իրենց կարծիքով՝ հանցագործներին գտել: Նրանք ասում են. եթե Ներսես Աշտարակեցին, Թուրքեստանովը և Բլավատսկին Աբովյանի անհետացման գլխավոր հանցագործները չեն, ապա ինչո՞ւ են նրանք նույն ապրիլ ամսին փոխարքայի կողմից պարգևատրման ներկայացվել: Ճշդրիտ երևալու համար ավելացնում են նաև, որ փոխարքա Վորոնցովը Թուրքեստանովին, Բլավատսկուն և Ներսես կաթողիկոսին հաջորդաբար պարգևի է ներկայացրել 1848 թ. «ապրիլի 7-ին, 10-ին և 19-ին» («Գրական թերթ», 24. IX. 1976): Բայց չէ՞ որ նման խնդիր մինչև Վորոնցովի կողմից ընթացք ստանալը պետք է նախապատրաստվեր, որի համար կպահանջվեր առնվազն մեկ ամիս, եթե ո՛չ ավելի: Վարկածի հեղինակներն իրենց նեղություն տվե՞լ են պարզել,

---

27 *Վավերագիրը Մոսկվայի արխիվներից հայտնաբերել և քաղվածքը մեզ է տրամադրել բանասեր Գրիգոր Հարությունյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:*

թե հարցն ե՞րբ և ո՞վ է առաջինը հարուցել: Թուրքեստանովը Աբովյանի անհետացման մասին իր վերադասին զեկուցել է ապրիլի 8-ին[28], որը կարող էր այն ստանալ ապրիլի 11-ից ոչ շուտ: Բլավատսկին փոխարքա Վորոնցովին զեկուցել է ապրիլի 26-ին, որ կարող էր ստացվել 29-ից ո՛չ առաջ[29]: Ներսես Աշտարակեցին Աբովյանի անհետացման մասին լուր է ստացել ապրիլի 15-ին միայն (կա ստացման մասին Աշտարակեցու նշումը): Վորոնցովը, գոնե, այս դեպքում ճևականություն պետք է պահպաներ և հիշյալ մարդկանց պարզևի ներկայացներ ապրիլի 30-ից ո՛չ առաջ, այսինքն՝ Նշան Մուրադյանի և Վ. Ղազարյանի մատնանշած վերջին ամսաթվից տասն օր հետո միայն:

Վերջապես՝ որոշակի հայտնի է, որ Բլավատսկին պարգևատրվել է 1847 թ. Սարդարապատի ջրանցքը վերականգնելու համար[30], մի սքանչելի ձեռնարկում, որի մասին **գովասանական էջեր է գրել Աբովյանն** իր «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» երկում, որը, չգիտես ինչու, մոռացել են: Աբովյանն ու Բլավատսկին, չնայած երբեմնի պժտություններին, 1847–1848 թթ. հաշտ ու մտերիմ էին. միասին ճամփորդել էին դեպի Անի, երկուսով վեճի մտել և գրազ բռնել Երևանի փոստապետ Քալանթարյանի հետ և հերքելու համար Արարատի գագաթը բարձրանալու անկարելիության չուրջ պտտվող դարավոր առասպելն ու բամբասանքները՝ վճռել 1848 թ. ամառը միասին բարձրանալ Արարատի գագաթը[31]: Մի՞թե Աբովյանն այնքան միամիտ էր, որ չկարողանար թշնամուն բարեկամից զատել և նրան փառաբաններ:

Հոդվածագիրներին միանգամայն անծանոթ է Թուրքեստանովի անձնավորությունը. ի՞նչ հիմունքով են ցեխ շպրտում նրա վրա, երբ վերջինս իր զեկուցագրերում Աբովյանի մասին միայն լավն է գրել, անգամ հարց բարձրացրել, որ նրա կնոջը վճարվի հավելյալ օրերի (մարտի 11–29-ի) համար ամուսնու աշխատավարձը: Թուրքեստանովը վրացի երիտասարդ էր, ավարտել էր Թիֆլիսի դիմնազիան, հաճախ էր

---

28 «Դործ», 1917, № 7–8, էջ 62:

29 «Акты, собранные Кавказскою археографическою комиссиею» (Акты), т. X, стр. 830. «Արձագանք», 1894, № 123 (մեջ է բերված Աղ. Երիցյանցի հոդվածում): Դավառապետի դրության ամսաթիվը հիշում է միայն Աղ. Երիցյանցը՝ իր դույզ հոդվածներում, և երկու դեպքում էլ տարբեր. մեկ ապրիլի 20-ին և մեկ էլ 26-ին: Մենք նախապատվությունը տվել ենք վերջինին, որն ընդունել են և ուրիշները:

30 ԼԱ, ֆ. 1268, ց. 2, գ. 923:

31 Դ II, 188–190:

վերատեսչության հանձնարարությամբ փոխարինում այս կամ այն ուսուցչին ու տեսչին, աշակերտներ տանում Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանները և այլն: Նրան օրենքով երեք տարին մեկ հասնում էր աստիճան:

Վերջապես՝ Վորոնցովն ու կինը լավ էին վերաբերվում Աբովյանին, 1848 թ. հունվարի 15–16-ին Աբովյանն ընդունելության էր արժանացել նրանց կողմից և առաջարկություն ստացել դառնալու Տիղիսի Նունեյան դպրոցի տեսուչ, մի հաստատության, որի հովանավորը Վորոնցովի կինն էր[32]: Քաղաքական հանցագործին մի՞թե նրանք այդպիսի պատվաբեր առաջարկ կանեին: Այս բոլորի համար վավերագրեր կան, որոնք անկարելի է մոռացության մատնել:

Աբովյանն ունեցել է դաղափարական հակառակորդներ և առնչես բարեկամներ և՛ հայերից, և՛ մեծապետական չովինիստներից: Դրանց բոլորի անունները մեզ հայտնի են. Արզանյանց եղբայրներ, Առաքել Արարատյան, Բոգդան Արարատսկի, Խաչատուր Մարդանյան, Սերովբե Կարնեցի, Հովսեփ Տեր-Մարուքյան, Կարապետ Բագրատունի, Կարապետ Շահնազարյան, Գաբրիել Շադինյան, Ստեփան Մատինյան, ուսուցիչ Ֆիլագելֆին, գնդապետ Տուրչանինով և այլն: Սրանք են թունավորել Աբովյանի կյանքը և մղել հանցափորձության կամ այնպիսի քայլերի, որոնց ընթացքում նա զոհվեց: Աբովյանը խավար ժամանակի զոհ է և ո՛չ մատնության Սիբիր աքսորված քաղաքական հանցագործ, պատասխանատուն՝ հայկական իրականությունը:

Հանգուցյալ ակադեմիկոս և հանրաճանաչ բժիշկ Լևոն Հովհաննիսյանը տարիներ առաջ հանգուցյալ աբովյանագետ Հրայր Մուրադյանին և մեզ պատմել է, որ ինքն երիտասարդ տարիներին հրավիրվել է երևանցի մի մահամերձ հիվանդի մոտ, որը վերջին շնչում խոստովանել է, թե ինքը մասնակցել է Աբովյանի սպանությանն ու թաղմանը: Բայց այդպիսի վկայությանը մենք գիտական արժանապատվություն չենք տալիս: Աբովյանին քաղաքական հանցագործ հռչակելը համազոր է նրան, որ հայ մեծ գրողն ու քաղաքացին վերջին շրջանում փոխել է իր քաղաքական, այսինքն՝ ռուսական կողմնորոշումը, որի համար և ենթարկվել է մի պատժի, որպիսին ցարական բանտերի պատմությունը չի տեսել երբեք:

---

32 Նույն տեղում, էջ 143. «Բարոն Ա. ֆոն Նիկոլայուն պատիվ ունի հայտնելու պարոն Աբովյանին, որ նորին գերազանցություն իշխան Վորոնցովը մեծ ուրախությամբ կընդունի նրան վաղն (այսինքն՝ 1848 թ. հունվարի 16-ին—Պ. Հ.) առավոտյան ժ. 8½ -ին» (ընագիրը ֆրանսերեն է): Գ. Ստեփանյան, Առաքել Արարատյանի երկու ձեռագիր տետրակները (ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. պիտ.), 1948, № 9, էջ 103):

Բայց իսկապե՞ս Աբովյանը քաղաքական հանցագործ էր և որո՞նք են վերոհիշյալ ընկերների պատկերացմամբ՝ նրա ծանրագույն հանցանքները: Հիշենք մեկ առ մեկ Վ. Ղազարյանի «փաստարկները»:

«Հանցանք» I. «Նախաչավիղի» ապօրինի տպագրությունը... կառավարական բարձր մակարդակով քննությունը բացահայտեց հեղինակի դավանած հայացքների վտանգավորությունը և նրա դեմ քաղաքական գործ հարուցվեց» («Գրական թերթ», 26. IX. 1975): Գլխավոր դերը հատկացվում է Բենկենդորֆին:

Սա մտացածին, կեղծ մեղադրանք է և արդյունք տարրական բաներ չիմանալու: Քաղաքական գործերը քննում էր երրորդ բաժանմունքի առաջին «էքսպեդիցիան» և խիստ գաղտնի: Աբովյանի «Նախաչավղի» վերաբերյալ նման բան չի՛ արվել: Այն ապօրինի չի՛ տպագրվել, և դրա համար Աբովյանը երբևէ ո՛չ ոքի կողմից հանդիմանության չի արժանացել: Այդ դասագրքի կազմելը միշտ էլ դիտվել է իբրև ուշագրավ գործ՝ «особый труд», և հիշատակվել Անդրկովկասյան դպրոցների ուսուցիչների կատարած խրախուսելի աշխատանքների մեջ (տե՛ս 1838–1839 թթ. հաշվետվությունները)[33]: «Աբովյանի այդ դիրքը հորինելը ցույց է տալիս նրա դավանի ուսումնասիրությունը և արժանի է խրախուսանաց իբրև առաջին փորձ, վասն զի այսպիսի նորամուծությունքը ամեն անգամ չեն հաջողվում իրանց մայրենի լեզվի նույնիսկ ամենատաղանդավոր հեղափոխողներին»— ասված է այդ դրքի քննության արձանագրության մեջ, 1842 թ.[34]: «Նախաչավղի» դործածության, իբրև դասագիրք, խանգարել են Թիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհուրդը և առաջին հերթին նրա հայ անդամները, որի պատճառները բացատրել է Աբովյանը 1847 թ., երբ անդրադարձել է իր դասագրքերի և «Նախաչավղի» բախտին, որը տասը տարի առաջ տպագրված լինելով՝ «առանց գործածելու... անօգուտ ընկած է հենց միայն նրա՛ համար, որ Թիֆլիսի գիմնազիայի խորհուրդը... չիմանալով ո՛չ հայոց լեզուն և ո՛չ էլ ժողովրդին և հենվելով իրենց գիտնական համարող հայերից ոմանց կարծիքի վրա, մարդիկ, որոնք— նրանց կշտամբելու համար չէ, որ ասում եմ— նոր մանկավարժությունը գիտեն չինացուց ո՛չ լավ, ո՛չ էլ վատ, գիրքը բաց չեն թողնում հենց միայն նրա համար, որ դա գրված է հասարակ ժողովրդին, ընդհանուրին հասկանալի լեզվով... Հանգուցյալ Ֆլիգել-ադյուտանտ կոմս Բենկենդորֆը և ժողովրդական լուսավորության մինիստր պարոն կոմս Ուվարովը այդ աշխատանքների համար ինձ քաջալերեցին, Ս. Պետերբուրգի ակադեմիան ավելի քան լավ գնահատելով՝ հավանություն տվեց, բայց, այնուամենայնիվ, նույն (Թիֆլիսի) գիմնազիայի խորհուրդը չբարեհաճեց գործադրության

---

33 *Լ.Ա., ֆ. 733, ց. 95, գ. 943, թ. 17 և գ. 948, թ. 17բ:*

34 *«Արձագանք», 1896, № 102. Ակ. Երիցյանցի հրապարակումը:*

թուլլատրել միայն նրա՝ համար, որ դրանք իմ աշխատութիւններն էին» [35]:

Աբովյանի դասագրքի խանգարողներն են՝ Արզանյանց Դավիթ, Արարատյան Առաքել, Մարդանյան Խաչատուր, Կարապետ արքեպիսկոպոս: Եթե Աբովյանի դասագիրքն ընդունվեր, գործածությունից կհանվեր Արզանյանցների դասագիրքը, իսկ Արարատյանը, խանգարելով Աբովյանին, ուզում էր սեփական դասագրքի համար ճանապարհ հարթել: Կարապետ արքեպիսկոպոսը դեմ էր աշխարհաբարին և պաշտպանում էր գրաբարի չահերը: Ի՞նչ գործ ունեն այս բոլորի մեջ Երրորդ բաժանմունքը, Բենկենդորֆը, երբ վերջինիս Աբովյանը միշտ էլ իր խրախուսողներից է համարել: Այո, «Նախաշավղի» ձախողումը ճակատագրական դեր է խաղացել Աբովյանի կյանքում, այնքան, որ երբ 1844 թ. սկզբին նրան առաջարկվել է գիրքը վերանայել և տպագրության ներկայացնել, հրաժարվել է, որի պատճառները բնավ էլ քաղաքական չէին:

***«Երրորդ բաժանմունքի պետի կարգադրությամբ... Կովկասից միայն նրա դեմ է «գործ» հարուցվել»** և այլն («Դրական թերթ», 26. IX. 1975), գրելով այս տողերը, արդյոք մտածե՞լ է հոդվածագիրը, թե ինչպես է ապակողմնորոշում ընթերցողին: Մի՞թե Ն. Մուրադյանն ու Վ. Ղազարյանը ծանոթ չեն դասագրքերի տպագրման կարգին: Անդրկովկասում: Գրքերն այստեղ տպագրվում էին կա՛մ հեղինակների միջոցներով, կա՛մ որևէ բարերարի օժանդակությամբ և կա՛մ էլ՝ իշխանությունից փոխարինաբար ստացած գրամով, որ ժամանակի ընթացքում վերադարձվում էր: Իր գրքի ծախքերը Աբովյանն ինքն էր հոգացել և պարտքի տակ ընկել: Իսկ տպագրման թուլլտվությունը տեղի դպրոցների վերատեսուչ Հասսենմյուլլերն էր տվել 1838 թ., որը, սակայն, 1839 թ. սկզբին բանտարկվում է, որովհետև թղթախաղի և այլ մոլությունների ընթացքում վաճառել էր իր տրամադրության տակ դրված պետական դումարները՝ 50000 ռուբլի, որով դպրոցներ պիտի կառուցվեին: Այդ գործի համար հարցաքննվել են ուսուցիչներ Ն. Դեմիհովը, Դ. Արզանյանցը, Ի. Շեստոկովը, Վ. Ֆիլիպևը, Ա. Ֆիլադելֆինը, Զ. Ղորղանյանը և ուրիշներ: Աբովյանը ո՛չ մի առնչություն չի ունեցել: Պահպանվել են հետաքննության բոլոր նյութերը [36]: Աբովյանը դրանից հետո հարմար է գտել տպագրությունը դադարեցնել և դիմել բարձր իշխանությունների օժանդակությանը: Պետերբուրգի նրա բարեկամները խնդրել են Բենկենդորֆի միջամտությունը, որը և չի ղլացել: Ի դեպ, վերջինս նման միջնորդություն արել է նաև տաղանդավոր նկարիչ Ստեփանոս Ներսիսյանի համար:*

---

35 Ե VII, *195–196:*

36 *Վ.Ա. ֆ. 2, ց. 1, գ. 5253 (հինը՝ 4333) և 5974 (հինը՝ 5260), Լ.Ա, ֆ. 1268, ց. 2, գ. 736 և ֆ. 733, ց. 82, գ. 55 և այլն:*

«Նախաչավղի» մասին չատ փաստաթղթեր են պահպանվել, և դրանցից ո՛չ մեկի մեջ այդ դրքի տպագրության փորձը ապօրինի չի համարվել: Հասսինմյուլլերի անկումից հետո Անդրկովկասյան դպրոցների վիճակն ստուգող կառավարական հատուկ հանձնաժողովի արձանագրության մեջ (1839, հոկտեմբեր) Աբովյանի մասին ասված է. «Հաստիքավոր տեսուչ Խաչատուր Աբովյանը եռանդուն մարդ է և իրեն բացառապես նվիրել է պատանեկության դաստիարակությանը... Նրա ջանքերի շնորհիվ գավառական դպրոցը պահվում է հրաշալի վիճակում»[37]*: Ինչպե՞ս կարող էր այս տողերը գրողը, որ լուսավորության մինիստրության ղեկավարներից մեկն էր՝ Պ. Գաևսկին, քաղաքական հանցագործին նման գնահատական տալ և անտեսել նրա ապօրինի գործերը:*

Բայց ինչի՞ց են իրենց դլուխը կորցրել մեր հեղինակները, որոնք, ի դեպ, Աբովյանի երկերը և նրա մասին եղած նյութերը կարդալու նոր «մեթոդ» են «հայտնագործել»: Ամեն ինչ նրանք հակառակ իմաստով են վերծանում, ինչպես ծուռ հայելիների թաղավորության մեջ, և ուրիշների վաղուց հայտնաբերած և օգտագործած նյութերը դյուտ հռչակում, այդպես և Բենկենդորֆի 1839 թ. հունիսի 13-ի միջնորդությունը Աբովյանի վերաբերյալ[38]*: Թյուրիմացություններից խուսափելու համար այն մեջ ենք բերում ամբողջությամբ.*

Его Высокопревосходительству С. С. Уварову

13 июня 1839. № 2096

Милостивый государь
Сергей Семенович

Армянский дворянин Хачатур Обовьян, сопутствовавший некогда профессору Парроту на вершину горы Арарата и обучавшийся впоследствии с высочайшего соизволения его величества в Дерптском университете, приобрел там все сведения, потребные для первоначального практического образования юношества. Возвратясь на родину, несмотря на выгодное предложение университета, желавшего его оставить учителем восточных языков, он посвятил себя на распространение полезных сведений между туземцами, особенно в отношении промышленности. Занимая

---

37 *ԼԱ, ֆ. 733, ց. 82, գ. 68:*

38 *Նույն տեղում, գ. 42, թ. 51:* Պ. Հակոբյան, *Խաչատուր Աբովյան, էջ 670:*

теперь место учителя в народной школе в Тифлисе, он, по усердию к своему делу, перевел и обработал несколько полезных для юношества сочинений, но не мог еще напечатать их по недостатку средств.

Как он известен привязанностью своею к России и преданностью государю, то я долгом поставляю поручить его милостивому вниманию Вашего высокопревосходительства и покорнейше просить Вас, милостивый государь, доставить ему, буде возможно, средства к изданию полезных его сочинений.

С совершенным почтением и преданностью честь имею быть

Вашего высокопревосходительства
покорнейший слуга
Граф Бенкендорф

Բերե՛նք և այդ կարևոր վավերագրի հայերեն, հարազատ թարգմանությունը.

Նորին բարձր գերազանցություն Ս. Ս. Ուվարովին
13 հունիսի 1839, № 2096

Ողորմած Տե՛ր,
Սերգեյ Սեմյոնովիչ.

Հայ ազնվական Խաչատուր Աբովյանը, որ մի ժամանակ ուղեկցել է պրոֆեսոր Պարրոտին դեպի Արարատ լեռան գագաթը և հետագայում, Նորին մեծության բարձրագույն հաճությամբ՝ ուսանել է Դորպատի համալսարանում, ձեռք է բերել այնտեղ պատանեկության նախնական, գործնական կրթության համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Չնայած համալսարանի չահավետ առաջարկին, որը ցանկանում էր պահել նրան որպես արևելյան լեզուների ուսուցիչ, վերադառնալով հայրենիք՝ նա նվիրում է իրեն բնիկների չրջանում, հատկապես արդյունաբերության վերաբերյալ օգտակար գիտելիքներ տարածելուն: Այժմ Տիղիսում, ժողովրդական դպրոցում, զբաղեցնելով ուսուցչի պաշտոն և եռանդով կպչելով իր գործին՝ նա թարգմանել ու մշակել է պատանեկության համար օգտակար մի քանի աշխատություն, սակայն միջոցների բացակայության պատճառով դեռևս չի կարողացել տպագրել:

Որովհետև նա հայտնի է իր անձնվիրությամբ դեպի Ռուսաստանը և նվիրվածությամբ՝ թագավորը, ուստի պարտք եմ դնում Ձեզ վրա՝ առնելու նրան Ձերդ բարձր գերազանցության գթառատ ուշադրու-

թյան տակ, և խոնարհաբար խնդրել Ձեզ, ողորմած տե՛ր, եթե հնարավոր է, միջոցներ տրամադրել նրան՝ հրատարակելու իր օգտակար աշխատությունները:

Ամենայն հարգանքով և նվիրվածությամբ պատիվ ունեմ լինելու
Ձերդ բարձր դերազանցության
ամենախոնարհ ծառա
Կոմս Բենկենդորֆ

III *բաժանմունքի դիվանում (դասիչ՝ ֆ. 109, ցուցակ 69), 1839 թ. մի մատյանում, որ խորագրված է* «По просьбам разных лиц, оставленных без производства» *և որի մեջ գրանցված գործերի մեծագույն մասը հենց* III *բաժանմունքը հետագայում ավելորդ է համարել պահել, իբրև նրա խնդիրներին չառնչվող նյութեր,* № *433-ի տակ հիշվում է «Գործ հայ ազնվական Խաչատուր Աբովյանի աշխատությունների հրատարակությանն օժանդակության ցույց տալու մասին»* («Дело о содействии армянскому дворянину Хачатуру Обовьяну в издании его сочинений»)՝ *բազկացած ընդամենը* ***երեք թերթից****, որոնք պետք է լինեին Բենկենդորֆի վերոհիշյալ միջնորդության սևագրությունը և Ս. Ուվարովից ու Վրաստանի գլխավոր կառավարիչ գեներալ Գոլովինիից նրա ստացած պատասխանները. առաջինը՝ մեկ թերթի վրա, վերջիններըը՝ երկու թերթի: Բենկենդորֆի այս գրությունն Ուվարովն ստացել է հունիսի 14-ին և կարդացրել. «Պահանջել աշխատությունները և հարցնել՝ Աբովյանն ի՞նչ ձևի օգնություն է ցանկանում ստանալ, որի մասին և տեղեկացնել կոմս Բենկենդորֆին»: Պահպանվել են նաև այս գրությունը և մյուս բոլոր նյութերը: Երրորդ բաժանմունքում եղած երեք թերթի կորուստը ոչինչ չի նշանակում, որովհետև նրանց բովանդակությունը պարզ է:*

Այստեղ չկա ո՛չ մի երկիմաստ խոսք ու միտք: Բենկենդորֆը Աբովյանին օժանդակության համար միջնորդություն է արել և ո՛չ գաղտնի հրաման արձակել: Երկրամասի տնտեսական-կրթական կյանքին նպաստ բերողները խրախուսվում էին հին օրերում էլ, և դրա համար բազմաթիվ օրինակներ կան: Աչխարհաբար գիրք գրելը հանցանք չէր, ընդհակառակը, ակադեմիան գտնում էր, որ Աբովյանի ռուս-հայ քերականությունը «ալիտի հրատարակվի հայ ժողովրդական լեզվով, որով խոսում են Ռուսաստանում»[39]*: Աբովյանն իսկապես նվիրված էր Ռուսաստանին, և Բենկենդորֆը չէր կարող ասել, թե նա թշնամի է Ռուսաստանին ու թագավորին, ինչպես միամտություն ունի*

---

39 Դ I, *321:*

կարծելու Վ. Ղազարյանը: Բենկենդորֆի միջնորդության մանրամասներին Աբովյանը տեղյակ էր: Համապատասխան գրությունների պատճենները հանձնվել են Աբովյանին, հենց որ ստացվել են Թիֆլիսում, և նրա ցանկությունը՝ «Пособие, которое Абовьян желает получить, состоит в том, чтобы книги сии были напечатаны на казенный счет». («Նպաստը, որն Աբովյանը ցանկանում է ստանալ, այն է, որ այս գրքերը տպագրվեն պետության հաշվին»),— հաղորդվել է մինիստրին, 1839 թ. դեկտեմբերի 6-ին[40]:

Պետական միջոցներով ո՛չ մի գիրք չէր կարող տպագրվել առանց նախապես քննության ենթարկելու: Այդ կարգը դործել է միշտ և ամենուր: Աբովյանի նկատմամբ չարամտություն չի՛ եղել: Ընդհակառակը, 1840 թ. փետրվարին կազմված հաշվետվության մեջ Աբովյանը հիշվում է լավագույն ուսուցիչների շարքում, որոնք հատուկ ուշադրության են արժանի իրենց «исправностью, усердием, успехами преподавания и трудами на службе заслуживают особенного внимания» («բարեխղճությամբ, եռանդով, դասավանդման մեջ ունեցած հաջողություններով և ծառայության ընթացքում կատարած աշխատանքների համար»)[41]: Վերջապես, Աբովյանի իսկ վկայությամբ՝ Երրորդ բաժանմունքի պետի հատուկ հանձնարարությամբ ինքն սկսում է ուսումնասիրել քրդերի ու եզիդիների կյանքն ու կենցաղը և 1846 թ. մի ընդարձակ աշխատություն ներկայացնում[42]: Ինչպե՞ս կարելի է այս բոլորը մոռանալ և ամեն բանի քաղաքական դունավորում տալ: Կարիք կա՞ր վերհիշել Բենկենդորֆի և Աբովյանի անձնական փոխհարաբերությունները: Չէ՞ որ դա հօդուտ վարկածի չի խոսում:

Այլ է ծրագրված հալածանքը. այլ՝ դարի հեղձուցիչ մթնոլորտը, որի մեջ ապրում ու ստեղծագործում էր Աբովյանը: Կա՞ր, արդյոք, թվածս անձանց՝ Աբովյանի հանդեպ տածած թշնամանքի մեջ անձնական չարժառիթներից բացի նաև ցարի կամ ժանդարմերիայի պետի թելադրանքը, այդ դեռ պետք է պարզել: Թե Բենկենդորֆն ո՞վ էր և ի՞նչ մռայլ դեր է կատարել Նիկոլաևյան դարաշրջանում, հանրահայտ է: Բայց անծանոթ չէ նաև, որ նա էլ, կայսրն էլ լիբերալ խաղեր սիրել են: Ահա փաստերից դատելով՝ Աբովյանի վերաբերմամբ վերջինն է կիրառվել:

---

40 ԼԱ, ֆ. 733, ց. 82, գ. 42, թ. 54:

41 Նույն տեղում, ց. 95, գ. 948, թ. 26բ:

42 Ե VII, 151 և Ե X, 293:

«Հանցանք» II. «Երևանում... նա տոգորվում է ռուս հեղափոխական դեմոկրատների և ամենից առաջ Վ. Գ. Բելինսկու գաղափարներով և դրանց ոգով գրում իր ստեղծագործությունները... որ իշխանության աչքում նրան դարձնում է... քաղաքականապես անվստահելի ատելանալի...» («Գրական թերթ», 24. IX. 1976 թ.): Սրա ապացույցը Վ. Ղազարյանի «15-ամյա որոնումները» և հոդվածներն են Հայաստանի արխիվների բանբերում և այլուր, ինչպես նաև Նշան Մուրադյանի հիացական հանձնարարությունը: Հանցանչնն այն է, որ Աբովյանը Երևանի գավառական դպրոցի համար բաժանորդագրվել է «Отечественные записки» ամսագիրը:

Ավելի միամիտ պատճառաբանություն, քան այս, դժվար է հնարագրել: Որ Աբովյանի ուշադրությունն է գրավել ռուսական առաջադիմական ամսագիրը, կարևոր է, սակայն դա Հայոնի էր քառորդ դար առաջ, Մ. Սանթրոսյանի, Վ. Պարախոդունու աշխատություններից և մեր հրապարակումներից[43], և նորություն չէ: Բայց որ «Отечественные записки» ամսագիրն ստանալը ոսով-դվով անհետացման հնարակա քաղաքական հանցագործություն է եղել, սա արդեն «Հայտնություն» է: Եթե այդպես լիներ, մինչև Աբովյանի հերթը հասնելը պետք է տաժանակրության քչվերին կամ կախաղան հանվերին ամսագրի խմբագիր Կրաևսկին, բոլոր հոդվածագիրները, բաժնի վարիչները, հատկապես Բելինսկին, հարյուրավոր բաժանորդներ և հազարավոր ընթերցողներ: Բայց նման բան չի կատարվել: Ամսագիրը տպագրվում էր գրաքննության թուլությամբ և ազատորեն տարածվում՝ հանձնարարվելով նաև դպրոցական պրագրաններին (Հանձնարարականի տպագիր օրինակը պահվում է ՀՀ Պետարխիվում): Աբովյանն այդ ամսագիրը դուրս էր գրում դպրոցի համար, ո՛չ իր, այլ պետական փողերով և դպրոցական իշխանությունների գիտությամբ: Նա բարեխղճորեն հետևում էր, որ համարները անկորուստ ստացվեն, հակառակ դեպքում պետական փողն աննպատակ կկորչեր, որի համար ինքը պատասխանատու էր: Ա՛յս է իրողությունը:

---

43 Վ. Պարտիզուն, Խաչատուր Աբովյան. Ե., 1952. էջ 112–113. Մ.Սանթրոսյան, Հայ մեծ լուսավորիչ մանկավարժ Խ. Աբովյանը, Ե., 1953. էջ 134, Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյանը և ռուսական առաջավոր կուլտուրան, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.). 1952, № 5, էջ 42–43. П. Акопян, Документы Эриванского периода жизни и деятельности Х. Абовяна («Բանբեր Հայաստանի արխիվների», № 3. 1962, էջ 99, 117, 132) և այլն:

*Սենսացիոն է նաև մյուս հայտարարությունը, թե իբր Աբովյանն Երևանում, ուր փոխադրվել է 1843 թ. օգոստոսին, Բելինսկու ազդեցության տակ և հեղափոխական դեմոկրատների ոգով **ստեղծագործություններ** է գրել՝ չտալով դրանցից և ո՛չ մեկի անունը: «Գյուտարարը» ապակողմնորոշում է ընթերցողին: Այլ առիթով նրա ենթադրած և որպես թե Բելինսկու ազդեցությամբ՝ Աբովյանի գրած «Ֆեոդորա» դրաման, ինչպես վաղուց ցույց ենք տվել, գերմանացի հետադեմ գրող Ավգուստ Կոցեբուի հեղինակությունն է՝ հորինված այն ժամանակ, երբ Բելինսկին մեկ տարեկան երեխա էր[44]: Աբովյանը դա թարգմանել է 1841 թ., Տիղիսում: Փաստերի հետ այդպես անպատասխանատու ձևով չի՛ կարելի խաղալ: Իբր Բելինսկու ազդեցությամբ՝ Աբովյանի գրած մյուս «ստեղծագործությունն» էլ, որ իր նախորդ հոդվածներում «մատնանշել է» Ղազարյանը, իրականում անթվակիր ու սևագիր մի նամակ է, որի հասցեատերը Ներսես Աշտարակեցին է ենթադրվում: Այն իր ոգով և չոչափած խնդիրներով չարունակությունն ու հետագա զարգացումն է Աբովյանի՝ Հովհաննես Կարբեցուն (1832 թ. մարտ) և Ներսես Աշտարակեցուն (1845 թ. փետրվար) ուղղված նախորդ նամակների, և բնավ որևէ առնչություն չի կարող ունենալ Վ. Բելինսկու՝ Ն. Գոգոլին ուղղված հայտնի նամակի հետ, որպիսի ձգտում ունի «Գյուտարարը»:*

Աբովյանն իր նամակում արտահայտելով դժգոհությունը Ներսես Աշտարակեցու գործունեությունից, որը, գոնե առայժմ, փոխանակ հայ ժողովրդի լուսավորության ու բարօրության մասին մտածելու, Տիղիսում նստած՝ անիմաստ պատերազմ է բացել քահանաների ու թեմակալ առաջնորդների դեմ, էջմիածնում, դպրոցի փոխարեն, կառուցել է տալիս անասնագոմեր և բարեկարգում Գոմշագյոլը (ապագա Ներսիսյան լճակը — Պ. Հ.) և այլն, ավելացնում է. «Ընդէր խարեն զմեզ կեղծաւոր լրագիրք կալկասի փառօք և բարեբախտութեամբ ազգի, որ յիսկութեան չունդ է միայն օգաճայն: Զի՞նչ օգուտ և փառք մերաղնեայց յազատութենէ Հայաստաննայց, մինչ նոյն ինքն Հայաստան առաւել ևս ի խաւար տգիտութեան դանդաչէ, քան յաւուրս առաջինս ընդ բռնութեամբ բարբարոսաց... Այժմ ազատութիւն քաղաքական բառնայ և արմատախիլ առնէ և զվերջին մեր և զառաջին զառաքինութիւն, որով ազգն Հայոց յօրէ անկման իւրոյ մինչև ցայսօր բարձր ի գլուխ պանծայր ի մէջ ամենայն ազգաց... Զիա՞րդ թագուցից զվէրս՝ որ օրըստօրէ և զամենայն մարմին ազգին

---

44 Պ. Հակոբյան, Խ. Աբովյանի նամակների թարգմանությունները (Հմմտ. Գև «Լրաբեր», 1973, № 4):

դիշատել խոստանայ: Եւ ո՞վ այս ամենայնի աղբիւր և սուիթ, թէ ո՛չ ***տգիտութիւնն*** *՝ որ ընդ սաստիւ բռնակալութեան սասանիւր, այլ զարդիս՝ ընդ վարագուրաւ պաշտպանութեան օրինաց՝ իբրև ժանտախտ անբուժելի վարակեալ և դրաւեալ ունի զամենայն սիրտ և հոգի: Եւ ուստի՞ այս վիշապագուշխ ախտ բարոյական՝ թէ ո՛չ ի* ***պակասութենէ օրինաւոր և բարեկիրթ հովուաց,*** *որոց միայն պարտ է լինել փոյթ և նկրտումն հովուել և դարմանել յազգն արդարութեամբ և ուղղութեամբ» և այլն*[45]*:*

Խիստ և համարձակ խոսք է ասել Աբովյանը, որոնք պատիվ են բերում ամեն մի լուսավորիչ-դեմոկրատի, բայց դրանց ոգին ու նպատակները այլ են: Գոգոլին ուղղված իր նամակում Բելինսկին քարոզում էր աթեիզմ, ճորտատիրական իրավունքի վերացման խնդիրը առաջադրում, պաշտպանում սոցիալիզմի գաղափարը, այնինչ Աբովյանը կյանքի խոցերը կրթութեյան միջոցով բուժելու լուսավորական սկզբունքին էր կառչում, նաև հավատում էր հոգևորականութեյան մեծ առաքելութեյանը հայութեյան լուսավորութեյան և բարգավաճման գործում:

Բայց Աբովյանը կարո՞ղ էր անձամբ կամ աշխարհագրորեն ծանոթ լինել Բելինսկու գրածին: Ղազարյանը անտեսել է հենց այդ, մինչդեռ դասելով Աբովյանի՝ «առ աղբերը հաւատոյ և լուսոյ ազգին՝ զ Գոմշադեօղն մեծացուցանեն և զգոմս անասնոց բարեզարդեն», «մարթ է կազմել նախատել պյանդինութիւն իմ» արտահայտություններից[46]*, նրա նամակի չարժառիթներն եղել են էջմիածնում դպրոցի փոխարեն անասնագոմեր կառուցելն ու Գոմշադյոլը (ապագա Ներսիսյան լճակը) բարեկարգելը, իր մասին «Կովկասում» տպագրված գրպարտչական հոդվածը, իսկ գրանք բոլորը 1847 թ. առաջին կեսերի իրողություններ են: Անասնագոմերի առթիվ կաթողիկոսի կոնդակը արձակված է 1847 թ. ապրիլի 5-ին: Գոմշադյոլի բարեկարգման մասին մամուլում հաղորդում է տպագրվել մայիսի 24-ին, անտառ անկելու մասին՝ մայիսի 31-ին, իսկ Աբովյանի դեմ ուղղված հոդվածը լույս է տեսել հունիսի 7-ին*[47]*: Հետևաբար՝ Աշտարակեցուն ուղղված այդ անտառապիղծ նամակը 1847 թ. հունիսի վերջերից ուշ չէր կարող գրված լինել: Այնինչ Բելինսկին իր նամակն սկսել է գրել 1847 թ. հուլիսի*

---

45 Ե X. *295–296:*

46 *Նույն տեղում, էջ 296 և 298:*

47 *Մանրամասնությունները տե՛ս մեր «Աբովյանի վերջին վերելքը Արարատի դպրոցի» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 139–142):*

սկզբներին, այսինքն՝ Աբովյանից ավելի ուշ, այն էլ արտասահմանում, սևագրությունը կարդացել է հուլիսի 17-ին, Փարիզում, երկու մարդու՝ Գերցենի և Աննենկովի մոտ: Մաքրագիրը Գոգոլն ստացել է հուլիսի վերջերին: Ռուն նամակը Ռուսաստանում հայտնի է դարձել 1849 թ. գարնանը միայն, իսկ տպագրվել է շատ ավելի ուշ, 1855 թ., արտասահմանում, քանի որ ծանր պատիժ էր սպառնում բոլոր նրանց, ովքեր իմանալով այդ նամակի մասին՝ չեն զեկուցել բարձր իշխանություններին: Հետևաբար՝ բացառվում է Աբովյանի նամակի գրության համար Բելինսկու նամակի շարժառիթ ծառայելու անհիմն վարկածը: Մարդկանց գաղափարական կապերը հետազոտում են ո՛չ թե քմածին ենթադրություններով, այլ չոչափելի փաստերով, ո՛չ թե պատահական բառերի համընկնումով, այլ իրական չփումներով ու առնչություններով: Բելինսկին իր կենդանության օրոք Աբովյանին չի՛ ճանաչել, նրա հետ չի՛ չփվել, Աբովյանն էլ Բելինսկու հետ անձամբ չի՛ հանդիպել, նրա հետ նամակներ չի՛ փոխանակել երբեք: Նման փաստեր չեն արձանագրված ո՛չ Աբովյանի կյանքի տարեգրության մեջ և ո՛չ էլ Բելինսկու կյանքի ու գործունեության ժամանակագրության: Այս էլ է անժխտելի, որ Բելինսկու թղթակիցներից և ո՛չ մեկին չեն աքսորել կամ կախել, հետևաբար և նրա հետ մտացածին առնչություններ հորինելն ու այդ պատճառով Աբովյանին հալածական հռչակելը հեքիաթ է:

Կուզենայինք ուշադրություն հրավիրել «Աբովյանի գործունեության գնահատման տեսակետից կարևոր» (Ղազարյանի խոսքերն են) մեկ փաստի վրա էլ, որի հայտնագործողը դարձյալ նա է: Այն տեղ է գտել վերջինիս հրապարակումներում[48] և վկայակոչվում է «Գրական թերթի» հոդվածներում: «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» աշխատության մեջ, անդրադառնալով Հռոմի պապերի մռայլ ու դաժան գործունեությանն ու դերին Եվրոպայի հին ու նոր պատմության մեջ, Աբովյանը գրել է, թե «այժմյան Պիոս V (անուշադրության վրիպակ, պետք է լիներ՝ Պիոս IX — Պ. Հ.) պապին է նախախնամությունից վերապահված փառքի ու քրիստոնեական առաքինությունների դարում հարություն տալ կաթոլիկ աշխարհին և այն մաքրել բարբարոսությունից և հոգեկան թմրությունից»[49]: Ինչ խոսք, այստեղից ո՛չ մի օդեղեն ամրոց չի կարելի կառուցել: Աբովյանը զուր հույսեր է տածում: Բայց Ղազարյանը ենթադրում է, թե պապի անունը «ցարական գրաքննիչներին չփոթեցնելու նպատակով» է

---

48 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, № 4, էջ 73, 75–76:

49 Ե VII. 172:

թաքցված, որ մինչև 1847 թ. Աբովյանին հայտնի է եղել միայն պապի «առաջադիմական գործունեությունը»: Դիմենք սթափ ժամանակակիցներին, որոնք Պիոս IX պապին բնութագրել են որպես «Իտալիայի առաջին բուրժուա», «մարդ, որը ողջ Եվրոպայում դրավում է ամենահետադիմական դիրք», որի բոլոր ունեցվածքը հօդուտ բուրժուազիայի էին[50]*: Ավելին՝ Պիոս IX-ը 1846 թ. նոյեմբերի 9-ին նզովել էր սոցիալիզմն ու կոմունիզմը, որպես վտանգավոր ուսմունքներ, որոնք մարդկային հասարակությանը կհասցնեն կործանման: Ռոմանտիկ և լուսավորիչ Աբովյանի համար խանդավառվելը և հիասթափվելը բնական էին, բայց չմոռանանք «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայտնի տողերը նույն այդ պապի մասին. «Մի ուրվական է շրջում Եվրոպայում, կոմունիզմի ուրվականը: Այդ ուրվականի դեմ սրբազան հալածանք մղելու համար միավորվել են հին Եվրոպայի բոլոր ուժերը՝ պապը և ցարը, Մետերնիխը և Գիզոն, ֆրանսիական ռադիկալները և գերմանական ոստիկանները»*[51]*: Փաստերը պետք էր մտքով անցկացնել և նոր հանրության ուշադրության առարկա դարձնել...*

«Հանցանք» III. «...*Կաթողիկոսի՝ Երևան մանելու ժամանակ պաշտոնական հպատակությամբ չլինելու անչնորհ փաստը և այդ դիպվածով... բանավեճը Երևանի դավառապետ Բլավատսկու <հետ>... Աբովյանի տված հանդուգն պատասխանը...»: Պատժչափ՝ «10–12 տարվա տաժանակիր աշխատանքի դատապարտել» («Գրական թերթ», 24. IX. 1976), հիմք՝ դավառապետի բողոքագիրը: Բայց ի՞նչ է եղել իրականում. 1846 թ. մայիսի 8-ին, երբ դավառապետը դիմողություն է արել Աբովյանին, թե ինչու Ներսես Աշտարակեցուն դիմավորելիս համապատասխան չի հագել, նա պատասխանել է, թե ինքը ավելի լավ գիտի, թե նման դեպքերում ինչպես պիտի վարվել: Դավառապետի արժանապատվությանը շատ է վիրավորվել, և նա բողոքել է վոխթաբքային.՝ «Այս աստիճանավորի արարքը կարող է ուրիշների համար վատ օրինակ դառնալ՝ ծառայության մեջ ավագներին չհարգելու, հետևաբար նա չպիտի մնա Երևանի իր պաշտոնում: Այնտեղ, ուր պահանջում են ծառայության պարտականությունները, տեղ չպիտի դանի ո՛չ մի հավանավորություն»*[52]*: Ինչպես տեսնում ենք՝ Բլավատսկին խիստ պատիժ է պահանջում, հասկացնում, որ Աբովյանն այլևս չհավանավորվի: Արդյունքը՝ վերադասների կարդադրությամբ նա*

---

50 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. II, т. 4, стр. 463–464.

51 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Հնարի երկեր*, հ. 1, Ե., 1972, էջ 137:

52 *ՎՄ., ֆ. 4, ց. 3, գ. 183 (հինը՝ 631), նաև՝* «Коммунист», 1948, № 76.

ենթարկվում է երկքօրյա տնային կալանքի: Աբովյանն այդ հրամանը կատարում է քսան օր հետո և ապա՝ բողոքում գավառապետի արարքի դեմ: Դրանից հետո դպրոցի նորոգումները հավանության են արժանանում, և դրական կարծիք հայտնողը Աբովյանի թշնամիներն էին: Աբովյանն ու գավառապետն էլ հաշտվում են:

Այսօրինակ պաշտոնական ընդհարումները սովորական բաներ էին, և մի հանցանք, որի պատիժը երկքօրյա կալանք է, ծիծաղելի է 12 տարվա տաժանակրության հավասարեցնել:

«Հանցանք» IV. «1848 թ. հունվարի 2-ին, առանց նախնական թույլտվության, Աբովյանը մեկնում է Թիֆլիս և այնտեղ մնում 15 օր» («Գրական թերթ», նույն համարը): Պատիժ՝ «ծառայությունից... հեռացումն... կացության բոլոր իրավունքների զրկումով»:

Այստեղ չափազանցնելու որոշակի միտում ու անիրազեկություն կա: Ծննդյան տոներին Աբովյանն առանց թույլտվության Թիֆլիս գնալով՝ չի թաքնվել, այլ ներկայացել է վերատեսչին և ուսումնական մասի կառավարչին, որոնցից պետք է նախապես թույլտվություն խնդրեր: Երբ նրան նկատողություն են անում, հրաժարական է տալիս, իսկ հետո՝ ունկնդրություն խնդրում փոխարքա Վորոնցովից: Սկզբում Աբովյանին առաջարկվում է Տփղիսի Նունեյան դպրոցի վարիչի պաշտոնը, դպրոց, որ գտնվում էր Վորոնցովի կնոջ հովանավորության տակ: Բայց որովհետև Ներսես Աշտարակեցին էլ նրան վստահում է Ներսիսյան դպրոցի տեսչությունը, նա սիրով ընդունում է դա:

Մնացած հանցանքներն ու պատիժները միամիտ ենթադրություններ ու չափազանցություններ են, հնօրյա այս կամ այն հրահանգից, առանց էությունը հասկանալու, փոխ առնված արտահայտություններ, որոնք Աբովյանի մահվան առեղծվածին բնավ չեն վերաբերում: Այդպես կարելի է ուշադիր բանն «ապացուցել»:

Այնուամենայնիվ ի՞նչ «հայտնագործություն» է արել Վ. Ղազարյանը.

1. Նա պարզել է, որ 1848 թ. ապրիլի 3-ին Երևանի գավառական դպրոցի տեսչի պաշտոնի համար առաջադրվել է Ջերնիգովյան նահանգի բնակիչ ոմն Սմիրնովի թեկնածությունը: Բայց ի՞նչ կապ ունի դա Աբովյանի անհայտ կորստյան վարկածի հետ, քանի որ Աբովյանը Երևանի իր պաշտոնից և, ընդհանրապես, ուսումնարանական դերատեսչության ծառայությունից ազատված է եղել դեռևս մարտի 11-ին: Դրանից հետո միայն դպրոցական իշխանությունները պիտի ընտրեին թափուր մնացած տեղի համար հերթի սպասող անձանցից որևէ մեկին, ինչպես և արել են: Եթե Աբովյանի պաշտոնի համար մարդ որոնեին 1846 կամ 1847 թթ., այդ կարող էր մտածելու

տեղիք տալ, բայց ոմն Սմիրնովի հարցը ոչինչ չնշանակող բան է և զուր գայթակղություն: 2. Նա նաև «պարզել է», որ պաշտոնական մատյաններում և դպրոցական հաշվետվություններում «Աբովյանի անհետացման վերաբերյալ նշում անգամ չկա»: Անհիմն հայտարարություն, որ գալիս է անտեղյակությունից: Անդրկովկասյան դպրոցների 1848 թ. հաշվետվության մեջ, որ մատուցվել է Հանրային կրթության մինիստրին, պարզորոշ գրված է. «Երևանի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչի պաշտոնակատար Աբովյանը ազատվել է՝ ուրիշ աշխատանքի անցնելու համար, սակայն դեռ պաշտոնը չհանձնած՝ անհետ կորել է (пропал без вести)»[53]: Փաստերը նախապես չստուգված՝ չի՛ կարելի կեղծ ու սխալ հայտարարություններ անել:

3. Հաջորդ «գյուտը» Ղազարյանը ձևակերպել է մշուշոտ. «Աշտարակեցու՝ մարտի 3-ի ինչ-որ գրությամբ Աբովյանն արդեն ազատված էր իր պաշտոնից... Ներսիսյան դպրոց տեղափոխվելու դեպքում Աբովյանին պետք է ազատեին ծառայությունից և ոչ թե պաշտոնից, քանի որ այդ դպրոցը լուսավորության մինիստրության սիստեմում չէր գտնվում: Նշանակում է, պաշտոնից ազատվելուց հետո Աբովյանը մնում էր դարձյալ կառավարչապետի իրավասության տակ» («Գրական թերթ», 24. IX. 1976):

Դարձյալ կոպիտ սխալ, քանի որ Աբովյանի արձակման հրամանում պարզ գրված է, որ նա ազատվել է ո՛չ միայն ուսուցչի ու տեսչի պարտականություններից, այլև ուսումնարանական դերատեսչության. «От занимаемых Вами должностей и из службы по учебному ведомству, для поступления в Армянское духовное училище... в распоряжение Его святейшества патриарха Нерсеса» (*«Ձեր զբաղեցրած պաշտոններից և ուսումնարանական դերատեսչության մեջ ծառայությունից՝ ընդունվելու համար Հայոց հոգևոր դպրոցը... Նորին սրբություն Ներսես կաթողիկոսի անօրինության տակ»*)[54]:

Աբովյանի վերադասն, այսպիսով, 1848 թ. մարտի 11-ից Ներսես Աշտարակեցին էր և ո՛չ վոխաբքան կամ լուսավորության մինիստրը: Այդ պետք է ընդմիշտ հիշել:

4. Ղազարյանի «դյուտերից» մեկն էլ այն է, որ իբր «անհայտ բացակայող» արտահայտությունը «ժամանակի իրավաբանական լեզվով նշանակում է 10 տարով աքսորի դատապարտված մի մարդ, որի աքսորավայրի մասին պաշտոնական անձերից բացի ոչ ոք իրավունք չուներ իմանալու» («Գրական թերթ», նույն համարը):

---

53 *ԼԱ, ֆ. 733, ց. 95, գ. 1012:*

54 *Վ.Ա., ֆ. 1, ց. 1, գ. 1726:*

Դժվար է հասկանալ, թե ի՞նչ են մտածել վարկածի հեղինակները, երբ, անտեսելով բառերի չատ որոշակի նշանակությունը, «безвестное отсутствие» (անհայտ բացակայություն) իրավաբանական հանրահայտ եզրաբառ-տերմինին տվել են այնպիսի մտացածին բացատրություն, որպիսին, ընդհանրապես, անծանոթ է համաշխարհային իրավագիտությանը: Ավելորդ համարելով մասնագիտական գրքերից քաղվածքներ անելը՝ արտագրենք միայն մի քանի տող մեր օրերի ամենահեղինակավոր հրատարակություններից մեկից՝ «Իրավագիտական բառարանից».

***«Անհայտ բացակայություն** — Օրենքով սահմանված կարգով վկայված փաստ իր բնակության վայրից անձնավորության երկարատև բացակայության մասին՝ որոշակի ժամանակամիջոցում նրա գտնված վայրի մասին տեղեկություն չստանալու պայմաններում: Անհայտ բացակայության անհրաժեշտ նշանը օրենքով նախատեսված միջոցներով (ծանուցմամբ, բացակայողի վերաբերյալ տվյալներ հաղորդելու ունակ քաղաքացիների և պաշտոնատար անձանց արված հարուցումների ճանապարհով և այլն) տվյալ անձնավորության գտնված անհայտ վայրը պարզելու անհնարինությունն է* (невозможность устранения неизвестности нахождения лица): *Այն պահից, երբ անձնավորությունը դիտվում է որպես անհայտ բացակայող, նրա ունեցվածքի վրա նշանակվում է խնամակալություն: Խնամակալի վրա պարտականություն է դրվում պահպանել ու կառավարել այդ ունեցվածքը և նրանից ապրելու միջոցներ տալ այն անձանց, որոնց բացակայողը պարտավոր էր պահել»*[55]:

Ինչ հանգամանքներում էլ որևէ մեկը Սիբիր աքսորվեր, այն էլ՝ տասը տարով, և ինչքան էլ գաղտնի, այնուամենայնիվ, արձանագրվում էր պետական համապատասխան տյաններում:

Մոռանալով այս հանրահայտ ճշմարտությունը՝ Ղազարյանը ընթերցողին հղում է կացության մասին օրենսգրքի 7-րդ և 8-րդ հոդվածները, իր քմահաճույքով վերապատմում դրանք, որից, սակայն, հետևում է, որ այդ օրենքը վերաբերել է «իրավունքից զրկված ազնվականներին»:

Վ. Ղազարյանը թյուրիմացության զոհ է: Ինչպե՞ս կարող էր Աբովյանը 1848 թ. հունվարի 11-ին իր սեփականատիրական բոլոր իրավունքներից զրկված լինել, երբ անգամ անհետացումից հետո, 1848 թ. օգոստոսին, դատարանի որոշմամբ, նա ճանաչվում է նոր կալվածքի սեփականատեր («Տիտղոսավոր խորհրդական Աբովյանի գնած գոմը և

---

55 «Юридический словарь», т. 1, изд. 2-ое, М., 1956, стр. 57.

հողամասը, համաձայն օրենքների X հատորի 757 հոդվածի, անառարկելիորեն հաստատել նրա վրա»[56]*: Ղազարյանը ճիշտ չի հասկացել նաև խնամակալության նշանակությունը, որ ցարական Ռուսաստանում մի ամբողջ դերատեսչություն էր և գործում էր հօգուտ ժառանգական իրավունքների պաշտպանության: Նա մոռանում է, որ Աբովյանի ունեցվածքն ամբողջությամբ հանձնված էր նրա կնոջը, որ երկրորդ խնամակալը նշանակված էր կնոջ առաջարկությամբ ու ցանկությամբ: Վերջապես՝ 1848 թ. հոկտեմբերին վերջիններիս հանձնարարված էր՝ «սկսել կառավարել Աբովյանին պատկանող կալվածքը՝ չանալով ինչպես բարելավելու... այդ կալվածքը, այնպես էլ նրանից քաղելու ճոխնոտ եկամուտներ՝ դրանցով պատշաճ ձևով պահելու Աբովյանի զավակներին», խորհուրդ տալով միաժամանակ՝ Աբովյանի պարտապաններից դանձվող գումարները «տալ վաշխով, ո՛չ այլ կերպ, քան դրավականով»*[57] *և այլն, որ նշանակում էր, թե պարտքը վճարելու դեպքում Աբովյանի սեփականությունն էին դառնալու նաև այլ կալվածքներ:*

Նա պնդում է, թե իբր «Աբովյանի անհայտ բացակայման փաստը Երևանի գավառապետ Բլավատսկու կողմից արված հայտարարությունից բացի, պետական ո՛չ մի մարմնում արձագանք չի գտել» և այլն («Գրական թերթ», 1976 թ., նշված համարը), մինչդեռ հակառակ դրան՝ Աբովյանի անհայտ բացակայության մասին բազմաթիվ պաշտոնական գրություններ են գրվել, և իրողությունը բնավ գաղտնի չի պահվել: Կատարվել են հետաքննություն ու որոնումներ, դատարանի հարց է դարձվել. բարձր իշխանություններին այդ մասին զեկուցել են ո՛չ թե ոստիկանապետը, այլ գավառական դպրոցի տեսչի պաշտոնակատար Թուրքեստանովը, ուսուցիչ Վեքիլովը, Անդրկովկասի ուսումնական մասի պետը, դպրոցների վերատեսուչը, Երևանի գավառապետը, իրողությունն արձանագրվել է պաշտոնական հաշվետվության մեջ և Կովկասում կատարված կարևոր իրադարձությունների մասյանում[58]*: Այդ ամենը ցույց է տալիս, որ Աբովյանը դիտվել է իբրև անհայտ վախած կամ թաքնված անձ («Неизвестно куда девавшийся»), և անհանգստացել են, թե արդյոք նա պետական մի՞ջոցները չի՞ յուրացրել:*

---

56 *ՀԱ, ֆ. 64, գ. 336:*

57 *Վավերագիրը ստացել ենք Աբովյանի թոռ, տիկին Վիկտորիա Աբովյանից (վախճ. 1974) և մեջբերել Աբովյանի թոռոններին:*

58 Акты, с. X, *էջ 830:*

Փորձության քար «отлучка» *բառը (որի իրական նշանակությունն է* временное отсутствие, уход, отъезд, *այսինքն՝ ժամանակավոր բացակայություն, հեռացում, մեկնում) Երևանի 1848 թ. ոստիկանապետը քնած էլ Վ. Ղազարյանի պես չի հասկացել, այլ՝ տանից գաղտնի հեռացած, փախած մարդ: Դրա իրեղեն ապացույցը նրա գրությունն է՝ ուղղված Աբովյանի կնոջը, 1848 թ. մայիսի 15-ին.* «Г. Эриванский уездный начальник изволил поручить мне производство следствия о неизвестной отлучке мужа Вашего коллежского ассесора Абовьяна. Поэтому покорнейше прошу Вас, милостивая государыня уведомить меня в самом непродолжительном времени: какими именно обстоятельствами сопровождалась отлучка из дому мужа Вашего, какие были к этому особенно побудительные причины, и не объяснил ли он Вам пред отлучкою, с какою целью и куда он намерен отправиться» *(«Երևանի պարոն գավառապետը բարեհաճել է հանձնարարել ինձ հետաքննություն կատարել Ձեր ամուսնու՝ կոլեգիական ասեսոր Աբովյանի անհայտ բացակայության մասին: Դրա համար խոնարհաբար խնդրում եմ Ձեզ, ողորմած տիրուհի, ոչ երկարատև ժամանակամիջոցում, տեղեկացնել ինձ՝ հատկապես ի՞նչ հանգամանքներ են ուղեկցել Ձեր ամուսնու՝ տանից հեռանալուն, դրա համար հատկապես ի՞նչ դրդիչ պատճառներ են եղել, և հեռանալուց առաջ նա Ձեզ չի՞ բացատրել, թե ի՞նչ նպատակով և ո՞ւր է մտադիր մեկնելու»)* և այլն[59]: *Աբովյանի կնոջ պատասխանի մեջ ևս, գրված հաջորդ օրը,* отлучка *բառը դարձյալ որոշակի նշանակում է՝ առանց նախապես հայտնելու տանից հեռանալ:* «Особенных побудительных причин, споспешествовавших (!) его безвестной отлучке, мне не известно. Также он мне не говорил, как и часто бывало, отлучаясь из дома: с какою целью и куда отправился» և այլն[60] *(այսինքն՝ «Նրա անհայտ մեկնումը արագացնող հատուկ դրդիչ պատճառներ ինձ հայտնի չեն: Նմանապես նա ինձ չէր ասում, ինչպես և հաճախ լինում էր, երբ հեռանում էր տանից, թե ինչ նպատակով և ուր է գնում»): Ուրեմն՝ Աբովյանը մեկ անգամ չէ, որ առանց հայտնելու հեռացել է տանից, և կնոջ համար դա սովորական բան է եղել: Ղազարյանի պես մտածելու դեպքում ստիպված պիտի լինենք պնդելու, որ Աբովյանին շատ հաճախ են տասը տարով աքսորի դատապարտել և տաժանակրության քշել Սիբիր:*

---

59 *Ա № 646. Հայերեն թարգմանությունը՝ Դ II, 266:*

60 *Ա № 593. Հայերեն թարգմանությունը՝ Դ II, 267:*

Փոխանակ հումյունը լավ չհասկացած ինչ-որ պաշտոնական հրահանգներից կառչելու՝ Ղազարյանը պարտավոր էր համապատասխան հոդվածներ ցույց տալ զինվորական պատիժների վերաբերյալ օրենսդրքից («Свод военных постановлений», *մասն V, գիրք 1), որով դատվել են քաղաքական հանցագործները՝ պետրաշևականները, Դոստոևսկին և ուրիշներ: Ցավալին այն է, որ նա քաջություն չունի խոստովանելու, որ ժամանակի իրավական մարմինները Աբովյանի անհետացումը դիտել են որպես քրեական դործ, որ քննվում էր Ռուսական կայսրության օրենքների հավաքածուի 1842 թ. XV հատորի քրեական օրենքների 908 և 1211 հոդվածներով, և այսպիսի եզրակացության են եկել. «Կոլեգիական ասեսոր Աբովյանի անհայտ բացակայության հարցը թողնել այնքան ժամանակ, մինչև որ կամ Աբովյանն ինքը կհայտնվի և կամ էլ՝ նրա ուր գնալը ինքնըստինքյան հայտնի կդառնա»*[61] *և ընդունված կարգով՝ հետագա տնօրինության համար հարցը ներկայացվում է Թիֆլիսի զինվորական նահանգապետին: Պահպանվել է դատարանի որոշմանագրությունը, ուր ոչ մի երկդիմի և թեական բան չկա:*

Այս ամենի մասին Երևանի դավառական պլորոցը նույնպես տեղեկություն է ավել Անդրկովկասյան դպրոցների վերատեսչին՝ Աբովյանին որակելով «без вести пропавший» *(անհայտ կորած), որոշմանագրելով նաև, որ հետաքննությունը չի կարողացել պարզել՝* Куда девался Х. Абовьян? *(Ո՞ւր է կորել Խ. Աբովյանը*[62]*: Պարզ երևում է, որ մինչև դատարանի վճիռը դեռ հույս է եղել, որ Աբովյանը կհայտնվի, կամ նրա տեղը կիմացվի, բայց դրանից հետո արդեն նա անհայտ կորած մարդ էր:*

Համազգային ողբերգությունը չի կարելի տրամաբանական մարդանքների նյութ դարձնել:

*5. Նոր «Հայտնագործության» **ամենաանհնաոճ** մասը, սակայն, այն միամիտ պնդումն է, թե, իբր, Աբովյանը «**քաղաքական հոդի վրա**» **աքսորվել է «Սիբիր»**, որի ապացույցը նրա կնոջը միանվագ թոշակ տալու գործն է, ըստ որի, իբր, «Աբովյանի ընտանիքին միանվագ նպաստ է տրվել Սիբիր աքսորվածների համար սահմանված օրենքով» («Գրական թերթ», 1976, նույն համարը): Նախ ասենք, որ Վ. Ղազարյանը ո՛չ մի նոր նյութ չի հայտնագործել. նրա ակնարկած և օգտագործած նյութերը սրանից 50 և 20 տարի առաջ արդեն հայտնաբերել և ուսումնասիրել են վաստակաշատ աբովյանագետ Ե.*

---

61 ՀԱ, ֆ. 64, գ. 336: Թարգմանությունը՝ Դ II, 270–271:

62 Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 1726, թ. 102:

Շահազիզը[63] *և տողերիս գրողը: Եվ ապա՝ Ղազարյանը կամ թյուրիմացության զոհ է, կամ դիտավորյալ կեղծում է փաստերը, քանի որ հիշյալ վավերագրերում որոշակի ասված է, որ Էմիլյա Աբովյանը թոշակ է ստացել իբրև անհայտ կորածի կին.* «Пропавшего без вести», «За службу без вести пропавшего мужа *(«անհայտ կորած», «անհայտ կորած ամուսնու ծառայության համար»), իսկ համապատասխան գործը խորագրված է.* «О назначении пенсии вдове пропавшего без вести... Абовьяна» *(«Անհայտ կորած... Աբովյանի այրուն թոշակ նշանակելու մասին»), նաև հատակ արձանագրված.* «Он 2 апреля не известно куда делся... следов его не открыто... безвестная пропажа мужа ее не обнаруживалась», «неизвестно никому, куда девался. 1848 г. 2 апреля» *(«Նա ապրիլի 2-ին հայտնի չէ, թե ո՞ւր է կորել... նրա հետքերը չեն հայտնաբերվել... Նրա ամուսնու անհայտ կորուստը չի հայտնաբերվել», «ոչ ոքի հայտնի չէ, թե ո՞ւր է կորել. 1848 թ. ապրիլի 2-ին»)*[64]*: Անկասկած է նաև, որ Աբովյանին անհայտ կորած են համարել փոխարքա Վորոնցովը, մինիստր Ուվարովը, կայսր Նիկողայոս Առաջինը: Նրա կնոջը միանվագ պետական թոշակ տալու առթիվ կազմված վավերագիրը խորագրված է.* «Записка... о выдаче семейству пропавшего без вести... Абовьяна единовременно в пособие, на основании закона, двойного оклада жалования... **шестисот рублей серебром** из государственного козначейства... Государь император... утвердить соизволил» *(«Գրությունն... անհայտ կորած... Աբովյանի ընտանիքին օրենքի հիման վրա, նրա աշխատավարձի կրկնակի չափով, պետական գանձարանից, միանվագ, **վեց հարյուր արծաթ ռուբլի** նպաստ տալու մասին... Թագավոր կայսրը բարեհաճեց հաստատել»*[65]*:*

Վ. Ղազարյանը միտումնավոր թաքցնում է նաև այդ նույն գործերում Աբովյանի վերաբերյալ հղած կարևորագույն մյուս տվյալները, որոնք ներկայացվել են լուսավորության մինիստրին, Մինիստրների խորհրդին և կայսրը, և որոնց առկայության դեպքում բարեխիղճ բանասերը երբեք այսքան անճշտություններ թույլ չէր տա: Դրանց մեջ պարզ ասված է, որ Աբովյանն իր 11-ամյա ուսուցչության ընթացքում ծառայությունից հեռացված չի՛ եղել և դատի տակ չի՛ գտնվել («удален от службы не был и под судом не находился»):

---

63 *Դ I, 193 և 366,* Պ. Հակոբյան, *Խաչատուր Աբովյան, Կյանքը, գործը, ժամանակը, էջ 57:*

64 *ՀԱ, ֆ. 19, գ. 1553, Լ.Ա, ֆ. 733, ց. 82, գ. 270, չափիկը և թ. 1բ, 2, 18–21:*

65 *Լ.Ա, նշված գործը, թ. 16ա–բ:*

Այն հարցին, թե դուցե նա, լինելով դատի տակ, վախճանվել է մինչև արդարանալը կամ արդարանալուց հետո («Если чиновник был под судом и умер до оправдания или после того...»), *տրված է միանգամայն որոշակի պատասխան. «Դատի տակ չի եղել»* («Под судом не был»): *Իսկ հետևյալ հարցին՝ արդյոք եղե՞լ է պատժապարտության մեջ, հետաքննության ու դատի տակ»* («Был ли в штрафах, под следствием и судом?»), *տրված պատասխանն ավելի կարուկ է. «Չի եղել»* («Не был»): *Վերջապես՝ հավաստված է նորից, որ «Դատի ու հետաքննության տակ չի եղել» ու նաև, որ շատ կարևոր է՝ «Ատեստավորված է ընդունակ և արժանավոր»* («Под судом и следствием не был», «Аттестовался способным и достойным») *և հիշեցված, որ «մինչև ներկա պահը, այսինքն՝ 1-ն ապրիլի 1853, չեն հայտնաբերված Աբովյանի բնակության վայրի հետքերը»* («Не открыто следов местопребывания Абовьяна по настоящее время, т. е. 1853, 1 апреля»)[66]:

Իրականությունն ու փաստերն ահա՛ սրանք են:

Վ. Ղազարյանը միտումնավոր չրջանցում է ճշմարտությունը և Աբովյանի ընտանիքին թոշակ տալու վերաբերյալ մատնանշում է «Սիբիրին վերաբերող 282-րդ հոդվածը», երբ շատ որոշակի է, որ տվյալ հարցում իշխանություններն առաջնորդվել են ո՛չ թե այդ, այլ Ռուսական կայսրության օրենքների հավելածուի III հատորի 531 և X հատորի 40-րդ հոդվածներով, ըստ որոնց՝ Աբովյանի կինը կարող էր թոշակ ստանալ ամուսնու անհայտ կորչելուց հինգ տարի հետո միայն, ինչպես նման դեպքերում վարվում էին պատերազմում կորածների կանանց հետ, և Վորոնցովն առաջարկել էր հարցը լուծել այդ օրենքների սահմաններում.

«Хотя на основании этой 531 статьи единовременное пособие выдается вдовам умерших чиновников, а не женам пропавших без вести, но имея в виду 40-ю ст. X т. Свода Законов гражданских, по силе которой если без вести отсутствующий муж не явится в течение пяти лет, то жена его имеет право просить о расторжении брака с ним и выйти замуж и, следовательно, в отношении брака пользуется правом вдовы, я полагаю, что по применению к этой статье, жена Абовьяна, пропавшего без вести более пяти лет тому назад, должна уже считаться его вдовою и пользоваться правами вдовы его, и, следовательно, может получить пособие, на которое муж ее в день безвестной пропажи своей имел право» *(«Ընտրած*

---

66 *Նույն տեղում, գ. 270, թ. 22–23 և ՀԱ, ֆ. 14, գ. 2553, թ. 14–15:*

այս 531-րդ հոդվածի հիման վրա միանվագ նպաստները տրվում են վախճանված աստիճանավորների այրիներին, և ո՛չ թե անհայտ կորածների կանանց, սակայն աչքի առաջ ունենալով քաղաքացիական օրենքների հավաքածուի X հատորի 40-րդ հոդվածը, որի զորությամբ՝ եթե անհայտ բացակայող ամուսինը հինգ տարի չարունակ չի ներկայանում, ապա նրա կինն իրավունք ունի խնդրելու, որ լուծեն նրա հետ իր ամուսնական կապը և <թուլլ տան> վերստին ամուսնանալու, հետևաբար և՝ ամուսնության վերաբերմամբ օգտվում է այրու իրավունքից, ես կածում եմ, որ այս հոդվածը կիրառելու դեպքում՝ սրանից ավելի քան հինգ տարի առաջ անհայտ կորած Աբովյանի կինը պետք է հիմա արդեն համարվի նրա այրին և օգտվի նրա այրու իրավունքներից, հետևաբար և կարող է ստանալ այնպիսի նպաստ, որպիսին նրա ամուսինն իր անհայտ կորչելու օրն իրավունք ուներ»[67]:

Ղազարյանը մինչև վերջ չի՛ կարդացել ու ճիշտ չի՛ հասկացել նաև 282-րդ հոդվածը: Այդտեղ հանդիպող Սիբիր բառը չփոթեցրել է նրան: 282-րդ հոդվածը վերաբերել է Սիբիրի և Կովկասի (բայց ո՛չ Անդրկովկասի) գիմնազիաներում ու դպրոցներում աշխատող դիրեկտորներին, տեսուչներին և ուսուցիչներին թոշակավորելու կարգին ու արտոնություններին, որոնք դրանցից կարող էին օգտվել կայսրության այդ հեռավոր վայրերում տասը տարի ծառայելուց հետո միայն: Հիշյալ հոդվածը ո՛չ մի առնչություն չունի քաղաքական հանցագործների և գաղտնի աքսորվածների ընտանիքների թոշակավորման հետ: Եթե Աբովյանին այնպես էին անհետացրել, որ ոտով-գլխով կորչեր, էլ ինչպե՞ս նա կարող էր ազատորեն դպրոց կամ գիմնազիա մտնել և ուսուցչություն կամ տեսչություն անել: Մի՞թե ցարական տաժանավայրերն ու տաժանակիրները նման արտոնություններ ու ազատություն էին վայելում:

Բայց որպեսզի Սիբիր չարագուշակ անվան հիշատակությունը որևէ մեկի մեջ կասկած չթողնի, թե 282-րդ հոդվածը որևէ կապ ունի աքսորականների հետ, քանի որ այդ հոդվածն իրականում վերաբերում էր Սիբիրում ապրող և աշխատող ուսումնարանական գերատեսչության աստիճանավորներին (դիրեկտորներին, տեսուչներին, հսկիչներին և ուսուցիչներին), արտագրենք նաև 282-րդ հոդվածի համապատասխան տողերը՝ զուգահեռ հայերեն թարգմանությամբ. «282 (по XII

---

67 *ԼԱ, նշված գործը, թ. 2ա—բ: Այս քաղվածքը որոշակի հաստատում է, որ ցարական իշխանավորների համար «Անհայտ կորած» և «Անհայտ բացակայող» հասկացությունները, դրեթե, նույն իրավական կացությունն էին ցույց տալիս, ուրիշ ոչինչ:*

прод.) Директоры, инспекторы, учители и надзиратели гимназии, также смотрители и учители уездных училищ в Сибири, при увольнении вовсе от службы, получают пенсии и единовременные пособия по правилам, постановленным по учебной части (ст. 479 и след.), с тем, что прослужившим в означенных отдаленных местах десять лет, сроки к получению пенсий сокращаются пятью годами, причем однакож не должны входить в расчет прибавки жалования, полагаемые к штатным окладам. Прочие же, состоящие по учебному ведомству лица не в учительских и училищных должностях, получают пенсий по правилам, изложенным в статьях 250–256 и 272–276».

[«<Հոդված> 282 (ըստ XII-ի չարունակութեան). Սիբիրում գիմնազիաների դիրեկտորները, տեսուչները, ուսուցիչներն ու հսկիչները, ինչպես նաև գավառական դպրոցների տեսուչներն ու ուսուցիչները, ծառայութիւնից ընդմիշտ արձակվելու ժամանակ ստանում են թոշակ և միանվագ նպաստ՝ ուսումնական մասի որոշած կանոնների համաձայն (Հոդված 479 և հաջորդ.), այն հաշվով, որ հիշյալ հեռավոր վայրերում տասը տարի ծառայածների թոշակներ ստանալու ժամկետները կրճատվում են հինգ տարով, ընդ որում՝ հաշվի չպիտի առնվեն հատուկ հաստիքային դումարով ներթադրվող ռոճիկին արվող հավելումները: Իսկ սակայն ուսումնարանական դերատեսչութեունում եղած, բայց ուսուցչական և ուսումնարանական պաշտոններ չդրաղեցնող անձինք թոշակ են ստանում ըստ 250–256 և 272–276 հոդվածներում չարադրված կանոնների»[68]:

Այսօր էլ ծայրագույն հյուսիսում, Հեռավոր Արևելքում, Սիբիրում կամ բարձր լեռնային շրջաններում աշխատող ուսուցիչներին հատուկ արտոնութեուններ են տրվում, սահմանված տարիները ծառայելուց հետո թոշակավորում, և ոչ ոքի մտքով չի անցնում նրանց կոչելու անհայտ բացակայողներ կամ գաղտնի աքսորվածներ: Ինչպես ասացինք՝ Սիբիրի ուսուցիչներն անցյալում այդ արտոնութեուններից կարող էին օգտվել տասը տարուց ո՛չ պակաս ծառայելուց հետո միայն, և ո՛չ հինգ տարի հետո այն միանգամից տասը հաշվելով: Դպրոցը բանտ չէր: Բանտի օրենքներն այլ էին...

Ղազարյանը, ցավոք, կարդում է մի բան, բայց հասկանում է հակառակը. օրինակ՝ Աբովյանին զգուշացրել են, որ առանց թուլտավութեան չի կարելի մասնավոր դպրոց պահել, պետք է պաշտոնապես դիմել և արտոնութեուն ստանալ, այլապես տուժի կենթարկվի:

---

68 *Նույն տեղում, թ. 5ա–բ:*

Սա բավական է, որ Ղազարյանը հայտարարի, թե Աբովյանը տուգանվել է 75 ռուբլով, ու դա էլ քաղաքական հանցագործություն համարի... Այնինչ նման բան բնավ չի եղել: Այդպես վարվելով՝ ում ասես կարելի է քաղաքական հանցագործ համարել:

*Մենք հասնում ենք վերջին սենսացիային. ըստ Ղազարյանի՝ Աբովյանը 1853 թ. ապրիլին դեռ կենդանի էր, որովհետև նրա ծառայության ցուցակում «դեկավարությունը պատասխանները լրացրել է ներկա ժամանակով՝ «չունի», «ունի մի հողամաս...», «ամուսնացած է», որովհետև տարիքը գրված է՝ 43 և ոչ՝ 38 (անհետացման ժամանակ), իսկ «տարիքը գրվում էր **մինչև մահվան օրը**», որ Էմիլյան ծառայության ցուցակում անվանված է՝ **«Աբովյանի կինը (և ոչ թե այրին)»** և այլն: Եթե իսկապես **այրի** բառի բացակայությունն այդչափ վճռական նշանակություն ունի և լուրջ կռվան է 1853 թ. ապրիլին **«Աբովյանի ողջ լինելը»** հավաստելու համար, մենք ստիպված ենք հիասթափեցնել վարկածի հեղինակներին, քանի որ պաշտոնական մի շատ կարևոր վավերագրում՝ Երևանի քաղաքային ոստիկանության 1848 թ. հոկտեմբերի 14-ի գրության մեջ, Էմիլյան **այրի** է կոչված: Վերջինիս խորագիրն է՝* «Опекунам по имению безизвестно отсутствующего коллежского ассесора Абовьяна, вдове его г-же Эмилии...» *(«Անհայտ բացակայող կոլեգիական ասեսոր Աբովյանի ունեցվածքի խնամակալներին՝ նրա այրի տիկին Էմիլյային...»*[69]*:*

Նշանակում է՝ տեղական իշխանությունների համար Աբովյանը թեև անհայտ կորած, բայց 1848 թ. հոկտեմբերին արդեն մահացած մարդ էր, ուստի և անմտություն՝ 1853 թ. նրան Սիբիրում որոնելը:

Քանի դեռ որևէ մեկի անհայտ կորստի գաղտնիքը չէր պարզված, նա կենդանի էր համարվում: Այս դեպքում՝ 1848 թ. ապրիլին 38 տարեկան հասակում կորած Աբովյանը 1853 թ. ապրիլին պետք է 43 տարեկան լիներ: Հինգ տարի անցնելուց հետո միայն, ըստ գործող օրենքների (40-րդ հոդված), նրա կինը կարող էր օգտվել այրու իրավունքներից: Այստեղից էլ՝ 1853 թ.՝ «ունի», «չունի», «ամուսնացած է» ձևերի օգտագործումը:

Պատմաբանը պետք է իմանա նաև, որ ծառայության ցուցակները արտագրվում էին իրարից, և այն հարցերը, որոնք վերաբերում էին ավյալ անձնավորության ունեցվածքային դրությանը կամ աշխատանքային կենսագրությանը, նույնությամբ փոխանցվում էին հին ցուցակից նորին: Անհայտ կորածի ընտանիքը և ունեցվածքը նրանն

---

69 *Անտիպ բնագիրը ստացված է Վիկտորիա Աբովյանից և միացված Աբովյանի թղթոններին, նաև՝ Ա № 648:*

էին, և չէր կարելի ասել՝ ուներ: Բայց Աբովյանի ծառայության այս ցուցակում, ուր հարկ էր նշել, որ աստիճանավորը այլևս չկա, դրված է. «Не имел», «Пользовался» («Չուներ», «Օգտվել է»): Պատմաբանը պետք է իմանա այնուհետև, որ եթե Աբովյանն այդ ժամանակ աքսորում լիներ, նրա ծառայության ցուցակը պետք է կազմված ու հաստատված լիներ տվյալ բանտի կամ տաժանակրության վայրի պետի կողմից: Այդ ցուցակների պաշտոնական ձևն էլ ուրիշ էր և բազմաթիվ նոր հարցեր էր պարունակում:

Սիբիր աքսորվածի ու այնտեղ 5 տարի անցկացրած մարդու մասին Տփղիսյան կամ Շամախի–Դերբենդյան դպրոցների վերատեսուչները երբեք չէին կարող տվյալներ հաղորդել[70], այն էլ՝ ակնհայտորեն, 1848 թ. սկսած, երբ կախարդական հնդամյա արտոնության ժամկետը դեռ չէր էլ լրացել...

Ամբողջ Ռուսաստանում հանցագործներին ներում էին, գործերը՝ վերանայում, ժամկետները՝ կրճատում, այդ ինչպե՞ս է պատահել, որ արտոնյալ վիճակում Սիբիրի դպրոցներում աշխատող Աբովյանը ո՛չ ոքի լուր չի տվել, ո՛չ մի ներման չի արժանացել: Ռուսաստանում օրենք հասկացող մարդիկ չկայի՞ն, որ «անհայտ բացակայություն» բառերը բացատրեին Աբովյանի կնոջը կամ որդուն, որ սա հետո չասեր մարդկանց, թե հորը երևանի պարսիկները կենդանի թաղել են...[71]: Ինչպե՞ս կարելի է ինչ-որ անհայտ քրեական հանցագործներ ոմն Զերնիխի կամ ոմն Նասիրովի, կամ Բեսարաբիայից Կալուգա փոխադրված և որպես անծանոթ ներկայացվող Ղորղանովի (որը հանրահռչակ Վանկա-կայենն էր) արշինով չափել Աբովյանի «քաղաքական հանցանքը», երբ տառացիորեն ոչինչ չի պարզված, մնջռեղում ոչինչ չկա:

Գոնե Ղորղանովին հայ բանասերը լավ պիտի ճանաչեր և ամոթից կարմրեր, որովհետև նա բնավ քաղաքական գործիչ չէր, և ոչ ոքի մտքով չէր անցնում նրան դաղտնի անհետացնել: Նա կոմս Պասկևիչի համհարզն էր, ողջ Ռուսաստանում անուն հանած որպես բանասիրու և մատնիչ՝ Վանկա-կայեն մականունով, ծնունդով Թիֆլիսեցի Հովհաննես Հովսեփի Ղորղանյանը: Նրա հետ «մտերմություն» ունենալուց կործանվել են շատ աղնիվ մարդիկ... Հետագայում

---

70 Երևանի գավառական դպրոցը Կովկասի ուսումնական շրջան կազմվելու օրերից ենթարկվում էր Շամախի–Դերբենդյան դպրոցների վերատեսչությանը:

71 Арм. и Аб., Хачатур Абовян, Тифлис, 1906, стр. 18, Հ. Տեր-Աստվածատրյան, *Խաչատուր Աբովյան, Տիղիս, 1905, էջ 20:*

աշխատելով Անդրկովկասի գլխավոր կառավարչության դրասենյակներում՝ իշխանավորներն ամենակեղտոտ դործերը նրան էին վստահում: Ի վերջո, նրանց համբերությունն էլ է հատում, և Ղորղանովին աքսորում են նախ՝ Քիշինև, իսկ հետո փոխադրում Կալուգա: Հարազատների պաղատագին դիմումներից հետո գործին միջնորդում է Հայոց կաթողիկոսը, և 40-ական թթ. վերջերին Ղորղանովին թույլատրում են վերադառնալ Թիֆլիս: Այս ամենի մասին պատմում են հնօրյա հուշերն ու վավերագրերը: Նողկանքով են նրա մասին գրում հատկապես Դենիս Դավիդովը և Ազեքսանդր Երիցյանցը: Ահա ինչո՞ւ Աբովյանի և Ղորղանովի միջև անցկացվող զուգահեռը, ինչ կարգի էլ այն լինի, վիրավորում է նախ՝ հայ մեծ գրողի հիշատակը, և ապա՝ մեր ազգային արժանապատվությունը: Որքան էլ զարմանալի ու անհասկանալի, Ղորղանով-Վանկա Կայենի մտերիմ բարեկամներից էր ռուս գրող ու դիվանագետ Ա. Ս. Գրիբոյեդովը...

Մենք խնայում ենք ընթերցողներին և այստեղ կանդ առնում՝ Նշան Մուրադյանի մեկնաբանած և Վ. Ղազարյանի «Հայտնագործած» մնացած փաստերի քննությունը ավելորդ գտնելով, քանի որ գործ ունենք անտեղյակության ու չփոթի, անճշտությունների ու աղավաղումների հետ:

Աբովյանի ողբերգական վախճանի մի հին վարկածի այս ճևով հարություն տալն ու «լուծելը», **առանց խղճի խայթի** մեծ գործիչ Ներսես Աշտարակեցուն հանցագործ հռչակելն ու զրպարտելը, դիտական, բարոյականության ոլորտից դուրս բաներ են և արժանի ամենախիստ դատապարտման:

ՄԻ ԿՈՐԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

(«ԶԱՆԳԻ», 1860)

Ամեն ազգ ու աշխարհ, ամեն ժողովուրդ, բացի իր բուն անունից, ունի և իր խորհրդանիշը՝ կապված տվյալ երկրի բնության վեհ ու անկրկնելի հուշարձաններից մեկի կամ մյուսի և, մասնավորապես, դետերի հետ: Դրանք, կարծես, նրա ոգու, ճակատագրի և ազգային բնավորության հարազատ անդրադարձումներըը լինեն: Առանց Հայաստան աշխարհը խորհրդանշող այդ կենսատու երակների՝ աներևակայելի է հայ հայրենիքի ու ազգի գոյությունը: Օրինակ՝ ռուսների ազգային բնավորությունն ու էությունն անձնավորող նմանօրինակ հրաշքներից է Մայր Վոլգան, հնդիկներինը՝ սրբազան Գանգեսը, գերմանացիներինը՝ Հռենոսը: Իսկ մեզ՝ հայերիս, դեռ ալեհեր ժամանակներից, աշխարհը ճանաչում է ոչ միայն Արարատ-Մասիսով, այլև Երասխ-Արաքս, Արածանի-Եփրատ և Տիգրիս գետերով: Հայրենի քերթողները (Աբովյան, Ալիշան) ո՛չ վաղ անցյալում, այս խորհրդանիշ-գետերի շարքն են դասել նաև Զանգու-Հրազդանը: Եվ ո՛չ առանց հիմքի, որովհետև Զանգու-Հրազդանն էլ դարն է մեր ազգային բնավորության հետ, նրա հատկանշական գծերից մի քանիսի կրողն է:

Հին ու նոր դարերի հայ և օտար մատենագիրներն ու քերթողները եթե Արարատը բնութագրել են որպես հայության անցյալ փառքի ու պատմության լուռ վկա, Հայաստանի վերածնության անխոնջ գուշակ, իսկ կամուրջները չհանդուրժող մայր Արաքսը («... Եվ պետն Երասխ՝ անհանդուրժող կամուրջներու», Վիրգիլիոս, «Էնեական», երգ. Ը) և ամեհի Հրազդանը՝ որպես հայ ժողովրդի ազգային բնավորությունն ու հավաքական ուժն անձնավորող միֆական ըմբռնում ու պատասխան կերպարներ, և նրանց մասին խոսել ու պատմել հիացմունքով ու ահով, ապա Եփրատն ու Տիգրիսն էլ չուրջ երկու հազար տարի առաջ նկարագրել են քնարական, մեղմանուշ խոսքերով.

Եփրատն է այս՝ աղբյուրաշատ, եղեգնապատ.
Մյուսը, որմե կապույտ վարսեր կը հոսին,

Տիգրիսն, ուրեմն, ըլլա պիտի.
Ըսե՝ Հայերն են ասոնք:
(Օվիդիոս Նազոն, «Սիրո արվեստ»):

Հայաստանն անձնավորող այս գետերի և բնության ու հնության մյուս հուշարձանների մասին հյուսված երգապատումներից ամենակատարյալն ու ինքնատիպը, պիտի խոստովանել, հայոց նոր դրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի արձակ ու չափածո երկերն են և, վերջիններիս մեջ, Հրազդան-Զանգուին նվիրված դրվագները «Վերք Հայաստանի» վեպի մեջ, որոնցից վերջինը մի ամբողջ գլուխ է կազմում:

Հայոց լեռների գրկից և Սևանա անապակ ջրերից սկիզբ առնող Զանգուն՝ ջարդած ամեն չղթա ու կապանք և ծառս եղած, գալիս է, որ մեր ազգի տունը քանդողին ոչնչացնի, մեր հազարամյա անբուժելի վերքերը մաքրի ու ապաքինի, իր գութն ու բարիքները չազ տա ամենուր, կարոտ հայության պապակ սիրտը հովացնի և կասպիականի կոհակների մեջ միախառնվելով Մայր Վոլգային՝ ռուս հզոր տերության հովանու տակ վերածնի դարերով կործանված հայոց պետականությունը:

«Զանգին» Աբովյանի փայփայած զավակներից ու սիրած ստեղծագործություններից է: Նրա վրա հեղինակը թափել է տևական ու համառ աշխատանք, հղկել ու բյուրեղացրել է լեզուն ու ոճը, դյուրընկալելի դարձրել կենսահաստատ գաղափարները: Իր ոճի ինքնատիպությամբ ու կատարելությամբ, իր բանաստեղծական երևակայության թռիչքով՝ Աբովյանը, կարծես, լռելյայն մրցում է Նարեկա հանճարեղ վանականի հետ, ջանում հայոց հոգին ալեկոծող ցավերն ու տառապանքները հասկանալի դարձնել համայն մարդկությանը, հայտնագործել անհատի, ազգի ու հայրենիքի փրկության, բարեկեցության և անմահության խորհուրդը. «Քո գո՛րծքը, քո գո՛րծքը միայն քո անունը կպահեն: Հայրենասիրությունը միայն քո հիշատակը կտոնի, ազգասիրությունը քո արածը կենդանի կպահի...»:

«Զանգին» քիչ է հրատարակվել: Առ այսօր հայտնի են XIX դ. երկրորդ կեսին իրականացված երկու տպագրություն (երկուսն էլ պարբերական մամուլի էջերում) և չորսն էլ՝ 1948 թվականից հետո:

Խաչատուր Աբովյանի որդի Վարդանը մի նամակում՝ գրված 1896 թվականի հոկտեմբերի 5-ին և ուղղված մոսկովաբնակ հրատարակիչ ու մշակութային գործիչ Մկրտիչ Բարխուդարյանին, իր տարակուսանքներն արտահայտելով նույն օրերին «Զանգիի» տպագրությունը գրաքննության կողմից արդելվելու մասին, հետևյալ յուրջ առարկու-

թյունն է անում. «...հս բոլորովին զարմանում եմ, թե ինչո՞ւ քննիչը չէ թուլլ տվել տպելու, քանի որ դա (այսինքն՝ «Զանգին» — Պ. Հ.) տպված է եղել առանձին գրքուկով և այն էլ խիստ գրաքննության մի ջոջին՝ Նիկողայոս կայսեր օրոք»[1]:

Որովհետև, ինչպես «Վերք Հայաստանի» վեպը, այնպես էլ նրա «Զանգի» հավելվածն առաջին անգամ տպագրվել են Աբովյանի մահվանից (այսինքն՝ 1848 թ. ապրիլի 2-ից) հետո միայն և, ըստ Վ. Աբովյանի վերոհիշյալ վկայության, Նիկողայոս Առաջինի թագավորության տարիներին, իսկ այս վերջինը վախճանվել է 1855 թ. փետրվարի 18-ին, նշանակում է՝ խնդրո առարկա հրատարակությունը կարող էր լույս աշխարհ եկած լինել 1848–1855 թթ. միջև միայն:

Այդպիսի հրատարակության գոյությունը, սակայն, կասկածելի է ու անհավանական: Աբովյանի հեղինակած «Զանգի» երկի՝ այդ տարիներին վերաբերող որևէ հրատարակություն, հակառակ մեր ուսական որոնումներին ու հարցումներին, մինչև օրս երևան չի եկել Խորհրդային Միության և արտասահմանի հայագիտական հրատարակություններ ունեցող մատենադարաններում, նման մի գիրք չի նկարագրված կամ հաշվառման ենթարկված նաև հայ հին ու նոր տպագրություններին վերաբերող մատենագիտական աշխատություններում: Վերջապես՝ անժխտելի է, որ «Վերք Հայաստանի» վեպն ու նրա հավելվածը՝ «Զանգին», առաջին անգամ գրաքննության են ներկայացվել 1857 թվականին, և երկուսի տպագրության թույլտվությունն էլ տրվել է միաժամանակ, նույն տարվա օգոստոսի 16-ին: Նշանակում է՝ մինչ այդ տարին «Զանգի» խորագրով գիրք գոյություն ավելորդ բան պիտի համարել:

Դժբախտաբար, այս անժխտելի իրադրություններից չկարողանալով ճիշտ հետևություններ անել՝ Վ. Աբովյանի նամակին առաջին անգամ պետական շրջանառության մեջ դնող բանասերները չփոթության ու սխալանքի արդյունք են համարել գրողի որդու այս վկայությունը և, ընդհանրապես, մերժել «Զանգիի» առանձին գրքույկով հրատարակված լինելու հնարավորությունն ինչպես Նիկողայոս Առաջինի օրերում, այսինքն՝ մինչև 1855 թվականը, այնպես էլ հետագայում: Ահա՛ նրանց եզրակացությունը՝ արված հենց նույն տեղում. «Վ. Աբովյանը սխալվում է գրելով թե՝ «Զանգին» տպված է եղել առանձին գրքուկով. նման փաստ հայտնի չէ... «Զանգին» տպագրվել է միայն մամուլում (այսինքն՝ «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի 1860 թ. № 11-ում — Պ. Հ.)»:

---

[1] *Ե III, 388:*

Բայց Վարդան Աբովյանի մերօրյա ընդդիմախոսների ասածների մեջ մի ճշմարտություն այնուամենայնիվ կար. հիրավի, Նիկողայոս Առաջինի օրերում Աբովյանի երկերից ոչինչ չի տպագրվել, բայց ժամանակագրական մի անճշտությունն ուղղելով հանդերձ՝ նրանք թույլ են տվել նոր սխալ՝ ժխտելով «Զանգի» այլաբանական պատումի առանձին դրքույկով հրատարակված լինելու հնարավորությունն առհասարակ և չմտածելով, որ ինչ անհնար էր Նիկողայոս Առաջինի գահակալության վերջին չրջանում, հեշտությամբ կարող էր իրականանալ նրա մահվան հաջորդ տարիներին, ասենք՝ 1856–1860 թվականների ընթացքում: Շուրջ քառասուն տարիների հեռավորությունից անդրադառնալով այդ իրողությանը՝ Վարդան Աբովյանը, հարկավ, կարող էր չփոթել «Զանգիի» առաջին հրատարակության ժամանակն ու ճշգրիտ թվականը. բայց ո՛չ երբեք հարազատ հոր դրվածքների առաջին առանձին հրատարակությունների անունները, որոնք մինչև 1896 թվականը ընդամենը չորսն էին («Վերք», «Նախաշավիղ», «Պարապ վախտի խաղալիք», «Զանգի». առ այսօր մեզ այդքանն են հայտնի):

Ինչպես ստորև կտեսնենք՝ այդպիսի հրատարակություն ճիշտ որ եղել է, միայն թե ո՛չ Նիկողայոս Առաջինի օրոք, այլ նրա հաջորդի՝ Աղեքսանդր Երկրորդի գահակալության չրջանում:

«Վերքի» հրատարակության պատմությամբ զբաղված հին ու նոր բանասերների ուշադրությունից վրիպել է մի կարևոր սկզբնաղբյուր, որից պարզվում է, որ «Զանգիի» առաջին առանձին հրատարակությունը տեղի է ունեցել 1860 թվականին, «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում տպագրվելուն զուգահեռ: Գրքույկի մի օրինակը, շատ չանցած, ձեռք է բերել վաստակաշատ բանագետ, գրող ու դործիչ Գարեգին Սրվանձտյանը և «Արծվի Վասպուրականի» հանդեսի ընթերցողներին հասցեագրված «Տեսարան Հայրենի աշխարհի, Երևան քաղաք» հոդվածում՝ Հրազդան գետի մասին պատմող ոգևչունչ հատվածում, օգտվելով Աբովյանից՝ ի միջի այլոց գրել է. «Երևանցիք այս գետին վերա մեծ զգացմունք ունին, որ և զանազան խաղեր, երգեր և դովեստներ են չինած, քան զամեն աղեկն է եռանդուն հայրենասեր պ. Խ. Աբովյանին հորինած ոգելից ճառը, զոր առանձին տետրակով տպված է ի Թիֆլիզ (տե՛ս և ի «Կռունկ հայոց աշխարհին», թիվ ԺԱ, 1860)» և այլն[2]*:*

---

[2] *«Արծվի Վասպուրականի», 1861, № 1, նաև՝ Գ. Սրվանձտյան, Երկեր, հ. 2. Երևան, 1982, էջ 20, (ընդգծումը մերն է — Պ. Հ.):*

Ո՞վ է պատրաստել «Զանգիվի» այդ առաջին առանձին հրատարակության բնագիրը և հոգացել տպագրական ծախքերը:

Երախտանքի արժանի այդ անձնավորությունը անցյալի բազմաշխատ, սակայն հանիրավի մոռացված դործիչ, հեղինակավոր իրավաբեմ և լրջախոհ բանասեր Հովսեփ Գաբրիելի Փոնդոյանցն է (1824–1883, հուլիսի 6), այն մարդը, որին բանասիրությունը մեծապես պարտական է հայրենի մատենագրության բացառիկ արժեք ներկայացնող հուշարձաններից մի քանիսի, մասնավորապես՝ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի ժամանակագրության և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի Հիշատակարանի բնագրերը կորստից փրկելու, վերծանելու, հրատարակելու և առաջին անգամ միևնաբանելու համար («Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի էջերում) ու նաև, որ անչափ կարևոր է, մեր արծարծած հարցի՝ Խաչատուր Աբովյանի երկերի հետմահու առաջին, համարյա բոլոր հրատարակությունների համար, որոնք կատարված են բանասիրական-բնագրագիտական խոր հմտությամբ ու հնարավոր ճշդրտությամբ, և չատերն, այսօր արդեն, սկզբնադրի արժեք ունեն, որովհետև նրանց մի մասի բնագրերը անդարձ կորել են ու չեն հասել մինչև մեր օրերը: Նման սխրանքի համար Հ. Փոնդոյանցը Հայ բանասիրության պատմության մեջ նույնպիսի տեղ պիտի գրավի, ինչպես Գևորգ Ախվերդյանը: Սակայն այդ ամենի մասին ավելի մանրամասն կխոսենք մեկ այլ առիթով: Հիմա չարունակենք մեր պատումը:

*Գրաքննիչ Հովհաննես Ղալթմազյանցի հետ նպատակս կարգավորելով Աբովյանի երկերի հրատարակության վերաբերյալ ծագած վիճելի հարցերը և պաշտոնական թուղթակցություն ստանալով՝ 1857 թվականի սեպտեմբերի 10-ին Հ. Փոնդոյանցը հատուկ պայմանագիր է կնքում **կոլեգիական ասեսոր Խաչատուր Աբովյանի այրու հետ**, երկու հարյուր ռուբլով գնում է նրա **հանգուցյալ ամուսնու** ձեռագիր երկերից նախ երկուսի հրատարակության իրավունքը **վեց տարի ժամանակով** և անհապաղ դործի անցնելով՝ 1858 թ. օգոստոսին առանձին գրքով լույս է ընծայում «Վերք Հայաստանի» վեպի հիմնական մասը, իսկ երկու տարի անց (1860 թվականի դեկտեմբերին)՝ «Զանգին»:*

Նկատի առնելով, որ Աբովյանի գրական ժառանգությունը կորստից ու մոռացությունից փրկելու և ժողովրդականացնելու, 50–60-ական թվականների գրական չարժման մեջ նրա բախտորոշ դերն ու հետմահու մասնակցությունն ապահովելուն մեծապես նպաստող այդ հայրենասիրական ձեռնարկման մասին պատմող միակ վավերագիրը ցարդ անծանոթ է մնացել ո՛չ միայն ընթերցող լայն

շրջաններին, այլև հարցի նեղ մասնագետներին, ստորև մենք բերում ենք Պայմանագրի բնագիրն ըստ Աբովյանի ժառանգների մոտ պահպանված օրինակի, որը տարիներ առաջ, մեր հորդորներով, հանձնվել է Ե. Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանին (գրված է ռուսերեն, թարգմանությունը մերն է և բնագրին հարազատ).

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մենք՝ ներքոստորագրյալներս, կոլեգիական ասեսոր Խաչատուր Աբովյանի այրին և կոլեգիական քարտուղար Հովսեփ Գաբրիելի որդի Փոնդոյանը, մեր միջև պայման կապեցինք հետևյալի մասին.

1) Մեզանից առաջինը երկու հարյուր արծաթ ռուբլով վաճառեց մեզանից երկրորդին իմ հանգուցյալ ամուսին Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» խորագրով երկի ճեռագրի և նրա հավելված մյուս՝ «Զանգի» խորագրով երկի հրատարակության իրավունքը՝ 1857 թվականի սեպտեմբերի առաջին օրվանից սկսած, վեց տարի ժամանակով, այսինքն՝ մինչև 1863 թվականի սեպտեմբերի մեկը, առանց տպաքանակի որևէ սահմանափակման և առանց հրատարակությունների թվի որոշման: Հրատարակության իրավունքի վճարը՝ երկու հարյուր արծաթ ռուբլի, մազանից առաջինն ստացել է նախօրոք, իսկ յուրաքանչյուր հրատարակությունն ավարտելուն պես մեզանից երկրորդը պարտավոր է մեզանից առաջինին տալ, առանց փողի, հիշյալ գրքից հիսունական օրինակ՝ թղթե կազմով:

2) Հիշյալ ժամանակամիջոցում ո՛չ ես և ո՛չ էլ իմ ամուսնու ժառանգներից որևէ մեկն իրավունք չունի հրատարակելու նշված ճեռագիրը, հակառակ դեպքում՝ մեզանից երկրորդն իրավունք ունի իր օգտին առգրավելու տպագրված բոլոր օրինակները:

3) Մեզանից երկրորդը հիշյալ վեց տարիների ընթացքում կարող է մեկ ուրիշին վաճառել հիշյալ ճեռագրի հրատարակության իրավունքը պարտավորությամբ հանդերձ՝ յուրաքանչյուր հրատարակության ժամանակ, հիշյալ վեց տարիների ընթացքում, տալու մեզանից առաջինին հիսունական օրինակ:

Կոլեգիական ասեսորի այրի՝ Էմիլյա Աբովյան
Կոլեգիական քարտուղար՝ Հովսեփ Փոնդոյան

Թիֆլիս, 1857 թվականի սեպտեմբերի 10-րդ օրը:

Միջոցները չէին ներում, որ Փոնդոյանցը միանգամից հրապարակ հաներ և՛ բուն «Վերք Հայաստանին», և՛ նրա հավելվածը՝ «Զանգին», որը նա ընկալում էր որպես անկախ ստեղծագործություն: Զենք ասում արդեն, որ վերջինիս մի մասն էլ գրաբար էր և մի որոշ առումով չէր ներդաշնակում Աբովյանի լեզվական քաղաքականությանը:

«Վերքի» հրատարակության գրկաբաց ընդունելությունից և առաջ բերած լայն արձագանքներից համոզվելով, որ աննախադեպ են լինելու Աբովյանի ազդեցությունն ու դերը հայ հոգևոր կյանքի վրա և նոր գրականության ու գրական լեզվի զարգացման գործում, Հ. Փոնդոյանցը 1860 թ. ձեռնարկում է «Զանգիի» առանձին հրատարակությանը, միաժամանակ, ավելի շատ ընթերցողներ շահելու համար, տեղավորում «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում (№ 11): Երկուսն էլ լույս են տեսնում 1860 թ. դեկտեմբերի կեսերին:

«Զանգիի» առանձին հրատարակության տպագրությունն ավարտելուն պես Փոնդոյանցն անհապաղ լուր է տալիս Աբովյանի այրուն՝ տիկին Էմիլյա Լոզինին, որն ապրում էր Երևանում:

Ահա՛ նրա նամակի համապատասխան մասը, որը նույնպես դիտական չրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Թիֆլիս, 1860 թվական, դեկտեմբերի 17-րդ օրը

Ողորմած տիրուհի.

1857 թվականի սեպտեմբերի 10-ին, ինչպես Ձեզ հայտնի է, ես երկու հարյուր ռուբլի արծաթով Ձեզանից գնեցի Ձեր հանգուցյալ ամուսնու երկու գրվածքը, այսինքն՝ «Վերք Հայաստանին» և «Զանգին»: Այս երկերից առաջինն ես հրատարակեցի 1858 թվականին, ընդ որում՝ պարոն Խատիսյանցի միջոցով Ձեզ հասցրի այդ երկի հիսուն օրինակը: Այժմ ես տպագրել եմ Ձեր հանգուցյալ ամուսնու մյուս երկը, որ հայտնի է «Զանգի» անունով: Չիմանալով՝ ո՞ւմ հանձնել այդ երկի հիսուն օրինակը, որոնք ես, ըստ պայմանագրի, պարտավոր էի հասցնելու Ձեզ, խոնարհաբար խնդրում եմ Ձեզ՝ տեղեկացնել ինձ այդ մասին:

Եթե դուք կցանկաք, ես դրանք վաճառքի համար կհանձնեմ պարոն Խատիսյանցին. այդ դեպքում կխնդրեի Ձեզ՝ տեղեկացնել ինձ, թե ի՞նչ գնով կուզենայիք վաճառել այդ գիրքը: Ավելորդ չեմ համարում ավելացնել այստեղ, որ Ձեր ամուսնու «Զանգի» երկը

տեղավորվեց տպագրական մեկ թերթում, այն բաղկացած է ընդամենը տասնհինգ տպագիր էջից:

Բարձր գնահատելով Ձեր հանգուցյալ ամուսնու երկերի արժանիքները՝ ես կցանկանայի տպագրել Ձեր ամուսնու մյուս երկերն էս, ինչ որ մնացել է, և եթե Դուք ուզենայիք հանձնել ինձ դրանց հրատարակության իրավունքը, ես ինձ համար մեծ ուրախություն կհամարեի ձեռնարկելու դրանց տպագրությանը...»:

Խատիսյանցը, որ հիշվում է այս նամակում, Խ. Աբովյանի սիրելի աշակերտներից էր, գիտնական-քիմիկոս ու մանկավարժ Գաբրիել Ստեփանի Խատիսյանցը (1831–1898), որը մեծ ծառայություններ ունի Աբովյանի ստեղծագործությունների ժողովրդականացման և նրա գրական-մանկավարժական ավանդները հայ 60-ականներին փոխանցելու գործում:

Աբովյանի այրին մեծ ուշացումով պատասխանելով Հ. Փոնդոյանցի այս նամակին՝ 1861 թ. մարտին Երևանից խնդրում էր նրան «Զանգիի» առանձին հրատարակությունից երկու օրինակ ուղարկել իրեն, իսկ մնացածը (48 օրինակը — Պ. Հ.) հանձնել վաճառքի: Փոնդոյանցը կատարում է նրա ցանկությունը և գրքույկները հանձնում Տիղիսի գրավաճառին: Մեկ այլ, դարձյալ անտիպ վավերագրից պարզվում է, որ «Զանգին» վաճառվում էր 10 կոպեկով:

Շատ չանցած՝ Աբովյանի այրին համապատասխան նոր պայմանագրով Հ. Փոնդոյանցին է վաճառում նաև իր հանգուցյալ ամուսնու ուրիշ վեց երկերի («Նախաշավիղ», «Պարապ վախտի խաղալիք», «Օսաննա», «Ագնես», «Հզնվամտություն և Շնորհակալություն», Զափածո երկերի և ժողովրդական առածների մի անվերնագիր հավաքածու) իրավունքը: Դրանք էլ լույս են տեսնում 1862–64 թթ. ընթացքում:

«Զանգիի» առանձին հրատարակությունից և ո՛չ մի օրինակ մինչև օրս Երևան չի եկել Խորհրդային Հայաստանի և Միության գրապահոցներում: Հայտնի չեն նաև մասնավորների մոտ պահպանված օրինակներ: Այս պարագաներում՝ հաստատ ոչինչ չի կարելի ասել նրա գրատպական հատկանիշների և անվանաթերթ-տիտղոսաթերթի մասին:

Դատելով «Վերք Հայաստանի» վեպի, «Նախաշավիղ կրթութեան» ձեռնարկի (Առաջին մաս) և 1858–64 թթ. ընթացքում Հ. Փոնդոյանցի ջանքերով իրականացված մյուս հրատարակություններից՝ «Զանգիի» անվանաթերթը կարող էր հետևյալ ձևավորումն ունենալ.

Ջ Ա Ն Գ Ի

Շարադրություն
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ

Տփղիս
ի հայ տպարանի
Գ. Մելքումյանց և Հ. Էնֆիաճյանց

1860

Բովանդակությունը. *չհամարակալված էջ Ա՝ անվանաթերթ, և էջ Բ՝ գրաքննական թուլլտվության մասին նշում: Համարակալված էջեր 1–15՝ «Զանգիի» բնագիրը, էջ 16-ը մնացել է մաքուր: Այս հրատարակության համար օգտագործվել է «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի 1860 թ. 876–890 էջերի չարվածքը (№ 11):*

Մեր խնդիրքն է Հայաստանի և սիյուռքի բոլոր հայ դրասերներին՝ ստուգել իրենց գրադարանները, և եթե որևիցե մեկի մոտ դեռևս պահպանվել է «Զանգիի» 1860 թվականի առանձին հրատարակությունը, այդ մասին լուր տալ, իսկ հնարավորության դեպքում նաև՝ գրքույկի օրինակը կամ մանրաժապավենը (լուսապատճենը) ուղարկել ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտին, որը ներկայումս տպագրության է պատրաստում «Վերք Հայաստանի» վեպի ու նրա հավելվածի՝ «Զանգիի» գիտական նոր հրատարակությունը՝ հանդերձ սևագիր տարբերակներով, բնագրային տարբերություններով և ընդարձակ մեկնաբանություններով, ուր հատուկ բաժին է հատկացվելու հիշյալ երկի ցարդ եղած բոլոր հրատարակությունների (ինչպես առանձին գրքերով, այնպես էլ ամսագրերի, պաստգրքերի, զանազան ժողովածուների և երգարանների մեջ) մատենագիտական նկարագրությանը:

Ո՞ՒՐ ԿՈՐԱՎ ԱԲՈՎՅԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

1

Գրքերը ո՛չ միայն ընթերցողների, այլև գրողների կյանքի անդա-վաճան ուղեկիցներն են, վստահելի խորհրդատու և ուսումնառության նախանձելի դպրոց, երբեմն էլ սեփական զգացմունքների ու խոհերի հարազատ թարգման: Կարծես դաղափարակիցներ ու արյունակիցներ լինեն, թեպետ աշխարհ են եկել, տարածվել, գործել տարբեր դարերում և աղգային միջավայրերում: Դիպուկ ու տարողունակ են այդ առու-մով Հովհ. Թումանյանի հայտնի խոսքերը՝ ձոնված իր գրադարանին.

Բազմած են չուրջըս նրանք ամեն օր —
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհքի,
Երգում են, պատմում ներդաչնակ ու խոր
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի [1]...

Գրողների գրադարաններն ունեն նաև իրենց հատկանշային կողմերը, իրենց որոշակի դիմագիծը, որ, համարյա միշտ, դաչն է գրադարան կազմողի հետաքրքրասիրությունների և որոնումների հետ: Ու շատ հաճախ էլ ենթարկվում են նույն դրամատիկական ճակատագրին, ինչ նրանց տերերը:

Ապրում է գրողը լիութ յան մեջ՝ չքեղ կազմերի մեջ ու ընտիր պահարաններում ապահով ննջում են նաև նրա գրքային դանձերը:

Մեռնում է գրողն անհայտության մեջ՝ մասնատվում ու անհետ կորչում է մեծ ջոհղութ յունների գնով նրա հավաքած գրադարանը:

Խաչատուր Աբովյանը և դեռ վիրքրուշ նրա հավաքած գրադարանն այս ավանդական կարգից դուրս չէին: Նույն ճակատագիրն է բաժին ընկել և՛ անմահ գրողին ու հայրենասերին, և՛ նրա գրադարանին, որի վերականգնման կամ դեթ մոտավոր ցուցակը կազմելու ուղղութ յամբ համարյա ոչինչ չի արված: Եվ մեր սուրբ նոթերը այդ պակասը մասամբ միայն լրացնելու նպատակն են հետապնդում:

Ե՞րբ է Խաչատուր Աբովյանը ձեռք բերել իր առաջին գիրքը, ո՞ւմ հեղինակութ յամբ, որտեղի՞ ու ո՞ր թվականի հրատարակութ յուն էր

---

[1] Հովհ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, հ. I, Ե., 1940, էջ 530:

այն. այսօր այդ հարցերին արդեն անկարելի է ճշդրիտ պատասխաններ տալ, որովհետև նրա դրադարանը չի պահպանվել, իսկ երբևէ ձեռք բերած ձեռագիր ու տպագիր գրքերի ցուցակն ընդհանրապես չի կազմվել կամ մեզ չի հասել: Եվ այնուամենայնիվ, հայտնի են Աբովյանի ընթերցած առաջին գրքերից մի քանիսի անունները՝ Սաղմոսարան (երևի թե Էջմիածնի հրատարակություն, 1818 թ.), Մարդարէութիւն Դանիէլի, Կտակի հրդ. և Սուրբ Ստեփաննոս գիրք: Ընդ որում առաջին մատյանը պատանի Աբովյանը վերցնելով Էջմիածնի մատենադարանից՝ ընթերցել է իր խցում, 1820 թվականի հուլիսի վերջերին, իսկ վերջին երկքը դուց սովորելով՝ արտասանել է հանդիսավոր արարողությունների ժամանակ, Էջմիածնի Մայր տաճարում, 1820 թվականի մարտի 26-ին, ապրիլի 11-ին և դեկտեմբերի 25-ին, մինչև անգամ պարգևի արժանացել[2]:

Գիտենք այնուհետև, որ Ներսիսյան դպրոցում ուսանելու տարիներին Աբովյանի դասագրքերն են եղել Մ. Զամչյանի «Քերականութիւն Հայկազեան լեզուի», Ս. Ագոնցի «Ճարտասանութիւնը» (քաղվածած հինգ գրքից կամ մասերից) և Է. Թեսալրոսի «Իմաստասիրութիւն բարոյականը» (ըստ Հերթականության՝ լույս են տեսել Վենետիկում, 1779, 1775, 1793 թթ.), որոնց պարունակած նյութերն ու դրույթները նա հրաշալիորեն յուրացրել և հետագայում օգտագործում էր իր դրական-մանկավարժական գործունեության ընթացքում: Այդ գրքերի օրինակները պետք է որ Աբովյանն ունենար իր դրադարանում:

Էջմիածնում ու Տիֆլիսում անցկացրած նույն այդ տարիներին Աբովյանը կարդացել ու սկսրել է Նարեկացու «Մատեան ողբերգութեանը», Հայոց «Շարակնոցը», Աստվածաշունչ մատյանների մեծ մասը, Վ. Ա. Ժուկովսկու բանաստեղծությունների առաջերեն ինչ-որ հրատարակություն, Ս. Ագոնցի «Պատմութիւն կենաց և վարուց

---

2 *Համապատասխան տվյալները նախապես օգտագործել ենք մեր «Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը» աշխատության մեջ (Ե., 1967). ուստի վերջում չենք նշում սկզբնաղբյուրները: «Մարգարէութիւն Դանիէլին» հին կտակարանի նույնանուն գիրքն է, իսկ «Կտակի երրդը»՝ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ու գրող Հակոբ Նալյանի կամ էլ Ամենայն Հայոց Կաթողիկոս Սիմեոն Երևանցու նույնանուն «Կտակ Աւագ ուրբաթու» («Կտակ Մեծի ուրբաթու») երկերից մեկը կամ մյուսը: Դրանց ձեռագիր արտագրությունները պահվում են Մաշտոցյան մատենադարանում (տե՛ս ձեռագիր №№ 5129, 5137, 5157 և այլն). դուցե թե Աբովյանը ձեռքի տակ է ունեցել Սիմեոն Երևանցու հեղինակածը: Անտարակույս, «Սուրբ Ստեփաննոս գիրքը» Ստեփաննոս Նախավկային նվիրված ներբող պիտի լինի:*

տեառն Մխիթարայ Սեբաստացւոյ բարւոնապետի և աբբայի» (Վենետիկ, 1810), *թերևս նաև՝ Մ. Ջամչյանի եռահատոր Հայոց պատմությունը և գրքեր ու հիշատակարաններ Ղուկաս Վանանդեցու, Սիմեոն Երևանցու մասին (դժվարանում ենք որոշակիորեն մատնանշել վերջինների խորագրերը. մեկը, թերևս, Գ. Խուբովի ռուսերեն ակնարկն էր՝ Սիմեոն Երևանցու կաթողիկոսությունից մինչև 1809 թ. Հայաստանի գլխով անցած դեպքերի մասին.* «Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1779 г.) до 1809 года» *(թարգմ. Հովսեփ Հովհաննիսյանի, Ս. Պետերբուրգ, 1811):*

Անճամբ Աբովյանին պատկանող առաջին գրքերից առ այսօր Հայտնի են երեքի անունները. 1) Հայոց ՌՂԹ(=1650) թվականին Քանովա ավանի Սուրբ Նշան վանքում Բարլամ Սեբաստացու արտագրած Շարակնոցը, որը հետո, 1831-ին, Աբովյանը նվիրեց Դորպատի համալսարանի գրադարանին, որտեղ և պահվում է այժմ: 2) Ներսիսյան դպրոցն ավարտելու կապակցությամբ տեսչության կողմից պարգև ստացած՝ Մոսկվայի Հոգևոր սեմինարիայի տեսուչ Միխայիլ Ալեքսեևիչ Սմիրնովի քարոզների ժողովածուն՝ «Проповеди Мефодиевы» *խորագրով (Հրատարակության թվականը չենք պարզել) և 3) Հ. Ալամդարյանի «Հրահանգ քրիստոնէական վարդապետութեան» (Տիխիս, 1825) ուսումնական ձեռնարկը, որը գնել էր 1826 թվականին՝ անհրաժեշտ գումարը փոխարինաբար վերցնելով Թիֆլիսեցի վաճառական Հովսեփ Երևանցյանից: Վերջին երկու գրքերի հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ:*

1826 թ. նոյեմբերի սկզբներին, Հաղբատի վանքում, Կիլիկյան Հայաստանի վերջին թագավոր Լևոն VI Լուսինյանի մասին եղած տեղեկություններն արտահանելու և հայերեն թարգմանելու առիթով՝ Աբովյանը Հարություն Արարատյանից ստանում է Ն. Կարամզինի «Письма русского путешественника» *ուղեգրական աշխատության 5-րդ մասը (Մոսկվա, 1801) և աշխատանքն ավարտելու ու պատվիրատուին (Հ. Արարատյանին) հանձնելուց հետո, գիրքը պահում է իր մոտ: Սա Աբովյանի ապագա գրադարանի առաջին գրքերից չորրորդն է:*

1828 թվականի սեպտեմբերի 30-ին վախճանվում է Խ. Աբովյանի խնամակալ Անտոն արքեպիսկոպոսը, իսկ նոյեմբերի սկզբներին վանքի իշխանավորները՝ հարդելով հանդուցյալի կամքը, վերջինիս թողած 16 կտոր դիրքը բաժանում են նրա սանների՝ Հովհաննես աբեղայի (Սևանա մենաստանի ապագա վանահոր) և Աբովյանի միջև, հավանաբար, կեսը տալով մեկին և մնացածը՝ մյուսին: Թե Աբովյանն

անձամբ ի՞նչ գրքեր ստացավ, հետագա վավերագրերն այդ մասին լռում են: Բոլոր դեպքերում, արդեն այդ ժամանակ Աբովյանի անձնական գրքերի թիվը անցնում էր տասից:

20-ական թթ. վերջերին Աբովյանը հրապուրվում է ուշ միջնադարի հայ տաղերգուների՝ Պետրոս Ղափանցու, Պաղտասար Դպրի, Սիմեոն Երևանցու, Պետրոս Բերդումյանի և Ահարոն Վարդապետի ստեղծագործություններով, որոնց նմանողությամբ հորինում է տաղեր ու քերթվածներ: Որ այդ տաղերգուների երկերի տպագիր ու ձեռագիր հրատարակությունները նա կարդացել է շարունակաբար, կասկած չի հարուցում:

1829 թ. գարնանը, Տիլիսից բերել տալով «Реестр российским книгам» *մատենադիտական տեղեկատուն՝ Աբովյանը մի քանի գրքեր է դուրս գրել Մոսկվայից: Ստացե՞լ է նա այնուհետև պահանջած գրքերը, ո՞ւմ գրվածքներն էին դրանք և ի՞նչ խորագրով ու բովանդակությամբ՝ առայժմ հնարավոր չէ ճշտել: Այդ նույն ժամանակ, մասնավորապես մայիս ամսին, Մոր Մաթևյանցի հետ միասին, էջմիածնի մատենադարանից վերցնելով՝ Աբովյանն ընթերցել է հետևյալ գրքերը.*

1. Ռուսերեն Աստվածաշունչ (եկեղեցական-սլավոնական գրերով)

2. Ռուսերեն-սլաբակերեն բառգիրք

3. О должностях человека и гражданина, книга к чтению, определенная в народных училищах Российской Империи *(լույս է տեսել Ս. Պետերբուրգում, առաջին անգամ՝ 1787 թ. և մինչև 1818-ը ունեցել է 13 հրատարակություն: Համապատասխան վավերագրում նշված չէ, թե այդ հրատարակություններից ո՞րն է նա կարդացել):*

4. О подражании Иисусу Христу четыре книги, или *Фомы Кемпского* Златое сочинение для христиан, Москва, 1784.

Միջնադարյան այս դպրման ստվածաբանի աշխատությունը՝ «Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի» խորագրով և վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, հայր Վրթանես Ասկերյանի թարգմանությամբ, երկրից լույս է տեսել տակավին XVIII դարում (1737 և 1786 թթ.): Բացառված չէ, որ Աբովյանը գրքի ռուսերեն հրատարակությունը վերցրել է հայերենի հետ համեմատելու և այդ ձևով ռուսաց լեզվի իմացությունը խորացնելու համար: Կարծում ենք, նույն նպատակի համար է վերցրել նաև հաջորդ չորս գրքերը.

5. Գ. Խալդարեան, Գիրք, որ կոչի Շաւիղ լեզուագիտութեան, Սանկտպետերբուրգ, 1788 (լրականում լեզվագիտական-քերականական հարցեր գրեթե չի քննում այս աշխատությունը և ռուս-հայերեն բառգիրք է):

6. Исповедание Христианской веры армянской церкви, СПб., 1799 *(լույս է տեսել Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի թարգմանությամբ և պարունակում է հայ լուսավորչական եկեղեցու ժամանակագրությունը):*

7. Խորենացու Աշխարհացույց, ռուսերեն (ի՞նչ հրատարակություն է, չենք պարզել):

8. Армянская история, сочиненная *Моисеем Хоренским,* с кратким географическим описанием Древней Армении, т. 1, ч. II, СПб., 1809 *(Հովսեփ սարկավագ Հովհաննիսյանի թարգմանությունը):*

Այս ութ գրքերից 5-ը (3–6, 8) անձամբ ուսումնասիրել ենք, առաջին երկուսի ինչ հրատարակություն լինելը դեռ չենք պարզել, իսկ 7-րդ գիրքը՝ Խորենացու Աշխարհացույցի ռուսերեն հրատարակությունը, որը լույս տեսած պիտի լիներ մինչև 1829 թվականը, առ այսօր անծանոթ է հայ մատենագետներին և Խորենացու անձի ու գործի գիտակներին, եթե միայն այն չի չփոթված Հակոբ Շահամիրյանի «Краткое историческое и географическое описание Царства Армянского» *գրքի (թարգմ. Վ. Վահանով, ՍՊր, 1786) կամ էլ Խորենացու Պատմության վերոհիշյալ ռուսերեն հրատարակության II գրքի համապատասխան բաժնի առանձնատիպի հետ: Դարձյալ նույն օրերին Աբովյանն ուսումնասիրել է նաև էջմիածնի մատենադարանին պատկանող երեք ձեռագիր բառգիրք, որոնք գրանցված էին Մանվել Կյումուրչխանեցու կազմած ձեռագրաց ցուցակի 74 (2-ը) և 76 համարների տակ:*

Հիշյալ ձեռագրացուցակի հետ ծանոթությունը հավաստում է, որ միայն № 74-ի տակ իրականում համախմբված են եղել տասը բառգրքեր, իսկ № 76-ի տակ՝ վեց, բոլորն էլ նույն կամ նման բովանդակությամբ: Աբովյանի օգտագործած այդ բառգրքերը պարունակել են միջնադարյան հայ բառարանագրության համարյա բոլոր հուշարձանները՝ «Երեմիայի Մեղրեցւոյ բառգիրք», «Բառարան Նոր Աչխարհի, որ ասի Ամերիկա», «Բառք քերթողականք», «Հանդէս բանաստեղծաց», «Բառք Հայոց», «Բառք Վարդան վրոց» (Եղիշեի դյուցազներգության մեջ օգտագործված հին պարսկերեն բառերի բառարան), «Բառք քերականի» (Դիոնիսիոս Թրակացու քերականության մեջ եղած լեզվագիտական եզրույթների բառարան), «Նշանագիրք իմաստնոց» և այլն:

Հայտնի է, որ 1829-ին Աբովյանի ձեռքին է եղել մի ռուսերեն գիրք ևս՝ «Император Александр в Париже и падение Наполеона»՝ *լույս տեսած Մոսկվայում, 1814-ին: Աբովյանը սկսել էր անդամ հայերեն թարգմանել այդ գիրքը, բայց առաջին 7 էջերից հետո*

պատարեցրել է աշխատանքը: Անհավանական չէ, որ հիշյալ հատորը Աբովյանի անձնական մատենադարանից էր: 1829 թ. գարնանից մինչև 1830-ի կեսերը, ավելի քան մեկ տարվա ընթացքում, Աբովյանն իր պրոգրամը հարստացրել է նոր դրքերով, բայց վավերագրերում այդ մասին որևէ տվյալ չենք գտնում: Գիտենք այսքանը միայն, որ 1830 թ. մայիս–հունիսին, մինչ Դորպատ ուղևորվելը, Հովհաննես վարդապետ Շահխաթունյանից նվեր է ստանում չորս դիրք, բոլորն էլ հայերեն: Ահա այդ հրատարակությունները.

1. Ագաթանգեղոս, Պոլիս, Օրթագյուղ, 1822:
2. Պատմութիւն ի Ղազարայ Փարպեցւոյ, Վենետիկ, 1793:
3. Պատմութիւն յեղիշայէ: .

Վերջին դիրքը մինչև 1830-ը լույս է տեսել հինգ անգամ՝ Պոլսում (1764, 1823), Պետերբուրգում (1787), Կալկաթայում (1816) և Վենետիկում (1828): Աբովյանի ունեցածը, թերևս, Պետերբուրգի հրատարակությունն էր:

4. Վարք և պատմութիւն Լուսաւորչի, Տրդատայ ևն:

Այս դրքի մասին ևս մանրամասները պակասում են: Աբովյանի ունեցածը գուցե թե Մատթեոս Եվդոկացու «Պատմութիւն վարուց սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին» դիրքն է՝ լույս տեսած Վենետիկում, 1749 թվականին:

Հնարավոր է, թերևս, որ Շահխաթունյանի նվիրածը Պաղտասար Դպրի (1683–1768) հրատարակած հայատառ-տաճկերեն «Ոս պատմութիւն դիրքի օլտուր քի Գրիգորիոս սուրբ Լուսավորիչին էվելինտին ախբըրընտաք պատմութիւնունու» («Այս պատմագիրքը սուրբ Գրիգորիոս Լուսավորչի առաջներում արածների պատմությունն է») համեստ ժողովածուն լինի, որն ունեցել է մի քանի տպագրություն, բոլորն էլ անթվակիր (իմ օգտագործածն երրորդն է՝ «իւչիւնճի քէրրէ պասմա օլաճաղընտա»): Այդ դրքի արձագանքները կարելի է, անգամ, որսալ «Վերք Հայաստանի» վեպում: Պաղտասար Դպիրը մի ամբողջ գլուխ է նվիրել Գրիգոր Լուսավորչի և Հրեշտակի խոսակցությանը. «Հարցմունք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ընդ Հրեշտակին»: Այդ հիշում է և վեպի անանուն հերոսը. «Ինչպես որ հրեշտակը կրկուսմը մեր սուրբ Լուսավորչին պատմել ա...»[3]: Պաղտասարը «Համառօտ խրատաբանութիւն» գլխում ասում է. «Պիտի պու սուրբ հավատքա կելմեմիզ իչին սուրբ Գրիգոր Լուսավորիչ ալլահըն քերեմի իլե նո՛

[3] Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, 1981 թ. հրատ., էջ 149–150:

ապա չարչարանքներ չեքոփ, վե ալլահ պիզի նե՛ գատաբ սեվոր՝ քի պու ազիզ սուրբ հավատքա արժանի էյլեսի» («Որպեսզի մեր այս սուրբ հավատքին արժանանայինք, մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչն Աստուծո կամքով ինչպիսի չարչարանքների ենթարկվեց, և Աստված մեզ ինչքան սիրեց, որ այս ազիզ, սուրբ հավատքին արժանացրեց» — էջ ՃԲ), որին համազոր՝ «Վերքի» երկրորդ դէխում կարդում ենք. «Աստված պետականը որ մեր սուրբ Լուսավորչուն էնքան չարչարեց... որ մեր ազգն... Աստուծո մոտ ալարզերես գտնվի ու երկնային թագավորությունը վայելի... որ ամեն ազգ էլ տեսնին ու մեզ էրնակ տան»[4]:

Այսքանը Աբովյանի նախադրպատյան տարիներին կարդացած ու ձեռք բերած գրքերի մասին, որոնց որոնումը պետք է չարունակել, մանավանդ որ անակնկալները չեն բացառվում: Օրինակ՝ բացի վերոհիշյալ գրքերից հայտնի է, որ Դորպատում Աբովյանը ուներ ռուս-հայերեն մի բառգիրք, որը 1831 թ. վերջերին կամ 1832 թ. սկզբներին տրամադրել էր լեզվաբան Ֆերդինանտ Յոհան Վիդեմանին: Այդ գիրքը, հավանաբար, Հ. Ալամդարյանի «Российско-Армянский словарь»-ն է՝ լույս տեսած Տիղիսում, 1826-ին:

Եթե ենթադրենք, որ Աբովյանը Դորպատում մշտապես ձեռքի տակ է ունեցել նաև Աստվածաշունչ մատյանն ամբողջությամբ (Ոսկան Երևանցու կամ Պետերբուրգի տպագրությունները, թերևս) և Խորենացու Հայոց պատմության առաջին, ամստերդամյան տպագրությունը, որը նա հետագայում օգտագործել է իր պատմաաչխարհագրական և ազդագրական հետազոտություններում և սրանք ևս, պայմանականորեն, ավելացնելով Աբովյանի Դորպատ տարած գրքերի թվին, ապա մեզ հայտնի այդ գրքերի թիվը հասնում է 7-ի: Իսկ ընդհանրապես մինչև Դորպատ ուղևորվելը Աբովյանի հավաքած հայտնի ու ենթադրական տպագիր ու ձեռագիր մատյանների թիվը պետք է որ լինի երեք տասնյակից ո՛չ պակաս:

2

Դորպատյան տարիներին օրավուր հարստանում է Աբովյանի գրադարանը, այս անգամ գերազանցապես գերմաներեն գրքերով, որոնց մասին, երբեմն-երբեմն, նշումներ են երևում նաև նրա օրագրերի էջերում, բայց նախ՝ Աբովյանի դորպատյան գրադարանի հայտնաբերման ու հետազոտման համար չափազանց կարևոր

[4] *Նույն տեղում, էջ 150:*

նշանակություն ունեցող մի նորահայտ վավերագրի և վերջինիս մեջ ամփոփված թանկարժեք տեղեկությունների մասին: Այդ մասին մեզ 1984-ին Տարտուից նամակով հայտնեց Համալսարանի դիտական գրադարանի երկարամյա աշխատակից տիկին Էլզա Կուդուն, որն, ընդհանրապես, լավատեղյակ է էստոնական հողում կրթություն ստացած այլազգի ու հայրենի գիտնականների և գրողների կյանքի անցուդարձերին ու առնչություններին, ու նաև՝ ցանկալի խորհրդատու է հայ հետազոտողների համար՝ նրանց բանասիրական որոնումների ընթացքում: Անցյալներում նա բաղմաթիվ հետաքրքիր ու անծանոթ նյութեր է հայտնաբերել Աբովյանի ու Նալբանդյանի՝ Տարտուի համալսարանի դիտական գրադարանի հետ ունեցած առնչություններին վերաբերող: Այս անգամվա նրա հայտնաբերումը նույնպես առնչվում էր Աբովյանին, մասնավորապես՝ Աբովյանի գրասիրական հետաքրքրություններին, որոնք, ամբողջությամբ վերցրած, չեն ուսումնասիրված, մինչդեռ հարցի լուսաբանումը մեծապես կօգներ ո՛չ միայն Աբովյանի կորած գրադարանի առաջիկա տարիներին վերականգնելու բարդ ու կարևոր գործին, այլև Աբովյանի մի շարք երկերի սկզբնաղբյուրները պարզելուն:

Մեր հարդարժան նամակագիրը հայտնում էր մեզ, որ հին Տարտուի մասնավոր գրադարանների պատմությունը ուսումնասիրելու կապակցությամբ իրենք վերանայում են անցյալ դարի համապատասխան հավաքածուների ձեռագիր ցուցակները և պատական ու ոսոիկանական տույնների այն արձանագրությունները, որոնք կազմվում էին անժառանգ հանդուցյալների ունեցվածքը հրապարակային աճուրդով վաճառելու առիթով: Ցուցակներից շատերի մեջ առանձին բաժին էր հատկացված գրադարաններին, եթե հանդուցյալը թողել էր այդպիսին, ընդ որում յուրաքանչյուր գիրք գրանցվում էր առանձին համարի տակ՝ նշելով հեղինակի անունը, հարկ եղած դեպքում նաև՝ թարգմանիչը, խորագիրը, տպագրության վայրն ու թվականը, իսկ աճուրդից հետո ծանոթագրություններ էին արվում այն մասին, թե ո՞րը է այս կամ այն գիրքը վաճառվել, ի՞նչ գնով և ձեռք բերողն ո՞վ է:

Ահա՛ այսպիսի մի ցուցակում էլ անսպասելիորեն հանդիպել են Խաչատուր Աբովյանի անվանը և վճռել տեղյակ պահել մեզ՝ նամակին կցելով նաև համապատասխան քաղվածքներ ոստիկանական փաստաթղթերից: Ժամանակ անց, Տարտուի Յ. Կրնյգվալդի անվան գրական թանգարանը մեզ ուղարկեց բուն արձանագրությունների լուսապատճենը: Այնպես որ հիմա կարող ենք խոսել Աբովյանի կյանքի այդ անծանոթ դրվագի մասին ամենայն մանրամասնությամբ: Նախ՝ մեջ բերենք աճուրդի ցուցակներից Աբովյանին վերաբերող տողերը:

Ահա, ուրեմն, աճուրդի օրերին Աբովյանի ձեռք բերած գրքերի ցուցակը (հեղինակների անունները, գրքերի խորագրերը և լրացուցիչ նշումները մեջ ենք բերում նույնությամբ, դրանց հաջորդում են գնողի ազգանունը («Abojan») և գրքի գինը: Ամենավերջում, փակագծերի մեջ, նշում ենք Էստոնիայի պետական պատմական արխիվի 995-րդ ֆոնդի № 12521 գործի (ցուցակ № 1) այն էջը, որից քաղված է տվյալ գրառումը):

Dorpat, den 10. März 1833.

Gegenwärtig: *(Ազգանունները չեն նշված – Պ.Հ.).*

Es wurde heute mit der Auction fortgefahren, wie folgt:

1. **Cornelius Nepos** von Sinccrus (?). Abojan, – 80(22 b)
2. **Homers Ilias,** defect. Abojan, –90(23)
3. **Röchling,** Ubungen im lat. Styl. Abojan – 70(23)
4. **Virgils Eclog,** Übersezt von Voß. Abojan 3–50(23b)
5. **Fevrier,** Franz. Grammatik. Abojan –80(23b)

Dorpat, am 11. März 1833.

6. **Mozin,** Französ. Sprachlehre. Abojan – 75(24b)
7. Kleine Seelenlehre für Kinder von **Kampe.** Abojan – 55(25b)
8. Amaliens Erholungsstunden, 2 Bande. Abojan – 50(25b)
9. **Funkes** Naturgeschichte, 4 Bande. Abojan 3 – (26)
10. **Gellerts** Sämmtliche Schriften. defecte. Abojan 1 – (26)
11. **Hube's** Naturlehre, 3 Bande. Abojan 1 – 55(26b)
12. **Klopstocks** Lieder } Abojan
13. **Kleist** Sämmtl. Werke. defect } 1 – 70(26b)

Dorpat, den 13. März 1833.

14. **Rosenmüller.** Religionsgeschichte } Abojan – 10(27b)
15. Catechismus von **Krummacher** }
16. Syllogen von **Sintenis.** Abojan – 55(27b)
17. **Winterfeld.** Mathematik. 2 Teil } Abojan 2 – 25(28)
18. **Wolfs** Mathematik }
19. Abhandlungen über Geschichte } Abojan – 35(28 b)
20. Bemerkungen über Frankreich }
21. Der Lehrmeister. Abojan – 40(28b)
22. **Bröders** lat. Grammatik. Abojan – 35(32)

Նյութի հիմնական լուսաբանությանը լուրջ նպաստներ է բերում ատիկանական մեւնույն դործում առկա երկրորդ դրացուցակը (տե՛ս թթ. 3–14), որը կազմվել է աստվածաբանության թեկնածու, ուսուցիչ Կարլ Ֆրիդրիխ Վիսսելի մահվանից հինդ օր հետո, 1833 թ. փետրվարի 13-ին: Այդտեղ դտնում ենք առավել մանրամասն տվյալներ Հանդուցյալի թողած դրադարանի դրքերի, որոնց թվում նաև՝ Աբովյանի ձեռք բերած քսանից ավելի, երբեմն մի քանի հատորից բաղկացած՝ դեղարվեստական երկերի, դիտական աշխատություններիև ուսումնական ձեռնարկների մասին: Դրացուցակում նշված են յուրաքանչյուր դրքի ծավալուն խորագիրը, տպագրության թվականն ու վայրը, հրատարակության արտաքին հանդամանքները և այլն: Հենց նման տեղեկություններն էլ ուղեցույց են ծառայելու աբովյանագետներին՝ առաջիկայում այդ բոլոր դրքերը հավաքելու և հանգամանալից ուսումնասիրության ենթարկելու համար, որը ոչ միայն կօգնի հետագայում վերականգնելու Աբովյանի կորած դրադարանի գեթ մի փոքր մասը, այլև կարող է հանդեցնել անսպասելի և ուշագրավ արդյունքների:

Մենքներնք դորպատյան աճուրդներում Աբովյանի դնած դրքերի մասին լրացուցիչ տվյալներ պարունակող այդ երկրորդ ցուցակից համապատասխան մատենադիտական տեղեկանքները (բուն ցուցակը կազմված է այբբենական կարդով, առանց համարակալման):

Bücher:

1. **Cornelius Nepos** mit Anmerkung<en> von Sincorius, 1747.
2. **Homeri** Ilias, Übersetz. G<enantenen> *(իմա՛* Stolberg – *Գ. Հ.)*. 1. Theil, Leipzig, 1781.
3. **Röchling,** Übungen in lateinischen Styl, 1799.
4. **Virgilii** Bucolicon Eclogoe deocm, nebst deutscher Übersetzung. 2 Bde, Altoua, 1797.
5. **Fevrier,** Praktische Grammatic der französischen Sprache, 2. Auflage, Leipzig, 1803.
6. **Mozin,** Franz. Sprachlehre im Auszuge, Stuttgart, 1812

Deutsche lateinische Bücher verschiedenen Inhalts

7. **Campe,** Seelenlehre für Kinder, Hamburg, 1780.
8. **Ehrmann,** Amaliens Erholungsstunden, 2 Bde, Tübingen. 1791.
9. **Funke,** Naturgeschichte und Technologie, 1.,2. und 3-ter Bd., 2. Aufl., Braunschweig, 1795.

10. **Gellert,** Sämmtliche Schriften, 9-ter und 10-ter Bd., Leipzig, 1775.
11. **Hube,** Unterricht in der Naturlehre, 3 Bde, Leipzig, 1793.
12. **Kleist,** Sämmtliche Werke, 1-ster Theil, Carlsruhe, 1776.
13. **Klopstock,** Leider, Carlsruhe, 1776.
14. **Krummacher,** Katechismus der christlichen Ehre, 1821.
15. **Rosenmüller,** Religionsgeschichte, Heidelberg, 1791.
16. **Sintenis,** Syllogen oder der Sammler... Leipzig, 1801.
17. **Winterfeld,** Anfangsgründe der Mathematik, 2 Bde, Braunschweig, 1800.
18. **Wolff,** Auszug aus den Anfangsgründen aller mathematischen Wissenschaften, Frankfurt, 1755.
19. Des Abts von St. Reas Abhandlung (über) Gegenstände der Geschichte, 2 Bde, Riga, 1767.
20. Bemerkungen einer reisenden Weltmanns auf eine Reise durch Frankreich, Breslau, 1791.
21. Lehrmeister, der, oder allgereine Systematik der Erziehung, 2 Bde, Leipzig, 1765.
22. **Bröder,** Kleine lateinische Grammatik, 5-te Auflage, Leipzig, 1805.

Այժմ, երբ հնարավորություն ունենք համադրելու միմյանց հետ աճուրդի ժամանակ Աբովյանի գնած գրքերի մասին մատենագիտական տեղեկություններ հաղորդող զույգ ցուցակներում առկա բոլոր տվյալները, ստանում ենք անչափ հետաքրքրական արդյունքներ, որոնց չնորհիվ նոր էջեր են բացվում հայ մեծ գրողի ու լուսավորչի կենսագրության մեջ, ըստ որում՝ ցարդ ուսումնասիրողներին անծանոթ ու աննենթադրելի:

Հայտնի է դառնում, որ 1833 թվականի մարտի 10-ին, 11-ին և 13-ին, երբ երեք օր շարունակ Դորպատում, հրապարակային աճուրդով վաճառվում էր հանգուցյալ Կարլ Ֆրիդրիխ Վիսսելի գրադարանը, Աբովյանն այդ երեք օրերն էլ եղել է աճուրդի վայրում և հետաքրքրվել է ո՛չ միայն աճուրդով ու գրադարանով ընդհանրապես, այլև ելնելով իր նյութական միջոցներից ու անձնական հետաքրքրությունից՝ ճեռք է բերել մի շարք գրքեր: Հիմա արդեն կարելի է լրացնել Աբովյանի կյանքի տարեդրության սպիտակ մնացած էջերից երեքը[5]*: Մասնավորապես գիտենք, որ մարտի 10-ին Աբովյանը գնել է*

---

5 *Աբովյանի Դորպատյան օրագրերում այս երեք օրը, ավելի ճիշտ՝ մարտի 4-ից սկսած մինչև 17-ը, գրառումներ չեն արված: Այդ ընթացքում նա ոտանավորներ ու նամակներ նույնպես չի գրել:*

հինգ դրքք՝ չորսը դերմաներեն և մեկը երկլեզվյան (լատիներեն-դերմաներեն զուգահեռ բնագրերով), ըստ որում՝ դրքերից մեկը բաղկացած է եղել երկու հատորից:

Այդ հինգ դրքերն էին.

1. Հռոմեական պատմիչ Կոռնելիուս Նեպոտի երկերի ժողովածուն, ավելի շուտ՝ «Վարք զօրավարաց անուանեաց» դրվածքը հանդերձ ծանոթագրություններով, որ լույս է տեսել 1747 թվականին, Լայպցիգում: Արովյանն այդ դրքի համար վճարել է գնահատող հանձնաժողովի որոշած գինը՝ 80 կոպեկ[6]:

2. Հոմերոսի «Իլիականը» դերմանացի բանաստեղծ Յոհան Հայնրիխ Շտոլբերգի թարգմանությամբ (պահպանել ունենալու պատճառով գնահատվել է ընդամենը 90 կոպեկ): Հայտնի է, որ Արովյանը 1830-ական թթ. հայերեն է թարգմանել Հոմերոսի «Իլիականի» վեցերորդ հատնորդությունը (Հեկտորի և Անդրոմաքեի հյուժեչափ տեսարանը), բայց թե ի՞նչ աղբյուրներից, ցարդ պարզված չէր: Հիմա արդեն, ո՛չ առանց հիմքի, կարելի է ասել, որ Արովյանի օգտագործածը Շտոլբերգի թարգմանած «Իլիականն» է եղել, որը ժամանակով առաջինն էր դերման իրականության մեջ. նախ՝ լույս է տեսել 1778-ին, հետո էլ մի քանի անգամ վերահրատարակվել: Արովյանի ձեռք բերածը 1781 թվականի երկհատոր հրատարակության առաջին մասն էր:

3. Վիրգիլիուսի Էկլոգները կամ Բուկոլիկոնը, այսինքն՝ Հովվերգական բանաստեղծությունների լատիներեն բնագիրը հանդերձ դերմաներեն թարգմանությամբ, 2 դրքով (թարգմանիչ՝ Յոհան Հայնրիխ Ֆոս, 1797)՝ վճարելով բավականաչափ թանկ՝ 3 ռուբլի 50 կոպեկ, երևի թե այն պատճառով, որ հրատարակությունն իրականում բաղկացած էր 4 հատորից և լույս է տեսել 1797–1800 թթ. ընթացքում, երկու դրքով, ամեն դրքում՝ երկու հատոր (բուն աճուրդի ցուցակում այդ ամենը արձանագրված է որպես մեկ դրք):

Ապա և երկու դրք՝ Ռյոխլինգի «Լատիներենի ճաբանության վարժություններ» և Ֆեվրիեի «Ֆրանսերեն լեզվի գործնական քերականություն» ձեռնարկները՝ վճարելով համապատասխանաբար 70 և 80 կոպեկ կամ երկուսը միասին՝ մեկ և կես ռուբլի:

Աճուրդի հաջորդ օրը՝ մարտի 11-ին դնված դրքերը թվով ավելի շատ են և բազմաբովանդակ. ութ (թե՞ ինը) անուն դրք՝ 14 (թե՞ 15) հատորի մեջ: Այդ թվում՝ Արովյանի սիրած բանաստեղծների՝

---

6 Այստեղ և առաջիկայում դրքերի արժեքները նշում ենք գուցեն թե Արովյանի կորած ղրաղարանի հնաքերը հայտնաբերելու համար՝ հետաքրքրողներին օժանդակելու նպատակով:

Ծրիդրիխ Գոտլիբ Կլոպշտոկի երգերի գիրքը, Հայնրիխ Կլայստի երկերի ժողովածուի առաջին մասը, որն ունեցել է պակասներ (երկուսն էլ լույս են տեսել Կարլսռուհեում, 1776-ին)։ Այդ գրքերի համար Աբովյանը վճարել է 1 ռուբլի 70 կոպեկ։ Այնուհետև՝ Քրիստիան Ցյուբխտեգոտ Գելլերտի Ընտիր երկերի ժողովածուն, միայն թե ո՛չ լրիվ, այլ 9 և 10-րդ հատորները (լույս են տեսել Լայպցիգում, 1775-ին)՝ վճարելով 1 ռուբլի[7], մանկավարժական բնույթի զանազան գրքեր և ձեռնարկներ՝ Յոախիմ Հայնրիխ Կամպեի «Հոգեշահ ուսումն մանուկների համար» (Համբուրգ, 1780), որի նյութերը հետագայում, հավանաբար, օգտագործել է իր «Պատմություն Տիգրանի» վեպի մեջ (վճարել է 55 կոպեկ) և Էհրմանի «Ամալիայի հանգստի ժամերը» երկհատոր գրվածքը (Տյուբինգեն, 1791)՝ վճարելով 50 կոպեկ։ Ցուցակում, ուր որպես գնորդ նշված է «Աբովյան» (Abojan) ազգանունը, հանդիպում են նաև գրքեր բնական և ճշգրիտ գիտությունների մասին։ Դրանք են Հուբեի «Դասախոսություններ բնագիտության վերաբերյալ» եռահատոր աշխատությունը (Լայպցիգ, 1793)՝ վճարելով 1 ռուբլի 55 կոպեկ, Ֆունկեի «Բնության պատմություն և արհեստագործություն»՝ բաղկացած 4 հատորից (2-րդ հրատ., 1795)՝ վճարելով 3 ռուբլի։ Այս գրքի կապակցությամբ կուզեինք մի բացատրություն տալ. աճուրդի բուն ցուցակից հետևում է, որ Աբովյանի ձեռքբերած՝ Ֆունկեի «Բնության պատմություն և արհեստագործություն» երկը ամփոփված է եղել չորս գրքում, մինչդեռ ըստ Վիսսելի գրադարանի մանրամասն ցուցակի՝ նույն աշխատությունը բաղկացած է եղել ընդամենը երեք հատորից։

Երկու ցուցակն էլ, կարծում ենք, արժանահավատ են, և անհամապատասխանության պատճառը պիտի ուրիշ տեղ փնտրել։ Վիսսելի գրադարանում եղել են Ֆունկեի ուրիշ աշխատություններ էլ՝ «Erste Leitfaden zum Schulunterricht» («Նախաշավիղ դասավանդման») ձեռնարկի երկու օրինակ (Բրաունշվայգ, 1799) և «Praktische Geschichte des Menschen» աշխատությունը՝ լույս տեսած դարձյալ Բրաունշվայգում, 1796-ին։ Բացառված չէ, որ Աբովյանի գնած չորս գրքերից մեկն էլ Ֆունկեի այս վերջին աշխատությունն է եղել՝ «Մարդկության պրակտիկ դործունեության պատմությունը», մանավանդ որ աճուրդի ցուցակից էլ չի երևում, որ այդ գիրքը վաճառված լիներ մեկ ուրիշի։

---

[7] Երևի թե այդ երկու հատորն ամփոփված է եղել մեկ կազմի մեջ, որովհետև բուն աճուրդի ցուցակում Գելլերտի երկերի ժողովածուն ներկայացվում է մեկ գրքից բաղկացած և պակասավոր։

Նույն օրը Աբովյանի գնած վերջին գիրքը Մոզինի «Ուսումն ֆրանսերեն լեզվի՝ նմուշներով» (Շտուտգարտ, 1812) ձեռնարկն է, որի համար վճարել է 75 կոպեկ:

Ապրիլի վերջին օրը, մարտի 13-ին, Աբովյանը գնում է ևս ինը նոր գիրք (12 հատոր)՝ Ռոզենմյուլլերի «Կրոնի պատմությունը» (Հայդելբերգ, 1761) և ինչ-որ «Հավատապատում» («Catechismus von...»)՝ երկուսին վճարելով ընդամենը 10 կոպեկ, Վինտերֆելդի «Մաթեմատիկայի հիմունքները» (երկու հատոր, Բրաունշվայգ, 1800), Վոլֆի «Բազմածքներ մաթեմատիկական բոլոր գիտությունների հիմունքներից» (Ֆրանկֆուրտ, 1753)՝ երկուսին վճարելով 2 ռուբլի 25 կոպեկ, վերջապես՝ գրքեր պատմության, աշխարհագրության և օտար լեզուների մասին. Սուրբ Ռեայի աբբահոր «Ժամանակակից պատմության ձեռնարկը» (2 հատոր, Ռիգա, 1791), «Նկատողություններ ոմն աշխարհականի՝ Ֆրանսիայում կատարած ճանապարհորդությունների մասին» (Բրեսլաու, 1791)՝ երկուսին վճարելով ընդամենը 35 կոպեկ, Բրյոդների «Լատիներենի համառոտ քերականության» հինգերորդ (թե՛ վեցերորդ) հրատարակությունը (Լայպցիգ, 1805 կամ 1807), գարձյալ նույն գնով, ոմն Սինտենիսի «Սիլլոգիներ կամ ժողովող» գրվածքը (Լայպցիգ, 1801)՝ վճարելով 55 կոպեկ:

13-ին գնած գրքերի ցանկում հիշվում է նաև «Ուսուցիչ կամ դաստիարակության ընդհանուր հիմունքներ» խորագրով մի երկհատոր, անհեղինակ աշխատություն, որը տպագրվել է Լայպցիգում, 1765-ին և աճուրդում գնահատվել է 40 կոպեկ: Երևի թե այդ երկու հատորներն ամփոփված են եղել մեկ կազմի մեջ, որովհետև բուն աճուրդի ցուցակից երևում է, որ Աբովյանի ձեռք բերածը բաղկացած է եղել մեկ գրքից:

Այսպիսով՝ բոլորը միասին 22 կամ 23 գիրք (32 կամ 33 հատոր):

3

Աբովյանի գրադարանը չի՛ պահպանվել: Ինչպես լսել ենք նրա թոռ Կոստանդին Աբովյանից, 1918 (թե՛ 1920) թվականին այն ոչնչացել կամ թալանվել է Ալեքսանդրապոլում, թուրքական զորքերի հարձակման օրերին:

1954–55 թվականներին, Կ. Աբովյանին այցելելիս, նա մեզ պատմել է որոշ մանրամասներ՝ առանց, սակայն, որոշակի թվականն ու ամիս-ամսաթիվը նշելու: Ցավոք, ժամանակին չմտածեցինք ճշտել մանրամասները, իսկ երբ զգացինք թերացումը, արդեն ուշ էր: Բանն այն է, որ թուրքական զորքերն Ալեքսանդրապոլը գավթել ու հետո

նահանջել են երկու անգամ՝ 1918 թ. մայիսի 2-ին (հին տոմարով) և 1920 թ. նոյեմբերի 7-ին: Խ. Աբովյանի դրադարանի կորուստը, հավանաբար, 1918-ին է եղել:

Ահա՛ թե նա ինչ պատմեց մեզ (վերարտադրում ենք համարյա բառացի).

«Երբ Ալեքսանդրապոլ հասավ Կարսի անկման լուրը, իսկ չատ չանցած սկսեցին լսվել թնդանոթների որոտի ձայները, և քաղաքով մեկ գուժեցին, որ թուրքերն անցել են Արփաչայը, երբ սարսափին ու խուճապը տիրել էին բոլորին, և մարդիկ թողած տուն-տեղ՝ փախչում էին, որ կոտորածի զոհ չդառնան, ես, որ այդ ժամանակ ուսուցչություն էի անում Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանում, միայն մի ցանկություն ունեի՝ քաղաքից դուրս հանել ու ապահով տեղ հասցնել պապիս ձեռագրերն ու գրադարանը:

Դրանք ես տեղավորեցի սնդուկների մեջ և մի կերպ հասցրի երկաթուղային կայարան: Փախստականներով լի վերջին դնացքը շարժվեց կառամատույցից, բայց ես չկարողացա վագոն բարձրանալ: Ամայացավ կայարանը, իսկ ես մեն-մենակ, սնդուկների վրա նստած, մտքումս անիծում էի լախտս ու մեղադրում ինձ, որ առաջուց չէի մտածել պապիս ձեռագրերի ու դրադարանի կարևոր գրքերի ապահովության մասին:

Արեգակն արդեն թեքվել էր մայրամուտ, երբ ականջիս հասավ չոգեքարշի ձայն, իսկ հետո տեսա վերջին գրահագնացը, որը չկարողանալով թուրքերի հարձակումը կասեցնել՝ նահանջում էր:

Գրահագնացը թափով եկավ, անցավ կառամատույցով, բայց մի հարյուր քայլ հավիվ հեռացած՝ արգելակեց, հետ շարժվեց և կանգնեց իմ դիմաց: Հետո բացվեց դուռը, աստիճանների գլխին երևաց վինված մեկը, ի դեմս որի ես ճանաչեցի իմ հին բարեկամին՝ պապիս սիրելի աշակերտ Գաբրիել Խատիսյանի եղբորորդուն.

— Պարոն Աբովյան, ի՞նչ եք անում այստեղ,— տագնապով հարցրեց նա,— տաճիկները ներխուժել են քաղաք և կոտորած սկսել: Շուտով կհասնեն այստեղ: Ինչո՞ւ ժամանակին չեք հեռացել քաղաքից:

— Ինչպե՞ս հեռանայի,— հուզված պատասխանեցի ես,— պապիս ձեռագրերն ու դրքերը ուզում եմ ազատել, չեմ կարողանում: Գնացքներում տեղ չկար, փոխադրական չկա: Մնացել ու սպասում եմ...

— Ես ձեզ կտանեմ, միայն թե բոլոր իրերդ չեմ կարող վերցնել:

Բարձրացա վագոն: Գրահագնացում անասելի նեղվածք էր, տեղ չկար: Միջանցքներում շարված էին արկերով ու փամփուշտներով լի արկղեր: Դրանցից մեկ-երկուսը ցած իջեցրին, իմ ընտրությամբ՝ վերև բարձրացրին պապիս ձեռագրերի սնդուկները միայն, մյուսները

(որոնց մեջ գրադարանի դրքերն էին) թաքցրինք կայարանի նկուղներից մեկում, և ղրահագնացը առաջ չարժվեց:

Հաջորդ օրը հասանք Երևան: Պապիս ճեռագրերը փրկվեցին: Սակայն, երբ թուրքերի նահանջից հետո ես վերադարձա Ալեքսանդրապոլ՝ պապիս դրքերը հավաքելու և Երևան փոխադրելու, ոչինչ չգտա: Ինչքան էլ հարցուփորձ արի, ո՛չ՝ոք չկարողացավ ասել, թե նրանց հետ ի՞նչ պատահեց...»:

Այսպես կորավ Խաչատուր Աբովյանի՝ տարիների ընթացքում, մեծ ջոհողությամբ հավաքած դրադարանը:

Անգամ, պայմանական ճևով, մեզ հայտնի չէ դրքերից և ո՛չ մեկը, որպեսզի կարողանայինք տեղեկություններ տալ դրանց արտաքին հանգամանքների մասին:

Դժվարանում ենք նաև ասել՝ արդյոք Աբովյանն ունեցե՞լ է հատուկ մատենանիշ՝ սեփական դրքերի վրա փակցված, կամ էլ, երբ ճեռք էր բերում այս կամ այն դիրքը, սովորություն ուներ ստորագրել նրանց անվանաթերթերի վրա և նշել գնելու կամ ստանալու ամիս-ամսաթիվն ու թվականը: Հարկավ, դրքերից մի քանիսի վրա, որոնք նրան նվիրել էին դորպատյան ուսուցիչները կամ ընկերբարեկամները, եղել են ընծայագրեր: Կորել են նաև այդ դրքերը, անգամ Ֆ. Պարրոտի «Ուղևորություն դեպի Արարատը» (1834 թ.), որն Աբովյանի սեղանի դրքերից էր: Մինչդեռ ընծայագրերի առկայությունն անգնահատելի օգնություն կլիներ ժամանակակից դրքասերներին՝ որոշելու այս կամ այն դրքի ո՞ւմ գրադարանին պատկանելը:

«ՎԵՐՔԻ» ՄԻ ԱՆՏԵՍՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

(ՊՈԼԻՍ, 1931)

Սփյուռքահայ չնորհալի բանաստեղծ և եռանդուն գործիչ Կ. Պասմաճյանը տարիներ առաջ դիմել էր ինձ մի հարցումով՝ կարելի՞ է արդյոք Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի 1931 թվականի Կ. Պոլսի հրատարակությունից նոր արտատպություն կատարել:

Պատասխանեցի, որ նպատակահարմար չէ՝ պատճառ բերելով բնագրային պակասները, նաև՝ ակադեմիական հրատարակության առկայությունը, չնայած այս վերջինն էլ կարիք է զգում լուրջ սրբագրումների:

Եվ հիմա, ժամանակ անց, զգում եմ, որ անհրաժեշտ էր ավելի մանրամասն բացատրություններ տալ Աբովյանի անմահ վեպի այդ ուշագրավ և ինքնատիպ հրատարակության մասին, որպեսզի ճշմարտությանը հասու լիներին ո՛չ միայն հարցում ուղղողը, այլև ընթերցող լայն շրջանները, այլև մասնագետ-բանասերները, առանձնապես՝ սովետահայ, որոնցից և ո՛չ մեկը քննության նյութ չի՛ դարձրել հիշյալ գիրքը (չենք ասում՝ ձեռքի տակ չի ունեցել...):

Ցավալի, բայց և անկոծկելի իրողություն, նաև՝ բանասիրական անփութության արտահայտություն է, որ ցարդ մատենագետների և Աբովյանի գրական ժառանգության հրատարակման պատմությամբ պարապողների ուշադրությունից ևս դուրս է մնացել այդ հետաքրքրական հատորը: Նրա մասին որևէ հիշատակություն չենք գտնում ընդհուպ մինչև 1955 թ. առկա մեր մատենագիտական աղբյուրներում և «Վերքի» հրատարակության պատմությանն անդրադարձած գիտնականների (Ե. Շահազիզ, Ռ. Զարյան, Հ. Մուրադյան) նկատողություններում. կասկածամիտ ընթերցողին հղում ենք՝

Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հատ. Ա, Երևան, 1939, էջ 339:

«Դիվան Խաչատուր Աբովյանի», [հատ. Ա,] Երևան, 1940, էջ 362:

Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. Գ, Երևան, 1948, էջ V–XI:

Որ այդպիսի տպագրություն գոյություն ուներ, անձամբ մեզ հայտնի էր շատ վաղուց, Վենետիկի «Բազմավեպի» 1931 թ. հուլիս-օգոստոսյան համարի շապիկի վրա եղած հետևյալ համառոտ տեղեկանքից.

«Աբովյան Խաչատուր — Ողբ հայրենասիրի (Վերք Հայաստանի). պատմական վեպ. Դ տիպ, Հ. Կոշկարյան (Արև), Կ. Պոլիս, 1931, էջ 316, գինը՝ 200 ղրուշ»[1]:

Հիշյալ տողերն էլ հիմք ծառայեցին, որ այդ հրատարակությունը, ձեռքի տակ չունենալով հանդերձ, զետեղինք Աբովյանի երկերի ու նրա մասին եղած գրականության՝ մեր խմբագրությամբ լույս տեսած մատենագիտության մեջ («Խաչատուր Աբովյան», Համառոտ բիբլիոգրաֆիա, Երևան, 1956, էջ 24):

Իսկ թե ի՞նչ վիճակում էր տպագրվել գիրքը, ո՞վ էր բնագիրը հրատարակության պատրաստել, «Դ. տիպ» ասելով ի՞նչ պետք էր հասկանալ՝ «Վերքի» մինչ այդ եղած հրատարակություննե՞րը, թե՞ Կ. Պոլսում 1931-ից առաջ երևք անգամ միևնույն տպարանից լույս աշխարհ հանված նույն գիրքը, ինչպե՞ս էր պատահել, որ թուրքական գրաքննություն՝ կրակոտ հայրենասիրությամբ առլեցուն այսպիսի մի գիրք, ուր մեկ անգամ չէ, որ հանդիպում են՝

Հող ունինք՝ խլած, կյանք ունինք՝ մեռած,
Ա՜խ, թրի, կրակի մենք եսիր դառած...
Երբ կտեսնի՞մ, ա՜խ, ես մեկ օր էլ,
Մեր սուրբ երկիրը թշնամուցն ազատել...
Էն ի՞նչ ձեռք կըլի, որ մեր աչխարքին
Էլ ետ սիրտ տա ու կանգնացնի՛ կրկին...

և համանման խոսքեր— թուլլ էր տվել սևով սպիտակի վրա դրոշմելու:

Ինքնաբերաբար ծագող այս և ուրիշ չատ հարցերի՝ ամսագրի վերոհիշյալ տեղեկանքը հնարավորություն չէր տալիս պատասխանելու: Այդ կարելի էր բուն հրատարակությունը հանգամանորեն ուսումնասիրելուց հետո միայն, բայց այն էլ ձեռք բերելու համար սիյուռքահայ ծանոթ մատենարաններին և Մխիթարյան պատկառելի հայրերին ուղղած մեր գրավոր ու բանավոր դիմումները տաբիներ չարունակ ցանկալի արդյունքի չէին հասցնում, մինչև որ պատահականությունն լինքը մեզ օգնության ձեռք մեկնեց:

ՀՀ ազգային դրադարանը իր բազմաթիվ սիյուռքահայ բարեկամներից մեկից՝ Փարիզի Արևելյան դրավաճառանոցի տնօրեն Հ. Սամուելյանից, տարիներ առաջ (1959 թ.) նվեր էր ստացել մի խումբ

---

[1] Այս «Վերք Հայաստանի» օրինակները Ամերիկա են հասել և Պերպերյան դրատան կողմից վաճառքի հանվել նույն 1931 թ. նոյեմբեր ամսին, գինը 1,50 դոլար: Գրատան հայտարարությունը («Նոր հասած գրքեր») տե՛ս «Հայրենիք» օրաթերթ (Բոստոն), 1931, նոյեմբերի 7, 14, 21 և 28, №№ 5934, 5939, 5945 և 5950:

գրքեր, որոնց մեջ էլ երևան եկավ «Վերք Հայաստանի» վեպի Կ. Պոլսի 1931 թ. հրատարակության անթերի օրինակը՝ ամեն բանով ուշագրավ մի հատոր: Երկու տարի անց, 1961 թ. սկզբներին, գրադարան մուտք գործեց նույն գրքի մի երկրորդ, ամբողջական օրինակ ևս[2]: Այնպես որ, մենք հնարավորություն ստացանք մանրամասնորեն ուսումնասիրելու այդ հրատարակությունը, միայն թե արդյունքները հապաղում էինք հրատարակել: Այժմ արդեն ձգձգելն ավելորդ է: Սկսենք սկզբից:

Նախ՝ նկարագրությունը.

Շապիկը կապտագույն նուրբ մազագծեր ունեցող գորշավուն, ամուր թուղթ է: Նրա առաջին էջի վրա դրոշմված է. **«Խաչատուր Աբովյան /Ողբ Հայրենասիրի/ Պատմական վեպ /Գրատուն Պ. Զարդարյան/ Կ. Պոլիս. 1931»:**

Վերջին էջի վրա էլ տեղավորված է մի հիշեցում. **«Դիմել /Պիմեն Զարդարյան գրատուն/ Կ. Պոլիս, Ջաքմաքճըլար թիվ 73/ գինը 200 ղրուշ»** (վերջին երկու բառերը՝ ձևավորված չրջանակի մեջ):

Բուն գիրքը բաղկացած է Դ+316 էջից, որոնց չափսն է 13×20, իսկ չարվածքինը՝ 9×16,5 սմ:

Սկզբի չորս չհամարակալված էջերից երեքը մաքուր են, իսկ մեկը (գ) զբաղեցնում է տիտղոսաթերթը.

«Խաչատուր Աբովյան /Ողբ Հայրենասիրի /Պատմական վեպ/ (Առաջին անգամ տպված 1858-ին) /Դ. տպագրություն/ Կ. Պոլիս /Գրատուն Պ. Զարդարյան/ 1931 /Տպագրություն Հ. Կոչկարյան (Արև.)»:

Արաբական թվանշաններով համարակալված 316 էջերից 1–10-ը գրավում է հառաջաբանը, 11–88-ը՝ Առաջին, 89–202-ը՝ Երկրորդ և 203–316-ը՝ Երրորդ գլուխները: Նախորդ երեք (1858, 1897 և 1908 թթ.) հրատարակությունների նման, «Վերքի» այս չորրորդ տպագրության մեջ ևս տեղ չեն գտել ընծայականը և «Զանգի» հավելվածը: Դրան հակառակ, սույն գիրքն ունի մի առավելություն, որ ավելորդ է փնտրել նախորդների մեջ: Հրատարակիչը, բաղդատելով միմյանց հետ «Վերքի» 1858 և 1897 թթ. տպագիրները, վերականգնել և բնագրի մեջ է մուծել գրաքննության կրճատած բոլոր հատվածները, որովհետև ինչ կրճատված էր 1897 թ. հրատարակության մեջ, կար 1858 թ. մեջ և՝ ընդհակառակը: Այսպիսով՝ բուն վեպը ամբողջությամբ լույս էր

---

2 *Ըստ ՀՀ ազգային գրադարանի մայր մատյանի՝ հիշյալ գրքերը գրանցված են 17732–59 ԱՀ և 29154–61 հերթական համարների տակ:*

տեսնում առաջին անգամ: Ո՞վ է լաղդաւոթյունը կատարել, ինքը՝ Պ. Զարդարյա՞նը, թե՞ մեկ ուրիշը, չենք կարողացել պարզել:

Բնագրի ուշադիր ուսումնասիրութիւնը երևան է հանում ուրիշ, ո՛չ պակաս հետաքրքրական լրագրութիւններ ևս: Պարզվում է, որ գիրքն սկզբնապես «Վերք Հայաստանի» խորագրով էլ պատք է լույս տեսներ, և տպագրության վերջում է, որ հրատարակիչը, հարկադրված, փոխել է միտքը և տիտղոսաթերթի վրա դրոշմել վեպի խորագրի երկրորդ մասը, հարկավ, թուրք գրաքննության արգելքներից խուսափելու համար: Դրա ապացույցն են գրքի տպագրական թերթերը (մամուլները), որոնցից 2-ից մինչև 20-ի (վերջինի) ներքին լուսանցքի ձախ մասում, ուր սովորաբար նշվում են տպագրվող երկի խորագիրը և համապատասխան մամուլի թվահամարը, ամենուր դրոշմված է՝ «Վ. Հ.», այսինքն՝ «Վերք Հայաստանի»: Բայց առաջին մամուլի վրա (սովորաբար, այն տպագրվում է բոլորից վերջը), համապատասխան տեղում, ոչինչ չի՛ նշված, իսկ տիտղոսաթերթերին էլ տպագրված են առանձին, չհամարակալված մի երկթերթի վրա և վերջում են կցվել գրքին:

Այս դեռ բոլորը չէ. «Վերք Հայաստանի» վեպում հաճախակի պատահող «թուրք» (թուրքեր), «տաճիկ» ցեղանունը և «թուրքացնել» բայը, բառեր, որոնք էական դեր ունեին դարաշրջանի ոգին պահպանելու առումով, բայց և որոշակի նախապատուհասներ մեջ տհաճ պիտի լինեին թուրք գրաքննիչների համար, խմբագրողը հարկադրված է եղել վարպետորեն՝ այդ նպատակով բնագրի մեջ որոշ միջամտություններ անելով, իսկ թե որոշակիորեն ի՛նչ բնույթի ու ծավալի, ավելորդ չենք համարում «Վերքի» բնագրից (ըստ ակադեմիական հրատարակության, հ. III, 1948 թ.) և 1931 թ. կ. Պոլսի տպագրությունից կամ-ինչպես դուրս գրել համապատասխան հատվածները՝ չհետապնդելով, սակայն, լիակատարության նպատակ.

«Վերքի» բնագիրը	1931-ի տպագիր
1-2. «...Թև էնպես էր պատահում, որ թուրքերն էկել էին բաղը լյովկ... նա իրան թրի, մեկանքի ու կռան հունարը էնպես էր ցույց տալիս, որ մշնամին մնում էր կատու պատած ...չունքի հազար անգամ էին փոքձել, վարպետը ասել՝ թև մինչև Տաճկին չծնծնես, բեկ բարեկամ չի պատնա...» (16):	*«...Թև էնպես էր պատահում, որ թշնամիք էկել էին բաղը լյովկ... նա իրան թրի, մեկանքի ու կռան հունարը էնպես էր ցույց տալիս, որ թշնամին մնում էր կատու պատած... չունքի հազար անգամ էին փոքձել, վարպետը ասել՝ թև մինչև թշնամին չծնծնես, բեկ բարեկամ չի պատնա» (27):*

3. «Թուրքերը նրա անունը լսելիս՝ լեղապատառ էին ըլում» (16):

4. «...Աղչիկն ասես՝ քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ Թուրքացնում, հավատիյ հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում...» (38):

5. «...էս օր էլ, որ մտածում եմ՝ թե Զանգվի կարմնջի վրովը, յա բազարի մեյդանովն անց կենալիս, ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ ուսով, ձեռով անում... որ թեզ անց կենանք, մեզ Թուրք չտեսնի...» (58):

6. Որ մեկ խեղճ, անճար գնղըցի Հայ, որ բազարն էր գալիս... Ո՛նքան էին ուրին, գլխին վեր հատում... չունքի բնգաֆիլ մեկ Թուրքի չորի դիպած, մուռտառած էր ըլում...» (59):

7. «Մեկ Հայ՝ տղեն ընկած վախտը՝ լավ տասը Թուրքի էլ տակն ա դնում ու միսըններըդ բերաններըդ տալիս...» (81):

8. «Մեր մի Հայը մեկ դագանակով էլ՝ շատ անգամ տասը Թուրքի գլուխը կջարդի, մեկ մատով որ խփի, տեղնուտեղը բանհոգի կըլինի» (81):

9. «Ժամը դեռ կես չէ՛ր էլել, հարայ հրոցն աչխարքս բռնեց... Թուրք, սարվազ, արախլու նկնղեցին լցվնցին...»: (85):

10. Հինգ-վեց օր էլ է՛ս քաշնց, ընչանք Թուրքի մհասիլը նրանց կըրվեր» (89):

«Թշնամիք նրա անունը լսելիս՝ լեղապատառ էին ըլում» (27):

«...Աղչիկն ասես՝ քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ իսլամացնում, հավատիյ հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում...» (65):

«...էս օր էլ որ մտածում եմ՝ թե Զանգվի կարմնջի վրովը, յա բազարի մեյդանովն անց կենալիս, ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ ուսով ձեռով անում... որ թեզ անց կենանք, մեզ չտեսնին...» (98):

«Որ մեկ խեղճ, անճար գնղըցի Հայ, որ բազար էր գալիս... Ո՛նքան էին ուրին, գլխին վեր հատում... չունքի բնգաֆիլ մեկ Իսլամի չորի դիպած, մուռտառած էր ըլում...» (100):

«Մեկ Հայ՝ տեղն ընկած վախտը լավ տասը դուշմանի էլ տակումն ա անում ու միսըններըդ բերաններըդ տալիս...» (136–137):

«Մեր մի Հայը մեկ դագանակով էլ՝ շատ անգամ տասը դուշմանի գլուխը կջարդի, մեկ մատով որ խփի, տնդն ու տեղը բանհոգի կըլինի» (137):

«Ժամը դեռ կես չէ՛ր էլել, հարայ հրոցն աչխարքս բռնեց... սարվազ, արախլու նկնղեցին լցվնցին...» (143):

«Հինգ վեց օր էլ է՛ս քաշնց, ընչանք մհասիլը նրանց կըրվեր» (150):

11-13. «...չատ վախտ էլ Քրիստոսի խոսքին չէի՛ն մտիկ անում. մեկ թուրք աչքը թևքևլիս, ղևուխը հետն էր թևքվում... թուրքերը լավ էին իմանում՝ թե էշը ո՞րտեղ ա կորել... թուրքերը էս օր էլ էս ձորևրովը անց կենալիս...» (91):

14. «Լ՛ս Հովակիմը... թուրքերի օրևքանց միջովն անց կենալիս՝ մեկն էլ ա չէ՛ր սիրտ անում, որ աչքն էլ ա խևթի» (92):

15. «Սահակ Աղևն... օրը հարիր աղքատ Հայի դարդին հասնում ու թուրքից ազատում էր...» (100):

16. «Գլխըննդրդ ոսիս տակին ա, ա՛յ թուրքեր՝ ձեր ճակատը դյուլլիս առաջին...» (107):

17. «Հատան խանի նամատն էլ էս էլ՝ որ մեկ պրծնի. հազար արախլու ու թուրք սպանեին նրանք, ի՞նչ հաջաթ...» (108):

18. «Էնտեղ (Անիում—Պ. Հ.) էին նրանք չատ քրդի ու թուրքի միսը խորովել...» (108):

19. «Թրի առաջն ա ուզում ընկնի, թուրքը չի թողում...» (212):

20. «Անմահ նախկապետը (Գրիգոր Մանուչարյանը — Պ. Հ.) էն խնդրեց, որ Շամշադինու ու Ղազախու, Բուռչալվի Հայ ազգը թուրքի ձեռիցն ազատվի...» (122):

21. «Անօրևն պարսիկքն ու թուրքերը...» (125):

22. «Թուրքերը՝ չամդաքակևր պիլի պես գլխըննրիս պտիտ էին գալիս...» (125):

23. «Մեկը նրևհևն էլ՝ թուրքի անունը տալիս՝ ուզում ա՝ մարդի կարատի» (130):

«...չատ վախտ էլ՝ Քրիստոսի խոսքին չէ՛ին մտիկ անում, մեկ թչնամի աչքը թևքևլիս, ղևուխը հետն էր թևքվում... նրանք լավ էին իմանում՝ թե էշը ո՞րտեղ ա կորել... թչնամիքը՝ էս օր էլ էս ձորևրովը անց կենալիս...» (153–154):

«Լ՛ս Հովակիմը... նրանց օրևքանց միջովն անց կենալիս՝ մեկն էլ ա չէ՛ր սիրտ անում, որ աչքն էլ ա խևթի» (156):

«Սահակ Աղևն... օրը հարիր աղքատ Հայի դարդին հասնում ու նրանց ձեռքիցը ազատում էր» (168):

«Գլխըննդրդ ոսիս տակին ա, ա՛յ ձեղ, ձեր ճակատը դյուլլիս առաջին...» (180):

«Հատան խանի նամատն էլ էս էլ՝ որ մեկ պրծնի. հազար արախլու սպանեին նրանք, ի՞նչ հաջաթ...» (181):

«Էնտեղ (Անիում—Պ. Հ.) էին նրանք չատ քրդի ու թչնամու միսը խորովել...» (183):

«Թրի առաջն ա ուզում ընկնի, չեն թողում...» (188):

«Անմահ նախկապետը (Գրիգոր Մանուչարյանը — Պ. Հ.) էն խնդրեց, որ Շամշադինու ու Ղազախու, Բուռչալվի Հայ ազգը ազատվի...» (205):

«Անօրևն պարսիկքն ու քրդերը...» (209):

«Թչնամին չամդաքակևր պիլի պես գլխըննրիս պտիտ էին գալիս...» (210):

«Մեկը նրևհևն էլ՝ մեր անունը տալիս՝ ուզում ա մարդի կարատի» (219):

24. «Դուք լավ գիտեք, որ մեկ Հայր՝ տասը Թուրքի բարերար է...» (133):	*«Դուք լավ գիտեք, որ մեկ Հայր՝ տասը քուրդի բարերար է...» (224):*
25. «...Ասեց Թուրքի մեկն էլ եղ...» (134):	*«...Ասեց նրանցից մեկն էլ էգ...» (225):*
26. «...Հանեցին Թշնամու յարաղ ասպարը, չորերը, բարձեցին Թուրքերի ձիանոց վրա...» (136):	*«...Հանեցին Թշնամու յարաղ ասպարը, չորերը, բարձեցին նրանց ձիանոց վրա...» (229):*
27. «...Ինձպես Թուրք եք դառել...» (138):	*«...Ինձպես մյուսյուլման էք դառել...» (233):*
28. «...Զորապետը... մերդի մեկին կանչեց, որ ասածը գրի. Թուրքերին խարի...» (175):	*«...Զորապետը... մերդի մեկին կանչեց, որ ասածը գրի, Թշնամուն խարի...» (292):*

«Վերքի» բնագրից և Պոլսի 1931 թ. հրատարակությունից պատահաբար բերված վերոհիշյալ օրինակները դույլ են տալիս, որ Թևպհան վերջինի մեջ կատարված խմբագրումներից, առանձին դեպքերում, թվում է, թե բնագիրը չի տուժել, բայց ուշադիր քննության դեպքում դժվար չէ համոզվել, որ այդ ճանապարհով «Վերք Հայաստանի» մեջ մուտք են գործել Աբովյանի լեզվական մտածողության անհարիր և պարաշրջանի պատկերը աղարատող տարրեր:

Օրինակ. երկրորդ քաղվածքի մեջ՝ «...մինչև Տաճկին չծեծես, քեզ բարեկամ չի դառնալ» արտահայտությունը դարձնելով «...մինչև Թշնամին չծեծես, քեզ բարեկամ չի դառնալ», խմբագրողը ո՛չ միայն արևելահայ աշխարհաբարի մեջ նկատուածել է արևմտահայերենի տարր (իրականում պետք է լիներ՝ ...մինչև Թշնամուն չծեծես), այլև աղավաղել հայանի ասացվածքը:

Կամ 14-րդ մեջբերման՝ «Ես Հովակիմը... Թուրքերի օրենքանց միջովն անց կենալիս» արտահայտությունը դարձնելով՝ «Ես Հովակիմը... նրանց օրենքանց միջովն անց կենալիս»,— պարզապես անիմաստ է դարձրել ավյալ պարբերությունը, որովհետև Աբովյանի ասելիքն այն էր, թե Թուրքերը, որ այնքան սարսափազդու էին հայոց համար, իրենց հերթին ահաբեկիչում և խուճապահար էին դառնում Թումանյան-Մհերյան Հովակիմի նման խզիմի առջև:

Եվ կամ 20-րդ քաղվածքում՝ «...Շամչադինու ու Ղափախու. Բուչալվի Հայ ազգը Թուրքի ձեռքից ազատվի» արտահայտությունը փոխելով՝ «...Շամչադինու ու Ղափախու, Բուչալվի Հայ ազգը ազատվի» խմբագրողն այս անգամ էլ աղավաղել է պատմական

ճշմարտությունը կամ կոծկել, քանի որ Գրիգոր Մանուչարյանի հետամտումները բոլորովին այլ էին, նա խնդրում էր պեներալ Երմոլովից՝ Շամշադինի, Ղազախի և Բորչալուի հայերին ազատել թուրք աղաների ու բեկերի հարկատվությունից և դարձնել պետական գյուղացիներ, որպեսզի պարտավորված զգան իրենց միայն պետության և թագավորի առջև: Այսպես և մյուս «խմբագրումները»...

Այս ակներև «սրբագրումներին» պիտի ավելացնել նաև այն լուրջ պակասները, որ ունեին «Վերքի» ինչպես այս, այնպես էլ մինչև 1948 թ. լույս տեսած բոլոր հրատարակությունները, որ առաջին հերթին վերաբերում են բնագրային կրճատումներին: Հիշյալ հրատարակություններից և ո՛չ մեկի մեջ դուք չեք գտնի վեպի ընծայականը և «Ջանգի» հավելվածը՝ «Վերք Հայաստանիի» գաղափարական բովանդակության բացահայտման և ստեղծագործական պատմության հետազոտության համար անչա՛փ կարևոր այդ երկու հատվածները:

Դասական գրողների գեղարվեստական երկերի բնագրերի մեջ կատարվող ամեն մի միջամտություն, «խմբագրման» ամեն մի փորձ, երբ դուրս է գալիս ակնհայտ վրիպակներն օտարելու չրջանակներից, հակասում է հեղինակի կամքին, աքողում նրա դիտավորությունները:

Հարցն այն է, որ «Վերքն» ուղղված էր ո՛չ միայն պարսիկ զավթիչների արյունոտ լծի, այլև թուրք չարպտարարների՝ հարյուրամյակներ շարունակ Հայաստանում գործած անմարդկային արարքների՝ կամայականությունների և ճնշման քաղաքականության դեմ:

Պիմեն Զարդարյան գրատան հրատարակած «Վերքի» մեջ կատարված սրբագրությունները, որքան էլ վեպի գաղափարները արևմտահայ լայն զանգվածներին ու սիյուռքահայությանը հասցնելու, վհատության ուղին նրանից ցրելու և լավ օրվա հույսով խանդավառելու բարի դիտավորությունից, դիրքը թուրք գրաքննության ճանկերից փրկելու ազնիվ մղումից դրդված՝ վերջին հաշվով, փաստական ու լեզվական նոր անճշտություններ էին ավելացնում առանց այն էլ ո՛չ այնքան բարեխղճորեն տպագրության պատրաստված՝ հեղինակային բնագրի մեջ՝ մեղանչումներ թուլլ տալով և՛ ճշմարտության, և՛ հեղինակի հիշատակի դեմ:

Գնահատե՛նք պոլսահայ հրատարակչի սխրանքը՝ թուրք գրաքննության պայմաններում վեպի ամբողջական բնագիրը սիյուռքահայությանը հասցնելու գործում, բայց և չմոռանա՛նք այդ նպատակին հասնելու ճանապարհին նրա գործադրած միջոցների անցանկալի հետևանքները:

Հրանտ Բալույանի «Զվարթնոց» գրատան ցուցակից՝ լույս տեսած Փարիզում, 50-ական թթ., տեղեկանում ենք, որ այդ ժամանակները վաճառվում էր վերստին Կ. Պոլսում տպագրված մեկ այլ «Ողբ Հայրենասիրի».

Խ. Աբովյան, Ողբ Հայրենասիրի (Վերք Հայաստանի), Պոլիս, 1928, 300 էջ, [գինը] 650 ֆրանք:

Անցած երեսուն տարիների մեր որոնումները և Մայր Հայրենիքի ու սփյուռքի հայ բանասերներին ու մատենագարաններին ուղղած գրավոր ու բանավոր հարցումներն ապարդյուն անցան. գիրքը ո՛չ միայն Երևան չեկավ, այլև գրավաճառանոցում էլ, անսպասելիորեն, հետքերը կորան: Կարծում ենք, որ կամ այդ հրատարակությունը թյուրիմացության արդյունք է, և գրացուցակում տպագրության թվականի ու էջերի քանակի վերաբերյալ տվյալները նշվել են հիշողությամբ ու անճշտություններով, որովհետև Պոլսում Աբովյանի վեպը՝ «Ողբ Հայրենասիրի» խորագրով, լույս է տեսել միայն մեկ անգամ, 1931-ին, գրացուցակում նշված թվականից ուղիղ երեք տարի հետո, իբր 316 էջից բաղկացած մի գիրք, կամ էլ 1928-ին, գուցե և հետո, սփյուռքում լույս է տեսել մեկ ուրիշ, ցարդ անծանոթ «Վերք Հայաստանի» նույնպես, որի տպագրության վայրը «Զվարթնոց» գրատան վաճառելիք գրքերի ցուցակ կազմողը սխալ է մատնանշել և հետազոտողներին մոլորության մեջ գցել. նման ենթադրության որոշ հիմքեր կան, բայց այդ մասին մեկ այլ առիթով: Ավելացնենք նաև, որ Հ. Բալույանը (քանի կենդանի էր) և նրա տիկինը խուսափեցին բացատրություններ տալ մատենագիտական վերոհիշյալ տեղեկանքի (հետևաբար և՝ գրքի) ճիշտ կամ սխալ լինելու մասին, երբ անցյալները մեր սփյուռքահայ ծանոթներին հանձնարարեցինք գնել այդ գիրքը մեզ համար կամ պարզել բանի էությունը:

Եթե 1928 թ. «Վերքի» տպագրության հարցը մնում է վարկածային, ապա անկասկած է արդեն 1930-ին, այն էլ Եգիպտոսում լույս տեսած «Վերքի» գոյությունը, միայն թե վերջինիս օրինակներն էլ ցարդ անգտանելի են:

Կահիրեի «Հուսաբեր» լրագրի 1930 թ. մայիսի 3, 5, հունիսի 19, 20, 22-ի և հետագա ամիսների համարներում (№№ 27, 28, 66–68, 102, 103, 106, 109, 110, 120, 124, 131) տպագրված ծանուցումներից տեղեկանում ենք, որ **Վ. Զարդարյան գրատան կողմից,** *որը տեղավորված էր Բարթողյանի կալվածքում (Ծուատ Ա փողոց, թիվ 13, Շեմլայի թրվ.), «պրակ-պրակ կհրատարակվի «Վերք Հայաստանի»՝ Աբովյանի», յուրաքանչյուր պրակը «5 միլիեմ»: Ահա այսօր այդ պրակներից ո՛չ գեթ մեկ օրինակ, ո՛չ էլ նրանց ամբողջական շարքը մի կապմի մեջ*

ամփոփված (որպես առանձին գիրք), մեզ մատչելի չի եղել, չնայած որ ներկա հայտարարության հավաստիությունը վեր է ամեն կասկածից:

Թե ի՞նչ էին իրենցից ներկայացնում այդ պլակները, սովորական արտատպությո՞ւն «Վերք Հայաստանի» վեպի ամբողջական բնագրի՝ 1858, 1897 կամ 1908 թթ. արևելահայ հրատարակություններից որևէ մեկից, թե՞ բոլորովին նոր խմբագրություն, ինչպես, ասենք, նույն դերդաստանի Կ. Պոլսի գրատան՝ Պիմեն Զարդարյանի կողմից 1931 թ. լույս ընծայված «Վերքը»՝ «Ողբ Հայրենասիրի» խորագրով, կամ էլ, վերջապես, Աբովյանի վեպի արևմտահայ թարգմանությունը, որից նույնպես ցարդ ոչ մի օրինակ չի գտնվել, մնում է հանելուկ: Նշանակում է՝ 1928 թվականի ենթադրական հրատարակության կողքին ավելանում է այս անգամ արդեն միանդամային իրական մի տպագրություն էլ, որի իրեղեն ապացույցները «խուսափում» են մեզանից:

Տարիներ առաջ լսել ենք բանասեր Փայլակ Անթասյանից, որ Երուսաղեմում դասավանդելու առաջին տարիներին, 70-ական թթ. վերջերին, ժառանգավորաց դպրոցի սաների ձեռքին տեսել է մի անսովոր «Վերք»՝ «խժդուժ» լեզվով, որը, թերևս, հիշյալ հրատարակությունը լիներ: Բայց Երուսաղեմի Գյուլպենկյան մատենադարանի տնօրեն պ. Սահակ Գալայճյանին ուղղած մեր գրավոր ու բերանացի հարցումներին հաստատական պատասխան չստացանք, 1928 և 1930 թթ. տպագրված «Վերք Հայաստանիներ» նրանց հավաքածուներում չկան, Կ. Պոլսի, Վիեննայի, Վենետիկի գրադարաններում նույնպես[3]*:*

Ուրեմն՝ սպասենք երջանկաբեր առիթին:

---

3 *Կահիրեի «Հուսաբեր» լրագրի նշված համարները գտնելու հույսով՝ 1992 թ. հուլիսի 24-ին նամակով դիմեցի Եղիպտոսի Հայոց Թեմական առաջնորդ Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանին, սակայն մինչև օրս որոշակի պատասխան չստացա. Սրբազան Հայրն ասում է, թե իրենց մատենադարանի հավաքածուների մեջ թերթի շատ համարներ պակասում են ...*

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

1

«Գրքերի աշխարհ» մատենագիտական ամսաթերթի խմբագրությունը դիմել էր ինձ՝ գրասերների հետ կիսելու նկատողություններս Աբովյանի անմահ ստեղծագործության վերջին հրատարակության մասին, որը լույս է ընծայել Երևանի համալսարանը 1981 թ. հուլիսին, «Ուսանողի գրադարան» մատենաշարով (տողերիս գրողի աշխատասիրությամբ):

*Սկզբում հրավերն ուշացած համարելով՝ մերժեցի, որովհետև գրքից արդեն ո՛չ մի օրինակ չէր մնացել Երևանի և հանրապետության մյուս բնակավայրերի գրախանութներում: Ողջ տպաքանակը՝ 30.000 օրինակ, սպառվել էր դեռ նախորդ տարվա օգոստոս-սեպտեմբերին, և ցանկացողն այլևս չէր կարող ձեռք բերել բազմալի մատյանը, որը հների խոսքերով ասած՝ ամբողջությամբ **իսկական բանաստեղծություն է**, ընթերցողի սիրտը լցնում է ազնիվ զգացումներով, տրամադրում ազգաշահ խոհերի, անկեղծորեն ոգևորում նրան:*

*Բայց հետո, տեղի տալով Եռանդուն ու հարգարժան խմբագրի կրկին ու կրկին «սպառնալիքներին», ենթարկվեցի և արդեն ինքս անհրաժեշտ գտա իսկական գրասերներին համառոտ տեղեկանքներ տալ «Վերք Հայաստանիի» այս նոր հրատարակության առանձնահատկությունների, բնագրի մեջ իմ կատարած «մի ջամ տությունների»՝ ուղղումների, լրացումների և, ընդհանրապես, գրքի պատրաստման ընթացքի մասին, որը չատերին, թերևս, երկրորդական դործ թվա, որովհետև նրանք համոզված են, թե բավական է նախորդ հրատարակություններից որևէ մեկի թերթերը նոր, մաքուր էջերի վրա վակցնել, և գիրքն արդեն պատրաստ է, կարելի է, մինչև իսկ առանց ստուգելու, տպարան ուղարկել և հանդիստ խղճով այդ «ծանր ու պատասխանատու աշխատանքի» համար մի չոչափելի գումար դրպանել: Այդպես այսօր վարվում են **ոմանք**, այն էլ՝ գրահրատարակչական աշխարհում արձակ-համարձակ գործող անձինք՝ նախապես անցնելով*

դասախոսական և ուսումնառության հատուկ դասընթաց և օգտվելով բարձր հովանավորությունից ու առանձնաշնորհումներից:

Այո՛, համոզված եմ, որ իսկական դրասերը, նաև հետաքրքրասերը, պետք է տեղյակ լինի գրքերի հրատարակչության հետ կապված բոլոր էական մանրամասնություններին՝ բնագրերի աղավաղված մասերը կարգավորելու ուղիներից սկսած մինչև տպագրական ու գրաքննական արգելքները շրջանցելը կամ հաղթահարելը, մինչև ակնհայտ վրիպակներն ուղղելու թույլատրելի սահմանները: Իսկ «Վերք Հայաստանի» վեպի ներկա հրատարակությունը՝ բնագրի և օժանդակ մասերի պատրաստման, ինչո՞ւ չէ, նաև հաղթահարված արգելքների առումով, առանձնահատուկ տեղ է գրավում ինչպես աբովյանագիտության, այնպես էլ հայ բնագրագիտության պատմության մեջ՝ չունենալով նախօրինակը հայ դասականների առանձին վերցրած մեկ ստեղծագործության հրատարակման բնագավառում:

Հենց սկզբից, օգտվելով առիթից՝ ուզում եմ չնորհակալության խոսք ուղղել ճանաչված գրող ու հրապարակախոս Գևորգ Դևրիկյանին, որը քիչ է ասել՝ նպաստեց, նաև հարկադրեց ինձ մարմին տալու երևնամյա բաղձանքիս՝ Աբովյանի անմահ վեպի բնագիրը տպագրության պատրաստելու, նախաբանն ու ծանոթագրությունները գրելու, բառարանն ու մյուս տեղեկանքները կազմելու առնչությամբ: Պիտի խոստովանեմ, սակայն, որ երբ բանը հասավ վերջին «արարին»՝ գրքի տպագրությանը, ավելի ճիշտ՝ ձեռագիրը տպարան ուղարկելուն, հանուսակ երկուսիս բուռն ցանկությանը՝ «Վերք Հայաստանիի» դեմ ծառացան մարտնչող տգիտության և անպատմելի չարակամության այնպիսի դավեր, որոնց դեմ երկուսս էլ անզոր դտնվեցինք:

Ի վերջո, գիրքը լույս տեսավ տարիներ հետո միայն, այլ հրատարակության կողմից՝ հապճեպորեն այլ ընթերցողի ու, մասամբ էլ, հարմարեցվելով այլ նպատակների, որից թեպետև այն մի որոշ առումով տուժեց, բայց, դուցե թե, մասամբ էլ շահեց:

2

«Վերք Հայաստանիի» նոր հրատարակությունը տրամաբանական հետևանքն ու արդյունքն է հայ բանասիրական մտքի, մասնավորապես, բնագրագիտության վերջին մեկ ու կես դարի ընթացքում կուտակած փորձի, որի լավագույն արտահայտություններից մեկերկուսն առնչվում են հենց Աբովյանի անձին ու գրական ժառանգությանը: Իսկ աբովյանագիտությունն էլ, ինքնին վերցրած, սկիզբ

առնելով անցյալ հարյուրամյակի կեսերից, գիտնական-իրավաբան Հովսեփ Փոնդոյանցի և գրահրատարակիչ Համբարձում Էնֆիաճյանցի հրատարակություններից, աստիճանաբար առնականացավ ու թրծվեց Միքայել Նալբանդյանի, Ստեփանոս Ոսկանի, Մ. Տեր-Ազարյանցի[1], Մորից Վադնեռի, Ֆրիդրիխ Բոդենշտեդտի, Աուգուստ ֆոն Հաքստհաուզենի աշխատությունների ու անդրադարձումների միջոցով՝ հասուն պտուղներ տալով միայն շատ տասնամյակներ հետո: Եվ այնուհանդերձ՝ առանց գիտության այդ անկաշառ մշակների հավաքած վավերական նյութերի և ստեղծած կենսունակ ավանդների՝ այն անհրապույր ու խոպան անդաստան պիտի մնար... Առաջին անգամ Հ. Փոնդոյանցն ու մյուսներն են վերծանել և մեկնաբանել Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, «Նախաշավիղ կրթութեան» ուսումնական ձեռնարկի երկրորդ տարբերակը, «Պարապ վախտի խաղալիք» բանաստեղծական ժողովածուն, մանկապատանեկան հիշողությունների տետրակը, գրական ժառանգության ու կենսագրության անծանոթ ուրիշ շատ էջեր ու առեղծվածներ, որոնք, հակառակ պարագայում, անհասկանալի ու անմատչելի պիտի մնային երկար ժամանակ կամ առհավետ պիտի կորչեին ու ոչնչանային... Այդ նրանց չնորհիվ էր, որ «Վերք Հայաստանին» կարճ ժամանակում արբության սրբոց դարձավ շատերի համար: Ինչպես Դերենիկ Դեմիրճյանն է հետագայում վերհիշում՝ «Մենք մեր աչքով տեսնում էինք, թե ինչպես հայ գյուղացին գալով քաղաք՝ իր ձին թողնում էր քարվանսարայի ախոռներում, կատարում իր գնումները և ապա գնում էր գրախանութ և պահանջում «Աղաստու պատմությունը»՝ «Վերք Հայաստանին»...»[2]:

Այդ առումով՝ միանգամայն հասկանալի է մեզ ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի չարունակական տագնապն ու անմարելի բաղձանքը՝ ի վերջո, հրատարակի վրա տեսնելու խնամքով, սիրով և համբերությամբ նախապատրաստված, բնագրագիտական առումով նվազ խոցելի, այսինքն՝ ճշտված ու մեկնաբանված, տպագրական վրիպակներից զերծ և գրատպական բարձր կուլտուրայով լույս ընծայված մի լավ «Վերք Հայաստանի»[3]:

---

1 Համոզ մնգ, որ արովյանագիտության այս նրախտավորի ո՛չ իսկական անունը գիտենք, ո՛չ էլ վավերական կենսագրությունից որևէ դրվագ:

2 «Արև», Կահիրե, 1948, դեկտ. 11, № 9118, «Երկու խոսք «Վերք Հայաստանիի» մասին»:

3 Տե՛ս Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. IV ե., 1951, էջ 117–118: «...Էսօր Հայ ժողովրդի պաշտելի «Վերք Հայաստանին» դրված է մեր սեղանի վրա իրրև հայ գրքերի մեջ ամենաանփոխարինելի տպված գրքերից մինը,

Հներն այդ բացը չկարողացան լրացնել, խանդարիչ հանգամանքները չատ էին, իսկ նորօրյա արուվյանագիտությունն էլ միայն 30-ական թթ. վերջերից է, որ սկսեց ծավալվել նշածս ուղղություններով:

Ռուբեն Զարյանն ու Հրայր Մուրադյանը չուրջ տասը տարվա ընթացքում (1938–1948 թթ.) ջանացին ու փորձեցին հրատարակությունից հրատարակություն «Վերք Հայաստանիի» էջերից օտարել նախորդների ո՛չ ճիշտ վերծանությունների և դրաքննական աղավաղումների անցանկալի հետքերն ու տպագրական վրիպակները՝ հարազատորեն վերարտադրելու համար հեղինակային բնագիրը, բայց ուշադրության կենտրոնում առավելապես պահեցին ձեռագրի տառն ու բառապատկերը՝ այն էլ ներկայացնելով հետհոկտեմբերյան շրջանում գործող ուղղագրական տարբերակներով...

Այս նոր հրատարակության մեջ մեր ջանքերն ևս առաջին հերթին ուղղված էին միևնույն նպատակին, նպատակ, որ, ամբողջությամբ վերցրած, մեր նախորդները չէին հասցրել ցանկալի վախճանի, բայց դա, ընդգծում ենք, գործի լոկ սկիզբն էր, որովհետև հեղինակի գրածի հարազատ վերարտադրությունը ձեռքի տակ ունենալուց, այս վերջինը համակողմանիորեն քննելուց, ստացած արդյունքների ընդհանրացման միջոցով բնագրագիտական որոշակի սկզբունքներ մշակելուց և դրանք գործնականում կիրառելուց հետո միայն կարելի կլիներ սահմանել «Վերք Հայաստանի» վեպի վերջնական բնագիրը, այսինքն՝ սկսել և ավարտել բուն աշխատանքը, որն, անտարակույս, ստեղծագործական որոնումների չատ ավելի բարդ ու պատասխանատու փուլ է և հետազոտողից պահանջում է ծանր ու տևական աքնություն և անմնացորդ ինքնանվիրում, որ առ այսօր ավելորդ է ինարել «Վերքի» բնագրին առնչվող հների մոտ:

Հեղինակային դիտավորությանը հնարավորին չափ հարազատ մնալու և անցանկալի սխալներից խուսափելու համար, աշխատանքի այս երկրորդ փուլում, մենք ուշի-ուշով քննելով և միմյանց հետ բաղդատելով վեպի ստեղծագործական ձեռագրերն ու պահպանված բոլոր տարբերակները՝ առաջին հերթին վերականգնել ենք երկի ամբողջականությունը, որ և ազդակ է ծառայել ճիշտ որսալու երկի բուն դաղափարը կամ ոգին, հայտնագործելու հեղինակի բուն ասելիքը:

դուցե հենց ամենաանփույթ տպվածը... Ամենալավ «Վերք Հայաստանին» դարձյալ մնում է հինը, մինչև մի նոր լավը կտպվի» («Ուղղված «Վերք Հայաստանին», 1910 թ.):

Առաջին անգամ «Վերք Հայաստանի» վեպի ընծայականը հրատարակվում է նախորոշված տեղում, երկի բուն հյուսվածքի մեջ, մինչդեռ Աբովյանի անմահ քերթուհյան այդ խորհրդավոր մուտքը կա՛մ ցարդ անտեսվել էր, կա՛մ էլ, լավագույն դեպքում, արտաքսվել ծանոթագրությունների մեջ: Վերականգնված են կչռությամբ տողերով հորինված առանձին չափածո հատվածներ, որոնք անցյալներում տպագրվում էին արձակ չարվածքով: Բնագրի մեջ են մուծված գրեթե բոլոր երեք գլուխներից ու հավելվածից անուշադրության և այլ պատճառներով դուրս մնացած արձակ ու չափածո տողերը, բառերը, արտահայտությունները:

Թերևս, չատերը չգիտեն, որ «Վերք Հայաստանի» վեպի վերջին (մաքրագիր) տարբերակը, ավելի ճիշտ՝ այդ բնագրի արտագրությունը, կատարված է հեղինակից բացի նաև երկու այլ անձանց ձեռքով, և նրանց անհմտության, անուշադրության պատճառով վեպի մեկերրորդ մասի մեջ (որ վերաբերում է բոլոր երեք գլուխներին) սպրդել կամ մնացել են բազմաթիվ սխալներ և անցանկալի աղավաղումների հետքեր: Ճիշտ է, դրանց մի փոքրիկ մասը Աբովյանը նկատել է հետագայում և ուղղել հենց համապատասխան էջերի վրա, սակայն չատերն էլ մնացել են աննկատ և 1858 թվականից սկսած մինչև օրս փոխանցվում էին հրատարակությունից հրատարակություն, հնից՝ նորը ... Մեր պատրաստած նոր բնագրի մեջ այդ հատվածները տպագրվում են ըստ վեպի երկրորդ (սևագիր) տարբերակի: Եվ այդ այն պատճառով, որ նախ՝ արտագրողները ժամանակին օգտվել են հենց այդ ձեռագրից, և երկրորդ՝ խնդրո առարկա էջերը, նախքան արտագրել տալը, Աբովյանը մի վերջին անգամ էլ ուշադրությամբ ընթերցել և նրանց մեջ կատարել է մի շարք փոփոխություններ: Ո՛չ միայն վեպի այդ, այլև մնացած բոլոր մասերի բնագիրը հրատարակության պատրաստելիս՝ մենք, առաջին տողից մինչև վերջինն, ուշադրությամբ բաղդատել ենք միմյանց հետ արձակ զույգ տարբերակների ձեռագրերը և ուղղել ու լրացրել այն բոլոր սխալներն ու բացթողումները, որ թույլ են տվել ինչպես արտագրողները, այնպես էլ, առանձին դեպքերում, Աբովյանն ինքը՝ ամեն անգամ մեր լրացումները մեջ բերելով սուր փակագծերի մեջ, իսկ ակնհայտ սխալագրություններն ուղղելով առանց հատուկ նշման:

Միայն երկու օրինակ.

«Վերք Հայաստանի» վեպի առաջին գլխի եզրափակիչ հատվածներից մեկը, ուր Աղասու մայրը ալեկոծ հոգով փորձում է վերհիշել որդու մասին համագյուղացիների հորինած խաղը և, բնականաբար,

խառնում ու չվոխում է երգի բառերն ու տողերը, ավանդաբար տպագրվում էր հետևյալ ձևով.

Աղասի չան. գլ...խիդ... ղո՛ւր...բա՛ն...
Դու... ես... մեր... թագն... ու... պարծանքը...
Թա՛գն է՛լ գնա՛ց... թվա՛նքն է՛լ...
Տո՛ւնս էլ քանդվեց... պուճա՛խս է՛լ:
Աչքս է՛լ փորվեց... ումբը՛րս էլ:

Իրականում, սակայն, «Աղասու խաղի» այս վերարտադրությունը սևադիր ինքնագրում ունի այլ ծավալ և բառերի հաջորդականություն.

Աղասի՛ չա՛ն, գըլ...խի՛դ... ղո՛ւր...բա՛ն...
Դու... ես... մեր... թա՛գն... ու... պարծա՛նքը...
Թա՛գն է՛լ գնա՛ց... պարծա՛նքն է՛լ...
Թո՛ւրն է՛լ գնա՛ց... թվա՛նքն է՛լ...
Տո՛ւնս է՛լ քանդվեց... պուճա՛խս է՛լ...
Ա՛չքս է՛լ փորվե՛ց... ումբըը՛ս է՛լ: *(էջ 108)*

Արտագրողի մեղքով են երկրորդ տողի սկիզբը և չորրորդի վերջը արհեստականորեն կցվել իրար, բնագիրը կրճատվել է ու աղավաղվել, մինչդեռ հեղինակային դիտավորությունը բոլորովին այլ էր, և նրա վերահաստատումը, հատկապես այստեղ, պարտադիր է:

Աղասու մասին հորինված ժողովրդական խաղի և նրա մոր՝ Տանուտեր Օհաննեսի կնոջ վերարտադրած տարբերակի ընդհանրությունները երևան են գալիս միայն առաջին և վեցերորդ տներում: Ահա՛ դրանք.

Աղասի չա՛ն, գլխիդ ղուրբան,
Դու ես մեր թագն ու պարծանքը.
Աչխարքս որ բոլոր ման գան,
Ո՞վ կլի հատդ, դու մեր կյանքը...

Թագավորներ հասրաթդ քաշեն,
Որ ունենան քեզ պես որդի.
Քո անունը երբ լսում են,
Թոզ են դառնում քո թշնամիք... *(էջ 63)*

*Բայց Տանուտեր Օհաննեսի կինն անսխալ վերարտադրում է ո՛չ թե ժողովրդական խաղի հիշյալ երկու տներն ամբողջությամբ, այլ միայն առաջինի երկու տողը՝ երգախառն պատումն այնուհետև առաջ տանելով միանգամայն այլ հունով: Պատճառն այն է, որ ժողովրդական խաղն իր ժանրային յուրահատկություններով **ներբող է,** մինչդեռ մոր երգածը տվյալ իրավիճակի թելադրանքով վերափոխվելով՝ դարձել է **ողբ,** իսկ քնարական սեռի այս երկու տեսակները՝ ներբողն ու ողբը, էապես տարբերվում են իրարից: Ողբերը, սովորաբար, ասում են կանայք, և լինում են շատ երկար: Ողբասացներն առանձնահատուկ ուշադրություն են հրավիրում ոչ միայն դժբախտ պատահարի ցավալի հետևանքների, այլև հերոսի երբևէ կատարած արժանահիշատակ գործերի վրա: Վեպի հյուսվածքի մեջ ողբային հատվածի վկայակոչումը կամ մեջբերումն ևս իր պայմանականություններն ուներ. երկարապատում լինելու դեպքում՝ հեղինակը պիտի չեղվեր վիպական ժանրի պահանջներից, մինչդեռ լոկ ճաշակ տալը լիուլի բավարար էր: Ահա՛ ինչու Աբովյանը սահմանափակ տողերով ավարտել է Աղասու մոր երգը, որ ինքնին վերցրած՝ խիտ ու տարողունակ հորինվածք է. ծավալելու դեպքում պիտի մեծապես թուլանար այդ դրվագի ներգործման ուժը:*

«Վերքի» բնագրի այս աղավաղված հատվածի վերականգնումը, ինչպես հետևում է մեր բացատրություններից, ունի խիստ կարևոր ու սկզբունքային նշանակություն:

Մանոթանանք նաև մեր մեկ ուրիշ ուղղման հետ. վեպի՝ գեներալ Մադաթովին և Շամխորի ճակատամարտին նվիրված դրվագում (գլուխ Երրորդ) կար մի այսպիսի արտահայտություն, որի աղավաղված լինելը դարձյալ չէր նկատվել. «...էս կողմիցը Աբաս-Միրզեն, էն կողմիցը Հասան-խանը քանդելով, ավերելով էկել՝ հասել էին Թիֆլիզ՝ որ գնան Պետերբուրգ. ինչպես որ տեսանք, սհաթե սհաթ աչքը կթած ուներ, թե Աղա Մամադ խանի կրակը... կրկին իր գլխին կթափի»: Այս տողերից այն տպավորությունն էր ստացվում, որ պարսիկների գաղտնորեն նյութած դավի ու նենգության ողջ սարսափները թափվելու էին Պետերբուրգի գլխին, և վերջինիս բնակիչներն էլ այդ զգում էին... իրողություն, որ ամենևին դեմ է պատմական ճշմարտությանը: Նոր հրատարակության մեջ վերականգնված է հեղինակային բնագիրը. «Էս կողմիցը՝ Աբաս Միրզեն, էն կողմիցը՝ Հասան խանը, քանդելով, ավերելով էկել, հասել էին, որ գնան Պետերբուրգ: Թիֆլիզ, ինչպես որ տեսանք, սհաթե-սհաթ աչքը կթած ուներ, թե Աղա Մահմադ խանի կրակը... էլ կրկին իր գլխին կթափի» (էջ 281):

«Ինչպես որ տեսանք...» հիշեցումը հենց այնպես ասած խոսք չէ: Ավելի առաջ, վեպի երկրորդ գլխում (հատված 8), Աբովյանն իսկապես անդրադարձել է նույն իրողությանը. «Էս ժամանակին էր, Հունխսի...-ին, 1825-ին (ուղղելի՝ 1826-ին—Պ. Հ.), որ արևնակեր Հասան խանը... ոտը բարձրացրեց, որ գնա, Պետերբուրգն էլ առնի, ավերի, Թիֆլիզու սիրուն օղլուշաղը իրան դաշան զորացը մատաղ անի» և այլն (էջ 162): Նկատենք, որ խուճապ առաջ բերող հոխորտանքները պարսիկների համար ազդու միջոցներ էին, և վեպում դրանց տեղ տալը՝ ժողովրդական վեպին բնորոշ արտահայտչամիջոցներով դարաշրջանի պատմական հոգեբանությունը ճշմարտացի վերարտադրելու ապացույց: Վերացնելով աղավաղումը՝ վերահաստատվում է պատմական ճշմարտությունը, և հեղինակային պատումը դառնում է դաշն՝ նախորդ դրվագների հետ:

Վերջապես՝ վեպի բնագիրը նոր հրատարակության մեջ հանդամանորեն մեկնաբանված ու ծանոթագրված է: Դրանց օգնությամբ բացահայտվում են «Վերքի» դաղափարական ակունքները, կերպարների նախատիպերը, հեղինակի դրական-քաղաքական հայացքների այլևայլ դրսևորումներ: Մեկ առ մեկ մատնանշվում են առաջին հրատարակության մեջ (1858 թ.) կատարված գրաքննական կրճատումները, որոնք բացառապես վերաբերել են եկեղեցու և կրոնի սպասավորների քննադատությանը, իսկ այդ խնդրում ցարական գրաքննիչները խիստ զգայուն էին: Գրքին կցված է բարբառային և օտար, դժվարհասկանալի բառերի նոր բառարան, նաև ցանկը գրության կրկնակ ձևեր (տարբերակներ) ունեցող և ուղղագրական անճշտություններ պարունակող բազմաթիվ բառերի, որոնք, բնականաբար, միասնության են բերված և ուղղված: Վեպի նախորդ բոլոր հրատարակությունների (նաև՝ չիրականացված), մշակումների ու թարգմանությունների մասին տրվում են մատենագիտական անհրաժեշտ տեղեկություններ: Արդիականացված է կետադրությունը՝ ըստ ներկայումս գործող կանոնների և այլն:

Դասականների երկերի ճեռագրերի կամ հնօրյա տպագրությունների մեջ մի վրիպակ նկատելն ու ճշտելը ավելի դժվար է (որովհետև մեծ լարվածություն, համառություն ու բարեխղճություն է պահանջվում), քան նրանց կյանքի ու ստեղծագործության առեղծվածային հարցերի մասին դեղեցիկ վարկածներ հորինելը, մանավանդ, երբ վարկածներ հորինելիս անտեսվում են գրողի ապրած ժամանակն ու պայմանները, երբ արհամարհվում են քիչ թե շատ առարկայական կռվանները:

Վերջին տարիների աբովյանագիտական որոշ հրատարակությունների էական թերությունը, դժբախտաբար, այս է: Նման շարադրությունները գիտության հետ ընդհանուր ոչինչ չունեն: Աբովյանագիտության մեջ «ծանրակչիռ ներդրումներ» անելու մարմաջը դրանց հեղինակներին մղում է ամենաանհեթեթ ենթադրությունների, որոնք այնուհետև մատուցվում են «անհերքելի ճշմարտությունների» տարազով և ապա՝ թմբկահարվում... Իսկ թմբկահարողներն էլ չեն մտածում, որ այդպիսով ապակողմնորոշում են բանին անտեղյակ ընթերցողներին և վարկաբեկում գիտությունը: Աբովյանի, իբր, Սիբիր աքսորված լինելու և նրա կնոջն ու երեխաներին, որպես աքսորականի ընտանիքի, պետական թոշակ տալու մասին պատմաբաններից մեկի հորինած նոր լեգենդը այնպիսի բացահայտ անհեթեթություն է, որ չարժե անգամ հիշել: «Գրքերի աշխարհի» անցյալ համարներից մեկում սևով սպիտակի վրա գրվեց, որ աբովյանագիտությունը երիտասարդ գիտություն է, և որպես նորագույն ու մեծ հայտնություն մատնանշվեց Նշան Մուրադյանի «Աբովյանի բանաստեղծական աշխարհը» շատ սովորական գիրքը: Լուրջ չէ նաև այս: Այսօրինակ բարքերի դեմ բողոքում են բազմաշխատ աբովյանագետներ Ե. Շահազիզի, Ա. Տերտերյանի, Հ. Մուրադյանի, Գ. Աբովի և ուրիշների ոգիները: Գիտության շահը պահանջում է հրաժարումն տրամաբանական մարզանքներից և վերադարձ դեպի առողջ բանականության, խոհեմության, համբերատար որոնումների և արթուն եզրակացությունների գետինը:

ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1809

Հոկտեմբեր, շուրջ 15. — *Քանաքեռ գյուղում ծնվեց ապագա հայ մեծ դրող ու մտածող Խաչատուր Աբովյանը: Հայրը՝ Ավետիք Աբովի Աբովյանց, մայրը՝ Թագուհի, որ դուստրն էր նույն գյուղացի Հովհաննես Թադևոսյանի:*

— *Մնողներն ուխտում են իրենց առաջնեկին նվիրաբերել Էջմիածնի վանքին:*

1819

Ապրիլ, շուրջ 20. — *Հայրը (թե՞ հորեղբայրը) Խաչատուրին տանում է Էջմիածին և հանձնում Եփրեմ կաթողիկոսին՝ կրթելու, դաստիարակելու և նախապատրաստելու հոգևոր կոչման: «Ուսաւ ի վարժարանի սորին ի սակաւամեայ հասակի... զամենայն եկեղեցական ընթերցուածս», այսինքն՝ ժամագիրք, Շարակնոց, Նարեկ:*

1820

Դեկտեմբերի 25. — *Ստեփաննոս Նախավկայի տոնին Խաչատուրն արտասանում է սրբին նվիրված ներբող և պարգևատրվում:*

1821

Հուլիսի 23. — *Ազասին ու իր ընկերները Անիի ճորում ջարդում ու ցրում են Կարսի կուսից ավարով վերադարձող Հասան խանի զորքը. «Էն ժամանակը ես ինքս Էջմիածին էի, որ Հասան խանը էնպես փախած էկավ անց կացավ», — վկայում է հետագայում Աբովյանը:*

1822

Հոկտեմբեր. — *Դառնում է Անտոն Մուղնեցի արքեպիսկոպոսի փոքրավորը և նրա կոչով Էջմիածնից գալիս է Հաղբատի վանք:*

1823

Մայիս. — *Անտոն Մուղնեցին խաչատուրին տանում է Տփղիս և կրթության տալիս Պողոս վարդապետ Ղարադաղցուն, որն աշակերտ էր հավաքում Ներսիսյան դպրոցի համար:*

1824

Փետրվարի 9. — *Գրում է «Սրբաճեմ ոտից տեառն գթութեանց...» սկսվածքով մի հանգավոր նամակ և ուղարկում Անտոն Մուղնեցուն, որն իբրև նվիրակ շրջագայում էր Եվդոկիայի և Տիգրանակերտի գավառների հայաբնակ գյուղերում: Դա Աբովյանի ցայժմ ծանոթ ամենավաղ, թվակիր ստեղծագործությունն է:*

Ամստ. — *Այցելում է հայրենիք՝ Երևան, գրում «Կարօտութիւն նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց» բանաստեղծությունը:*

— Ծանոթանում է Մխիթար Աբբայի, Սիմեոն Երևանցու, Ղուկաս Վանանդեցու և նման հայրենասերների գործունեությանը և վճռում նրանց օրինակով հայ մանուկների լուսավորության գործին նվիրվել, ապա և՝ որևէ կերպ ընկնել Եվրոպա և օտար միապետներից օգնություն աղերսել բարբարոսների լծից Հայաստանն ազատագրելու համար:

Դեկտեմբերի 1. — *Սկսվում է դասատվությունը Ներսիսյան դպրոցի նոր շենքում, բանաստեղծ Ալամդարյանի տեսչության ներքո: Աբովյանը, Ներսես Աշտարակեցու բնութագրմամբ, աշակերտության պարագլուխն էր:*

1825

Մարտ, վերջին տասնօրյակ. — *Գրում է «Զայնակցեալ եմ ձեղ հոգերգու գումարք...» բանաստեղծությունը:*

1826

Փետրվարի 22 — 24. — *Երկօրյա ավարտական քննություններից հետո տեղի է ունենում Ներսիսյան դպրոցի պարգևաբաշխության հանդեսը (24-ին): Աբովյանը արտասանում է «Նախկին քոյ քրտանց*

տօն այսօր հնչէ...» ներբողը առ Ներսես Աշտարակեցի, որ ներկաների վրա մեծ տպավորութիւն է գործում:

Գարուն. — *Ամեն կերպ ձգտում է ուսման մեկնել Մոսկվա, բայց մատնվում է անհաջողութեան:*

Հուլիս, 8 — 12-ի միջև. — *Հաղբատի վանքում ստանում է եփրեմ կաթողիկոսի հաճութիւնը՝ ուսանելու համար Վենետիկ ուղևորվելու: 13 — 14-ի գիշերը ճանապարհ է ընկնում, բայց հաղիվ Ղարաքիլիսա հասած՝ արգելափակվում է այստեղ: 16-ին սկսվում է ռուս-պարսկական պատերազմը՝ ամեն ինչ տակն ու վրա անելով:*

Հոկտեմբեր. — *Եռամսյա թափառումներից հետո վերադառնում է Հաղբատի վանք, մասնակցում տեղացիների ինքնապաշտպանական կռիվներին: Հրացան արձակելու համար հոգևորականները նրան հերետիկոս են անվանում:*

Նոյեմբերի 3. — *Գրող ու գործիչ Հարութիւն Աբաբատյանի հանձնարարութեամբ Ն. Կարամզինի «Ռուս ճանապարհորդի նամակները» գրքից թարգմանում է Կիլիկյան Հայաստանի վերջին թագավոր Լևոն Լուսինյանին վերաբերող հատվածը:*

1827

Հունիս-սեպտեմբեր. — *Առժամանակ հեռանում է Թելավի կողմերը, թերևս, ուսման համար Մոսկվա մեկնելու, բայց նորից անհաջողութեան է հանդիպում:*

Սեպտեմբեր, վերջեր. — *կրկին վերադառնում է Հաղբատի վանք:*

Հոկտեմբեր. — *Խանդավառված Երևանի բերդի գրավման ու Հայաստանի ազատագրութեան լուրերով՝ գրում է «Նոր ի՞նչ են այս ցոյցք մերս Հայաստանի...» բանաստեղծութիւնը:*

Հոկտեմբերի 10. — *Մտնում է Սանահնի միաբանութեան մեջ և վանական դպրոցում կարդում ուսուցիչ:*

— *Փորձում է ինքնուրույնաբար սովորել ֆրանսերեն:*

Մարտի 18. — *Անտոն Մուղնեցին դիմում է Ռուսաստանի հայոց առաջնորդին՝ խնդրելով աջակցել իր հոգեզավակ Խաչատուր Քանաքեռցուն՝ ուսանելու թեմի դպրոցներում (նկատի ուներ Լազարյան ճեմարանը), սակայն խուսափողական պատասխան է ստանում (ուղարկված ապրիլի 21-ին, Աստրախանից):*

Ապրիլի 8. — *Դադարեցնում է ուսուցչությունը Սանահնի վանքում և վերադառնում Հաղբատ:*

Ապրիլ, վերջեր. — *Վերադառնում է Էջմիածնի վանք, չարունակում է սպասավորել Անտոն Մուղնեցուն և հայկաբանությունն ու ուսաց լեզու ավանդել մի քանի ընդունակ պատանիների:*

Մայիսից ո՛չ առաջ. — *Երևանում գրում է «Խնդամիտ զգացմունք նրախտաւգէտ Հայկազին՝ յազատութիւն Հայրենեաց իւրոց» բանաստեղծությունը՝ ներբողելով «Մեծին Ռուսսիոյ» զավակներին, որոնք հայության համար բաց արին «առաւօտ փրկութեան»:*

Աշուն. — *Անտոն Մուղնեցին խոստանում է իր միջոցներով Աբովյանին ուսման ուղարկել Մոսկվա կամ Պետերբուրգ, բայց վերահաս մահը (սեպտեմբերի 29) արգելափակ է դառնում:*

Հոկտեմբեր. — *Ծառայության է մտնում Եփրեմ Մարզվանցու մոտ, որից և ստանում է կլիսասարկավագության չորս աստիճան:*

1828/29

— *Հորինում է տասն և մեկ տաղ՝ եղանակների համար օգտագործելով ուշ միջնադարի բանաստեղծների՝ Պաղտասար Դպրի, Պետրոս Ղափանցու, Պետրոս Բերդումյանի և Սիմեոն Երևանցու առանձին երգեր:*

1829

Առաջին կես. — *Աբովյանը, Հովհաննես Շահխաթունյանցը, Մանվել Կյումուշխանեցին, Մսեր Մսերյանցը և մի քանի համախորհուրդ անձինք որոշում են Սևանա կղզում հիմնել հոգևոր*

միաբանության և բաց անելով դպրոց, մատենադարան ու տպարան՝ ծավալել լուսավորական գործունեություն:

Ապրիլ, երկրորդ կես. — *Կարգվում է Սինոդի և կաթողիկոսի քարտուղար ու թարգման:*

Հունիս-հուլիս. — *Վարակվում է ժանտախտով և «մեկ ամիս» կենաց ու մահու կռիվ մղելով՝ կարծես, «նախախնամության հատուկ ողորմածությամբ» փրկվում է մահից, որ իրականություն դարձնի իր Մեծ նպատակը՝ հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը:*

Սեպտեմբերի 8. — *Էջմիածին է ժամանում Դորպատի համալսարանի արշավախումբը պրոֆեսոր Ծ. Պարրոտի ղեկավարությամբ. երկու օր անց նրանք Խ. Աբովյանի ուղեկցությամբ դիմում են դնալի Արարատ՝ լեռան գագաթը բարձրանալու դիտավորությամբ:*

Սեպտեմբերի 27. — *Յերեկվա ժամը 3-ից քառորդ անց Աբովյանն ու Պարրոտը ուղք են դնում Արարատի բարձրագույն կատարը: Աբովյանն իր ձեռքով այնտեղ մի խաչ է կանգնեցնում: Ի նշանավորումն դիտական այդ մեծ սխրանքի՝ Ծ. Պարրոտը խոստանում է աջակցել Աբովյանին, որ նա կարողանա կրթվել Դորպատում, իբրև ուսուցիչ ու դաստիարակ հայ ժողովրդի:*

Հոկտեմբերի 27. — *Պարրոտի հետ բարձրանում է Փոքր Մասիսի գագաթը:*

Նոյեմբեր, սկիզբ. — *Երևանում գրում է «Երևակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ» բանաստեղծությունը:*

Դեկտեմբերի 5. — *Թողնում է վանական ծառայությունը և դիմում Տիֆլիս՝ Պարրոտին հասնելու և նրա հետ Դորպատ, ուսման մեկնելու: Ժանտախտի պատճառով Գյումրի հասնելուց հետո (դեկտեմբերի 7-ին), տեղական իշխանության հրամանով, 74 օր նա մնում է արգելափակման մեջ:*

1830

Փետրվար, վերջեր. — *Ժամանում է Տիֆլիս ու կանգ առնում:*

Մարտի 22. — *Կայսրն ընթերցելով հանրային կրթության նախարարի զեկուցագիրը՝ համաձայնում է, որ դպիր Աբովյանը երեք տարի*

ժամանակով ու պետական թոշակով կրթվի Դորպատի համալսարանում, ի պետս հայ ժողովրդի:

Մայիսի 6. — *Տփղիսից մեկնում է հայրենիք՝ Էջմիածին ու Քանաքեռ, հարազատներին հրաժեշտ տալու և Դորպատ ուղևորվելու:*

Հունիս, մոտ 15. — *Հրաժեշտ է տալիս ծնողներին և Քանաքեռից ճանապարհ ընկնում դեպի Դորպատ:*

Հուլիս, սկզբներ. — *Ժամանում է Տփղիս:*

Հուլիսի 11. — *Թողնում է Տփղիսը:*

Հուլիս–օգոստոս. — *Շուրջ երեք շաբաթ կանգ է առնում Նոր Նախիջևանում, հանդիպումներ ունենում Գ. Պատկանյանի հետ, պատմում իր ստեղծագործական ծրագրերի մասին (Աղասու մասին պրել):*

Օգոստոսի 18. — *Ժամանում է Մոսկվա: Հանդիպումներ է ունենում Լազարյան ճեմարանի կարգավար (ռեկտոր) Մ. Սալլանթյանցի և իր երբեմնի ընկեր ու ապագա բժշկապետ Աղաֆոն Սմբատյանցի հետ:*

Օգոստոսի 25. — *Ժամանում է Պետերբուրգ: Հանդիպումներ է ունենում մինիստր Լիվենի, ակադեմիկոս Գ. Պարրոտի, տեղական հայերի ու զինվորական դպրոցներում սովորող ընկերների հետ:*

Սեպտեմբերի 3, գիշեր. — *Ժամանում է Դորպատ:*

Սեպտեմբերի 10. — *Սկսվում է Աբուլյանի ուսումնառությունը՝ ըստ Ֆ. Պարրոտի կազմած հատուկ ծրագրի (սովորում է սկզբում գերմաներեն գրել, կարդալ, խոսել, հետո՝ թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն): Փոխում է հոգևոր տարազը:*

Դեկտեմբեր, վերջը. — *Ծանոթանում է ապագա հռչակավոր լեզվաբան Ֆ. Վիդեմանի հետ, որին սովորեցնում է հայերեն:*

1831

Հունվար–փետրվար. — *Հնգամսյա անդադրում պարապմունքներից հետո հաղթահարում է նոր միջավայրի հետ ազատորեն շփվելու և*

գիտությունների ճանապարհը փակող գլխավոր պատնեշը և հիմնավորապես տիրապետում է գերմաներենին:

Ապրիլ, սկզբներ. — Մտադրվում է գերմաներեն լեզվով գրել ու հրատարակել իր կյանքի պատմությունը՝ ղուպահեռաքար պատկերելով օտար լծի տակ հայության տնտեսական-քաղաքական ծանր կացությունը և հոգևոր տգիտության բերած չարիքները:

Ապրիլ. — «Тифлисские ведомости» պարբերականի № 21 — 23-ում, ուսերեն թարգմանությամբ լույս է տեսնում «Ճանապարհորդությիւն պարոն պրոֆեսսոր Պարրօտի և խաչատուր գպրի Ալովեան, համառօտ ստորագրությեամբ Հանդերձ Արարատեան լերինն, որ է Մասիս» ուղեգրական երկը:

Մայիսի 8. — Գրում է գերմաներեն առաջին նամակը՝ ուղղված իր ընկերոջ և ուսուցչի մորը՝ տիկին Շարլոտա Գրասին:

Մայիս, վերջեր-հունիս, շուրջ 20. — Անցկացնում է Ջրիպրիխսհոֆում, ընկերոջ՝ Մ. Բնհադելի հարազատների չրջանում (Դորպատից 50 կիլոմետր հարավ-արևմուտք, այժմ՝ Վիդրիկու):

Մայիս-սեպտեմբեր. — Ուսուցչի՝ Գ. Վալտերի հետ սկսում է գերմաներեն թարգմանել Խորենացու Հայոց պատմությունը: Մնում է կիսատ:

Երկրորդ տարեկես. — Սկսում է ուսանել տիեզերագիտություն, չարունակում է թվաբանությունն ու պատմությունը: Հաճախում է Դորպատի ուսուցչական սեմինարիա:

Օգոստոսի 18. — Դորպատի պավառային դատարանում երդմամբ հաստատում է, որ պրոֆ. Պարրոտը իսկապես բարձրացել է Արարատի գագաթը:

Աշուն. — Խորհելով Հայաստանի ապագայի և իր առաջիկա լուսավորական գործունեության մասին՝ որոշում է վերադառնալուց հետո ստեղծել հայկական գրքք: Տենչանքն էր, որ ողջ Հայաստանը նվաճվեր ռուսական զենքով:

1832

Ապրիլի 2. — Նամակ Հովհաննես Կարբեցուն: Շարադրում է լուսավորության գերի և Հայության հոգևոր կյանքը վերափոխելու

ուղիների մասին իր տեսակետները: «Ի լուսաւորութենէ կանդնի ազգ ինչ, ի լուսաւորութենէ ելանեն ամենայն բարեբախտութիւնք... ո՛չ պարսիկք, ո՛չ թուրքք, այլ մեք մեզէն իսկ եմք պատճառ կորստեան և կործանման մերոյ՝ ատելով և հալածելով զիրեարս... Ջի՛ք իմ այլ նպաստակ առաջի, բայց եթէ... վասն Հայրենեաց մեռանիլ...»:

Ապրիլի 10. — *Գրում է «Կորուսեալ խնդութիւն» բանաստեղծությունը՝ խորհրդածելով կորցրած երանության և ոտնահարված բնական օրենքի վերաբերյալ:*

Մայիսի 27. — *Երկրորդ անգամ ուղևորվում է Ֆրիդրիխսհոֆ՝ մնում է մինչև հունիսի 2-ը: Հմայվում է Շիլլերի փիլիսոփայական բանաստեղծություններով:*

Հունիսի 12. — *Ուղևորություն դեպի Կուրլանդական Պոնիմուն կալվածքը, ընկերոջ՝ Թ. Գրասի մոտ: Լինում է նաև Ռիգայում ու Միտավայում: Դորպատ է վերադառնում հուլիսի կեսերին:*

1833

Մայիսի 10. — *Սկսում է արտագրել. «Երկրաչափության կամ հողաչափության հիմունքներ» գերմաններեն ձեռնարկը, որ Աբովյանի և նրա ապագա աշակերտների համար կազմել էր պրոֆ. Պարրոտը:*

Հունիսի 16. — *Երկրորդ ուղևորությունը դեպի Պոնիմուն: Դարձյալ մի քանի օր անցկացնում է Ռիգայում: Սիրահարվում է Գրասի հոգեքրոջը՝ Շարլոտե Շուլցին: Վերադառնում է հուլիսի 19-ին:*

Հունիսի 27. — *Ֆ. Պարրոտի ջանքերի շնորհիվ Աբովյանի ուսման ժամկետը երկարաձգվում է մի տարով ևս:*

Երկրորդ տարեկես. — *Ուսանում է ֆիզիկա և մի նոր առարկա՝ պրոֆ. Բարտելսի մոտ, շարունակում է թվաբանությունը և լատիներենը: Համալսարանում լսում է պրոֆեսոր Եշեի դասախոսությունները հոգեբանության, փիլիսոփայության և տրամաբանության մասին, մասնակցում գործնական պարապմունքներին (նույնը նաև 1834 թ. I տարեկեսում):*

Սեպտեմբերի 4. — *Մանոթթանում է ռուս բանաստեղծ Վ. Ա. Ժուկովսկու հետ:*

Սեպտեմբեր. — *Սկսում է՝ հայերեն փոխադրել Հին ու Միջին դարերի պատմության մի ձեռնարկ:*

Հոկտեմբերի 14. — *Տիկին Յուլյա Դալից սկսում է առնել ֆրանսերենի դասեր: Ավելի վաղ նրա մոտ պարապել էր նաև անգլերեն:*

1834

Փետրվարի 3. — *Համալսարանի մեծ դահլիճում կատարվում է Հենդելի «Ալեքսանդրի հաղթանակը կամ երաժշտության ուժը» կանտատան: Երգչախմբի մեջ էր նաև Աբովյանը:*

Փետրվարի 22. — *Պրոֆ. Շմալցի ղեկավարությամբ սկսում է ուսանել գործնական տնտեսագիտություն, «տնային կառավարություն» և «երկրագործություն», իսկ դարնանից տեղափոխվում է Ալտ-Կուստհոֆ՝ տեղի պյուղատնտեսական դպրոցում ու փորձադաշտերում չարունակելու այդ գիտությունների յուրացումը:*

Մարտի 5-ից սկսած. — *Տիկին Յուլյա Դալի տանը, նրա օգնությամբ՝ սովորում է դաշնամուր նվագել:*

Մայիսի 30. — *Դորպատյան ուսումնառությունն ավարտելու կապակցությամբ, հատուկ հանձնաժողովի առջև հանձնում է քննություն և ստանում մասնավոր ուսուցման իրավունք (պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, երկրաչափություն, բնագիտություն, ռուսերեն, գերմաներեն, լատիներեն):*

Հունիսի 3. — *Փայլուն կերպով հանձնում է փիլիսոփայության, հոգեբանության և տրամաբանության քննությունները պրոֆ. Եշկին:*

Հունիսի 10. — *Ալտ-Կուստհոֆից Ներսես Աշտարակեցուն հղած նամակում պարզաբանում է իր ապագա դիտավորությունները. վերադարձից հետո ցանկանում էր հիմնել երեք կարգի դպրոց՝ քահանաներ և ուսուցիչներ, արհեստի, արդյունագործության ու պյուղատնտեսության մասնագետներ և մտավոր աշխատանքի մարդիկ պատրաստելու համար:*

Հունիս. — *Մտորում է հայ եկեղեցական երգեցողությունը կանոնավորելու մասին և փորձում սեփական կատարմամբ տեղական երաժիշտներին ձայնագրել ու մշակել տալ հայկական չարականները:*

Հուլիսի 10. — *Ուղևորվում է Ֆրիդրիխսհոֆ, ուր և մնում է միառժամանակ:*

Նոյեմբերի 27. — *Ստանում է հոր մահվան լուրը: Ապրում է ծանր օրեր: Մխիթարվելու համար ընթերցում է «Նարեկը», գրում «Նկարագրումն մանկական աւուրց» և «Մեկնութիւն երկնային մարմնոց ըստ հասկացողութեան հայոց» բանաստեղծությունները:*

Դեկտեմբերի 1. — «Dörptsche Zeitung» *լրագրում լույս է տեսնում Աբովյանի հոդվածը Ալամդարյանի մասին:*

Դեկտեմբերի 14 (°). — *Ուղևորվում է Պետերբուրգ՝ իր ապագայի հետ կապված հարցերը պարզելու և վենետիկ մեկնելու համար պետությունից միջոցներ խնդրելու:*

1835

Հունվար. — *Հրապարակային ելույթ է՝ ունենում Պետերբուրգում՝ չարագրելով հայ ժողովրդի լուսավորման իր ծրագիրը:*

— Ծանոթանում է ակադեմիկոս Քրիստիան Ֆրենի հետ:

Փետրվարի 9. — «St. Petersburgische Zeitung» *լրագրում լույս է տեսնում Աբովյանի գերմաներեն հոդվածը Արարատյան վերելքի մասին («Նոր վկայություն...»):*

Փետրվար, կեսեր. — *Վերադառնում է Դորպատ:*

Մարտ-ապրիլ. — *Գրում է գերմաներեն ընդարձակ ուսումնասիրություն հայոց կենցաղի ու սովորությունների մասին՝ զուգակցելով դրանց իր մանկապատանեկան հուշերը (պահպանվել են առանձին պատառիկներ):*

Մարտի 27. — *Սկսում է թարգմանել Ֆ. Պարրոտի «Ուղևորություն դեպի Արարատ» գիրքը (մնացել է անավարտ):*

Մայիսի 3. — *Գրում է «Հեռացեալ յինէն ամպովք տարաճիգ...» բանաստեղծությունը՝ նվիրված երգչուհի Էմմա Կայինի, որով հմայված էր վերջին շրջանում:*

Հունիսի 25. — *Սկսում է գրի առնել համալսարանի քիմիական փորձարանի վարիչ Կլաուսի դասախոսությունները քիմիայի հիմունքների վերաբերյալ:*

Սեպտեմբերի 21. — *Լսում է երաժշտության վերաբերյալ դասախոսություններ (հավանաբար՝ Կարլ Բենիամին Գրոսի մոտ):*

1836

Հունվարի 14 կամ 18. — *Թողնում է Դորպատը և բռնում վերադարձի ճանապարհը:*

Փետրվարի 3/4 — Ապրիլի 17. — *Անցկացնում է Մոսկվայում:*

Մարտ. — *Գրում և կառավարությանն է ներկայացնում ընդարձակ նախագիծ Հայաստանի և Անդրկովկասի տնտեսական ու հոգևոր կյանքը վերափոխելու միջոցառումների վերաբերյալ՝ նպատակահարմար գտնելով Քանաքեռում հիմնել մանկավարժական ինստիտուտ:*

Մարտ-ապրիլ. — *Գործակցում է Բնախույզների մոսկովյան կայսերական ընկերությանը, ընտրվում թղթակից-անդամ:*

Մարտի 29. — *Մոսկվայի Հայոց եկեղեցում արտասանում է զատկական քարոզ՝ խրախույս կարդալով ունկնդիրներին՝ «օգնական լինել տառապեալ մարդկությանն», անմահանալ բարի գործելով:*

Ապրիլ, կեսեր. — *Բանակցում է ռուս ֆաբրիկանտների հետ՝ նրանց ճոթինդենը (մանուֆակտուրա) Անդրկովկասում վաճառելուն աջակցելու համար:*

Մայիսի 15. — *Նոր Նախիջևանում լինելով՝ այցելության է գնում Հարությունն Ալամդարյանի շիրմին, արտասանում է դամբանական և գրում այդ առթիվ բանաստեղծություն:*

Մայիս, վերջեր-հունիս, սկզբներ. — *Ժամանում է Պյատիգորսկ, հանդիպումներ ունենում լեզվաբան, ակադեմիկոս Շյոգրենի հետ:*

Հունիս. — *Ժամանում է Տփղիս: Հանդիպում է կաթողիկոս Հովհաննես Կարբեցուն. վերջինս մերժում է նրա կրթական ծրագիրը: Ապրում է ծանր հիասթափություն:*

Հուլիսի 22. — *Հարկադիր վճիռ է կայացնում պետական ծառայության մտնելու, որ ձգձգվում է չուրջ յոթ ամիս:*

Աշուն. — *Մի կարճ ժամանակ ուսուցչություն է անում Ներսիսյան դպրոցում:*

1837

Փետրվարի 12. — *Նշանակվում է Տփղիսի գավառական դպրոցի տեսուչ և պատմության ու թվաբանության ուսուցիչ:*

Փետրվար. — *Մտերիմ ընկերոջ՝ բանաստեղծ (աչուղ) Մկրտչյան Մադաթյանի մահվան առթիվ գրում է «Ողբ»:*

Ապրիլ. — *Սևագրում է «Զարթուք ի միտս իմ կրկին կենդանի...» բանաստեղծությունը՝ վերարտադրելով կարոտն առ Դորպատ և հին բարեկամները:*

1838

Մայիս. — *Ստանում է ակադեմիկոս Ֆրենի նամակը, տեղեկանում, որ Կազանի համալսարանում հիմնվելու է հայոց լեզվի ամբիոն և ղեկավարությունը վստահվելու է իրեն:*

Մայիսի 26-հունիսի 11. — *Սենատոր Պ. Հանի ու նրա կնոջ հետ շրջագայության է մեկնում Հայաստան: Լինում են՝ Լոռիում, Ալեքսանդրապոլում, Էջմիածնում, Երևանում, Նոր Բայազետում, այցելում են Անիի և Արմավիրի ավերակները: Տպավորությունները վերարտադրել է «Առ բարեսնունդ և սիրելի աշակերտս իմ» ակնարկում:*

Հունիս, սկիզբ. — *Էջմիածնում խնդրում է Հովհաննես Կարբեցուն՝ թույլ տալ գործնել Հոգևորականության կրթության, սակայն մերժում է ստանում:*

Օգոստոս. — *Կազմում է թվաբանության խնդրագիրք՝ հօգուտ Տիղլիսի գավառական դպրոցի աշակերտության (ռուսերեն, ձեռագիր):*

Սեպտեմբերի 8. — *Նշանվում է ուսելցի օրիորդ Էմիլիե Լոոզեի հետ (ծանոթացել էր դիներալ Պաուլ Ֆոն Կոցեբուի տանը, Տիղլիսում):*

Աշուն: — *Ավարտում է «Նախաչավիղը» և տարվա վերջին ներկայացնում Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությանը՝ հրատարակելու: Տպագրությունն ընդհատվում է վերատեսչի բանտարկության պատճառով, 1839-ի հունվարին:*

Հոկտեմբերի 1. — *Բայց է անում մասնավոր դպրոց, տասնյոթ սանի համար՝ նախապես հատուկ պայմանագիր կնքելով առաջին աշակերտների ծնողների հետ:*

Հոկտեմբերի 18. — *Խնդրում և պաշտոնական թույլտվություն է ստանում (նոյեմբերի 16-ին) Տիղլիսի գավառական դպրոցի առաջին դասարանից ավանդելու տեղական՝ հայոց և վրաց լեզուները:*

1839

Առաջին կես. — *Զբաղվում է իր աշխատությունների տպագրման համար միջոցներ հայթայթելու խնդրով: Նյութեր է հավաքում «Համառոտություն բոլոր դիտությունների ու դիտելիքների» ձեռնարկի համար (չի՛ պահպանվել):*

Հունվարի 23. — *Ըստ իր խնդրագրի (գրված՝ 1838, դեկտեմբերի 15) և Էջմիածնի Սինոդի որոշմամբ՝ Աբովյանը «բոլորովին արձակվում է հոգևոր տեսչությունից»:*

Ապրիլ 14. — *Կայսրը թույլատրում է Կազանի Համալսարանում հիմնելու հայոց լեզվի ամբիոն: Աստրախանի հայոց թեմական կոնսիստորիայի մեքենայությունների պատճառով Աբովյանի փոխարեն, իբրև ամբիոնի դեկավար, առաջադրվում է Հարությունն Մինասի Ավագյանի թեկնածությունը:*

Օգոստոս, կեսեր. — *Տեղեկանում է, որ Կազանի Համալսարանի հայոց լեզվի ամբիոնը կարող է ստանալ միայն հայատարածված մրցույթում հաղթելու դեպքում:*

Սեպտեմբեր. — *Ավարտում է «Նոր տեսական և գործնական քերականություն ռուսաց վասն հայոց» ձեռնարկը:*

Սեպտեմբերի 14. — *Ամուսնանում է Է. Լոոզնի հետ: Պսակում է Սայաթ-Նովայի թոռ Տեր Մովսեսը:*

Սեպտեմբեր, երկրորդ կես. — *Գրում է «Նախաշավղի» նպատակների մասին գերմաներեն բացատրական՝ տեսականորեն հիմնավորելով աշխարհաբարը գրականության և դպրոցի լեզու դարձնելու անհրաժեշտությունը:*

Նոյեմբեր, կեսեր. — *Վիրահայոց հոգևոր կոնսիստորիայում լսվում է «Նախաշավիղը» լույս աշխարհ հանելու հարցը. Աբովյանի առերես բարեկամները դեմ են արտահայտվում: Քննադատներին պատասխանում է «Էչն ու Իլբյուլը» առակով:*

Դեկտեմբերի 6. — *«Նախաշավիղը» և «Նոր տեսական և գործնական քերականություն ռուսաց վասն հայոց» ձեռնարկը ուղարկվում են Պետերբուրգ, հանրային կրթության մինիստրության՝ տպագրման թույլտվություն ստանալու և Կազանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու:*

1840

Փետրվարի 29. — *Պաշտոնական թույլտվություն է ստանում բաց անելու մասնավոր դպրոց:*

Մայիս, սկիզբ. — *Տփղիսի քաղաքային այգում, աշակերտների հետ զբոսնելիս՝ ցարական աստիճանավորները հայհոյում ու ծեծում են Աբովյանին և նրա սաներին:*

Մայիսի 3. — *Մինչնորդում է, որ ադրբեջանցի բանաստեղծ Միրզա Շաֆին նշանակվի Տփղիսի դավառական դպրոցի թուրքերենի ուսուցիչ:*

Մայիսի 13. — *Ակադ. Մ. Բրոսսեն կայսերական ակադեմիային է ներկայացնում կարծիք Աբովյանի դասագրքերի մասին և աննպատակահարմար գտնում ինչպես նրան ամբիոն վստահելը, այնպես էլ աշխարհաբարը դպրոցական լեզու դարձնելը:*

Մայիսի 31. — *Ծնվում է որդին՝ Վարդան-Մորիցը:*

— *Ավարտում է «Նախաշավղի» առաջին մասի (ընթերցարանի) նոր խմբագրությունը և երկրորդ մասը՝ քերականությունը:*

— *Գրում է հայոց հոգևոր և ժողովրդական երաժշտության մասին հոդված և ուղարկում ռուսական ակադեմիային:*

— *Գրում է «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» աղդագրական երկը (դերմաններեն):*

Վերջեր. — *Տառապում է երկարատև, ծանր հիվանդությամբ, որ շարունակվում է մինչև 1841 թ. հունվարի առաջին կեսը:*

1840/41

— *Գրում է «Հազարմեկնեն» սրոմը:*

— *Տիղիսում, 1840 — 43 թթ. ընթացքում են գրված «Ամերիկու լիս քցիլը» անավարտ երկը և «Զվարճալի ու կարճ պատմություն քը»:*

1841

Փետրվար. — *Նվիրվում է «Վերք Հայաստանի, Ողբ հայրենասիրի» պատմական վեպի ստեղծագործմանը: Առաջին չափածո և արձակ տարբերակներն ավարտում է կարճ ժամանակամիջոցում:*

Մարտ, վերջեր. — *Ստանում է սիրելի դաստիարակի՝ Ֆ. Պարրոտի մահվան լուրը և դառնորեն ողբում:*

Մայիսի 22. — *Թարգմանում է եվրոպացի ինչ-որ կին գրողի «Ագնես» նամակաձև պատմվածքը:*

Հուլիսի 5. — *Տիղիսի դիմնազիայի մանկավարժական խորհուրդը մերժում է «Նախաշավիղն», իբրև դասագիրք, անդրկովկասյան դպրոցներում գործածել:*

Հուլիսի 11. — *Թարգմանում է Ա. Կոցեբուի «Ֆեոդորա» երգախաղը (գերմաներենից):*

Հուլիսի 28. — *Առանց պաշտոնական թույլտվության մասնավոր աշակերտներ պահելու համար՝ Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությունից ստանում է հանդիմանություն:*

Սեպտեմբերի 5. — *Գրում է «Իմ բարեկամ Աղաջան Վարդանյանի պատկերի առաջին» բանաստեղծությունը (պահպանվել է միայն 6 տող):*

Աշուն. — *Կազմում է «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն՝ ներառնելով մինչ այդ գրած աշխարհաբար ինքնուրույն ու թարգմանական առակները, բայաթիների մի մասը և մի քանի բանաստեղծություն («Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» և այլն):*

Հոկտեմբերի 19. — *Դիմում է Պետերբուրգի ծանոթներին՝ խնդրելով իր համար մի աստիճան ձեռք բերել, առանց որի Ռուսաստանում «մարդս մարդ չէ»:*

Դեկտեմբերի 13. — *Պաշտոնական կարգ ու կանոնից չեղվելու և աշակերտների հառաջադիմության տեղեկագրերը չներկայացնելու համար Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությունը սպառնում է Աբովյանին՝ խիստ միջոցներ գործադրել:*

1842

Փետրվարի 28. — *Թույլտվություն է խնդրում վերստին բաց անելու մասնավոր դպրոց, բայց մերժում է ստանում (մարտի 10-ին):*

Ապրիլի 1. — *Հանդիմանության է արժանանում տեղական լեզուների դասաժամերը ավելացնելու համար:*

Հունիսի 4. — *Գրում է «Առ հանդէս ուխտի ի սուրբ լեառն Մթայ-Մինդայ» բանաստեղծությունը:*

Հունիս, վերջեր — օգոստոս, սկզբներ. — *Ամառային արձակուրդներն անցկացնում է հայրենիքում՝ Երևանում, Քանաքեռում ու Էջմիածնում:*

Օգոստոսի 3 — 4. — *Երևանում, Աղամալյանների տանը, գրում է աշխարհահռչակ բանաստեղծությունների շարք և ի հիշատակ թողնում հյուրընկալներին:*

Սեպտեմբեր, սկզբներ. — *Թուլլտվություն է ստանում պահելու ո՛չ ավել քան տասը մասնավոր աշակերտ:*

Նոյեմբերի 23. — *Վերատեսուչ Ի. Ռոսկովշենկոն դաղտնի զեկուցագրի մեջ Աբովյանին բնութագրում է իբրև բարձր բարոյականությամբ օժտված և հույժ ջանասեր ուսուցիչ, բայց տեսչի պաշտոնի համար անբավարար հատկություններ ունեցող անձ:*

Դեկտեմբերի 31. — *Փակում է մասնավոր դպրոցը և աշակերտներին տեղավորում պավառական դպրոցի բարձր դասարաններում:*

1843

Հունվարի 9. — *Սառնում է տիրաղոսավոր խորհրդականի աստիճան:*

Ապրիլ. — *Գավառական դպրոց է այցելում Մյունխենի համալսարանի պրոֆեսոր, բնախույզ-դիտնական Մորից Վագները և հետաքրքրությունով ուսումնասիրում Աբովյանի մասնավոր աշակերտներին:*

Ապրիլի 29. — *Անդրկովկասի գլխավոր կառավարչի կարգադրությամբ և Մ. Վագների խնդրանքով՝ ուղեկցում է վերջինիս դեպի Հայաստան և աջակցում նրա բնապատմական ուսումնասիրություններին: Լինում են Արարատի և Արագածի վրա: Տիգլիս է վերադառնում մայիսի վերջերին:*

Հունիսի 3. — *Ընդարձակ զեկուցագիր է ներկայացնում Անդրկովկասի գլխավոր կառավարիչ Նայդհարդին՝ կոլծանված Ակռռիի բնակիչներից ողջ մնացածներին օգնություն ցույց տալու և նոր գյուղ հիմնելու համար:*

Հունիսի 11. — *Խնդրում է դպրոցների վերատեսչությանը՝ ազատել իրեն Տիգլիսի գավառական դպրոցի տեսչի պարտականություններից և վերադրել Երևան:*

Հունիսի 19. — *Նշանակվում է Երևանի գավառական դպրոցի տեսուչ: Այդ նշանակումը ողջունում է պրոֆ. Մ. Վագները:*

Հուլիսի 11 — օգոստոսի 3. — *Հանդիպումներ է ունենում Պրագայի համալսարանի պրոֆեսոր, բուսաբան Ֆ. Կոլենատիի հետ:*

Հուլիսի 25. — *Մնվում է դուստրը՝ Զարմանդուխտ-Ադելաիդան:*

Օգոստոսի 15. — *Ընտանիքով փոխադրվում է Երևան: Լացով նրան ճանապարհում էին աշակերտները:*

Օգոստոսի 24 — 29. — *Ուղեկցում է տնտեսագետ Աուգուստ Հաքստհաուզենին երևանյան գավառում և անգնահատելի օգնություն ցույց տալիս նրա տնտեսագիտական-ազգագրական ուսումնասիրություններին:*

Սեպտեմբերի 4 և 11. — *Էջմիածնի Սինոդի դատախազ Մ. Մատինովը զրպարտագրեր է ուղարկում Անդրկովկասի գլխավոր կառավարչին և հոգևորականության անունից խնդրում՝ Աբովյանին Երևանից փոխադրելու այլ վայր:*

Դեկտեմբերի 22. — *Տփղիսի գիմնազիայի հանկավարժական խորհուրդը քննում է «Նախաշավիղը» և գտնում, որ հնարավոր կլինի այն իբրև դասագիրք օգտագործել գավառական դպրոցների ստորին դասարաններում, եթե Աբովյանն ուղղի նկատված թերությունները, և դրքում գրաքննության օրենքներին հակառակ բաներ չնկատվեն:*

1844

Հունվար, առաջին տասնօրյակ. — *Գրում է դիտողություններ Անդրկովկասյան դպրոցներում ուսման վիճակը բարվոքելու վերաբերյալ: Տփղիս է առաքում 14-ին՝ դպրոցի տարեկան հաշվետվությանը կից:*

Փետրվար-մարտ. — *Աշակերտներին գյուղատնտեսության (պարտիզպանության) հիմունքները սովորեցնելու համար դպրոցին կից հիմնում է փորձադաշտ, տնկում այգի, որին աջակցում են նաև երևանցիները:*

Մարտի 1. — *Հետ է ստանում «Նախաչավիղը», սակայն հետագա վերանայման փորձ չի անում:*

Մարտի 8. — *Գրում է «Սոնա» բանաստեղծությունը՝ նվիրված ազգակիցներից խեղդամահ արված մի աղրբեջանուհու:*

Մարտ, 23 — 27. — *Հանդիպումներ է ունենում գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ Բոդենշտեդի և արևելագետ Գեորգ Ռոզենի հետ, ուղեկցում նրանց էջմիածին: Գերմաներեն է թարգմանում Հեչիչ-օղլու թուրքերեն երգերը:*

Մարտի 24. — *Ստանում է Անդրկովկասի դլխավոր կառավարչի և դպրոցական բարձր իշխանությունների կարդադրությունը՝ պլոմբ. Հերման Աբիխի երկրաբանական հետազոտություններին օժանդակելու համար անհապաղ մեկնել Տիղիս:*

Մարտի 28 — ապրիլի 4. — *Տառապում է հիվանդությամբ:*

Ապրիլի 11. — *Ժամանում է Տիղիս և 28-ին վերադառնալով՝ մինչև սեպտեմբերի 14-ը ուղեկցում է Հ. Աբիխին՝ նրա հետ շրջագայելով պատմական Հայաստանում: Լինում են Գառնի-Գեղարդում, Արաքսի հովտում, Նախիջևանում, Հին Ջուղայում, Մեղրիում, Կողբում, Մակվում, Հին Բայազետում, Արտազի դաշտում, Արածանիի ակունքներում և այլուր: Վերնելքի երեք ձախող փորձ են կատարում դեպի Մեծ Մասիսի կատարը, երկու անգամ բարձրանում Փոքր Մասիսի դագաթը:*

Ապրիլ, կեսեր. — *Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր Կարլ Կոխին հաղորդում է հարուստ տվյալներ հայոց ազգային կերպակուրների և երաժշտական գործիքների մասին:*

Սեպտեմբերի 11. — *Վերադառնում է Երևան, իսկ 15-ից դադարեցնում Աբիխի հետ կատարելիք հետագա շրջագայությունները:*

Նոյեմբերի 9. — *Դիմում է Անդրկովկասյան դպրոցների վերատեսչին և խնդրում օրենքով պատժել ուսուցիչ Իվանովին՝ մարմնական պատիժներ դործադրելու և աշակերտներին ծեծելու համար:*

1845

Փետրվարի 15. — *Նամակ Ներսես Աշտարակեցուն. որոշում է վերստին հոգևոր աստիճան ընդունել և վանական միջավայրում դործել հօդուտ ազդի հոգևոր վերածննդության:*

Մարտ. — *Հայաստանի տնտեսական կյանքին զարկ տալու նպատակով որոշում է փորձարկել առևտրի ու արդյունագործության տեսակետից կարևոր մի քանի մշակույթներ՝ ամերիկյան և եգիպտական բամբակ ու ծխախոտ. քրքում, ինդիգո, զանազան ծառատեսակներ:*

Ապրիլի 14. — *Հօգուտ Ի. Ա. Կռիլովի հուշարձանի կառուցման՝ նվիրաբերում է պատշաճ գումար:*

Օգոստոս. — *Ծանր հիվանդանում է:*

Սեպտեմբեր–հոկտեմբեր. — *Քաղվածաբար թարգմանում է (անգլերենից գրաբար) ամերիկյան միսիոներներ Սմիթի և Դվեյդի ուղեգրությունից վեց նամակ, որոնք վերաբերում էին արևելահայության կյանքին ու կենցաղին:*

Դեկտեմբեր, վերջին շաբաթ. — *Ծննդյան տոներն անցկացնում է քրդերի և եզդիների շրջանում, ուսումնասիրում նրանց կենցաղը:*

— Տարվա ընթացքում *կատարում է օդերևութաբանական դիտարկումներ:*

1846

Հունվարի 8. — *Բողոքում է հոգևոր իշխանություններին՝ աշխարհականների երեխաներին հոգևոր դպրոցներում կրթելու առթիվ:*

Մայիսի 9. — *Աշակերտների հետ ներկայանում է Ներսես Աշտարակեցուն: Վեհը խոստանում է ընդունակներին ուղարկել Գերմանիա՝ բարձրագույն կրթություն ստանալու:*

Մայիսի 25. — *Ինդրում է դպրոցական իշխանություններից՝ թույլ տալ իրեն Պարրոտի չիրմին երկրպագելու նպատակով Դորպատ մեկնելու, բայց մերժում է ստանում:*

Մայիսի 31. — *Պաշտոնական պարտադրանքներին չենթարկվելու համար ուսուցչական մասի կառավարչից ստանում է հանդիմանություն և սպառնալիք՝ պաշտոնից զրկվելու:*

Կեսեր. — *Ավարտում է «Քրդեր» և «Եղիդիներ» ազգագրական ուսումնասիրությունները (գերմաներեն):*

Հուլիսի 15 — 17. — *Ի հետևումն գավառապետի գրավոր բողոքի՝ ներթարկվում է երեքօրյա տնային բանտարկության՝ Ներսես Աշտարակեցուն դիմավորելիս (մայիսի 8-ին) քաղաքացիական հադուստով լինելու համար:*

Օգոստոսի 31. — *Նամակ Մկրտիչ Էմինին. «Ես վերջացույցի համարեա թէ՝ նպատակ կենացս: Բիւրազգի սրտամաշուխիւնք... ստիպեն զիս հրաժարիլ ի պաշտօնէ... առ ի ստանալ զանդորրութիւն խղճի և սրտի...»:*

Սեպտեմբերի 13 — 19. — *Շրջագայություններ անգլիացի ճանապարհորդ Հենրի Դեմբի Սևյմուրի հետ: 18-ին միասին բարձրանում են Արարատի գագաթը:*

Հոկտեմբերի 20 — 28. — *Շրջագայություններ ռուս գրող և պատմաբան Ա. Ն. Մուրավյովի հետ: Այցելում են Այրիվանք, Գառնիի, Դվինի ու Արտաշատի ավերակները, Արարատի լանջերը, դիտում 1840 թ. երկրաշարժի ավերածությունները:*

— Գրում է պատմական ակնարկներ Հին Հայաստանի մայրաքաղաքների մասին:

Դեկտեմբերի 5. — *Ստանում է կոլեգիական ասեսորի աստիճան:*

1847

Հունվարի 24 կամ 25. — *Ուղևորվում է Տիղիս, հավանաբար, Ներսես Աշտարակեցու հետ աշակերտներին բարձրագույն դպրոցներն ուղարկելու շուրջ բանակցելու (վերադարձի օրը ճշտված չէ):*

Մայիսի 17. — *Տիղիսի «Кавказ» լրագրում լույս է տեսնում «Նոր վերելք Արարատի գագաթը» ռուսերեն հոդվածը (նվիրված էր 1846 թ. վերելքին):*

Հունիսի 7. — *Հայկական «Կովկաս» լրագիրը քողարկված ձևով դրսևորում է Աբովյանին և սուտ հռչակում նրա վերկլքները Արարատի դագաթի:*

Հունիսի 10 կամ 11. — *Նախապես թուլլտվություն ստանալով՝ ուղևորվում է Տիղիս՝ մտադրություն ունենալով այնուհետև աշակերտների հետ մեկնել Պետերբուրգ ու Դորպատ, իսկ վերադարձին ընդմիշտ հաստատվել Տիղիսում: Անդրկովկասում մոլեգնող ժանտախտը ձախողում է այդ ծրագիրը:*

Հուլիս-օգոստոս. — *Խնդրում է Կովկասի փոխարքային իր աշակերտներից մի քանիսին ընդունել Նուխու մետաքսամանածական գործարանին կից դպրոցը՝ հետագայում արհեստագործության այդ ճյուղը Հայաստանում զարգացնելու համար:*

Ամառ. — *Մեռնում է մայրը՝ Թագուհին:*

Սեպտեմբերի 6. — *Վերադառնում է Երևան:*

Աշուն. — *Գրում է «Թուրքի աղջիկը» նովելը:*

Հոկտեմբերի 21 — 27 (կամ 28). — *Ուխտօրյա ուղևորություն դեպի Անիի ավերակները:*

Նոյեմբերի 18. — *Հրապարակային վեճ ու գրազ Երևանի փոստապետ Քալանթարյանի հետ՝ Արարատի դագաթ բարձրանալու հնարավորության շուրջ:*

Նոյեմբեր — դեկտեմբեր. — *Գրում է «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ճամփորդական խորհրդածությունները (ռուսերեն):*

Դեկտեմբեր, 15-ից հետո. — *Մանր հիվանդանում է և հազիվ վրկվում մահից:*

1848

Հունվարի 5. — *Ժամանում է Տիղիս:*

Հունվարի 11. — *Ինքնակամ պաշտոնատեղին թողնելու համար արժանանում է իշխանավորների նկատողությանը:*

Հունվարի 19. — *Չհանդուրժելով այլևս դպրոցական իշխանավորների անհիմն կշտամբանքներին՝ հրաժարական է տալիս, որը չի ընդունվում:*

Հունվարի 20. — *Թողնում է Տփղիսը: Երևան է հասնում 23-ին:*

Հունվար, վերջեր. — *Տեղական լեզուների ուսումը բարվոքելու համար առաջարկում է դպրոցի ծրագրից դուրս հանել մի քանի երկրորդական առարկաներ և ժամերը հատկացնել նրանց:*

Փետրվարի 21. — *Ներսես Աշտարակեցին Աբովյանին փութով հրավիրում է Տփղիս՝ առաջիկայում բացվելիք Ներսիսյան ուսումնարանի տեսչությունը ստանձնելու համար:*

Փետրվարի 21 և 28. — «Кавказ» *լրագրում տպագրվում է «Եղիդիներ» ազգագրական ուսումնասիրությունը (գերմաներենից ռուսերեն թարգմանությամբ), առանց հեղինակի անվան:*

Մարտի 3. — *Ներսես Աշտարակեցին խնդրում է Անդրկովկասի ուսումնական մասի կառավարիչ Սեմյոնովին՝ ազատել Աբովյանին ուսուցչությունից և ուղարկել իր տրամադրության տակ:*

Մարտի 6. — «*Հույժ կարևոր*» *գեկույց Անդրկովկասյան դպրոցների վերատեսչությանը՝ Ներսիսյան դպրոցում պաշտոնի անցնելու կապակցությամբ իրեն «ուսումնարանական գերատեսչությունից իսպառ արձակելու» վերաբերյալ:*

Մարտի 15. — *Տեղեկանում է, որ ազատվել է Երևանի գավառական դպրոցի տեսչի պաշտոնից (որոշված էր մարտի 9-ին):*

Մարտի 30. — *Սկսում է դպրոցը հանձնել իր փոխարինողին: Այդ ու հաջորդ օրերին ուռապատում է անքնությամբ, նաև ղրջում՝ աշխատանքի բնույթը փոխելու համար:*

Ապրիլի 2, լուսաբացին. — *Տանից դուրս է գալիս և այլևս չի վերադառնում: Հավանաբար, սպանվել է այլազգիներից (ըստ Աբովյանի որդու՝ Վարդանի):*

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեծ հայրենասերն ու հումանիստ մտածողը (Առաջաբանի փոխարեն). *Հայերեն բնագիրը հրատարակվում է առաջին անգամ: Գրված է 1984 թ. սեպտեմբերին: Որոշ կրճատումներով օգտագործված է հեղինակի՝ ռուսերեն լույս տեսած* «Великий мыслитель-гуманист» *(«Մեծ հումանիստն ու մտածողը») ուսումնասիրության մեջ (տե՛ս* «Хачатур Абовян: проблемы творчества и литературных связей», *ժողովածու, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 28 — 51):*

2. Ծննդյան թվականը. *Նախապես, իբրև առանձին դլուխ, ընդգրկվել է հեղինակի «Խաչատուր Աբովյան» աշխատության մեջ (Ե., 1967, էջ 48 — 71): Գրված է 1965 թվականին: Սույն արտատպության մեջ ուղղված են վրիպակները և կատարված որոշ լրացումներ (2 և 5-րդ հատվածներում):*

3. Վերստին Աբովյանի ծննդյան թվականի մասին. *Գրված է 1979 թվականի ամառը: Տպագրվել է՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 199 — 209: Շարադրանքը վերանայված ու մասամբ էլ լրացված է:*

4. Ո՞վ և ե՞րբ է վրձնել Խ. Աբովյանի դիմանկարը. *Նախնական տարբերակը գրված է 1966-ին, հեղինակի «Խաչատուր Աբովյան» ուսումնասիրությունը հրատարակության պատրաստելու ընթացքում, որպես այդ դրքի դլուխներից մեկը: Բայց այնտեղից դուրս մնաց, որովհետև մտադրություն կար բանասիրական մասին կցել նաև Աբովյանի դիմանկարի արվեստադիտական վերլուծությունը, որը գրելու էր արվեստաբան Մանյա Ղազարյանը: Ինչ-ինչ չնախատեսված հանդամանքներ խանդարեցին ցանկալին իրականություն դարձնել, և հեղինակը ստիպված եղավ սահմանափակվել սեփական ընկալումներով: Առաջին անդամ տպագրվել է՝ «Գարուն», 1970, № 3, էջ 76 — 81 («Ո՞վ և երբ է նկարել Աբովյանին» խորագրով), իսկ այնտեղից արտատպվել՝ «Պայքար» (Բոստոն), 1970, Հոկտեմբերի 20 — 23, №№ 229 — 232:*

Սույն, վերանայված տարբերակի որոշ մասեր ավելի վաղ օգտագործվել են մեր հարցազրույցի մեջ (տե՛ս «Հայաստանի աշխատավորուհի», 1984, № 11, մասնավորապես էջ 10 — 12):

5. Դորպատյան ուսումնառությունը (նպատակը և բովանդակությունը). *Գրված է 1975 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին և կարդացվել է Տարտուի համալսարանի դիտական նստաշրջանում՝ նվիրված նույն հաստատության պատմությանը: Ռուսերեն տարբերակը՝* «Учебные программы Абовяна в Дерптском университете» *խորագրով, տպագրվել է* «Tartu Ülikooli ajaloo Küsimusi» *(«Տարտուի համալսարանի պատմության հարցեր») ժողովածուի* IV *հատորում (Տարտու, 1977, էջ 133 — 147): Հոդվածին պետք է կցվեր 12 վավերագրից բաղկացած մի հավելված, որի տպագրությունը, սակայն, ձգձգվեց, և 1981-ին նույն ժողովածուի* X *հատորում (էջ 220 — 225) լույս տեսան միայն երկուսը* (I և XII *հավելվածներ): Ներկա հայերեն տարբերակը, որ վերանայված է ու, մասամբ, լրացված, լույս է տեսել՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, № 11, էջ 9 — 20, որտեղից և արտատպվում է: Նախատեսված 12 վավերագրից՝ կցում ենք միայն 4-ի բնագիրը և հայերեն թարգմանությունը:*

6. Խ. Աբովյանի «կորած» բանաստեղծությունը («Կորուսեալ խնդութիւն»). *Նախաբանը գրված է 1984 թ. ամառը, իսկ բանաստեղծության բնագիրը վերծանված է 60-ական թթ. սկզբներին: Տպագրվել է՝ «Սովետական գրականություն», 1984, № 10, էջ 123 — 128: Արտատպվում է սրբագրություններով և լրացումներով:*

7. «Նախաշավղի» կորած էջերից. *Գրված է ընդմիջումներով, 1982 — 85 թթ. ընթացքում: Նախնական արդյունքների մասին զեկուցվել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դիտական խորհրդի ընդլայնված նիստում, 1982 թ. հունվարին, ըստ որում՝ կից բնագիրը պատրաստված է նույն 1982-ին, իսկ հետազոտական մասը՝ հաջորդ տարիներին, նախկինում գրած թեզիսների հիման վրա: Տպագրվել է՝ «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, № 3, էջ 86 — 107: Սույն արտատպության մեջ ուղղված են նկատված վրիպակները:*

8. «Աչքի լույս ջան...» երգիծանքի գաղտնիքը. *Գրված է 60-ական թթ. վերջերին: Տպագրվել է՝ «Լրաբեր հասարակական*

գիտությունների», 1979, № 8, էջ 69 — 80: Արտատպության մեջ ուղղված են նկատված վրիպակները:

9. Անսպասելի հայտնություն («Հայրենա՛ց ծխոյն...»). *Բանաստեղծությունը՝ կից համառոտ նախաբանով, որը գրված է 1984 թ. հունիսին, հրատարակվել է նախ՝ «Հայրենիքի ձայն», 1984, նոյեմբերի 14, № 46, էջ 5, իսկ այնուհետև՝ «Գարուն», 1985, № 1, էջ 80 — 81: Երկուսում էլ, որպես խորագիր, օգտագործված է բանաստեղծության առաջին տողը. «Հայրենեա՛ց ծխոյն, Հայրենեա՛ց բոցոյն...»: Սույն գրքում նախաբանը տրված է նոր ու ընդարձակ չարադրանքով:*

10. «Ֆեոդորայի» առեղծվածը. *Նյութերը հավաքված են 1960 — 65 թթ. Տարտուի և Պետերբուրգի գրադարաններում: Գրված է 1968-ին, վերջին ծանոթությունն ավելացված է 1972 թ. աշնանը: Տպագրվել է կրճատումներով, իբրև մի հատված հեղինակի «Խ. Աբովյանի ետվերքյան թարգմանությունները («Ագնես», «Ֆեոդորա»)» հետազոտության (տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 4, մասնավորապես էջ 20 — 34): Սույն վերահրատարակության մեջ վերականգնված են հապավված մասերը և արված՝ լեզվա-ոճական շտկումներ:*

11. Խաչատուր Աբովյանի ռուսական կողմնորոշման ակունքները. *Գրված է հատվածաբար, 1970 — 71 թթ.: Տպագրվել է՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, № 4, էջ 14 — 23: Ներկա վերահրատարակության մեջ կատարված են որոշ լրացումներ և սրբագրումներ:*

12. Աբովյանը և Ռուսաստանը. *Գրված և կարդացված է որպես զեկուցում ԽՍՀՄ և ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի միացյալ գիտական նստաշրջանում՝ նվիրված Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու 150-ամյակին, 1978 թ. սեպտեմբերին: Հայերեն տարբերակը տպագրվել է՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, № 6, էջ 16 — 27 (ռուսերեն ամփոփումով), իսկ ռուսերեն տարբերակը՝* «Связи армянской литературы с литературами народов СССР», *պրակ II, Ե., 1982, էջ 132 — 143, մի լրացումով (էջ 142-ում): Սույն վերահրատարակման մեջ արված է ևս մեկ լրացում (ռուսերենում՝ Ս. Գլինկայի և հայերենում՝ Ֆ. Գլինկայի երկերից արված փոխառությունների առթիվ):*

13. Թյուրիմացության և ճշմարտության սահմաններում (Աբովյանի և Պուշկինի մտացածին փոխհարաբերությունների մասին). *Այս ուսումնասիրության հիմնական մասը գրված է 1974 — 75 թթ.: Հետագայում արվել են լրացումներ, թարմացվել աղբյուրները: Առանձին հատվածներ օգտագործվել են հեղինակի զեկուցումների մեջ՝ կարդացված, մասնավորապես, 1987 թ., Պուշկինյան օրերին, Երևանում և Հանրապետության քաղաքներում տեղի ունեցած գիտական նստաշրջանների և դրասերների հետ ունեցած հանդիպումների ժամանակ: Հրատարակվում է առաջին անգամ:*

14. Ավելորդ էջ Աբովյանի և Սունդուկյանցի կենսագրության մեջ. *Գրված է 1971 թ. գարնանը: Համառոտ տարբերակը տպագրվել է՝ «Սովետական գրականություն», 1971, № 11, էջ 159 — 163: Ըստ նախնական ծրագրի՝ մասն էր կազմելու հեղինակի «Աբովյանի մասնավոր դպրոցը և առաջին աշակերտները» հետազոտության (մասամբ տպագրված՝ «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, № 1), «Կեղծ աշակերտներ» ենթավերնագրով, որ հետագայում ավելորդ նկատվեց: Վերահրատարակվում է լրացումներով:*

15. Սկզբնաղբյուրի որոնումներ («Կարլոսի Մեծի ջահելության սերը»), Աբովյան և Պետրարկա. *Տարիների ընթացքում կատարված նշումներն ընդհանրացվել են 1992 թ. սկզբներին, իսկ բուն հոդվածը չարադրվել է վեթրվարին: Որոշ կրճատումներով տպագրվել է՝ «Գարուն», 1992, № 9, «Կարլոսի Մեծի ջահելության սերը» (Աբովյանի մանրապատումի սկզբնաղբյուրի որոնումներ) խորագրով: Լրացումը կատարված է 1995 թ.:*

16. Վերջին վերելքը Արարատի գագաթ. *Գրված է 1971 թվականի գարնանը: Խմբագրական անհարկի կրճատումներով տպագրվել է՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 1, էջ 127 — 144: Սույն արտատպության մեջ, ըստ տպարանական սրբագրված օրինակի (որ մնացել էր հեղինակի մոտ), վերականգնված են կրճատված մասերը և կատարված են մի քանի նոր լրացումներ:*

17. Խաչատուր Աբովյանի անձն ու վախճանը. *Նախնական, համառոտ տարբերակը, իբրև պատասխան խմբագրական հարցումի, տպագրվել է՝ «Հայաստանի աշխատավորուհի», 1984, № 11, էջ 8 — 13, «Խաչատուր Աբովյան — 175, կյանքը, առնղծվածները...» խորագրի տակ (տե՛ս մասնավորապես էջ 9 և 12, որոնք ուղղակիորեն այս*

հոդվածին են վերաբերում): Սույն գրքում հրատարակվող բնագիրը վերանայված ու ընդարձակված է: Նոր է նաև Հավելվածը:

18. Խ. Աբովյանի անհայտ կորստյան հին վարկածի նոր «մեկնաբանումը». *Գրված է 1976 թ. հոկտեմբերի կեսերին: Հայաստանի Գրողների միության վարչության որոշմամբ՝ հոդվածը կամ նրա առանձին մասեր տպագրվելու էին «Գրական թերթում», խմբագրական ընդարձակ ծանոթության հետ միասին, որով հավանություն էր տրվելու հեղինակի եզրահանգումներին: Բայց անհայտ պատճառներով՝ հրապարակումը ձգձգվեց ու հետո էլ մոռացվեց: Որոշ կրճատումներով տպագրվել է՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 5, էջ 61 — 86: Սույն արտատպության մեջ վերականգնված են կրճատումները, իսկ ռուսերեն մեջբերումներից հետո ավելացված են դրանց հայերեն թարգմանությունները:*

19. Մի կորած հրատարակության հետքերով («Ջանգի», 1860). *Գրված է 1983 թ. մայիսի 1 — 2-ին: Տպագրվել է՝ «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1983, № 9, էջ 32 — 34, որպես գրասերներին ուղղված հրապարակային նամակ: Գրավոր արձագանքներ չեն ստացվել: Գրքի որոնումներն առ այսօր ապարդյուն են անցել: Ներկա արտատպության մեջ վերափոխված է հոդվածի առաջին մասը:*

20. Ո՞ւր կորավ Աբովյանի գրադարանը. *Գրված է 1984 — 86 թթ. ընթացքում: Միայն երկրորդ հատվածի նախնական չարադրանքը՝ «Աբովյանական նորություններ» խորագրով, տպագրվել է՝ «Հայրենիքի ձայն», 1984, հոկտեմբերի 31, № 44, էջ 4 — 5, ամբողջությամբ՝ «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1987, № 3, էջ 6 — 13: Սույն վերահրատարակության մեջ ավելացված է մի հատված «Պատմությիւն վարուց սրբոյն Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին» պայմանական խորագրով դրքի հայատառ-տաճկերեն տարբերակի մասին, որի հետքերը հայտնաբերված են «Վերք Հայաստանի» վեպում:*

21. «Վերքի» մի անտեսված հրատարակություն (Պոլիս, 1931). *Գրված է 1975 թվականին: Տպագրվել է՝ «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, № 1, էջ 194 — 198: Արտատպվում է նույն տեղից՝ մի լրացումով (Փարիզի «Զվարթնոց» գրատանը վաճառքի հանված և, իբր, 1928-ին Պոլսում և Կահիրեում, 1930-ին տպագրված «Վերք»-երի մասին):*

22. Երկու խոսք «Վերք Հայաստանի» վեպի նոր հրատարակության առթիվ. *Գրված է 1982 թ. հունվարին: Մի քանի պարբերություն օգտագործված է «Գրքերի աշխարհ» ամսաթերթին տված մեր հարցազրույցի մեջ, «Հայ նոր գրականության հիմնասյունը» խմբագրական վերնագրի տակ (տե՛ս 1982, № 1, հունվարի 18, էջ 4): Ամբողջությամբ լույս է տեսնում առաջին անգամ:*

23. Համառոտ ժամանակագրություն. *Գաղված է հեղինակի «Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» ընդարձակ աշխատությունից, որի նյութերի հավաքումը սկսվել է 1951 թ. օգոստոսին և շարունակվում է ցարդ: Առ այսօր անմատչելի մնացին գերմանական արխիվները, իսկ առանց այնտեղ պահվող նյութերի ճակատագիրը պարզելու՝ անիմաստ է վերջակետ դնել այս աշխատությանը:*

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա	— Խ. Աբովյանի թողոնները ԳԱԹ-ում
ԳԱԹ	— Հայաստանի Հանրապետության Մշակույթի նախարարության Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան
Դ	— «Դիվան Խաչատուր Աբովյանի», կազմեց և ծանոթագրեց Ե. Շահազիզ, հ. I—II, Երևան, 1940—1948
Ե	— Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, հ. I–X, Երևան, 1947—1961
Երից.	— Ա. Երիցյանցի հավաքածու Մատենադարանում
ԷԱ	— Էստոնիայի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ
Է I	— Տարտուի համալսարանի դիվան ԷԱ-ում (ֆ. 402)
ԺԱՄ	— «Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին», կազմեց և ծանոթագրեց Հ. Մուրադյան, Երևան, 1941
ԼԱ	— Նախկին ԽՍՀՄ պետական կենտրոնական պատմական արխիվ Լենինգրադում
Լ II	— Հանրային կրթության մինիստրության դիվան ԼԱ-ում (ֆ. 733)
ԿԴ	— Կաթողիկոսական դիվան Մատենադարանում
ՀԱ	— Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ
Հ I	— Երևանի գավառական դպրոցի դիվան ՀԱ-ում (ֆ. 1, ց. 1)
Մատ.	— Մատենադարան, վավերագրերի բաժին
ՆԱ	— Ներսես Աշտարակեցու դիվան Մատենադարանում
ՆՏԿ	— Ն. Տեր-Կարապետյան, Խաչատուր Աբովյան, Տփղիս, 1897
ՎԱ	— Վրաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ
Վ I	— Տփղիսի գավառական դպրոցի դիվան ՎԱ-ում (ֆ. 470)
ÜRA	— Տարտուի համալսարանի գիտական գրադարանի ձեռագրերի բաժին

գ. — գիրք	ն. թ. — նույն թվականի
գ. — գործ	ն. տ. — նույն տեղը (տեղում)
հ. — հատոր	տ. — տետր
համմտ. — համեմատի՛ր	ց. — ցուցակ
ն. ա. — նույն ամսի	ֆ. — ֆոնդ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք 5

1. «Մեծ հայրենասերն ու հումանիստ մտածողը (Առաջաբանի փոխարեն) 7

2. Ծննդյան թվականը 25

3. Վերստին Աբովյանի ծննդյան թվականի մասին 52

4. Ո՞վ և ե՞րբ է վրձնել Խ. Աբովյանի դիմանկարը 70

5. Դորպատյան ուսումնառությունը (նպատակը և բովանդակությունը) 90

Հավելված Ա 107

6. Խ. Աբովյանի «կորած» բանաստեղծությունը («Կորուսեալ խնդութիւն») 120

7. «Նախաշավղի» կորած էջերից 133

8. «Աչքի լույս չան...» երդիծանքի պաղտնիքը 172

9. Անսպասելի հայտնություն («Հայրենեա՛ց ծխոյն...») 187

10. «Ֆեոդորայի» առնղծվածը 198

11. Խաչատուր Աբովյանի ռուսական կողմնորոշման ակունքները 222

12. Աբովյանը և Ռուսաստանը 236

13. Թյուրիմացության և ճշմարտության սահմաններում (Աբովյանի և Պուշկինի մտացածին փոխհարաբերությունների մասին) 253

14. Ավելորդ էջ Աբովյանի և Սունդուկյանցի կենսագրության մեջ 283

15. Սկզբնաղբյուրի որոնումները («Կարլոսի Մեծի ջահելության սերը»), Աբովյան և Պետրարկա 293

16. Վերջին վերելքը Արարատի դաշտը 314

17. Խաչատուր Աբովյանի անձն ու վախճանը 347

Հավելված Բ 361

18. Խ. Աբովյանի անհայտ կորստյան հին վարկածի նոր «մեկնաբանումը» 372

19. Մի կորած հրատարակության հետքերով («Զանգի», 1860) 411
20. Ո՞ւր կորավ Աբովյանի գրադարանը 420
21. «Վհրքի» մի անտեսված հրատարակություն (Պոլիս, 1931) 436
22. Երկու խոսք «Վերք Հայաստանի» վեպի նոր հրատարակության առթիվ 446
23. Համառոտ ժամանակագրություն 455
Մատենագիտական տեղեկություններ 478
Համառոտագրություններ 484

Հանձնված է շարվածքի 03.03.1997 թ.
Ստորագրված է տպագր. 18.07.1997 թ.
Չափսը 60x84 1/16, 0 1/2 տպագր. մամուլ
Պատվեր 83, տպաք, 500

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ご15000ナ

ԳԱԱՀ Հիմնարար Գիտ. Գրադ.

FL0227106

A II
84433